

ԲԱՐՄԵՆԻ ԿԵՍԱՐԱՅԻՆ ԵՎ ՆՈՒ

« ԿԵՑՕՐԵԱՆ »

ՀԱՅ ԱՍՏԵՆԱԳՐԱԴԱՆ, ՄԵԸ

ՀԱՅ ԱՍՏԵՆԱԳՐԱԴԱՆ, ՄԵԸ

ՀԱՅ ԱՍՏԵՆԱԳՐԱԴԱՆ, ՄԵԸ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

К. М. МУРАДЯН

**ВАСИЛИЙ КЕСАРИЙСКИЙ
И ЕГО „ШЕСТОДНЕВ“
В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ,
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲԵՐՍԵՂ ԿԵՍԵՐԱՑԻՆ
ԵՎ ՆՐԱ «ՎԵՑՈՐԵԱՆ»
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

A II
56319

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՄ ՀԲԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1976



Մենազրույցյան մեջ գրչագիր և տպագիր սկզբնաղբյուրներ/ ուզնությամբ լուսաբանվում են Բարսեղ Կեսարացու կյանքի ու գործունեության, հայոց հետ ունեցած առնչակցության, մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների ժամանակի ու պարագաների հետ կապված այլազան հարցեր: Կեսարացու թղթերի տեղեկությունների հիման վրա բացահայտվում են նրա՝ Հայաստանում լինելու, նշանավոր անձանց հետ թղթակցելու հանգամանքներն ու դրանց նշանակությունը, ըստ ամենայնի դնահատվում են հայ մատենագիրների տեղեկություններն այդ նոսրումով: Բանասիրական քննության է ենթարկվում «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը: Հունարեն բնագրի, հայերեն ձեռագրերի և վրացերեն թարգմանությունների տվյալներով հաստատվում է «Վեցօրեայի» թարգմանության ժամանակը (V դ. առաջին կես), բացահայտվում են թարգմանության ընդհանուր ու ինքնատիպությունները, սրբագրվում բաղամթիվ յաթարված հատվածներ:

Մ $\frac{70202}{703(02)-76}$ 51—76

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բյուզանդական նշանավոր մատենագիր Բարսեղ Կեսարացին իր կյանքի ու գործունեության, ինչպես նաև մատենագրական ժառանգության շատ կողմերով առնչվում է հայ իրականությանն ու մշակույթին: Իբրև ժամանակի խոշոր գործիչ ու մատենագիր՝ նա Հայաստանում եղել է ճանաչված անձնավորություն և իր ստեղծագործություններով նշանակալի ազդեցություն թողել բազմաթիվ հայ մատենագիրների վրա: Ուստի, Կեսարացու կյանքին ու մատենագրական ժառանգությանը նվիրված ամեն մի ուսումնասիրություն մեղանում՝ ինքնին վերաբերում է նաև հայ մշակույթի պատմությանը, հայկական կամ հայաբնակ միջավայրին:

Տակավին 1830 թվականին վենետիկում հրատարակվում է Բարսեղ Կեսարացու «Ճառք վասն Վեցօրեայ արարչութեան» կամ, ինչպես սովորաբար ասվում է՝ «Վեցօրեայ» երկասիրությունը¹: Մրխիթարյանների հրատարակությունը, բնականաբար, նկատելիորեն պետք է խթաներ Բարսեղ Կեսարացու կյանքի ու գործունեության ինչպես նաև մատենագրության ուսումնասիրությանը մեզանում:

«Վեցօրեայի» լույս բնծայումից ընդամենը վեց տարի անց՝ 1836 թվականին, Կեսարացու մատենագրական ժառանգության թարգմանության մասին գնահատանքի խոսք ասվեց «Նոր հայկազյան բառարանի» Առաջաբանում: Բառարանագիրները սկզբնազբյուր գրոց թվում օգտագործելով Կեսարացու բազմաթիվ ճառեր, առանձին թղթեր և «Վեցօրեայ» երկասիրությունը, ընդհանուր առմամբ նկատում են, որ դրանք էական մասով V դարի թարգմանություն են²: «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանության բնական-համեմատական բնագրի համար այսօր էլ կարևոր են առանձին բառերի ստուգում-ճշտումներն ու հայ մատենագրության մեջ զբյուրանցից մի քանիսի եղակի կիրառության փաստի արձանագրումը, որ կատարել են բառարանագիրները:

¹ ՄՐՐՈՅ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացոց ճառք վասն Վեցօրեայ արարչութեան», Վենետիկ, 1830, էջ 1—201 (այսուհետև՝ «Վեցօրեայ»):

² ՏՆՄ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Կ. Ա, Վենետիկ, 1836, Առաջաբան, էջ 18—19:

Առկա տեղեկությունների համաձայն, Բարսեղ Կեսարացուն անդրադարձած հաջորդ բանասերը Մ. Այվատյանցն է: Վերջինս «Վեցօրեայի» հին և ընտիր գրչությունամբ մի ձեռագրի հայտնությունն առիթով Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» լրագրի 1852—1853 թվականների մի քանի համարներում հանդես է եկել «Վեցօրեայ» ձառերի հրատարակության ու նշված գրչագրի համեմատությամբ և, բնականաբար, արժարժեկ հայերեն թարգմանության որակի հետ կապված ինչ-ինչ հարցեր³:

1856 թվականին Վենետիկում լույս տեսավ Գ. Զարբհանալյանի «Պատմութիւն մատենագրութեան...» ընդգրկուն աշխատությունը, ուր հեղինակը անդրադառնում է նաև Բարսեղ Կեսարացու վարքի ու մատենագրական ժառանգության որոշ կողմերին⁴: Վարքը գնահատելիս Զարբհանալյանը վերաշարադրում է մեր «Հայսմավորների», «Ճառերնտիրների» ու «Վարք սրբոցների» ընձեռած փաստական որոշ տվյալներ, սակայն առանց բանասիրական քննության: «Բարսղի երկասիրութիւնքը» խորագրի տակ նա մի քանի բառով ընդհանուր պատկերացում է տալիս հեղինակի «Վեցօրեայի», որոշ ձառերի և «Պատարագամատուցի» մասին: Զարբհանալյանը մեծ հիացմունքով է ընդգծում Բարսեղ Կեսարացու գործերի լեզվա-ոճական կատարելությունը, այդ առումով նրան բար-

3 Հ. Տաշլանի հաղորդման համաձայն, Մ. Այվատյանցի հոդվածը տպագրվել է «Մասիսի» 1852 թվականի 325 և այլ համարներում (տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց», Վիեննա, 1895, էջ 640), սակայն բանասեր Պ. Տեր-Պողոսյանը նորերս գրեց, թե «Վեցօրեայի» «հրատարակութենէ 22 տարի յետոյ Մասիսի մէջ, Կ. Պ. 1852, Թ. 59—61, Այվատեան Մ. հրատարակ եկաւ նոր ձեռագրի մը գիտով...» (Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 406): Բայց Ղ. Ալիշանի և Գ. Հովսեփյանի վկայությամբ՝ Մ. Այվատյանցի նշված հոդվածը լույս է տեսել «Մասիսի» 1853 թվականի մարտի 11-ի համարում (տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 27, Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 518): «Մասիսի» 1852—1853 թվականների մեղ հետաքրքրող համարները ՀԱՍՀ գրագրարաններում չլինելու պատճառով հնարավորություն չունեցանք ճշտելու հոդվածի տպագրության թվականը և, որ էական է, ծանոթանալ վերջինիս բովանդակությանը: Ուստի և մեր տեղեկությունները վերոգրյալի մասին քաղում ենք նշված աշխատություններից, մասնավորապես՝ Գ. Հովսեփյանի «Յիշատակարաններից»:

Ի դեպ, հանրապետության գրագրարաններում չլինելու պատճառով չենք ծանոթացել նաև Հ. Մարթայանի «Մեծ Բարսեղ Կեսարացի» խորագրի կրող հոդվածին («Քննասեր», 1887, 2-րդ պրակ, «Փարոս», Սոֆիա, 1929, № 28):

4 Տե՛ս Գ. Զարբհանալեան, Պատմութիւն մատենագրութեան լուսաց, հոովմալիցոց եւ հարց եկեղեցւոյ, Վենետիկ. 1856, էջ 731—739:

ձրր դասելով հունական դասական ճարտասանութեան բոլոր ներկայացուցիչներից⁵:

1873 թվականին Արսեն Սուբրյանը հանդես եկավ «Սուրբ Բարսեղ եւ իր երկասիրութիւնքն» հոդվածով⁶, որը հասկանալի պատճառով իր վրա սեևեց Վենետիկի տարեց զիտնականների ուշադրությունը: Սուբրյանը մի քանի բառով պատկերացում տալով IV դարի ուսումնա-կրթական դրվածքի, Բարսեղի ու այլոց Ալեքսանդրիոս Բարսեղի ուսումնառութեան մասին, անցնում է Կապադովկիայի եկեղեցու վիճակի ու նրա հետ կապված այլ խնդիրների բնութայանը⁷:

Ա. Սուբրյանը ջանացել է բացահայտել Կապադովկիայի հոգևորականութեան մի մասի և, մասնավորապէս, Եվսեբիոս Կեսարացու շարժառարանված անբարյացակամ վերաբերմունքը հմուտ ճարտասան ու եկեղեցական գործիչ, արդէն ժողովրդականութեան վալելող Բարսեղի նկատմամբ. «ալնչափ կորոբորի Եվսեբիոս՝ որ ալ զԲարսեղ քովէն կը հեռացընէ»,—նկատում է ուսումնասիրողը:

Հոդվածագիրը նշանակալի տեղ է հատկացնում «Վեցօրեայ» ճառերի բնութայանը, ուր նա առանձին հիացմունքով է խոսում բնութեան Երևույթների Կեսարացու բազմակողմանի ընկալման, հմուտ ու համոզիչ բնութեան մասին: «Վեցօրեայի» հայերեն թարգմանութեան որակի շուրջ ուսումնասիրողի զիտողություններն ալսօր էլ ունեն գիտական որոշակի արժեք⁸:

Թարգմանչի ստեղծագործական ազատութեանը, բնագրից հեռանալու փաստերը և հայերեն թարգմանութեան ու բնագրի ալս կամ ալն հատվածի ոչ զուղակչի լինելը ցույց տալու նպատակով Սուբրյանը համադրաբար տալիս է հատվածներ «Վեցօրեայ» ճառերի Վենետիկի 1830 թվականի հրատարակութեանից և հունարեն բնագրից՝ նոր թարգմանութեամբ: Հայերեն թարգմանութեան լիբրութեան-անճշտութեանների կողքին, նա միաժամանակ բացահայտում է ալնպիսի հատվածներ, ուր հայերենը, իր իսկ բառերով ստած՝ «...տեղ տեղ կճախրէ, կբարձրանալ քան զբնագիրն»⁹:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 733:

6 Տե՛ս «Բարգմալէպ», 1873, էջ 112—126:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 116:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 124: Ալսպես, օրինակ, միանգամայն համոզիչ է ալն զիտողութեանը, թե թարգմանիչը հունարեն բազմաթիվ բառեր նուսութեամբ փոխանցում է հայերենի:

9 Նույն տեղում:

Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» քննական-համեմատական բնադիրը կազմողի համար կարևոր նշանակություն ունեն նորայր Բյուզանդացու դեռևս 1880 թվականին հրատարակած դիտողություն-ճշգրտումները¹⁰: Անվանի հայագետն իր դիտողությունները սկսում է «Վեցօրեայի» առկա հրատարակության քննադատությամբ, թեև հրատարակիչն իսկ նախապես զգուշացրել է, թե այն տպագրվում է ըստ «ոչ հին և ոչ բնտիր գրչութիւն» ունեցող մեկ գրչագրի:

Ն. Բյուզանդացին «Վեցօրեայի» միակ հրատարակության մեջ նկատում է մի շարք բառերի սխալ ընկալման, երբեմն էլ աղավաղման դեպքեր և ձևերի տակ ունեցած Անտոնյան միաբանության «յոժ ընտիր» գրչագրով սրբագրում է դրանք: Չնոգրերի ընդօրինակման ճանապարհով առաջացած այլևայլ բառային աղավաղվածիքներ քննելիս ռուսումնասիրողը առանձին դեպքերում վկայակոչում է «Վեցօրեայում» կիրառված նմանօրինակ բառեր ևս և վերականգնում դրանց ճիշտ ձևերը: Այսպես կոչված՝ «Գ > Դ» շարքի վրիպումները քննելիս նա գտնում է, որ «Վեցօրեայում» առկա զավարսից բառաձևը պետք է փոխարինել դաւաւայ բառով, թեև առաջինն են նախընտրել նոր հայկազյան և հետագա բառարանագիրները, բայց նման փոփոխությունը թելադրվում է հայագետի ձեռքի տակ եղած վերոնշյալ գրչագրով, ուր պահպանվել է դաւաւայից հնագույն ձևը¹¹:

«Մ > Ս» վրիպումների տակ, շեռաս բառի քննության առիթով Բյուզանդացին նկատում է. «Մեր ձեռքը գտնուած նախնեաց մատենագրութիւններէն միայն սրբոյն Բարսղի Վեցօրէին մէջ կը յիշուի այս բառս շեռաս գրութեամբ»¹²: Անտոնյան գրչագրում, ինչպես նաև նոր հայկազյանում և այլուր, թեև շեռաս ձևն է ընդունված, այդուհանդերձ, բառիս ընդհանրությունը շեռամի հետ հիմք է տվել շեռաս բառի մասին որոշ երկբայանքով գրելու. «Բարսղի Վեցօրէին հին ձևագրաց մէջ քննելու է այս բառիս գրութիւնը»¹³:

Գ. Զարբհանայանը Կեսարացու մատենագրական ժառանգությանը երկրորդ անգամ անդրադառնում է 1889 թվականին, հայկ-

10 Տե՛ս Ն. Բյուզանդացի, Հայկական բառարանութիւն. Կ. Պոլիս, 1880, էջ 61—69:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 6:

12 Նույն տեղում, էջ 13:

13 Նույն տեղում:

րեն թարգմանական գրականություն իր ընդարձակ մատենագիտությունը: Աշխատության մեջ տրվում է Բարսեղ Կեսարացու շորջ վաթսուն անուն աշխատությունների հայերեն թարգմանությունների ցանկը¹⁴:

Այս կամ այն երկը բնութագրելիս Զարբհանալյանը նկատի է առնում հայերեն գրչագրերի ու հունարեն բնագրի տվյալները: Կեսարացու կանոնների մասին խոսելիս, օրինակ, նա գրում է. «Ի մեր գրչագիրս մետասան կանոնք միայն. իսկ ի յոյն բնագրին Երկու մասունք. ի միումն վաթսուն կանոնք, իսկ յերկրորդին իննեսասան»¹⁵: Ուսումնասիրողը ևս հաստատում է այն միտքը, թե Բարսեղ Կեսարացու գործերը հայերենի են թարգմանվել մեծ մասամբ մեր Ոսկեդարի թարգմանիչների կողմից:

Բարսեղ Կեսարացու հարցումների, կանոնների առիթով հեղինակը վկայակոչում է գրչագիր տեղեկություններ, որոնք օգտակար կարող են լինել՝ առավել ևս երբ նրան հոյտնի ոչ բոլոր ձևադրերն են նկարագրված ու մատչելի ուսումնասիրողներին¹⁶:

Անդրադառնալով «Վեցօրեայի» հրատարակությանը, Զարբհանալյանը մատնացույց է անում բառային անճշտություններ, որոնք սրբագրելի են հունարեն բնագրի, ինչպես նաև գրչագրերի տվյալներով¹⁷: Խնդրի մանրամասն բնությունը, հասկանալի է, մատենագետի հիմնական նպատակը չի եղել, բայց, այդուհանդերձ, նա արձանագրել է նաև իր բանասիրական դիտումները:

Զարբհանալյանից, Սուրբյանից, Բյուզանդացուց հետո հույ բանասիրության մեջ «Վեցօրեային» անդրադարձավ բանասեր Ս. Նազարեթյանը¹⁸:

Հայագետի նպատակն է եղել հետազոտություններ կատարել հիմնականում երկու ուղղությամբ. տալ բնդհանուր տեղնարկ և քննել

14 Տե՛ս Դ. Զարբհանալյան. Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 325—344:

15 Նույն տեղում, էջ 338:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 330:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 342:

18 Տե՛ս Ս. Նազարեթյան, Ակնարկ ս. Բարսեղի Վեցօրեից վրայ (Պատկեր), հանդիս կիսամսեայ, Կ. Պոլիս, 1892, № 17, էջ 397—401, 1893, № 19, էջ 443—449, № 21, էջ 481—485, № 22, էջ 518—527, № 23, էջ 534—545, 1893, շորրորդ տարի, № 1, էջ 15—24, № 2, էջ 34—40, № 3, էջ 56—62, № 4, էջ 86—92, № 5, էջ 116—120, № 6, էջ 128—134, № 7, էջ 162—165, № 8, էջ 178—183, № 9, էջ 210—216, № 10, էջ 234—239, № 11, էջ 249—254, № 12, էջ 284—288, № 13, էջ 298—302):

«Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությունը: Նկատելի է, որ Նազարեթյանը լավատեղյակ է Կեսարացու մատենադրական ժառանգությունը, մասնավորապես «Վեցօրեայ» ճառերի և հունական այլ հեղինակների ստեղծագործությունների փոխառնչությունը, որը և հնարավորություն է ընձեռել անհրաժեշտության դեպքում դիմելու համադրական վերլուծության:

Իր ընդհանուր տեսություն վերջում Նազարեթյանը նկատում է ևս մի կարևոր հանգամանք. Աստվածաշունչ մատյանը, Օրիգենեսի, Եվսեբիոսի, Հովմերոսի, Դեմոսթենեսի, Պղատոնի, Արիստոտելի, Պլուտարքոսի և այլ մեծ փիլիսոփա-մտաճողների, բանաստեղծների ու գիտնականների ստեղծագործությունները միջնորդաբար կամ ուղղակիորեն ծանոթ են եղել Կեսարացուն: Այս ամենով հանդերձ՝ հողավածագրի նպատակը «Վեցօրեայի»՝ հայերեն թարգմանության քննությունն է, որին և նվիրված է աշխատանքի մեծ մասը: Ս. Նազարեթյանը «Վեցօրեայի» հրատարակությունից (Վենետիկ, 1830) ու հունարեն բնագրից բացի, ձեռքի տակ ունեցել է երկու գրչագիր¹⁹: Գրիչների անհարկի միջամտությունից ղեկավարված հանդերձ՝ նա «Վեցօրեայի» բնագրի ու հայերեն գրչագրերի հիման վրա տասնյակ էական ճշգրտումներ է առաջարկում:

Ս. Նազարեթյանի քննությունից երևում է, որ «Վեցօրեայի» որոշ հատվածների «հայ թարգմանությունն և մանաւանդ տպագրութիւնն կարծես ամենէն աւելի վտանգուած և խեղճուկ կերպարան մը ստանձնած է այս (երրորդ—Կ. Մ.) ճառիս սկիզբն. ինչ որ յոյն բնագիրն կըսէ՝ ըստ ամենայնի հակառակն է հայն. թէ և միշտ բարոյական մտաց բարձրութիւնն պահուած է»²⁰: Միաժամանակ նկատելի է, որ նա հաջող թարգմանության հատվածներ է մատնացուցում անգամ դիտողությունների ենթակա բաժիններում, սրտնցում «հայերէն լեզուի և հայ գրականութեան հրաշալիքն ամփոփուած է»²¹:

Վարդան Հացունին Եզնիկ Կողբացու կյանքին ու գործունեությունը նվիրված իր շատ արժեքավոր քննության մեջ, Կողբացու աղբյուրներին անդրադառնալիս, բնականաբար, շոշափում է նաև Բար-

19 Տն՝ս «Պատկեր», 1893, № 21, էջ 483:

20 Նույն տեղում, № 23, էջ 536:

21 Նույն տեղում, № 3, էջ 58: Ս. Նազարեթյանը անցողակի դիտում է. «...կերևի թէ Արիստոտեսայ գրոց հմուտ անձ մ է հայ թարգմանին, վասն զի նորս «Յգ. Երկնից» գրոց նմանաձայնութիւնն է մերոյս թարգմանչի մկնութիւնն» (նույն տեղում, № 22, էջ 519):

սեղի և Եղնիկի անընչակցության խնդիրը: Բնավ չհամարելով նըշված մատենագիրների քննվող բնագրերից որևէ դրվագ, այլ պարզապես վերապատմելով ընդհանուր տեղիներ ունեցող առանձին հատվածներ երկու մատենագիրներից, Հացունին առհասարակ բացառում է Կեսարացու «Վեցօրեան» Կողբացու աղբյուր գիտելու հնարավորությունը՝ առկա ընդհանրությունները վերապահելով հարցերի նույնությունը և ոչ «Վեցօրեայի» ազդեցությունը:

Հետազոտողը վերջում հզրահայցնում է. ա) «Թերևս չեմք սխալիր, եթէ ըսեմք՝ թէ Եղնիկ բնաւ չէ կարդացեր Վեցօրեայը, գրչադրութեան պատճառաւ իւր դարուն զոց սակաւութիւն լինելով», բ) «Եղնիկ բնաւ կարօտ չէր Թարսղի՝ իւր մեզ թողած գրութեան համար. որովհետև հմտութեանց այն կէտերը՝ որոց մասին երկուքն այլ ճառեր են... Եղնիկ շատ անգամ աւելի տեղեկութեամբ է գրեր», գ) «գիտութեան վերաբերեալ այն կէտերն, զորս գծուարին էր Եղնիկայ փորձառութեամբ կամ անձին ուշիմութեամբ ստանալ, չիրաւի Յունաստանի մէջ ուսու, և ոչ ի Թարսղէ...»²²:

Թարսղե Կեսարացու մատենագրական ժառանգությունյան հաշմատենագիրների վրա թողած ազդեցության, հալ-բլուզանդական գրական անընչակցությունների զնահատման առումով ուշադրություն է արժանի Հ. Թորոսյանի «Անանիա Շիրակացին և Աբարատ թերթին մէկ յաւելուածը»²³ խորագրով աշխատասիրությունը, որտեղ, ի թիվս այլ հարցերի (Շիրակացու ծննդյան թվականի, ապրած ժամանակաշրջանի, ուսումնառության տեղի ու բնութի, որոշ գործերի հեղինակային պատկանելության և այլն), քննվում է նաև Շիրակացու գրավոր աղբյուրների, մասնավորապես Կեսարացու «Վեցօրեայի» ազդեցության խնդիրը:

Համարելով Շիրակացու որոշ գործեր Կեսարացու «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությունը, նա նկատում է, որ Շիրակացու աստղագիտական գործերի, մասնավորապես «Յաղագս Երկրի» աշխատության հիմնական աղբյուրը «Վեցօրեան» է:

Քննվող հոդվածը աղբյուրագիտական որոշակի արժեքից բացի, նպաստ է երկու մատենագիրների (Կեսարացի, Շիրակացի) նշված գործերը գրչական վրիպակներից սրբազրելու առումով, թեև հեղինակի հիմնական նպատակը Շիրակացու սկզբնաղբյուր գրող

22 Վ. Հացունի, Կենսագիր և նկարագիր Եղնիկայ վարդապետի Կողբացու, «Բազմավէպ», 1893, էջ 333—334:

23 «Բազմավէպ», 1896, էջ 214—221.

բացահայտումն է և ոչ թե այս կամ այն բնագրի խաթարված բառաձևի հնարավոր սրբագրումը, ուստի և առաջարկվող վերընթերցումներն արձանագրվել են տողատակում:

Կեսարացու մատենագրական ժառանգության զնահատման գործում առանձնահատուկ տեղ ունի Հովսեփ Գաթրճյանի «Սըրբաղան պատարագամատուցք հայոց» աշխատությունը²⁴, ուր հեղինակը Կեսարացու «Պատարագամատուցի» հունարեն բնագրին զուգահեռ տալիս է հին հայերեն թարգմանությունը՝ այլընթերցումներով ու բազմաթիվ էական ծանոթագրություններով հանդերձ, քննության է առնում վերջինիս հայերեն թարգմանության բնույթի, պարագաների, ժամանակի ու գրչագրերի հետ կապված բազմաթիվ հարցեր՝ ձեռքի տակ ունենալով հայոց հնագույն Պատարագի երկու ընտիր գրչագիր:

Գաթրճյանը «բանասիրական նշաններով» «Պատարագամատուցի» հայերեն թարգմանության մոտավոր ժամանակ է ընդունում 406—475 թվականները²⁵, ելակետ ունենալով հայոց շրջանում այդ հուշարձանի ի սկզբանե օգտագործման պարագան: Ընդ որում, հայերեն առկա թարգմանությունը մասամբ հնարավորություն է ընձեռում սրբագրելու հունարեն բնագրի ընդմիջարկությունները²⁶: Նա հայերեն թարգմանության քննության առիթով նկատում է, որ այն հայոց շրջանում ունեցել է երկու խմբագրություն (թարգմանություն)՝ հին և նոր, վերջինիս մոտավոր ժամանակ ընդունելով Ն! դարը: Սակայն ինչ-ինչ պատճառներով չի մասնավորեցնում սրվյալ հարցի քննությունը:

Եվ ահա «Բարսղի Պատարագին երկրորդ թարգմանությունը» ուսումնասիրությամբ այդ բացը լրացնում է Հ. Տաշյանը²⁷: Նա Բարսեղի «Պատարագամատուցի» երկրորդ թարգմանությունը կատարված է համարում «լամբրոնացուց եւ անկէ կանուխ Գր. Մադիստրոսի օրերէն յառաջ»²⁸: Ուշագրավ է նրա այն դիտողությունը, թե Բարսեղի նշված գործի ասորական, եգիպտական ու հայերեն նոր

24 Հ. Գաթրճեան, Սըրբաղան պատարագամատուցք հայոց, հրատարակելու հանդերձ յաւելուածովք ի Յակովբոսէ Տաշեան, Վիեննա, 1897, էջ 75—171:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 99, 109:

26 Գաթրճյանը հայերեն գրչագրերում հանդիպող բնագրային շեղումները համարում է ավելի շուտ հետադա գրիչների միջամտություն, քան թարգմանչի վրիպում:

27 Տե՛ս Հ. Գաթրճեան, նշվ., աշխ., էջ 171—216:

28 Տե՛ս նույն տեղում, էջ 171:

թարգմանությունը «միեւնոյն կաղապարէն ելած են»: Տաշյանը հնագույն հայերեն թարգմանությունը անվանում է «Կապաղովկեան Բարսեղի Պատարագ», նորը՝ «Բիւզանդեան Բարսեղի»²⁹:

Գաթրճյանի և Տաշյանի երախտիքը Կեսարացու ժառանգութեան ուսումնասիրության գործում առավել ևս մեծ է նրանով, որ մեզանում առաջինը նրանք ձեռնամուխ եղան և իրացրին «Պատարագամատուցի» գիտական-քննական հրատարակությունը:

1905 թվականին Պոլսի «Լոյս» շաբաթաթերթում «Եկեղեցւոյ հայրերը» խորագրի տակ սկսեց տպագրվել Տիրաշյու վարդապետի հոգովածաշարը Բարսեղ Կեսարացու մասին³⁰:

Բարսեղ Կեսարացու կենաց հետ անհշիտ հարցերը քննելիս ուսումնասիրողը, ճիշտ է, չի փորձում շլուծված կամ վիճելի խնդիրների վրա ծանրանալ, բայց օգտվելով մեր «Հայսամալուրքների» ընձեռած տվյալներից, ամբողջական պատկերացում է տալիս Բարսեղի դաստիարակության, կրթության և աշխի մասին:

Ուսանելի են հայագետի մտքերն այն ժամանակվա համալսարանական ուսումնասիրության զրվածքի, Արևելքի կրթական օջախներում դասավանդվող առարկաների, Բարսեղի ուսումնասիրության և աշխի վերաբերյալ:

1906 թվականին Վաղարշապատում լույս տեսավ Հուսիկ եպիսկոպոսի «Անապատականներ և վանականութիւն» խորագրով աշխատությունը, որի «Զ» դրույթը նվիրված է Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու համատեղ վանական կյանքին ու զործունեությունը³¹:

Ի թիվս այլ հարցերի, նա անզրադառնում է նաև Հայաստանի ու Կեսարիայի եկեղեցիների առնչակցություններին և զայիս այն հետևություն, որ «մեր եկեղեցին Կեսարիայի Եթոսի հետ շատ սերտ յարաբերութեան մեջ էր»³²:

Հուսիկ եպիսկոպոսի ուսումնասիրության նպատակը չի կղել վեր հանել Կեսարացու կյանքի ու զործունեության մանրամասները: Բայց այն խնդիրները, որոնք աշխատասիրողը արժարժել է հարա-

29 Նույն տեղում, էջ 172:

30 Տե՛ս «Լոյս», Կ. Պոլիս, 1905, № 29, էջ 702—705, № 30, էջ 730—731, № 32, էջ 768—770, № 31, էջ 831—833, № 36, էջ 864—866, № 38, էջ 910—912, № 45, էջ 1104—1107:

31 Հուսիկ եպիսկոպոս, Անապատականներ և վանականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 44—54:

32 Նույն տեղում, էջ 53:

կից հարցերը քննելիս, անտարակույս, ունեն նշանակալի արժեք: Հեղինակի առանձին հարցադրումներ կարող են օգտակար լինել Բարսեղի վանական գործունեությունը ուսումնասիրողի, ինչպես նաև հայ-հունական եկեղեցական հարաբերությունների պատմությունամբ զբաղվողի համար:

«Բազմավէպի» 1907—1908 թվականների մի քանի համարներում (այնուհետև նաև առանձին) լույս տեսավ բանասեր Գ. Նահապետյանի աշխատությունը՝ «Ս. Բարսղի Կեսարացույ Յաղագս Վեցորեայ աուրց արարչութեան» խորագրով³³: Այն բացառապես աղբյուրադիտական աշխատանք է, որտեղ վկայակոչվում են տպագիր «Վեցորեայի» բազմաթիվ բառային վրիպում-անճշտություններ և վերականգնվում դրանց համապատասխան ճիշտ զուգահեռները:

Կան վերականգնումներ, երբ Գ. Նահապետյանը, հավանաբար, «Վեցորեայի» իմաստային առանձին անհարթություններ հստակելու նպատակով, բառային ավելացումներ է կատարում: Օրինակ՝ «...ունին ըստ իւրաքանչիւր զօրութեան իւրեանց» («Վեցորեայ», էջ 77) մտքի ընդգծված բառը նա վերընթերցում է՝ «ունին կապ կամ հաղորդութիւն ունին», «արամբբ և կանամբբ, և խսոնաղանջ ալալոց» (էջ 80) արտահայտության «աղալոց» բառը՝ «աղալով կամ խսոնաղանջ ձայնիվ տղայոց»³⁴ և այլն:

Բոլոր վերականգնումները չէ, որ ներկայացվում են վերջնական տեսքով, այլ կան դեպքեր, երբ այս կամ այն ընթերցումը կասկածելի է նախ իր՝ առաջադրողի, համար: Նրկբայանքով (հարցականով) են ներկայացված աստին (էջ 30)—կոստեան, նմանի (էջ 44)—բանից, լեգուն (էջ 47)—գեդուն, յավչի (էջ 57)—յանգչի, աշխարհ ի միջի (էջ 73)—աշխարհամիջի, Հիւրկանիայ (էջ 75)—Վրկանայ, արասցուի (էջ 83)—ասասցուի, Բիրիտունի աշխարհիս (էջ 128)—Բրիտանիա աշխարհին, արդարագնացիս (էջ 124)—արագագնացիս, ռգեղարբառ (էջ 163)—տգեղարբառ և նմանօրինակ բառային այլ զուգահեռներ³⁵:

Ի՞նչ հիմքի վրա են կատարված բանասերի վերականգնումները. «Վեցորեայի» բնագրի, թե՞ հայերեն որևէ ընտիր ձեռագրի թեկադրանքով: Նման հարցի սլատասխանը ճիշտ կլիներ փնտրել հոգվա-

33 Տե՛ս «Բազմավէպ», 1907, էջ 395—399, 494—498, 536—538, 1908, էջ 11—18 և այլն, հմմտ. Գ. Նահապետեան, Ուղղագրութիւնը աղային մատենագրաց, Վենետիկ, 1907, էջ 183—248:

34 Նույն տեղում, էջ 496—497:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 399, 494—495, 496—497, 1908, էջ 12—15 և այլն:

ձի սկզբնամասում, ուր ֆուսվում է իր իսկ քննությունը պայմանավորող պարագաների մասին, որտեղ, սակայն, այն բացակայում է: Ավելին, այն տպավորությունն է ստացվում, որ վերականգնումներն առաջադրվում են առավելապես «Կեցօրեայի» հայերեն թարգմանության այս կամ այն հատվածի լեզուարանքով: Ըստ ուսումնասիրողի՝ հունարեն բնագրի օժանդակությունը հրատարակության վրիպումները շտկելու խնդրում նվազում է այնքանով, որքանով «հայերէն թարգմանութիւնը ազատ և ըստ հաճոյս ընդլայնած է բրնագրի խօսքերը և երբեմն նաև իմաստները...»³⁶:

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» Մարիխի հրատարակության առթիվ գրած դիտողություններում Ն. Աղոնցը միաժամանակ անդադառնում է Կողբացու աղբյուրներին և նշում. «Եղծը թում է, որ խնամովեան թելերով կապուած է նաև Բարսեղ Կեսարացու Կեցօրեայի հայերէն թարգմանութեան»³⁷ հետ: Ի հավաստումն ասվածի՝ «Կեցօրեայ» ճառերից (Ա—Բ) վկայակոչում է դանազան հատվածներ և համադրում «Եղծ աղանդոցի» համապատասխան մասերի հետ: Բայց քանի որ հայագետի հիմնական նպատակը նշված հրատարակության ղեհահատում-սրբադրումն է եղել, բնականաբար, Կեսարացու և Կողբացու առնչակցությունն անթափանչ է այս կապակցությամբ միայն և ավարտվել մի քանի նույնական հատվածների, բառ-արտահայտությունների համադրմամբ:

1927 թվականին հրատարակած հոդվածով բանասեր Հ. Թորոսյանը ցույց տվեց, որ հայ մատենագիրների գործերում պետք է փնտրել Բարսեղ Կեսարացու ոչ միայն «Կեցօրեայի», այլ նաև մյուս գործերի ազդեցության հետքեր: Այդ նպատակին է նվիրված ուսումնասիրողի «Համեմատութիւն մը Յովհ. Մանդակունույ «Վասն փոխոց և վախճից» և ս. Բարսղի «Ընդդմ վաշխոդաց» ճառերուն» հոդվածը³⁸:

Նշված ճառերի համեմատությունը ուսումնասիրողին բերում է հետևյալ հիմնավոր եզրակացության. «Մանդակունին իր «Վասն փոխոց և վախճից» ճառին մէջ ուղղակի յոյն բնագրին (Կեսարացու—Կ. Մ.) վրայէն ըրած չէ՝ իր փոխառութիւնները, այլ հայերէն թարգմանութենէն՝ զոր անպատճառ առջևը ունեցած է, քանի որ հայ թարգմանչին ո՛ր միայն բառերն ու բացատրութիւնները՝

36 Նույն տեղում, էջ 395:

37 Ն. Աղոնց, Քննական նշմարներ Եզնիկի մասին, «Բաղմավէպ», 1926, էջ 69:

38 Տե՛ս «Բաղմավէպ», 1927, էջ 65—73:

այլ նույն իսկ անոր վրիպակները անցուցած է իր ճառին մէջ»³⁹: Ասվածի հավաստումը Կեսարացու ճառի հայերեն թարգմանութիւնում առկա հունաբանութիւնների ու հունարենի սխալ ընկալման իրողութիւններն են, որոնք «ուղղակի թարգմանչին են և ո՛չ ձեռագիրներուն օրինակողաց, ինչպես կ'պատահի երբեմն»⁴⁰:

Նա լեզվական քննութեամբ ցույց է տալիս, որ Կեսարացու «Ընդդէմ վաշխողաց» և «Առ ընչեղս» ճառերը ոչ թե V, այլ հետագա դարերի (VI—VII) թարգմանութիւնն են, որոնց ազդեցութիւնը Մանդակունու նշված ճառի վրա բացահայտ է, ուստի և «Վասն փոխոց և վաշխից» ճառը ոչ թե V դարի մատենագիր Մանդակունու գործն է, «այլ ուրիշ Յովհաննէս անուն վարդապետի մը՝ է դարուն կամ ուրիշ յետնագոյն ժամանակի»⁴¹:

Բոլորովին այլ բնույթ ու նպատակ ունի բանասեր Թորոսյանի «Ս. Բարսեղ Կեսարացի, իր Վեցօրեայ ճառերը եւ հայ թարգմանութիւնը» հոդվածը⁴²: Նա հարկ չի համարում քննութեան առարկա դարձնել Բարսեղի Վարքն ու նրա հետ առնչվող այլ հարցեր, քանզի այլազգի անվանի քննադատներ «գրած են հեղինակորեն», այլն ուսումնասիրում է «Վեցօրեայի» թարգմանութեան հետ կապված զանազան հարցեր: Աշխատասիրողը, առանց վերապահման, իբրև թարգմանութեան ժամանակ է ընդունում «Վեցօրեայի հրատարակչի և Նոր հայկազյան բառարանագիրների սահմանած հինգերորդ դարը, թեև վերջինիս փոխարեն նրանք «հին թարգմանութիւն» արտահայտութիւնն են օգտագործում: «Անվիճելի է,—գրում է Թորոսյանը,—որ մեր և դարու ամէնէն աւելի փայլուն շրջանին կրպատկանի սոյն գործը...»⁴³: Նա առավել հիացմունքով է խոսում թարգմանչի «անդուգական հայագիտութեան», քան նրա «յոյն լեզուին և թէ բնական գիտութեանց» բնագավառի պատրաստվածութեան մասին⁴⁴: Ավելին, նա ցույց է տալիս թարգմանչի «հիմնապէս հմուտ շրջալը յոյն լեզուին...»⁴⁵: Այս կարգի վրիպումները նա բաժանում է շորս խմբի:

39 Նույն տեղում, էջ 70:

40 Նույն տեղում, էջ 72:

41 Նույն տեղում, էջ 73:

42 Տե՛ս «Բազմավէպ», 1934, էջ 327—336, 412—422:

43 Նույն տեղում, էջ 331:

44 Տե՛ս նույն տեղում, էջ 332:

45 Նույն տեղում, էջ 334:

ա) Բնագրի սխալ ընկալման հետևանքով առաջացած վրիպումներ. բերվում է թարգմանչի կողմից սխալ ընկալված ու թարգմանված շորս բառ:

բ) Բուլսերի, ձկների և այլ կենդանիների անուններ, որոնք կամ հունարենը չհասկանալու, կամ էլ դրանց համապատասխան հայերենը չիմանալու պատճառով թարգմանիչը «նույն կպահէ գանոնք տառագարձնելով»⁴⁶:

գ) Թարգմանիչը երբեմն բառերի հոգերը, մասնիկները և շաղկապները բառամաս կարծելով՝ դրանք նույնությամբ փոխանցում է հայերենի: Հոգվածում բերվում է այս բնույթի շորս օրինակ⁴⁷:

դ) Կան դեպքեր, երբ թարգմանիչը պահում է այնպիսի բառերի հունարեն ձևերը, որոնց հայերեն զուգահեռները կան ս. Գրքի գրաբար թարգմանության մեջ: Գարձյալ բերում է շորս օրինակ⁴⁸:

Խաթարում-վրիպումների առատությունը նա մասամբ բացատրում է գրիչների անսխալությամբ, միաժամանակ նկատում, որ թարգմանիչը հունական միջավայրում, թերևս, չի էլ ապրել և, բնականաբար, անտեղյակ է հունաց երկրի բնակչի լիմաշակալի և բուսականդանական առանձնահատկություններին:

«Վեցօրեալի» իմաստասիրական և աստվածաբանական գրվածքների և Եզնիկի «Եղծ աղանդոցի» մեջ նա, հաշ բանասիրության մեջ առաջին անգամ, լեզվա-ոճական ու այլ բնույթի աղբյու է տեսնում: Ընդհանրությունը, ըստ հեղինակի, հետևանք է այն բանի, որ «Եղծը» գրելուց առաջ կամ գրելիս Եզնիկը կարգադրել է «Վեցօրեալի» հայերեն թարգմանությունը: «Հետևաբար, — եզրակացնում է Հ. Թորոսյանը, — ս. Բարսեղի սույն ճառերը թարգմանուած ըլլալու են ս. Սահակայ և Մաշթոցի երիցագոյն աշակերտէ մը, որ եթէ Բիզանդիոն երթալու բարեբախտութիւնն ունեցած չէ, ինչպէս ցոյց կուտայ իր հարեանցի դիտութիւնը յոյն լեզուին, սակայն մեր Ոսկե դարու մեծագոյն գրիչներէն պէտք է եղած ըլլայ»⁴⁹:

«Հայ Կեսարիոյ» պատմությունն ուսումնասիրելիս, թեև ոչ թմասնավորի, Բարսեղին անդրադառնում է նաև Արշակ Արլոյաճյա-

46 նույն տեղում, էջ 335:

47 Տե՛ս նույն տեղում:

48 Տե՛ս նույն տեղում:

49 նույն տեղում, էջ 419:



նր⁵⁰: Թեև երբեմն վիճելի⁵¹, բայց հետաքրքիր հարցեր է նա առաջ քաշում: Մակայն հայագետի մտքերը Բարսեղի կյանքի, ուսումնառության, Գրիգոր Նաղիանզացու հետ ունեցած ընկերական կապի մասին բանասիրության արդեն ունեցած տեղեկություններին էական նոր բան չեն ավելացնում: Եվ դա հասկանալի է. ուսումնասիրության նպատակը «Հայ Կեսարիոյ» սկզբնավորման ու զարգացման ամբողջական պատմությունն է:

Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության ձեռագրական հավաքածոների ընդհանրացման գործում կարևոր է Ի. Տրիեստենի «Ս. Բարսեղի հայ ձեռագիրներու հաւաքածոն» հոդվածը⁵², ուր հեղինակը քննում է հիմնականում Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում պահվող Կեսարացու «գրական գործերի» գրչագրերը՝ բացառությամբ Մաշտոց, Ճաշոց, Կանոնագիրքի ձեռագրերի, «որովհետև մի միայն իր գրական գործերը հոս մեր քննության առարկայ պիտի ըլլան»⁵³:

Ուսումնասիրողը ձեռագրերը բաժանում է երկու հիմնական խմբի՝ ա) Բարսեղի գրություններ, բ) բարսեղյան հատակոտորներ պարունակող հավաքածոներ: Առաջին խմբի գրչագրերն էլ իրենց հերթին բաժանում է երեք մասի. Գիրք պահոց, Գիրք հարցողաց, Վեցօրեայք:

Գիրք պահոցի ձեռագրերը նկարագրելիս Տրիեստենը հիմք է ընդունել № 251 գրչագիրը: Նա վկայակոչում է Բարսեղ Սարգսյանի այն դամբ, թե գրչագիրս ընդօրինակված պետք է լինի «1169 և 1180 տարիներու միջև»: Հիմք ձեռագիրը, նույն վկայությամբ՝ 94 է թվականի ընդօրինակություն է եղել: Ճառ առ ճառ նկարագրելով № 251-ձեռագրի պարունակությունը՝ Տրիեստենը այն համեմատումհամադրում է ձեռքի տակ եղած այլ գրչագրերի, ինչպես նաև ձեռագրացուցակների համանուն ճառերի հետ՝ շատեսներով անավարտ, թերավարտ ու հասված ընդօրինակումների կարևորությունը: Ըստ ուսումնասիրողի՝ «Գիրք պահոցի խմբագրությունը 650—660 թուականին վերջը պետք է կատարուած ըլլայ»⁵⁴:

50 Ա. Ալպոյանեան, Պատմություն հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահրե, 1937, էջ 258—259:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 258:

52 Տե՛ս «Բազմավէլս», 1954, էջ 6—10, 65—70, 237—242, 281—287 (Թարգմանությունը՝ Քերոբե Չրաֆյանի):

53 Նույն տեղում, էջ 8:

54 Նույն տեղում, էջ 287:

Գիրք հարցողաց. «այս անուան տակ հաւաքուած են Ս. Բարսղի գրութիւններու հաւաքածոյ մը՝ ճգնողական (Asceticon) անունով ճանչցուած»⁵⁵: Տրիեսուսներ այս շարքի տակ առաջինը նկարագրում է № 1209 գրչագիրը, որի մինչև 346 էջը հարցումներ են (362 հարց), այնուհետև ընդօրինակված են Կեսարացու տասը կանոններ և երկու ճառ: Ըստ ուսումնասիրողի՝ ձեռագիրը (ԺԳ—ԺԶ դդ.) 1895 թվականին վրաստանից է ուղարկվել ս. Ղազար:

Տրիեսուսներ «Վեցօրեայ» գրչագրերի քննության առիթով նկատում է. «Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբ վանքը կը գտնուի խիստ կարևոր գրչագիր մը Ս. Բարսղի, թ. 406, գրութիւն մէ 1319-ի, և կը պարունակէ մասնաւորապէս Ս. Բարսղի ինը ճառերը Վեցօրէից (էջ 1բ—96բ), և Հարցմանց գիրքը (էջ 97բ—178բ... Պահնց գիրքը (էջ 180բ և յաջորդ)»⁵⁶: Այնուհետև նա նկատում է, որ «Վենետիկի Ս. Ղազարու Մատենադարանը Վեցօրէից վրայ ունի երկու ամբողջական ձեռագիր. թ.177 և թ.1459. երկուքն ալ նորագոյն օրինակութիւններ ըլլալու տպաւորութիւնը կու տան, գուցէ ժէ կամ ժԸ դարու»⁵⁷: Ըստ ուսումնասիրողի՝ այս երկու գրչագրերի հիմքի վրա է իրացվել «Վեցօրեայի» միակ հրատարակությունը: Նա-միաժամանակ նկարագրում է ոչ ամբողջական «Վեցօրեայ» գրչագրերը: № 352-ի մասին նկատում է. «Ձեռագիրս կարևոր ծաղկաբազ մը կուտայ Վեցօրէից»⁵⁸, իսկ Բ, Ե, Թ՝ ճառերը ընդօրինակված են №№ 463, 653 (Բ), 512 (Ե, Թ) գրչագրերում:

Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» մասին եղած քննությունների շարքում առանձնանում է Ավետիք Տեր-Պողոսյանի մի ուսումնասիրությունը⁵⁹:

Կենսաբանական մտքի պատմության զարգացման տեսանկյունից քննելով «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը, Ավ. Տեր-Պողոսյանը եզրակացնում է.

ա) «Վեցօրէիցը» կրոնափիլիսոփայական-դիտական մի զբրվածք է՝ նվիրված ս. Գրքի ներկայացրած վեցօրյա արարչագործության պատմությանը:

55 Նույն տեղում, էջ 281:

56 Նույն տեղում, էջ 9:

57 Նույն տեղում, էջ 285:

58 Նույն տեղում, էջ 287:

59 Տե՛ս Ավ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 36—68:

բ) Կեսարացին հմուտ է ժամանակի ֆիզիկական աշխարհագրությամբ, հականե-հանվանե գիտի և ճանաչում է գետերը, ծովակները, ծովերն ու օվկիանոսները:

գ) «Վեցօրէիցում» Կեսարացին ներկայացրել է կենդանարանական և բուսարանական գիտությունները գրեթե այնպես, ինչպես այդ գիտությունները տվել են շուրջ 8 դար առաջ նրանց ստեղծողները՝ Արիստոտել և Թեոֆրաստ:

դ) Բավական հանգամանորեն տրված է արիստոտելյան կենդանարանությունը, նրա դասակարգությունը՝ ջրայինների գերակշռությունամբ, բայց երբեմնակի շեղումներով:

ե) Գիտակ է Արիստոտելի վեր հանած՝ կենդանիների կենցաղի և կազմվածքի համապատասխանությունը, նրանց մանրամասների կորեկյացիայիև, թեկուզև թողած Արիստոտելին, այս հանգամանքը, հասկանալի կերպով, արարչի իմաստությանն է վերագրում և վրիպումներ էլ տալիս:

զ) «Վեցօրէիցի» տված գիտական նյութը ամբողջ IV դարինն է, այդ դարի դպրոցինը: «Վեցօրէիցը» ժամանակի պահանջն է եղել, այդ պահանջի արդյունքը»⁶⁰:

Հայ բարսեղագիտության համար առանձնակի կարևորություն ունի Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունների քննական-համեմատական բնագրերի կազմումն ու հրատարակումը: Այդօրինակ աշխատանքի լավագույն նմուշ է Կեսարացու կանոնների հայերեն թարգմանության համեմատական բնագիրը, որը հանգամանալից ուսումնասիրությամբ հրատարակեց պրոֆ. Վազգեն Հակոբյանը⁶¹:

Գասդասելով Կեսարացու կանոնների գրչագիր ընդօրինակությունները, ուսումնասիրողը վերջնականն ու նախընտրելին համեմատում է հունարեն բնագրի հետ և կատարում հայերեն թարգմանության ներկա վիճակը բնութագրող տեքստաբանական-բնագրագիտական գիտողություններ, Այսպես, օրինակ, Կեսարացու կանոնների հայերեն թարգմանության Ծ հոդվածը ներկայացնում է բնագրի երկու հոդվածների միացություն: Մակայն հայերենը «թարգմանություն չէ, այլ վերաշարագրում, ուր բնագրից ընդարձակ հատվածներ դուրս են գցված և նոր օրինակներով համեմված, Նրբ կար-

60 Նույն տեղում, էջ 63—67:

61 Տե՛ս «Կանոնագիրը հայոց», Վ. Ա., աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 329—362:

դում ես հունարենը, զգում ես, որ դա նամակ է, մինչդեռ այդ բանը հայերենում չի զգացվում, որովհետև այդպիսի տեղերը հայերենից հանված են և այստեղ շարադրանքն իրավաբանական բնորոշումներն է բնույթ ունի»⁶²: Նշահակում է գործ ունենք հայերեն թարգմանություն-խմբագրության հետ: Ըստ Հակոբյանի՝ հունարեն բնագրի համեմատությամբ համառոտված են Ժ, Ժէ, ԺԲ, Իէ, ԼԳ, ԼԶ հոգվածների հայերեն թարգմանությունները: Քայց կան հոգվածներ էլ, որոնց հայերենը մասնակի տարբերությամբ համապատասխանում է հունարենին:

Կեսարացու կանոնների հայերեն թարգմանության գնահատման առումով կարևոր են ուսումնասիրողի այն դիտողությունները, որ վերաբերում են հունարեն առանձին բառերի՝ հայ թարգմանչի ոչ ճիշտ բնկալմանն ու թարգմանությանը: Օրինակ՝ հունարենի *ἔπιτομή* (չախասեր, իրամասեր, բնշամաղց, ազահ) բառը շիտոմի կամ, թերևս, բնագրի *ἐπιτόμης* (բարի, բարեսեր, բարեգործ, պատվասեր) նմանահունչ տարրինթերցման պատճառով թարգմանվել է քրիստոսասեր, իսկ *ἡ ἀπολογία*-ի դիմաց (սաբկավագուհի) հայերեն ձեռագրերը պահպանել են սաբկապագաց ընթերցումը⁶³:

Առանձին կանոնների հայերեն թարգմանության արժեքը ստավել է բարձրանում է նրանով, որ չեն պահպանվել դրանց հունարենները (հոգված ԺԴ, Խ—Ս), իսկ հունարենում էլ կան հոգվածներ, որոնց հայերեն թարգմանությունները ինչ-ինչ պատճառներով չունենք⁶⁴:

Հայերեն կանոնագրքի (ոչ թարգմանական) ստեղծման հետ կապված մանրամասները գնահատելու գործում կարևոր է հետևյալ իրողությունը. իր պրպտումների ընթացքում Վ. Հակոբյանը № 659 ձևագրում հայտնաբերել և կանոնագրքում հրատարակել է Տարսունի եպիսկոպոս Դիոդորին ուղղված կեսարացու այն թուղթը, որի հայերենը գոյություն է ունեցել VIII դարից առաջ և «հետադարձ չովհաննես Օձնեցիի խիստ համառոտելով օգտագործել է այն կանոնագիրքը կազմելիս»⁶⁵: Այն բովանդակությամբ ժամանակի բարոյաչափան թուղթյուններն ամբաստանող, բնդունելի ամուսնական իրավանորմեր սահմանող արժեքավոր փաստաթուղթ է, որի սուսն-

62 Նույն տեղում, էջ 615:

63 Տե՛ս նույն տեղում, էջ 615—617:

64 Տե՛ս նույն տեղում, էջ 617—619:

65 Նույն տեղում, էջ 620:

ձին հատվածներ, ասվեց, օգտագործվել են Օձնեցու կողմից և կազմում են Բարսեղի կանոնախմբի ՄԱ հոդվածը:

Գրքի Հավելվածում սուված են Մատենադարանի № 2151 ձեռագրի պահպանակները, որոնք, ըստ Վ. Հակոբյանի, բովանդակում են Կեսարացու կանոնների ցանկը և մի քանի հոդվածներ⁶⁶:

Վաղգեն Հակոբյանի աշխատասիրությունում լույս տեսած «Կանոնագիրք հայոցի» երկրորդ գրքով իրավամբ ավարտվում-ամբողջանում է տակավին միջնադարում ձևակերպված այդ դժվարին ու աշխատատար գործը⁶⁷: Հատորի ընդարձակ Առաջաբանում Վ. Հակոբյանը բնագրագրիտական սպառիչ քննություն է ենթարկում Բարսեղ Կեսարացուն պատկանող ու վերագրվող կանոնախմբերի հեղինակային պատկանելության, կանոնական նամակների հայերեն թարգմանության, ինչպես նաև առանձին հայ մատենագիրների (մատենագրության) վրա թողած ազդեցության ու այլ հարցեր, որոնց հայագրիտական, ընդհանուր արևելագրիտական նշանակությունն ինքնին անվիճելի է (էջ VII—CXXII):

1967 թվականին «էջմիածին» հանդեսում լույս տեսավ Բ. Վարժապետյանի մի հոդվածը, որտեղ հեղինակը համառոտ տեղեկություն է տալիս Կեսարացու կյանքի, ուսումնառության, հոգևոր գործունեության և այլնի մասին⁶⁸: Հոդվածագիրը իրավացիորեն նկատում է, որ Կեսարացին, այցելելով Պաղեստին, Սիրիա, Եգիպտոս, Միջագետք, «իր անձնական ծրագիրը ուներ, որ բարձրորեն կազմակերպված և իսկապես գործնական մեթոդն էր վանական կյանքի: Կազմակերպողի և վարչագետի իր անզուգական կարողությունները ի գործ դրավ և կարգ ու կանոն մտցուց վանականներու կյանքին՝ մեջ»⁶⁹:

Այնուհետև Բ. Վարժապետյանը նշում է Կեսարացու՝ հայոց եկեղեցու հետ ունեցած անշակցությունը, նրա պայքարը Աբելելքի ուղղադավան եկեղեցիների հարատևման համար ու հակակրանքը ընդդեմ արիոսականության: Այդ առիթով նա վկայակոչում է Բարսեղի և Մողեստոսի (փոխարքա) գրույցից մի հատված, ուր ընդգրծ-

66 Տե՛ս նույն տեղում, էջ 657—668:

67 «Կանոնագիրք հայոց», հ. Բ, աշխատասիրությունում Վաղգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 101—180:

68 Տե՛ս Բ. Վարժապետյան, Ս. Բարսեղ Մեծ հայրապետ, «էջմիածին», ժԲ, 1967, էջ 49—51:

69 նույն տեղում, էջ 50:

վում են Կեսարացու համարձակությունն ու բանավիճելու մեծ ունակությունը:

Առ այսօր Բարսեղ Կեսարացու մասին գրված մեզ ծանոթ վերջին աշխատանքը Պ. Տեր-Պողոսյանի «Ս. Բարսեղ Կեսարացի եւ իր գրությունները հայերէն թարգմանություն» հոդվածն է⁷⁰: Եկեղեցու պատմության համար Կեսարացու ունեցած դերը ընդգծելուց հետո, հոդվածագիրը տալիս է նրա գործունեության ընդհանուր պատկերը, գնահատում Կեսարացու ծնողների, մասնավորապէս, հոր կարեւոր դերը որդու ուսումնառության խնդրում: Հոդվածում պատշաճ շնահատանքով են վեր հանված Կեսարացու և Նազդանդացու փոխհարաբերությունը, Աթենքում ուսանելու տարիներին նրանց մտերմանալը և բազմազգի ուսանողական միջավայրը պայմանավորող գործոնները: Եվստաթիոս Սերաստացու և Բարսեղ Կեսարացու ուշ շրջանի փոխհարաբերությունը գնահատելու իմաստով ուշադրավ է Պ. Տեր-Պողոսյանի այն վկայակոչումը, թե «Եւստաթիոս ս. Բարսեղի համար անծանօթ մէկը չէր: Նա յաճախ իր մօր եւ քրոջ մօտ, որ Իրիս գետի ափին իրենց բնակարանին մէջ իբրև ի միայնարանի կեանք կը վարէին, հիւր կըլլար եւ նաև ազգակցական էպոյ մը ունէր ս. Բարսեղի հետ»⁷¹:

«Ս. Բարսեղի գրությունները հայերէն թարգմանություն» խորագրի տակ Տեր-Պողոսյանը նախ ակնարկում է Կեսարացու մի բանի գործերի հայերէն թարգմանության ժամանակի մասին և ապա ըստ քատարակված ձեռագրացուցակների տալիս զրանց ցանկը: Ըստ հոդվածագրի, V դարի թարգմանություն են՝ «Խորհրդամատոցը, Վեցօրեայքը, Ճառ ի հրախրեալս ի Մկրտումիւն. միսները կրտսէրագոյն ժամանակէ են»⁷²:

Հոդվածագիրը գտնում է, որ գրերի գյուտի ժամանակ հալոց շրջաններում, մասնավորապէս մեր թարգմանիչների միջավայրում Կեսարացու անունը «կը յեղյեղուէր»: Ի հաստատումն ասվածի, նա վկայակոչում է Բուզանդի՝ «Ամենայն մարդ պատուէին զսուրբն Բասիլիոս» սկզբնավորմամբ հայտնի հատվածը⁷³:

Պ. Տեր-Պողոսյանի կատարած պատմա-բանասիրական աշխատանքը ամբողջական ներկայացնելու նպատակով պետք է ստել.

70 Տե՛ս «Հանգէս ամսօրեայ», 1968, էջ 385—418, 1969, էջ 129—158, 257—292, 385—398:

71 Նույն տեղում, 1968, էջ 390:

72 Նույն տեղում, էջ 401:

73 Տե՛ս նույն տեղում, էջ 402:

որ «Հանդէս ամսօրեայի» նույն համարում (էջ 419—438) հոգւածագիրը միաժամանակ հրատարակել է Կեսարացու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառը, որով, հարկավ, մասնավորապէս լրացվում է նրա գործերի հրատարակութեան թերին:

* * *

Այսպիսով, մենք փորձեցինք ընդհանուր պատկերացում տալ հայ բանասիրութեան մեջ տասնամյակների ընթացքում Բարսեղ Կեսարացու շուրջ ստեղծված գիտական հետաքրքրութեան, եղած գրականութեան մասին: Ընդ որում՝ մեր նպատակը հարցի պատմութիւնը ներկայացնելն էր և ոչ հայագետների դրույթների ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու քննութիւնը: Բուն ուսումնասիրութեան ընթացքում, անհրաժեշտութեան պարագայում, անդրադառնալու ենք քննված աշխատանքներից յուրաքանչյուրին՝ նպատակ ունենալով հնարավորութեան սահմաններում հստակել առաջադրված խնդիրները:

Կեսարացու մատենագրական ժառանգութիւնը մեզանում տակավին կարոտ է մենագրական ուսումնասիրութեան և մասնավանդ՝ գիտական-քննական հրատարակութեան: Արդարացի չէր լինի այդ պակասի համար հանդիմանել Կեսարացուն անդրադարձած նախորդ բանասերներից որևէ մեկին, որովհետև նրանք լավագոյն զեպքում ձեռքի տակ ունեցել են մեկ-երկու գրչագիր, մինչդեռ, ինչպէս այժմ պարզվում է, ձեռագրական հավաքածոներում Կեսարացու երկերի տասնյակ ընդօրինակութիւններ կան: Այսպէս, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանում կա «Վեցօրեայի» 21 օրինակ (14-ր՝ բուն Վեցօրեայ, 7-ր՝ բառարան-մեկնութիւններ), այդ թրվում՝ առավել անաղարտ ու հին գրչագիր, քան բանասերները երբևէ ձեռքի տակ ունեցել են:

Պարզվում է, որ Կեսարացու «Վարքի» առկա հրատարակութիւնները մեծապէս զիջում են Մատենադարանի ձեռագրերից մեկին, ըստ որի և սրբագրելի են դրանք: Այդ նույն հավաքածոյում երևան եկան Կեսարացու թղթերի, ճառերի, ներբողիների ու մեկնութիւնների շուսումնասիրված թարգմանութիւններ: Հետաքրքիր ու նոր տեղեկութիւններ գտնվեցին ինչպէս մատենագրի կենսագրութեան, այնպէս էլ նրա գործերի թարգմանութեան պարզանքի մասին: Այս ամենի ուսումնասիրութիւնը մեզ հնարավորութիւն տվեց բավականաչափ ամփոփ ներկայացնելու թե՛ Կե-

սարացու կյանքը և թե՛ նրա մատենագրական ժառանգության բնութագրությունը:

Քիչ նորույթներ չկան նաև Կեսարացու և Հայոց անընչակցության ինդիքների վերաբերյալ: Հայ մատենագիրներին տեղեկություններն այստեղ համադրվում են նրա թղթերի բնձեռած սվյալների հետ:

Ներկա ուսումնասիրության մեջ քննության է առնվում նաև Կեսարացու գրական ժառանգության ազդեցությունը Հայ մատենագրության վրա: Ի լրումն նախորդ բանասերների կատարածի, «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունն ուսումնասիրելիս մենք համեմատության մեջ ենք դրել վերոնշյալ ձևագրերը, հայ մատենագիրների՝ «Վեցօրեայից» քաղած վկայակոչումները, հայկական հողի վրա ստեղծված «Վեցօրեայի» բառարան-մեկնությունները: Այս ամենի բնձեռածը համեմատել ենք հունարեն բնագրին և ըստ այնմ՝ վերականգնել-սրբագրել մերթ «Վեցօրեան», մերթ էլ նրանից կատարված միջնադարյան վկայակոչումները: Աշխատել ենք սահմանել հայերեն թարգմանության ինքնատիպությունները, անհրաժեշտության պարագայում հունարեն բնագրի նախնականությունը հավաստելով վրացերեն երկու (տարբեր լեզուներից կատարված) միջնադարյան թարգմանություններով: Հակված չենք կարծելու, թե մեղ հաջողվել է հաղթահարել «Վեցօրեայի» հայերեն թարգմանության բնագիրը վերականգնելու ողջ բարդությունը: Խնդիրն ակներև դարձնելու համար ասենք, որ թարգմանության հրատարակիչ Արսեն Բագրատունին⁷⁴ նկատել է իր ձեռքի տակ եղած ձեռագիր «Վեցօրեայի» աղարտվածությունը և այն աշխատել է սրբագրել «ըստ լոյն բնագրին և մանաւանդ ըստ կարգի բանիցն պահանջելոյ», որովհետև այն է «ոչ հին և ոչ բնտիր գրչութիւն, այլ վրիպագիր բաղում ուրեք և լանհմտութենէ աղաւաղեալ», ուստի հրատարակության մեջ «մնաց տակաւին ոչ սակաւ մթութիւն և երկբայութիւն աստ և անդ»:⁷⁵ Նոր հայկազյան բառարանագիրները ևս արձանագրել են, որ հրատարակության մեջ եղած աղավաղումները «կարօտին ուղղագրութեան կամ ստուգագրութեան հնագիր օրինակի»⁷⁶: Իսկ ն. Բյուզանդացու բնութագրմամբ՝ «Տպագրու-

⁷⁴ Տե՛ս Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կէանքի, Ե. Ա., Վենետիկ, 1909—1912, էջ 330:

⁷⁵ «Վեցօրեայ», Առաջարան:

⁷⁶ ՆՁԲ. Ա., Առաջարան, էջ 19:

թեամբ ի լոյս ընծայեալ նախնեաց մատենագրութեանց մէջ կրնամ բսել, որ չկայ աւելի ապականեալ եւ խանգարեալ քան զսրբոյն Բարսղի Վեցօրեայն»⁷⁷:

Նպատակահարմար շէր լինի ներկա մենագրութիւն մէջ վկայակոչել ձեռագրերի համեմատութեամբ կատարվող բոլոր ճշգրտումները: Ուստի բավականացել ենք կատարելիք աշխատանքի սկզբունքների հստակմամբ և նպատակին ծառայող օրինակների վկայակոչութեամբ, գրեթե չկրկնելով նախորդ բանասերներէ առաջարկած սրբագրութիւնները: Ընդ որում՝ կատարելիքը բացորոշելու միտումով աշխատել ենք ծանրանալ առավել բնորոշ, բովանդակութեան առումով բազմաբնույթ, ձեռագրերում համեմատաբար ամբողջական ներկայացված երրորդ և չորրորդ ճառերից քաղված օրինակների վրա:

Ներկա ուսումնասիրութիւնը հակված ենք դիտել իբրև Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգութեան հայերէն լրացմանն ու մասնավորապես «Վեցօրեայն» քննական հրատարակութեան նախապատրաստութեան փորձ, իսկ այնուհետև՝ «երեք մեծ կապագովկացիներից» մեկի կյանքին ու մատենագրութեանը նվիրված անդրանիկ մենագրութիւն մեղանում: Իբրև այդպիսին, հարկավ, սույն աշխատանքը կունենա բացեր ու թերութիւններ. լրացումի կարոտ էջեր, բայց, այդուամենայնիվ, հուսով ենք, որ այժմ համեմատաբար դուրին կլինի զբաղվել ինչպես Կեսարացու առանձին գործերի, այնպես էլ Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու ժառանգութեան ուսումնասիրութեամբ: Բլուզանդական այս երևք հեղինակները հայոց շրջանում մեծ համարում են ունեցել, գործունեութեամբ ու մատենագրութեամբ ազդել են հայոց մշակութային կյանքի վրա և հայերենի լրացմանը գերազանցապես V դարում, մեր դարիւթեան սկզբնավորման արշաւույսին: Այդ պատճառով էլ առաջարկվող ուսումնասիրութիւնը հայագիտական բնույթ ու նպատակ ունի:

⁷⁷ Ն. Բլուզանդացի, նշվ. աշխ., էջ 61:

Ապացուցված է, որ Բարսեղ Կեսարացիին ծնվել է 329 թվականին, Կեսարիայում⁴, «ի հօրէ Պոնդացի և ի մօրէ Կապպադոկացի, ոչ յաննշանից ոմանց, այլ ի մեծաց և յերևելեաց և ճշմարտովթեան հաւատովն պայծառ»⁵: Կեսարացու հայրական պապը և նրա կիներ ջերմեռանդ քրիստոնյաներ են եղել: Քրիստոնեություն դեմ տարվող հալածանքներից ազատվելու համար նրանք լոթ տարի անօթեան թափառել են Պոնտոսի անտառներում, զրկվելով իրենց կավածքներից ու զանազան նյութական միջոցներից⁶: Հալածանքի ու

առասպելի շուրջը, «Տեղեկագիր», 1943, № 1, էջ 61, ծան. 1): Թեև ներկա դեպքում «Պամբանականը» մեղ հետաքրքրում է որպես սկզբնաղբուր, անկախ հեղինակային պատկանելությունից, այդուամենայնիվ, ուշադրով է նազիանզացու հեղինակությունը հաստատող հետևյալ վկայությունը. «և մեծն Գրիգոր Աստվածաբանն, որ ասաց ճառս ներբողականս ի Բաղդամն սրբոյն Բարսղի...» (Չեռ. № 84, էջ 261ա, հմմտ. ձեռ. № 1879, էջ 196ա—բ, 199ա—202ա, ձեռ. № 4150, էջ 20բ, ձեռ. № 8179, էջ 292ա, թճուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միխիլաբեանց ի վիճենա», կազմեց 3. Տաշեան, վիճենա, 1895, էջ 70, 829: Չեռագրերում նույնը պահպանվել է նաև մի փոքր այլ խմբագրությունը. «Պատուեաց զնոսս ներբողական ճառիս, այլև՝ ի Բաղդամն սրբոյն Բարսղի Կեսարացոյն՝ ասաց սուրբն Գրիգոր ճառս ներբողական...» (Չեռ. № 7357, էջ 255բ):

⁴ «Vita S. Basilii Magni» (տե՛ս Migne, Patrologia Graeca, т. 29 (այսուհետև՝ PG), էջ VI և առհասարակ: Կեսարացու ծննդյան թվականը շուրջ եղել են որոշ տարակարծություններ: Տարբեր ժամանակներում ծննդյան թվական են առաջադրվել՝ 299-ը (տե՛ս Մ. Մուրատեանց, Պատմութիւն քրիստոնեական եկեղեցւոյ, Գալաց, 1898, էջ 170), որը միայն վրիպակ կարող է լինել: 303-ը (տե՛ս «История русской литературы», т. I, М.—Л., 1941, էջ 187), 320-ը (տե՛ս Ա. Սուրեան, Մեծն ներսէս Պարթև, «Բազմավէպ», 1877, էջ 323), 326-ը (տե՛ս Հուսիկ Եպիսկոպոս, Անաստատականներ և վանականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 44), «Ըստ ոմնաց՝ լամի 328 և ըստ այլոց՝ 317» (տե՛ս «Իրականոր վարք», էջ 325), 330-ը (տե՛ս Ծ. Տեր-Մինասեան, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա, էջմիածին, 1908, էջ 269, А. Архимандрит, Жизнь святого Василия Великого, архиепископа Кесарии Каппадокийского и его пастырская деятельность. СПб., 1873 էջ 20, Н. Каменский, Св. Василий Великий, арх. Кесарий Каппадокийский, СПб., 1894, էջ 3, Ф. Фаррар, Жизнь и труды св. отцов и учителей церкви, СПб., 1891, էջ 453, «Жития святых, празднуемых прав. русскою церковью», под ред. Д. И. Протопопова, Москва, 1892, էջ 7, С. Радциг, История древнегреческой литературы, М., 1939, էջ 551, «История Византизма», т. I, М., 1967, էջ 53):

⁵ Չեռ. № 6036, էջ 205ա, հմմտ. ձեռ. № 437, էջ 317ա, ձեռ. № 4150, էջ 21ա, ձեռ. № 621, էջ 55ա, ձեռ. № 3275, էջ 147բ:

⁶ «Творения иже во святых отца нашего Григория Богослова, архиепископа Константинопольского, Слово 43, Надгробное Василию...» 1912, էջ 605 (այսուհետև՝ «Պամբանական»):

րոշ թուլացումից հետո միայն նրանք հնարավորություն են ունենում վերագառնալ Պոնտոս: Այստեղ Բարսեղ Կեսարացու հոր՝ Բարսեղի, դաստիարակությունից զբաղվում է նրա տատը՝ Մարրինան: Վերջինս Բարսեղին (Կեսարացու հորը) հնարավորություն է ընձեռում հաճախելու վարժարաններ, հմտանալու առանձնապես ճարտասանության մեջ: Բարսեղ Կեսարացու հայրը կարճ ժամանակում աչքի է ընկնում իր ընդհանուր պատրաստվածությունից, մասնավորապես ճարտասանական արվեստի փայլուն ունակությունից՝ դրանով իսկ որոշակի հեղինակություն դառնալով Պոնտոսում, Կապադովկիայում, Փոքր Հայքում⁷:

Բարսեղ Կեսարացու մայրը՝ էմիլյան, նույնպես կրթված անձնավորություն է եղել, ծագումով բնիկ կապադովկացի⁸: Նրա ծնողները, շատերի նման, ժամանակին տանջամահ են եղել ի սեր Քրիստոսի: Նազիանզացին Բարսեղ Կեսարացու և նրա ծնողների արժանավորությունը շեշտելու համար գրում է. «Բարսեղ Կեսարացու համար գերադասելի էր սերվել այս և ոչ ուրիշ ծնողներից, նույնպես նաև նրանց համար հաճելի էր համարվել Բարսեղի և ոչ այլ որևէ մեկի ծնողները»⁹:

Կեսարացու ծնողները բազմադավակ են եղել՝ չորս տղա՝ Բարսեղ, Նավկրատիոս, Գրիգոր Նյուսացի, Պետրոս Սեբաստացի և վեց աղջիկ¹⁰:

⁷ «Դամբանական», էջ 607.—609, հմտ. «Իսկատար վարք», էջ 326:

⁸ Ձև. № 6036, էջ 205ա, հմտ. ձև. № 4150, էջ 20ա—բ, «Христианское чтение», СПб., 1866 (январь). էջ 17, Գ. Զարբանակեան, Պատմություն մատենագրության յունաց, հովմայեցոց և հարց եկեղեցոյ, Վենետիկ, 1856, էջ 731, А. Архимандрит, նշվ. աշխ., էջ 14. Е. Лебедева, Св. Василии Великий. СПб., 1902, էջ 3—4:

⁹ «Դամբանական», էջ 606:

¹⁰ Նավկրատիոսը արտակարգ ընդունակ պատանի է եղել: Նա 22 տարեկան հասակում մեծ հռչակ է ձեռք բերել ճարտասանությամբ: Անժամանակ մահը վերջ է տալիս տաղանդավոր պատանու կյանքին: (Փ. Փարթաբ, նշվ. աշխ., էջ 459, В. Treuicker, Politische und sozialgeschichtliche Studien zu den Basiliius Briefen, München, 1961, էջ 16): Գրիգոր Նյուսացին (331—394) ինքնակրթությամբ ու բնատուր օժտվածությամբ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու հետ կարողացավ «երևր մեծ կապադովկացիներից» մեկը դառնալ:

Ձեռագրերում պահպանվել են Նյուսացուն բնորոշող այսօրինակ բնութագրումներ. «...եղբայր էր սրբոյն Բարսղի Կեսարացոյն՝ յոյժ հանճարեղ և զիտնական, բանիրուն և զեղեցկախօս, լի շնորհօրն աստուծոյ...»: (Ձև. № 10326, էջ 259ա):

Մի զրչագրում Բարսեղի բրոշ՝ Մարրինայի, մասին ասված է. «Սա բոլր էր սրբոյն Բարսղի Կեսարաց[ւ]ոյն, և երկաթով էր պատեալ զանձն»: («Յուցակ հա-

Մանուկ հասակում Բարսեղ Կեսարացու ծանր հիվանդանալը, որը հիշվում է գրեթե բոլոր սկզբնաղբյուրներում, լուրջ անհանգրստություն է պատճառում հարազատներին, առանձնապես հորը, որը և, ի սեր որդու ապաքինման, թողնում է Կապադովկիան և հաստատվում Պոնտոսում: Այստեղ Բարսեղի դաստիարակությունը յոթ տարի հանձնված էր Մաքրինային, որի մասին Կեսարացին հետագայում գրել է. «Խոսում եմ հիշարժան Մաքրինայի մասին, որից և ուսանել եմ ևս երանելի Գրիգորի վարդապետությունը»¹¹:

Պոնտոսում են սնցել Բարսեղ Կեսարացու մանկությունն ու նախնական ուսումնառությունը. այնտեղի իր առաջին դաստիարակին ու ուսուցչունուն նա միշտ էլ հիշել է երախտագիտությունը¹²:

Գրիգոր Նազիանզացու վկայությամբ՝ Բարսեղը, մինչև Կապադովկյան Կեսարիա ուսանելու գնալը, Պոնտոսում, հոր անմիջական նախաձեռնությամբ ուսումնառության առաջին փորձերն էր անում, որը «ոչ նապաստակ խփելու, ոչ այժ խրտնեցնելու և ոչ էլ եղնիկ որսալու էր վարժեցնում... այլ ուսուցանում էր գիտություն սկզբնական ուրտները և աստվածասիրություն սերմանում. մի խոսքով՝ ամենաառաջին դասերով իսկ մղում հետագա կատարելություն»¹³:

Տեղեկությանս հեղինակ Նազիանզացին, հարկավ, ծաղրում է ժամանակի որոշ դատարկաբան ուսուցանողների մեթոդն ու էությունը և միաժամանակ ընդդժում այն միտքը, որ Բարսեղ Կեսարացու հայրը այդ կարգի մարդկանցից չէր: Եվ իրոք, Բարսեղը կարճ ժամանակում ձեռք է բերում գիտական որոշ պատրաստություն, և հայրը վճռում է ուսումնառությունը շարունակելու նապաստակով նրան ուղարկել Կեսարիա:

Ե՞րբ և ո՞ր Կեսարիա: Կեսարացու մասին եղած գրականություն մեզ երբեմն որոշ երկրնորանքից հետո է նրա ուսումնատեղին համարվում Կապադովկյան Կեսարիան¹⁴: Խնդրի վերջնական

յնին ձևագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա», հ. Բ, կաղմեց 2. Ասկեան, Վիեննա, 1963, էջ 205): Բարսեղի մյուս եղբայրը՝ Պետրոսը, «փակակալ եղեալ եկեղեցոյն Կեսարու, յետոյ ղմիայնականն ընտրեաց վարս...»: (Զեռ. № 1379, էջ 200ա): Պետրոսը 380 թ. դառնում է Սեբաստիայի Եպիսկոպոս:

¹¹ «Творения иже во святых отца нашего Василия Великого, архиепископа Кесарии Каппадокийского», М., 1892. Թուղթ 196 (այսուհետև՝ Թուղթ), «Լիակատար վարք», էջ 325:

¹² Թուղթ 196 (204), 215 (223):

¹³ «Դամբանական», էջ 610:

¹⁴ Տիրալը վարդապետը տարակուսելով է նախապատվությունը տալիս Կապա-

Հատակման համար կարևոր են Գրիգոր Նազիանդացու և Բարսեղ Կեսարացու հաղորդումները IV դարի Կապադովկյան Կեսարիայում գոյություն ունեցող կրթական զրվածքի ու զարգացած գիտական մտքի մասին: Գրիգոր Նազիանդացին վկայում է, որ Կեսարիան համարվում էր լուսավորության կենտրոն և կարող էր հոյարտոնալ գիտնականների շատությունը: Ավելին. խոսելով Բարսեղի՝ Կեսարիա ուսանելու գնալու մասին, նա ավելացնում է. «եսոսում եմ մեր հանրահայտ Կեսարիայի մասին (քանզի այն ինձ համար էլ ուղեկից ու դաստիարակ է եղել), որին առանց տարակուսելու կտրելի է անվանել գիտության օջախ և իր ենթակայության տակ գտնվող բնակավայրերի քաղաքակրթության օրրան»¹⁵:

Հաստատվածի «մեր հանրահայտ» բնորոշումը ինքնին ապացույց է այն բանի, որ խոսքը Կապադովկյան Կեսարիայի մասին է, որովհետև ինքը՝ Գրիգոր Նազիանդացին էլ գործունեության ոլորտով նույն Կեսարիայից էր և գրում է իր բնակավայր-քաղաքի արժանիքների ու դասնկերոջ՝ Բարսեղ Կեսարացու, ուսումնասության մասին:

Վերոբերյալ հաղորդումը, որին ոչ մի հիմք չունենք չհավատալու, հնարավորություն է տալիս պնդելու, որ Բարսեղ Կեսարացին ուսանել է Կապադովկյան Կեսարիայում, որ, անշուշտ, կար բարձրագույն դպրոց¹⁶: Գրչապրերում, ինչպես նաև տպագիր աղբյուրներում Կեսարիայում Բարսեղի ուսանելու ժամանակամիջոց են համարվում մի դեպքում 5, մեկ այլ դեպքում՝ 7 տարիներ¹⁷, որ, հարկավ, արդյունք է «Ե» և «Է» տառերի շփոթի:

դովկյան Կեսարիային, քանզի «Կեսարիա Պաղեստինացոց աւելի մեծ համբաւ մը կվայելէր իր դպրոցներով եւ մատենադարանով»: (Տ. վարդապետ, Եկեղեցոյ հայրերը «Լոյս», № 29, էջ 703): Բանասերի այս միտքը, հավանաբար, գալիս է «Լիպատար վարրից», որտեղ Պաղեստինյան Կեսարիան բնորոշված է «առավիլ ծաղկեալ» արտահայտությամբ («Լիպատար վարր», էջ 326—327):

15 «Դամբանական», էջ 610:

16 Ն. Աղունց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 501: Այսուհետև աշխատության մեջ «Կեսարիա» հիշատակելիս նկատի ունենք Կապադովկյանը:

17 Ձեռ. № 948, էջ 148բ, ձեռ. № 992, էջ 194բ, ձեռ. № 3275, էջ 147բ, հմտ. ձեռ. № 84, էջ 253ա, ձեռ. № 993, էջ 727ա, ձեռ. № 4150, էջ 59ա-բ, ձեռ. № 6036, էջ 205ա, ձեռ. № 437, էջ 314ա, Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 70, 232, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Ա, կաղմեց Ն. Պողարեան, Երուսաղեմ, 1966, էջ 506, «Այսմաւորք», Կ. Պոլիս, 1730, էջ 283, «Յայսմաւորք», Կ. Պոլիս, 1884, էջ 1: № 621 դրչազրի համաձայն (էջ 55ա)՝ 7-ամյա Բարսեղը Կեսարիայում ուսանել է վեց տարի (2-ամ):

Համոզիչ է այն վկայությունը, թե «ծնօղբ սորա է ամեայ ետուն յուսումն գրոց և է ամ ի դպրոցի կացեալ և ժ՛՛ն ամեայ եղեալ դնաց յԱթենս՝ ի մայրն իմաստութեանց»¹⁸: Ուրեմն, 7-ամյա Բարսեղը 336 թվականին ընդունվում է Կեսարիայի դպրոցը և ուսանում յոթ տարի: Այսպես ընդունելու դեպքում 343—344 թվականներին ավարտվում է Կեսարիայում սկսած՝ Բարսեղի ուսումնառության առաջին շրջանը: Կարևոր է, սակայն, այսպես կոչված, կեսարյան նշված ուսումնառությանը վերաբերող Գրիգոր Նազիանզացու հետևելայ բնորոշումը. «Նա ճարտասան էր ճարտասանների մեջ՝ մինչ նրանց ունկնդրելը, փիլիսոփա էր փիլիսոփաների մեջ՝ մինչ փիլիսոփայության դասընթացն անցնելը»¹⁹: Այս բնորոշման մեջ, ըստ էության, գնահատված է Բարսեղ Կեսարացու ուսումնառությունը՝ սկսած Մաքրիմայի դասերից ու դաստիարակությունից մինչև Կեսարիայի դպրոցն ավարտելը, որտեղ նա միաժամանակ արժանանում է ոչ միայն ուսանողության, այլև Կեսարիայի թեմի արքեպիսկոպոս Դիոնիսիոսի համակրանքին:

Աթենք մեկնող Բարսեղ Կեսարացին «ոչ ընդդիմադրեալ յուսմունսն՝ ցանկայր հմուտ լինել փիլիսոփայական արուեստիցն. զմտաւ ածէր թողոյ զբնակութիւն իւր, զի էր ի Կեսարիա Կապադոկիացոց»²¹: Սակայն հիմքեր կան ենթադրելու, որ Կեսարացին ուսանել է նաև Կ. Պոլսում, ուր կային ճարտասանության և փիլիսոփայության նշանավոր ուսուցիչներ ու ուսումնարաններ, որոնց համբավի մասին խոսում էին քաղաքի սահմաններից շատ հեռու²²:

Բարսեղ Կեսարացու Կ. Պոլսում ուսանելու պարագայի շուրջը հայագիտությանը շահագանցող քիչ բան է հայտնի: Ուսումնասի-

¹⁸ Ձեռ. № 9063, էջ 95ա, հմմտ. ձեռ. № 992, էջ 194բ, ձեռ. № 1879, էջ 268բ, ձեռ. № 4755, էջ 211ա:

¹⁹ «Դամբանական», էջ 611:

²⁰ Թուղթ 47, հմմտ. «Lettres», I, LI.

²¹ Ձեռ. № 948, էջ 148բ, հմմտ. ձեռ. № 6036, էջ 205բ, ձեռ. № 993, էջ 727ա. «Վարք և վկայաբանութիւնք սրբոց», Կ. Ա, Վեներտիկ, 1874, էջ 222 (այսուհետև՝ «Վարք և վկայաբանություն»):

²² «Դամբանական», էջ 611: IV դարից սկսած՝ փառաբանված համալսարաններում ուսանելու առանձնահատուկ ձգտում կար: Մարգիկ, բազում դժվարություններ հաղթահարելով, ջանում էին ձեռք բերել անտիկ մշակույթի ու դասական լեզուների իմացություն: Գրիգոր Նազիանզացու «Վարքում» զրառվել է ուսումնառության ճանապարհին տեղի ունեցած նավարկության հետևյալ դրվագը. «Ի ծովու նաւն ալէկոծեալ ընկզմէր: Եւ սուրբն Գրիգոր առօթիւք խնդրեաց յԱստուծոյ իազաղաշունչ ծովուն, և ապրեցան ի վտանգէ ալէկոծութեան: (Ձեռ. № 7337, էջ 255ա—բ):

յողներին շատերը բնավ չեն անդրադառնում նույնիսկ նշանավոր կիրանիոսին (314—393) աշակերտելու խնդրին, ոմանք էլ առանց բանասիրական հետադրման չեն ընդունում կամ, թերևս, լավագույն դեպքում կասկածի տակ են առնում ավյալ իրողությունը²³։

Մակայն N 6036 գրչագրում Բարսեղի մասին որոշակի ասված է, որ նա Կեսարիայում ուսանում է մինչև 14 տարեկան դառնալը «և ապա ելեալ զնաց ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպօլիս...»²⁴։

Բացի այդ, Կեսարացու «Վարքի» հնագույն գրչագրում բազմիցս խոսվում է Կ. Պոլսի համալսարանի նշանավոր հետտոր կիրանիոսի և Բարսեղի ծանոթությունն ու մտերիմ փոխհարաբերությունն վերաբերյալ։ Ավելին, որոշակի ակնարկ կա նրանց զբաղեցնող խնդրի մասին. «իսկ Ղևոնիոս սկսանէր ի խնդիր ինչ ընդ նոսա (իմա՝ Բարսեղի և այլոց հետ—Կ. Մ.) ի բանս հոետորականս, և նոքա առաջի եղեալ զբանս յաղագոս հաւատոցն Քրիստոսի»²⁵։

«Վարքի» մեկ այլ՝ N 4150, ձեռագրում Բարսեղ Կեսարացու և նրա զասընկերների մասին ասված է. «Հանգիպեցան հանձարեղ վարդապետի, որում անուն էր կիբիանոս և ուսան ի նմանէ վճռմերոսի ստորոգությունն ի հոետորականս շարամեկնել, և ժորա ուսուցին նմա և աշակերտաց իւրոց զպատուիրանս աւտուածային գիտութեան»²⁶։

Տարրաբլր ևս Բարսեղ Կեսարացու երկրորդ ուսումնատեղին համարում է Կ. Պոլիսը, որտեղ և տեղի պիտի ունենար նրա և նշանավոր հետտոր կիրանիոսի ծանոթությունը։ Բայց նա կասկածի տակ է առնում առկա նամակագրություն հավաստիությունը²⁷։

Մակայն կիրանիոսին ուղղված Բարսեղի պատասխան լղվե-

²³ Կ. Զարբանալյանը բնավ չի երկմտում Բարսեղի՝ Կ. Պոլսում ուսանելու, նշանավոր ճարտասան կիրանիոսին աշակերտելու խնդրում։ (ՏԵՍ նրա նշվ. աշխ., էջ 731, նաև՝ Ա. Ալպոլսեյան, նշվ. աշխ., էջ 258)։

²⁴ Զեռ. N 6036, էջ 205ա, հմմտ. ձեռ. N 437, էջ 314ա։

²⁵ Զեռ. N 948, էջ 151բ—152ա։ Ղևոնիոսը նույն կիրանիոսն է։

²⁶ Զեռ. N 4150, էջ 59բ, հմմտ. ձեռ. N 3275, էջ 147բ, ձեռ. N 9063, էջ 95ա, ձեռ. N 54, էջ 253 բ (Իբիոս փի. կիրանիոս, ձեռ. N 2046, էջ 56ա, կիրանոս փի. կիրանիոս, ձեռ. N 621, էջ 55), ձեռ. N 1522, էջ 377ա (Լիւանոս), ձեռ. N 4755, էջ 211բ. ձեռ. N 5179, էջ 281ա—ր (Լիւարանոս), ձեռ. N 10326, էջ 241ա, «Ալսմավորք», Կ. Պոլիս, 1730, էջ 111, «Յալսմաւորք», Կ. Պոլիս, 1834, էջ 1, «Լիակատար վարք», էջ 327։

²⁷ Փ. Փզրթար, նշվ. աշխ., էջ 382, 455, նաև՝ էջ 978-ի 15-րդ ծան.։

րր²⁸ արժարժած հարցերի բնույթով տւ լրջությամբ որոշակի վկայութիւն են երկու անձանց ծանոթության: Ավելին, պարզւում է, որ Բարսեղ Կեսարացին կիբանիոսին աշակերտելուց հետո էլ շարունակել է նրա աշխատութիւնները ուսումնասիրումը, երբեմն պահանջել որևէ նորավարտ գործ, ուսումնասիրել այն ու հիացմունքի խոսքեր գրել նրան: Թղթերում էլ, հարկավ, ոչ մի ակնարկ չկա այն մասին, թէ ինքը երբ և որքան ժամանակ է աշակերտել կիբանիոսին: Համենայն դեպս՝ դա պետք է լիներ 344—351 թվականներին, քանի որ 343 թվականին, ասվեց, դեռևս Կեսարիայում էր ուսանում, իսկ 352 թվականին, ինչպե՞ս կտեսնենք, մեկնում է Աթենք:

Այն մտերիմ զրույցը, որ կա Բարսեղի թղթերում, այն խրնդրանք-խորհուրդը, որով պատվիրում է կիբանիոսին Կապադովկիայից աշակերտներ վերցնել, Բարսեղի հիացմունքը նրա գիտության, արվեստի շուրջ և, վերջապես, եղած ձեռագրական տեղեկութիւնները հավաստի վկայութիւններ են նրանց ծանոթության ու մտերիմ փոխհարաբերության²⁹: Հոգուտ ասվածի է խոսում նաև հետևյալը՝ հայտնի է, որ Բարսեղ Կեսարացու եղբայրը՝ Գրիգոր Նյուսացին, զանազան պատճառներով (հոր մահը, նյութական անպահով վիճակը և այլն) չի աշակերտել ժամանակի նշանավոր ճարտասաններին, սիստեմատիկ կրթութիւն չի ստացել, բայց, այդուհանդերձ, իրեն աշակերտն է համարում նշանավոր կիբանիոսի, որովհետև նրան աշակերտած իր եղբայրը՝ Բարսեղը, հաճախ էր խոսում իր ուսուցչի ճարտասանական հմտութիւնների ու կարողութիւնների մասին³⁰:

Կեսարացին որքան էլ աշակերտեր Կեսարիայի և Կ. Պոլսի նըշանավոր ճարտասան-փիլիսոփաներին, այնուամենայնիվ, IV դա-

²⁸ PG, t. 32, էջ 1077—1099, հմմտ. Թուղթ 326 (335), 327 (337), 329 (342), 330 (344), 331 (348), 332 (350), 333 (351), 334 (353), 335 (356): Հոմերական արվեստի նշանավոր ուսուցանողին՝ կիբանիոսին, Բարսեղի աշակերտելու օգտին կարող է վկայել նաև «Վեցօրեայ» ճառերի վրա «Իլիականի» թղած ազդեցութիւն ունեցող փաստը, որը նկատել է բանասեր Ս. Նազարեթցիանը: (ՏԵՍ նրա՝ Ակնարկ ս. Բարսեղի Վեցօրեայի վրայ, «Պատկեր», 1893, № 19, էջ 446):

²⁹ Թաղցիգը կիբանիոսի մասին գրում է. «Он был учителем императора Юлиана и выдающихся христианских проповедников—Василия Великого, Иоанна Златоуста и Григория Богослова» (С. Радциг, նշվ. աշխ., էջ 549, 551):

³⁰ А. Мартынов, Учение св. Григория еп. Нисского о природе человека, М., 1886, էջ 6:

րում անհնարին էր պատկերացնել ավարտուն ուսումնառություն առանց Աթենքի համալսարանի: Այն միակ տեղն էր, ուր Բարսեղը մտտիկից կարող էր ծանոթանալ, այսպես կոչված, արտաքին գիտություններին, որոնց իմացությունը հնարավորություն էր ընձևառում լավագույն ձևով պայքարելու բազմաթիվ ազանդավորական շարժումների դեմ: Բացի այդ՝ նա, փաստորեն, Աթենքի համալսարանում ուսանելիս միայն հնարավորություն ունեցավ պատկերացնելու քրիստոնեության բացահայտ առավելություններն ու առանձնահատկությունները, առանց որոնց անհնար կլիներ կողմնորոշվել այն պայքարում, որ այնուհետև տարիներ շարունակ վարեց նա հոգուտ քրիստոնեության տարածման ու վերջնական հաղթանակի: Եվ, վերջապես, Աթենքը այն միակ բազմազգի ուսանողական միջավայրն էր, որտեղ Կեսարացին հարազատի մտերմությունաբ կապվեց Գրիգոր Նազիանզացու հետ, իսկ վերջինս բացառիկ կարևոր դեր խաղաց նրա կյանքում՝ սկսած Աթենքում ուսանելու տարիներից մինչև մահը³¹:

³¹ Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին (328—389) միմյանց ճանոթ էին դեռևս Կեսարիայի դպրոցում ուսանելիս: «Գիրք պատճառացում» նրանց մասին ասված է. «...դատումնակցութիւն ևւ ըզպիրոյն կապ, որ առ միմեանս ի մանկուրեմէ»: (Զեռ. № 1879, էջ 193ա, հմմտ. ն. Պողաբլան. նշվ. աշխ., էջ 506. Ա. Архидеодорит նշվ. աշխ., էջ 45. Н. Калачский. նշվ. աշխ., էջ 9, Е. Лебедева. նշվ. աշխ., էջ 9—10, Дюж. Робертсон, История христианской церкви, СПб., 1890, էջ 241, «Жития святых». էջ 7, Տիրալը վաղապետ, նշվ. աշխ., էջ 704. Ա. Ալոյալանյան, նշվ. աշխ., էջ 262):

Աթենքում Քարսեղի, Նազիանզացու և այլոց հետ էր ուսանում նաև Հուլիանոսը: Գրչագրերում պահպանվել է Բարսեղի և Հուլիանոսի հետագա փոխհարաբերության այս դրվագը. «Ընդ ժամանակս ընդ այնոսիկ ևլ Յուլիանոս ի Պարսս տալ պատերազմ և ևկեալ ի կողմանս Կեսարացոց բազարին, իսկ Բարսիդոս հանդերձ այլովք ոմամբբ, որ ընդ նմայն էին, ևլ ի հանդիպումն նմա: Եւ տեսեալ զնա թագսոր»՝ ասեր ցնա. իմաստնացա՛ր, ով Բարսիդէ: Ասէր ցնա՛ այո՛ իմաստասիրեցի: Իսկ սուրբն բերնալ Լու նմա ներս նկանակս նշխարի, իսկ նորա՛ թշնամանս համարեալ զսակաւ ընծայն առնուլ զնշխարսն, հրամանաց և բերողացն հրամանաց զի տացեն խոտ փոխարեն: Իսկ իբրև աո՛ ասեր ցնա. մեր, ո՛վ թագսոր, բուտի շաշակեար՝ արձակեցար ձեզ, իսկ զուր յորմէ կերակրիք ասարեցէք մեզ կամաւորապէս որպէս ընդ ծաղրականս, իսկ ակամա արաւ տականս արարեր զմեզ և իռաւարա: Իսկ Յուլիանոսի լուեալ զայս և ցաւամար ասէ... յորժամ զՊարսս նազանդեալ պարտեցից և դարձայց յայնժամ կործանեցից զբազաբդ բո...» (Զեռ. № 1522, էջ 379բ, հմմտ. ձեռ. № 8179, էջ 282ա—բ, ձեռ. № 4755, էջ 256ա. ձեռ. № 10326, էջ 241բ, ձեռ. № 84, էջ 254բ, ձեռ. № 9063, էջ 95բ—96ա, ձեռ. № 1879, էջ 269ա. ձեռ. № 992, էջ 195բ, ձեռ. № 4150, էջ 60ա, ձեռ. № 621, էջ 55ա—բ): Չնուարական տեղեկություններից դատելով, Գրիգոր Նազիանզացին ևս կանխատեսել է Հուլիանոսի ապագան. «Ձոր տեսեալ Գրիգոր Աստուածարանն և 3*

Սկզբնաղբյուրների մեծ մասը գրեթե ոչինչ չի հաղորդում Բարսեղ Կեսարացու Աթենքի համալսարանում ուսանելու մասին, մի մասն էլ շափազանց թոուցիկ, երբեմն էլ իրարամերժ տվյալներ է պարունակում քննվող խնդրի շուրջը: Ամենահավաստին հետեւյալն է. «Մայրն նորա առեալ զնա եջ յԱթենս՝ պարկեշտութեամբ բազմաւ եւ ժուժկալութեամբ, իմաստութեամբ զարդարեալ եւ երթեալ առ իմաստասէր վարդապետն հեղենացուոց, որում անունն էր Եւուղղոս եւ տուեալ զնա յուսումն փիլիսոփայութեան»³²:

Գրիգոր Նազիանզացին իր և Բարսեղի աթենյան ուսումնառութեան առիթով նկատում է. «Աթենքում մեզ ընդունեցին արտակարգ աղմուկով, մեզ, որ ծնունդ ենք միևնույն աղբյուրի, այսինքն՝ նույն հայրենիքի...»³³: Նազիանզացու այն վկայությունը, թե Աթենքի ուսանողությունը խմբավորվում էր ըստ ազգային պատկանելության, հավանաբար հայազգի սովորող երիտասարդության որոշ խմբի՝ Կեսարացու նկատմամբ ունեցած վարմունքն է ակնարկում, որը, թվում է, նորեկին ծաղրելու ընդունված սովորությունացի բացի, ուներ նաև այլ պատճառ³⁴, Բարսեղի հետ բանավեճ են բացում իր հայրենի քաղաքի ծանոթ դասընկերները: Դա ինքնին ենթադրել է տալիս, որ Կեսարիայում ուսանելիս Բարսեղի և նրանց մեջ թերևս վեճեր են եղել, հավանական է, դավանանքի հարցերի շուրջ և, ինչպես հուշում է Աթենքում Բարսեղին պատժելու և էրենց ազդեցությունը ենթարկելու նրանց մտայնությունը, երբեմնի բանավեճում նրանք չեն շահել: Հօգուտ ասվածի է խոսում նաև Գրիգոր Նազիանզացու հետևյալ հաղորդումը. Աթենքում արդեն գիտեին Բարսեղ Կեսարացու մասին, նրա անունը շատերն էին կրքերնում, Աթենքի հայազգի ուսանողներից ոմանք, որոնց Բարսեղը

մարգարէաբար ասաց Յուլիանոսի, թէ՛ ո՛վ պատանի, ո՛չ երեխն ի քեզ շնորհք աստուածային» (Ձեռ. № 10326, էջ 241ա, հմմտ. ձեռ. № 1879, էջ 196ա, 199բ):

³² Ձեռ. № 948, էջ 148բ: Մեկ այլ դրչադրում (ԺՅ դար) կարողում ենք. «...և տեսալ զԲարսիլիոս Եւղոսի և ծանուցեալ զնոսա՝ զարմանայր ընդ իրան... աւլաչէր, զի արժանատրեսցի ընդունել զնոսա ի տուն իւր» (Ձեռ. № 1522, էջ 377բ):

³³ «Դամբանական», էջ 612: Ի դեպ, հայտնի է, որ Աթենքի ուսանողությունը խմբերի էր բաժանվում կամ ըստ ազգային պատկանելության, կամ էլ ըստ նախընտրած դասայտեսների: (E. Лебедева, նշվ. աշխ., էջ 9):

³⁴ Յուրաքանչյուր նորեկ ուսանողի ընդունման ընդհանուր սկարզից բացի, ամեն խումբ իր մասնավոր, ծանակող պահանջ-խնդիրները կարող էր առաջադրել նորեկին: Ընտրելին հանդիսավոր ուղեկցությամբ հրապարակով տանում էին բաղնիք..., երբ մոտենում էր բաղնիքին, ամբոխը քրքշում էր, որը նշանակում էր, թե նորեկը այլևս առաջ չպիտի շարժվի, կանգնած պիտի մնա, բանդի բաղնիքը չի ընդունում: («Դամբանական», էջ 613):

ձանաչում էր դեռևս Կեսարիայի դպրոցից և ընկերական հարաբերությունների մեջ էր, «բարեկամաբար» մոտենում էին նրան և առաջադրում վիճելի, ոչ խելամիտ հարցեր՝ նպատակ ունենալով Կեսարացուն իրենց հակողության տակ վերցնել³⁵: Վեճին միջամտում է նաև Գրիգոր Նազիանզացին և Բարսեղի հետ հաղթանակ տանում: Հենց այդ վերաբերմունքն էլ փառաբանված քաղաքի նկատմամբ առաջին խոր հիասթափությունն է առաջացնում Կեսարացու մոտ³⁶: Եվ դա այն փոքրիկ ժամանակահատվածում էր, քանի դեռ չէին սկսվել համալսարանական հաճախումները:

Աթենքի համալսարանում դասավանդվող հիմնական առարկաներից էին՝

ա) Քերականություն, որ այն ժամանակ նշանակում էր դասական հունարենի, պոեզիայի կանոնների, եկեղեցական պատմության, գրականության, ընդհանուր պատմության բնագավառների ուսումնասիրում և պատմա-բանասիրական բնություն համոզում:

բ) Ճարտասանություն, որով հարց ու պատասխանի ձևով վիճաբանելու հատուկ արվեստ էր մշակվում: Աղոնցի բնորոշմամբ՝ ճարտասանությունը «հարկավոր էր ոչ միայն հեթանոս ազանդավորների, այլ և քրիստոնեայ հերձուածների դեմ պայքարելիս»³⁷:

գ) Փիլիսոփայություն, ինչպես նաև համարողական արվեստ (մաթեմատիկա):

Նազիանզացու վկայության համաձայն, Բարսեղը դիտության յուրաքանչյուր բնագավառ ուսումնասիրում էր կատարելության աստիճանի: Ո՞վ կարող էր չսովելել նրա հետ ճարտասանության բնագավառում, փիլիսոփայության մեջ ո՞վ էր ավելի ուժեղ, քան նա: Թերևս ավելի հեշտ կլիներ դուրս դալ լաբիրինթոսից, բան նրա փաստերի կապակցումից, երբ ինքը դրանց կարիքը զգար³⁸:

Աթենքում ուսանելիս Կեսարացին առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերել նաև բնական դիտությունների՝ աստղադիտության, երկրաչափության և բժշկության նկատմամբ: Նազիանզացին Բարսեղի հետաքրքրությունը բժշկությամբ բացատրում է նրա վատառողջությամբ³⁹: Այդուհանդերձ, հայտնի իրողություն է, որ այն ժամանակ համալսարանական կրթություն ստացողները

35 «Դամբանական», էջ 613—614:

36 Նույն տեղում, էջ 614—615:

37 Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 503:

38 «Դամբանական», էջ 617—618:

39 Նույն տեղում, էջ 618:

առանձին առարկաների ճշուղով մասնագիտանալուն զուգահեռ, ձեռք էին բերում ընդհանուր իմացություն գիտության գրեթե բոլոր բնագավառներում: Թվում է, այս տեսանկյունով պետք է գնահատել նաև Բարսեղ Կեսարացու հետաքրքրությունը նշված ճշգրիտ գիտությունների նկատմամբ:

Բարսեղին դասավանդում էին հայազգի Պրոյերեսիոսը⁴⁰, իմաստասիրության վարդապետ Եվուղոսը⁴¹, ճարտասանության փառաբանված ուսուցիչ Հիմերիոսը⁴² և այլք, որոնց Գրիգոր Նազիանզացին հոչակավոր է անվանում:

Եվուղոսը Բարսեղ Կեսարացուն «...դիրութեամբ հաւանալ այնչափ, մինչև զարմանալ ընդ նա վարդապետին եւ աշակերտացն, քանզի էր նորա աշակերտակից Գրիգորիոս Մեծն»⁴³:

Ճետաքրքիր է այն իրողությունը, որ Աթենքի փառաբանված համալսարանի ուսուցիչների մեջ կային հեթանոսներ, որոնք դասավանդում էին վաղուց քրիստոնեությունն ընդունած պատանիների: Հեթանոսության երկրպագու էր նաև հիշյալ Եվուղոսը: Բարսեղ Կեսարացին «ինզրէր եւ զԵւուղոս վարդապետն իւր, վասնզի նա էր առաջնորդ բանին, փոխարեն աշխատութեան նորա բերեալ զամբիծ հաւատսն, զի դարձուցէ զնա յուղեղ հաւատս»⁴⁴: Այլ վկայութեամբ՝ Կեսարացին «եւ անտի դարձաւ յԱթէնս՝ առ Եւուղոս վարդապետն իւր և մեծաւ ջանիւ արար զնա քրիստոնեայ և առեալ տարաւ զնա յԵրուսաղէմ...»⁴⁵:

Բարսեղը Աթենքի համալսարանում ուսանեց 352—356 թվա-

⁴⁰ «Իրակատար վարբ», էջ 327—328, հմմտ. *Е. Печенева*, նշվ. աշխ., էջ 14, Ա. Ալպոյանյան, նշվ. աշխ., էջ 262:

⁴¹ Ձեռ. № 948, էջ 148բ, ձեռ. № 2046, էջ 56ա, ձեռ. № 84, էջ 253ա, ձեռ. № 4150; էջ 59բ, ձեռ. № 992, էջ 194բ:

⁴² Հիմերիոսը (մոտ 315—386) նույնպես ուսանել էր Աթենքում և դարձել նույն համալսարանի նշանավոր ճարտասաններից մեկը: Ըուփանոսի խնդրանքով նա դարձավ վերջինիս բարտուղարը: Սակայն ըուփանոսի մահից հետո (27 հուլիսի 363 թ.) Հիմերիոսը նորից հրավիրվեց համալսարան և մինչև մահը ավանդեց ճարտասանություն, նա թեև ընդունեց քրիստոնեություն, բայց հաշտ էր ու համբերատար քրիստոնյաների նկատմամբ: (*Տե՛ս Փր. ЛЮБКЕР, Реальный словарь классической древности*, М., 1884, էջ 486, հմմտ. «Христианское чтение», էջ 319):

⁴³ Ձեռ. № 948, էջ 148բ:

⁴⁴ Ձեռ. № 948, էջ 149ա, հմմտ. ձեռ. № 3275, էջ 147բ, «Վարբ և վկայարանություն», էջ 223—224:

⁴⁵ Ձեռ. № 10326, էջ 241ա, հմմտ. ձեռ. № 992, էջ 195ա, ձեռ. № 2046, էջ 56ա, ձեռ. № 4150, էջ 59բ, ձեռ. № 621, էջ 55ա, ձեռ. № 4755, էջ 211բ:

կաններին⁴⁶: Ապա նա «Ելանէ անտի նախքան զԳրիգոր Աստուածաբան և գա ի գաւառն իւր Կեսարիա, և յայն ժամանակս ունէր զաթոս եպիսկոպոսութեան Կեսարու Երանելիին [Եւ]սեբիոս:»⁴⁷:

Կեսարացու աթենյան ուսումնառության ավարտը գնահատելիս կարևոր է իր մի Թուղթը՝ ուղղված Նազիանզացուն: Պարզվում է, որ նա թողել է Աթենքը ոչ այնքան ուսումնառության ավարտի պատճառով, որքան միջավայրից հարկադրված: Նա Աստվածաբանին բացատրում է. «Ի վերջումս գալստսիկ ի գիշերի և ի տուէ գրբւլ ամաչեմ, քանզի թողի զքաղաքիս կրթարանս իբրև զբիւրոց շարեաց պատճառս, իսկ զիս ինքն շև ևս ի բաց կարացեալ թողուլ»⁴⁸: Այնուհետև նույն Թղթում Կեսարացին իր թափառ կյանքը համեմատում է անփորձ նավարկության մատնվածների հետ, որոնք նույն ծովում նավակները փոխելով «ամենայն ուրեք նուեն»⁴⁹:

Ինչ հիմք կարող էր ունենալ Բարսեղի զմգոհությունը ուսումնառության միջավայրից: Հնարավոր է, արդյոք, ենթադրել ատանձին հեթանոս ուսուցիչների և Կեսարացու վատ փոխհարաբերություն, մանավանդ որ, ասվեց, Աթենքի համալսարանում կային բրիստոնեությունը շրնդունած դասախոսներ և նույն Թղթում միևնույն առիթով առկա է Կեսարացու «ուրացութիւն շար վարդապետութեանցն»⁵⁰ զմգոհ արտահայտությունը: Բարսեղ Կեսարացու անգոհության պատճառ կարելի է դիտել թերևս նաև Աթենքի ուսանողության որոշ խմբի (ըստ Նազիանզացու՝ հայազգի) հետևողական հալածանքը Կեսարացու: Լկատմամբ, որը շահույթ մտերիմ բնկերոջ (Նազիանզացու) խնդրանքն անգամ և թերավարտ ուսումնառությունամբ թողեց Աթենքը:

Գրիգոր Նազիանզացին համեմատաբար ընդարձակ մանրամասներով է ներկայացնում Բարսեղի աթենյան ուսումնառությունից վերադառնալու իրողությունը: Նրա այն արտահայտությունը, թե «Բարսեղը նավ էր՝ դիտությունմբ ծանրաբեռնված»⁵¹, որոշակի ափսարկ կարելի է դիտել Աթենքում նրա ստացած բազմակողմանի դիտելիքների խորություն մասին:

⁴⁶ Հստ Ֆարրարի՝ 354—358 (Փ. Փարրար, նշվ. աշխ., էջ 456), «Христианское чтение»-ի և Ջ. Թորեբրոտտի՝ 351—355 («Христианское чтение», էջ 18, Дж. Робертсон, նշվ., աշխ., էջ 241):

⁴⁷ Ձև. № 6036, էջ 205բ, հմմտ. ձև. № 4150, էջ 21ա, ձև. № 3275, էջ 148ա:

⁴⁸ Ձև. № 5595, էջ 345բ:

⁴⁹ Նույն տեղում, հմմտ. «Կեցօրեայ», էջ 154:

⁵⁰ Նույն տեղում, էջ 346ա:

⁵¹ «Գամբանական», էջ 618:

Կեսարիա յո՞ւմ սիրով են ընդունում Բարսեղ Կեսարացուն: Հարգարժան քաղաքացիներից հատուկ խումբ է կազմվում, որը նրան առաջարկում է դբադեցնել նեոկեսարիայի փաստաբանի աթոռը՝ խոստանալով և՛ փառք, և՛ հարստություն:⁵² Սակայն, ի պատասխան այլոց հավաստիացումների, «Բարսեղը գրում է. «Կատարյալ անհայտություն մեզ լինելը ինձ համար առավել ցանկալի է»⁵³: Միաժամանակ, շցանկանալով ընդդիմանալ համաքաղաքացիների թախանձանքներին, Գրիգոր նազիանզացու բնորոշմամբ՝ նա «կարճ ժամանակով» ընդառաջում է ինչպես կեսարացիներին, այնպես էլ նեոկեսարացիներին և ցույց տալիս իր ճարտասանական արվեստի կատարելությունը՝ թե՛ որպես փաստաբան և թե՛ որպես ճարտասանություն ուսուցիչ:

Սկզբնաղբբյուրներում ոչինչ չի ասվում այն մասին, թե նա որքան ժամանակ է աշխատում նշված բնագավառում: «Կարճ ժամանակով» բնորոշումը հիմք է տալիս ենթադրելու, որ Բարսեղը երկար տարիներ չի աշխատել որպես ճարտասանության ուսուցիչ: Հայտնի է, որ Կեսարացին այնուհետև մի քանի ճանապարհորդություններ է կատարում⁵⁴: Բարսեղ Կեսարացու թղթերում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նրա ճանապարհորդության և անապատական կյանքի մասին⁵⁵:

Աթենյան ուսումնառությունը, մասնավորապես փիլիսոփայության դասընթացի տիրապետումը, ինչպես նաև անապատական կյանքի նկատմամբ ունեցած երբեմնի հետաքրքրությունը, Կեսարացուն ստիպեցին վանական կյանքին ըստ ամենայնի հաղորդակցվելու նույնատիպ լինել Ալեքսանդրիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Ասորիքում⁵⁶: Ասվածք հավաստվում է Բարսեղի մեկ այլ

⁵² Նույն տեղում, էջ 619—620:

⁵³ Թուղթ 202, հմտ. «Lettres», II, CCX:

⁵⁴ «Դամբանական», էջ 619: Ուսումնասիրողներից Ջ. Ռորերտոնը գտնում է, որ Բարսեղ Կեսարացին Աթենքից վերադառնալիս անմիջապես Կեսարիա չի եկել, այլ եղել է Եգիպտոսում, Պաղեստինում, Միջագետքում՝ այդ տեղերի վանական կյանքին ծանոթանալու նպատակով և 1—2 տարի մնալուց հետո միայն վերադարձել է Կեսարիա: (Док. Робертсон, նշվ. աշխ., էջ 241): Նազիանզացու հակառակ պնդումից բացի՝ անհավանական է կարծել, թե Բարսեղը առանց հարազատների այցելելու, որ հինգ տարի սպասում էին, ձեռնաբերի մի ճանապարհորդություն, որը տևական կարող էր լինել:

⁵⁵ Թուղթ 215 (223):

⁵⁶ «Լիակատար վարք», էջ 332, Գ. Զարբանալյան, նշվ. աշխ., էջ 732, Տիրալվարդապետ, նշվ. աշխ., էջ 768, A. Архимаандрит, նշվ. աշխ., էջ 61, E. Ле-

Թղթով⁵⁷, ուր նա կամենում է հետաքրքրվել մենակյացների կյանքով, լինել անհայտություն մեջ: «Եւ յևտ հնգետասան ամին զնայ Բասիլիոս յկղեքսանդր Եգիպտոսի և կեցեալ ժամանակս ինչ առ Պորփիրիոս, հավանեաց առաջնորդի, ուսաւ ի նմանէ զԱստուածաշունչ գիրս և յևտ տարոյ միոյ զնայ յՅրուսաղէմ, տեսանել զտուրբ տեղեան և երկիր պագանեղ»⁵⁸: Գրչագրի նշված ժամանակը, հարկաւ, վերաբերում է Կեսարիայի դարոցն ավարտելուն: «Եւ անտի զնայ ի քաղաքն յԱնտիոք, և ձեռնադրեցաւ Բասիլիոս ի Մելիտոսէ եպիսկոպոսէ և պատրիարղէ սարկաւագ, և նորին հրամանան մեկնեաց զգիրս առակացն Սողոմոնի»⁵⁹:

Նա արտակարգ զարմանքով, հաճախ էլ հիացմունքով է պատմում իր այցելած վայրերի մենակյացների մասին: Զարմացնողը առանձնապէս նրանց շափավոր սնունդը, աշխատանքի համբերատարությունը, անտրտունջ աղոթիւնն ու մշտական աղքատությունն են⁶⁰: Հիշյալ ճանապարհորդութեամբ Կեսարացին մատիկից շփվեց քրիստոնեությունը պաշտոնապէս ընդունած եկեղեցիների, վանականութեան հետ, առաջին անգամ ականատես եղավ արիոսականների անողորդատաստաններին՝ ընդդէմ ուղղափառ եկեղեցու և նրա հովանավոր հոգևոր դասի:

Բարսեղ Կեսարացին մոտ 360 թվականին վերադառնում է Կեսարիա: Արեւելք կատարած ճամփորդութեան հիման վրա նա հանդում է երկու կարևոր հետևություն, թե՛ ա) մարդիկ չպետք է անպայման առանձնություն մեջ ապրեն, բ) անձնուրացություն և անձնաշարժար լինելու շափազանցություններին վերջ պնդելու համար պետք են կանոններ⁶¹: Հավանական է կարծել, որ այս բնույթի խնդիրների համակողմանի քննություն տրվել է, ինչպէս ցույց է տալիս Գրիգոր Նազիանզացու պատասխան Թուղթը⁶², որ Բարսեղը վերջինիս հիշեցնում է համատեղ գործելու ամենայն պայմանավորվածություն մասին:

Թեմա, նշվ. աշխ., էջ 25, «Жития святых», էջ 9, «Духовная беседа», СПб., 1874, էջ 102:

57 Թուղթ 202, հմտ. «Lettres», II, CCX:

58 Անտ. № 4150, էջ 59ր, հմտ. ձեռ. № 84, էջ 253ա, ձեռ. № 948, էջ 152բ—153ա:

59 Անտ. № 84, էջ 253ր, հմտ. ձեռ. № 4150, էջ 21ր:

60 Թուղթ 215 (223):

61 Հմտ. Փ. Փարթար, նշվ. աշխ., էջ 459, Հուսիկ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 45:

62 Թուղթ 1, հմտ. «Lettres», I, 1:

Բարսեղ Կեսարացիին արդեն ունեւր իր որոշակի խնդիրները: Սակայն Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի թափուր տեղի համար ծայր առած անհամաձայնությունները միառժամանակ խոչընդոտեցին նրա գործնական նկատառումները: Թափուր տեղի համար հոլովում են Եվսեբիոսի և Բարսեղի անունները: Նազիանզացու վրկայութեամբ՝ «Եվսեբիոսին ընդդիմանում էր եկեղեցու ընտրյալ և իմաստուն խաւը»⁶³: Կեսարացու թեկնածությունը համեմատաբար ավելի շատ կողմնակիցներ ունեւր, և դա հասկանալի է. զնահատվում էին սիստեմատիկ կրթությունը, լավատեղյակությունը եկեղեցու գործերին, վանականութեան հակումներին և, վերջապես, ճարտասանական արվեստի նրա բացառիկ օժտվածությունը: Սակայն, ի վերջո, Եվսեբիոս Կեսարացիին է դառնում արքեպիսկոպոս⁶⁴:

Գրիգոր Նազիանզացիին շխորանալով արքեպիսկոպոսի ընտրութեան հետ կապված մանրամասների մեջ, գրում է, որ Բարսեղի և Կեսարիայի թեմի առաջնորդ Եվսեբիոսի միջև անհամաձայնութեան առաջացավ: Թե ինչպես և ինչ խնդրի շուրջ՝ զերադասում է իռեկ⁶⁵: Թվում է, տարախկարծութեանների խթան կարող էին լինել եպիսկոպոսի ընտրութեան առիթով առաջացած թեր և ղնմ կողմերի անհարկի միջամտութեանները: Սակայն Նազիանզացու մեկ այլ հաղորդում պարզորոշ ասում է, որ Բարսեղ Կեսարացիին իրեն առաջադրողներին համաձայնութեան չէր տալիս⁶⁶: Նազիանզացու օգտագործած «անհամաձայնութեան» բառը թույլ է տալիս կարծել, որ այն կարող էր առաջանալ մասնաւոր հարցի շուրջ: Անհավանական չէ, որ Բարսեղ Կեսարացիին հայրենի քաղաքի եկեղեցու որսը նորմեր վերանայելու վերոհիշյալ իր տեսակետն է առաջադրում նորընտիր արքեպիսկոպոսին, իսկ վերջինս առարկում:

Բնավ շխորացնելով Եվսեբիոսի հետ ունեցած տարաձայնութեանը, Կեսարացիին թողնում է Կեսարիան և պարփակվում Պոնտո-

63 «Դամբանական», էջ 621:

64 Եկեղեցու գործերին մասնակից ու մոտ կանգնած անձինք հիմնականում ղեմ էին Եվսեբիոսի ընտրութեանը՝ պատճառաբանելով, թե մկրտված չէ: Սակայն Նազիանզացիին վկայում է, որ այդ երևութիւնը այն ժամանակ բացառված չէր («Դամբանական», էջ 620): Ի դեպ, Նազիանզացիին մեծարանքով է արտահայտվում Եվսեբիոսի մասին: («Դամբանական», էջ 621):

65 «Դամբանական», էջ 621, հմմտ. «Լիակատար վարք», էջ 335:

66 «Դամբանական», էջ 622:

սի իր մենաստանում⁶⁷, ուր 360—364 թվականներին ձեռնամուխ է լինում վանական բնույթի հաստատությունների ստեղծմանը⁶⁸:

Վանքերի ու վանական դասի նշանակությունը մեծ էր քրիստոնեության հաստատման ժամանակ, երբ անօրինակ զոհաբերություններ էին պահանջվում. պետք էր կտրվել աշխարհական կյանքից ու մտածողությունից և աներևակայելի խստակցացությամբ ուսումնասիրել ս. Գիրքը: Ահա թե ինչու վանքերը հիմնվեցին անմարդաբեակ վայրերում, իսկ նրանցում ապաստանած վանական դասը տարիներ շարունակ շոր հացով էր սնվում՝ դրանով իսկ օրինակ ծառայելով այլոց համար: Ընդհանուր առմամբ՝ այս տեսանկյունով պետք է գնահատել Բարսեղ Կեսարացու առանձնության կարևոր պարագան⁶⁹:

Բարսեղ Կեսարացին հիացմունքով է խոսում իր նախընտրած մենաստանի մասին. «Ամենից կարևորն այն է, որ, — գրում է նա, — այս տեղն ինձ համար ծնում է պտուղներից քաղցրագույնը՝ անդորրը, քանզի աղատված եմ ոչ միայն քաղաքային ժխորից, այլ բացալալում է ճամփորդն անգամ, բացի որսի ժամանակ մեզ հանդիպողներից»⁷⁰:

Ստանալով Բարսեղի Թուղթը⁷¹, Նազիանզացին ևս միտածամանակ գնում է Պոնտոս: Խաղաղ, անաղմուկ Պոնտոսի մենաստանում նրանք գբաղվում են ս. Գրքի ըստ ամենայնի ուսումնասիրու-

67 «Գամբանական», էջ 622. «ЖИТІЯ СВЯТЫХ», էջ 8—9, Ա. Ալպոլսեյան, նշվ. աշխ., էջ 254: Գրիգոր Նազիանզացու առանձին թղթեր հիմք են տալիս պրնցիպու, որ Եվսերիոսը Բարսեղի հետանալուց հետո ջանացել է կապ պահանջել Նազիանզացու հետ, հաղորդակից դարձնել նրան իր հովված եկեղեցու ներքին անցուղարձին, դրանով իսկ, թերևս, հող նախապատրաստել բարձրագույն իր և Բարսեղի փոխնարարելությունը: Սակայն Նազիանզացին գրում է. «Ինչ վիրավորելով նրան (իմա Բարսեղ Կեսարացուն—Վ. Մ.) կամենում ես ինձ հարգանք մատուցել, դա նույնն է, թե մեկը մի ձեռքով օրև, մարդու դուխը շոխ և մյուս ձեռքով ապտակի նրան: Իմ դործը Բարսեղին հետևելն է, ինչպես ստվերը մարմնին»: (Թուղթ 12 (20)): Գր. Նազիանզացին մեկ այլ թղթում պատճառաբանում է արքեպիսկոպոսի խնդրանքն առարկելու իր համարձակությունը: (Թուղթ 13 (169)):

68 Дж. Робертсон, նշվ. աշխ., էջ 241, հմմտ. Տիբայր վարդապետ, նշվ. աշխ., էջ 831:

69 «Это удаление Василия составляет предмет весьма великой исторической важности. На основании его историкки представляют Василия основателем того учреждения, которое впоследствии имело огромное влияние на жизнь христианского общества» («Христианское чтение», էջ 22):

70 Թուղթ 14, հմմտ. «Lettres», I, XIV:

71 Թուղթ 2, հմմտ. «Lettres», I, II:

թյամբ, եկեղեցու նշանափոր անձանց, իրենց ուսուցիչների աշխատությունների ընթերցմամբ և, վերջապես, միասին գրում են «Ս. Գրիքը և նրա մեկնաբանը՝ Օրիգենեսը» եկեղեցու համար անհրաժեշտ մի ձեռնարկ⁷²: Ավելին, Կեսարացին և Նազիանզացին մենաստանում կազմում են ընդարձակ կանոններ (թվով 55), որոնք հետագայում Բարսեղի կողմից համալրվեցին համառոտ կանոններով⁷³:

Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու անապատական կյանքի ու գործունեության ղեկահատման առումով ուշադրավ է հետևել Վալեր. «Ամռըն ճշմարտութեան սբ. Բարսեղ եւ Գրիգորիոս՝ ի մանկական տիոց ուսումն: ակիցք գոլով միմեանց, եւ միշտ հասնոյ թուէր նոցա վարք անապատի...»⁷⁴:

IV դարում վանական դասի բուն զարգացումը և ընդհանրապես քրիստոնեության տարածումը Արևելքում խստագույնս ընդգծեց կանոնների անհրաժեշտությունը: Դրանում Բարսեղ Կեսարացին համոզվել էր դեռևս Միջագետք կատարած իր ճամփորդության ժամանակ: Նա առաջին հերթին աշխատում է վերջնական տեսքի բերել այն կանոնները, որոնք անհրաժեշտ էին ու պարտադիր ինչպես աշխարհական, այնպես էլ վանական քրիստոնյաների համար: Նման մտեցումը ինքնին արդարանում էր քրիստոնեության տարածումը խթանելու, նրա դեմ սկզբնավորվող շարժումները կանխելու նկատառումով:

Կեսարացին մենաստանում տքնում էր, ինչպես ասվեց, ս. Գրքի ու նրա մեկնաբանների աշխատությունների ուսումնասիրությամբ, երբ արիոսականության տարածման և Վաղես կայսեր (364—378) ընկերակցությամբ արիոսական եպիսկոպոսների Կեսա-

⁷² Նազիանզացու Թուղթ 145 (87), հմմտ. «Жития святых», էջ 9: Ի դեպ՝ հիշյալ ձեռնարկի մասին գրված է. «Basilius d. Gr. und Gregor von Nazianz haben gemeinschaftlich eine hübsche Blumenlese aus diesen Schriften unter dem Titel „Schönheiten des Origenes“ (Ὠμορφωτος φλοκων) veranstaltet, reich an Fragmente und Exzerpten welche uns sonst nicht erhalten sind“ (O. Bardenhewer, Geschichte der altkirchlichen Literatur, zweite Band, Freiburg, 1903, էջ 70):

⁷³ Որոշ ուսումնասիրողներ տարակուսում են, որ այդ կանոնները պատկանում են եվստաթիոս Սերաստացուն, թեև իշխող կարծիքը դրանց հեղինակ է ճանաչում Բարսեղ Կեսարացուն: (E. Певдева, նշվ. աշխ., էջ 33 ծան., А. Архангельский, К изучению древне-русской литературы, М., 1888, էջ 33):

⁷⁴ Ն. Պաղարյան, նշվ. աշխ., էջ 506:

ըրիա օղևորվելու լուրը հասավ նրան: Վկայություններ կան, որ Եկեղեցուն վերահաս ծանր վտանգի կանխազգացումը Եվսեբիոսին ստիպել է խնդրել Քարսեղ Կեսարացուն՝ վերադառնալ Կեսարիա և կանխել վտանգը⁷⁵: Դա հաստատվում է նաև Գրիգոր Նազիանզացու մի տեղեկությունը: Կեսարացուն հասցեագրված Թղթում նա գրում էր. «Աստվածասերն մեր Եվսեբիոս եպիսկոպոսը հակված է մեզ հետ հաշտվելու և բարեկամանալու ու փափկում է ժամանակի հետ, ինչպես երկաթը կրակի մեջ: Կարծում եմ, դու կստանաս Թուղթ խնդրական ու հրավերման. այդ մասին ինքն ինձ հայտնեց»⁷⁶: Նույնի մեկ այլ գրչագիր տարբերակում Եվսեբիոսի մասին ասված է. «Բայց իբրև ետես եպիսկոպոսն ուղեղ զՔարսեղ և սուտ զմատենիչսն, դարձաւ սիրով առ նա և գրեսց զայլ յեկեղեցիսն»⁷⁷:

Նազիանզացու վկայած Եվսեբիոս Կեսարացու Թուղթ-խընդրականը՝ ուղղված Քարսեղ Կեսարացուն, դռնել շահաջողվեց: Բայց, շնայած դրան, հայերեն հնագույն թարգմանություններ պահպանվել է Քարսեղի պատասխան Թուղթը՝ հասցեագրված Եվսեբիոսին, որով ուղղակի հաստատվում է Նազիանզացու վերը նշված վկայությունը: Ահա Քարսեղի նշված Թղթի համապատասխան հատվածը. «Յորժամ առ իրսն հայիմք և զզոտարութիւնս տեսանեմք, յորոց ամենաբարոյն ներգործութիւն իբրև ի կապանաց իմեք է խափանեալ արգելանի, ի բաց հրաժարումն ինքեանց զամբ ամենեկին: Իսկ յորժամ դարձեալ տեսանեմք զքո պարկեշտ վայելչութիւն և զմտաւ ածեմք զի զքեզ բժիշկ ի յեկեղեցիս հիւանդութեանց տէրն մեր շտեմարանեաց, վերստին առնումք զմեր խորհուրդս ն ըստ ք բաց ծանալութեանն անկամանն յուսով բարեաց կանգնիմք»⁷⁸:

75 «Փատոսսի Բուղանդացոյ Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1933, էջ 106, հմտ. «ЖИТІЯ СВЯТЫХ», էջ 9, «Կիսկատար վարք», էջ 338, Տիբալը վարդապետ, նշվ. աշխ., էջ 911:

76 Թուղթ 15 (19): Թուղթն ամբողջությամբ արիտասկանություն գատափետանք է և խնդրանք՝ դալու, պաշտպան կանգնելու ուղղափառ Եկեղեցուն:

77 Ձեռ. № 437, էջ 323բ:

78 Ձեռ. № 5595, էջ 344բ: Հակոբ կաթողիկոսը մասնակի խմբագրումներով վկայաչառում է նշված հատվածք իր մեկնություններից մեկում. «Յորժամ առ իրս նախանձուն հայիմք և զզոտարութիւն և զզոմանութիւն առ մեզ տեսանեմք ի քէն, յորոց ամենայն բարի գործ ի նախանձուէն խափանի, զհետանալն ամենեկին խորհեար: Իսկ յորժամ տեսանեմք զքո վայելչութիւնդ՝ այս է, որ դարձար առ մեզ սիրով և խնդրես զմեզ: Զմտո ածեմք, զի բժիշկ զքեզ տէրն յեկեղեցի կարգեաց»: (Ձեռ. № 437, էջ 323բ—324ա, հմտ. ձեռ. № 4150, էջ 77բ):

Բարսեղը Կեսարիա է վերադառնում 364 թվականին և, հակառակ իր իսկ ընդդիմացումներին, նույն թվականին էլ ձեռնադրվում է երեց⁷⁹:

Կեսարիայի թեմը վստահվում է նրան, թեև արքեպիսկոպոսի աթոսը շարունակում էր զբաղեցնել Եվսեբիոս Կեսարացին: «Ստացվեց իրավունքների (բառացի՝ իշխանություն) զարմանալի ներդաշնակություն և կապ. մեկը «հոտին» էր ղեկավարում, մյուսը՝ «հովիվներին»⁸⁰: Այլ հաղորդմամբ՝ Եվսեբիոսը Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսն էր, իսկ Բարսեղը՝ «սարկաւագապետ եկեղեցոյն և սիրէր ամենայն ժողովուրդն զԲասիլ վասն պայծառ իմաստութեան և հրեշտական առաքինութեան և ի սագրելո շարին»⁸¹:

Բարսեղ Կեսարացին Արևելք կատարած հիշյալ ուղևորությունից հետո հստակ պատկերացում ուներ արիոսականության վտանգավորություն մասին: Նա Կեսարիայի թեմը այնպես լուրջ ու կազմակերպված հանց վերջինիս դեմ, որ նրանք ստիպված եղան տեղի տալ Բարսեղի միավորած ընդհանուր դիմադրությանը և միաժամանակ թողնել Կեսարիային տիրանալու մտադրությունը:

Տեղապահության տարիներին նա Կասպողովիայի և նրա շրջապատի քրիստոնյա բնակչության շրջանում բացառիկ հեղինակություն է ձեռք բերում՝ առավելապես եկեղեցական-կազմակերպչական խնդիրներում իր ճշգրիտ կողմնորոշմամբ ու ժողովրդասիրությամբ: Սակայն «Եւսեբիոսս այս առաջնորդ էր Կեսարու յառաջ, քան զսուրբն Բարսէղ և էր յայնժամ սուրբն Բարսէղ աւագագոյն կարգեալ աւագ եկեղեցոյն Կեսարու քահանայիցն և սարկաւագացն և եղև ի շար արանց շարախաւսութիւն զԲարսղէ առ սուրբն Եւսեբիոսս, սրպէս թէ խորհի նա առնուլ զաթոռն Եւսեբեա, վասնզի հաճոյ էր Բասիլիոսս յաչս ամենեցուն... զոր իմացեալ Բասիլիոս խոյս տուևալ շոգաւ յանապատ, մինչ զի յայտնի լիցի ճշմարտութիւնն...»⁸²: Ահա թե ինչու Եվսեբիոսը նախանձով, երբեմն էլ շարություններ է նայել Բարսեղ Կեսարացու օրավոր բարձրացող փառքին ու ժողովրդայնությունը: Ուստի և, ինչպես պատճառաբանվում է սկզբնաղբյուրներում, Բարսեղը, տեսնելով արքեպիսկոպոսի անբարյացակամությունն իր նկատմամբ, նորից կամոփին հեռանում է եկեղե-

79 Նաղիանգացու Թուղթ 11 (11), հմմտ. «Христианское чтение», էջ 32, Փ. Փարթաբ, նշվ. աշխ., էջ 467, А. Архимандрит, նշվ. աշխ., էջ 151:

80 «Ղամբանական», էջ 624—625, հմմտ. Փ. Բուլգան, էջ 108:

81 Ձեռ. № 437, էջ 323բ:

82 Ձեռ. № 1879, էջ 257բ, հմմտ. ձեռ. № 4150, էջ 77բ, ձեռ. № 437, էջ 323բ:

ցուց և պարփակվում իր երբեմնի մենաստանում: Մի գրչագրում կարդում ենք. «...և տեսալ Քարսղի՝ մեկնէր ի նմանէ և բնակէր յանապատ և յայնմ ժամանակի խոռովութիւն բազում էր յեկեղեցիսն»⁸³:

Իսա մոտավորապես 365 թվականին էր: Եվսեբիոսի վերաբերմունքը, անշուշտ, ունեւր էական նշանակութիւն Քարսեղի համար, բայց վերջինիս առանձնանալը սոսկ գրանով պատճառաբանելը համոզիչ չէ: Նկատել ենք, որ Քարսեղ Կեսարացին 364 թվականին Կեսարիա է վերադառնում Գրիգոր Նաղիանդացու խնդրանքով՝ եկեղեցուն սպասնացող վտանգը կանխելու և նույն թվականին էլ, իր կամքին հակառակ, երեց ձեռնադրվում: Նրա հակումը որոշակի է Նաղիանդացուն զրված թղթերից մեկում. «Իսկ այսօցիկ մի է փախուստ. որոշումն յաշխարհայնոցս ամենեցունց և յաշխարհէ գնացումէ՝ ոչ արտաքոյ սորա լինել մարմնապէս, այլ վշտակցութեամբ առ մարմին զանձնն դարձուցանել, տնքաղաք, անտուն, անինչ, անկերածէր, անստացուածս, վարս անիրականս, անփոփոխելիս, անուսումն մարդկայնոց վարդապետութեանց, պատրաստ առ ընդունել սրտիւ զաստուածայնոցն վարդապետութեանցն՝ ներեղեալս ասպառութիւնս»⁸⁴:

Նման պարագայում Եվսեբիոսի վերաբերմունքը սոսկ անիմ է. «հասամիտ եմ և շեմ ժխտում, — գրում է Քարսեղը, — որ ես փախրստական եմ դարձել, բայց իմացեք և պատճառը, եթե, արդ, կամենում եք գիտենալ»⁸⁵: Առկա մատենագրական վկայությունները հիմք են տալիս ասելու, որ միակ ու հիմնական պատճառը վաղեսի թագավորության շրջանի հատուկ բաղաբականությունն էր ուղղափառ եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ՝ սպաժանավորված արիստականությունը տարածելու նկատառումով: Քարսեղ Կեսարացու անապատական ճիւղությունը ոչ թե փախուստ էր եկեղեցու բազում հոգսերից ու իրավունքի պաշտպանումից, այլ վանքերի ու վանական հաստատությունների պայքարի նախապատրաստում. «Իսկ յորժամ Վաղէս թագաւորեաց, զԱրիոսին խորհելով, հալածանս յարոյց ուղղափառաց: Զոր իմացեալ սրբոյն Բասիլիոսի ի կողմանս Պոնտոսի երթեալ անապատանոցս յորով շինէր, զի մի և անդ տեղի

83 Ձեռ. N° 437, էջ 323բ, հմմտ. ձեռ. N° 4150, էջ 77բ, Փ. Բուզանդ, էջ 104—105, Ա. Սուբրյան, Նշվ. աշխ., էջ 116, Տիրայր վարդապետ. Նշվ. աշխ., էջ 911:

84 Ձեռ. N° 5595, էջ 346ա:

85 Քուդթ Տ, հմմտ. «Lettres», I, VIII:

պտցի հայհոյութեանն Արիոսի»⁸⁶: Այլապես ինչպես բացատրել այն երևույթը, որ Կեսարացու անապատական նշված գործունեությունը առավել զայրացրեց Վաղես թագավորին⁸⁷: Ավելին, Բարսեղի մեկ այլ թղթից տեղեկանում ենք, որ առանձնություն մեջ անգամ նա հալածվել է, կողոպտվել են նրա խրճիթն ու ունեցվածքը: «Որպեսզի անօգնականներին վերջինը չլինեմ և շմտածեմ, թե ամեն ոք կարող է հարձակվել ինձ վրա, թույլ տուր խնդրեմ քեզ այժմ էլ կիրառել այն ճիգերը, որոնք գործադրել ես դու իմ բզլոր գործերում»⁸⁸, — գրում է նա Կանտիդիանոսին՝ իր մեկենասին:

Եվսերիոս Կեսարացին մահացավ 370 թվականին: Նրա թեմը հեղինակություն էր ոչ միայն Կապադովկիայի, այլև Փոքր Հայքի, նույնիսկ Մեծ Հայքի եկեղեցիների համար⁸⁹: Բարսեղ Կեսարացին արքեպիսկոպոսի թափուր տեղի համար միակ արժանի ու կարող անձ է համարում Գրիգոր Նազիանզացուն⁹⁰: Վերջինս 370 թվականին գրած պատասխան թղթով շանում է համապատասխան առարկություններ գտնել և իր անձն անարժան է համարում⁹¹: Գրիգոր Սքանչելագործը (Նազիանզացու հայրը)⁹² եկեղեցու, անգամ պետություն պաշտոնատար անձանց Բարսեղ Կեսարացու թեկնածությունը պաշտպանող թղթեր հղելուց բացի, ընտրության օրը անձամբ եկել է Կեսարիա և վերջնականապես ապահովել նրա հաղթանակը արիոսականների և կուսակից հակառակորդների դեմ:

370 թվականին, Եվսերիոսի մահից հետո, երբ Բարսեղ Կեսարացին ստանձնեց Կեսարիայի թեմը, նրա տնօրինության տակ գտնվող Կապադովկիայի, Պոնտոսի և Փոքր Հայքի եկեղեցիները

86 Ձև. № 4150, էջ 21բ:

87 Նույն տեղում:

88 Թուղթ 3, հմտ. «Lettres», I, III:

89 Թուղթ 66 (70), 95 (99), 121 (126), 224 (252), 258 (266):

90 «Լիակատար վարք», էջ 341: Որպեսզի Նազիանզացին շուտ հասնի Կեսարիա, Բարսեղը բնավ չակնարկելով կանչելու իսկական պատճառի մասին, խոսում է իր ապցնապալի առողջական վիճակից ու ընկերոջը վերջին անգամ տեսնելու միակ խնդրանքից:

91 Թուղթ 33 (21): Նազիանզացին Կեսարիա վերադառնալիս է տեղեկանում իրեն կանչելու իսկական պատճառի մասին: Թղթից երևում է, որ նա կն ճանապարհից վերադառնում է Նազիանզ և, Բարսեղին համարելով թափուր տեղի համար միակ հարմար անձ, գրում է. «...և ինչ ես կարծում, նույնը չէ՞ դու թե ես, մի բան, երբ մեզ աստված այնպես ընկերացրեց, որ մեր թե՛ կյանքը, թե՛ իմացությունը և թե՛ ամեն ինչը ընդհանուր է»:

92 Բարսեղ Կեսարացու արքեպիսկոպոս ընտրվելու ժամանակ նա 96 տարեկան էր: (Նազիանզացու Թուղթ 35 (23), Ճառ 18):

վիճակը լուրջ մտահոգության տեղիք էր տալիս⁹³: Բարսեղի ընտրության առիթով առաջացած հակասությունները եկեղեցուն հետևեալ կանգնած անձանց բաժանեցին երկու խմբի: Հակաբարսեղյան կազմին էր հարում նաև Բարսեղ Կեսարացու մորեղբայրը⁹⁴, որի անունից Գրիգոր Նյուսացու հորինած կեղծ հաշտության թղթերը ծայրաստիճան զայրացրին Բարսեղին⁹⁵: Սակայն նա թղթերով, խորհուրդներով ու եկեղեցու սպասավոր անձանց վարքից քաղած բազմաթիվ օրինակներով ջանում է փոքր-ինչ մեղմացնել իրադրությունը⁹⁶: Բարսեղը եկեղեցիների անմխիթար վիճակը համեմատելով իր վատառողջ դրություն հետ, գրում է. «...չի երեւում ոչ մի բարի հույս, գործերը զնալով անընդհատ վատանում են»⁹⁷:

Բարսեղ Կեսարացուն վրդովեցնում է հոգևոր դասի, հատկապես նրա վերնախավի փողամոլությունը, զանազան անազնիվ միջոցների դիմելը, անաշխատ «վատասակը» և ընդհուպ ձեռնադրություն շուրջ սակարկելը: Նա գրում է. «դա արվում է ի սեր արժաթասիրության, իսկ վերջինս բոլոր շաբիֆների արժատն է»⁹⁸: Բարսեղը հիմնովին վերանայում է գյուղական եկեղեցիների դրվածքը, նրանցում անհանդուրժելի տասնյակ փաստեր հայտնաբերում: Նրան մեծ վրդովմունք էր պատճառում գյուղական երեցների անհողի վերաբերմունքը, որոնք իրենց հարադատներին կամ ծանոթներին, թեև եկեղեցուն անհարիր ու անարժան, վերցնում էին եկեղեցական ծառայություն: Բարսեղի վկայությամբ՝ քորեպիսկոպոսները շատ հանգիստ էին նայում այդ ամենին և այնպես էր ստացվում, որ առանց հոգևոր ծառայության ստորին աստիճաններն անցնելու՝ պատահական անձինք երեցներ էին դառնում: Կեսարացին իր թեմի քորեպիսկոպոսներին ուղղված թղթում պատվիրում է. «Մարբեր եկեղեցին՝ հեռացնելով նրանից անարժաններին և, հետո, ընդունեք նրան, ով արժանի է, բայց առանց ինձ ներկայաց-

93 Ձև. № 948, էջ 153բ—154ա, հմմտ. ձև. № 1522, էջ 378բ, ձև. № 8179, էջ 290ա—բ, ձև. № 7357, էջ 255ա, ձև. № 1879, էջ 199բ, ձև. № 84, էջ 253բ. ձև. № 2046, էջ 56ա, ձև. № 992, էջ 195բ, ձև. № 6036, էջ 206ա:

94 Թուղթ 55, հմմտ. «Lettres», I, LIX:

95 Թուղթ 54 (58), հմմտ. Փ. Փարթար, Կղ. աշխ., էջ 473—474:

96 Թուղթ 44 (48), 54 (58), 56 (60), 61 (65), 94 (98), 121 (126) և այլն:

97 Թուղթ 30, հմմտ. «Lettres», I, XXX:

98 Թուղթ 49, հմմտ. «Lettres», I, LIII:

նելու մի դարձրեք եպիսկոպոս կամ, իմացեք, որ առանց իմ գիտութեան եկեղեցու սպասավոր ընդունվածը մնում է աշխարհական»⁹⁹:

Բարսեղ Կեսարացու գործունեութեան կարևոր դրվագներից են արիոսականութեան դեմ նրա մղած տեսական պայքարն ու հաղթանակը: Վաղես կայսրը երկար ժամանակ չկարողանալով արիոսականութունը քարոզող իր եպիսկոպոսներին հաստատել Կեսարիայում, Արևելք արշավանքի գնալիս այդ ուղղութեամբ վերջին փորձն է անում: Հայտնի է, որ այդ ժամանակ արիոսականները կարողացել էին շրջապատի շատ նշանավոր եկեղեցիների եպիսկոպոսների աքսորել և զբաղեցնել նրանց տեղը¹⁰⁰: Բարսեղ Կեսարացին տարբեր քաղաքներում նախապես կարգում է այնպիսի եպիսկոպոսներ, որոնք ընդունակ լինեն արիոսականների դեմ մղելու դավանաբանական պայքար և պահպանելու իրենց հավատի անաղարտութունը: Բարսեղին անհանգստացնողը առավելապես երկրի ներսում սոցիալական հիմքի վրա խմորվող աշխատավորական հուզումներն էին և ինչ-որ կետում դրանց՝ արիոսականներին միանալու հնարավորութեան վտանգը: Նա Կեսարիա է կանչում եղբորը՝ Գրիգոր Նյուսացուն և Գրիգոր Նազիանզացուն: Նյուսացուն գրում է. «Քեզ, որպես եղբոր, պետք է, որ այժմ այլ բան մտահոգի... հարկ է, որ դու լինես ինձ մոտ և կիսես իմ բազում հոգսերը»¹⁰¹:

Վաղես կայսրը, նախքան Կեսարիա դնալը, իր նշանավոր մարդկանցից Մոդեստին է ուղարկում Բարսեղի մոտ՝ արիոսականութունն ամբողջ Արևելքում տարածելու իր ծրագրի շուրջ նախապես խորհրդակցելու:

Նազիանզացին Կեսարիայում ականատես է լինում Բարսեղի ու Մոդեստի վեճին և հետաքրքիր մանրամասներ զրառում այդ մասին¹⁰²: Բարսեղի բացառիկ հանգստութունը, բունավիճելու արտա-

99 Քուղթ 50 (54):

100 «Դամբանական», էջ 631, հմմտ. A. Архимахианит, նշվ. աշխ., էջ 377:

101 Քուղթ 217 (225): Բարսեղի մեկ այլ Քղթից պարզվում է, որ նա եղբորը մինչ այդ պատվիրել է հատուկ զբաղվել «ուղղահավատների» և «անհավատների» վեճի քննությունը՝ նպատակ ունենալով նրա մեջ դարձացնել հակաքրիստոնեական ազանդների դեմ բանավիճելու արվեստ (հմմտ. Քուղթ 38):

102 «Դամբանական», էջ 633—634: Մոդեստի այն հարցին, թե՞ ինչու՞ է շեք միանում մեզ և մեր հավատն ընդունում, Բարսեղը պատասխանում է. «Պուք իշխան եք և, չև՛ս ժխտում, արքաները նշանավոր են, բայց Աստուծոց ոչ բարձր: Ձեզ հետ հարողակցվելը ինձ համար կարևոր է, քանզի դուք էլ Աստծո արարածն եք... սակայն քրիստոնեությունը տարբերվում է ոչ թե մարդկանց արժանիքնի-

կարգ հմտությունը կայսրի ներկայացուցչին ստիպում են խոստովանելու. «Պարտված ենք մենք, արքա, այս եկեղեցու վանահորից: Սա մի այր է, որը վեր է սարսափից, ամենահաստատունը՝ փաստարկներից և ուժեղագույնը՝ համոզմունքներից»¹⁰³: Կեսարացուն խորապես ցավ էր պատճառում Արևելքի տասնյակ ուղղափառ եկեղեցիների կործանումն ու ս. հայրերի եղբրական վախճանը: Ահա թե ինչու նա համարձակություն ունեցավ վաղես կայսրին առ երեսասելու. «և դու, սնիրաւ, ետուր զեկեղեցին մեր արիանոսաց»¹⁰⁴:

Մինչ Բարսեղը արիոսականության ամենամոլի պաշտպաններին սնզամ ստիպում է հաշտվել ուղղադավանության դոյատեման մտքի հետ, մեջտեղ է դալիս Կապադովկիայի բաժանման հարցը: Կեսարիային զուգահեռ, որպես Կապադովկիայի երկրորդ կեսի մայրաքաղաք, բարձրանում է Տիանը: Այստեղ են տեղափոխվում պետական-կառավարական մարմինները, դպրոցները և այլն: Կեսարիան սկսում է տեղի տալ իսկ որոշ ժամանակ անց՝ քաղաքում շատանում են անկարգությունները: Քաղաքի բնակիչների խնդրանքով Բարսեղ Կեսարացին դիմում է ղանազան անձանց, պաշտոնատար ծանոթներին, բնկերներին և դրանով իսկ կանխում սպառնացող ծանր վիճակը¹⁰⁵:

Բայց կատարված վարչական փոփոխությունը որոշակի դժվարություն է ստեղծում երկրի հոգևոր միասնությունը պահպանելու խնդրում: Տիան քաղաքի Անթիմոս եպիսկոպոսը միտք է հղանում Բարսեղի թեմից անջատվել և առանձին արքեպիսկոպոսություն ստեղծել: Դրա համար նա սկսում է ոմանց մեջ արթնացնել Բարսեղի նկատմամբ ունեցած հին հակակրանքը՝ կապված նրա արքեպիսկոպոս ընտրվելու հետ: Ավելին, Կեսարացուն հավատարիմ մնացած եպիսկոպոսներին էլ սկսում է փոխարինել չուրալիներով: Ծայր առած անկարգությունները վերացնելու և իր արքեպիսկոպոսական տիրույթի սահմաններում լրացուցիչ անհամաձայնությունների առիթ չտալու նպատակով Բարսեղ Կեսարացին նոր կազմավորված կապադովկյան մասը առանձնացնում է իր թեմից: Իրականում Կապադովկիայի բաժանումից առաջանում են երկու

րով, այլ ճշմարիտ հավատով»: (Նույն տեղում), հմտ. «Էջմիածին», ԺԲ, 1967, էջ 50:

103 «Դամբանական», էջ 634:

104 Զեռ. Ն 84, էջ 258բ: Ի դեպ, նազիանզացին վկայում է, որ նազիանզը արիոսականներից պաշտպանում է իր հայրը (ձառ 18):

105 Թուղթ 70 (74), 71 (75), 72 (76):

ինքնուրույն կենտրոններ: Տիանյան մասի արքեպիսկոպոս է դառնում Անթիմոսը:

Հիմքեր կան ենթադրելու, որ Բարսեղ Կեսարացու և Անթիմոսի ընդհարման համար եղել է լուրջ պատճառ: Նրանց եպիսկոպոսական սահմանաբաժնում, Նազիանզի մոտ էր գտնվում Բարսեղի թեմին պատկանող Սասիմա փոքրիկ քաղաքը, որն ավելի մոտ էր Տիանին, քան Կեսարիային: Բարսեղի մի Թղթից¹⁰⁶ պարզվում է, որ Կապադովկիան երկու մասի բաժանվելուց հետո նա շատ է անհանգստանում Սասիմայի խնդրով և անպայման Նազիանզացուն է ուղում այդ քաղաքի եպիսկոպոս նշանակել: Նազիանզացին մի առիթով տրտնջում է հոր և Բարսեղի դեմ՝ իրեն իր կամքին հակառակ եպիսկոպոս ձեռնադրելու համար¹⁰⁷: Հայտնի է, որ Նազիանզացին թեև Սասիմայի եպիսկոպոս էր համարվում, բայց ոչ մի անգամ չի եղել այնտեղ, և դա ոչ թե այն պատճառով, որ ի սկզբանե ինքը դեմ է եղել այդ ձեռնադրությանը, այլ, ինչպես պարզվում է նրա մի Թղթից¹⁰⁸, Անթիմոսը վերջին միջոցները գործի դնելով, Բարսեղի հետևորդ եպիսկոպոսների և առհասարակ անձանց մուտքը արգելել է Սասիմա: Նույն Թղթի հաղորդման համաձայն՝ Անթիմոսը խիստ անհրաժեշտ է համարել Բարսեղ Կեսարացու հետ հանդիպել և խորհրդակցել:

Կապադովկիան երկու մասի բաժանվելուց հետո էլ Անթիմոսը շարունակել է հետամուտ լինել առկա հակասութունների խորացմանը: Նա Բարսեղի դեմ պայքարի կենտրոն է ստեղծում Սասիմայում՝ տեղի բնակիչներին իրենց արքեպիսկոպոսի դեմ հանելու և Բարսեղի թեմի այլ գավառների գայթակղելու ծրագրով: Ուստի Բարսեղը միայն Նազիանզացուն է նպատակահարմար գտնում Սասիմայի եպիսկոպոսության համար. դրանով նա ուղում էր կանխել Անթիմոսի՝ իր դեմ ունենալիք նոր հաջողությունը, իր և Նազիանզացու ամենամտերիմ հարաբերությունն էլ ծառայեցնել եկեղեցու իսաղադրությանը¹⁰⁹:

106 Թուղթ 94, հմմտ. «Lettres», I, XCVIII:

107 «Житие св. Григория Назианзиня, писанное им самим с присовокуплением поэмы на несчастия в его жизни». М., 1842, էջ 57—58, 62, նաև՝ Թուղթ 50 (31), ծառ 18:

108 Թուղթ 51, հմմտ. «Прибавление к творениям святых отцов», часть 1, М., 1843, էջ 43:

109 Ձեռ. № 1879, էջ 203բ—204ա, հմմտ. Հոսիկ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 51:

Տվյալ խնդիրն ու դրա հետևանքները շոշափող Բարսեղի մի Թղթում անմիջական պատրաստակամություն է հայտնվում անել ամեն ինչ, որպեսզի նորից չվրդովվի զոհաբերությամբ ձեռք բերված անդորրը և կրկին հավատի խնդիրը քննության առարկա չդառնա: Բարսեղ Կեսարացին միաժամանակ «արիհաղթ էր ի սահմանս քաղաքացն և ագարակացն, ուրկանոցս և հիւանդատունս շինել և կարգել զպէտս նոցա և սպասաւորս քաղմաց և ինքն անձամբ սպասաւորէր և զանձն իւր արինակս առնէր ամենեցուն»¹¹⁰. Նազիւնի վաստի Կեսարիայից ոչ հեռու բնակած Բարսեղի կառուցչները ամբողջությունը Նոր Բաղաթ¹¹¹ է անվանում:

Այդուհանդերձ, դատաւիետանքն ու շարախոսությունները գրնալով շատանում են նրա անձի ու անվան շուրջ: Ամենից վրդովեցուցիչը, սակայն, ինչպես ցույց են տալիս նրա թղթերը¹¹², նեոկեսարացիների դիրքն է եղել, որոնք հանդգնել են «արատաւոր» համարելու Բարսեղ Կեսարացու գործունեությունը¹¹³: Խնդրին առընչվող Բարսեղի թղթերից պարզորոշ երևում է, որ նրա օրավուր աճող ժողովրդայնությունն ու հեղինակությունն անտանելի են դառնում նեոկեսարիայում պաշտոնի ակնկալություն ունեցող անձանց համար: Նկատելի է, որ նեոկեսարիայի հողերը դասը, արիտակախությունը հարելու իր նախընտրանքով, լավատեղյակ է վերոհիշյալ Անթիմոսի և Սերապտիայի հայոց Եվստաթիոս եպիսկոպոսի տվյալ խնդրում ունեցած հաջողություններին, Այդ ամենը Բարսեղ Կեսարացուն ստիպում են գրելու. «ի դեպ, ով խուսափում է ինձ հետ հարդորակցվելուց (իսկ դա չի թաքցնում ձեր ուղղամտությունը), նա անջատում է իրեն բնդհանուր և կեղեցուց»¹¹⁴:

Բարսեղ Կեսարացու այս և նմանօրինակ պատվերանները չէին կարող չունենալ իրենց վճռական դերը ոչ միայն Կեսարիայի, այլև վերջինիս ենթակայության եկեղեցիների, այդ թվում նաև հայոց եկեղեցու համար, քանզի հայկական միջնադարյան մի գրչագրի վկայությամբ՝ Կեսարացին էր «սին եկեղեցուց և հիմն հաւատոց, և աթեվանս սրբոյ երրորդութեանն, և կատարիչ կամացն սատուծոյ»¹¹⁵:

110 Ձեռ. N 1879, էջ 182բ:

111 «Գամբանական», էջ 642, հմմտ. ձեռ. N 8179, էջ 290բ:

112 Թուղթ 196 (204), 199 (207), 209 (210) և այլն:

113 Թուղթ 199, հմմտ. «Lettres», II, CCVII:

114 Թուղթ 196, հմմտ. «Lettres», II, CCIV:

115 Ձեռ. N 4150, էջ 21ա:

Բազմաթիվ սկզբնաղբյուր-վկայությունների համաձայն, Բարսեղը ի սկզբանե վատառողջ է եղել. նա հաճախ է ստիպված լինում խոստովանել, որ բաղում էական գործեր կիսակատար են մնում, քանզի հիվանդությունը խանգարում է: «Հիվանդությունը անբաժան է ինձանից՝ սկսած վաղ հասակից մինչ ծերություն»,— գրում է նա¹¹⁶:

Գրիգոր Նազիանդացին գրառել է Բարսեղ Կեսարացու մահամերձ վիճակի, մահվան և թաղման մանրամասները: «Նրա համար ամբողջ քաղաքն էր անհանգստացած. ծանր էր կորուստը... մտածում էին փրկել նրա հոգին, թվում էր հնարավոր կլինե՞ր բռնել և բռնություն բեր պահել նրան՝ ձեռքերով կամ աղոթքներով (վիշտը նրանց անմիտ էր դարձրել) և, բոլոր դեպքերում, եթե միայն հնարավոր էր, սլատրաստ էին անգամ իրենց կյանքը տալու»¹¹⁷:

Բարսեղ Կեսարացին մահացավ 379 թվականի հունվարի 1-ին, հինգշաբթի օրը, հիսուն տարեկանում՝ «ծերացեալ սուրբն Բարսեղ և էր ցաւազար մարմնով»¹¹⁸: «Քաղկեդոնի ժողովը «Մեծ» մակդիրը տվավ իրեն 72 տարի ետք»¹¹⁹:

116 Հմմտ. Թուղթ 27, 30, 187 (195), 195 (203), 229 (232):

117 «Դամբանական», էջ 653:

118 Ձեռ. № 992, էջ 199բ, հմմտ. ձեռ. № 84, էջ 261ա—բ, Շ. Տաշլան, նշվ. աշխ., էջ 70, Գ. Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պոռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիիաս—Լիբանան, 1969, էջ 396: Այստեղ Կեսարացու մահվան օր է նշվում հունվարի 21-ը (ԻԱ):

119 «Էջմիածին», 1967, ժԲ, էջ 51:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հարուստ ու բազմաժանր է Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգությունը: Մինեի նշանավոր հրատարակությունամբ այն կազմում է շորս մեծագիր հատոր¹:

ՀՄՍՀ Մինիստրների սովետին առնթևեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենագարան) ավելի քան երկու հարյուր հին ու նոր գրչագիր մատչաններ մերթ էական մասով, հաճախ ամբողջությամբ Կեսարացու դործերի ընդօրինակություններն են՝ կատարված տարբեր դարերում ու զանազան գրչությամբ:

Իեռևս միջնադարում, ինչպես հուշում է 1279 թվականին ընդօրինակված № 5595 ձեռագիր ժողովածուի մի հիշատակարանը, փորձ է արվել թեմատիկ բաժանմամբ խմբավորելու Կեսարացու մատենագրական ժառանգության հայտնի մասը²: Նշված ձեռագրի պարունակությունն են «Վեցօրեան», «Գիրք հարցողացր», բազմաթիվ ճառեր, քարոզներ, մեկնություններ, թղթեր՝ ուղղված Եվսեբիոս Կեսարացուն, Գրիգոր Նազիանզացուն և ժամանակի նշանավոր այլ անձանց: Հիմքեր կան ենթադրելու, որ Կեսարացու ոչ բոլոր գործերն են հասել մեզ: Մի առիթով նա թվարկում է բազմաթիվ բնակավայրերի անուններ (տեղանուններ), որոնց եպիսկոպոսների հետ (այդ թվում նաև հայագրի) թղթակցական կապ է ունեցել: Այսօր ունենք այդ թվարկում-վկայությունները, բայց բուն թղթերը չեն պահպանվել³: Ենթադրվում է, որ մեզ չի հասել նաև Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու կազմած՝ «Ս. Գիրքը և նրա մեկնաբանը (Օրիգենեսը)» ձեռնարկ-ժողովածուն⁴: Նկատելի է,

¹ Migne, Patrologia Graeca, Paris, 1857, tomus 29—32.

² № 5595՝ Բարսեղ Կեսարացի, Մատենագրությունը, էջ 1ա—100բ:

³ Թուղթ 196 (204):

⁴ Otto Bardenhewer, Geschichte der altkirchlichen Literatur, B. II, Freiburg, 1903, էջ 70:

սակայն, խնդրիս մեկ այլ կողմ ևս. Կեսարացու անվամբ մեզ հասած ոչ բոլոր գրական զործերն են նրա հեղինակության արդյունք դիտվում: Այսպես, օրինակ, Բարսեղի՝ Շաալի մարդարեի մեկնություն հեղինակային պատկանելություն մասին ասված է. «Կարծիք կա, որ եթե այս մեկնությունները նրա մտահղացումն են, ապա գրված պետք է լինեն նրա խոսքերով, բայց ոչ նրա ձեռքով»⁵: Մատենագրության պատմությունը հայտնի են դեպքեր, երբ մի աշխատասիրություն ինչ-ինչ պարագաների պայմանավորումով վերագրվել է երկու անձանց կամ որևէ մատենագրի երկասիրություն լույս աշխարհ է եկել այլ հեղինակությամբ: Այդպես կատարվել է նաև Բարսեղ Կեսարացու հետ, որի «Պատարագամատուցք» վերագրվել է Գրիգոր Լուսավորչին, առանձին հասվածներ՝ Բուզանդին, Ագաթանգեղոսին և այլոց: Այլևս ասացուցված է, որ մերթ նրա հեղինակած բազմաթիվ կանոններ են հայացվել ու զործածվել ազգային եկեղեցու ս. հայրերի անվամբ, մերթ էլ այլոց ստեղծածն է հասկանալի պատճառով նրան վերագրվել ու տարածվել⁶, իսկ «Վասն մկրտութեան» ճառը իբրև Սեբերիանոսի գործ հրատարակվել է Վենետիկում⁷:

Հայագիտության մեջ նկատված է այն իրողությունը, որ Ագաթանգեղոսին, Եզնիկին, Բուզանդին և Եղիշեին ծանոթ և զրշադրելու մ Բարսեղ Կեսարացու հեղինակությամբ հայտնի «Ի մեծի վարդավառին տանի՝ Աղաթթ սրբոյն Բարսղի Կասպաղովկացոյ» խորագրով աշխատասիրությունը էջմիածնի «Ճաշոցում» վերագրվել է Եղիշեին⁸:

«Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի և Ապողիսարի հերձուածողի տեսութիւն-ի մարմնաւորութիւն փրկչին» խորագրով հայտնի աշխա-

5 E. Лебедева, Св. Василии Великий, СПб., 1902, էջ 194:

6 «Կանոնագիրք հայոց», հ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ LXV—LXX, հ. Ա, Երևան, 1964:

7 «Սեբերիանոսի կամ Սեբերիանոսի եմեսացոյ Գաբաղացոց եպիսկոպոսի ճառք ի հին թարգմանութենէ...», Վենետիկ, 1827, էջ 370—401, հմմտ. «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցոյ», էջմիածին, 1914, էջ XLV, LI, Ն. Քիւզանդացի, Հայկական բառաքնություն, Կ. Պոլիս, 1880, էջ 52, Նույնի՝ Կորին վարդապետ և նորին թարգմանությունք, Տփղիս, 1900, էջ 471—472, Ա. Վարդանեան, Դասական մանր բնագիրներ և ձեռագրական համեմատություններ, հ. Ա, Վիեննա, 1913, էջ 11:

8 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Գ, յօրինեցին Բաբեղ Սարգիսեան. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ, 1966, էջ 53—54:

տանքի հեղինակային պատկանելության շուրջ նույնպես եղել են տարակարծություններ: Զարբհանալյանը գրում է. «Այս Տրամախօսութիւն ընդ Ապողինարի՝ որ ի մեր հայ գրչագիրս սրբոյն Բարսղի կրնծայուի, յունական քոնի մը հեղինակաց քով Աթանասի տրուած է և անոր անունովն ալ հրատարակուած»⁹: Սակայն նշված գործի «հայկական հին թարգմանութիւնը» և, մանավանդ, Շնորհալու ծանոթութիւնն ու հատվածաբար վկայակոչումը հաստատում են «ի նպատ ս. Բարսղի հարազատ գործ ըլլալուն»¹⁰:

Քրչագրերում բաղական տարածված է «Տեսութիւն յաղագս հաւատոյ՝ Երանելեացն սրբոց եպիսկոպոսաց Բարսղի և Գրիգորի»¹¹ խորագրով գործը: Բովանդակութիւնից դատելով այն կարելի է դիտել Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նաղիանդացու աշխատասիրութիւն, մանավանդ որ Բարսեղ Կեսարացու մատենադրական ժառանգության հիմնական մասն ամփոփող № 5595 հնագույն ձեռագիր ժողովածուում շկա նշված գործի հեղինակային պատկանելութիւնը կասկածի տակ առնող և ոչ մի վկայութիւն: Բայց հետագայում (ԺԴ դ.) ընդօրինակված մեկ այլ՝ № 2549 ժողովածուում, գրիչը (Հովհաննէս Երզնկացի) կամ, թերևս, միջնադարյան Եջ աննշան մեկ այլ մատենագիր նշված մեկնության միջնամասում նույն ձեռքով ու գրչութեամբ (մի փոքր առանձնացված) ավելացրել է. «Զճառս այս այլոց ոմանց փառամուլաց է հարցումն և պատասխանի, և ոչ Բարսղի սրբոյ և Աստուածաբանի, և սակս քնդունելութեան սոցա անուամբ եմ վերագրեալ»¹²: Պատճառաբանումը, տնշուշտ, հիմնավոր է, իսկ երևույթն էլ միջնադարի համար ոչ բացառված: Բայց №№ 5595 և 2549 գրչագրերում պահպանված նշված «Տեսության» համեմատութիւնից պարզվում է, որ շկան իմաստային արժեք ունեցող տեքստային էական տարբերություններ. ավելին՝ նույնիսկ այն տպավորութիւնն է ստացվում, որ № 5595 ձեռագիրը մայր օրինակի նշաններ է պարունակում № 2549-ի համար: № 5595 գրչագրում, ասվեց, նշված գործի հեղինակային պատկանելութիւնը

9 Ք. Զարբհանլեան, Մատենադրան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 330, հմմտ. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադրանին Միխիլարեանց ի վենետիկ», Տ. Բ. յօրինեց Բ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 1262:

10 Նույն տեղում, էջ 330, հմմտ. Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 1262—1263:

11 Ձեռ. № 5595, էջ 333ր—340ա, հմմտ. ձեռ. № 2549, էջ 183ր—189ր:

12 Ձեռ. № 2549, էջ 183ր: Ձեռագրում՝ սասկ փխ. սակս (= համար):

նը կասկածի տակ առնող հիշյալ վկայութիւնը չկա: Նման պարագայում անհիմն չէր լինի կարծել, որ № 2549 ձեռագրի բերված տեղեկութիւնը գրչի ներմուծում է: Այլ հարց է, թե դավանաբանական, ավելի ճիշտ՝ հոգեոր մատենագրութեանը հատուկ ինչ հողի վրա է կատարվել այն¹³:

Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգութիւնը, բացառութեամբ «Վեցօրեայի», «Պատարագամատուցի», հատուկեւս ճառերի ու կանոնների, իր գերակշռող մասով տակավին անտիպ է¹⁴, ուստի և հայագիտական լայն շրջանների համար գրեթե անծա-

13 Գ. Զարբնանայանի օգտագործած օրինակում, հավանաբար, նույնպես այն չի եղել, որովհետեւ նա առանց երկբայի ու հիշյալ «Տեսութիւնը» լվում է Կեսարացու մատենագրութեան ցանկում: (Գ. Զարբնանայան, նշվ. աշխ., էջ 330):

14 Մեղ ծանոթ են հետևյալ հրատարակութիւնները. ա) ամբողջական. Բարսեղի «Բ ս. մկրտութիւն» ճանրը, ասվեց, տպագրված է այլ չնդիմակութեամբ: («Սեբերիանոսի ճանր», էջ 370—401), «Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու կապաղովկացոց ճառք վասն Վեցօրեայ արարութեան», Վենետիկ, 1830, էջ 1—201, «Աղօթք սրբոյն Բարսղի հայրապետին, զոր արարեալ է վասն այլակերպութեան Քրիստոսի («Ժամակարգութիւն» (հ. Գ) կամ «Բ տօնի ս. Հովսէփիանաց», Վիեննա, 1839, էջ 619—640), «Սրբազան Պատարագամատուցք հայոց», Վիեննա, 1897, էջ 81—216, «Կանոնք Բարսղի Կեսարացոյ» («Կանոնագիրք հայոց», հ. Ա, էջ 329—362, հ. Բ, էջ 101—180, «Բարսղի եպիսկոպոսի Դնողորայ երկցու Անտիոքու» (կանոնական Թուղթ, «Կանոնագիրք հայոց հ. Ա, էջ 620—622), «Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի կապաղովկացոց ասացեալ ի ծնունդն Քրիստոսի»: («Շանդէս ամսօրեայ», 1908, էջ 419—438):

բ) Հատվածական. հատվածներ Կեսարացու դանազան դործերից (ճառ, թուղթ, մեկնութիւն, խրատ: («Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ հակաճառութիւն», ս. էջմիածին, 1908, էջ 21—22, 88, 143, 159—160, 191—192, 254—256, «Գնիք հաւատոյ», էջ 78—83, 84—98, 259—260, 287, 349, «Վեցօրեայ» հատվածներ. («Շատրնտիր ընթերցումը ի մատենագրութեանց նախնեաց», հ. Բ, Վիեննա, 1910, էջ 1—94), Հ. Անադյան, Գրաբարի ուսուցիչ, Երևան. 1954, էջ 101—107, Պ. Շարաբիանյան, Գրաբարի ուղեցույց, Երևան, 1967, էջ 127—129:

Կեսարացու «Պատարագամատուցի» հետ կապված բանասիրական բոլոր հարցերը՝ գրութեան ժամանակը, հայոց եկեղեցում ընդունվելն ու Գրիգոր Լուսավորչի վերագրվելը, առկա երկու թարգմանութիւնները (հին և նոր), նրանց փոխառնույթիւնը, թարգմանութեան և բնագրի համադրմամբ թարգմանութեան ժամանակը, պարագաները և այլ խնդիրներ բացահայտված են Գաթիկցի, մասամբ նաև Տաշլյանի կողմից: Ի լրումն կատարվածի կարելի է դիտել Ս. Նազարեթյանի մի հոդվածը, որ հատվածաբար համադրվում ու քննվում են Բարսեղի և Ոսկերչյանի «Պատարագամատուց» գրոց հետ կապված աղբյուրագիտական հարցեր: (Ս. Վ. Նազարեթյան, Պատարագամատուց եկեղեցական-կրօնական, «Պատկեր», 1894, № 1, էջ 10—17, № 2, էջ 42—44, № 3, էջ 61—68, № 4, էջ 84—88, № 5, էջ 100—105):

նոթ: Բնականաբար ըստ ամենայնի զնահատելով այդ ուղղությունը անցյալում կատարված յուրաքանչյուր փորձ՝ նկատելու է, որ Կեսարացու գրական վաստակի քննությունն անհրաժեշտությունը սլայմանավորվում է հայագիտության արդի պահանջներով:

Ամենևին էլ հակված չենք կարծելու, թե մեկ զլխում հնարավոր կլինի այդ անել: IV դարի նշանավոր հոևտոր կիբանիտսը իր աշակերտի՝ Բարսեղի, մասին գրել է. «նա Հոմերոս է, Պլատոն է, Արիստոտել է, որը ամեն ինչ գիտի»¹⁵, իսկ հայկական միջավայրի զնահատմամբ՝ Բարսեղը «յոյժ գիտնական էր, հանձարեղ և համեղաբան»¹⁶:

* * *

IV դարի բյուզանդական նշանավոր մատենագիր Բարսեղ Կեսարացու տակավին V դարում հայերենի թարգմանված հարուստ մատենագրական ժառանգությունը այսօր էլ քննելի է ամենից առաջ մարդու և մարդկային փոխհարաբերությունների շուրջ ունեցած հարցադրումների բնույթով ու կարևորությամբ: Այս առումով, հարկավ, անսպառ նյութ է ամբարված նրա ճառերում:

Բարսեղ Կեսարացին իր բազմաթիվ ճառերում ամենայն խրատությամբ դատաստանում է արատավոր բանականությունը, անում ամեն ինչ ի սեր այն բանի, որ մարդ արարածը լինի առաքինի, վե՛հ, գիտակցի իր բանական էակ լինելը և չընթանա անազնիվ, անմարդավայել ճանապարհով, չհետևի խաթարված բարքերի:

Ամենասարսափելին, ըստ Կեսարացու, հարբեցողությունն է՝ իր բոլոր կործանարար հետևանքներով: Նրա դատողություններն այս արցում ընկալվում են որպես կարեկցանքի խոսք հավասարակշռությունը կորցրած այն անձանց հանդեպ, որոնք, ինչպես նկատում է հեղինակը, անդառնալիտրեն մատնված են կորստի: Այնուամենայնիվ, նա բացատրում է. «արբեցութիւն չարութեան մայր. առաքինութեան ընդիմակ. զարին երկշտ ցուցանէ, զողջախոհն՝ պակշտեալ, զարդարութիւն ոչ գիտէ, գիմաստութիւն ի բաց բառ-

¹⁵ «Прибавление к изданию творений святых отцов церкви, в русском переводе за 1863 год», часть двадцать вторая, 1895, էջ 10:

¹⁶ Ձեռ. N 84, էջ 261ր, հմմտ. «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենագրարանին Մաթթարեանց ի վիեննա», կաղմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 70:

նա, քանզի, զոր օրինակ, ջուր պատերազմող է հրոյ, սոխնպէս ան-
շափութիւն գինոյ զխորհուրդսն շիշուցանէ»¹⁷:

Ինչպէս տեսնում ենք, հարբեցողությունը քննադատելուք բա-
ցի, Կեսարացին շափավորության կարևորությունն է ընդդժում: Նա
կամենում է ունկնդրին հասցնել շափավորության մեծագույն խոր-
հուրդը կանոնավոր կյանքի համար: Զափի զգացում ամեն ինչում,
առավել նա՝ գինու հարցում: Ըստ Կեսարացուն՝ շափի զգացողության
պակասի արդյունք են հարբեցողության բոլոր կործանարար հետե-
վանքները, որոնցից ամենասարսափելին՝ բարոյական ալլախերվա-
ծությունը, մարդուն հասցնում է ընդհուպ ֆիզիկական խեղանդա-
մության¹⁸:

Բարսեղ Կեսարացին հաճախ ականատեսի վկայությամբ է խո-
սում մարդկանց ինքնամոռաց հեշտասիրության ու գինեմոլության
մասին: Այսպէս, օրինակ, նա գրում է. «սաստիկ հնչմունք ընդ-
դէմ բախեալք անշափութեան ճայթմանն յոչ լսել ամենևին ածին
այսպէս և, մոռացեալն զինքեան, յաւէտ հեշտասիրութեանց զտեն-
չանս կորուսանեն»¹⁹:

Ամենից ցավալին, ըստ մատենագրի, այն է, որ կյանքի շշմա-
րիտ ուղուց շեղվում, հարբեցողությամբ են տարվում շատ բնորո-
նակ ու բանիմաց պատանիներ, որոնք հակառակ պարազաններում
շափազանց օգտակար ու պիտանի անձ կարող էին լինել, սակայն,
«ըմբել սկսանին և ըմբեն անասնոց օրինակաւ, և կոչես իբրև զեիրե-
լի յընթրիսն, արտաքս հանես մեռեալ, գինովն զկեանս նորա շի-
շուցանելով»²⁰: Կեսարացին տեսնում է, որ ամենահամոզիչ խոսքն

17 Ձեռ. № 2549, էջ 90—91ա: Մաշտոցի անվան Մատենադարանում և այ-
լուր Կեսարացու ձառերի տասնյակ հին ու նոր ընդօրինակություններ կան, որոն-
ցից քաղված բազմաթիվ հասված-վկայակոչումներ գիտական շրջանառության
մեջ են գրվում առաջին անգամ: Առկա տեղեկությունների համաձայն՝ Կեսարացու
ձառերի՝ գիտությունը հայտնի հնագույն ընդօրինակությունը կատարվել է 1172
թվականին, Հաղբատի գրչական-կրթական կենտրոնում, Սարգիս գրչի ներքով
(այս ձևագրի որտեղ գտնվելը առայժմ անհայտ է): Ընդօրինակողը ուխտի վե-
րադիտողի մասին գրում է. «Սա ելից ընդ այլ թիրութեանցն բազմաց ի դայամ
գրոց պակասութիւն և հաստատեաց ի սուրբ տեղոջս, զոր մի որ իշխեսցէ հեռա-
ցուցանել ի սուրբ ուխտս»: (Ս. Մարտոսյան, Հաղբատի գրչության կենտրոնը,
«Էջմիածին», 1971, Ծ, էջ 45):

18 Ձեռ. № 2549, էջ 92ա—բ:

19 Նույն տեղում, էջ 92բ:

20 Նույն տեղում, էջ 94բ:

ու սպառնալիքն անգամ անզոր են նման դեպքերում, այդուհանդերձ՝ չի կորցնում մարդու նկատմամբ ունեցած իր մեծ հավատն ու սերը և դիմում է դարձյալ մարդկային ողջախոհ բանականության փրկարար զորությունը՝ աղերսելով մարտնչել արատավոր գինարբուքի դեմ, փրկել կործանման եզրին կանգնած ցեղակից էակին. «Ով մարդ, պատերազմ արէր զգիներբուսն, արտաքս հանես զերիտասարդսն, ձեռին օժանդակելով, որպէս վիրաւորս ի պատեւրագմէ»²¹:

Որքան մեծանում է Կեսարացու վրդովմունքը գիտվող անպարկեշտ բարքերի առիթով, այնքան նա բնորոշ մանրամասներ է զբռնում և վկայում նշված խնդրի շուրջ: Նա քննադատաբար վկայում է, որ գինարբուքներից, նրանցում երզվող բազում «անհաճո» երգերից անմասն չեն մնում Նույնիսկ տարեց տղամարդիկ և կանայք, որոնց ասուկանված հոգիները «գրդոնէին առ ի վաւաշոտութիւն»²²:

Կեսարացու ճատերում պահպանվել են վկայություններ, որոնք որոշակի պատկերացում են տալիս ժամանակի մարդկանց աշխարհիկ նախասիրությունների ու այդօրինակ փոխհարաբերությունների մասին: Նրանցում հաճախ է փաստարկվում այն միտքը, որ գինարբուքի ժամերը ամենուր անցնում են, այսպես կոչված, անպարկեշտ (աշխարհիկ) գուսանական երգ-երաժշտության ուղեկցությամբ: Ականատես մատենագրին պակաս զայրույթ չի պատճառում և այն, որ հիշյալ ուրախություններին ոչ մասնակից, այլ պարպուպես ականատես ժողովուրդն անգամ ուրախանում, հրճվում է կատարվածով, մինչդեռ, ըստ Կեսարիացի թեմի արքեպիսկոպոսի, «արտասուել էր պարտ, հառաչել ի վերայ-եղելոցն», քանզի «երզ պոռնկութեան հնչեցեալ ի բաց հանին զսաղմոսս և զօրհնութիւնս, զոր ուսար»²³. Հատվածս միաժամանակ բացահայտում է Կեսարացու մտահոգության հիմնակուն պատճառը, այն է՝ արարողական երգասացության փոխարեն տիրապետող են դառնում աշխարհիկ երգն ու խրախճանքը:

Կեսարացին իր քննադատություն արդարացված հենքի համար փորձում է նկարագրել անդամ պարային ութմիկ շարժումները, կանացի մարմնի զայլթակղիչ կոտորատումները: Նա նկատելի տխրություն մտնում է այն մասին, որ մարդիկ սեփական անձն ու մար-

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, էջ 95ա:

23 Նույն տեղում:

մինը իսկապես մոռանալու փոխարեն, անպարկեշտ շարժումներով մոլեգին պարեր են պարում: Առ մարդն ուղղելով խոսքը՝ Կեսարացին գրում է. «շարժես զոտս և վազես մոլեգնաբար և պարես զանպարելին. սպարտ էր զարժանն առնել՝ զծուռնկսն կրկնել առ ի յաղօթս»²⁴:

Ժամանակի բարբերը, մարդկային փոխհարաբերություններն ու բարոյական-ցածրացումները մտածելու, մտահոգվելու շատ բան են տալիս, ու ինքը՝ անաղարտ մարդու և մարդկային անբասիր հարաբերությունների համար մարտնչող Բարսեղ Կեսարացին, չգիտի սրը ողբալ. «Ձորս ողբացից՝ զաղջկունս անփորձ ամուսնութեան, եթէ որք ընդ լծով ամուսնութեան էին կալեալք, քանզի ոմանք երթեալ գնացին զկուսութիւն ոչ ունելով և ոմանք զպարկեշտութիւն արանցն ոչ դարձուցին»²⁵: Վկայակոչվածը ուշագրավ հաղորդում է ընտանեկան փոխհարաբերությունների գնահատման և բարոյական որոշ նորմերի վերհանման իմաստով: «Անփորձ ամուսնութիւն» արուահայտությունը որոշակի պատկերացում է տալիս ժամանակի ամուսնական կարգի մասին. հատվածի երկրորդ կեսում խոսքը ամուսինների անհավասար իրավահարաբերություններին է վերաբերում, որի պատճառը, ինչպես հուշում է հատվածի վերջին մասը, աղջիկների մինչամուսնական փոխհարաբերությունների չափազանց ազատությունն է:

Այլոց նման, Կեսարացին էլ, վատը անգոսնելու նպատակով, մատնացույց է անում զոյություն ունեցող արատավոր բարբերը՝ ի սեր մարդկային փոխհարաբերությունների անաղարտության: Ըստ նրա՝ շարիքի արմատը արժաթասիրությունն է, որի պատճառով մարդիկ ահավոր զրկանքներ են կրում, շահամուլ ու ինքնասեր դառնում: «Իսկ դու,—գրում է նա,—առ ոսկին հայիս և զեղբայրն ոչ տեսանես...»²⁶:

Կեսարացին ջանում է, որպեսզի ունկնդրի մոտ համոզմունք դառնան մեհն ու կատարյալը, կատարված անմարդկայինի համար ցավելը, տառապալիին կարեկցելը: Նման ղեպքերում նրա մտքերը համարժեք են ասացվածքների: Այսպես, օրինակ, «լաւ է անուն բարի, քան զփարթամութիւն բաղում»²⁷, «մի՛ սովոյ մնասցես յա-

24 Նույն տեղում, էջ 95ա—բ:

25 Նույն տեղում, էջ 95բ:

26 Նույն տեղում, էջ 110ա:

27 Նույն տեղում, էջ 109բ, հմմտ. Առակք Սող., ԻԲ 1:

զագու ոսկոյ»²⁸, «մի՛ լինիր թշուառական մարդկայնոյ»²⁹ և այլն:

Մեծ է Բարսեղ Կեսարացու առանձին ճառերի պարունակած վկայությունների պատմական նշանակությունը: Այդ իմաստով հեղինակի «զՎաշխողաց»³⁰ ճառը արդարև արժանի է հաստուկ քննություն:

Կեսարացին բնավ չի խոսում ժամանակի տնտեսական ինչ-ինչ նորմերի, կացութաձևերի զարգացման մակարդակի, նյութական բարիքների արտադրության ընդունված միջոցների ու չափի մասին: Բայց, միաժամանակ, ամենայն մանրամասնությամբ զրուում է նյութական անապահով դրությամբ պայմանավորված բազմաթիվ շարիքների գոյության փաստը: Դրանցից ամենաանտանելին օտարություն մեկնեն է: Հիշյալ ճառում վշտի խոր զգացումով է նա պատկերում այլևս չվերագոնալու վախը սրտում, կարոտի ապրումով օտարություն մեկնող տղամարդուն, որը դիմում է քնտանիքի նյութականը փրկելու վերջին հնարավորությունը:

Կեսարացին պատվիրում է հրաժարվել օտար դուռ դնուլու մտքից, որովհետև այն կարող է դժբախտության պատճառ դառնալ. «Մի երթեսցես յօտար դուրս, քանզի ջրհոր արդարև նեղ է օտարութիս. լաւագոյն է առ փոքր խորհուրդս զձեռն մխիթարել, քան միանդամայն ամբառնալ օտարութիւրն և զկնի ամենեցուն ի միտսին ի գոլիցն մերկանալ»³¹:

Քննվող ճառում ուշադրավ դիտողություններ կան ժամանակի տնտեսական փոխհարաբերությունների, մասնավորապես՝ վաշխառուական առանձին նորմերի մասին: Աղքատությունից ստիպված՝ մարդիկ վաշխատունների հոգաժությունն են դիմում և դրանով իսկ կապանքի տակ զնում իրենց ունեցած անկախությունն անդամ: Կեսարացին ազատությունը զնահատողի հանդիմանությամբ զրում է. «Աղքատ ես ալժմ, այլ ազատ, փոխս առն[ել]ով ոչ ընչեղացցիս և զազատութիւնս և ի բաց բարձցես. ծառայ վաշխողին է փոխառուն»³²: Նրա համոզմամբ՝ շները, ռոնալով հանդերձ, ընտելանում են, մինչդեռ վաշխատուն վարձն առնելով ավելի է զայրանում և

28 Նույն տեղում, էջ 109բ—110ա:

29 Նույն տեղում, էջ 110ա:

30 Նույն տեղում, էջ 122ա—127ա:

31 Նույն տեղում, էջ 123բ—124ա:

32 Նույն տեղում, էջ 124ա:

բնավ չի դադարում վայրահաշելուց, երդումիդ չի հավատում, բայց երդվելով է պահանջում³³:

Անհնարին է խուսափել պարտատիրոջ անհատնում հետապնդումներից ու նվաստացումից, քանզի նա «հետազօտէ, եթէ արտաքս դաս՝ ի դրանցն ձգէ, սու ինքն քարշէ, եթէ ի ներքս զբեղ թաքուցանես՝ կայ ի գաւիթն զդունն բախելով, առաջի կնոջն թշնամանէ, առաջի սիրելեացն ամաշեցուցանէ, ի հրապարակս խեղդէ»³⁴: Նա բացատրում է, որ շունևոր խավի վաշխառու դառնալու ձգտումը ինչ-որ տեղ դատապարտելի է, որովհետև դրանով «պարտուցն թշնամանս մեզ յաւելուցումք. ոչ ոք զվէր վիրաւ ողջացուցանէ և ոչ զշար չարի բժշկէ, և ոչ զաղքատութիւն վաշխիւք վերըստին ուղղէ»³⁵: Քննվող ճառում նկատելի է Կեսարացու վերդովմունքը, կարեկցանք պարունակող ղայրույթը որոշ անինչը մարդկանց դեմ և ահա՛ թե ինչու: Նրա մի վկայութեամբ՝ աղքատությունը ոչ/բոլոր պարագաներում է կարեկցանքի արժանի: Արդարացման ոչ մի ելք չի կարող ունենալ այն երևույթը, որ առողջ, ֆիզիկական աշխատանքի կատարելապես ընդունակ մարդն էլ է ինքնանվաստացնող ամենասամարդկային պայմաններով վաշխառուի դիմում, մինչդեռ շատ ավելի զեղեցիկ ու մարդկային կլինէր աշխատել սեփական ձեռքերով, կիրառել արհեստի իր իսկ իմացությունը և ըստ կարելիւնյն հոգալ ընտանիքի հոգսերը: Նա գրում է. «ունիս ձեռն, ունիս արուեստ, վարձեա, սպասատր լեր, յուով հնարք կենցաղոյս, բազում զանազանութիւնք, տլլ թէ տկարութիւն ունիս մուրա ի ստացողացն և եթէ սմօթ է մուրանալն, վատթարագոյն՝ փոխառնուլ և զրկել»³⁶:

Աշխատասիրությունը, սեփական աշխատանքով ապրելը, ըստ Բարսեղ Կեսարացու, մարդկային արժանապատվութեան գրավաւկանն են: Ինքնին հակակրանք, խոր հիասթափություն ևն առաջացնում անաշխատ կյանք վարելը, այլոց աշխատանքով ապրելու եւլ դա այնքան նկատելի ու էական կօղմ է, որի հիշեցման անհրաժեշտությունը պետք է առմիշտ բացառել մարդու համար: Բայց, որքան էլ ցավալի է, բանականութեամբ օժտված մարդ արարածը տակավին չունի բնազդով առաջնորդվող մրջյունի աշխատասիրությունը և հետևում է արատավոր կենցաղի:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում, էջ 124բ:

³⁶ Նույն տեղում, էջ 125բ:

Կեսարացիին աշխատասիրություն արժատավորելու և բարին խրախուսելու նպատակով «աբարչի ստեղծած մարդուն» երբեմն ստորադնում է աննկատ կենդանիներից, քանզի «եթէ մըջին կարէ ոչ մտրանալով և ոչ վարձու առնելով կերակրիլ, և մեղուք զնշխարլս իւրոց կերակրոյն թագաւորաց ևս շնորհն, որոց ոչ ձեռս և արուեստ բնութիւնս ետ, իսկ զիւրահնար կենդանի մարդ մի յամենեցունց հնարից ոչ գտանես առ ի կենցաղոյս սնունդ»³⁷: Ասվածը միաժամանակ նույն մարդու կարողությունների նկատմամբ ունեցած հավատի արտահայտություն է: Ասվեց, այլ բան է, երբ մարդ ստիպված է դիմել փոխառության, թեև դա էլ, քստ Բարսեղ Կեսարացու արգարացում չունի: Բայց հեղինակի բնագաղատությունն անխոհեմ նախասիրության տեր որոշակի մարդկանց է վերաբերում: Ահավասիկ նրա այդօրինակ բացատրություններից մեկը. «առնուն փոխ մարդիկ ի ծախս փափկութեանց և ի բազմապատիկս անպտուղութեանց զինքեանս տուեալ, որք կանանց հեշտութեանց ծտտայ են»³⁸: Խոսքը, ինչպես տեսնում ենք, ամենևին էլ անինչք, նյութական անսպասով կացութեան տեր մարդկանց մասին չէ, այլ նրանց, որ, վարժված լինելով փափուկ կենցաղի, այս կամ այն կերպ հնարավորություն են փնտրում վերստին ապրելու նախընտրած բարքով, որի հնարավոր միակ ելքը հավանաբար փոխառությունքը դիմելն էլ:

Որ բարոյական անկման, մարդկային ազնիվ փոխհարաբերությունների վերացման, մարդը մարդու դեմ հանելու միակ պատճառը հարստանալու տենչն է, լավագույն ձևով երևում է Կեսարացու մեկ այլ՝ «Առ բնշեղսն»³⁹, խորագիրը կրող ճառում: Կեսարացին վրդովմունքով է խոսում նյութական անսպաս միջոցների տեր այն մարդկանց մասին, որոնք իրենց ձին զարգարում են ամենայն շուքով, իսկ «զեղբայրն անամաթացեալ անտես» են առնում, վատնում, փշաղցնում են նյութական միջոցները, բայց կարիքավորներին երբեք չեն օգնում⁴⁰: Ըստ Կեսարացու, ավելի անտանելի ու անխուսափելի վատ հետեանքներով լի է այն երևույթը, երբ կին արարածըն է բնչասեր: Նա զրոյում է. «...եթէ կինն ևս բնչասէր տնակից է՝ կրկնապատիկ է խախտն, քանզի գլխափկութիւնսն ի վեր բորբոքէ և

³⁷ Նույն տեղում, էջ 125բ—126ա:

³⁸ Նույն տեղում, էջ 126ա:

³⁹ Չեռ. № 5595, էջ 264բ—278ա, հմմտ. ձեռ. № 2519, էջ 113բ—122ա:

⁴⁰ Նույն տեղում, էջ 267բ:

զհնչտասիրութիւնսն յաճախեցուցանէ»⁴¹: Կանացի պճնասօրրութիւնը սահման չունի, նրանք նույնիսկ «գբարինսն քանդակեն հիւսանցն, որք յախճապակս դնեն կենդանագրացն»⁴²:

Բոլոր պարագաներում հույժ զատապարտելի է սեփական պահանջների հարցում շափի զգացում շունենալը, սահման չճանաչելը, ազահույթիւնը պաշտամունք դարձնելը: Բնության ամեն մի առարկա, իր, երևույթ ինչ-որ կետում իրենց սահմանն ունեն, «Մով գիտէ զսահմանն իր,— գրում է Կեսարացին,— գիշեր ոչ անցանէ զսահմանայդրութիւնս զսիզբանէս, իսկ ազահն ոչ պատկառէ ի ժամանակէ, ոչ ճանաչէ զսահմանս, ոչ թուլացուցանէ կարգ ի փոփոխման, ալլ նման է հրոյ բնութեան՝ զամենայն ըմբռնէ, զամենայն նարակի»⁴³: Այնպես, ինչպես փոքրիկ գետը ճանապարհին իրեն է խառնում բյուրավոր մանր աովակներ ու հղօրանում, բացատրում է նսնույն նմանութեամբ էլ նախապես նյութական աննշան կաթողութիւն ունեցող անձինք կամաց-կամաց հավարում են և այլոց զըրկելով հարստանում: Իսկ եթե մեկը ինչքի տնօրեն է դառնում՝ նրա համար այլևս փոխվում և նոր երանգ են ստանում բնության ամեն մի երևույթ, մարդկային նախկին փոխհարաբերութիւններն ու հարազատներն անդամ: Նկատելով ընչասիրութիւն օրավոր արմատակալումն ու կործանարար հետևանքները, Կեսարացին գրում է. «Մինչև յե՞րբ ոսկի անձանց խեղդ, մահու կարթ, մեղաց պատրանք, մինչև յե՞րբ ընչեղութիւն պատերազմի պատճառ, յաղագ որոյ գործի գէն, վասն որոյ սրի սուր. յաղագս նորա ազգակիցք անծանալթանան ի բնութենէն, եղբարք հակառակ միմեանց սպանումն տեսանեն»⁴⁴: Ասովածը յուրահատուկ հարցադրում է, որ, առանց պատասխան ակնկալելու, հարցումով է բացահայտում իրականութիւնը, հետևանքով ժխտում պատճառը:

Բարսեղ Կեսարացու ճառերում միշտ էլ նկատելի է հեղինակի խրատական-դաստիարակչական որոշակի նպատակադրումը. վատը անգոսնելու և բարին ուսուցանելու հիմնական նտաքրքրութիւնը: Նրա ճառերի ուսուցողական-դաստիարակչական նպատակը հոյոց շրջաններում առանց ենթիմաստի է ընկալվել տակալին միջնադարում: Մի գրչագրում գրառվել է հետևյալ պատկերավոր համեմատութիւնը. այնպես, ինչպես հողագործն է ջանում ժամա-

41 նույն տեղում, էջ 267ր—268ա:

42 նույն տեղում, էջ 268ա:

43 նույն տեղում, էջ 269ր:

44 նույն տեղում, էջ 271ա:

նակին քաղհանել արտը, որպեսզի փուշը չտարածվի ու շաղականի հասկը կամ բծիշկն է վիրահատում հիվանդ օրգանը ի սեր մարմնի ապաքինման, Բարսեղ Կեսարացին էլ «տեսնալ զքաղաքացիսն վաշխ և ի տոկոսիս ախտոցեալ՝ խօսի առ նոսա, զի դադարեցուցէ յախտէս և սկիզբն առնէ ի մարգարեական բանիցն և ցուցանէ ի գրոց զախտիս այս շարութիւն, խրատէ և զկարօտեալն ոչ առնու վաշխովք»⁴⁵:

«Զբարկացողաց»⁴⁶ խորագրով ճատում Կեսարացին իր նույն բարբառ-դաստիարակչական հարցադրում-դիտողությունը առաջ է տանում հոգեբանական հունով:

Բարկությունն ասորչա երևույթ է և միշտ էլ հատուկ է եղել մարդկային խառնվածքին: Բայց երբ խորամուխ ենք լինում դրա վերջնական ընթացքի մեջ, երևան են զալիս վերջինիս կործանարար բուլբու հնարավորությունները: Բարկությունն առաջացնող պատճառներ միշտ էլ կան, հակառակ պարագայում այն կարող է ծնվել ամենաաննշան առիթից և ունենալ սղբերգական հետևանք, «բան զի բարկութիւն յարուցանէ զթշնամանս և թշնամանքն ծնանին զկրուսի, իսկ կոին զհարուածս և հարուածքն զվէրս, իսկ ի վիրացն բաղում անդամ մահը»⁴⁷: Դատապարտելին այն է, որ բանական արարածը հոճախ չի կարողանում տիրապետել սեփական կրքերը և վերստի բարկություն առաջացնող բազմաթիվ մանրուքներին: Մինչդեռ, Կեսարացու համոզմամբ, բարկություն ցավալի հետևանքները արդյունք են «ողջախոհութեան օրինակ» շունենալու կամ, ինչպես, պակասի:

Բարկության խնդրին ոչնչով չի զիջում նախանձի, շարակամության երևույթը, որի հոռի հետևանքները մերկացնող հատուկ ճատունի նա («զՄախանաց»)՝⁴⁸: Ըստ Կեսարացու՝ պատահում է, որ բազառապես մախանքի, նախանձի պատճառով պատերազմներ են լինում, մարդը աստծո արարած մարդուն է սպանում, մտերիմները, հարազատներն ու բարեկամները միմյանց զեմ են ելնում և հաճախ որդեապան դառնում: Ահա թե ինչու, Կեսարացու համոզմամբ, նախանձ կոչված հիվանդությունը մահաբեր է, «ապակտնութիւն կենաց, ժանդախտ բնութեանց, թշնամի յաստուծոյ տուեցելոցն մեզ,

⁴⁵ Ձև. N° 437, էջ 325ր:

⁴⁶ Ձև. N° 2549, էջ 127ր—134ա, հմմտ. ձև. N° 5595, էջ 278ա—282ա:

⁴⁷ Նույն տեղում, էջ 129ր:

⁴⁸ Նույն տեղում, էջ 134ա—139բ, հմմտ. ձև. N° 5595, էջ 285բ—291ա:

ընդդիմակ առ աստուած»⁴⁹։ Կեսարացիին նախանձի կործանարար հետևանքների դատափետումին զուգահեռ նկարագրում է չարակն մարդու արտաքինը, դիմադժերը, դեմքի արտահայտություն-տարբերակիչ գծերը և այլն։ Ահա այդ նկարագրությունը. «աչք ալնպիսեացն ցամաք և անսպաժառք, այտք՝ տխուրք, յօնք՝ ի վայր անկեալք, ոգին՝ ախտիւն ամբոխեալ, զճշմարտութեան ստեան ի վերա իրացն ոչ ունելով, ոչ գործեսցես ըստ առաքինութեան դժբալիին ի նոսա, ոչ բանի զօրութիւն պարկեշտութեամբ արդարեալ և շրնորհիւ, ոչ ալ ինչ ի նախանձեւեացն և շուրջ տեսանելեաց ոչինչ»⁵⁰։

Քարսել Կեսարացիին երբեմն, թվում է, զոնե ինքնահանգրատացման խաբուսիկ եղանակով, փորձում է արգարացման եզր գտնել նախանձամտության առանձին դեպքերի համար։ Սակայն խորհրդածուռն իսկ նույն վայրկյանին անհնարին է դառնում, երբ կրկին ականատես է լինում շարությամբ ու անհիմն շկամությամբ բարին անգոսնելու և վատը սրբագործելու բազմաթիվ փաստերի, երբ արձամարչվում է առաքինությունը, քաջությունը, հանգոսնությունը ընկալվում, ողջախոհությունը՝ անցավություն, իմաստնությունը՝ շարամանկություն և այլն։ Նա գրում է. «զգովելին ի բաց արհամարհեն և ի զրացոյն շարեաց զառաքինութիւն արձամարհեն և հայհոյեն, քանզի յանդուղն ասեն զարին և տնցալ՝ զողջախոհն, զարդարն՝ ապառում, շարամանկ՝ դիմաստունն և զմեծաւմայելուչն իբրև զամբարձաւաճ բամբուսն և զագատն՝ որպէս զարբշիտն»⁵¹։

Ըստ Կեսարացու, առավել վրդովեցնողն այն է, որ մարդիկ շարությունը, նենգությունը թաքցնում են կեղծ բարեկամության արտացոլության դիմակի տակ, և մարդ հաճախ դժվարանում է ժամանակին ու անվնաս զուշանալ շարից, չընկնել կարծեցյալ սիրտ վնասակար ազդեցության տակ։ «Մարդիկ լինին, — գրում է նա, — յորժամ զատելութիւն ի խորոց ունելով սէր ցուցանիցեն, օժանեն զվերերևութիւն ըստ ի ներքոյ ծովու վիմաց, որք սուղ ինչ ջրով ծածկեալք են. շար ոչ նախատեսեալ անզգուշիցն լինին»⁵²։

Կեսարացու ճառերից այսօրինակ վկայություններ կաբնի ի բերել ցանկացած շափի, բայց ասվածն էլ բավական է հաստատուպես պնդելու, որ նրանցում բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ կան IV դարի սոցիալ-տնտեսական իրավանդումների, մարդկա-

49 Նույն տեղում, էջ 135ա։

50 Նույն տեղում, էջ 137բ։

51 Նույն տեղում, էջ 137բ—138ա։

52 Նույն տեղում, էջ 139բ։

յին փոխհարաբերությունների, կենցաղի, բարքերի, սովորույթների, բարոյական ըմբռնումների, նախասիրություն-պատկերացումների և այլնի մասին:

Հայերեն թարգմանությունում մեզ են հասել նաև այնպիսի ձուռեր, որոնցում քննվում են առավելապես հոգևոր խնդիրներ⁵³:

«Յաղագս սուրբ երրորդութեան»⁵⁴ ձառում նա ունկնդրի համար միանգամայն հավաստի կովաններով բացում է ճշմարիտ աստվածասիրության զաղտնիքը, այն է՝ կարողանալ ազատվել մարմնական զգայությունից, երկրային կյանքի հրապուլչրներից և առհասարակ այն ամենից, ինչը աննշան շափով հիշեցնում է աշխարհական կյանք և հետաքրքրություն: Նա գրում է. «Իսկ զու ելի կամիս յաղագս աստուծոյ ասել ինչ կամ լսել, թող զմարմինդ քո, թող զմարմնական զգայութիւնս, լրցես զերկիր, լրցես զծով, ի ստորև քան զքեզ արասցես զաւղղ, զանց արա զժամուց և զժամանակաց բարեկարգութեան, որ յերկրի զարդը...»⁵⁵:

Հոգևոր պարտականությունների անկերի կատարման, անձանձրույթի աղոթելու և առհասարակ ճշմարիտ հավատասիրության նույն խնդրանք-խորհուրդն է առկա նաև նրա «Սահմանք կրանատրականք»⁵⁶ խորագիրը կրող ձառում: Կեսարացին խստագույնս զժգոհում է, որ, այնուամենայնիվ, կան մարդիկ, որոնք աստվածասիրության խորհուրդն ունկնդրելով՝ հանդերձ՝ ընթանում են անազնիվ ճանապարհով և «որք ոչ առնեն ըստ պատուիրանացն աստուծոյ զգործս»⁵⁷:

Սոցիալական տարբեր խավերի անձանց արարողական միանման պարտականությունների պահանջման իմաստով կարևոր է Կեսարացու «Ի պահանքառաններորդ»⁵⁸ խորագիրը կրող ձառը, որը, հավանաբար, պետք է զրված լինի վաղևս կայսեր անլսար հալածանքների այն տարիներին, երբ, Բարսեղի և այլոց վկայություններով, բրիտանոնություն ամեն մի սպասավոր խողաղություն էր որոնում իր եկեղեցու սահմաններում: Կեսարացին աչսպես է բնութագրում իր հիմնական անելիքը. «Եւ այժմ ինձ զՔրիստոսի պարեկանս առ ի յընդդէմ աներևոյթ թշնամեացն պատերազմ կարելոյս ի զրմալի-

53 Ձեռ. № 948, էջ 36բ—37բ, 261ա—270բ, ձեռ. № 996, էջ 61բ—68բ:

54 Տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 78—83:

55 Նույն տեղում, էջ 79:

56 Ձեռ. № 5595, էջ 111ա—121բ:

57 Նույն տեղում, էջ 114բ:

58 Նույն տեղում, էջ 236ա—240բ, հմմտ. ձեռ. № 2519, էջ 84բ—89բ:

նատուր: Կեսարացին պատասխանում է. «առանց ուսման է առ Աստուած սէրն, բանդի ոչ լուսոյ խնդարն և կենաց խնամածելն յայլմէ ուսաք և ոչ սիրել զծնունդս և սնուցանել այլ ուսոյց»⁶³:

Որկրամոլությունը, Կեսարացու համոզմամբ, հույժ դատապարտելի արատ է մարդկային կյանքում: Այսպիսին է մարդկանց հոգեբանությունը. «յորժամ որք փափկանայցեն և զցանկությունս որովայնի երանությունս սահմանեսցեն»⁶⁴: Յուրովյան, շվայտության մեջ է անցնում հատկապես մեծահարուստ մարդկանց կյանքը, որոնք առ ոչինչ են համարում մարդկային ամեն մի սրբություն, «որք զվայելումն հեշտալեացն յառաջին բարութեանցն զրնեն»⁶⁵, Կեսարացին նման մարդկանց մասին խղճմտանքի զդացումով գրում է հետևյալը. «յոժ հեծեմք ի վերա նոցա, զի ունայնությունաց զամենայն զկենցաղն ծախեն և աստուածացուցանեն զիրեանց ցանկությունն»⁶⁶: Ինչպես տեսնում ենք, Կեսարացուն վրդովեցնողը որոշ խավի՛ քրիստոնեություն հանդես ունեցած անտարբերությունն է, այն փաստը, որ հաճախ արարչի փոխարեն աստվածացվում ու պաշտվում է մարդկային կիրքը, սնտոի ցանկությունը և այլն:

Գատապարտելի սովորույթը, անհավատությունը կենցաղում այն աստիճան արմատավորված են, որ Կեսարացին անզգամ մտափախսվյուն ունի վերադառնալ վերջինիս: Նա գրում է. «Երկնչիմ, մի զուցէ, զոր բակեցարն, զնոյն երեխիմք շինել և որով զրնկերան զատիմք զանձինս զատապարտեմք. կերպարանաւք աշխարհիս վարիմք և այլեայլ այլակերպիմք»⁶⁷:

Շուրջ երեք հարյուր վաթսունից ամլիկ հարց է արժարժված Կեսարացու «Գիրք հարցողաց» աշխատությունում, որոնց առանձին-առանձին քննությունը մենագրական աշխատանք կպահանջեր: Դրանք խնդիրներ են, որոնք ամենասերտ կերպով առնչվում են նախ կյանքի ամենատարբեր բնագավառներին, բնության երկվույթներին, մարդկային հոգեբանության առանձնահատկություններին, գիտության այս կամ այն բնագավտոի զարգացման մակարդակին և այլն: Նրանում մասնավորապես բնիված են՝ երկյուզի զդացումը, «անզբաղ մտածությունաց» պատճառն ու հետևանքները,

63 Ձև. № 5595, էջ 122ա:

64 Նույն տեղում, էջ 143բ:

65 Նույն տեղում:

66 Նույն տեղում:

67 Նույն տեղում, էջ 144ա:

ժուժկալութիւնը և խոհեմութիւնը իբրև կյանքի շափանիշ, ճաշն ու ընթրիքը հոգևոր հայեցողայնամբ, հոգևորականին վայելուչ տարազը, ամբարտալանութիւնն ու տրտունջով գործելը, մանկան ուղղելի սխալը, բժշկութեան կարևորութիւնն ու անկատար զարգացումը, ինչպես հանդիպել բնտանիքին և հարազատներին, «զինչ է սուրբն և զինչ՝ արդարն», «զինչ է պղծութիւն», «զինչ է պաշտան» և այլն:

«Գիրք հարցողացը» ըստ Կեսարացու մատենադրական ժառանգութիւնն ընդօրինակող գրիչներից մեկի բնութագրման՝ «գրեցաւ կանոնական Սահմանադրութիւն ուղղութեանցս յուսումն խրատու կարգաւորութեան վանականաց»⁶⁸, իսկ մի հիշատակագրութեան համաձայն՝ այն «գրեցաւ կանոնական Սահմանադրութիւն ուղղութեանցս յուսումն խրատու կարգաւորութեան վանականաց յարմարեալս և շարակարգեալ ի հոգիապայծառ և ի տիեզերալոյս վարդապետէ և ի մեծէ եղիսկոպոսէն Կեսարու Կապաղովացոյ սրբոյն Բարսղի, որ կոչի Հարցողաց, զոր ետ զսա գրել Ստեփաննոս վարդապետն յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց»⁶⁹:

Կեսարացու գործերի՝ եկեղեցու համար ունեցած դերի գնահատման փորձ հայոց շրջանում եղել է տակալին միջնադարում: Ահա այդպիսի բնութագրումներից մեկը, որն առկա է Հակոբ կաթողիկոսի մեկնութիւններում. «Երանելի վարդապետս զանազան վարդապետութեամբ խրատէր զիր հօտացեալ հօտն, ի Հնոց և ի Նորոց կտակարանաց և կազմէր նոցա զեղ հոգևորական՝ առ ի բուժել զախտս բազմատեսակս ունակացեալս ի նոսա»⁷⁰:

Բարսեղ Կեսարացու մատենադրական հարուստ ժառանգութեան մեջ իր ընդգրկած հարցերի բազմազանութեամբ ու խորութեամբ բացատրիկ արժեք ունի նրա «Ճառք վասն Վեցօրեայ արարչութեան» կամ, ինչպես ընդունված է գիտական գրականութեան մեջ, «Վեցօրեայ» երկասիրութիւնը⁷¹: Մատենադարանի № 4150 գրչագրում պահպանվել է «Վեցօրեայ» ճառերի հետևյալ ստեղծագործական պատմութիւնը. Կեսարացին «որպէս էառ հրաման ի

68 Նույն տեղում, էջ 228բ:

69 «Յուրացի հայերէն ձեռագրաց Ձմմառի վանքի Մատենադարանին», Տ. Բ. կազմեցին Ն. Ալիբեաև և Հ. Ոսկեան, Վրեննա, 1971, էջ 70:

70 Ձեռ. № 437, էջ 320ա:

71 «Վեցօրեայ», էջ 1—201:

տեսլեան գրել զՎեցարեա արարածս, անդէն, ասեն, ի լերիսն զհինգ տար արար զքննութիւն Վեցարէին, ի առէ և ի զիշերի, և յայլոց լուաք, թէ յորժամ դարձան ի քաղաքն, յայնժամ սկսաւ նա գրել զմատեանս սուրբ, և յորժամ վճարեաց լի և տոստ վարդապետութեամբ մինչ յսկիզբն լինելութեան մարդոյն և խոստացաւ ասելով, թէ տացէ ինձ կենաց ժամանակ, որ տուողն է ամենայնի, ունիմ ասել լիով և վասն մարդոյն կազմութեան և բնութեան: Եւ հիւանդոտ զոլով մարմնով և բազմահոգ ոչ եղև յայն ժամանել, այլ վերափոխեցաւ առ Քրիստոս և յետ մահուան նորա ելից զայն պակասութիւն անդրանիկ հարազատ նորա Գրիգոր Նիսացի»⁷²: Ասվածք, հարկավ, ընկալում ենք իբրև «Վեցօրեայի» գրութեան մասին պարզ տեղեկություն, բայց ոչ ժամանակի որոշման հաստատուն կովան:

Հայտնի է, որ Կեսարացիին երկար ժամանակ ապրել է առսնձնութեան մեջ և զբաղվել առաջին հերթին ս. Գրքի ուսումնասիրութեամբ ու մեկնութեամբ: «Վեցօրեայի» ուսումնասիրութեամբ այն սպաւորությունն է ստեղծվում, որ ս. Գրքի համապատասխան հատվածի (Մնունդք) մանրախուշը քննությունից հետո է միայն հեղինակը ձեռնամուխ եղել իր նշանավոր ճառերի ստեղծմանը:

Վերոբերյալ տեղեկություն մեջ, ի զեպ, որոշակի ասված է, որ Կեսարացիին այն ավարտել է մահվանից քիչ առաջ, քանզի կամեցել է ձեռնարկել նախապես մտածված մեկ այլ գործ ևս, որը, բովանդակության իմաստով, լինելու էր «Վեցօրեայի» շարունակությունը, բայց մահը կանխել է ծրագիրը: Հայտնի է, որ Կեսարացիին մահացել է 379 թվականի հունվարին, ուստի և «Վեցօրեայ»

72 Ձեռ. N° 4150, էջ 61ա—բ, հմմտ. ձեռ. N° 3276, էջ 376բ. Հ. Տաշլան, Կղ. աշխ., էջ 62, 232: Ժամանակ մատնացուցող ձեռագրական տեղեկություն է նաև Մխիթար Այրիվանեցու «Ճառերսիրում» (ըստ Գ. Հովսեփյանի՝ 1272—1287 թթ.) պահպանված հետևյալ ինքնագիր վկայությունը. «Յազգաս Զ. օրեա սուրբց, զոր սուսպ ի գառկի տօնին»: (Պ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս—Լիբանան, 1969, էջ 210, հմմտ. էջ 396 (ձեռ. էջ 976ա): «Վեցօրեայի», մանավանդ Գր. Նյուսացու «Յազգաս կազմութեան մարդոյ» երկասիրության ստեղծագործական պատմության ասումով ուշագրավ է հետևյալը. «...գրակազմութիւն Վեցարեայ գրոցն, որ մնաց ի սրբոյն Բարսղ հայրապետէն, վասն զի սուրբն Բարսղ յոյժ աշխատը յսոնել զգիրսն Վեցարեայն վասն արարչութեան աստուծոյ... Բարսղի մահացել... և Պետրոս փակակալն աղաչեաց զսուրբն Գրիգոր. հարսդատական համարձակութեամբն ասաց թէ սրբոյ է քեզ լնուլ զպակասութիւն վաստակոց եզրօր մերոյ...»: (Ձեռ. N° 10326, էջ 259բ, հմմտ. ձեռ. N° 1879, էջ 200ա, 237բ, 270բ):

Ճատերի ավարտման մոտավոր ժամանակ պետք է համարել 378 թվականը: Գրանո՞վ հասկանալի է դառնում «Վեցօրեայի» յոթերորդ ճառում առկա «վասն տկարութեան մարմնոյս իմոյ» արտահայտությունը⁷³:

Կեսարացին, ինչ խոսք, հրաշալի պիտեր ս. Գիրքը, եկեղեցական մատենագրությունն առհասարակ, հին հունական փիլիսոփայությունը և ընդհանրապես այն ամենը, ինչ հարկի էր Աթենքի ու Պոլսի համալսարանական շրջաններում: «Վեցօրեան» շարագրելիս, իր իսկ վկայությունամբ, նա օգտվել է զանազան սկզբնաղբյուրներից⁷⁴, ամենից առաջ ս. Գրքից՝ հունարեն և եբրայերեն⁷⁵ խմբագրություններով, որտեղից կատարում է բազմաթիվ վկայակոչումներ:

Երկրորդ գրավոր աղբյուրը պետք է համարել «Բարոյախոս» ժողովածուն: Վերջինս իր բովանդակած «լրույց-տոակներով IV դարի ամենաշատ ընթերցվող գրքերից էր, և կենդանական աշխարհի մասին ունեցած տեղեկություններով «Վեցօրեան» շատ է հարագատ «Բարոյախոսին»⁷⁶:

73 «Վեցօրեայ», էջ 152: Հայտնի են բաղմաթիվ վեցօրեաներ՝ զրված ս. Գրքի համապատասխան առասպելի հիմքի վրա կամ նմանությամբ (գրանց ամբողջական ցանկը տե՛ս «История русской литературы», М., 1941, էջ 199—200):

74 Վկայություններ կան նաև բանավոր սկզբնաղբյուրների մասին: Այսպես, օրինակ, ձկների և այլ կենդանիների մասին Կեսարացու տեղեկությունների հիմնական աղբյուրը բանավոր գրույցներն են. «պատմեն որսորդքն, որ ի շնդիկ ծովուն ունին միշտ դատակս, զձկանց և զայլ ազգ կերպարանաց յայտ առնեն որսորդք, որ յնգիպտացոց ծովուն աշխատին» (էջ 141) կամ. «լույս յառնէ միոյլ, որ կար ի սահման ծովու, ասէ, երինոս անուն ղևոուն մի փորրիկ անարգիկ է ի կղզին, ի մէջ ծովուն...» (էջ 150). «...և յորժամ հասանէ ժամանակ ծննդեանն առնձակորեանն՝ պատասէ մաղօքն զարգանդ մօրն և էյանէ, որպէս պատմեն՝ որք տեղեակ են իրացն նորա» (էջ 192):

75 Նույն տեղում, էջ 76:

76 Քննությունը տե՛ս Н. Марр. Физиолог. армяно-грузинские и армянские тексты (Т.—Р., т. VI, СПб., 1904). Ի միջի այլոց, «Վեցօրեայի» «Բարոյախոսի» հետ ունեցած առնչության օգտին է խոսում նաև այն փաստը, որ Բարսեղ Կեսարացին վերջինիս հեղինակ է հիշելում մասամբ հունարեն, ինչպես նաև վրացերեն խմբագրություններում: Հայերեն ընդօրինակությունները, Ն. Մատի հավաստամբ, մերթ անանուն են, երբեմն էլ հայտնի են Փիլադոսի հեղինակությամբ: (Н. Марр, նշվ. աշխ., էջ XL—XLI): «Վեցօրեան» նկատելի ֆեմատիկ ընդհանրություն ունի Արիստոտելի վերագրվող «Բուղթ առ Աղեբասանորոս թագաւոր» իմաստասիրական աշխատության հետ: (Տե՛ս «Իսաթի Անյաղիքի փիլիսոփայի մատենագրութիւնք», Վենետիկ, 1932, էջ 517—542): «Վե-

Ընդհանուր առմամբ, դատելով «Վեցօրեայի» թեմատիկ լայն ընդգրկումից, կարելի է պնդել, որ վերջինիս համար սկզբնաղբյուր են հանդիսացել նաև փիլիսոփայական ու ղեկարվեստական տասնյակ դործեր՝ սկսած Հոմերոսի «Իլիականից» մինչև Արիստոտելի «Յաղագս մեկնություն» և ստորոգություններից՝ Երկր, ինչպես նաև բաղմամբիվ գավանաբանական գործեր՝ ճառեր, մեկնություններ, թղթեր, խրատներ, որոնց Բարսեղ Կեսարացին կարող էր ծանոթանալ թե՛ ուսումնասության շրջանում և թե՛ արքեպիսկոպոսության տարիներին⁷⁷:

Կեսարացու մի տեղեկությունից պարզվում է, որ նա ինչ-ինչ հարցերի բնություն առիթով դիմել է նույնիսկ այլալեզու (ասորերեն) «լուսավոր» ճառերի, հոսելով հողմի մասին, նա գրում է. «Իսկ եթե զինչ պատճառք իցեն ևրթեկի նորա ի վերայ շարցն ևրեսաց, ասեմ ոչ զիմ բանս՝ այլ գառն միոջ ասորոյ...: Ասաց զբանքս ի բարբասս լեզուին ասորոց յուսաուր ևատիւմ. քանզի, որպէս ասեն, մօս է ասորի լեզու ի հերբայեցի, մանաանզ ի միտս զրոց բանից»⁷⁸: Բայց, ինչպես և սպասելի էր, Կեսարացու եզրակացություն-հետևությունների հիմնական կրակեար ս. Գիրքն է, ուստի նա հավաստիացնում է, թե «ի մեր բանքս շիք ինչ մտացածին ստալօդ, վա՛ն զի գաստուած զնեմք պատճասս ամենայնի»⁷⁹:

Ուշագրավ է, որ Կեսարացին բնության ամենաբազմազան տարրերի ու երևույթների հարատև փոփոխման, իր սպասարկատությամբ՝ կերպարանափոխ լինելու երևույթը դիտում է ժամանակի ու տարածության փիլիսոփայական բմբռնման շրջանակներում: Նման բնույթի մի բացատրությունից հետո նա ավելացնում է. «Արդ, այսպէս բնութիւն իրաց՝ որ լինին ի ժամանակս. զի մինչ զեռ ի յառաջադեմ բնութանսն՝ աճին և զարգանան, և իբրև գաղարեն յաճմանէն՝ պակասեալ սպասին: Զի ինչ եր սկսանի և վարի ժամս:

ցօրեայի» որոշ հարցադրումների նմանությամբ (թերևս նույնությամբ) ուշագրավ է Կեսարացու մի ճառը, որը ձեռագրերում հայտնի է «Արհնութիւն ջրոյ» խորագրով (ձեռ. N 4951, էջ 70ա—75բ), իսկ քննանեկան, մասնավորապես ամուսինների իրավական որոշ հորմերի առանձին հատվածական նկարագրություններ բացարձակ հիշեցնում են նույն հեղինակի համանուն կանոնները: («Վեցօրեայ», էջ 151):

77 Ս. Նազարեթեան, Ակնարկ ս. Բարսեղի «Վեցօրեայ» վրայ, «Պատկեր», Կ.

Պոլիս, 1893, N 19, էջ 445—446:

78 «Վեցօրեայ», էջ 35:

79 Նույն տեղում, էջ 52:

նակօք, լինել հաստատուն անշարժ և կալ մնալ առանց փոխման ոչ կարէ»⁸⁰:

«Վեցօրեայ» ճառերում արծարծվում են այնպիսի հարցեր, որոնց համար Բարսեղ Կեսարացու նախորդ և ժամանակակից գիտնականներից շատերն են պատասխան փնտրել: Կեսարացին նույնիսկ վկայակոչում է փիլիսոփայական ուղղություններ, որոնց հավասարապես հետաքրքրել են երկրի առաջացման, շարժվելու, անշարժության, ջրի, օդի, սյունների վրա հենվելու ժամանակի առասպելախառը ենթադրություն-պնդումները: Տրված սրատասխանություններից և ոչ մեկում չգտնելով առաջադրված հարցերի համոզիչ բացատրություններ, նա տալիս է հետևյալ գիտափիլիսոփայական մեկնությունը. «Եւ ամենայն ինչ, որ ունի ծանրութիւն, ծանրութիւն իւր ձգիչ նորուն է ի խոնարհն, եթէ քար և եթէ փայտ և ամենայն ինչ՝ որ նմանութիւն երկրի ունի, առ երկիր ձգի իջանել. այսպիսի ծանրութիւն ունի երկիր, և որքիմք հաստատեալ կայ»⁸¹: Ճիշտ չէր լինի կարծել, թե այս և շատ այլ գիտական բացատրությունների առաջին հեղինակը Բարսեղ Կեսարացին է, թեև «Վեցօրեայ» ճառերում նա անընդհատ բանավիճում է բնափիլիսոփայության հարցերով զբաղվող զանազան ուղղությունների հետևությունների դեմ: Բայց ինքնին կարևոր է այն փաստը, որ ժամանակի գիտական բանավեճերի պայմաններում էլ քննվող խնդրի ճշմարտամտ սպատասխանը տալիս է Բարսեղ Կեսարացին:

Չարի և բարու փիլիսոփայական խնդիրը շատ է զբաղեցրել հին հունական փիլիսոփա-մտածողներին: Կեսարացին նույնպես անդրադարձել է տվյալ հարցին: Հիմնավոր է նրա հարցադրումը. եթե շարիքը ո՞չ աստվածային է և ո՞չ էլ ինքնակա, ինչպիսի կարծում են շատերը, ապա «ուստի՞ եղև»: Նա մերժում է այն միտքը, թե «կենդանի է շարն բնութեամբ»: Եվ դա բացատրում է հետևյալ կերպ. «Եւ մեք մի՞ կարծեսցուք՝ եթէ արտաբոյ կամաց մերոց իցեն շարիքն, և մի՞ վրիպեսցուք՝ եթէ յառաջագոյն լեալ իցէ: Քանզի իւրաքանչիւր ոք ի մէնչ գիտէ, թէ շարութիւն իւրոց կամացն է, և կարծիք մեղացն՝ դոր ածէ մարդ զմտալ՝ են հակառակորդ բարեաց, որ լինին ի ծուլութենէ ոգւոցն, որ ախորժեն զչարիս»⁸²: Հեղինակը, փաստորեն, առաջադրում է երկու էական հարց. ա) շարիքը աստ-

80 նույն տեղում, էջ 10:

81 նույն տեղում, էջ 19:

82 նույն տեղում, էջ 32:

վածալիքն չէ, և բացառվում է դրա գոյությունը մարդկային միջավայրից դուրս. բ) մարդը չարիք է գործում «ի ծուլութենէ»:

Քարսեղ Կեսարացիի շրջապատի բուսա-կենդանական աշխարհի ուշադիր բնութվյամբ բացում է վերջինիս շատ գաղտնիքներ: Բնութվումը հավասարապես սնուցողն է մարդկանց և առհասարակ կենդանական աշխարհի համար հույժ սիրտանի բազմաթիվ ծառերի, ծաղիկների (որոնք «չափրացուցիչք ցաւոց մերոց» են), ցորենի, բազմատեսակ խոտաբույսերի, այդ թվում նաև այնպիսի բուսատեսակների, որոնք մահաբեր են մեր կյանքի համար: Սակայն մարքց, ըստ Կեսարացու, որպես բանական արարած, պարտավոր է գիտություն փորձով, բնական երևույթների բավարար գիտելիքներով ու բանական իմացությունով կենսապահպանման համար խիստ անհրաժեշտ ցորենը տարբերել նույն հողից ծնվող վնասակար խոտաբույսերից: Նա գրում է. «բայց դու բանիւղ և դիտութեամբ՞ զոր ունիս, մարթևս զգուշանալ ի վնասակարացն»⁸³, վնասակար կարծվածներն էլ երբեմն անփոխարինելի դեղամիջոց են առանձին հիվանդությունների դեմ պայքարելու համար. «Եւ նոյնք որք վնասակարք կարծին, երբէք երբէք և մեզ ի պէտս դտանին. զի մանրագորաւ բազում անդամ բժիշկք բուն ածեն այնոցիկ՝ որոց բուն հատեալ իցէ յաչաց. և կաթամբ մեկոնիովն արմատով զխիթս կարեորս զհիւանդաց պարձուցանեն յախտից, և կոնիովն արմատովն զզրջեալ ուղիղ և զխելս ուղղեն և եղբորոս արմատովն զհինօրեալ զցաւան ցածուցանեն»⁸⁴:

«Վեցօրեան» հետաքրքիր պատմա-աշխարհագրական տեղեկություններ է պահպանել Հին Արևելքի մասին: Այդ հաղորդումներն ալյոսր անառարկելի սկզբնաղբյուր չլինելով հանդերձ, նկատառելի են թե՛ հեղինակի աշխարհագրական իմացությունը ցնահատման և թե՛ որոշ գետերի, ծովերի, լճերի, կղզիների (առանձին տարածքների) ու տեղանունների հետ կապված ալյազան հարցերի ուսումնասիրության առումով:

Քարսեղ Կեսարացիի անդրադառնում է ջրագրացման, գոյորշիացման, խոնավության և այլ բնական երևույթների հետ կապված ամենաբազմազան հարցերի, տալով հիմնականում պատճառաբանված քացատրություններ: Հույն իմաստուններից շատերը, ըստ Կեսարացու, պնդում են թե «արեղական ոչ է ջերմութիւն», ուստի և

⁸³ Նույն տեղում, էջ 89:

⁸⁴ Նույն տեղում, հմմտ. էջ 103:

բացատրում են նրանով պայմանավորված ջրագոլորշիացման էրեվոլյութը: Նրա համոզմամբ՝ արևի «ջերմութիւն իցէ արարեալ բնութեամբ», բայց միաժամանակ ինքն էլ համամիտ է հույն իմաստունների հետ և գտնում է, որ արեղակը տեղից-տեղ է փոխվում՝ ձմեռ ժամանակ հարավային կողմ շարժվում, իսկ «ի ժամանակս ամարայնոյ»՝ հյուսիս: Դրան զուգահեռ՝ նա բացատրում է ջրագոլորշիացման երևույթը և ծովերի աղիությունը՝ կապված դարձյալ արևի հետ: «Քանզի արեգակն է պարզիշ ջուրց ծովու, զլեթնն և զնւրբան և զբաղցունսն ձդէ առնու տապովն իւրով, և զթանձրունսն և զծանունսն, այսինքն զմրբեալն և զպղտորեալն անդրէն թողու, և որ անդրէն մեկնեալ մնան, են աղիքն և դառինքն»⁸⁵: Քննադատելով այն թշուր բացատրությունը, թե վերև բարձրացող (գոլորշիացող) ջրերը «հոգևորք են», իսկ ներքևում, երկրային մասում մնացածները՝ «ժանտք և զարշելիք», Կեսարացիին գրում է. «Այլ մեր զջուրս՝ ջուրս ասեմք, և այնպէս դիտեմք զնոսս՝ որպէս իրեանց բնութիւն իսկ պահանջէ, և որպէս մեկինեացն կալ ի վերոյ և ի ներքոյ, նոյնպէս և իմասցուք զնոսս»⁸⁶: Ինքնին ուշագրավ է այն փաստը, որ նա իրերի, առարկաների էությունը փորձում է բնությամբ բացատրել:

IV դարում, երբ ճշգրիտ գիտությունների զարգացման մակարդակը հնարավորություն չէր բնձեռում տալու բազմաթիվ բնական երևույթների գիտական բացատրությունը, Կեսարացիին վերասպատմում է երկնային մարմինների (արև, լուսին, աստղեր) փոփոխությունները եղանակը գուշակելու ժամանակի պատկերացումները: Այսպես, օրինակ. արևմուտքում ամպի առկայությունը անձրևի նշան է բնկալվել, երկնի երեկոյան կարմիր ամպածածկույթը՝ պարզ եղանակի, առավոտյան ամպաշղարշը՝ անձրևի և այլն. «Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն ամպոց, և ունիցի մուսլ զարեգակն ամպոց, ջուրք բազումք յօրոց չերկիր առաքին կամ զարամուր վրոց և զդառնաշունչ բքոց ամբոխելոց յայտ առնեն»⁸⁷: Լուսնի «աճիլն և ի մաշիլն» նույնպես պայմանավորում է եղանակի սպասվող փոփոխություն: Լուսնի երեքօրյա պարզությունը նա համարում է վրճիտ եղանակի նախանշան, իսկ «յորժամ ի մահիկ եղջերսն զնշանակ կարմրութեան կամ զմթարութիւն ունիցի՝ մթութիւն, ջուրք բա-

85 նույն տեղում, էջ 59:

86 նույն տեղում, էջ 63:

87 նույն տեղում, էջ 115:

զումք չամպոց յերկիր առաքին, և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յօգս բարբառի»⁸⁸:

Քուսա-կենդանական աշխարհի համար արևի ջերմության բացառիկ կարևորությունն ընդունելով հանդերձ, նա հարցը սպառված շի համարում և, շարունակելով պրպտումները, նույնանման հատկանիշ է վերագրում նաև լուսնին: Կեսարացիին համոզիչ պատճառաբանություն մը ցույց է տալիս, որ լուսնափոխությունները անպայմանորեն իրենց զրական ազդեցությունն են թողնում բույսերի ու կենդանիների զարգացման վրա. «Ի փոփոխմունսն, որ լինին ի լուսնի, անասունք զլրութիւն առնուն, և տունկը օգնականութիւն գտանեն անման սննդեան իւրեանց. քանզի ի մաշիլն ալլազդի զրտանին, և ընդ աճիլն ալլազդ փոփոխին»⁸⁹: Լուսնի՛ բնություն վրա ազդելու, կենսաբանական փոփոխություններ հարկադրելու հատկանիշը պայմանավորված է նրա ջերմությամբ և խոնավությամբ. «քանզի լուսնին ի ջերմութենէ և ի խոնաւութենէ ունի խառնուած»⁹⁰:

Կեսարացու այս բնույթի բացատրությունները բնության երկվույթների մեկնություններ լինելով հանդերձ՝ ունեն ավելի առօրյա ու գործնական նպատակ: Դրանց իմացությունը անհրաժեշտ է, որպէսզի նավավարը շխարխալի ծովի անհունում, ճանապարհորդը անպատէհ եղանակին ճամփա շքնկնի, «և մշակն զգոճշասցի՝ յառաջաշոյն սերմանել զսերմանիսն և տնկել զտունկս ի սպառչած ժամանակի»⁹¹:

«Անցօրեայում» քննադատվում է այն սպառնալից արձագանքները, թե աստուղերը զանազան կերպարանքներ են ընդունում, անընդհատ շարժման էնջ են, ընդ որում՝ մի մասը արազրնթաց է, մյուս մասը՝ համեմատաբար դանդաղաշարժ «և, որպէս ասեն, զօրութիւն իմն մեծ ունին գնացք նոցա, և ծննդաբաշխ ծննդոց կազմեն»⁹²: Ավելին, ումանք աստղերին «բարի» և «չար» հատկանիշներ են վերագրում՝ դրանց վերապահելով մարդկային ճակատագրի տնօրինման գործում էական դեր: Այս և նման առիթներով Կեսարացու զժգոհությունը միանգամայն հասկանալի է. բրիտանոսություն ջերմեռանդ

88 Նույն տեղում:

89 Նույն տեղում, էջ 132:

90 Նույն տեղում:

91 Նույն տեղում, էջ 116:

92 Նույն տեղում, էջ 121:

պաշտպանը «անհամ պատմութուն» է համարում այն ամենը, ինչը հեթանոսական է և անհարիր ս. Գրքի մեկնությանը: Սակայն հավատալիքների, արժատավորված ու տարածված սովորույթների ուսումնասիրման գործում դրանք կարևոր հաղորդումներ են:

«Վեցօրեայում», թեև ոչ ընդարձակ, բայց կարևոր տեղեկություններ են պահպանվել ժամանակի հասարակության բարքերի, նախասիրությունների, սովորույթների ու բարոյական ըմբռնումների մասին. «Ազգի ազգի տեսիլք մոլեգինք լինին ի քաղաքս բազումս,—գրում է Կեսարացին,—և յայգուէ մինչև ցերեկոյ միտ եղեալ պշուցեալ հային իբրև ի դարման իմն և ի կերակուր աչաց ցանկութեամբք բնակիչք նոցա, և լսել անդադար զձայնս Կաթողիկոսի կրօց՝ որ ընուն արկանեն ի լսելիս նոցա զյիշատակս բաղմաց աղտեղութեանց, որ մտանեն բունեն յըշտեմարանս սրտից և մտաց ն այնպէս անյագ են լսել զլուրն վնասակար»⁹³: Այս և նման հաղորդումները նա բերում է սոսկ քննադատութեան, դատաւիտանքի առումով, և դա հասկանալի է: Սակայն վկայակուշված հատվածից տեղեկանում ենք, որ IV դարում Արևելքում կային քաղաքներ, որոնցում առավտից ուշ երեկո հնչում էին երգն ու երաժշտությունը (արքեպիսկոպոսի «աղտեղի երգոց» բնորոշումը միայն աշխարհիկ երգին կարող էր վերաբերվել), և որ ականատես ամբոխը սրտի և մտքի անհագ լարումով էր ունկնդրում այդ երգը: Կեսարացին շարունակում է. «Եւ կէսքն զշահ ևս վաճառացն, զոր ժողովն միշտ ի հրասպարակաց, թողուն և երթան անդր դատարկանան, և կէսքն՝ զգործ արուեստից, որ գտանեն զդարման կենաց իւրեանց»⁹⁴: Այստեղ խոսքը, հարկավ, վերաբերում է նյութական միջոցների տեր վաճառաշահ և արհեստավոր այն խավերին, որոնք ժամանակ էին հատկացնում հաճելի հանգստի, առավելապես դուրանական երաժշտության ունկնդրման համար: Ընդ որում՝ այդ երգը այնքան հարգի է, որ «այլք, որ ոչ էին անդր մօտ, երանի ևս տան բազմամբոխ ժողովոցն՝ որ երթեալ կցորդեալ կուպնեալ կան առ վնասակարսն»⁹⁵:

Բարսեղ Կեսարացին որքան էլ ջանում է հավատացնել, թե «դուսանութիւնն իւրովք պատիր արուեստիք դապականութեան նըշանակ գործէ ի տեսողս իւր»⁹⁶, այդուամենայնիվ, երբեմն ինքն էլ է

93 Նույն տեղում, էջ 66:

94 Նույն տեղում:

95 Նույն տեղում:

96 Նույն տեղում:

տարվում երգ-երաժշտություններ, առավել ևս՝ պարով: Գոռսանական երգերին տված նրա «ձայնը երգչացն պէսպէս նուագովք զեղգեղեալք» բնորոշումը լավազույն ասացույցն է այդ երգերից ստացած իր տպավորության և ինքնաբերաբար արտահայտված համակրանքի: Իր տպավորության մասին է վկայում նաև հետևյալը. «ես յորժամ զնծղալքն և տաիղքն բարբառնեցին, առաւել ևս յաթիսս և յակճիսս կան ընկճեալք, զի զօրինակ կերպարանաց նոցա նկարեացեն յանձիսս իրեանց»⁹⁷:

«Վեցօրեայում» հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել՝ կապված ժողովրդական տոնախմբությունների հետ: Կեսարացին թեև որևէ անուն չի տալիս, այդուամենայնիվ, դրանք ընդհանուր ձանաշում գտած տոներ էին, որոնք նույնիսկ այն ժամանակ սոսկ անվամբ էին հոգևոր: Իրականում դրանք երգի, երաժշտության, հնարամտությունների զբաղման բացօդյա հանդեսներ էին: Այսպես, օրինակ, նա գրում է. «...կէսքն զերիվարս զայրացուցեալս զկծեցուցեալս արշաւեն յասպարիսի. զի և այնու պատրաստեցեն զբօսուցեն զմիտս ժողովրդոցն ի հանդէս պէսպէս խաղուց տեսանելոյ»⁹⁸: Տակավին այսօր էլ կան գյուղեր, որոնցում վարդավառի տոներ նշվում է խանդավառությամբ, ուր տիրապետողը երգն է, երաժշտությունը, ինքնամոռաց պարը և ճիշտ Կեսարացու նկարագրած ցուցադրական ձիավարությունը, հնարամտության զբաղմունքը և այլն:

Կեսարացին բանաստեղծական պատկերավորությամբ է նկարագրում ծաղկազարդ բնությունը. «Զի գունակ գունակ ծաղկովք զարդարեալ է առհասարակ ամենայն երկիր, և հարկանին ի նոցանէ՛ երվին երվին զեղեցկութիւնք, որոց ոչ կարեն նմանեցուցանել նարօտաներիք իրեանց ճարտար արուեստագիտութեամբն: Եւ ունին իւրաքանչիւր ծաղիկքն ալզի ալզի հոտ անուշութեան, և են ինկիչք և ուրախարարք ամենայն հոտտելեաց»⁹⁹, Զարմանալին, սակայն, այն է, որ հրաշք բնության, բուսական աշխարհի ծնունդն ու գոյությունը արարչին վերագրելով՝ հանդերձ, ինքը՝ Կեսարացին է բացում դրա գաղտնիքը, ոչ սովորական, բայց շատ բնական հատկությունները, դրանց պատճառաբանվածությունը: Յորենը, բացատրում է նա, ծնկակապ ունի, որպեսզի կարողանա պահել հասկի ծանրու-

97 նույն ակղում:

98 նույն տեղում, էջ 67:

99 նույն տեղում, էջ 102:

թշուներ, հասկն էլ իր հերթին, պատված է քիստով, որ կուր շինի «սերմնաքաղ թռչուններին»: Մինչդեռ վարսակը այդ ամենի կարիքը չունի, «քանզի չիք ծանրութիւն ի գլուխ նորա»¹⁰⁰: Առաջին հաշաքից աննշան թվացող այս բնույթի պատճառաբանումները, որոնք հաճախ են հանդիպում «Վեցօրեայում», ամենեին էլ առօրյա նկատողութիւններ չեն, այլ հետեանք են հեղինակի բնազդազդու-թյան, ավելի ճիշտ՝ բնութեան խոր իմացութեան:

Բարսեղ Կեսարացիին շրջապատող իրականութեան մասին խորհած իր դատողութիւնները, մեկնութիւնները, բուսա-կենդանական աշխարհի զարգացման ներքին պատճառաբանվածութիւնն բացատրութիւնները մատուցում է իբրև արարողի մտածութեան արդյունք, ինքը շանալով հանդես գալ այդ ամենը պարզապէս ունկրողին վերապատմողի դերում: Եվ դա՞ հասկանալի է. «Վեցօրեայ» ճառերը սկզբնապէս քրիստոնեութեան տարածումը խթանելու, ուղիղ հավատի երկրպագուների թիվը ստվարացնելու գործնական նպատակ են ունեցել, մանավանդ որ՝ պաշտոնական քրիստոնեութիւնը ընդամենը 60—70 տարվա պատմութիւն ունէր: Ահա թէ ինչու նա դավանութեան խնդիրներին ոչ լավատեղյակ, թերևս անհաղորդ, մասսաներին եկեղեցու հարկի տակ հատված առ հատված կարգում, գուցե և հանպատրաստից ասում էր «Վեցօրեայ» ճառերը¹⁰¹, բացահայտելով անբացատրելի-անիմանալի բնութեան գաղտնիքները որպէս եզակի արարչութեան արդյունք, որին, առավել քան ունկնդիրները, հավատում էր ինքը՝ հեղինակը: Նա առանձին գոհունակութեամբ ու վստահութեամբ է արտահայտվում իրեն ունկնդրող «քանչև ժողովրդոց» մասին. «որ սիրով և ախորժելով լսելեաց ընդունին զճառս քաղցունս, որ պատմին վասն զարմանալեաց գործոց աստուածութեանն»¹⁰²:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 88:

¹⁰¹ Նման ենթադրութեան հիմք են տալիս «Վեցօրեայում» հանդիպող այսօրինակ արտահայտութիւնները. «և լսողացն ի շահօգտութեանն» (էջ 18), «այլ այս՝ որ ընդ ձեզ խօսիմք» (էջ 22), «լեր աշուհեաւ և լսող պատրաստական բանիս՝ զոր ճառեմք», «և ևս զհիշանամ զայնմանս՝ որ ետ ինձ զմտտակարարութիւն սակաւ բանիցս, որ եղև բաւական լսելեաց ձերոց» (էջ 136):

¹⁰² Նույն տեղում, էջ 154: Հնարավոր է, արդոք, մոտավոր պատկերացում կազմել սոցիալական այն խավի մասին, որը օրերով ունկնդրում էր Բարսեղ Կեսարացուն: Այս իմաստով կարևոր է Կեսարացու մի դիտողութիւնը: Խոսելով լուսնի կրած փոփոխութիւնների մասին, նա գրում է. «շիւս ինչ հարկ ի վերայ մուծանել ի խորին պատմութիւնսն զլսելիս ուսմիկ մարդկան. զի մի անգը մտանելովն անազանել զտանիցիմք ի ճառիս՝ զոր արկեալ էաք» (էջ 114): Ընդգծված

«Վեցօրեակյի» բնութվյունը ցույց է տալիս, որ Կեսարացին հոգեբանական շատ նուրբ դիտակետով է մտտենում այս կամ այն խնդրին, միանգամայն սովորական համարվող առօրյա երևույթի կամ կենդանական էություն մասին խոսելիս երբեմն մատնացուցում է բուրբորվին նոր երանգ, հենց զրանով էլ շահելով ունկնդրի վստահությունը: Այսպես, օրինակ, ամենքին է հայտնի, որ ծովերում, զետերում և այլուր ապրում են բազմատեսակ կենդանիներ, այդ թվում նաև ձկներ, Կեսարացին շի սահմանափակվում նշվածով, այլ ավելացնում է. որոճալը ձկներին ընդհանրապես հատուկ չէ: Բայց կան ձկնատեսակներ, օրինակ, «սկարոս» անվանվածը, որոնց հատուկ է հիշյալ հատկանիշը: Բնության ամենատես ու ամենագորարարիչը կենդանիներին օժտել է կենսապահպանման և համապատասխան անհրաժեշտ միջոցներով: Ձկներն ունեն խիստ սուր տառաններ, որպեսզի ջրային պայմաններում կարողանան արագ մանրել և ուտել մամուր, խոտր, ավազր, դանդան մանր ձկները և այլն: «Ոստրէոս» կոչված ծովակենդանին բնութվյունից օժտված է խեցեմորթ պաշտպանական պատշանով, որի ղեմ անգոր են ամենագորեղ գաղաններն անդամ: Կամ ծովային մեկ այլ կենդանի՝ «պոդիպոդեսը», ընդունակ է պատահած քար ու խարակի գունին ընդունել և դուրսին ճանապարհով որս հայթայթել: «Եքինոս» ծովային թռչունը ծովի անդորրն ու սպասվող փոթորիկը գուշակելու հատկություն ունի և «վարդապետ լինի ցածություն և ամբոխելոց ծովուն նաւավարաց՝ որ միշտ շրջին ի նոսա»¹⁰³:

Կեսարացին պատշաճ պատկերացում ունի կենդանական ուշխարհի կենսաբանական առանձնահատկությունների մասին: Նա կենդանիների ֆիզիկական տվյալների ներդաշնակությունը բացատրում է կենսապահպանման գործոններով: Ուղտը երկար պարանոց ունի, որպեսզի կարողանա երկար ոտքերի պատճառով գետնից կարվածությունը հաղթահարել և անհրաժեշտ բուսական կեր հայթայթել, Կենդանիների մոտ խիստ զարգացած է և էական դեր է խաղում բնագրը: Գառները, օրինակ, հոտի մեջ մշտապես ճանաչում են մայրական ձայնը, ստիճքը, անգամ կաթի համը: Ըստ Կեսարացու՝ այլ կերպ անհնարին է պատկերացնել, որովհետև իր տե-

միտքը, թերևս, ցույց է տալիս, որ ունկնդիրները հիմնականում եղել են «սամիկ մարդիկ»:

103 Նույն տեղում, էջ 150:

սակի մեջ կատարյալ պետք է լինի այն ամենը, ինչ արարչագործության արդյունք է:

Բազմախորհուրդ բնության հրաշալիքների բացահայտմամբ ունկնդրին գրավելով, նա շանում է ի խրատ ցույց դնել. «Նւ այսպիսի տամ քեզ խրատ, զի խորագիտութիւն խեցգետնոյն առ ի հնարս հաճոյից և գործոց արդարութեան առցես, և մի առ ի մեղանշել ընկերին. քանզի խեցգետնոյ նման է, որ նենգութեամբ մերձենայցէ առ մերձաւորսն, և ընդ միամիտ ընկերին նենդաւ և մանկաւ գնայցէ, և ընդ շար եղբօրն ուրախ լինիցի ոտնհարութեամբ»¹⁰⁴: Կեսարացիին խորհուրդ է տալիս առհասարակ հեռու մնալ այն ամենից, ինչը շարիք կարող է ստեղծել մարդկանց համար, ինչը թեկուզ աննշան չափով մոտեցնում է անաշխատ կյանքին, «զի լաւ է աղքատութիւն, որ սակաւիկ ինչ ունիցի արդարութեամբ, քան զամենայն մեծութիւնս և զփափկութիւնս՝ զոր մեղօք. որ և անօրէնութեամբ ունիցի»¹⁰⁵:

Կեսարացիին չի շրջանցել մարդկանց մեջ գոյություն ունեցող իրական, կարելի է ասել՝ սոցիալական հարաբերությունները: Նա ուղղակի գրում է. «մինն առնու ինչ որ ոչ իւր իցէ՝ չաղքատոյ անտի, և առնէ յաւելուած ի վերայ մթերից իւրոց, և դարձեալ մեան ևս բաւ նորին նմանութեան՝ որ քան զնա հարստագոյն իցէն՝ զայ հասանէ բռնաբար ի վերայ նորա, և հանէ զառ և զաւարն՝ որ յալոց յափըշտակեալ է. և անդ է տեսանել շար քան բղշարս, և աղահ հան զաղահս, որ զմիմեամբք ելեալ խաղայցեն»¹⁰⁶:

Նա երբեմն քննության առարկա է դարձնում առանձին հոգեբանական խնդիրներ և անում ուսանելի հետեւություններ: Նա գրում է, որ հաճախ խաբուսիկ ու ապակողմնորոշող է մարդու արտաքինը, ուստի և չի կարելի մարդկանց մասին դատել, ելնելով սոսկ արտաքին տվյալներից, որովհետև խոհեմ, պատկառազգու և միայն բարին հիշեցնող արտաքինի տակ երբեմն թաքնված է լինում նոզկալի ներքին: «Պողիպողես» կոչված ծովային կենդանին կարող է ընդունել պատահած խարակի գույնը, «այսպէս ևն և մար-

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 144:

¹⁰⁵ Նույն տեղում: Այս իմաստով հետաքրքիր է այն ղուգահեռը, որ Կեսարացիին անցկացնում է միմյանցով կերակրվող ձկների ու սոցիալական տարբեր խավի մարդկանց միջև: «Նւ որպէս երեւի մեզ,— գրում է նա,— ի մարդիկ ըստ նմին օրինակի գործ գործին ըստ կամաց մերոց, զի որ տնանկն է ի մէնջ՝ հարստին կայ ի ծառայութիւն» (էջ 143):

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 143:

դիվ, որ թագուցանեն զեննգութիւնն, զոր ունին՝ բարի կերպարանօք, զոր ցուցանեն, և խաբէն շրջեն զմիտս այլոց իւրեանց յեղևի-դուկ հորհրդովքն»¹⁰⁷: Նա, ավելի մասնավորեցնելով խնդիրը, զտանում է, որ հարափոխ է մարդկային խառնվածքը և կրթեք չի մնում միենույն խորհրդին կամ պայմանավորվածութեանը: Մարդիկ սրբի մտտ սուրբ են ձևանում, շարագործի մոտ՝ հաղորդակից շարիքին և առհասարակ ընդունակ են ըստ պատճառության կերպարանափոխվել: Անիրավությունը, վնասակարն ու խորամանկությունն այն աստիճան տարածված են և արմատավորված, որ նույնիսկ անհրնարքն է զգուշանալ. «զի իբրև հանդերձ զզեցեալ ունին զբարեկամութիւն ի վերայ խորհրդոց շարեաց՝ որ կան ի սիրտս նոցայ»¹⁰⁸: Բայց մնում է. «փախիցուք այսուհետև յամենայն կեղծաւոր հորամանկութեանց, և յամենայն կերպարանաւոր նենգաւորութեանց, և հաստատեալ կացցուք ի ստոյգ ճշմարտութեան, և յանպաճօք միամտութեան: Խորամանկութիւն օձից բարք են»¹⁰⁹:

Մարդու մեջ մարդկայինը վեր հանելու, աշխատասիրություն արմատավորելու նպատակով նա մտտնացուց է անում մրջյունի բացառիկ շանասիրությունը («Եւ նմանեցուք զոնկ մրջևանն, որ ամբարայնոյն պատրաստէ աշխատութեամբ զհամբարաւ ձմերայնոյ»¹¹⁰), վկայակոչում միմյանց օգնելու զեղևիկ հատկություն ունեցող թռչունների, որոնք անհամեմատ բարի են ու ընկերասեր, բան էլ մարդատյացները, «որ փակեն զգուրս ընդդէմ օտարաց, և ոչ կամին ընդունել ընդ յարկաւ զաղղակիցս իւրեանց ի ժամանակ ձմեայանոյ, զոնկ զիշերի իմիք տակաւ»¹¹¹:

«Էկեցօրեալ» ճատերում էական տեղ է հատկացվում ժամանակի մարդու ու մարդկային փոխհարաբերությունների այլևայլ կողմերի բացահայտմանը: Այլ հարց է, թե նա պատկերավորման ինչ միջոցների է զիմում, բայց միակ նպատակն է մարդ էակին, լինի թաքավոր, սովորական մահականացու, տեսնել վե՞ ու կատարյալ: Ուստի ի ցույց է դնում, կատարյալ հիացմունքով զրվատում մեղուների միաբանությունը. «քանզի ի միասին կեան, և ի միասին զրնան. միանգամայն ժողովին, և միանգամայն թռչին, և միազոր»¹¹² ճեպեալ վաստակեն համօրէն: Եւ մեծ քան զամենայն այլ է, զր

107 Նույն տեղում, էջ 144—145:

108 Նույն տեղում, էջ 145:

109 Նույն տեղում:

110 Նույն տեղում, էջ 187:

111 Նույն տեղում, էջ 168:

ընդ իշխանաւ և ընդ առաջնորդաւ են. և ոչ մատչին ի գործ. և ոչ իշխեն երթալ ծաղկաբաղ ի մարգս, մինչև տեսցեն զթուղուն թագութուն իւրեանց սկսեալ ի գործ վաստակոյն իւրեանց»¹¹²:

Կեսարացին տառացիօրեն դժգոհում է ժամանակի թաղաՎորեներից և թագաՎորի ընտրութեան ընդունված կարգից: Ահա թե ինչու է վեր հանվում մեղուների փութաջան աշխատանքը, մայր մեղուներին էական դերը, որոնք «ոչ որպէս առ մեզս (ոչ մեզ մոտ եղած թագաՎորներին պես) անարժան գործք գործին, զի առանց ընենելոյ և ընտրելոյ կացուցանեմք մերով ընտրութեամբ մեզ իշխանօրէն»¹¹³: Ավելին, նա քննադատում և մերժում է ժառանգաբար՝ հօրից ցորդի թագաՎոր ճանաչելու ընդունված կարգը և առավել ևս այն երևույթը, որ նրանք շատ հաճախ պաշտամունք են դարձնում սնտաի ցանկութունը և, ի վերջո, կործանվում նույն կօքից¹¹⁴:

Չպիտք է մոռանալ, որ ոչ Քարսեղ Կեսարացին էր պատմիչ և ոչ էլ «Վեցօրեան» ժամանակագրական հաջորդականութեամբ շարագրված պատմական գործ: Ուստի և վերոհիշյալ վկայութուններում առկա է առաջին հերթին մի պարզ նսյատակ՝ անգոսնել վատը և բարին սրբագործել: Ահա թե ինչու դրանցում բնավ չկան տեղայնացում, ժամանակագրական որևէ սահմանադատում-մասնաւորեցում, պատմական անձի հիշատակում և այլն:



Վկայութուններ կան այն մասին, որ քրիստոնեւթեան սկզբընաւորման ու տարածման շրջաններում եկեղեցու սպասաՎոր էին դառնում նաև այնպիսի անձիք, որոնք փաստորեն վատահաղորդ էին քրիստոնեւթեան խնդիրներին, ուստի և անհրաժեշտ էր պարզեցնել, մեկնել ս. Գրոց և եկեղեցական մատենագիրներին որոշ գործերի իմաստն ու նշանակութունը: Պատահում էր այնպես, որ երբեմն սխալ, անընդունելի, ունկնդրին մոլորեցնող մեկնութուններ էլ էին լինում: Ահա թե ինչու Կեսարացին անհրաժեշտ է համարել հանդես դալ նաև մեկնութուններով: Խոսելով սաղմոսների մասին, նա գրում է. «Սաղմոս սիրոյ ժողովարան, միութիւն ժողովեցելոցն, թշնամեցելոցն հաշտարան, քանզի ո՞րք թշնամի համբերել կարասցէ, ընդ որում՝ զմինն առաքեաց Աստուած դձայն որպէսզի զմեծ բարեացն սէր սաղմոսի տա...»¹¹⁵: Ավելին, սաղ-

¹¹² Նույն տեղում, էջ 164:

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ Նույն տեղում:

¹¹⁵ Ձեռ. № 2549, էջ 140ա:

մոտով, բայտ Կեսարացու, ունկնդիրը ուսանում է քաջություն, վա-
յելչություն, ողջախոհություն, իմաստություն և այլն:

Կեսարացու մեկնություններում բազմիցս սրբագործվում ու
խրաբուսվում է միմյանց սիրելու, նեցուկ լինելու, նյութական օգ-
նություն ցույց տալու և, որ կարևորն է՝ համոզմունքով, դավանան-
քով եղբայրանալու, անինչք դառնալու և ազբատասիրություն հայտ-
նի պատվիրանը. «Սիրեսցես զընկեր քո և վաճառես զքո գոյսն և
սուր աղքատաց»¹¹⁶ և մանավանդ՝ «ոչ գնալ ի խորհուրդս ամբարըշ-
տաց, ոչ կալ ի ճանապարհի մեղաւորաց, ոչ նստել յաթոս ժան-
լից»¹¹⁷:

Կեսարացին չի բավականանում հայտնի դրույթների կրկնու-
թյամբ, այլ մերկացնում է կյանքի հոռի կողմերը, քննադատում
անխոհեմ բարբերք: Նպատակը դարձյալ մեկ է՝ մարդկանց ուսու-
ցանել լինել առաքինի, հետևել անարատ կենցաղի, շնամանվել նը-
րանց, որոնք, հրապարակներով շրջելով, ողջախոհ մարդկանց
պատմում են իրենց ամոթալի գործերը և անպատվություն ախար
հրամցնում են որպես առաքինության երաշխիք¹¹⁸: Բարսեղ Կեսա-
րացին բարոյական անկումը նույնացնում է ժանտախտ հիվանդու-
թյան հետ և ընդգծում վերջինիս բնդարձակ սահմանները: Նման
ղեպքերում նրա դատողություններն ընկալվում են իբրև ժամանակի
հասարակական փոխնորաբերություն-բարբերն արտացոլող հա-
վաստի վկայություններ: Ի զեպ, այս իմաստով նկատելի եզր կա
նրա Ճառերի և մեկնությունների մեջ. տարբերությունը հիմնակա-
նում այն է, որ երկրորդում ավելի է ընդգծված հեղինակի դաստիա-
րակչական նպատակադրումը: Ճառերի նմանությունամբ, այստեղ էլ
Կեսարացին վերապատմում է երգ-երաժշտությամբ, մարդահաս-
պատմություններով համեմված տոնախմբությունների մասին: Նա
գրում է. «Էրգը և արբեցությունը և զարչելի պատմությունը ընդ բոլս
րմբելով և ընդ նմին ծիծաղելով... առնոյն մեղս, բոցակիղեալք լի-
նին»¹¹⁹:

Բարսեղ Կեսարացին նման վկայություն է բերում և խստա-
դուլքն գատապարտում այն նպատակով, որ կարողանա իրական
հողի վրա կառուցել և ունկնդրին հասցնել իր բարոյա-խրատական
եզրանանգումը՝ մեկնության բուն նպատակը. «Արգ մի նստցիս

¹¹⁶ Նույն տեղում, էջ 142բ:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 143ա:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 145ա:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 145բ:

չաթոռս ժանդից և մի ընկալցիս ավթոռակցութիւն մարդկան ապականացողաց և ժանդացուցանողաց, և մի յամեսցես ի շարութեան խորհուրդսն»¹²⁰:

Ըստ Կեսարացու, առաջին հերթին պետք է հող տանել սեփական անձր հողերը անաղարտութեանն անհարիր դանազան ախտերից բուժելու մասին և, հարկավ, առմիշտ մոռանալ աշխարհիկն ու մարմնականը: Այսպես, օրինակ, նա գրում է. «դանձինս մեր բժրակեսցուք և զմարմնսյ խնամս իւրաքանչիւր ոք ի բաց թողցուք»¹²¹:

Բարսեղ Կեսարացու մեկնութիւնները, անտարակոյս, դործնական խնդիր էին միտում: Նա բաղմամբիվ բացատրութիւններով ցույց է տալիս, որ հավատ հասկացութիւնը շարժանց կարևոր օղակ է մարդկանց մերձեցման, անկեղծ բարեկամացման և մտերիմ փոխհարաբերութիւնների արմատավորման համար¹²²: Հնարավոր շարաշահումը կանխելու նպատակով հատկապես նա ընդգծում է այն միտքը, որ խոսքը ոչ թէ «երկրաշափական հարկաւորութեամբ» ձնշող, այլ «հողույն ցօրութեամբ» գործող հավատի մասին է: Նրստայս և նման շատ դիտողութիւնները IV դարում միանգամայն իրական հող ունեին:

Կեսարացու գործերի միջնադարյան հայազգի ընդօրինակողներն ամենից բարձր են դնահատել նրա խրատաբանական-ուսուցողական դիտողութիւնները՝ ուղղված մարդկային խտանվածքի առանձին թույլ կողմերին ու բանական որոշ անկատարելւթյանը: Նման մեկնութիւններից մեկում բնաբան է ընդունվում «լուսցոյ վրեպու բո ի շարութեան» իմաստալից արտահայտութիւնը, «քանզի,—բացատրում է հայ մեկնիչը,—բուն և բաղմագիմի են մեղքներգործեալ ի լեզուոյն. բարկութիւն, ցանկութիւն, կեղծատրութիւն, անիրատութիւն, խաբէութիւն... շարաբանութիւնք, պերճաբանութիւնք, յիմարաբանութիւնք, անուղայք, բանսարկութիւնք, դատարկաբանութիւնք...»¹²³: Լեզուն առավել վտանգավոր ու անտանելի է, երբ շար շրջապատում է գտնվում: Նույն լեզվով են արտասանվում օրհնութիւն և անեծք¹²⁴: Հետևութիւնը համահունչն է վերոհիշյալ բնաբանին՝ մարդկային լեզվամտածողութիւնը շարին շծառայեցնել, այլ առաջնորդվել առողջ ու անքեն բանականութեամբ:

120 Նույն տեղում, էջ 145ր—146ա:

121 Նույն տեղում, էջ 154ա:

122 Նույն տեղում, էջ 158ա—163ա:

123 Ձևո. № 4150, էջ 127ր—128ա:

124 Նույն տեղում, էջ 128ր:

Դեսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաղ շրջանի մատենագիրների մեկնությունները և դավանաբանական գործերը բովանդակության և, մանավանդ, եզրահանգման առումով շատ են մոտ և որոշ իմաստով նույնանում են: Կեսարացու ամենատարածված է հայ մատենագիրների կողմից բազմիցս հիշատակվող դավանաբանական երկասիրությունը Ապողինարի հետ ունեցած հայտնի փճաբանությունն է «ի մարմնատրություն Փրկչին» թեմայի շուրջ¹²⁵, որտեղ արծարծված են Քրիստոսի մարդկային բնույթի ու հատկության (մարդկային միտք, մտածություն, մոտացում, անգիտանալ), հոգևոր և մարմնեղեն գոյացության, տեսանելիության, երկվություն, մարմնական զգայունության, մահվան ֆիզիկական երևույթի գնահատման ու այլ դավանաբանական, փրիսոփայական խնդիրներ:

Գրեթե բոլոր ելակետային հարցերում բանավիճառ կողմերի մոտ տարակարծություն կա: Սակայն ուշագրավն այն է, որ Կեսարացին հակասակորդի գեմ պայքարում է նրա իսկ տված դեներով՝ հակասությունք ու միևնույն խնդրի շուրջ ունեցած շարժանքանքանքան տարակարծությամբ:

Այսպես, օրինակ, Բարսեղի այն հարցին, թե՞ Քրիստոսը «անձնավո՞ր մարմին էր, եթե առանց հոգույ», Ապողինարը պատասխանում է՝ հոգևոր, բայց առանց հոգու, որին և հետևում է Բարսեղի հետևյալ արամաբանական հարցադրում-պատասխանը՝ «եւ զհա՞րդ հոգևորն ոչ ունէր հոգի»¹²⁶:

Նույնպիսի հակասություն է հայտնաբերում Կեսարացին աստծու տեսանելիության և անտես լինելու մասին Ապողինարի դատողություններում: Վերջինս պնդում է, որ աստված բնությունք անտեսանելի է, բայց միաժամանակ զոնում, որ «Աստուած բանն ինքն ի վերայ երկրի երեցսու և բնդ մարդկան շրջեցաւ»¹²⁷, Կեսարացին բացատրում է, որ բնությունք անտեսանելի մարմնի երևալն ու անձի շրջելը ինքնին անհնարին են: Նույն ժխտողական բացատրության մեջ առկա են նաև իր հետևությունները բնելուց և հարակից խնդիրների շուրջ:

Եկեղեցական մատենագրության մեջ վեճերի առիթ է հանդիսացել հետևյալ հարցը՝ Մարիամը մա՞րդ ծնեց, թե՞ աստված: Կե-

¹²⁵ Տե՛ս «Կնիք հաստոյ», էջ 84—98, հմմտ. ձև. № 5595, էջ 327բ—333բ, ձև. № 2549, էջ 177բ—183բ:

¹²⁶ Նույն տեղում, էջ 84:

¹²⁷ Նույն տեղում, էջ 85:

սարացու ելակետն այն է, որ Քրիստոսը սոսկ մարդ չէր, այլ «աստուած մարդացեալ»¹²⁸: Մարդացյալ ըմբռնումը նա բացատրում է մարդկանց նկատմամբ Քրիստոսի բացառիկ նվիրվածութիւամբ, որը և, ի վերջո, հանդէսընց ի սեր մարդկանց խաչվելուն: Աստծո ընդմիջումն այսպէս է բացատրում Կեսարացին. «Մենալն ի Մարիամայ էութիւն ի նորա բնութենէն ոչ էր Աստուած բնաբար, այլ միաւորութեամբն տնօրէնութեանն»¹²⁹: Կեսարացու համոզմամբ՝ Քրիստոս-աստված հողու և մարմնի միացութիւն էր՝ ծնված Մարիամից. «միացեալ Աստուած բանն ողոյց և մարմնոյ՝ ծնաւ Աստուած և մարդ ի ձեռն կնոջ»¹³⁰: Փաստորեն նա պաշտպանում է Քրիստոսի մարդ-աստված լինելու այն տեսակետը, որը շուրջ մեկ հարյուրամյակ հետո որակվեց քաղկեդոնականութիւն¹³¹:

Բարսեղ Կեսարացու մատենագրական հարուստ ժառանգութիւն մեջ զգալի թիվ էն կազմում դավանաբանական գործերը, որոնցից է նաև «Յաղագս ապաշխարութեան»¹³². Ճառը, ուր հեղինակը քննում է մեղքի և ապաշխարութեան հասկացութիւնները: Նրա համոզմամբ՝ «ի մարդկան ոչ ոք անմեղ, որում վկայի թէ մեղս ոչ արար»¹³³: Բայց ուրախալին այն է, որ ամենահարատև ու չլվացվող մեղքն անգամ ցանկութեան պարագայում ենթակա է վերաքման: Կեսարացին գրում է. «Եթէ իցեն մեղքն ձեր որպէս անլուանալի գոչնք, եթէ լուսաջիբ փոփոխի ի մաքրութիւն ձեան»¹³⁴: Գերազանելին, բոլոր պարագաներում, այն է, որ յուրաքանչյուր ոք գիտակցի և ինքը հանդես դա իր իսկ մեղքերը դատապարտողի դէքում. քանզի երբեմն պատահում է այնպէս, որ «ոչ տեսանեմք զզորանն յական մերում, զշիղ յայլոյ ածեն մազ դատաստանն իւր իբրև պատար»¹³⁵: Այնուհետև Կեսարացին հիմնավոր վկայութեաննորով բացահայտում է ապաշխարութեան էական նշանակութիւնը դավանանքի հարցում:

128 Նույն տեղում, էջ 87:

129 Նույն տեղում, էջ 91:

130 Նույն տեղում, էջ 93:

131 Եթև, Իհարկն, մեզ հասած տերստն իրոր նախնական է. իսկ զրուցն ու գրառումը՝ ստուգապատում:

132 Ձև. N° 5595, էջ 254ա—264բ:

133 Նույն տեղում, էջ 254ա:

134 Նույն տեղում, էջ 254ա—բ:

135 Նույն տեղում, էջ 255ա:

Վկաների ու նահատակների վարուց նկատմամբ Կեսարացին. հասկանալի պատճառներով, առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում իր ողջ գործունեության ընթացքում: Ջեռագրերից մեկում՝ Նեոկյալ կերպ է գնահատվում Կեսարացու, այսպես ասած, վկայասիրությունը. «Մեծն ամենայն հայրապետաց և վկայասերն Բասիլիոս յամենայնի հնարէր անյազ գինքն ցուցանել ի վկայական պատուասիրութիւն»¹³⁵: Նահատակների, անօրինակ քաջությունների, զրկանքների, ճշմարիտ հավատասիրության գաստիրակչական-ուսուցողական նշանակությունը լավագույնս բնութագրված է Կեսարացու «Ի քառասուն վկայան»¹³⁷ գործում: «Մեր չիշեսցուք զառաքինութիւն արանցն ժողովելոցս և աորնիքս եղելոցս, և իբրև դէմ յանդիման սոցա ամելով զգործս նոցա՝ շարժեսցուք առ ի նմանութիւնս նոցա զերիտասարդս և ընտանեզոցնս, նոցա արասցուք զյաւարութիւնս, քանզի այս է մարտիրոսաց գովութիւն առ ի յառաքինութիւն միսիթարութեան ձգեալ զժողովեալսս»¹³⁸, — գրում է նա: Ճիշտ այս սկզբունքով է նա բացահայտում բազում արանց հիշարժան գործերը, որոնցից շատերը եկեղեցու համար սրբացած անուններ են:

Կեսարացին պատկերավորության նպատակով նրանց հիշարժան գործերին զուգահեռ նկարագրում է նաև արտօքինը: Ամենից առաջ, ըստ նրա, հասակով, կեցվածքով էլ նրանք նկատելի տարբերիչ գծեր ունենին մնացածներից և «վասն առաքինութեան», պատերազմող հմտության և անձի քաջության «պատիւ ունէին ի թագաւորացն»¹³⁹: Սա, անշուշտ, հետաքրքիր հոգեբանական մոտեցում է: Թագավոր հասկացությունը ուսմիկ մարդու համար ուներ մի առանձին երանգ, և այդ փաստը միանգամայն պատեհ առիթով է օգտագործում Կեսարացին: Այլապես ինչպես բացատրել այն նրկվույթը, որ եկեղեցու համար հիշելի անուն լինելու փաստին զուգահեռ, նա միաժամանակ նշում է թագավորներին զուր գալու նրանց արտօնյալ հնարավորությունը: Նպատակը դարձյալ մեկ է՝ համուլիչ պատճառաբանություններով ունկնդիրներին նպատակամղել հետնելու այդ առաքինի արանց, նրանց նմանությունամբ հավատարմանադարտության համար մարտնչելու:

¹³⁵ Ձեռ. № 4150, էջ 82ա:

¹³⁷ Ձեռ. № 5595, էջ 370ա—376բ, հմմտ. ձեռ. № 948, էջ 261ա—270բ:

¹³⁸ Նույն տեղում, էջ 370բ:

¹³⁹ Նույն տեղում, էջ 371ա:

Կեսարացին երբեմն ընդհատելով իր վկայաբանական վերապատմում-բացատրությունները, տալիս է ժամանակի եկեղեցու դժվարին կացություն չհամառոտ բնութագրիր: «Հուրն պատրաստ էր, — Կրում է նա, — սուրն սրեալ էր, խաչ կանդնեալ էր խորխորատրն, անին՝ քուրքն. ոմանք փախչէին, իսկ ոմանք խոնարհէին, ոմանք դրդուէին¹⁴⁰, իսկ ոմանք յառաջ քան Վիորձն՝ միայն ի սպառնալեացն սարսէին»¹⁴¹ և այլն: Նման դժվարությունների հիշեցումը, անկասկած, միաժամանակ օգնում է ունկնդրի համար լիարժեք զարձնելու մարտիրոսավածների անձնուրաց սխրանքն ու հիշարժան գործերը:

Քառասուն արանց անմարդկային տառապանքները Կեսարացին նկարագրում է ամենայն մանրամասնությամբ: Բնության ա՜հավոր սառնամանիքին, «կախող բնություն» ունեցող զետեբի քարանման ստուցակալմանը նա հսկադրում է հենց այդ այլամաններում հավատի համար տառապող մարդկանց աննախադեպ նվիրվածությունը: Տանջանքը, ստուցի վրա բոկոտն քայլելը փուլք չէ, քանզի «ըդհանամբ զբէն տէր, ասեն, զի ընդ հանդերձիս ընդ այսմիկ զմեզս ի բաց մերկանամք, բայց զի վասն աւձին զգեցար, վասն Քրիստոսի մերկասցուք»¹⁴²:

Ժողովրդի ուրախություն հասկացություն զնահատման տեսակետից ուսանելի շատ բան կա Կեսարացու «ի Գորդիոս վկայ»¹⁴³ խորագիրը կրող վկայաբանական ճառում: Ըստ Կեսարացու՝ ժողովուրդը լիարժեք ուրախանում է «յիշատական արդարաց»¹⁴⁴: Ընթերցողին որոշ դժվարությունների նախադատրաստելու նպատակով նա ակնարկում է քրիստոնեության տարածումն արքեպիսկոպ առնթեր գործոնները. «առնթեր կայ երկրագործութեան. անբերութիւն, վաճառականութեան՝ նաւաբկութիւն, ամուսնութեան՝ ալյութիւն, մանկասրնութեանց՝ անդորութիւն»¹⁴⁵:

Կեսարացին իր բազմաթիվ թղթերում, ճառերում և այլուր խրատագույնս դատապարտում է դավանանքի հարցերում հտտակ էղծմանորոշում շունենալը: Քննվող գործում ևս նա առ մարդն ուղղված նման օրինակ խնդրանք ունի՝ «ով մարդ, կամ ի զհոննէն զարուրի-

140 Բասս դժվարքն թիսնկի է:

141 Ձեռ. № 5595, էջ 371բ:

142 Նույն տեղում, էջ 373բ:

143 Նույն տեղում, էջ 376բ—381բ, հմմտ. ձեռ. № 2549, էջ 230բ—247բ:

144 Նույն տեղում, էջ 377ա:

145 Նույն տեղում, էջ 380ա:

ցիր և կամ արքայութեան փափագեաւ. մի՛ անպատուէր զկոչումնս, մի՛ ասէր կալ զիս հրաժարեալ»¹⁴⁶:

Բարսեղ Կեսարացու վարքագրական թեմայով գրված մեկ այլ ճառում՝ «ի վկա Յուզիտայ»¹⁴⁷, պատմվում է հավատի անաղարտութեան համար ցուցաբերված կանացի անօրինակ զրկանքների մասին «ի ժամանակի հալածանացն»: «Երանելին ի կանայս Յուզիտայ,— գրում է նա,— եթէ կին կոչել վայելուչ իցէ զնա, զմեծ բնութիւնսն անձինն, քան զկանանց բնութիւն, որ զտկարութիւն ծածկեաց»¹⁴⁸: Քաղաքի հեղինակավոր անձանցից կազմված մեղադրող խումբը, սիրաշահված (կաշառված) դատավորների և վկաների ստվար բազմությունը, կնոջ նկատմամբ գործադրվող ամենանվատացուցիչ ու անմարդկային միջոցներն անգամ անկարող են գրանրվում: Ավելին, այդ ոչ կանացի բնություն ունեցող Յուզիտայի նկատմամբ սրբան շատացնում են արհավիրքն ու ծաղրուծանակը, այնքան նա վստահ ու աներեր է դառնում: Այսպես, օրինակ, «իսկ նա առ ոչինչ այնպէս ըստ կենացն վայելչութեան ճեպովն ընթանայր իբրև ի բոցն յայն եկն դիմաւք և ձեռով և գորս բարբառէրն ծաղկեալ զուարթութեամբ անձինն զուարճացեալ երևելով մաղթէր զմերձակայ կանայսն մի ինչ հեշտանալ յերևելիսս և կամ երկնչել, որք չաղազս բարեպաշտութեան վտանգք, և մի զբնութեան զտկարութիւն պատճառել ի նմին զանզուածոչ ասելով՝ արանցն եմք ըստ պատկերի տատուծոյ եղեաք»¹⁴⁹: Կեսարացիին ալնուհետև պատմում է ներկա գտնվողներից շատերի կարեկցանքի մասին, ինչպես նաև սրբացած կնոջ մահվան ու թաղման մանրամասները:

Նշված պատմությունը վերաշարադրելիս ի՞նչ նպատակ է հետապնդում Կեսարացին, Հարցի պատասխանը տակա է նույն ճառում՝ արանց և կանանց ուղղված Կեսարացու հետևյալ վկայությունում. «Աբբ, մի հուանիք քան զկանայս կրտսերագոյնք երևել առ ի բարեպաշտութիւն, կանայք, մի վերջանայք յարիւնակէն, այլ առանց բաղբաղելոյ զբարեպաշտութիւն ընկալարուք գործով զփորձ առեալ, զի ոչ ինչ զձեզ առ բարեացն նուազութիւն խափանէ բնութիւնդ»¹⁵⁰:

146 Նույն տեղում, էջ 381ա:

147 Նույն տեղում, էջ 361ա—370ա:

148 Նույն տեղում, էջ 361ա:

149 Նույն տեղում, էջ 362ա:

150 Նույն տեղում, էջ 362բ:



Բարսեղ Կեսարացին, որպես եկեղեցական նշանավոր գործիչ, բնականաբար, պիտի մտահոգվեր եկեղեցական անհրաժեշտ սլավոտականություններ սահմանող կանոնների ստեղծմամբ, որովհետև դրանց հարկավորությունը զգում էր իր իրավասություն տակ գրանրվող ու ազդեցության ոլորտներն ընդգրկած եկեղեցին: IV դարում եկեղեցին անհամեմատ ընդհանրական էր, քան հաջորդ հարյուրամյակում և նրանից հետո, ուստի Կեսարացու կանոնները գրվում էին ոչ միայն Կապադովկիայի, Պոնտոսի ու Հայքի, այլև IV դարի ողջ Արևելքի նշանավոր եկեղեցիների ընձեռած նյութի վրա, որոնց ներքին անցուղարձին և իրավական նորմերին լավատեղյակ էր հեղինակը¹⁵¹: Կանոններից մեկում Կեսարացին խոստադույնս զգուշացնում է ձեռնադրությունը և առհասարակ սեփական նախասիրությունն արհեստականորեն շարտադրել այլոց, այլ այն խարսխել կամավորության սկզբունքի վրա, քանզի «կանոնք եկեղեցույ սչ ներեցին յայսպիսի ինչ իրս յանդգնել»¹⁵²:

Նա հոգևոր ծառայություն ունեցող անձանց հատուկ կանոնով պատվիրում է մնալ վայելուչ բարձրության վրա, երբեք չընկնել պատվաբեր աստիճանից, այլապես մեկ անգամ սայթաքածը, դարտուղի ճանապարհ ոտք դրած անձը հատուկ պատժի է արժանի և ոչ թե ժողովրդի հետ ունենալիք նոր հաղորդության¹⁵³:

Եթե եկեղեցու գրականագիտության ուրեք մեկը մինչամուսնական մտերիմ փոխհարաբերության մեջ է որևէ աղջկա հետ, ապա ալղպիսին, ընդհանուրի հավանության արժանացած կանոնի համաձայն, «զտարի մի արգելեալ լիցի ի դրակարգացութենէ, որպէս գողացեալ զհարսանիսն՝ դադարեսցէ ի սպասաւորութենէ: Սոյն աւրինակ և ի վերայ սարկաւազացն եղիցի»¹⁵⁴:

Որոշ պարզաբաներում խիստ շեն դատապարտվում և ներման են արժանանում, այսպես կոչված, միջին ծառայության անձանց հանցանքները: Սարկավազները, երեցները և այլք, օրինակ, երբ

¹⁵¹ Կեսարացու կանոնների քննական-համեմատական հրատարակությունը տե՛ս «Կանոնագիրք հայոց», աշխատասիրությանը Վազգեն Հակոբյանի, Կ. Ա., էջ 329—362, Գ. Բ., էջ 101—180: Կեսարացու Կանոնագրքի Սանահնում (Նորաշեն վանքում) ընդօրինակված մի օրինակի հիշատակարանը տե՛ս Ա. Զալալսանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տիպիս, 1842, էջ 42—43:

¹⁵² «Կանոնագիրք հայոց», Կ. Ա., էջ 341:

¹⁵³ Նույն տեղում, էջ 347:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 352:

հանցանք են գործում և իրենք են խոստովանում կատարվածի մասին, այսպես նրանց ներումն է շնորհվում, հակառակ պարագայում «այսպիսիքն ջնջեալ եղիցին յաշտիճանէն»¹⁵⁵: Պատիժներից խրատագույնը, թերևս, սահմանված է հավատուրացների համար. նրման մարդիկ, ըստ Քարսեղ Կեսարացու, պարտավոր են ամբողջ կյանքում «լալ եւ խոստովանել եւ ի ժամանակի ելից իւրոց յաշխարհէս արժանասցի սուրբ հաղորդութեանն»¹⁵⁶:

Հողերը ծառայությունն նախընտրած անձր, որ պարտավոր է իր վարք-վարվեցողությունները աչտոց օրինակ հանդիսանալ, հատուկ կանոնով դատապարտվում է վատարարո կենցաղի, զոդովյան, ստախոսություն կամ նույնիսկ անհարկի վկայության պարագայում¹⁵⁷:

Կայուն են և ոչ հարստիս եկեղեցական պաշտոնավարության ընդունված նորմերը, համընդհանուր ճանաչում գտած ձևնադրություն կարգն ու վերանայելի, երբեմն էլ երկակի որոշման հնարավորություն ընձևող կետերը: Բացառվում, մերժվում են երկու տարբեր զբաղմունքների, մանավանդ հավատքով դանազանվող նախասիրությունների որոշ հակադիր-շահախնդրական համատեղումը անուշիկ եւ եկեղեցու սպասավոր անձանց համար, ուստի և «քահանայ որ զաշխարհական գործով զբաղի եւ ոչ կալ զգոյշ տանից եւ պաշտամանց, ունելով բարեխաւս գտուրբ մարտիրոսան, եղիցի նա որպէս հեթանոսն»¹⁵⁸: Կեսարացին կանոնաւոր կանոն սահմանում է սպասավոր անձանց անելիքները, գործունեության ոլորտները, բանդի սպասավորը «միջնորդ է ընդ Աստուած և ընդ մարդիկ, եւ կապող եւ արձակող յերկինս եւ յերկրի. եւ զի մարդիկ յերեսս հային եւ պատուեն, իսկ Աստուած՝ ի սիրան, զի պարատատր անասունն ոչ ընկալաւ Աստուած ի հաճոյս իւր, ապա որչափ եւս առաւել զմարդ անարժան...»¹⁵⁹:

Ժամանակի մարդկային փոխհարաբերությունների ու սոցիալատնտեսական նորմերի զնահատման ստուգումը եւ անսպասելի կարգնեցող կանոններում, թեև գրանք առաջին հերթին եկեղեցական անհրաժեշտությունները էին ստեղծվել և այդ շրջանի անձանց օգտագործմանն էին ի սպաս դրված: Կեսարացին հատուկ կանոններ ունի եկեղեցական անձնակազմի կենցաղի, կաշատակերություն, զո-

155 նույն տեղում:

156 նույն տեղում, էջ 353:

157 նույն տեղում, հ. Բ, էջ 104:

158 նույն տեղում, էջ 105:

159 նույն տեղում, էջ 106:

դուժյան, մարդասպանության, ընտանեկան անհավատարմության, նյութական ակնկալության, զբաղմունքի շարաշահման, պսակադրության և այլնի մասին:

Կան կանոնախմբեր, որոնք չուրահատուկ պատիժ են սահմանում ժողովրդի մեջ զույտեղ հեթանոսական հավատի մնացուկների դեմ և որոշակի պատկերացում են տալիս վերջինիս տարածվածության շափի մասին: Նման կանոններից մեկում խոսվում է «կախարդաց կամ դեղատուաց» մասին և սահմանվում համապատասխան վճիռ¹⁶⁰:

Կեսարացու կանոնները, հարկավ, ունեն զաստիարակչական մեծ ու կարևոր նշանակություն, որը, սակայն, խարսխված էր համապատասխան պատժամիջոցի վրա: Կարևորն այն է, որ հիմնական շեշտը դրվում է դաստիարակության կարևորության վրա, ուստի և արվում է հնարավորը, որպեսզի կանոնի խստությունից հարկադրված՝ մարդիկ նոր շարիք չզործեն: Այսպես, օրինակ, «եթէ ոք ի կախարդաց կամ ի դեղատուաց յապաշխարութիւն դան, արժան է յորդորել ի հաւատ», զի մէ՛ ի խստութենէ կանոնաց զարհուրեալ անդրէ՛ն զառնայցեն ի նոյն շարիս, բայց դրոշմ դիցեն ի ճակատն և յուսն և ի ձեռոսն և ի ծունդսն խաչանիշ»¹⁶¹: Կան կանոններ, որոնք կոշված են քրիստոնեական մեղք հասկացությամբ դատապարտելու ամենաաննշան զանցանքն անդամ: Ըստ Կեսարացու՝ եթե մեկը այլոց հանցանքներին (մեղքերին) նախապես տեղյակ է և չի ուղղում կամ հանդիմանում ողջախոհ բանականությամբ, ապա ինքն էլ մեղսակից է կառարարածին և պետք է պատժվի: Սա դրում է. «եթէ ոք եթող եղբար իւրում և յետ անցեալ իրացն նախատեսցէ իբրև նշառակելով, և նա իբրև զանգութ և զխանդացող ի շարիս որոշեսցի շաբաթ մի»¹⁶²:

Համեմատաբար մեծ թիվ են կազմում Բարսեղ Կեսարացու այն կանոնները, որոնք շեն մասնավորեցվում կոնկրետ միջավայրով և վերաբերում են քնտանիքին, ամուսնությանը, ժամանակի բարոյական ըմբռումներին, ընդհանրապես մարդկային փոխհարաբերությանն ու զործող տնտեսական նորմերին:

Եկեղեցին ընդունում էր համաձայնությամբ պայմանավորված ամուսնությունը, իսկ հակառակ պարագայում «եթէ ոք ապականես-

¹⁶⁰ Նույն տեղում, հ. Ա, էջ 351:

¹⁶¹ Նույն տեղում, հ. Բ, էջ 102:

¹⁶² Նույն տեղում, հ. Ա, էջ 356—357:

ցէ զէգ յանկարծարէն՝ մահապարտութեան դատաստան ընկալցի»¹⁶³։ Նույն կանոնում հեղինակը արտակարգ զգուշութիւն է պահանջում գործը քննելիս և նախապէս հիշեցնում է զզատանալ այն հնարավոր կետերից, որոնք նման դեպքերում կարող են թշուրթիմացութեան առիթ հանդիսանալ, այսինքն՝ առաջնորդվել ոչ թէ երևույթի թվացական կողմով ու անկարևորութեամբ, այլ, եթէ անհրաժեշտ է, ժամանակի սրուշ հատվածում սպասել և վերջնականապէս շշտել գործի բուն էութիւնը և շարահիշ ընդունել այն։

Ի արսեղ Կեսարացիին կանոններից մեկում պատմում է Երրորդ և նույնիսկ շորրորդ անգամ ամուսնանալու տարածված սովորութիւն մասին, որը, բոտ ոմանց, էր «ոչ շնութիւն, այլ բազում ամուսնութիւն»¹⁶⁴։ Կեսարացու վկայութեան համաձայն՝ թեև եկեղեցին այդպիսի ամուսնութիւնների հետ հաշվի չէր նստում, այդուամենայնիվ կարգ կար «զայնպիսին ոչ աւտարացուցանել յկատուոյ եկեղեցուց, այլ լոկ արժանաւորք լիցին ի պաշտամանն արտաքոյ եկեղեցուց և ի հաղորդութենէն հետի եղիցին. և այսպէս ցուցցեն զպրտուղ ապաշխարութեան յանձինս իրեանց, յետ ժն ամի կացցեն ի տեղի հաղորդողացն»¹⁶⁵։ Եկեղեցու նման ներողամտութիւնը, թըվում է, բացատրելի է նշված երևույթի տարածվածութեամբ, ժողովրդի մեջ ունեցած խոր արմատներով ու համակրողների թվական գերազանցութեամբ։

Ամուսինների փոխհարաբերութեան, միմյանց նկատմամբ ունեցած իրավունքի գնահատման ստուժով ուշադրութեան է արժանի Կեսարացու մի կանոնը, որ ասվում է, որ բաժանված ամուսինները սահմանված տույժը կրելուց հետո, փոխադարձ համաձայնութեան պարագայում, եթէ կամենան կրկին ամուսնանալ, ապա «այբն ունի իշխանութիւն զկինն մերժել, իսկ կինն ոչ ունի իշխանութիւն ի վերայ անն»¹⁶⁶։

Շարական իրավունքի պատկերն է առկա Կեսարացու մեկ այլ կանոնում, որի համաձայն՝ «իսկ աղջիկ որ թէ արտաքոյ կամաց հար իւրոյ այլում հետեւեցի՝ ի պոռնկութիւն համարեալ է»¹⁶⁷։ Ավելին, հոր և աղջկա հետագա հաշտութեան պարագայում անգամ եկեղեցին անզիշող է և հաղորդակցութեան շի ընդունում։

163 Նույն տեղում, էջ 358, հմ.մ. հ. Բ, էջ 161։

164 Նույն տեղում, էջ 337։

165 Նույն տեղում, էջ 337—338։

166 Նույն տեղում, էջ 346։

167 Նույն տեղում, էջ 347—348։

Ծնողները հավասարապես պատասխանատու են դավակներով վատ վարքի, ալյասերվածութեան համար առավել ևս այն դեպքում, երբ միտումնավոր կերպով փորձում են ծածկել «զաւակաց պղծութիւնը», Ասվածը հավաստող կանոնում կարգում ենք. «Ծրնաւըք եթէ զիրեանց զաւակաց պղծութիւն տեսանեն եւ ծածկեն վասն ամաւթոյ եւ վասն աւդտի անձանց, շարիք նոցա ի զլուսն նոցա եղիցին եւ է ամ ապաշխարեսցեն, բայց վարդապետն իշխան լիցի կարճել զկարգն»¹⁶⁸:

Կեսարացիին հատուկ կանոնով զգուշացնում և սահմանազատում է օրինական ամուսնութիւնը հանցավոր կապից, մարմնական փոխհարաբերութիւնից: Ամուսնական հարաբերութեան մեջ լինելու պարագայում նոր կապի հաստատումը միանգամայն դատապարտելի է: Նման դեպքերում, համապատասխան կանոնէ համաձայն, միաբանութիւնն է խրախուսւում նախկին ամուսնաների միջև և անբարոյականութիւնն որակվում յուրաքանչյուր շլատեճառաբանված նոր կապ¹⁶⁹:

Անբարոյականութիւնն է համարվում սարկավագի և առաստարակ քրիստոնյա անձի մտերմութիւնը անհավատի՝ հեթանոսի հետ, որը և մերժում է եկեղեցին: Նման մարդկանց փրկութեան միակ ելքը երկարատև ապաշխարութիւնն է, որոնք անվամբ քրիստոսասեր են, բայց գործով վերջինիս են թշնամանում¹⁷⁰:

Դատապարտելի են ոչ միայն ամուսնական կապի պայմաններում ալլոց հետ հարաբերութեան մեջ լինելը, այլև սնտտի ցանկութեամբ պայմանավորված ամուսնալքութիւնը, իսկ այնուհետև նախկին հարաբերութեանը վերադառնալու յուրաքանչյուր փորձ¹⁷¹:

Կեսարացու կանոնների ուշադիր քննութիւնից պարզվում է, որ հեղինակը հաշվառել է առօրյա կյանքում հանդիպող օրինաչափ և հազվագեղ բոլոր նորմերը և կանոններ սահմանել յուրաքանչյուր աննշան, բայց դատապարտելի զանցանքի համար: Հասկանալի է, երբ հատուկ կանոնով դատապարտվում է կանխամտածված անբարոյականութիւնը, բայց այլ բան է, երբ մեկը կապի մեջ էրնկնում իր կամքից անկախ: Կեսարացիին նման դեպքերն հաշվառող հատուկ կանոն ունի, ուր ասված է. «Որ առ ճարկի պտենկու-

168 Նույն տեղում, հ. Բ, էջ 111:

169 Նույն տեղում, հ. Կ, էջ 343—344:

170 Նույն տեղում, էջ 349:

171 Նույն տեղում:

թիւնք ինչ գործիցին՝ առանց պատժապարտութեան եղիցին, քանզի ոչ ի կամաց եղև, ոչլ ակամաց»¹⁷²:

Նույնպիսի սկզբունքային զանազանություն է սահմանվում կանխամտածված, դիտավորյալ սպանության և ակամա, դիպվածով մարդասպան զանալու միջև: Ակամա սպանություն է, ըստ Կեսարացու, երբ մեկը, տանք, ծառի պտղին քար նետելով՝ պատահաբար մարդ է սպանում, ամենևին չկանխատեսելով, որ նույն ծառի վրա: Դովանու տակ կամ ծառից ոչ հետո մարդ կարող էր լինել: Բայց ինքնին հանցանք է և բնավ արդարացման եզր չունի, երբ մեկը քարով, երկաթով, սրով և նման միջոցներով զազանաբար մարդ է սպանում. սա արդեն ավազակություն է և խստագույնս դատապարտելի¹⁷³:

Կեսարացին համապատասխան կանոն ունի այն մասին, որ սոցիալական տարբեր (հակառակ) խավերի անձանց միևնույն հանցանքի դեպքում պատիժը միանման խստութեամբ է կիրառելի: Այսպես, օրինակ, նման կանոններից մեկում ասված է. «Որ հարուածովք մահու հարկանէ զընկեր իւր՝ մահապարտ է: Թէ տէր զծառայ իւր սպանանէ ատրապարտուց՝ մահապարտ է. թէ տիկին զաղախին՝ նոյն է: Եւ եթէ յաւր հարկի արինհեղութիւն լինի՝ մահապարտ է եւ պարտական. ի վուր անկեալ ի ձեռս իշխանի՝ մահապարտ է. եւ որ զգող յորոգայթ բնկենտ՝ մահապարտ է»¹⁷⁴:

Հանցագործությունը, մասնավորապես, մարդասպանությունը դատապարտող Կեսարացու կանոններում իրավացիորեն հաշվառվում են հանցանքի բնութագրական կողմն ու հետևանքները հասարակական զնահատման շափանիչի տեսանկյունով, որի համաձայն դատապարտելի է անձնական հողի վրա կատարված ամեն մի սպանություն: Կեսարացու վկայութեամբ՝ «խոհ որ ի պատերազմունս մահք գործին՝ հարքն մեր ամենևեին շհամարեցան զայն ի մահ»¹⁷⁵, ուստի և ինքը այդպիսի անձանց համար սահմանում է թեթևագույն տույժ՝ «Գ ամս արտաքոչ հաղորդութեան լինել»¹⁷⁶:

Բազմազան է Բարսեղ Կեսարացու կանոններում արծուրծված հարցերի բնույթը: Կան հարցեր, որոնց շուրջ նախապես մշակված

172. Նույն տեղում, էջ 350:

173. Նույն տեղում, էջ 339—340:

174. Նույն տեղում, հ. Բ, էջ 102:

175. Նույն տեղում, հ. Ա, էջ 341:

176. Նույն տեղում:

են եղել կանոնատիպ վճիռներ, և Կեսարացին նվազ միջամտութեամբ կամ երևույթի նոր երանգավորմամբ վերջնականապես հրատակել է, իսկ կան և այնպիսիք (հափշտակողների դատափեշտում, ունեզրկման երևույթի բացատում և այլն), որոնք նկատել և հատուկ կանոնավորման է ենթարկել առաջին անգամ ինքը¹⁷⁷ :

¹⁷⁷ Կեսարացին, անշուշտ, ունի նաև բազմաթիվ այլ կանոններ: Մենք ներկա քննութեամբ փորձեցինք զնահատել այն կանոնախմբերը, որոնք հին թարգմանութիւն են և ինչ-որ չափով հայկական խմբագրութեան են ներկայացնում:

ԿՆՍԱՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՅՆՐՐ

ԿՆՍԱՐԱՅՈՒ ԱՌՆՉԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՆՐԻՆ

Պահպանված սկզբնաղբյուրներից հայտնի է, որ Կապադովկիան հնուց ի վեր առևտրա-տնտեսական, քաղաքական ու մշակութային սերտ առնչությունների մեջ է եղել Արևելքի շատ երկրների, այդ թվում նաև հյուսիսարևելյան հարեանի՝ Փոքր Հայքի հետ¹:

Փոքր Ասիայում Կապադովկիան ուշագրություն էր գրավում ինչ հարմար աշխարհագրական դիրքով և թե՛ տնտեսական հանածոների նկատելի հարստությամբ: Կեսարիայում (հնում՝ Մազակա) գործող արծաթի գրամահատարանի կրեմնի զոյությունը հիմք է ապիս ենթադրելու, որ այդ տարածքում եղել են նաև արծաթի շանքեր²: Կապադովկիայում տավել տարածված է եղել փղոսկր հիշեցնող քարի հանույթը, որից ժամանակին պատրաստել են թրերի ու հայելիների բռնակներ և զանազան այլ տարրիկներ:

Սակայն հոմեական իշխանության համար Կապադովկիան ա-

¹ Страбон, География, II.—I, 1964, էջ 507, «Մովսիսի Խորենացու Պատմության հայոց», Տփղիս, 1913, էջ 46—47, 127—128, 130—131, 132, «Փաւստոսի Բուզանդացու Պատմության հայոց», Վենետիկ, 1933, էջ 235, Հ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և յ. Մաշտոցի կենսագրությունը («Մեկուկ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 119—120, Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, դիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 371, Վ. Բրիսով, Տարեկրթության հայ ժողովրդական դատական ճակատագրին («Բուդյանովկա», 1930, էջ 410—411), Ս. Ալսոյանեան, Պատմության հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահրիե, 1937, էջ 202—208, Պ. Խառանիս, Հայերը բնականական կայսրության մէջ («Հանդէս ամսօրեայ», 1964, էջ 510—526), Մ. Աբելյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 35—36, Մ. Ա. Մանանյան, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 18, նույնի՝ Տիգրան Երկրորդը և Հոռոմ, Երևան, 1972, էջ 49—55:

² А. Ранович, Восточные провинции римской империи в I—III вв., М.—Л., 1949, էջ 120: Կեսարիայի փղղերանոցի գրամներից պտնվել են Բաղկաներում, Պաղեսահում, Կովկասում և այլուր: (Նույն տեղում, էջ 124):

ուզել կարևոր նշանակութիւն ունենալ արաքիս հերթին ռազմական նկատառումով. այն շատ կարևոր անցուղի էր Հայաստան տանող ճանապարհին: Ուտի և հոռմեական իշխանութիւնը Կապադովկիան իրեն միացնելուց հետո (մ.թ. 17 թվական) ձեռնամուխ եղավ վերջինիս զինվորա-քաղաքական կառուցվածքը ամրապնդելուն՝ նպատակ ունենալով այն դարձնել «տուաքիս կարգի կայսերական նահանգ»³:

Հոռմեական տիրապետութիւնը Կապադովկիայում որքան էլ գործնական նպատակ հետապնդեր, այդուհանդերձ նրա պետական համակարգն ինքնին, առևտրա-տնտեսական հարաբերութիւնների վարդաքցմանը զուգընթաց, սատարում էր իր ենթակայութեան տակ դտնվող գավառների մշակութային վերելքը: Ասվածք պարզորոշ հավաստվում է Կապադովկիայի օրինակով, որտեղ, մասնավորապես Կեսարիայում, մշակութային նկատելի վերելք նկատվեց IV դարի երկրորդ կեսից սկսած: Գրիգոր Նազիանզացին բարձր է գնահատում գիտութեան, կրթութեան ու լուսավորական գործի բավարար զարգացածութիւնը Կապադովկիայի Կեսարիայում, որն իր գրական ազդեցութիւնն է թողնում շրջապատի բնակավայրերի վրա⁴, իսկ ուսումնասիրողներից Յարրարի պնդմամբ՝ Կեսարիան IV դարում մեծ քաղաք էր և մշակութային խոշոր կենտրոն⁵:

Փոքր Հայքը և Կապադովկիան աշխարհագրական միանման դիրքի ու հարստութեան պատճառով հաճախ են նվաճվել օտարների կողմից, Վկայութիւններ կան այն մասին, որ Փոքր Հայքի և Կապադովկիայի ոչ միատարր բնակչութիւնը հաճախ է կռվի ելել ընդդէմ հարստահարողների և նույնիսկ իրար դէմ ու բազմիցս նվաճվել միմյանցից: Ստրաբոնը գրում է. «Հայոց թագավոր Տիգրանը Կապադովկիայի վրա ասպատակելիս նրանց ծանր կացութեան մեջ գրեց. թագավորը բոլոր տեղահանվածներին բռնց Միջագետք, Տիգրանակերտի բնակչութիւնը նրանցով շենացավ»⁶:

³ О. Кудрявцев, Провинция Каппадокия в системе римской восточной политики (17—72 гг.), «Вестник древней истории», М., 1955, № 2, էջ 72:

⁴ «Творения иже во святых отца нашего Григория Богослова, архиепископа Константинопольского, Слово 43, Надгробное Василию...», 1912, էջ 610 (այսուհետև՝ «Պամբանական»):

⁵ Ф. Фаррар, Жизнь и труды св. отцов и учителей церкви, СПб, 1891, էջ 454:

⁶ Страбон, էջ 507, հմմտ. Ստրաբոն, բաղնիք և թարգմանիք 2. Անտյան, Երևան, 1940, էջ 71:

Նույնատիպ մի տեղեկություն էլ պահպանվել է խորենացու մոտ, բոտ որի՝ հայազգի Արամը Ասորեստանի բնակիչներին իրեն հնթարկելուց հետո՝ «Աստ յարեմուտս շարժեալ ի վերայ առաջնոյն շորիք բիրովք հետևակազօրու և երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա»⁷: Այնուհետև խորենացին գրում է, որ Կեսարիայում Արամին պատերազմով հանդիպում է Պայապիս Քաղեայն, որը բռնի տիրացել էր Պոնտոսին: Արամը վերջինիս քշում է մի խուլ կղզի և իր գրավածը հանձնելով հայազգի Մշակ անունով մեկին, ինքը վերադառնում է Հայաստան⁸: խորենացու մոտ պահպանվել է ասվածը լրացնող մի բացատրություն ևս, որով հաստատվում է այն միտքը, թե խոսքը Կապադովկյան Կեսարիայի մասին է: Նա գրում է. «Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ սրմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մածաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչև լետոյ լոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա: Ըստ նըմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ»⁹: Պատմահար տեղեկությունները Կապադովկիայի մասին նշվածով շին սահմանափակվում: Նրա իսկ հավաւածամբ՝ Կապադովկիան շարունակում էր հայկական հպատակություն լինել Տիգրանի մեծ տերության ժամանակ ևս¹⁰: խորենացու այս և նման վկայությունների հիմքը որքան էլ առասպելապատում լինի, այդուամենայնիվ, գրանք ճշմարտազուրկ չեն թեկուզ այն պատճառով, որ կապվում են ասորած և գործած հայազգի թագավորների հետ: Ըստ Մ. Աբեղյանի՝ «Արամի այս առասպելի մեջ պահված է մի հիշողություն Կապադովկիայի կողմերում հայերի բնակված լինելուն»¹¹:

Փալստոս Բուզանդի մոտ պահպանվել է հայոց Պոսպ թագավորի գործունեության մի դրվագը, սրտեղ նույնպես բնորոշված է անցյալում Կապադովկիայի «հայկական լինելու» միտքը: Ահա, թե ինչ է գրում Բուզանդը Պոսպ թագավորի մասին. «Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, ելլէ Կեսարիա հետ՝ և տասն քաղաք մեք

7 Մ. Խորենացի, էջ 46:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, էջ 46—47:

10 Նույն տեղում, էջ 131—132:

11 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 36:

լեալ է, արդ ի բաց տուր. և զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մե-
րոց. արդ եմէ ոչ կամիս խանդար ինչ առնել, տուր ի բաց. ասպ թ/
ոչ, կոսիմք մեծաւ պատերազմաւ»¹²:

Քննվող խնդրին անդրադարձած ուսումնասիրողները ևս խո-
սում են հօգուտ ասվածի: Կեսարիայի պատմական-տեղագրական
բնութագիրն անելիս էփրիկյանը նշում է, որ վերջինիս բնակչու-
թյունը հայեր են և թուրքեր, ինչպես նաև քիչ թվով հույներ: «Հա-
յերը, — գրում է նա, — հաւանականաբար ամենահին դաղթակա-
նութիւն մ'են...»¹³:

Մարկվարտը գտնում է, որ, ի տարբերություն հռոմեական տի-
րապետության տակ գոնվող այլ ժողովուրդների, Աթենքում կրթի-
ված Կապադովկիայի եկեղեցական դործիչները ատելութեամբ էին
լցված դեպի բամկաբարբառը, և եկեղեցական արարողությունները
կատարվում էին օտար լեզուներով: Կապադովկիայի ժողովուրդը
«հնչունական երանգները տարբերելու համար... իր արեւելյան հա-
րեանների՝ հայերի նման մի նուրբ լառղություն ունեն»¹⁴: Ավելին,
Մարկվարտը Գրիգոր Լուսավորչի հայերեն քարոզելը, ուստի և հա-
յերենի իմացությունը հնարավոր ու հավանական է համարում, ե-
թև նա «մեծացած լինի հռոմեական-հայկական սահմանների մոտ,
մտաւորապես նեոկեսարիայում կամ Փոքր Հայքում: Այս դեպ-
քում նա կարող էր պատանի հասակից ծանոթ լինել ինչպես հու-
նարենին, այնպես էլ հայերենին»¹⁵:

Այդոչաճչանը, որ լավատեղյակ էր Կապադովկիայի, Պոնտոսի,
Փոքր Հայքի և առհասարակ Ասիայի պատմությանն ու վերջի-
նիս սկզբնաղբյուրներին, Կապադովկիայի հայկական առնչակ-
ցութեանն անդրադառնալիս եզրակացնում է. «Այս իրողութիւնը, որ
Հայ ցեղը յարաբերութեան կը դնէր Փոքր Ասիոյ կեդրոնին հետ,
ինչպէս նաեւ այն ցեղային նուաճումը, որ հայերը ըրած էին Կա-
պադովկիոյ Եփրատամերձ մէկ մասը (Փոքր Հայք) հայացնելով,
կարծեմ թէ բաւականէն աւելի պերճախօսօրէն կուզան հաստատել,

¹² Փ. Բուգանդ, էջ 235 (բնագծումը մերն է.— Կ. Մ.):

¹³ Ս. էփրիկյան, նշվ. աշխ., էջ 371:

¹⁴ Հ. Մարկվարտ, նշվ. աշխ., էջ 119:

¹⁵ Նույն տեղում, էջ 120: Այս պարագայում հնարավոր է ենթադրել, որ Կա-
պադովկիայում եկեղեցական արարողությունը կատարվում էր ոչ թե հունարեն,
այլ ասորերեն կամ, վերև, հայերեն: Նեոկեսարիայում և Փոքր Հայքում խոսակ-
ցական լեզու էին միաժամանակ թե՛ հունարենը և թե՛ հայերենը, մի փաստ, որ
խոսում է հօգուտ Կապադովկիայի և Հայքի առնչակցութեան:

թէ Հայերը բովանդակ Կապագոսովկիոյ մէջ տարածուած էին այդ շրջանին»¹⁶:

Հայ «վաճառականները իրենց վաճառքը կարաւաններով կը փոխադրէին զլիսաւորապէս դէպ ի Կապագոսովկիա (Արեւմուտքի համար) և դէպ ի Պոնտոս (Հիւսիսի համար): Արտածութեան նիւթերն էին ձիեր, ջորիներ, մետաղներ, կարմրադեղ (Որդան կարմիր), ցորեն, գինի, ձէթ»¹⁷:

Հայերը ոչ միայն առևտրա-տնտեսական, այլև հոգևոր-մշակութային ամենատեսակաւ կապի մեջ էին Կապագոսովկիայի հետ և, անկասկած, որոշակի դեր են խաղացել վերջինիս ուսումնական և մշակութային վերելքի բնագավառում: Հնագույն ժամանակներից ի վեր Կեսարիայի դպրոցներում ուսանում էին բազմաթիւ հայ պատանիներ, որոնցից առավել ընդունակները խորանալով գիտութեան տարբեր բնագավառներում, ժամանակին փոխարինում էին իրենց շատ համբավաւոր ուսուցիչներին: Պատմութեանը հայտնի է Տիրան անունով կապագոսովկացի հայ, որը աշակերտելով Գրոնիսիոս Բրակացուն, տակավին երիտասարդ տարիքում գիտնականի բացառիկ համարում է վաստակել¹⁸: Հոռմը հայազգի Պրոյերեսիոսի սերձասխոտութեամբ հմայված, վերջինիս արձանն է կանգնեցրել քաղաքի կենտրոնում, որին, ինչպես գիտենք, աշակերտել են նաև «երեք մեծ կապագոսովկացիներից» Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին: Ուշագրտով է ն. Մտոի կարծիքը ընդհանրապես բրիտանական եկեղեցու համար Կապագոսովկիայի ունեցած նշանակութեան և հայոց տնտեսական մասին. «Значение Каппадокии вообще для древней христианской церкви всем известно. Но каппадокийские вклады в общецерковную жизнь должны заключать в себе кое-какие блестящие армянской жизни, переливавшейся в самую Каппадокию. Из прикаппадокийской или каппадокийской Армении (Armenia Minor) происходили многие деятели греческой церкви»¹⁹.

Բնականաբար, թիչ չէին այն դորժոնները, որոնք պայմանաւորում էին մշակութային ամենատեսակաւ կապի և փոխադրեցութեան հրաժեշտութեանը Կապագոսովկիայի և Փոքր Հայքի միջև: Գրիգոր

16 Ա. Ակոբյանյան, նշվ. աշխ., էջ 208:

17 «Բազմավկյ», 1930, էջ 410—411:

18 Ա. Ակոբյանյան, նշվ. աշխ., էջ 202, հմտո. «Բազմավկյ», 1927, էջ 170—171:

19 Н. Марр, Аркаун, монгольское название христиан..., СПб., 1905, էջ 27:

Նազիհանդացիին, ասվեց, բարձր է գնահատում գիտության զարգացածությունը Կապադոկիյան Կեսարիայում²⁰:

Հնագույն ժամանակներից ի վեր Կեսարիայի եկեղեցին վրձնական նշանակություն է ունեցել Հայոց եկեղեցու և վանականության սկզբնավորման հարցում²¹: Ինքը՝ Գրիգոր Լուսավորիչը, ուսանել է Կեսարիայում, այնտեղ էլ ստացել իր ձեռնադրությունը. «Եւ եղևալ ժողով բաղմութեան եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացոց, զի ձեռնադրեսցեն զսուրբն Գրիգորիոս և աւանդեալ ի նա զպատիւ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի, և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեանն Աստուծոյ, զպատիւն և զփառոսն մեծ»²²: Հայոց եկեղեցու սպասավոր հոգևոր հայրերը՝ Լուսավորչի հետնորդները, ուսանել են Կեսարիայի զպրոցներում և առաջին անգամ այնտեղ մտտիկից հաղորդակից դարձել վանական կյանքի կոնուցվածքին ու եկեղեցու հաստատությանը: Կապադոկիյան Կեսարիայի եկեղեցին նախատիպ ընդունելով՝ հետագայում նրանք ձեռնարկել են հայոց եկեղեցու ու վանականության հիմնադրման գործը:

Գրիգոր Լուսավորչից հետո հայոց եկեղեցու մյուս երախտավորը Ներսես Մեծն է: Նա Բարսեղ Կեսարացու ժամանակակիցն էր՝ ծնված մոտավորապես 334 թվականին, Ներսեսը ևս «սնաւ և ուսաւ ի Կեսարիացոց պատուին»²³, որտեղ և առաջին անգամ մտտիկից հաղորդակից դարձավ քրիստոնեացման շրջանի եկեղեցու էությունն ու վանական դասի կենցաղին: Հայաստան վերադառնալուց հետո, հակառակ իր ընդդիմացումներին, Ներսեսին և նրան ուղեկցող շքախմբին, ժողովրդի ցանկությունները ու Արշակ թագավորի հրամանով, ինչպես գրում է Բուզանդ պատմագիրը, «արձակեցին բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եւսեբիոս յերկիրն Գամրաց, և ի մայր քաղաքացն նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց»²⁴: Այնուհետև պատմագիրը ավելացնում է. «Իսկ իբրև ևհաս ժամ՝

20 «Գամբրեանական», էջ 610:

21 Յ. Թօփեան, Պաղումն հայ վանականութեան, «Լոյս», 1905, էջ 360—361, Н. Асмон, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 360—361:

22 «Աղաթնադեղայ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1914, էջ 408—409:

23 «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի հայոց հայրապետի» (անս «Սոսիերը հայկականը» (այսուհետև՝ «Սոսիերը»), հ. 2. Վենետիկ, 1853, էջ 14):

24 Փ. Բուզանդ. էջ 81, հմտ. ձեռ. № 992, էջ 110բ:

յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղանձին ի սրբոցն Բարսեղէ, և նստաւ ի վերայ զլիսոյն Ներսէսի»²⁵: Այն ժամանակ Բարսեղ Կեսարացին Եվսեբիոս եպիսկոպոսի տեղաօդահն էր և իր հիմնած վանքերի ու բազմաթիվ բարեգործական հաստատութիւնների շնորհիվ ուներ մեծ ժողովրդայնութիւն:

Ներսեսը սկզբնական շրջանում հանդես է գալիս Բարսեղի հոգևոր ձեռնարկումների բացահայտ ընդօրինակմամբ. ստեղծում է բազմաթիվ վանական-բարեգործական հաստատութիւններ (աղբատանոցներ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ, այրիանոցներ և այլն), որոնց կարևորութեանը մոտիկից հաղորդակից էր եղել Բյուզանդիայում: Այս առումով կարևոր է խորենացու մի հաղորդումը. «Նւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, և եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իրոց նորոգեաց, աչ և առաւել ևս. քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ բաղաքին, ի սմա նկարագրէ»²⁶: Ինչպէս տեսնում ենք, Պատմահոր մոտ հստակ է արտահայտվում Կեսարիային հետեւելու միտքը:

Հայ բանասիրութեանը վաղուց է հայտնի այն իրաւութիւնը, որ Բարսեղ Կեսարացու կանոնները, խրատները, քարոզները, «Պատա-

²⁵ Նույն տեղում, էջ 82, «Սոփերք», էջ 28, հմմտ. «Մանր ժամանակագրութիւններ», XIII—XVIII դդ., հ. 11, կազմեց Վ. Հակոբյան. Երևան, 1956, էջ 321, ձև. № 9063, էջ 95բ, ձև. № 84, էջ 254ա, ձև. № 2016, էջ 56ա, ձև. № 992, էջ 195ա: Նույնի մեկ այլ տարբերակում ասված է. «Նւ ելլա ի միասին հանդիպիլ աւմանն... սրբոցն Բարսղի և մեծին Ներսիսի՝ հայոց հայրապետի: Նւ ի ժամ աւծմանն տեսին ամենայն բազմութիւն ժողովրդեանն գհոյին սուրբ աղանակերոյ, որ էջ և նստաւ ի վերայ զլիսոյն Ներսիսի և ապա՝ ի Բասիլիոսին...» (Ձև. № 4755, էջ 255բ): Մ. Օրմանեանը ընդհանրապէս շնչգունելով Ներսէսի՝ Կեսարացու ներկայութեամբ Եվսեբիոսից ձեռնադրվելու պարագան, վերջինիս առնչվող աղափնու պատմութեան առթիվ գրում է. «Աղաւնիին նախ Բարսեղի և Լուսրը Ներսէսի վրայ հանգչելուն պարագան ալ նշան է յունական մեծամտութեան հիստաւածք լինելուն»: (Մ. Օրմանեան, Ազգայագատում, հ. Ա, մ. Ա, Պիկրոսի, 1959, էջ 169): Վերոբերյալի մեկնութիւնն է առկա ստորև վկայվող հատվածում. «Նւ սուրբ հայրապետն [Ն.]սրբի տեսեալ գհրաշագիդն ներսէս և փառաւոր իշխաննն ընդ նմայ, յոյժ ուրախացաւ և պատրաստեաց ձեռնադրել զներսէս կաթողիկոս Հայոց ընդ նմին և Բարսեղ Ղայար[ե]լցին, զի յորժամ սուրբ զօծումն ընկալան սուրբ հայրապետէն նոյն ժամա[ւ]յն յայտնապէս հոյին սուրբ Աստուած էջ ի վերայ սրբոցն Ներսէսի և սրբոցն Բարսղի, որ աղինրև ամենեքեան տեսին երկոցունցն արժանաւորութիւնն և հիացեալ փառս ետուն Աստուծոյ, որ այնչպէս առաջնոր[դ] ունին սրբազան ազգն Հայոց»: («Մանր ժամանակագրութիւններ», հ. II, էջ 572):

²⁶ Մ. Խորենացի, էջ 279:

րադամատույցը» և այլ գործեր հայերենի են թարգմանվել մեր մշակույթի Ոսկեդարի թարգմանիչների աշխատասիրությամբ: Հայոց եկեղեցու համար ամենից գործածական են եղել «... ս. Բարսղի եւ Ոսկեքեռանի պատարագամատուցները»²⁷: Կեսարացու «Պատարագամատուցի» հայերեն թարգմանության կապակցությամբ Գալթրեյանը գրում է. «Սահակ մր և Մեսրոպ, Յովսէփ, Եղնիկ, Եղիշէ, Էւ ուրիշ այնչափ յարգուած անձինք, — շէնք կրնար տարակոյս ունենալ, — ստով էր որ սուրբ սեղանին առջև կելլէին»²⁸:

Հայաստանում Կեսարացու մեծ հեղինակություն լինելու պարագայից անկախ, միայն խոստագույն անհրաժեշտությունը կարող էր մեզանում, Աստվածաշնչից հետո, խթանել նրա մատենագրական հարուստ ժառանգությունը թարգմանելու միտքը: Բայց մինչ այդ մեզանում պիտի լիներ մեկը, որը, Բարսեղի գրական վաստակին բնագիր վիճակում ծանոթանալով՝ նախադրյալներ ստեղծեր դրանց թարգմանության համար: Եվ այդ անձը, թերևս, Ներսես Մեծը եղավ, քանզի՝ «ինքը Կեսարիա կրթուած էր, և ջանաց ս. Բարսղի եկեղեցական դաղափարականները ի Հայս գործագրել»²⁹: Հնարավոր է, որ Բարսեղի որոշ գործեր, ասենք՝ եկեղեցական արարողության համար խիստ անհրաժեշտ քարոզ, պատարագ (մի փոքր տվելի ուշ), կանոններ և այլն, սկզբնական շրջանում մեր եկեղեցում կիրառվել են հունարեն, որը, կարելի է ասել, մինչև գրերի դյուտը հայոց եկեղեցու (ժամասացության) դործածած լեզուներից էր:

Ընդհանուր էին Բարսեղի և Ներսեսի ոչ միայն կառուցողական-կազմակերպչական ձեռնարկումները, որ ոչ պակաս կարևոր էին, այլև դավանական հայացքները՝ հանձին արիոսականության դեմ մղած նրանց համատեղ պայքարի: Հայտնի է, որ 325 թվականին դումարված Նիկիայի առաջին տիեզերական ժողովում դատապարտվելուց հետո արիոսականությունը շարունակում է տարածվել Արևելքում: Արդ, Կեսարացու թղթերից մեկը (372 թ.)՝ ուղղված իտալացի և գաղիացի եպիսկոպոսներին, կարևոր է երկու առումով: Նախ՝ նրանում հստակ շարադրված են հեղինակի մտքերը եկեղեցու

27 Յ. Թովմեան, Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 234:

28 «Արբաղան Պատարագամատուցը հայոց», Վիեննա, 1897, էջ 163, «եկեղեցական պատարագամատուցը ալ բազում ինչ պարտական են Բարսղի, որոյ սրբութեան և հանձարոյ արգասիք է գրեթէ բովանդակ պատարագամատուցին, գործունական եկեղեցին կգործածէ: Ասկէ ալ շատ ազօթբ առած թարգմանած են մեր եկեղեցական սրբազան Դարբ, և անով ճոխացուցեր հայկական եկեղեցին: (Ա. Սուֆրեան, Սուրբ Բարսեղ և իր երկամիութիւնը, «Բազմավեպ», 1873, էջ 126):

29 Զ. Դեյցեր, Համառոտ Պատմութիւն հայոց, Վիեննա, 1897, էջ 43:

գերի ու նշանակութեան, դրան զուգահեռ՝ արիտսականութեան վրտանագավորութեան մասին և ապա, որ ամենակարևորն է, հեղինակին համակարծիք 32 եպիսկոպոսներից երեքը, ինչպես պետք է նեթագրել անուններից, հայեր են. Եվսերիոս, Բարսումա, Հովան անունների կողքին կարգում ենք՝ Խուսով, Հուսիկ, Ներսես³⁰:

Ասումնասիրողներից Հացունին գտնում է, որ «յիշեալ Ներսէսը անկասկած մեր ծանօթ կաթողիկոսն է, և ինք միայն կրնայ լինել, որովհետև այդ անունը մեր քով Դ դարու մեջ միակն է, և չենք տեսներ ուրիշ ոչ մէկ աշխարհականի կամ եկեղեցականի վրայ»³¹:

Եթե անգամ մեր պատմագիրները հիշատակած լինեին Ներսես անունով վաղ շրջանի այլ գործիչների ևս, միևնույն է՝ Բարսեղ Կեսարացու վերոնշյալ Թղթում հիշված Ներսեսը պետք էր նույնացնել հայոց կաթողիկոս Ներսես Մեծի հետ, քանի որ ա) IV դարում հայոց եկեղեցու ամենանշանավոր դեմքը Ներսես Մեծն է, որի կաթողիկոսութեան տարիներին անհամեմատ բարձրացել էր եկեղեցու հեղինակությունը նույնազավան ժողովուրդների շրջանում. բ) Փոքրը Հայքի եպիսկոպոսների հետ ունեցած Կեսարացու բազմաթիվ լղթակցութեանները, Բարսեղ Կեսարացու նորամուծությունների ընդօրհնակումը Ներսես Մեծի կողմից Հայաստանում ինքնին վրկայութեան են հայ-հունական եկեղեցական խաղաղ հարաբերութեան: Կեսարացիին միշտ էլ կարևորութեան է տվել հատկապես դավանանքի հարցերում հայոց եկեղեցու հետ համակարծիք լինելուն, նման պարագայում ինքնին հասկանալի է դավանաբանական Թղթի տակ հայոց կաթողիկոսի, ինչպես նաև հայազգի եպիսկոպոսների անունների առկայութեանը:

Ետևելով Կեսարացու և հայոց եպիսկոպոսների առնչության մասին, անհրաժեշտ է հիշել, որ Կեսարիայի հետ առանձնապես սերտ հարաբերակցություն ունեւր Դիոկղետիանոսի օրոք (284—305) Կապադովկիայից առանձնացած Փոքր Հայքը³², որի մայրաքաղաքն էր Մելիտենեն³³:

30 «Творения иже во святых отца нашего Василия Великого, архиепископа Кесарии Каппадокийского», М., 1892, Թուղթ 88 (այսուհետև՝ Թուղթ), հմտ. «Lettres». I, XCII:

31 Վ. Հացունի, Պատրիարքութիւն, արքեպիսկոպոսութիւն և մետրապոլիտոսքին հայոց մէջ, Քրդմավէպոս, 1926, էջ 134:

32 Կ. Գիսեբեղոզ, Հռովմէական Հայաստան և հռովմէական ստորապոլիտենները Դ—Ձ դարերուն, Վիեննա, 1914, էջ 34:

33 «Ժամանակի ընթացքում Մելիտենն քաղաքը մեծացավ և մարդաշատ դար-

Բանասեր Ա. Սուրբյանը գրում է. «Հօն (իմա՝ Փոքր Հայքում— Կ. Մ.) Սուրբ Ներսիսի իշխանությունն շէր հասներ, ալլ հպատակեալ էին սրբոյն Բարսղի, ինչպէս Սատաղ, Սեբաստիա և Գաղթականություն Հայոց (Κολωνία Ἀρμενίας)»³⁴: Եվ իրօք, Կեսարացու Կապադովկյան շրջանի եկեղեցական գործունեության քննությունը ցույց է տալիս, որ Փոքր Հայքը հոգևոր ամենասերտ կապի մեջ է եղել Կեսարիայի եկեղեցու հետ: Սեբաստիան, Սատաղը, Նիկոպոլիսը և Գաղթականություն կամ Գաղութք Հայոց-ը հնում հայտնի էին Չորեքբաղաբան Հայք (Τετραπολις Ἀρμενία) անվամբ: Այս քաղաքների եպիսկոպոսները հունական դպրոցներում կրթված հայեր էին, բայց կրում էին զանազան հունական անուններ³⁵:

Պատմական Հայաստանի վերոնշյալ զավառները՝ կտրված լինելով Մեծ Հայքի մշակութային-կրթական կենտրոններից, ինչ-տուովյամբ կարող էին զրկվել մայրենի լեզվով հաղորդակցվելու հնարավորությունից: Նման պարագայում դրան ինչ-որ շափով կարող էր նպաստել նաև Կեսարիայի հոգևոր թեմը, որի ենթակայության տակ էին նրանք: Սակայն Բարսեղ Կեսարացին ոչ միայն շիրդդիմանում մայրենի լեզվով հաղորդակցվելու մտքի դեմ, այլև, ինչպես երևում է 372 թվականին գրած մի Ռղթից, ջանում է, որ այս կամ այն հայկական զավառի եպիսկոպոս ընտրվի հայերենին քաջահմուտ անձ³⁶: Մարկվարտը այս առիթով նկատում է. «Բոլոր մետրոպոլիտները չէ՛, որ կարող էին նույնքան խելացի գտնվել, որքան որ էր մեծն Բարսեղը, որն ուշադրություն դարձրեց, որպեսզի Փոքր Հայքի եպիսկոպոսական աթոռների համար ընտրվեին հայերենին քաջահմուտ մարդիկ»³⁷:

ձավ: Եվ երբ ամրությունից ներս ալլև տեղ շմնաց բնակվելու (ինչպես ես ասացի, տարածությունը շատ փոքր էր), հաստատվեցին [բաղաբի] շրջակայքում, ուր և եկեղեցիներ, վարչական շենքեր, հրապարակ, խանութներ կառուցեցին, սյունաշարեր, բաղնիքներ, թատրոններ, [անցկացրին] քաղաքային փողոցներ և ինչ որ անհրաժեշտ է մի մեծ քաղաք դարձարելու համար»: («Պրոկոպիոս Կեսարացի», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարսեղյանի, Երևան, 1967, էջ 195, հմմտ. էջ 45):

34 Ա. Սուրբեան, Մեծն Ներսիս Պարթև, «Բաղմավէպ», 1877, էջ 326:

35 Յ. Թորոսեան, Հ. Արսևի Սուրբի, «Բաղմավէպ», 1932, էջ 352:

36 Թուղթ 95 (99), հմմտ. Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, Երևան, 1951, էջ 15—16:

37 Հ. Մարկվարտ, Նշվ. աշխ., էջ 125, հմմտ. PG, t. 32, XCIX (թղթերն առհասարակ՝ էջ 219—1112), ձև. № 996, էջ 120բ, Վ. Թեմուրյան. Գամիրբի հայերը («Հայ աղագրություն և բանահյուսություն», հ. 1, Երևան, 1970, էջ 25):

Ասվածը հաստատվում է նաև Տաշյանի հետևյալ վկայություններով. «Փոքր Հայոց թեմերը՝ խնդիր չկայ՝ յունական էին լիովին, ենթարկուած յոյն մետրապոլիտոսքանց, եւ յունածէս: Եւ դժբախտաբար յընթացս ժամանակաց միշտ ալ չէին գտնուեր այնպիսի հոգեւրից հայրապետներ՝ ինչպէս ս. Բարսեղ մը, որ հոգ կը տանէր հայագէտ կղերականներ գտնելու»³⁸:

Եվ իրոք, Կեսարացին, մի առիթով դատարկեցնելով հայագրի եպիսկոպոսի ուղիղ հավատից շեղվելու փաստը, ավելացնում է. «նրա եպիսկոպոսական տնօրինութեան տակ կան՝ ինձ անուններով հայտնի, բանիմաց, լեզուների գիտակ և իր ժողովրդի մյուս արժանիքներին ծանոթ պատկանելի այրեր»³⁹: Ինչպէս երևում է առկուշված հատվածից, Բարսեղ Կեսարացին հայ եպիսկոպոսների ընտրութեան յուրահատուկ սկզբունք է ունեցել. լեզվական ունակութեան բացի, կարևոր է համարել նաև իր ժողովրդի արժանիքներին ծանոթ լինելը:

IV գարում, եկեղեցա-դավանաբանական վեճերի առկայութեան պայմաններում, Կեսարացու նման մոտեցումը բացառիկ կարևորութեամբ ունի առավելապէս Փոքր Հայքի համար, որը, ասվեց, Մեծ Հայքից կտրված լինելու պատճառով, հոգևոր կյանքին ու անցուղաբժին հաղորդակից էր եպիսկոպոսների միջոցով:

Չնայած Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի խստապահանջութեանը՝ Փոքր Հայքի եպիսկոպոսների մեջ գտնվում են արիստականութեան կողմնակիցներ, որոնցից մեկի բնութագրին առկա է Արևմտաքի եպիսկոպոսներին ուղղված Կեսարացու մի թղթում⁴⁰ (գրված 377 թվականին): Դա Աերաստիայի Եվստատիոս եպիսկոպոսն էր:

Բարսեղը գրում է. «Մի և յայնցանէ՝ որ տրտմովիւն մեծ ածեն զմեւք՝ է Եւստատիոս, ի Աերաստիոյ Փոքրուն Հայոց, որ երբեմն աշակերտեալ Արիոսի, և յորժամ նա ծաղկէր յԱղեքսանդրիա՝ զաբաշար յաղաղս Միածնին ժայթքեալ հայհոյութիւնս, և սա զկնի ընթանալը նորա, և ընդ հաւատարիմ աշակերտս համարեալ էր: Իբրև դարձ արար յերկիր իւր, երանելոյն եպիսկոպոսին Հերմոպինեայ՝

38 3. Տաշևան. Հին Հայաստանի արեւմտյան սահմանը. Փոքր-Հայք եւ Կողմնակիցներ (Աերաստիոս), Վիեննա, 1948, էջ 470:

39 Թուղթ 95, հմմտ. «Lettres», I, XCIX:

40 Թուղթ 255, հմմտ. PG, t. 32, CCLXIII:

որ զշարափառութիւն նորա յանդիմանեաց, ետ զուղիղ հաւատոյ խոստովանութիւն. և յայսպէս ընկալեալ նորա զձեռնադրութիւն, զկնի վախճանի եպիսկոպոսին ընթացաւ ի Կոստանդինուպօլիս առ Եսեբրիոս. ապա անդուստ մերժեալ՝ եկն ի հայրենիս իւր, և լազուցեալ զթիւր միտս իւր՝ մինչև և հաս յեպիսկոպոսութիւն, և անդէն պրեաց նզովս ընդդէմ համագոյակցութեան Որդոյն ի ժողովին Անկիւրիայ: Անտի դարձան ի Սելևկիա և արար անդ զայն՝ զոր դիտեն քաջ ամենեքին. ի Կոստանդինուպօլիս եկաց ի կողմն ՚երեսիովտացն»⁴¹:

Արևմուտքի եպիսկոպոսներին ուղղված Թուղթն ամբողջութեամբ դատափետանք է ընդդեմ արիստականութեան: Կեսարացին համոզիչ փաստարկումներով մատնացուց է անում վերջինիս տրխուր հետեանքները ողջ Արևելքում, մասամբ նաև Փոքր Հայքում: Ինչպես երևում է բերված հատվածից, նրան մեծ մտահոգություն են պատճառել Սեբաստիայի հայազգի եպիսկոպոսի վարքը և ընդհանրապես արիստականության շոշափելի հետքերը Արևելքում, ուստի և Կեսարացին գրում է. «Ինչպիսիք ենք ձեզ հոգ տանել այդ առթիվ և, եթե հաճո է, դրեք Արևելքի բոլոր եկեղեցիներին, որ իսկզապետից իսկ ինչպիսիք ենք ձեզ հոգ տանել այդ առթիվ և, եթե հաճո է, դրեք Արևելքի բոլոր եկեղեցիներին, որ իսկզապետից իսկ ինչպիսիք ենք ձեզ հոգ տանել այդ առթիվ և, եթե հաճո է, դրեք Արևելքի բոլոր եկեղեցիներին, որ իսկզապետից իսկ ինչպիսիք ենք ձեզ հոգ տանել այդ առթիվ և, եթե հաճո է, դրեք Արևելքի բոլոր եկեղեցիներին»⁴²:

Փաստերը վկայում են: որ Կեսարացին իր կապաղովկյան դործունեության ընթացքում երբեք չի դադարել պաշտոնական եկեղեցու դավանանքի հակառակ խոտորումներին, Փոքր Հայքի եպիսկոպոսների շրջանում դավանաբանական վեճերի դեմ պայքարելուց: Ինչպես երևում է բյուզանդական նշանավոր կառավարիչ (կոմս) Տերենտիոսին⁴³ 372 թվականին գրած նրա մի Թղթից՝ երկար ժամանակ թղթակցական կապ է պահպանել վերոնշյալ եվստաթիոս եպիսկոպոսի հետ, ջանալով նրան ուղիղ հավատի բերել: Հայոց շրջանում այդ կապը քննադատում է Նիկոպոլսի Թեոդոտոս եպիս-

⁴¹ «Բարսեղի Վեցօրեան», 1877, էջ 324, Թուղթ 255, հմմտ. PG, t. 32, CCLXIII:

⁴² Թուղթ 255 (263):

⁴³ Տերենտիոսը, որի հետ բարեկամական հարաբերության մեջ էր Կեսարացին, ի պաշտոնն մոտ էր կանգնած հայոց կյանքի անցուղարձին: Վերջինիս օգնությամբ էր, որ Պապը հայոց լազուր դարձավ: (Մ. Խորենացի, էջ 302, հմմտ. Փ. Բուզանդ, էջ 191):

կոպուսը (միաժամանակ Փոքր Հայքի մետրոպոլիտ), որը Բարսեղի հետ պայմանավորվել էր հանդիսվել և զրուցել այդ խնդրի շուրջ։ Բայց քանի որ Բարսեղը Հայաստան գնալու ճանապարհին դարձյալ հանդիպում է Եվստաթիոսին՝ վերջնականապես համոզվելու նրա արիստական լինելու մեջ, ուստի և Թեոդոսոսը հրամարվում է ընդունել Կեսարացուն⁴⁴։

Ինչպես երևում է Կեսարացու մի տեղեկությունից, 17 զարի 70-ական թվականներին Փոքր Հայքում, մասնավորապես Աբբաստիայում, որոշակի արամադորություն է խմորվել ընդդեմ պաշտոնական եկեղեցու։ Դա անհանդուստացրել է մյուս գավառների թեմերին, որոնք և անհրաժեշտ են համարել հավաքվել Նիկոպոլսում՝ խորհրդակցելու։

Բարսեղ Կեսարացիին նպատակահարմար է դտնում նախապես հանդիսվել, իր իսկ արտահայտություններով՝ հարգարժան Եվստաթիոս եպիսկոպոսի հետ⁴⁵։ «Եվ աստժո բարեպաշտությունք, — գրում է

⁴⁴ Թուղթ 95 (99), հմտ. Գ. Զարբհանվան, Պատմության մասնագրություն յոնաց, հովմայեցոց և հարց եկեղեցոյ, Վենետիկ, 1856, էջ 733։

⁴⁵ Եվստաթիոսը և Կեսարացիին սկզբնական շրջանում մտերիմ փոխհարաբերության մեջ են եղել (տե՛ս Բարսեղի Թուղթ 1, 75, հմտ. «Lettres», I, I, LXXIX)։ Նրանց հետագա անհամաձայնությունը զավանդանակապես հողի վրա է առաջացել։ Եվստաթիոսը, բոս Նազիանզացու, ազգությամբ հայ էր։ Նրա, այսպես կոչված, արիստական դործունեությունը ի նկատի ունենալով, վերջինս նրան անվանում է «խուժողուն» հայ»։ (PG, Է. 29, էջ XIII, տե՛ս նաև «Բագմավեպ», 1877, էջ 323, Ա. Ալպոյանյան, նշվ. աշխ., էջ 291, «Հանդէս ամսօրեակ», 1968, էջ 392)։ Թորոսյանը Եվստաթիոս եպիսկոպոսի մասին խոսելիս վկայակոչում է Կեսարացու զանդատները. «գործօն և յաջողակ անձնությունն մք, բայց չեղյուղակ բարբով, ըմբոստ, անհանդարտ, որ ու՛ր երթար՝ յուղում և շփոթութիւն առաջ կրկրէր»։ (Նշվ. աշխ., էջ 352)։ Աբբաստիայի հայազգի եպիսկոպոսի նկատմամբ նման կարծիք, ինչպէս տեսնում ենք, արմատավորվել է հնում։ Բայց Կեսարացու անհանդուստությունն ինքնին վկայում է, որ նա հեղինակավոր անձ է եղել։ Ծնվել է մոտավորապես 310—315 թվականներին, Կապադոկիայում։ Ալեքսանդրիայում ուսանելիս մոտիկից ծանոթացել է Արիտի ուսանողին և արիստականության ամենահայտնի զարգացնողը դարձել Փոքր Հայքում ու Փոքր Ասիայում։ Նրա հետևորդները՝ եվստաթիոսականները, կաղմեցիին կուսակիցների խմբավորում, որոնք անհամեմատ խոտակյաց էին. արձամարհում էին ամուսնությունը, խորշում մսեկն կերակուրներից։ Հայտնի է, որ նրանց այս և նման խտությունները գոտապարտվեցին Գանգրայի հատուկ գումարված ժողովի կողմից («Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմություն», Վաղարշապատ, 1897, էջ 205—207), հմտ. Ա. Ալպոյանյան, նշվ. աշխ., էջ 291, Ե. Գուրեան, Ալպոյան պատմություն, Երուսաղեմ, 1934, էջ 255, ծանոթ. 2-րդ, 3. Տաշեան, Վարդապետություն առաքելոց, Վրեննա, 1896, էջ 64, Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 86, 20—26։

նա, — պարզվեց, որ մենք (իմա՝ Կեսարացին և Եվստաթիոսը — Կ. Մ.) միմյանց հետ տարակարծիք չենք նույնիսկ աննշան խնդիրների մեջ»⁴⁶: Բայց զրույցին մասնակցում է նաև Սեբաստիայի երեց Պիմենը, որը և քննադատում ու հակաձառում է Բարսեղ Կեսարացուն⁴⁷:

Բարսեղը միաժամանակ ջանում է Եվստաթիոսի և իր միջև տարակարծությունների չզրույթյունը հասու դարձնել նաև Սեբաստիայի եպիսկոպոսի հակառակորդներին, դրա համար կամենում է ունենալ գրավոր երաշխիք: Ուստի և Սեբաստիայի հայազգի եպիսկոպոսը Կեսարացու 373 թվականին կազմած «Հավատո հանգանակի» տակ ստորագրում է. «Ես՝ Եվստաթիոս եպիսկոպոսս, կարդալով [սույնը], քեզ՝ Բարսեղիդ, ասացի իմ կարծիքը և համաձայնվեցի վերոգրյալին»⁴⁸: Սակայն հայազգի Թեոդոտոս եպիսկոպոսի հավաստմամբ՝ Եվստաթիոսը, Կեսարացու մոտից հեռանալուց հետո, «իր աշակերտներին հավատացնում էր, որ ինչ վերաբերում է հավատին՝ ոչ մի կետում համակարծիք չէ Կեսարացու հետ»⁴⁹:

Եվ իրոք, այդ ևն վկայում նրա համախոհներից վերոհիշյալ Պիմենի և Սեբաստիայի այլ երեցների բացահայտ պայքարի ելնելու նկրտումները ընդդեմ Բարսեղ Կեսարացու և նրա հովանավորած ուղղադավան եկեղեցու⁵⁰: Սակայն Եվստաթիոսի համար հեշտ չէր Բարսեղի դեմ պայքարելու ամբողջ ծանրությունն իր վրա վերցնել և բացահայտ դուրս գալ նրա դեմ: Իրան խանգարում էին ամենից առաջ Կեսարացու և նրա թեմի Փոքր Հայքի վրա ունեցած հեղինակությունն ու իրավունքը: Վճռական նշանակություն ունեին նաև Սեբաստիայի երեցների մասնակի ներքին անհամաձայնություններն ու սոցիալ-տնտեսական հիմքի վրա առաջացած աշխատավորական հուղումները:

Հակասակ Եվստաթիոսի մտադրությունների՝ Կեսարացին, ինչպես այդ ցույց է տալիս նրա մի Թուղթը, մինչև 373 թվականը, թվում է, բնավ չի կասկածել Սեբաստիայի եպիսկոպոսի նվիրվա-

Եվստաթիոս Սեբաստացու մասին եղած գրականությունը չի սահմանափակվում բերվածով:

46 Թուղթ 95 (99):

47 Նույն տեղում, հմմտ. Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 22:

48 Թուղթ 120, հմմտ. «Lettres», II, CXXV, Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 29,

.ծան. 1:

49 Թուղթ 95 (99):

50 Թուղթ 114, հմմտ. «Lettres», II, CXIX:

ծովյանը՝ ուղղադավան եկեղեցուն: Ավելին, նա ջանացել է Եվստաթիոսի միջոցով խաղաղեցնել Սոֆրոնիոսի զխաւովորությամբ Սեբաստիայում խմորվող անհամաձայնությունները, ուստի և վերջինիս գրում է. «Ազաշում եմ ձերոյ գթասրտությանը և տ պահել նրան (իմա՝ Սոֆրոնիոսին—Կ. Մ.) այդ արատավոր ճանապարհից, և ավելի լավ է սեփական նվիրվածությամբ միասնության հասնել, քան թէ փոխանջատվածությամբ համադործակցել նրանց հետ, ովքեր բաժանման ևն ձգտում»⁵¹:

Սակայն նույն 373 թվականին Եփեսոսի Թեոդոտոս Եպիսկոպոսին գրած Թղթից պարզվում է բոլորովին այլ բան. Կեսարացին իրականում որոշակի պատկերացում է ունեցել Եվստաթիոսի բռնած դիրքի մասին և միտումնավոր լռել է: Դա ինքը՝ Կեսարացին, այսպես և պատճառաբանում. «Իսկ ևս նրա (իմա՝ Եվստաթիոսի—Կ. Մ.) իմ նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին լռեցի ոչ թէ այն բանի համար, որ նա արժանի չէր ուղադրության, այլ նրա համար, որ արդեն լուրը տարածվել էր ամենուր, ուստի և ոչ ոք իմ հաղորդման կարիքը չուներ, որպեսզի գիտենար այդ մարդու մտադրությունը»⁵²:

Բարսեղ Կեսարացու վերոբերյալ Թուղթը, որ խնդրում է Սեբաստիայի Եպիսկոպոսին վերջ տալ ընդհանուր միասնությանը խանդարող երեցների ներքին անհամաձայնություններին, գրված է 372 թվականի վերջերին կամ, ամենաուշը՝ 373 թվականի սկզբներին, համենայն դեպս՝ ավելի վաղ, քան այն Թուղթը, որտեղ Կեսարացին այլևս չի թաքցնում իր և Եվստաթիոսի թշնամական փոխհարաբերությունը: Ավելին, նա նույն Թղթում արդեն խոսում է հայազգի Եպիսկոպոսի հակաձուռությունների, շարախոսությունների մասին՝ ընդգեմ Կեսարիայի թեմի⁵³:

Արդ, ո՞րն է Բարսեղ Կեսարացու նման մոտեցման պատճառը. նա երկար ժամանակ այն համոզմանն է եղել, որ փաստալից թղթթերով, եկեղեցական խնդիրների շուրջ ունեցած հանդիպումներով Սեբաստիայի Եվստաթիոս Եպիսկոպոսին հնարավոր կլինի պահել: Դրանով պետք է բացատրել տասնյակ կարևոր, պարտավորեցնող հանձնարարությունները, բաղմաթիվ էական խնդիրներում նրա հետ

51 նույն տեղում:

52 Թուղթ 125, հմտ. «Lettres», II, CXXX:

53 նույն տեղում:

խորհրդակցելը և այլն: Այդ ուղղութեամբ Բարսեղի վերոբերյալ խնդրանքը վերջին ապարդյուն փորձն է նշված ճանապարհին⁵⁴:

Սակայն Եվստաթիոս Սեբաստացին ոչ միայն շարդարացրեց Բարսեղի հույսերը, այլև տարվելով արիտսական իր հեռուորդներին որոշ հաջողութեամբ՝ բացահայտ թշնամանքով ելավ Կեսարացու և նրա թեմի դեմ: Նա և յուրայինները Կեսարացու գործունեության մասին ամենուր հերքուրանքներ էին տարածում՝ անվանելով նրան կեղծ, նենգ և հանցավոր եկեղեցական խառնակութեան մեջ⁵⁵: Եվստաթիոսը հատկապես Կստյազովկիայի հայաշատ գավառներում և այլուր ստահող լուրեր էր տարածում Կեսարացու անձի, գործի, ուսմունքի ու թեմի հասցեին: Վկայութուններ կան այն մասին, որ Եվստաթիոսը հասնելով Կիլիկիա, ուր արիտսականությունն որոշակի հիմքեր ուներ, Կեսարացու դեմ «ամեն տեսակ շարախոսություններով և զրպարտանքներով լի երկարաշունչ ճատեր է ասում»⁵⁶, որ նա, իբր, «նորամուծություն է անում սուրբ հոգու մասին եղած ուսմունքում»⁵⁷ և այլն:

Այդ ամենով հանդերձ՝ ամենուր չէ, որ Եվստաթիոսը ընդունելություն է գտնում և հաջողության հասնում: Առաջինն իր ծննդավայրում՝ Սեբաստիայում, գտնվում են մարդիկ, որոնք խստագույնըս քննադատում են արիտսականությունն ու նրա բոլոր հետևորդներին: Կեսարացու մի Թղթում կարգում ենք. «Սեբաստիայի բնակիչները համամիտ են մեզ հետ՝ երևան հանելով ժահրոտ կեղևանքը Եվստաթիոսի շարաննեղության և ինձանից խնդրում են եկեղեցական ինչ-որ ձեռնարկ»⁵⁸:

Սեբաստիան Փոքր Հայքի ամենամեծ ու հայաշատ գավառն էր. ինչ-որ խնդրի շուրջ ունեցած նրա դիրքորոշումը վճռական կարող էր լինել Փոքր Հայքի բոլոր գավառների համար: Դա առավելապես որոշակի դարձավ IV դարի 60—70-ական թվականներին, երբ առաջինը Սեբաստիայում սոցիալ-տնտեսական հիմքի վրա ծայր առան աշխատավորական հուզումներ:

Պաշտոնական եկեղեցու դեմ ուղղված սյայքարում Սեբաստիայի աշխատավորական խավի և եվստաթիոսականների շահերը

⁵⁴ «Նա համարձակվեց ոմանց երկրորդ անգամ ձեռնադրել, մի բան, որ ցարդ, թվում է, չի արել հերետիկոսներից և ոչ մեկը»: (Թուղթ 125 (130):

⁵⁵ Հմմտ. «Жития святых, празднуемых православною русскою церковно», М., 1892, էջ 14, հմմտ. Թուղթ 114 (119):

⁵⁶ Թուղթ 125 (130):

⁵⁷ Թուղթ 218 (226):

⁵⁸ Թուղթ 133, հմմտ. «Lettres», II, CXXXVIII:

համբնկնում էին: Բարսեղ Կեսարացու ամբողջ մտավախուլթյունն այն է, որ նշված կետում, այդ երկու ուժերի միանալու դեպքում, ընդհանուր եկեղեցին կտուժեր: Ահա թե ինչու նա ջանում է Եվստաթիոսին ճշմարիտ հավատի բերել առանց վրդովված ամբոխի դիտուլթյան ու միջամտության:

376 թվականին Սամոսատի Եվսեբիոս եպիսկոպոսին դրած մի Քղթում Կեսարացիին արդեն խոսում է «անընդմեջ իրադարձությունների» և Սեբաստիայի հայոց երկու խմբի բաժանվելու մասին⁵⁹: Ինչպես հուշում է նույն Քղթում առկա Բարսեղի մի արտահայտությունը, Սեբաստիայի հայոց վրա մեծ ազդեցություն է ունեցել այլ առիթով հիշված հայազգի Թեոդոտոս եպիսկոպոսը, որի մահից հետո գավառի ներքին հակասությունները պաշտոնական եկեղեցու հեմ ուղղված բացահայտ պայքարի բնույթ են ստանում⁶⁰:

15 դարի 70-ական թվականներին, հակառակ եկեղեցու պաշտոնական անձանց սպասումների, գոյություն ունեցող բարձր դրժ-գոհությունները դումարվում են «անհավատների շարժում» անվանման տակ, և սկսվում է եկեղեցիների անկման մի աննախադեպ ժամանակաշրջան: Ահա թե ինչպես է բնութագրվում այդ Կեսարացու կողմից. «Հափշտակված են ուրախությունը և հոգեխնդությունը, ռդբի են վերածվել մեր տոները, փակված են աղոթատները, եկեղեցու բնում չի կատարվում հոգևոր արարողություն. վերացան բրիտանական ժողովները, ուսուցիչները չեն տնօրինում, չկան փրկարար խրատներ, ո՛չ հանդեսներ, ո՛չ երեկոյան ժամասացություն. ո՛չ այն երանելի ուրախությունը, որին արարողական հավարույթներում հանձնվում են աստծուն հավատացող հոգիները»⁶¹: Քղթում ամենայն մանրամասնությամբ խոսվում է «Արեևրքի խեղձություն», «հովիվների քմամն», «հոտի ցրման» և այլնի մասին: Ինչպես հուշում է Սեբաստիայի հայոց երկու մասի բաժանվելու և պաշտոնական եկեղեցու դեմ պայքարի ելնելու Կեսարացու վերաբերյալ Քուղթը, վկայակոչված հատվածում և այլուր հիմնականում խոսվում է Սեբաստիայում ծավալված շարժումների ավերիչ հետևանքների և շարժման մասնակիցների նոր սպառնալիքների մասին: Դրա ծանրությունն ամենից հստակ պատկերացնում է Կեսա-

⁵⁹ Քուղթ 229 (232):

⁶⁰ Խոսելով Սեբաստիայի որոշ մասի բացահայտ հակաբարսեղյան դիրքորոշման մասին, Կեսարացիին ավելացնում է. «որովհետև երանելի Թեոդոտոսը այլևս չկա»: (Նույն տեղում):

⁶¹ Քուղթ 235 (243), համա. Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 36:

րացին, ուստի և ինքն էլ օգնություն է հայցում իտալական և գաղղիական եպիսկոպոսներից⁶²:

Բարսեղ Կեսարացին այլոց օգնությանը դիմելով հանդերձ՝ Սեբաստիայի շարժումների դեմ առաջինը ինքն է պայքարի ելնում: Նա Փոքր Հայքի այլ գավառների եկեղեցիներին, նշանավոր երեցյաներին հղած թղթերով ջանում է մեկնաբանել շարժման կործանարար հետեանքները, աշխատելով հնարավոր միջոցներով խոչընդոտել շարժումների ընդարձակումները⁶³, մանավանդ երբ, անհավատների իշխանության տակ են մկրտությունը, հանգուցյալների հուղարկավորումը, այցելությունը հիվանդներին, վշտացյալների հանգրստացումը, օգնությունը կեղեքվածներին, բոլոր տեսակի նպաստները և այլն⁶⁴:

Հետաքրքիր մանրամասներ են պահպանվել Բարսեղ Կեսարացու թղթերում Սեբաստիայի հայոց սոցիալական շարժումների, նըրանց որոշակի հաջողության և գաղափարախոսության մասին⁶⁵:

Փոքր Հայքի եպիսկոպոսներին գրած Կեսարացու թղթերը կամ հայոց եկեղեցական շրջաններին առնչվող խնդիրներ պարունակող այլոց ուղղված թղթակցությունները շատ հաճախ կարևոր տեղեկություններ են բովանդակում ոչ միայն քննվող, այլև հարակից հարցերի շուրջ, Այսպես, օրինակ, 372 թվականին Տերենտիոս կուսակալին գրած Թուղթը կարևոր է նաև այլ առումով: Նրանում ասված է. «Նվ հիմա, հանգամանքների թելադրանքով հասնելով մինչև Սատաղ, աստծո բարեհաճությամբ, թվում է, կարգավորեցի ամբողջ մնացյալը, հաշտեցրի հայոց եպիսկոպոսներին և զրուցեցի նրանց հետ: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ Հայաստանում այսպիսի անտարբերությամբ խախտվում են օրենքները, ապա ես նրանց հանձնեցի կանոններ՝ ըստ հարկի գործի դնելու իրենց հոգացողությունը»⁶⁶:

Այս տեղեկությամբ միաժամանակ հաստատվում է այն միտքը, թե հայոց եկեղեցին, IV դարից սկսած՝ օգտագործել է Բարսեղ

62 Նույն տեղում:

63 Թուղթ 230 (238), 232 (240):

64 Թուղթ 235 (243), հմմտ. Լ. Խաչիկյան, նշվ. աշն., էջ 37:

65 Թուղթ 236 (244), 242 (250), 257 (265): Կեսարացու որոշ թղթեր սլատմական Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ու բաղաբանական իրավիճակի ուսումնասիրման համար կարևոր սկզբնաղբյուր են և, ինչպես հայտնի է, դրանց մի կարևոր մասը Լ. Խաչիկյանը արդեն գիտական շրջանառության մեջ է դրել:

66 Թուղթ 95 (99), հմմտ. «Կանոնագիրք հայոց», Բ, էջ LXXXII, ծան. 1:

Կեսարացու կանոնները: Ուսումնասիրողներից Հ. Ոսկյանը նկատում է. «Հայաստանի վանքերու մէջ ընդունելութիւն կը գտնեն ս. Սահակի, բայց մանաւանդ ս. Բարսեղի վանականներու համար յօրինած կանոնները—հարկաւ որոշ փոփոխութիւններով՝ վանքին նպատակէն ազդուած ու առաջնորդուած»⁶⁷: Սեանի անապատականների վարք-վարվեցողութեան մեջ Կեսարացու կանոնական դրվածքի պատճենումն է տեսնում Հ. Շահխաթունեանը⁶⁸: Արդ, հետագոտողների այսօրինակ պնդումների համար կա՞ն մատենագրական հավաստի տեղեկություններ: Իրականում Բարսեղի ուղղակի վկայությունից բացի, խնդրիս շուրջ ուշադրութեան արժանի մասնակի հաղորդումներ կան նաև հայ մատենագիրների վկայություններում: Ասողիկը գրառել է Բարսեղի կանոնները հայոց միջավայրում, վանական հաստատություններում կիրառելու հետեյալ փաստը. «յոր միացեալ ժողովեցան եղբարց բազմութիւն, կանոնադրութեան սահմանաւ սրբոյն Բարսղի»⁶⁹: Նույնաբնույթ փաստարկումներ կան ներսէս Շնորհալու, Առաքել Սյունեցու և այլոց գործերում⁷⁰:

Կեսարացիին իր կապադովկյան գործունեութեան շրջանում մըշտապէս առնչակցվում է Փոքր Հայքի շրջաններում կամ դրանցից դուրս քննվող ամենաբազմազան հոգևոր խնդիրներին: Չնայած վատառողջ վիճակին, նա բազմիցս անցնում է հայոց ձյունաշատ լեռնաշխարհը, տեղում քննում այս կամ այն հարցը ու անում վերջնական եզրահանգում: Այս իմաստով հետաքրքիր է հայոց վերաբերող նրա մի Ռուզմը՝ դրված 375 թվականին, ուր կարդում ենք. «Սպասեցեք ինձ, եթե աստված բարեհաճի, գալով ձեզ մոտ, խորհուրդ կտամ այն ամենի շուրջ, ինչի մասին հնարավոր չէր գրել...

67 Հ. Ոսկեան. *Վասպուրական-Վանի վանքերը*, մաս Գ, Վիեննա, 1947, էջ 1020:

68 Յ. Շահխաթունեանց, *Ստորոգութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ դատապետ Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 217—218. հմմտ. «Արարատ», 1906, էջ 608:*

69 «Ստեփանոսի Տարսնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 160, հմմտ. 173—174, 181, նաև Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 1020: Ակիւնյանը Սահակին վերադրվող կանոնները քննելիս միաժամանակ դրանց համար շմիջնորդավրված աղբյուր է դիտում Բարսեղ Կեսարացու առանձին կանոնները (Ն. Ակիւնեան, Ս. Սահակի վերադրուած կանոնները, «Հանդէս ամսօրեայ», 1947, էջ 10—11):

70 «Բնդհարական իուզմը սրբոյն ներսիսի Շնորհալուց», *Յերուսաղէմ, 1871, էջ 26, 36:*

Թղթում և, բոլոր դեպքերում, կաշխատեմ ձեզ պարգևել անհրաժեշտ խաղաղություն»⁷¹: Կամ՝ Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսին՝ հասցեագրած Թղթում, որին կանդրադառնանք այլ առիթով, հիշեցնում է, որ ոմն Փավստոսի ձեռնադրության հետ կապված հայտնի անասործության համար իրեն չհարախոսեն, որ դրանում ինքը հանցանք չունի⁷²:

Փոքր Հայքը հոգևոր խոշոր կենտրոններից հեռու և կտրված լինելու պատճառով փաստորեն անհաղորդ էր արտաքին շատ անցուղարձերի: 375 թվականին հայերին գրած թղթերից մեկում Կեսարացին գրում է. «Դուք ապրելով Հայքի ծայրամասում, բնականաբար, անհաղորդ եք բազում շարժումների: Իսկ մենք, որ մասնակից ենք գործի բուն իսկ ընթացքին, բազում տեղերից ամեն օր լուրեր ենք ստանում կործանվող եկեղեցիների մասին ու մեծ անհանգստություն ապրում՝ չլինի թե ընդհանուր թշնամին, նախանձելով հարատև խաղաղությանը, ձեր կողմերում էլ իր որոմի հունդերը ցանի, և Հայաստանի մի մասը թշնամիների ձեռքն անցնի»⁷³:

Կեսարացու մատենագրական ժառանգության մեջ պատկանելի մաս են կազմում Հայաստանին և հայերին վերաբերող թղթերը՝ գրված հիմնականում նրա կապագովկյան գործունեության շրջանում, նրանցում, ասվեց, կան Մեծ ու Փոքր Հայքի սոցիալ-տնտեսական իրավիճակին, իրավական-քաղաքական ընդունված նորմերին և մանավանդ եկեղեցական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ տեղեկություններ:

Այս իմաստով կարևոր է 373 թվականին Փոքր Հայքի գավառներից մեկի՝ Նիկոպոլսի, Թեոդոտոս եպիսկոպոսին գրած Բարսեղի Թղթի հետևյալ հաղորդումը. «Ի դեպ, Փավստոսը եկավ ինձ մոտ Պայի թղթով և կամենում էր եպիսկոպոս ձեռնադրվել: Բայց երբ ես քո և մյուս եպիսկոպոսների բարեպաշտության երաշխիք պահանջեցի՝ արհամարհեց ինձ, զնաց Անթիմոսի մոտ և, առանց ինձ տեղյակ պահելու, ձեռնադրվեց նրանից»⁷⁴:

71 Թուղթ 219, հմմտ. PG, t. 32, CCXVII:

72 Թուղթ 115, հմմտ. «Lettres», II, CXX: IV դարից սկսած՝ դավանաբանական վեճեր մասամբ էլ պայմանավորված էին հայ հոգևոր դասի հունական և ասորական թևերի համատեղ գոյությունը: Հունականների դեմ տարվող պայքարը հասկանալի պատճառով առաջին հերթին պիտի ուղղվեր կեսարացու թևի դեմ:

73 Թուղթ 220, հմմտ. PG, t. 32, CCXXVIII:

74 Թուղթ 116, հմմտ. «Lettres», II, CXXI:

Հայագետ Ա. Սուրբյանը մի առիթով նկատել է. «Իսկ այն անձն ուսկից թուղթ ունէր Փաւստոս, Սուրբ Բարսղի թուղթն կը կոչէ զնա պապա (ππάππ), որ նոյնանիչ է մեր Հայր բառին»⁷⁵: Ի հաստատումն ասվածի՝ ուսումնասիրողը վկայակոչում է Փավստոս Բուղանդի հաղորդումը հայոց մէջ հնում հայր-մարդպետների գոյության մասին⁷⁶:

Բայց Սուրբյանի պատճառաբանումը (ππάππ-հայր), ինչպես կտեսնենք, համոզիչ չէ: Բանասեր Թորոսյանն այս կտպակցութեամբ գրում է. «Ոմանք այդ Աջπա բառը յատուկ անուն առնելով՝ կը հասկնան Պապ իշխան մը, և ո՞վ կրնար ըլլալ այդ անձը՝ եթէ ո՛չ մեր Արշակ Բ-ի որդին և գահաժառանգը, որ իրօք այդ տարիներուն (367—369) Բիւղանդական արքունիքը սպաստանած կամ պատանդ տարուած էր, և 369—370-ին Հայաստան կը դառնայ արքունի գահը բարձրանալու Տերենտիոս դուքսին ձեռքով»⁷⁷: Պահպանվել է, բարեբախտաբար, Կեսարացու վերոբերյալ տեղեկութիւնը հաստատող Ասողիկի հետևյալ գրառումը. «Իսկ Պապ՝ կաթողիկոս կացոյց Հայոց զՇահակ ոմն ի գաւառէ Ապահոնեաց առանց հրամանի մեարապօլտին Կեսարու...»⁷⁸: Դատելով կաթողիկոսացու ընտրելու գործող իրավանորմերով՝ նշված Պապը առնվազն թագավոր պետք է լինի: Կեսարացու հաղորդման հետ նույնական է նաև հտուվածի մյուս կետը. ձեռնադրութիւնը իրացվել է առանց Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի գիտութեան, մի բան, որ գոնէ հայոց շրջանների համար բացառւում էր:

Որ Բարսեղ Կեսարացու Թղթում հիշատակված անձը նույն Պապ թագավորն է, հստակ երևում է նաև Պապի գահակալութեան տարիներին Հայաստանում ծավալած իր իսկ գործունեութիւնից և հայոց եկեղեցու գործերին նպատակադիր միջամտութեան փաստից⁷⁹:

Արդ, ասվածը հավանական ընդունելու զեպքում հետևում է, որ հայոց Պապ թագավորը եպիսկոպոսութեան իր նախընտրած թեկնածուն է առաջադրում, որը և Կեսարացու կողմից մերժվում է: Հենց դա էլ, ի միջի այլոց, լավագոյն ապացույցն է այն բանի, որ Բարսեղը հայոց համար եպիսկոպոս ընտրելու իր որոշակի սկրպ-

75 Ա. Սուրբյան, նշվ. աշխ., էջ 331:

76 Նույն տեղում:

77 Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 353:

78 Ասողիկ, էջ 73:

79 Ի. ԱՃՕՈԱ, նշվ. աշխ., էջ 362—364:

բունքն ու պահանջներն ուներ, որոնց շքավարարելու դեպքում կարող էր անտեսվել թագավորի միջամտութիւնն անգամ:

Ինդրին առնչվում է Բարսեղի 373 թվականին գրած Թուղթը՝ ուղղված Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսին: Թղթում կարդում ենք. «Կամենում եմ ձերդ բարեպաշտութեանը հաղորդել, որ Պապի կողմից ուղարկված Փավստոսը Անթիմոս եղբոր կողմից ձեռնադրվել է եպիսկոպոս՝ պատվական Կյուրեղ եղբոր փոխարեն, առանց իմ համաձայնութեան, որից և Հայաստանը լցվեց խռովութեամբ»⁸⁰:

Հայտնի է, որ Պապը սկզբունքորեն դեմ էր հայոց հայրապետի՝ Ներսեսի, գործունեութեանը, և հակասութիւնների արդունքը եղավ կաթողիկոսի ողբերգական մահը⁸¹: Տեղեկութիւն կա այն մասին, որ Ներսեսի սպանութիւնը խորապես վշտացրել է Բարսեղ Կեսարացուն: Ազդվելով կատարվածից՝ նա երգվել է այլևս եպիսկոպոս չձեռնադրել հայոց եկեղեցու համար. «Զոր լուեալ Բարսղի մեծի զսպանումն սրբոյն Ներսէսի անէծ զօրիդծն Պապ և զիրսն ամենայն և երգուաւ այլ ոչ ձեռնադրել եպիսկոպոս Հայոց»⁸²:

Ներսեսի կենդանութեան օրոք Պապը իրոք չէր կարող հասնել իր ծրագրի իրացմանը: Դա հատկապես երևում է Պապի, այնպես կոչված, այն ավերածութիւններին, որ նա կատարեց Ներսեսի մահվանից հետո. «սկսաւ հրաման տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրենոցսն և զորբանոցսն՝ զոր շինեալ էր Ներսէս ի դաւառս, և աւերել զկուսաստանսն»⁸³: Վերևում վկայակոչված Թղթի՝ «որից և Հայաստանը լցվեց խռովութեամբ» միտքը վերաբերում է Պապի կամակատար եպիսկոպոսների քամահաձ գործունեութեանը, որոնք թագավորի խորհրդով պայքարում էին Ներսեսի նշված ձեռնարկումների և Կեսարացու թեմի դեմ:

⁸⁰ Թուղթ 115 (120): Սույն տեղեկութեան «առանց իմ համաձայնութեան» միտքը հաստատվում է նաև Խորենացու նույնական վկայութեամբ՝ «առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու»: (Մ. Խորենացի, էջ 306): Ի դեպ, Մ. Զամյաւը ենթադրում է, որ այս Փավստոսը նույն մատենադիր Բուզանդն է: («Պատմութիւն հայոց», հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 447—448): Նման ենթադրութիւնն անհավանական է թվում զոնև ժամանակաշրջանի առումով (Կեսարացիին IV դարի մատենագիր է, մինչդեռ Բուզանդը, ապացուցված է, V դարի): Ավգերյանը ևս Բարսեղին և Բուզանդին ժամանակակիցներ է համարում: («Եկեղեցու պատմութեանը վերաբերող և վկայարանութիւն սրբոց», Վենետիկ, 1814, էջ 368):

⁸¹ Տե՛ս Փ. Բուզանդ, էջ 221:

⁸² «Մանր ժամանակագրութիւններ», հ. II, էջ 324:

⁸³ Փ. Բուզանդ, էջ 232:

Բարսեղ Կեսարացու Թղթում, որտեղ խոսվում է Փավստոսի ձեռնադրման մասին, թեև ոչ մի ակնարկ չկա մերժման պատճառի շուրջ. բայց հավանական է կարծել, թե նա թագավորի հավանությունն արժանացած անձնավորություն էր, և, հասկանալի է, հազիվ թե կարողանար բավարարել Բարսեղի քննությունը, առավել ևս, երբ Պապը նրա հետ հույսեր էր կապում: Իրականում ներքին պայքար է եղել հայոց Պապ թագավորի և Կեսարիայի թեմի առաջնորդ Բարսեղ Կեսարացու միջև՝ հայկական հողի վրա, հայոց եկեղեցուն և պետականությանն աննշվող խնդիրների շուրջ: Այդ պայքարում Պապը կարող էր արդյունքի հասնել Կեսարիայի վերակացությունից տակ գտնվող հայոց եկեղեցին: Բարսեղ Կեսարացու դեմ հանելու դեպքում միայն: Ինչպես երևում է հիշյալ Թղթից, Պապը, հանդիպելով Բարսեղի դիմադրությունը, դիմում է ծայրահեղ միջոցների, որից և Հայաստանում, մասնավորապես Փոքր Հայքի եկեղեցիներում և այլար շփոթ ու խռովություն է առաջանում:

Հայոց եպիսկոպոսներին, նաև զանազան այլ անձանց ուղղված թղթերում պարզորոշ նկատվում է Բարսեղի ջանադիր աշխատանքը, մտահոգությունը եկեղեցական խաղաղ հարաբերությունների հաստատման գործում և հատկապես հայոց եկեղեցու հետ կապված հարցերի լավատեղյակությունը:

Երբեմն, այս կամ այն խճճված խնդրի առիթով, Կեսարացիին դժվարացել է գտնել վերջնական ու ճիշտ լուծում, տալ, այսպես ասած, անշահախնդիր ու անկողմնակալ խորհուրդ: Նման պարագաներում առավել մեծ է եղել Բարսեղի մտահոգությունը, Փոքր Հայքի եպիսկոպոսները հետ խորհրդակցելու անհրաժեշտությունը: Եվ երբեմն, ինչպես պետք է եզրակացնել առանձին թղթերից, նա խորհրդակցել է նույնիսկ հայոց կյանքի ու մշակույթի հետ շարունակող անձանց հետ՝ հարցի ճիշտ լուծումը գտնելու ազնիվ նպատակադրումով: Ահա թե ինչու Բարսեղը, իրեն նմանեցնելով այնպիսի ծովում խարխափող նավորդի, հեռու ավերում ցուցցող ջահի հետ է համեմատում Սամոսատի եվսեբիոս եպիսկոպոսից ստացած Թուղթը⁸⁴:

Այսպիսով, Կեսարիայի հոգևոր իրավասությունն տակ էին գրտնրվում Փոքր Հայքի Սեբաստիա, Սատաղ, Նիկոպոլիս և Գաղուփք հայոց զավառները, որոնց հետ աննշվող յուրաքանչյուր խնդիր

⁸⁴ Թուղթ 96, հմմտ. «Lettres», I, C:

IV դարի 70—80-ական թվականներին անկարող էր վճռվել առանց Բարսեղ Կեսարացու անմիջական միջամտության:

Սակայն հիմքեր կան կարծելու, որ Կեսարացին մտահոգվել է ոչ միայն իր թեմի ենթակայության զավառներին վերաբերող հարցերով, այլ առհասարակ նույնազավան ժողովուրդների եկեղեցական խնդիրներով: Մի զրշագիր վկայության համաձայն՝ «Մեծն և առաջինն ամենայն եպիսկոպոսաց սուրբն Բասիլիոս ոչ մերձակաիցն միայն, այլև հեռուորաց իւրոյ վիճակին խնամ տանէ: ուղղութեան»⁸⁵: Մի շարք թղթերում նա նույնպիսի մտահոգութեամբ է խոսում ժամանակի ողջ Արևելքի, այդ թվում նաև Մեծ Հայքի հայության, եպիսկոպոսների բազմազան հոգսերի, մտածութեան ու սպառնացող արիտական վտանգի մասին, ինչպիսի հոգացավութեամբ գործում էր հօգուտ Կապադովկիայի թեմի⁸⁶:

Եկեղեցական պատմության շատ նշանավոր ուսումնասիրողներ զանազան իրարամերժ կարծիքներ են հայտնել հայ վանականության ծագման ու վերջնական ձևավորման մասին⁸⁷: Փոքր Հայքին վերաբերող Բարսեղ Կեսարացու թղթերն իրենց հավաստի մանրամասներով հնարավորություն են ընձեռում ասելու. «Աւելորդ է ումանց պնդելն թէ Հայք ոչ ընդունէին ղձեռնադրութիւն ի Կեսարիոյ, այսինքն Հայ կաթողիկոսունք. այլ յայտնի նոյն իսկ մերքս կրօնն թէ «ի Լուսատրչէն մինչև ի Սահակ հայրապետն՝ ի Կեսարիայ ձեռնադրէին կաթողիկոսունք. յորժամ եղև ժողով Քաղկեդոնի՝ բաժանեցան Հայք ի Յունաց»⁸⁸: Եվ, ինչպես ցույց են տալիս փաստերը, հայոց եկեղեցական անվանի անձիք ոչ միայն դաստիարակվել ու կրթվել են Կեսարիայում, այլև վերջինս իր հոգևոր ու մշակութային զարգացածությամբ դարեր շարունակ բախտորոշ նշանակություն է ունեցել բուն Հայքի և հայաշատ կենտրոնների համար:

Հայոց՝ Կեսարիայի թեմի հետ ունեցած տևական հարաբերությունների մեջ, հարկավ, քիչ չեն պայծառ էջերը, բայց, այդուամենայնիվ, ամենաարդյունաշատը Բարսեղ Կեսարացու գործունեությունը տարիներն են: Բարբախտաբար, Բարսեղի գործունեությունը, գրական վաստակն ու անձնավորությունը, բացառությամբ մի երկու առիթով ծնված անհարթությունների, ժամանակին ճիշտ են ընկալվել և ըստ ամենայնի՝ գնահատվել հայոց միջավայրում: Քիչ

85 Ձևո. N 4150, էջ 66ա:

86 Թուղթ 66 (70), 95 (99):

87 Հ. Թովմյան, Մաղումն հայ վանականության, էջ 360—361:

88 Ա. Աուրյան, նշվ. աշխ., էջ 322:

չեն այս կամ այն գործի թարգմանության կամ ընդօրինակման առիթով գրառված հիշատակագրությունները, որոնցում Բարսեղ Կեսարացին (և առհասարակ «երեք մեծ կապաղովկացիները») համեմատվում-հիշվում է հայոց համար սրբացած անունների հետ հավասար: Ահավասիկ մեկ օրինակ. Նոր-Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի հավաքածոյի գրչագրերից մեկում հիշատակագրողը գրում է. «Ջոր մաղթեմ Աստուծոյ զի տացէ զսա սրարազայց [ամօք] և խաղաղական կենօք ընդ երկայն աուրս լուսատու և համառօտիչ բանին նուաղեալս սեռի հայկեան և Տանս Թորգոմայ, և յես ելից աստեացս՝ մասնակից արասցէ սրբոց լուսաւորչացն և աստուածաբան վարդապետացն Բարսղի, Աստուածաբանի, Նիսեայ և սրբոյն Մեսրօպայ»⁸⁹:

Յուրաքանչյուր պատեհ առիթով Կեսարացու կյանքի ու գործունեության այս կամ այն դրվագը, «ճշմարիտ հավատի համար» կրած տառապանքը համեմատվում-համադրվում է հայազգի որևէ ոչ աննշան գործչի համապատասխան գործունեության հետ⁹⁰, էլ շենք խոսում «երեք մեծ կապաղովկացիներին» անձի ու գործի հաճախակի սեղանացման, ազգային երանգավորման բազմաթիվ փորձերի մասին: Կեսարացու մատենագրական վաստակին ղուդակչիո հայ իրականության մեջ բարձր է դնահատվել նաև նրա գործունեությունը լայն առումով, այդ թվում, ինչ խոսք, հատկապես ի սեր ուղիղ դավանանքի մղած համառ ու հաղթական պայքարի՝ հայոց եկեղեցու համար ունեցած կարևորությունը: Առկա տեղեկությունների համաձայն՝ այստեղ էր, հատկապես, նա գործի դնում հին մատենագրության (առավելապես ս. Գրոց) իր բացասիկ իմացությունն ու համոզմունքով դավանելու բնատուր ընդունակությունը: Զեռագրական հիմնավոր ու իրազեկ պատումներ կան նաև այս առնչակցությունը: Միջնադարյան այդպիսի հիշատակագրության մի հատվածում ասված է. «Մեծ քահանայապետս և աստուածապետաց հոգիս հայրս մեր Բասիլիոս ըստ ժամանակի և ըստ պիտոյից առնէր պարգապետութիւն և վասն զի ետես ի հօտն իւր զժանգախտ ընչեղութեան ճարակեալ. ջանալր լուծանել զայն զանազան վարդապետութեամբ...»⁹¹:

89 «Յուդակ ձեռագրաց Նոր-Ջուղայի ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի», հ. Բ, Կաղմեց Լ. Միլասեան, Վիեննա, 1972, էջ 177, հմտ. Ղ. Ալիշան, Միտական, Վենետիկ, 1893, էջ 133:

90 Նույն տեղում:

91 Զեռ. N° 6362, էջ 57ր:

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԸ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՄԱՍԻՆ

Հայ գասական և հետագա շրջանի մատենագիրներն ու եկեղեցական նշանավոր գործիչները, թեև ոչ ընդարձակ, բայց հետաքրքիր տեղեկություններ են պահպանել Բարսեղ Կեսարացու կյանքի, վանական գործունեության և այլնի մասին: Հաղորդումների ոչ ընդարձակ լինելը հետևանք է այն բանի, որ մեր մատենագիրները նրան հիշատակում են այս կամ այն առիթով և ոչ թե հատուկ նպատակադրմամբ:

Վ դարի հայ մատենագիրներից Փավստոս Բուզանդն է համեմատաբար ընդարձակ տեղեկություններ գրառել Բարսեղի մասին: Նրա Պատմության մեջ Կեսարացու անունը առաջին անգամ հիշվում է մեղ արդեն ծանոթ հատվածում. «Եւ իբրև եմուտ Եւսեբիոս արքեպիսկոպոսապետն և երիցունքն ընդ նմա, և երիցապետ մի սուրբ, որում անուն Բարսիղիոս կոչէր, թռեաւ աղանին ի սեղանոյն և հանգեաւ ի վերայ նորա, և յամեսց բազում ժամս: Իսկ իբրև եհաւ ժամ՝ յորժամ կամեցան զներսէս ձեռնադրել, վերացաւ աղանին ի սրբոյն Բարսեղէ, և նստաւ ի վերայ զլիւոյն ներսէսի»⁹²:

Պատմիչին, անշուշտ, հայտնի է եղել Բարսեղ Կեսարացու անմիջական մասնակցությունը հայազգի եպիսկոպոսների ընտրությանն ու հայոց եկեղեցու զանազան խնդիրներին, այլ կերպ՝ Փավստոս Բուզանդը ծանոթ է Բարսեղի վանական գործունեությանն ու նրա անվան շուրջ ստեղծված վիպական, առասպելախառը պատմություններին: Թերևս զրանով պետք է բացատրել այն փաստը, որ պատմագիրը երբեմն վերապատմում է Բարսեղի կենսագրության առանձին մանրամասներ, երբեմն էլ նույնիսկ նրա նկարագրի նմանությունամբ շարադրում ներսես Մեծի կյանքի ու գործունեության առանձին դրվագներ⁹³: Կեսարիացի թեմի արքեպիսկոպոսի մասին ասված «մանավանդ վասն սրբութեան վարուցն նորա»⁹⁴ պատմիչի

⁹² Փ. Բուզանդ, էջ 82: «Բարսեղ» անունը կրչագրերում հանդիպում է զրույցյան առնարկադասյան ձևերով՝ Բասիլ (Բասիղ), Բասիլիոս, Բարսիլոս, Բասելիոս, Վասիլ, Բասիլիոս, Բարսեղ և այլն: Ամենատարածվածն ու հնագույնը, ինչպես նաև ճիշտը, «Վարթի» մեկ ծանոթ հնագույն՝ № 948, գրչագրում հանդիպող «Բարսեղ» ձևն է, որին և հետևում ենք:

⁹³ Հմմտ. P. Peeters, Un miracle des SS. Serge et Théodore et la Vie de S. Basile dans Fauste de Byzance («Analecta Bollandiana», t. XXXIX, 1921 pp. 65-88).

⁹⁴ Փ. Բուզանդ, էջ 104:

արտահայտությունը և, հատկապես, Բարսեղ Կեսարացու մեծ ճանաչումը հիմք են տալիս ենթադրելու, որ IV դարից ի վեր, Մեծ Հայքում լայն տարածում են ունեցել Կեսարացու անվան հետ կապված առասպելաբնույթ զրույցները:

Բուզանդի մեկ այլ հաղորդումը վերաբերում է Կեսարացու առաքինությունների, մեծ պատրաստվածությունն ու գիտական հրատարակության վերհանմանը. «Թսկ նա պանծն կարի ի խոնարհութեան ունենր,— գրում է Բուզանդը Կեսարացու մասին,— և անարժան համարէր, թէպէտ և ամենայն որ վասն գիտութեան արուեստին կարօտէր առ նա գալ. մանաւանդ արտաքինքն իսկ ճարտարապետք փիլիսոփայիցն առ նա ընթանային վասն իրեանց արուեստին: Այլ նա պրազումս դարձուցանէր ի պէսպէս չիրաքանչիր կարծեացն խոտորութենէ ի ճշմարտութեանն հաւատս, երկրպագուս Քրիստոսի անթիւս մարդկան կացուցանէր: Եւ ամենայն երկիր սկսան ի նա նայել, որպէս թէ անդուստ յերկնից ի վերուստ իջեալ իցէ. տնչափ՝ որպէս գի թէ կամիցի որ պատմել, ոչ կարասցէ»⁹⁵: Այսօրինակ վերկայությունները հնարավորություն են ընձևում պատկերացում կազմելու Կապադովկիայից դուրս Կեսարացու ունեցած հեղինակությունն ու համբավի մասին: Վկայակոչված հատվածը միաժամանակ խոսում է այն մասին, որ շատերը գիտական հիմնություն ձևեր բերելու, փիլիսոփայության մեջ կատարելագործվելու, ճշմարիտ հավատք պատկերացնելու և բազմաթիվ այլ խնդիրներով դիմել են Բարսեղին, իսկ նա իրեն շատ խոնարհ է պահել և անձն իր անարժան համարել:

Ուսումնասիրողներից ոմանք անդրադարձել են Բարսեղ Կեսարացու և Եվսեբիոս Եպիսկոպոսի համատեղ գործունեության ու փոխհարաբերության այլևայլ կողմերի, մասամբ օգտագործելով Բուզանդի Պատմության ընձևած ավյալները⁹⁶: Եվսեբիոսի և Բարսեղի փոխհարաբերությունն արտացոլող գլխում Բուզանդը գրում է. «Թսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ ետես զգարմանալիսն զնախ իջանել զազունոչն՝ որ եկն ի յերկնից, և հանգչել նախ յերիցապետն Կեսարու սուրբն Բարսիլիոս, ի դժկամակ միտս լինէր

⁹⁵ Նույն տեղում, էջ 104—105:

⁹⁶ Տիրայր վարդապետի բնությունից երևում է, որ ծանոթ է Կեսարացու և Եվսեբիոսի փոխհարաբերությանը Բուզանդի տված բնութագրին: (Տիրայր վարդապետ, Եկեղեցու հայերը, ս. Բարսեղ (Երևան), Կ. Պոլիս, 1905, էջ 911):

ընդ նմա. և տեսանէր զնա իբրև զիւր հակառակորդ և զթշնամի: Քանզի հոչակ հարեալ էր ընդ երկիր ամենայն»⁹⁷: Պատմիչն այստեղ բերում է միմյանց լրացնող երկու հաղորդում: Մեկ այն, որ Եվսեբիոս եպիսկոպոսը թշնամաբար էր տրամադրվել Բարսեղի դեմ. որով այսօր հնարավոր է դառնում ճշտել վերջինիս Կեսարիայից հեռանալու պատճառն ու հարակից հանգամանքները և երկրորդ՝ թշնամանալու բուն հիմքը՝ Բարսեղի հոչակի «ընդ երկիր ամենայն» տարածվելը:

Ի հաստատումն վերջին իրողության՝ Փափստոս Բուզանդը վերկայում է մեկ այլ կարևոր մանրամաս. հունաց Վաղես կայսրը աջիոսականների ուսմունքը տարածելու և վերջինիս հեղինակությունը բարձրացնելու նպատակով կաղմակերպում է մրցավեճ՝ արիոսականների և ուղիղ հավատի հետևորդների միջև: Մրցույթում ուղիղ հավատի կողմնակիցների անունից հանդես եկող Եվսեբիոս Կեսարացին, կոահելով վեճի լրջությունն ու բանավիճելու հմտության անհրաժեշտությունը, «գրնաց թուղթ աղաչանաց... առ երիցատեան Բարսեղ, և մեծաւ պաղատանօք որ ինչ վասն պատուին պաշտամանն. զի մի՛ դիցէ ինչ ի մտի զառաջին եղեալ բանիցն գրժտութիւն. այլ վասն զի առ Աստուած հաւատոց են բանքն և քննութիւնքն, վաղվաղակի փութացի գալ առանց զանդաղանաց»⁹⁸: Եվսեբիոս եպիսկոպոսի խնդրանքին ընդառաջելով, Վաղես կայսրը թույլ է տալիս, որ Բարսեղ Կեսարացին էլ մրցույթին մասնակցի. «և մտին ի բանից ի քննութիւն հակառակութեան վասն տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, եթէ իցէ ծնունդ և որդի ի բնութենէ Հօր Աստուծոյ, եթէ ոչ»⁹⁹:

Վեճը բավական հին էր, որին Կեսարացիին ծանոթ էր տակավին Աթենքում ուսանելու ժամանակ. այնպես որ նրա նման աստվածաբանական հմտության տեր ճարտասանը մրցավեճում միակ հավանական հաղթողը կարող էր լինել:

Պատմագիրը բանավեճի ընթացքի ու ավարտի հետ կապված մանրամասներ չի հաղորդում, բայց կա մի սրամիտ դիտողություն, որ ինքնին ապացույց է Բարսեղի ներկայության վճռական նշանակության ու հաղթական հետևանքի: Այսպես, Բուզանդը գրում է.

97 Փ. Բուզանդ. էջ 103—104:

98 Նույն տեղում, էջ 106:

99 Նույն տեղում, էջ 107:

«Ապա զղջացավ թագաւորն՝ թէ ընդէ՞ր զԲարսիլիոսն հրամայեցին օժանդակ բնաւ եւսերի թողուլ ի ներքս: Ապա յտան կացեալ ամօթով արիանոսքն ասացին ցթագաւորն...»¹⁰⁰: Այս հաղորդումը բառացի ակնարկ է մրցույթում Բարսեղ Կեսարացու վճռական դերի ու տարած հաղթանակի մասին, որի պատճառով էլ արիտոսականութեան երկրպագուներն իրենց թագաւորի մոտ ամօթով են մնում:

Ինչպէս հաղորդում է Բուզանդը, Վաղես թագաւորը բանտարկել է տվել Կեսարիայի եվսերիոս եպիսկոպոսին և նրա կողմնակիցներին, այդ թվում նաև Բարսեղ Կեսարացուն: Այս պարագայում է, որ ըստ ամենայնի բացահայտում է Կեսարացու և ժողովրդի փոխհարաբերությունը, քրիստոնեությունից դարձած ժողովրդի համար նրա անձի կարևորությունը: Այս առումով Բուզանդի հետևյալ գրառումը առայժմ միակ ու շարժական կարևոր վկայությունն է Հայ մատենագրության մեջ. «Թսկ վասն սրբոյն Բարսեղի ատէին ժողովուրդքն Կեսարու. եթէ ոչ արձակէք զզա ի բանդկզ, այրեմք զքաղաքս զամենայն: Յորժամ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին, թողացոյց թագաւորն, և արձակել հրամայէր զերանելին Բարսիլիոս»¹⁰¹: Գա մոտավորապես 365—369 թվականներին էր, երբ Բարսեղը Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի օգնականն էր: Բուզանդի վկայության առավել հետաքրքրական կողմն աչն է, որ Կեսարացին, Աթենքի ուսումնասույթյունից վերադառնալուց հետո, դեռևս երիցություն տարիներին, իրսը ձեռք էր բերել բացառիկ հեղինակություն ու ճանաչում:

Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» «Յաղագս թագաւորելոյն Ռէոդոսի մեծի, և ժողովոյն, որ եղև վասն հոգեմարտացն» գլխում խոսվում է հունաց Քեոպոս կայսեր կողմից բնույանդական հեթանոսական մեհյանների քանդման, եկեղեցիների հաստատման, ուղղագավանության հետևորդ արտաքսված նշանավոր անձանց (որոնց թվում և Ներսես Մեծի) Բյուզանդիան վերադառնալու մասին¹⁰²: Նա թվարկում է Բյուզանդիոն հավաքված ս. հայրերին՝ «Գամասիոս Լոմմայ, Ներտասիոս Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս Աղեքսանդրի, Մելիտոս Անտիոքու, Կիրլոս Երուսաղէմի, Գրիգորիոս Նիսիայ, Գեղասիոս Կեսարու, Գրիգորիոս Նաձիանձու...», որը

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 108:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Մ. Խորենացի, էջ 297.—298:

նդուվեալ մերժեցին զՄակեդոն և դամենայն հոգեմարտս»¹⁰³։ Այս «Գեղասիոս Կեսարու» փոխարեն նույն հատվածի այլընթեքացումն էրում ունենք «Բասիլոս» և «Բասիլիոս»¹⁰⁴, որ նույն Բարսեղ Կեսարացիին է։

Սկզբնաղբյուրներում, եկեղեցական որևէ խնդրի առնչմամբ, ընդունված է Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Նազիանզացուն և Գրիգոր Նյուսացուն միասին հիշատակել, որոնց սուվորաբար քյուզանդական գրականության մասնագետները կոչում են «երեք մեծ կապաղովկացիներ»։ Կապաղովկացի երեք նշանավոր գործիչների վկայակոչման նույն մոտեցումն է առկա նաև Խորենացու մոտ, միայն այն տարբերությամբ, որ «Բարսեղ» անվան փոխարեն քրնական տեքստում «Գեղասիոս» է օգտագործված։

Հայտնի է, որ Կոստանդնուպոլսի պատրիարք Մակեդոնը դահաղուրի է եղել 360 թվականին¹⁰⁵, ալսիքն այն ժամանակ, երբ Կեսարացին նոր էր վերագրածել Արևելքի վանական կյանքին հատուկ ծանոթանալու նպատակով կատարած ճանապարհորդությունից։ Խորենացու վկայած ժողովը նույնպես եղել է մոտավորապես նույն թվականին, որին, հասկանալի է, Բարսեղ Կեսարացիին շմասնակցել շէր կարող։

Խորենացու այն վկայությունը, թե Պապը Ներսես Մեծի աթոռակալ նշանակեց Սահակին՝ «առանց մեծի արժեպիսկոպոսին Կեսարու»¹⁰⁶, հարկավ, վերաբերում է Բարսեղ Կեսարացուն։ Խորենացին, փաստորեն, ծանոթ է հայոց եպիսկոպոսների ընտրության խնդրում Կեսարիայի թեմին վերապահված իրավունքին և սվյաղեպքում նրա համաձայնության զանցառումը արձանագրում է իբրև ոչ օրինաչափ երևույթ։

Մովսես Խորենացուն վերագրվող Թղթում ևս հիշատակվում է Բարսեղ Կեսարացին, Այստեղ կարդում ենք. «Ընդէ՞ր իսկ կրճատել սիրէք կիսով հաղորդութեամբ որպէս թէ Երկու կատարեալք, ոչ կարէ մի կատարեալ լինել։ Զայդ հստկաւորութիւն իմաստուն և առանկ բարգաւանեալն հովիւ ուսոյց Բասիլիոս՝ յամսութ առնելով զԺպիրի՛ ախոյեանն։ Եւ կատարեալ անշիոթ տնարէնութեանն Աստուծոյն և

103 նույն տեղում։

104 նույն տեղում, էջ 298։

105 Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 400, ծան. 170։

106 նույն տեղում (1913 թ. հրատ.), էջ 306։

մարդոյ մի բնութիւն առել զնոյն զմի զտնարինական եղելութիւնն»¹⁰⁷: Ինչպէս տեսնում ենք, խնդիրը դավանաբանական է՝ Քրիստոսի երկու բնութիւն շուրջ, և Թղթի հեղինակի համար ճշմարիտ էլքը Բարսեղի բացատրութիւնն է: Վկայակոչված հատվածը աներկբայելիորեն ցույց է տալիս, որ դավանաբանական վեճերի լարված ժամանակաշրջանում (IV—V դդ.), հայոց միջավայրում լայն տարածում ունեին Բարսեղի դավանաբանական գործերը, որոնցից և օգտվում է վերոհիշյալ Թղթի հեղինակը: Բերված հատվածի բովանդակութիւնից դատելով՝ տրամաբանական կլինի կարծել, որ նրանում ակնարկվում է Բարսեղի՝ Ապողինարի հետ ունեցած դավանաբանական վեճը¹⁰⁸:

Հայտնի է, որ Ղազար Փարպեցուն ամբաստանող հոգևորականները, ի թիվս այլ բազմաթիվ մեղադրանքների, նրան նաև ազանդաւոր էին համարում¹⁰⁹: Վերջինս, որպէս հոգևոր գործիչ, ավելի պարագայում՝ վանահայր¹¹⁰, իր ուղղափառութիւնն ընդդրծելու համար թվում է այն նշանաւոր և հայրերի անունները, այդ թվում նաև Բարսեղ Կեսարացու, որոնց գրվածքներով ինքը դաստիարակվել է: Նա գրում է. «Բայց իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն, և ըստ յօրելոյ տկարամտութեանս իմոյ կարդացեալ զգիրս արանցն սրբոց, որք վառեալք Սուրբ Հոգւոյն զինու՝ զսուրս հոգեփողոտս աղանդաւոր ուսմանցն դարձուցանէին անդրէն ի սիրտս նոցունց, և զաղեղունս նոցա փշրեցին, և զվրկագործ վարդապետութիւն՝ իւրեանց գրով մեզ աւանդեցին, հոգացեալ իբրև

107 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 25—26: Մեր նպատակից դուրս է անդրողաւանալ Թղթի հեղինակային պատկանելութիւնն այս կամ այն շարիվ արձարծած բանասերների (Մ. Օրմանյան, Ն. Ակինյան, Հ. Մանանդյան, Ստ. Մալխասյան, Գ. Տեր-Մկրտչյան, Կարապետ եպիսկոպոս, Մ. Արեղյան) կարծիքներին: Այդուհանդերձ, համոզիչ է Մ. Արեղյանի այն պնդումը. թի «Մի անգամ որ Մովսէս Քերդոշա՛նոր հիշված Թղթի կեղծութիւնը ըի ապացուցված, այդ Թղթով հաստատվում է նրա ոչ բաղկեղնական լինելը...»: (Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 657):

108 Մագիստրոսի, Կաղանկատվացու, Գանձակեցու, Լաստիվերացու և այլոց գործերում, ինչպէս նաև հայոց կաթողիկոսներ Սահակի, Կոմիտասի, Հովհանի, Խաչիկի. Ստեփանոսի և ուրիշների թղթերում զանազան դավանաբանական խնդիրների առնչմամբ կարելի է հանդիպել Բարսեղ Կեսարացու անվան վկայութեանը («Գիրք թղթոց», էջ 50, 69, 91, 101, 214, 231, 306, 315, 333, 343, 355, 368, 380, 388, 433, 434, 448, 449, 453, 463, 465 և այլն):

109 «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», Վենետիկ, 1933, էջ 617:

110 Ղ. Փարպեցի, էջ 605—606:

դարդարեւ ոգեսէր հարս, զամենայն տղետ խորհուրդ մարդոց զօգուտն, զորոց յերկար ոք և ջերմ սիրով ընթերցեալ զգրեալս, անվրնաս և դիրաւբերժ կարէ լինել հրարձակ նետից շար ձգողացն. զսըրբոցն ասեմ զԱթանասէ Աղեքսանդրացույ, և զերկուց միանուն արանցն, զԿիւրղէ Աղեքսանդրացույ, և Կիւրղէ Երուսաղեմացույ, զԲարսղէ Կեսարացույ և զԳրիգորէ Նազազացույ...»¹¹¹:

Փարպեցու թվարկած անձինք հայոց եկեղեցու համար, անտարակույս, որոշակի հեղինակութիւն են եղել նախորդ և իր ժամանակ, որոնց գործերի ու գործունեութեան վկայակոչմամբ էլ նա կամենում է պայքարել իրեն մեղադրողների դեմ:

Ինչպես արդեն նշվել է, Կեսարացու անվամբ մեզ է հասել դավանաբանական բնույթի մի աշխատութիւն, որտեղ հեղինակը բանավիճում է Ապողինարի հետ: Արդ, Ապողինար կաթողիկեցու անվան առկայութիւնը Փարպեցու Թղթի այն հատվածում, ուր խոսվում է աղանդների մասին¹¹², հիմք է տալիս ենթադրելու, որ Թղթի հեղինակը ծանոթ է եղել Բարսեղ Կեսարացու նշված երկին: Որ Թղթում հիշատակվող Ապողինարը Բարսեղի բանավիճի համաձայն անձն է, կանկածից վեր է, քանի որ Փարպեցին ոչ պատահաբար միաժամանակ հիշատակում է աղանդավորական շարժման հայտնի այլ անձանց (օրինակ, Արիոսին ու այլոց), որոնց ուսմունքին լավատեղյակ էր Կեսարացին և, նկատել ենք, պայքարել էր նրանց դեմ:

Անանիա Մոկացի կաթողիկոսը (946—968), որ հայտնի է դավանաբանական հարցադրումների իր խորիմացութեամբ ու հայոց շրջանում քաղկեկոնականության դեմ մղած պայքարով, հաճախ պատմողաբար, երբեմն էլ բառացի բանաբաղութեամբ օգտվում է Բարսեղ Կեսարացուց: Այսպես, օրինակ, Քրիստոսի երկու բնութեան շուրջ գոյութիւն ունեցող թեր և դեմ կողմերի մասին խոսելիս բազմիցս վկայակոչում է Կեսարացու այս կամ այն գրույթը¹¹³: Ավելին, Անանիա Մոկացին հողերս պաշտոնատար անձանց պարտականութիւնների մասին իր շատ տեսակետներ որոշակիորեն բաղում է Բարսեղ Կեսարացու գործերից, մասնավորապես թղթերից և կանոններից¹¹⁴, ուստի կարելի է հաստատապես տեսլ, որ նա ծա-

111 Նույն տեղում, էջ 617—618:

112 Նույն տեղում, էջ 618—619:

113 Ձեռ. N° 2966, էջ 18ր—19ա:

114 Նույն տեղում, էջ 134ա:

նոթ է Եղեղ Բարսեղ Կեսարացու դավանաբանական գործերին և առհասարակ մատենագրական ժառանգութեանը:

Արաւավոր բարբերի քննադատութեան առիթով ներսես Շիրորճալին ճատվածաբար օգտվում է Բարսեղ Կեսարացուց: Մյսպես. «Գրէ և սուրբն Բարսեղ ի կրօնաւորաց սահմանն թէ՛ «Ամենայն ժուժկալութիւն և առաքինութիւն այն՝ որ զհնարանդութիւն առաջնորդին ոչ ունիցի, անօգուտք են և յոչինչ պէտտ համարեալ»¹¹⁵:

Շիրորճալու մեկ այլ վկայութեանը հիմք է տալիս ասելու, որ Բարսեղի կանոնները, ինչպէս և սպասելի էր, Կիրիկյան Հայաստանում էլ նույն գործածական հարկն ունեին, ինչ Կապադովկիայում, Փոքր Հայքում, իսկ Օձնեցուց հետո՝ սղջ Հայաստանում: Շիրորճալին գրում է. «Էրածեալ մի կողմնաւոր բարուր զմասն սիրել՝ շուկա առնելով և զմասն անտես առնել, սմանց աւելորդօք բերիլ ի պէտսըն, և այլոց, և ոչ հարկաւորօքն բաւականանալ. այլ սէրն հասարակաց Եղիցի ըստ սրբոյն Բարսղի կանոնադրութեանն, և պատիւ որոց վայելէ»¹¹⁶:

Հայտնի է, որ ն. Շիրորճալին ծանոթ է Եղեղ Ապողինարի և Կեսարացու դավանաբանական վեճին և օգտվել է նրանից¹¹⁷:

Ստեփանոս Օրբելյանը Բարսեղ Կեսարացուն վկայակոչում է երկու անգամ, Սյունյաց Մաթոսաղա եղիսկոպոսի Թղթի առիթով՝ գրված Հալոց Եղր կաթողիկոսի հրամանով: Երկու դեպքում էլ խնդիրը դավանաբանական է. մի դեպքում պատմիչը բնղղեմ երկաբնակաց պայքարում է եկեղեցու ս. հայրերի հայտնի ավանդներով, ուստի և «մոլորվածներին» ուղղելով իր խոսքը, գրում է. «Ուրա էր նոցա զերանելեացն հարանց ի կիր առնուլ զամենապայծառ և զհրաշափառագոյն յաղագս մարմնաւորութեանն Տեառն գտասցուածն՝ զԱթանասի Աղեքսանդրացույ, գրարսղի Կեսարացու, զԳրիգորի նաղիանդացու...»¹¹⁸: Օրբելյանը նույն առիթով երկրորդ անգամ Կեսարացուն վկայելիս անվանապես հիշում է հայ մատե-

115 «Բնղղանրական թուղթը», էջ 29:

116 Նույն անղում, էջ 36: Շիրորճալին ծանոթ է և օգտվում է նաև Եվսելիոս Կեսարացու, Գրիգոր Նաղիանդացու, Գրիգոր Նյուսացու և այլոց գործերից (տե՛ս նույն տեղում, էջ 113, 118, 125, 134, 138, 149 և այլն):

117 Դ. Զարբանակեան, Մատենագրան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 330:

118 «Պատմութիւն նահանգին Սիսական», արարեալ Ատեփաննոսի Օրբելեան արբելպիսկոպոսի Սրահեաց, Թիֆլիս, 1910, էջ 121:

նագրությանը քաջածանոթ նրա՝ ընդդեմ Ապողինարի հայտնի դավանաբանական վեճը, դրան կից՝ բարսեղյան դրույթների հավաստիությունը և ուսանելիությունը:

Ճիշտ նույն մատենագրական ազդեցության փաստն է աուկասակ «Արմատ հաւատոյ» ժողովածուի հեղինակի մոտ, որը, Շ. Անասյանի կարծիքով, Վարդան Այգեկցին է¹¹⁹: Նախորդ հեղինակների նմանությամբ, վերջինս էլ զանազան վկայակոչությունների համար գիմում է Բարսեղ Կեսարացուն: Օրինակ, օրվա սկիզբ հասկացությունը ճշտիվ սահմանելու համար նշված ժողովածուի հեղինակը բերում է Բարսեղ Կեսարացու հետևյալ սահմանումը. «Եղև երեկոյ՝ զսպառել աուրն ասէ և եղև վազորդեան զկատարումն՝ դիշերոյն զառաւօտն ասէ, ընդ տիւ և ընդ գիշեր եղև օր մի»¹²⁰:

Մատենադարանի № 474 գրչագրում պահպանվել է մի դանձ՝ գրված Կեսարացու տոնի՝ հունվարի 1-ի, առիթով, խաչատուր վարդապետի կողմից.

Այսար մանկունք սուրբ եկեղեցոյ
Տոնեն ըզտան աուր քո սլատուոյ,
Միւն լուսեղեն եկեղեցոյ՝
Բասիլիոս՝ պարխսպ հաւատոյ¹²¹:

Գանձի հեղինակը այնուհետև անցողակի ակնարկում է Կեսարացու հոր բարերարության մասին, վերհիշում Բարսեղի ձեռնագրվելու, գամբական տան արքեպիսկոպոս զառնալու, Հուլիանոսի և Վաղեսի հետ «կարգաւ» խոսելու որոշ մանրամասներ, որոնք բացառապես վարքագրական հիմք ունեն: Կան ջերմ տողեր.

Դու աուսուատ մեր խաղաղութեան
Բասիլիոս բրժիշկ հրմտական,

119 Շ. Անասյան, Ձկ և ուրբաթագեյ, «Լրարեր», 1969, № 3, էջ 78:

120 Ձկ. № 3295, էջ 377բ, նաև 368բ:

121 Ձկ. № 474, էջ 328ա, հմմտ. «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կաղմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 423, «Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա», հ. Բ, կաղմեց Շ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 127, 659, 841, Շ. Թովեյան, Յուցակ..., էջ 437, «Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին», հ. Բ, կաղմեցին Ն. Ակիբեան, Շ. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 29: խաչատուրի ով լինելու մասին դժվար է որոշակի բան ասել: Նշված դանձի լեզվաոճական որոշ կողմեր հիշեցնում են խաչատուր Կեղանցուն: Տվյալ պարագայում դանձի հեղինակի խընդիրը սկզբունքային նշանակություն չունի:

Դու արուեսեակ մեծ արեգական
 Բասիլիոս ջահ անշիջական:
 Դու ակն անքուն և դէտ արթնական
 Բասիլիոս հոգոյն բնակարան:
 Դու շրջապատ պարիսպ ամրութեան
 Զէն հաւատոյ և յուսոյ վահան: (էջ 329բ)

Վարքազրական տվյալների հիման վրա է գրված նաև «Շարական սրբոյն Բարսղի հայրապետի» խորագիրը կրող օրհնությունը, որի հատվածների գլխագրերը հոդում են Աբեա Հեքում: Օրհնությունյան հեղինակ է ենթադրվում Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը¹²²: Ինչպես հուշում է օրհնությունյան ստորև բերվող հատվածը, այն գրվել է Կեսարացու ծննդյան տոնի առթիվ. «Այսօր զոր ծնար մարդ նշմարիա բնութեամբ, հրեշտակք յերկնից աստուած ծանուցին զէիցս արարիչ, ներմարդանալ հարքն ի յերկրի քև քարողեցին»¹²³: Օրհնության հեղինակը, անշուշտ, լավատեղյակ է Կեսարացու եկեղեցական դործունեության մանրամասներին, մասնավորապես քրիստոնեության տարածմանն ունեցած նրա մասնակցությունը և արիստականությունյան դեմ տարած հաղթական պայքարին, ուստի և գրում է.

Ոգոց սուլուն մահացու,
 Բասիլիոս նոր հացատու,
 Զբան հաւատոյն սիւնեցեր,
 Զաղտ հերձուածոց վանեցեր¹²⁴:

Օգտագործված են նաև Կեսարացու գլխարտությունյան, սրտացավությունյան ու կենսագրական որոշ իրողություններ, որոնք համակողմանի ու սամբողջական են դարձնում հոգևոր գործիչ բնութագիրը: Այդուհանդերձ, օրհնությունյան հիմնական առանցքը Կեսարացու կապաղովկյան շրջանի հոգևոր գործունեությունն է, որով նա եզակի հեղինակություն դարձավ ամբողջ Արևելքում:

Հայ միջնադարյան մատենագրությունյան մեջ իր մատենագիտական բնույթով եզակի գործ է Գրիգոր Աբասյանի կազմած «Գիրք

122 «Հին և նոր պարականոն կամ անվանի շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 153—156, հմմտ. «Բաղմավէպ», 1894, էջ 540—542:

123 նույն տեղում, էջ 154:

124 նույն տեղում:

պատճառացրը»¹²⁵, որի առ այսօր հայտնի հնագույն ձեռագիրը (№ 1879) պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, Աղբյուրադեոտ Հ. Անասյանի հավաստմամբ՝ «ձեռագիրը սկզբնագիր չէ, բայց ընթրօրինակությունը հեղինակին ժամանակակից է, անցման շրջանի երկու տարբեր ձևի գրչությամբ»¹²⁶: Ինչպես ընդունված է կարծել, «Գիրք պատճառացի» կազմմանը մասնակցել են նաև Դավիթ Քոբայրեցին և Մխիթար Գոշը: Դատելով ընդգրկված մատենագրական երկերի ընտրության սկզբունքից ու քանակից, պիտի նկատել, որ «Գիրք պատճառացում», ի թիվս այլ հուշարձանների, մեծ տեղ է հատկացված նաև «երեք մեծ կապադովկացիներին» գրական ժառանգության, հատկապես ճառերի հայերեն թարգմանությունների քննությունն ու վերագնահատմանը: Յուրաքանչյուր մատենագրի մասին կան կենսագրական (նաև վարքագրական) ընդարձակ տեղեկություններ՝ քաղված ձեռագրերից: Մատենապիտական այս արժեքավոր հուշարձանի կազմողն ու հեղինակակիցները անդորարարձել են Քարսել Կեսարացու գրեթե բոլոր ճառերին: Յուրաքանչյուր անգամ կրկնվող խորագիր-պատճառին հաջորդում է ճառի հեղինակային խորագիրը, այնուհետև՝ ստեղծագործական պատմության հետ կապված բոլոր մանրամասները (եթե կան այդպիսիք): Պատճառուսույց մատենագիրները չեն վերապատմում այս կամ այն գործի բովանդակությունը, ինչպես դա լինում է նման դեպքերում, այլ պարզապես իրենց ստացած տպավորություն-հետևությունն են արձանագրում՝ անհրաժեշտության պարագայում ի փաստարկություն վկայելով նույն գործի նոր գրվածքներ կամ հին մատենագրության այլ հեղինակությունների: Նպատակը, անշուշտ, մեկ է. առանց հարկադրանքի, ունկնդիր միջավայրին կամ ընթերցող ուսումնասուրին հասցնել տվյալ դեպքում Կեսարացու ճառերի գաղափարական բովանդակությունը, բացահայտել որոշակի նպատակով ենթատեքստով ասվածը և նորովի նպաստել հեղինակային նպատակադրման տարածմանը: Այսպիսին է, օրինակ, «Վասըն վաշխառուաց» ճառի պատճառ-բացատրությունը. «Վասն այնպիսեսցն պատուիրէ սուրբս խոյս տալ ի շար կապարանէն և սակաուր բաականանայ անխուճապ պիտոյիք եւ առ փոխատուան գարձուցեալ զբանն ասէ, թէ վասն քո տմարդութեան այնքան զդու-

¹²⁵ «Գիրք պատճառացի» մասին եղած գրականության ցանկը և ձեռագրի նկարագրությունը տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենապիտություն, Ե—ԺԸ դդ., 4. Ա., Երևան, 1959, էջ XIV—XV:

¹²⁶ Նույն տեղում, էջ XIII, ծան. 3:

շացուցանեմ դատողան, զի մի վազատուլիւնն իւրեանց քով սակաւ տմայիւն կորուսցեն եւ արդ դու լուր գտեաւնն, թէ տուր փոխ ուստի ոչ ակն ունիցիս առնուլ, զի ի նմանէ առցես լիապատար, որ է արհննալ յաիտեանս»¹²⁷:

Մեր գրչագիր հիշատակարաններում հաճախ կարելի է հանդիպել Բարսեղ Կեսարացուն բնորոշող այսօրինակ արտահայտութիւններին. «յոյժ գիտնական էր, հանճարեղ և համեղաբան»¹²⁸, այլ բնորոշմամբ՝ «հրեղեն լեզու խաւսէր ի բերանն Բարսղի»¹²⁹ և այլն, որոնք յուրահատուկ արտահայտութիւնն են Կեսարացու՝ հայոց շրջանների հետ ունեցած հոգեհարազատութեան¹³⁰:

127 Ձեռ. N 1879, էջ 249ա:

128 Ձեռ. N 84, էջ 261բ, հմմտ. Հ. Տաշլան, նշվ. աշխ., էջ 70:

129 Ձեռ. N 948, էջ 156ա:

130 Հայկական միջավայրում Բարսեղ Կեսարացու մեծ հեղինակութեան մասին է վկայում նաև այն, որ գրչագրերում պահպանվել են նրա պատկերի բնօրինակութիւններ: Այդ գրչագրերից առայժմ հայտնի են Մանչեստրի Ալլեստաբանը («Հանգիւս մասօրեայ», 1968, էջ 478, գրչագրի մասին տե՛ս էջ 471—486, 1969, էջ 505—512, 1970, էջ 75—82), ինչպես նաև Երուսաղեմի N 336 գրչագիրը (Հարցողաց զիրք, 1298 թ.): Վերջինիս արտատպութիւնը տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակորեանց», հ. I, կադմեց ն. Պաղարեան, Երուսաղեմ, 1967, էջ 218:

«ՎԵՑՈՐԵԱՅԻ» ՀԱՅՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԿԱ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածոյում «Վեցօրեայ» խորագրի տակ պահպանու է քսանմեկ ձեռագիր. տասնչորսը՝ բուն «Վեցօրեայ», չորսը՝ «Վեցօրեայի» մասին գրված ընդարձակ մեկնություններ և երեքը՝ համառոտ մեկնություններ կամ, կարելի է կոչել, բառարան-մեկնություններ¹: Հետևյալ նկարագիրն ունենի «Վեցօրեայ» գրչագրերը:

¹ «Վեցօրեայի ընթորինակություններ կան նաև (որոշ դեպքերում՝ եղել են) արտասահմանի այլ այլ հավաքածոներում.

Կեսարիայի Ս. Խաղիս եկեղեցու ձեռ. № 235. Ժամանակ՝ 1187 (Ոկթ), գրիչ՝ Հովհաննես. տեղ՝ Հռոմոսի վանք: Գրչության մասին ասված է. «Գիրք ընդհանրապես այնչափ մաքուր եւ անանկ միաձեռու անանկ խնամով գրուած է, որ զիտես թէ մէկ գրիչով, մէկ աւուր մէջ. մէկ նայուածքին աւարտած ըլլայ»: Զեռագրի որտեղ լինելը (Լեթն պահպանվել է) հայտնի չէ հայագիտությանը: (Դարեգին Ս. Կարաղիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 517):

Երուսաղեմի ձեռ. № 406. Ժամանակ՝ 1319 (ԶԿԸ), գրիչ՝ Իսրայել սրկ. Արևելցի, գրչություն՝ բոլորգիր, տեղ՝ Գլխիբցու Աթոս (Սիս): («Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Բ, կաղմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1967. էջ 338—339): Ձեռ. № 1062. «Վեցօրէից զիրք», խորագիրը՝ «Ճառք սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարոյ Կապադովկացո, Յաղագս Զօրեայ աւուրց արարչութեան»: Ունի հետևյալ սկզբածրով առաջաբանը. «Մի՛ ոք ի բնեղաց զդպարտեսցէ զԱստուծոյ զստուգութիւն»: Նկարագրությունը տն՝ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 89: Ձեռ. № 1093. «Վեցօրէից գիրք». խորագիրը՝ «Սրբոյ Բարսղի եպիսկոպոսապետի Կեսարիոյ Կապոզակեցոյ, Յաղագս Վեցօրեա աւուրց»: Նկարագրությունը տն՝ս նույն տեղում, էջ 139—140:

Ղալարիո ազգային Մատենադարանի ձեռ. № 87. «Սրբոյն Բարսեղի ի Վեցարէն ասացեալ, եր. 592—599», ժամանակ՝ անորոշ, գրիչ՝ զրիմցի Սարգիս, գրչություն՝ նոտրգիր: («Յուցակ ձեռագրաց Ղալարիոյ ազգային Մատենադարանին հայոց», կաղմեց Բարգէն Կարաղիկոս, Անթիլիաս, Լիբանան, 1961. էջ 575—577):

1. Զեռ. № 5595՝ «Վեցօրեան» պարունակող մեղ հայտնի համեմատաբար ամբողջական գրչագրերից հնագույնն է՝ ընդօրինակված 1279 թվականին, Եղիազարու վանքում, թղթի վրա, Ստեփանոս (Եսայի^Բ) գրչի ձեռքով: Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության զգալի մասը պարունակող այս ձեռագիրը, բացառությամբ 1196 թվականին ընդօրինակված № 948 գրչագրի մի քանի ճառերի, հնագույնն է Կեսարացու գործերի մեր ձեռքի տակ եղած

Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ձեռ. № 249 («Վեցօրեայր Բարսղի...»). ժամանակ՝ 1720 (ԹՃԿԹ), գրիչ՝ անհայտ, գրչություն՝ նոտրդիր, տեղ՝ Կ. Պոլիս, «բնօրինակիցս սա ի զաղափարէ Տեսնո Գրիգորի վարդապետի պատրիարքին սրբոյ Երուսաղէմի»: («Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 638): 2. Ոսկյանը Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում 1075 թվահամարի տակ պահվող մատյանի մասին գրում է. «Յատկապէս ձեռագիր չէ այս թիւը կրող մատեանն, այլ ս. Բարսղի Վեցօրէից մեկնութեան Վեներաբիլի 1830-ին տպագրութեան մէկ օրինակը, որուն վրայ նշանակուած են Երուսաղէմ Գրիգոր Պատրիարքին համար 1720-ին արտագրուած Բարսղի մեկնութեան տարբերակները»: («Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա», Տ. Բ. կազմեց 2. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 742): Խոսքը, հարկավ, նշված № 249 գրչագրի մասին է: Զեռ. № 1121. «Վեցօրեայր ս. Բարսղի». ժամանակ՝ ԺԼ—ԺԹ դդ., գրիչ՝ անձանոթ, գրչություն՝ նոտրդիր: (2. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 784): Զեռ. № 612 [«Վեցօրեայր Բարսղի»]. ժամանակ՝ 1821 (ՌՄ2), գրիչ՝ Սևրոյրէ Պետրոսեան Ակեցի, գրչություն՝ նոտրդիր, տեղ՝ Կ. Պոլիս, Միջազգիւր Թարգմանության գնահատման առումով ուշագրավ է հետևյալը. «Թարգմանեալ ի յունականէն ի հայկական բարբառ՝ ի ձեռն ճշմարտաբանից Թարգմանեաց մերոց»: (Տե՛ս 2. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 82):

Զմմառի վաճեի Մատենադարանի ձեռ. № 429. ժամանակ՝ 1701, գրիչ՝ Պողոս րահանա, տեղ՝ Ամիգ: «Թղ. 123ա—179ր. Ճառք տիեզերալստս վարդապետի սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապոզոկացոց արարեալ Մեկնութիւն Վեցօրեայ արարչութեան աուրցն...: Թ ճառք թերի»: («Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին», Տ. Բ. կազմեցին Ն. Ալիբեկեան, 2. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 13—14): Զեռ. № 605, «Բարսեղի «Վեցօրեայր». ժամանակ՝ ԺԸ դ., գրիչ և տեղ՝ անհայտ (նույն տեղում, էջ 212):

Վիեննաի Մխիթարյան Մատենադարանի ձեռ. № 177. «Ճառք սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարիոյ կապոզովկացոց Յաղապս Վեցօրեայ աուրց արարչութեան», 183 էջ, նոտրդիր, ճառերի խորագրերը՝ կարմիր թանաքով: (Ս. Տրիսակեան, Ս. Բարսղի հայ ձեռագիրներու հաւաքածոն, «Բաղմավկո», 1954, էջ 285—287): Զեռ. № 1459. «Վեցօրեայր Ս. Բարսղի», 159 էջ (նույն տեղում):

Գարձյալ ձեռագրացուցակներից դատելով՝ «Վեցօրեայ» առանձին ճառ կամ հատված ընդօրինակություններ կան այլևայլ հավաքածոներում: Այսպես, օրինակ, «Ս. Բարսղի արքեպիսկոպոսի Կեսարու ի Վեցօրեայ գրոց—էջ 28»: (Ն. Պողարյան, նշվ. աշխ., հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 445): «Նարին սրբոյ Բարսղի ի

ընդօրինակութուններէց: Ուշագրաւն այն է, որ դատելով սույն ձեռագրի մատենագիտական որոշակի սկզբունքով կազմված բովանդակութունից, պիտի ենթադրել, Կեսարացու գրական ժառանգությանը լավատեղյակ գրչական-կրթական որևէ կենտրոնում, մասնագիտական հատուկ ընտրությամբ, «Մատենադրութիւնք» ընդհանսը խորագրով կազմվել է սույն գրչագիրը: Նյութերի ընտրությունը միաժամանակ հուշում է ձեռագրիս ուսումնական որոշակի նրպատակադրման մասին²: № 5595 ձեռագրի պարունակութունն ևն «Վեցօրեան» (էջ 1ա—107բ), ճառերը (էջ 108ա—321բ), դավանաբանական որոշ գործեր (էջ 327բ—340ա), առանձին թղթեր (էջ 340ա—354ա), մեկնութունները (էջ 354ա—400ա):

2. Զեռ. № 5353՝ ԺԳ դարի ընդօրինակութուն է, նյութը՝ թուղթ, երկսյուն, բոլորգիր գրչովյամբ, Թ ճառը բացակայում է, Ը ճառը ընդօրինակված է այլ գրչովյամբ, խորագրված է՝ «Սրբոյն Բարսեղի Վեցօրէից» (էջ 154ա—231ա): Ընդօրինակվելուց հետո, հավանաբար, ձեռագիրը բառ առ բառ համեմատվել է մայր օրինակի հետ և լրացվել են բացթողումները. այդ են հուշում նույն գրչովյամբ ու ձեռքով լուսանցադիր բառ-հավելումները (էջ 159ա, 160ա, 161բ, 168բ, 172բ, 177գ, 179ա, 197բ, 201ա, 223ա և այլն): «Վեցօրեան» գրադեցնող էջերում հիշատակարանային որևէ հաղորդում չկա: Գրչի հիշատակարանը (էջ 101ա) շմոռացվելու ազալանք է, հետագա հիշատակագրութունները (էջ 1ա-բ, 2բ, 3բ, 4ա, 59բ) ձեռագրի «ճակատագրի» նկարագրութունն են և քաղաքական իրադարձու-

2. առեայ գոց, յորձերդէ նաւն. յորմէ քէ՛՛ սեւ սաց Աստուած. բզխնցէ երկիր զեռուն...: Ի նոյն գրոց, յինձերդէ նաւն»: (Բարկեճ կարողիկոս, էջ 14. աշխ. էջ 325): «Սրբոյն Բարսեղի ի Վեցօրէն ասացեալ» (նույն տեղում, էջ 577): Կեսարացու Միտրաթի միաբանության Մատենագրարանում պահվող Կեսարացու գործերի գրչագիրը նկարագրելիս Ի. Տրիկսենը միաժամանակ առանձնացնում է «Վեցօրեայ» ճառերի հետևյալ՝ մեկ «բաղոսոս» և երեք առանձին ճառերի (Բ. Ե. Թ) ընդօրինակումները. ձեռ. № 352՝ ընդօրինակված «Բրիգորէ ի մայրաբազաթիս Հագրատայ», 794 էջ, մեծութունը՝ 260×165, գրութունը՝ 195×120: Զեռագիրը 1858-ին Ղուլէ վանքից ուղարկվել է Վենետիկ: «Զեռագիրս կարեւոր ծագկաբաղ մը կուտայ Վեցօրէից»: Առանձին ճառերի ընդօրինակութուններ կան հետևյալ գրչագրերում. «Վեցօրեայ» երկրորդ ցուր առկա է ձեռ. № 463 (Սարգս. 212). թղ. 373բ—375ա, ձեռ. № 653 (Սարգս. 228), թղ. 152բ—154ա. հինգերորդ ցուր՝ ձեռ. № 512 (Սարգս. 202), թղ. 176բ—178ա, ուրբորդ ցուր (Սարգս. 202), թղ. 312ա—313ա: («Բաղմատեպ», 1954, էջ 256—257):

2 Գրչագրի ընդօրինակման մանրամասները բովանդակող հիմնական թվակիր հիշատակարանը տե՛ս Գ. Յովսէփեան, Խաղբախեանք կամ Պոռչխանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս—Լիբանան, 1969, էջ 375:

թյունների պարզունակ շարադրանքը: 1բ էջում կա կնիքանման երկու շրջագիծ՝ երկշերտ անվարժ գրությամբ. ա) տե՛ր Յովասափ վարդապետի պաշտան՝ Աստուծոյ ծառայ, բ) Գրիգոր Մեղապարս:

3. Ձեռ. N 1657՝ ընդօրինակված է ԺԳ դարում (Գլաձո՞ր), զբլուսվունը՝ բոլորգիր, երկսյուն: Գրչագիրս թերի է. պակասում են սուպագիր «Վեցօրեայի» 86₃₁—88₇ տողերը: Որոշ տողեր չկան նաև սկզբնամասից. այն սկսվում է «Մովսէս էր արինակագիր պատգամացն, զոր լուար» նախադասությամբ (էջ 4ա): Ե ճառի «իբրև ժամագիր ժամանակա բառնան» սկզբնավորմամբ և «ժուժկայեսցի առ ի բառնալ զծանրութիւն» արտահայտությամբ վերջացող մի ընդարձակ հատված (ձեռ. էջ 49ա—բ, հմմտ. սուպագիր, էջ 86—88), ձեռագրի մեկ թերթի ընկել է Դ ճառի մեջ, և ձեռագիրը այգպես էլ վերանշագմվել է: Հետագայում նկատելով կատարվածը՝ նշվել է ընկած թերթի իսկական տեղը՝ «ԺՍ. թուղթս շրջելով ի յես պնա, կարգն է» (էջ 48բ):

Նկարագրվող ձեռագիրը ընդօրինակվելուց հետո (կամ ընթացքում) համադրվել է մալր կամ զուգակից օրինակի հետ և նույն թուինքով ու գրչությամբ կատարվել են բազմաթիվ բառական փոփոխություններ, երբեմն նաև ուղղադրական շահումներ (էջ 5բ, 15բ, 16ա-բ, 32բ, 36բ (երկու գրչությամբ), 49բ, 59ա-բ, 70բ, 76ա-բ-90ա, 110ա-բ, 113բ, 118բ, 122ա-բ, 123ա-բ, 125ա-բ, 130բ, 146բ, 153բ, 156բ, 205ա, 213ա-բ, 224ա-բ և տասնյակ այլ էջեր): Կան բարբառագիտական որոշակի հետաքրքրություններ կապացնող հրնչյունական գրափոխումներ: Հաճախակա ևս խուլերի ձայնդացման դեպքերը (էջ 7ա, 10ա, 12բ, 81ա, 82բ և այլն): Լուսանցագիր ուղղումների տեղերը բուն տեքստում, բացառությամբ երկու դեպքի (էջ 117ա, 122ա-բ), նշված են: Լուսանցադրությունները հիմնականում միշտ են, բնդունելի և նույնական սուպագրի հետ: Գրչությունը միօրինակ չէ, այլ հաճախ է փոխվում: Բոլոր հիշատակարաններն (էջ 96ա, 141բ, 182ա, 227բ) անթվագիր են և բովանդակության առումով՝ հիշարժան լինելու ազաչանք:

4. Ձեռ. N 8352՝ ընդօրինակված ԺԳ դարում, նյութը՝ մաղաղաթի. գրչությունը՝ բալորգիր, միասյուն: Գրչագիրը սկզբից և վերջից թերի է: Տպագիր «Վեցօրեայի» Ա ճառի սկզբնամասից մի ընդարձակ հատված բացակայում է: Գրչագիրը սկսվում է «[...] գրին, որպէս և վայել իցէ» բառերով (հմմտ. սուպագիր, էջ 2բ): Չկան սուպագրի 1—2բ, 6բ—8₁₃, 195₅—197₃₁, 199₂₅—201₉ հատվածները: Նրկարագրվող ձեռագիրն ավարտվում է «...թէ մարդկան կերպարա-

նաց նման իցէ Աստուծոյ նմանութիւն, աջլ ըստ նմանութեան» նախադասութեամբ:

Նկարագրվող գրչագիրը կրկնագիր է. նախորդ երկաթագիր ձևագրի թափված թերթերը հավաքվել են և նոր ընդօրինակութեան համար կաղմվել: Նկատելի են բազմաթիվ էջեր, որոնցում հին ձևագրից (ներկա դեպքում նյութ) ընթեռնելի բառեր կան: Ճառերի խորագրերն ու սկզբնատողերը դարդագիր են (կարմիր թանաքով): Հաճախագեպ են խուլ բաղաձայնների շնչեղացման դեպքերը (հատկապես՝ կ > գ, պ > բ և այլն), երբեմն բառերի վերջընթեր «յ» կիսաձայնը բացակայում է, բառամիջում ամենուր «և»-ի փոխարեն «ի» է:

Ինչպես ցույց են տալիս հետագա խմբագրական միջամտութիւնները, № 8352 ձեռագիրը, ընդօրինակվելուց հետո համեմատվել է «Վեցօրեայի» համեմատաբար անաղարտ գրչագրի հետ և նրկատված բառային (նաև հատվածական), շարահյուսական ու քերականական համաձայնութեան ուղղումները արձանագրվել են տողատակում, բուն տեքստում և լուսանցքներում (էջ 53ա, 73ա-բ, 75ա, 80բ, 103ա, 109բ, 110ա-բ, 117ա-բ, 118ա, 126բ, 139ա, 158ա, 183ա-բ, 210բ, 217ա, 227բ, 232ա, 236բ, 240ա, 250ա-բ, 274ա-բ): Ի դեպ, առե նց նշված լուսանցագրութիւնների գրչագիրս խիստ լեւրի կլինէր:

№ 8352 գրչագիրը հիշատակարան շունի. կա այսպիսի մի անորոշ թվագրում՝ «ԹԻՆ ՌՃԾԹ» = թվին 1710 (էջ 140ա): Մի փոքր վերին՝ նույն լուսանցքում և միևնույն անվարժ գրչութեամբ առկա համառոտագրութիւնը ընթերցվում է՝ յիշատակ: Նշված թվականը, ինչ խոսք, ձեռագրի ընդօրինակմանը չի առնչվում, այլ, կարծում ենք, գրանով թվագրողը կամ լուսանցագրումների ժամանակն է նրշում, կամ էլ ձեռագիրն իր տնօրինութեան տակ լինելու տարեթիվը մատնացուցում:

Տ.Ձեռ. № 620՝ ընդօրինակվել է 1494 թվականին, Երզնկայում, Մաղաքիա Բաբերդացու ձեռքով, միաստուն, բոլորգիր գրչութեամբ: Խորագրից անմիջապես հետո կա մի ընդարձակ հասուած, որը գրված է «Վեցօրեայի» ընդօրինակման աղթով: Այդ, այսպես կոչված, ընծայականի հեղինակը ընթերցողին նախապես պատվիրում է. «Մի ոք ի բննողաց զրպարտեսցէ զԱստուծոյ ըզատուգութիւն, թէ անիրաւութիւն ինչ պահանջեցաւ մարդկան վասն յանցանել ըզպատուիրանան...» (էջ 213ա): Նշված ընծայականը նույնութեամբ կա №№ 3475 (էջ 2բ), 10258 (էջ 3ա) և 5686 (էջ 3ա) գրչա-

գրերում (Հմմտ. Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 639), որը և հուշում է նշված գրչագրերի միմյանցից կամ միևնույն մայր օրինակից ընդօրինակված լինելու պարագան:

«Վեցօրեայ» ճառերի խորագրերը զարդազիր են (կարմիր թանաքով), խնամյալ գրչությամբ: Կան բազմաթիվ լուսանցարություններ (էջ 217ա-բ, 220բ, 227ա, 234բ, 236ա-բ, 245բ, 248բ, 253ա, 270բ, 274բ, 283ա-բ, 288բ, 290բ, 296ա և այլն), Յուրաքանչյուր ճառի տողատակի լուսանցում նշված է հերթական համարը: Աստղ. արեգակ, աշխարհ և նման հասկացությունների համար օգտագործված են գաղափարագրեր (էջ 216ա, 261ա, 263ա, 274ա, 279բ և այլն): Դատելով նույնությունից, պիտի ենթադրել, որ զրչագիրս երոշակի հարազատություն ունի տպագրի հիմք ձևագրի կամ նույնի մայր օրինակի հետ: Հիշատակարաններից և ոչ մեկը թվագիր չէ. դրանցից առաջինում (էջ 41բ) գրիչը աղբրում է հիշել «ղանարժան Մաղաբիաս»³: Հիշարժան լինելու նման խնդրանք են պարունակում նաև երկրորդ և երրորդ հիշատակարանները (էջ 71ա, 104ա), չորրորդում (էջ 150ա) գրիչը ուշադրավ մանրամասներ է հաղորդում Գրիգոր Նյուսացու հայերեն թարգմանությունների մասին, հինգերորդում (էջ 298ա-բ) խոսքը ժամանակի «անբարի» անցքերի ու «հայոց տառապյալ աղգի» վրա լույս ծագելու մասին է⁴:

Գ. Ձև. N 3457՝ ժողովածու, ընդօրինակվել է ժէ դարում, միասյուն, նոտրգիր գրչությամբ: Ասվեց, «Մի որ ի քննողաց...» սկսվածքով ընծայականը կետ առ կետ նույնանում է նախորդ և նշված երկու (№№ 10258, 5686) ձեռագրերի առաջաբանի հետ: «Վեցօրեան», գատելով գրչությունից, ընդօրինակվել է մեկ մարդու ձեռքով, վարժ գրչությամբ: Գրչագրիս պարունակած մյուս նյութերը ընդօրինակվել են տարբեր գրչությամբ, այլ ձեռքով ու խրնամքով:

«Վեցօրեայի» խորագիրը և առաջին նախադասությունը (ինչպես նաև բոլոր ճառերի) զարդազիր են: Հինգերորդ ճառի խորագիրը բացակայում է, միայն առաջին նախադասությունն է պարզագիր: Ձևագիրս ընդօրինակվելուց հետո վերընթերցվել կամ, որ ավելի հավանական է, համեմատվել է այլ օրինակի հետ և նկատված բացթողում-վրիպումները լրացվել-ճշտվել են նույն թանաքով:

³ Հմմտ. «ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 207:

⁴ Նույն տեղում, էջ 205—207:

ու գրչությամբ: Գրչի միակ հիշատակարան-գրությունը հետևյալն է՝
 Կրված «Վեցօրեայի» ավարտից անմիջապես հետո. «Ուրհնալիսն
 և գահութիւն, և բարեբանութիւն ամենասուրբ Երուզղութեան յալի-
 տեանս, ամէն: Կատարեցաւ աստուծահաւաչ առաստիւն սրբոյն
 Թարսղի» (էջ 182ա):

7. Ձեռ. № 6731՝ ընդօրինակվել է 1614 թվականին, Լվովում
 (Իլով): Որոշակիորեն տարբերվում է մինչև այժմ նկարագրված
 գրչագրերից: «Վեցօրեան» ընդօրինակված է հետևյալ խորագրի
 տակ. «Ճառք տեանն Բարսեղի Եպիսկոպոսի, դոր արարաք Բաղու-
 ծու ի գրոցն նորա, որ կոչի Վեցաւրեայ»: Գրիչը ձեռքի տակ ունե-
 ցել է «Վեցօրեայի» լիարժեք (չհամառոտված): Ընդօրինակություն,
 բայց քաղվածաբար է ընդօրինակել այն: Այսպես, օրինակ՝

«Վեցօրեայ» (1830 թ. հրատ.)

Ձեռ. № 6731

«Եւ այսպէս իւրաքանչիւր ոք ի նոցա-
 նէն ընդ գորութիւն իւրոյ ընկերին հա-
 դուրեալ են և լծակիցք միմեանց են հա-
 դորդութեամբ ամենայն բնութեանցն և
 մերձաւորք միմեանց են զօրութեամբ
 միարանութեան:

Եւ այսպէս իւրաքանչիւր ոք ի նո-
 ցանէն ընդ դարութիւնն իւրոյ ընկե-
 րին հադորդեալ է և դարձեալ ակա-
 րակ միմեանց գտանին»: (էջ 26ա)

Եւ քանզի յանկալիցք միմեանց են
 հադորդութեամբ և դարձեալ հակառակ
 միմեանց գտանին»: (էջ 77)

Ճիշտ նույն սկզբունքով է ընդօրինակված ամբողջ «Վեցօ-
 րեան», բացառությամբ մի քանի դեպքերի, որոնցում գրիչը հա-
 մառոտում է ոչ թե բառեր, արտահայտություններ կամ առանձին
 նախադասություններ, այլ ամբողջ էջեր: «Վեցօրեայի» վերջնամա-
 սում նույն գրչությամբ գրված է մի հիշատակարան, որտեղ գրիչը
 Բարսեղ Կեսարացու մասին մի քանի գովեստի խոսք ասելուց հետո
 պատճառաբանում է գործիս հատվածաբար ընդօրինակումը՝
 «Օայրաբաղեցի զյայտնին եւ որ դիւրքնկալն է իմոյ, եւ որ, ըստ իս,
 են պակասիմաց ուսումնասիրաց անձանց, յորս սուղ ինչ աշխատե-
 ցա բանաբաղութեամբ, եւ տունտուրեամբ համբալի միում Քրիս-
 տալիւրի՝ մըգուզ գրչի և անվարժ գրողի...»⁵ (էջ 68ա):

5 Այս և մյուս հիշատակարանների հրատարակությունը տե՛ս «Հայերեն ձե-
 ուղագրերի օձ դարի հիշատակարաններ», Գ. Ա. Կաղմեցիին Վազգեն Հակոբյան,
 Աշոտ Հովհաննիսյան, Սրբեան, 1974, էջ 523—524:

8. Ձեռ. №1243՝ նոտրդիր, միասյուն: Բովանդակությամբ, բնորոշինակման տեղով ու ժամանակով երկու մասից է բաղկացած ա) Եսայի նշեցույ՝ Մեկնութիւն Եղեկիէլի (էջ 5ա-331ա)՝ ընդօրինակված 1721 թվականին, Թոմա առաքյալի վանքում, Ստեփանոսի ձեռքով, բ) Բարսղի Կեսարացույ՝ Մեկնութիւն Վեցօրէից (էջ 337ա-463ա)՝ ընդօրինակված 1681 թվականի օգոստոսի 25-ին, Զմյուռնիայում, Պողոս Յղնեցի գրչի ձեռքով (էջ 463ա): № 1243 գրչագիրը համեմատաբար մոտ է «Վեցօրեայ» ճառերի հրատարակության հիմք գրչագրին: Հիշատակարանները մատենագրական նորույթ չեն պարունակում (էջ 27ա, 463ա, 464բ), այլ պարզապէս ձեռագրի բնորոշինակման ժամանակի և պարագաների մասին սովորական տեղեկանք լինելուց բացի՝ հիշարժան լինելու աղերս են:

9. Ձեռ. № 5819՝ ընդօրինակված ԺԸ դարում, գրչույթունը՝ բուլղոսի, միասյուն: Ընդօրինակվել է ընդհատումներով: Բացակայում են «Վեցօրեայ» Զ, է, Ը, Թ ճառերն ամբողջությամբ և Ե ճառի երկրորդ կեսի մի ընդարձակ հատված: Ավարտվում է «և ունին ծաղիկքըն իւրաքանչիւր աղզի-աղզի հոտս անուշութեան» նախադասությամբ (հմմտ. տղադիր, էջ 102₂₆): Ձեռագրում որևէ հիշատակարան չկա, որում, թերևս, բացատրվեր կամ պատճառաբանվեր Զ—Թ ճառերի չղոյտությունը: Բաղմանկյունածև կնիքում (էջ 37բ, 38բ) համառոտագրված է՝ Ք-Մ [Քրիստոսի ծառայ], այնուհետև ներքևի մասում՝ Սիմէօն վարդապետ:

10. Ձեռ. № 4001՝ Կ. Պոլսում, 1720 թվականին, Եսայի գրչի ձեռքով ընդօրինակված ժողովածու է: Գրչույթունը՝ բնաիր, երկսյուն: Համեմատությունից պարզվում է, որ սույն գրչագիրը բնորոշինակվել է մեզ արդեն ծանոթ № 6731 ձեռագրից, նրա իսկ հիշատակարանով (հմմտ. էջ 118ա), բայց որոշ տարբերություններով: № 6731 գրչագրի նմանությամբ, քաղաքում այս գրչագրում էլ Բարսեղի փոխարեն ամենուր Վասիլ է օգտագործվում (էջ 89բ, 93ա, 99ա, 102ա, 107բ, 110բ, 114ա):

11. Ձեռ. № 1939՝ ընդօրինակված է Հակոբ սարկավազի ձեռքով, քառածալ նոտրդիր, 1758 թվականին, «ի Թէոդոսյօլիս»: Գրչույթունը «Վեցօրեայ» է, որի խորագրերը և առաջին տողերը զարդագիր են, այբուբենի բաղմամբիվ տառերով, առանց հատուկ հետևողականության զարդագրեր կան նաև տողասկզբում, տողամիջում և այլուր: Գրիչը ամենուր գաղափարագիր-պատկերանշաններ է օգտագործում երկիր, լուսին, արև, աշխարհ և նմանօրինակ հասկացությունների համար: Յուրաքանչյուր թերթի վերջում առանձին

տրվում է հաջորդ էջի առաջին բառը: Ձեռագրում կան առանձին բա-
ւերի, արտահայտությունների, երբեմն էլ նախադասությունների
սոսկ մեխանիկական բացթողումներ՝ կապված մոտ հատվածնե-
րում նույնական բառերի շփոթի հետ: Գրչագիրս ընդօրինակելուց
հետո (հնարավոր է հաև ընթացքում) կատարվել են մասնակի
ուղղումներ՝ լուսանցքներում և բուն տեքստում: Երբեմն անհարկի
դիտվող տառը, վանկը կամ բառը ուղղակի քերված է, հանված: Այս
և լուսանցադիր ուղղումները կատարված են նույն ձեռքով, ծառա-
յում են միևնույն նպատակին և ընդունելի են: Երկու դեպքում էլ,
համոզված ենք, գրչի վերահսկողությունն է առկա:

Սույն ձեռագիրն ունի գրչի ընդարձակ հիշատակարան և հիշա-
տակագրություն: Վերջինս № 3457 գրչագրի հիշատակագրության
համառոտված տարբերակն է:

Ահա գրչի ընդարձակ հիշատակարանը. «Շնոհիս փրկչին և
փրկողին գոխեգես արիամբն իւրով գՎեցօրեայ վարդապետաւորինս
Մեծին Բարսղի արեւայիսկապոսին Կեսարիոյ. անհոգ առնելով մե-
զտեսութենէ վայելչատիպ ցուցման տառից այլ՝ միայն ուղղութեան
բանիցն և գաղափարացն պատրաստութեան, որպէս ոսկի ունիլ
ցանկան ամենայն ոք և զայս և մեք: Եւ քէպէտ լիցի ումեք զայս ասել
քէ՛՝ ո՞չր պատճառաւ, պատասխանեմ քե՛՝ սակս նախանձատրացն
ազգիս՝ մեռոց ոմանց, որ քէ՛ ոք ընթերցաւէր ունակացեալ է կտո-
րիկ մի բան ուստի և իցէ զայն մեծաւ ջանիւ և կարի զգուշութեամբ
պահեալ ունի առ իմեմ: Թէ՛ մի լիցի դէպ ոք առ ի տեսանել իբրու քէ՛
ընդ իւր տանելոց է ի գերեզման, որ ոչ ցուցանէ ումեք, գոր այսու
նախանձու մեծամեծ գրեանս սբոց հարցն մեռոց, ո՛չ տալով թոյլ
տեսանել այլոց սակս նախանձու (որպէս որքն նախանձոտ է հար
զղմենին յունանու. գի մի՛ գովասցի ի շքոյ նորին): Վերջացան
գրեանք մեր՝ ոմանս խառնելով գրոյնս ի ներս, և ոմանս այրեալ և
ոչընչացեալ. գոր տէր լիցի մեզ այցելու, և դիպողաց խնդրեմ զո-
ղորմիս. ամէն: Յակոբ սարկաւազ, ՌՄէ [= 1758], մարտի ամսոյ
Ա. ի Թէոդուպօլիս քաղաքի...» (էջ 97բ):

12. Ձև. № 7028՝ ընդօրինակվել է 1761 թվականին, Հակոբ քա-
հսնայի ձեռքով, գրչությունը՝ նոտրդիր, միասյուն: Ճաների խորա-
զերը և սկզբնավորումները զարդագիր են (կարմիր թանաքով):
Նախորդ՝ № 1939 գրչագրի նմանությամբ որոշ հասկացությունների
համար օգտագործվել են պատկերանշաններ: Այստեղ ևս կան մոտ
հատվածներում կրկնվող նույնանուն բառերի շփոթի հետևանքով
առաջացած բացթողումներ: № 1939 գրչագրի նմանությամբ, այս-

տեղ էլ, Ե ճառից սկսած՝ տպագրի համեմատությամբ տարբերությունները կրկնակի անգամ շատ են, քան Ա—Գ ճառերում: Չնայած գրչագրի փոքր շտապին, տեքստը (միասուն) ընդօրինակվել է թերթերի միջնամասում: Գրչագիրս ունի կրկնակի՝ երկու տարբեր էջակալում՝ թանաքով և մատիտով: Առաջնորդվել ենք վերջինով: Գրչի ուղղումները մատնացուցվում են համապատասխան նշաններով:

№ 7028 գրչագիրը եղել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի սեփականությունը: Առաջին էջում պահպանվել է ճեմարանի կտր կրնիքի պատճենը՝ համապատասխան ուսերեն մակագրությամբ: Գրչի միակ հիշատակարանը առկա է Գ ճառի ավարտից անմիջապես հետո. «Ձնուստ և զանիմաստ գրիչս՝ զտէր Յակոբ շնչին Բահաւնայս, յիշեսցիք ի տէր, որ եմ կեսաւացի և ի զիւլէն յնեֆառացի» (էջ 63բ): Ձեռագիրս ունի նաև այլ գրչությամբ ու բովանդակությամբ հիշատակարաններ (էջ 2ա, 3ա):

13. Ձեռ. № 10258՝ ընդօրինակված է 1820 թվականին, Միշագյուղում (Կ. Պոլիս), Սերովբե Ակնեցու ձեռքով և, հավանաբար, Մկրտիչ Ակնեցի վարդապետի խնդրանքով (էջ 2ա), Գրչի վկայությամբ՝ «զաղափարեցաւ հաւատարմութեամբ յրևոխ օրինակէ. գրելոյ յամի 1420, ձեռամբ նուստ Սերովբէ զպրի և հօտարի Պետրոսեան Ակնեցոյ» (էջ 2ա): «Վեցօրեայի» թարգմանության մասին կա հետևյալ հաղորդումը. «թարգմանեցեալ ի յունականէն ի հայկական բարբառ, ի ձեռն ճշմարտաբանից թարգմանչաց մերոց» (էջ 2ա, հմմտ. Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 82): Մինչև «Վեցօրեայ» առաջին ճառի սկսվելը կա «Մի որ ի քննողաց զպարտեսցէ զԱստուծոյ զստուգութիւն» սկսվածքով «Յստաջաբանութիւն» (20 տող), որը բառ առ բառ նույնանում է № 620 գրչագրի նման ընծայական-առաջաբանի հետ (ձեռ. № 10258, էջ 3ա, հմմտ. ձեռ. № 620, էջ 213ա):

14. Ձեռ. № 5686՝ ինչպես պարզվում է համեմատությունից, այս ձեռագիր «Վեցօրեան» ընդօրինակվել է № 10258 ձեռագրից: Ասվեց, վերջինս ընդօրինակվել է 1820 թվականի սեպտեմբերին, Կ. Պոլսում, № 5686-ը նույնպես նույն թվականին, նույն տեղում, բայց հոկտեմբեր ամսին (էջ 2ա): Թարգմանիչների մասին հիմք գրչագրի վկայությունները բնականաբար ընդօրինակված են նաև այստեղ: Համաչափ հեռավորությամբ զույգ շրջագծերի միջնամասում մակագրված է. «Լիմ անապատի սրբոյն Գևորգայ կարողիկո-

սի. Քրիստոս» (էջ 2ա), կենտրոնում սպառազեն հեծյալ է պատկերված:

Դասդասելով նկարագրված ձեռագրերը, կունենանք հետևյալ խմբերը.

ա) Միենույն մայր գրչագրից են ընդօրինակվել №№ 620, 3457, 10258, 5686 ձեռագրերը:

բ) «Վեցօրեայի» խորագրի, օտարված էջերի, ընդօրինակողի հիշատակարանի, բաղում սխալների և «Բարսեղ» անվան փոխարեն «Վասիլ» գրությունները ընդհանրապես և մեկ այլ խումբ են կազմում №№ 6731 և 4001, այսպես կոչված, քաղաքացիական գրչագրերը:

գ) Օտարված առանձին հատվածների, երբեմն էլ ամբողջական ձևերի շարքերի հիմքի վրա առանձնանում և նոր խումբ են կազմում №№ 5353, 1657, 8352, 5819 պակասավոր գրչագրերը:

դ) Թե՛ տեքստային և թե՛, մանավանդ, գրչական ընդհանրության նկատելի ելրով համեմատելի է «Վեցօրեայ» ձեռագրերի վերջին՝ №№ 5595, 1243, 1939, 7028 խումբը:

* * *

Հայագիտության մեջ այլևայլ առիթներով նկատվել է, որ Կեսարացու «Վեցօրեայ» ձեռքի միակ հրատարակությունը սխալաշատ է և կարոտ սրբագրության: Հրատարակիչը ջանացել է նարավորության սահմաններում ուղղել այն «ըստ յոյն բնագրին և մանաւանդ ըստ կարգի բանիցն պահանջելոյ»: Բայց բանի որ հրատարակությունը կատարված է «ոչ հին և ոչ ընտիր գրչովիւն, այլ վրիպագիր բազում ուրեք և յանհմտութենէ աղաաղեալ» գրչագրից, ուստի և «մնաց տակաւին ոչ սակաւ մթութիւն և երկբայութիւն աստ և անդ»:

Ըստ նոր հայկազյան բառարանագիրների՝ «Վեցօրեայ» ձեռքում գրչական սխալներ կան, «որք կարօտին ուղղագրութեան կամ ստուգագրութեան հնազիր օրինակի»⁵: Իսկ Ն. Բյուզանդացու խոսքերով ասած՝ «Տպագրութեամբ ի յոյս ընծայեալ նախնեաց մատենագրութեանց մէջ կրնամ ըսել, որ շիւղ առելի ասպականեալ և խանգարեալ քան զսրբոյն Բարսեղի Վեցօրեայի»⁶:

⁵ա «Նոր բառգիրք հայկազան լեզուի», հ. Ա, Վենետիկ, 1836, Առաջարան, էջ 19 (այսուհետե՛ նշվ):

⁶ Ն. Բյուզանդացի, Հայկական բառարանություն, Կ. Պոլիս, 1880, էջ 61:

«Վեցօրեայի» հայերեն թարգմանության մասնակի սրբագրության մեջ զբաղվել են Ն. Բյուզանդացին⁷, Ս. Նագարեթյանը⁸, Գ. Նահապետյանը⁹ և Հ. Թորոսյանը¹⁰: Ըստ արժանիության գնահատելով բանասերների այդ ուղղությունը կատարած աշխատանքը, պետք է նկատել, որ նշված սրբագրություններով հարցը չի սպառվում, քանի որ բանասերներից չուրաքանչյուրն իր ձեռքի տակ ունեցել է մեկ կամ, լավագույն դեպքում, երկու գրչագիր և առաջնորդվել դրանցով: Մինչդեռ վերևում նկարագրված տասնչորս բուն «Վեցօրեայ» ձեռագրերը հնարավորություն են ընձևում կատարելու մի շարք նոր ձշտում-վերականգնումներ, երբեմն էլ նոր վկայությամբ հավաստելու նախորդ կատարվածը:

Արդ, քննենք այգործինակ մի շարք վերականգնումներ՝ անհրաժեշտության դեպքում վկայակոչելով «Վեցօրեայի» ոչ միայն հայերեն ձեռագրերն ու հունարեն բնագիրը, այլ նաև հին վրացերեն (երկու) և հարակից թարգմանությունները¹¹:

«Վեցօրեայ» ձառերի միակ հրատարակությունում կարդում ենք. «Ը բարբառք լուստացն տեղի ապականությունն և ազտեզու»:

7 Նույն տեղում, էջ 11—12, 61—69:

8 Ս. Նագարեթյան, Ախնարի ս. Բարսեյի «Վեցօրեայ» վրայ, «Պատկեր» (Կ. Պոլիս), 1892/93, 1893/94, 1894/95:

9 Գ. Նահապետյան, Ուղղագրությունը սղոթային մատենագրաց, Վենետիկ, 1907, էջ 183—248:

10 Յ. Թառսևան, Ս. Բարսեյի Կեսարացի, իր «Վեցօրեայ» ձառերը և նոր թարգմանությունը, «Թարգմանություն», 1934, էջ 327—336, 412—422:

11 Դյուրություն համար գործածում ենք պայմանական նիշեր ու հապավումներ. A—ձև, № 5595, B—ձև, № 5353, C—ձև, № 1657, D—ձև, № 8352, E—ձև, № 620, F—ձև, № 3457, G—ձև, № 6731, H—ձև, № 1243, I—ձև, № 5819, K—ձև, № 4001, L—ձև, № 1939, M—ձև, № 7028, N—ձև, № 10258 և Պ—ձև, № 5586: Հրատարակությունները «Hexaëmeron» (Basile de Césarée, Homélie sur l'Hexaëmeron, Paris, 1968, հմտ. PG (Migne, Patrologia Graeca, t. 29), «Վեցօրեայ» («Սրբային Բարսեյի եպիսկոպոսի Կեսարու Կապադոկիացուց ձառք վանս Վեցօրեայ արարչութեան», Վենետիկ, 1830), «Գլխառու լուստառ» («„դիցվեցա իր ճակցոյցն ձառուլոց կեսարուցն „գլխառու լուստառ“ և գրող Նուբեղոս տարգմանեց յ „կարգս ձառնառուցն“... ցամոսցա... լուստառ ձառնառուցն, տ.ձ., 1964), ձառուլոց ձառնառուցն (ձառնառուցն ձառնառուցն, Գլխառու լուստառ, Գլխառու լուստառ, տ.ձ., 1917):

Վրացերեն թարգմանություններից առաջինը կատարված է արարներից, մինչև X դարը, երկրորդը՝ հունարենից՝ «Шестоднев» («Творения иже бо святых отец нашего Василия Великого, Беседы на Шестоднев», М., 1891):

թեան յիշատակեն ի միտս նոցա»¹²: Ընդգծված բառը անհասկանալի է թե՛ ալտեղ, թե՛ առհասարակ և ենթադրելի է, որ ներկա դեպքում այն աղավաղված կարող է լինել գրչական ձանապարհով: Լորտացն բառ-ընթերցումն ունեն ABCFJHLMN գրչագրերը, իսկ G և K ձեռագրերում բառս պարունակող հատվածն ամբողջությամբ բացակայում է: Սակայն D և E գրչագրերը նշված բառի փոխարեն համապատասխանաբար տալիս են գրեթե միանման՝ լսիւ ստոցն, լոււ ստոց ընթերցումները: Արդ, վերևում աղավաղում դիտված լորտացն բառածևր թերևս «լոււ ստացի» սխալ ընթերցման հետեանք է, որտեղ գրիչը ձեռագիրն ընդօրինակելիս, հավանաբար, «լուրը» ընթերցել է «լոր» (ու > ո) և հարկադրաբար միացրել «սուտք» բառի «ստաց» հոլովածեին ու ստացել «լորստաց» աղավաղումը, որը, ասվեց, անհասկանալի է և, թերևս, պետք է վերականգնել «լուր ստաց» ձևով: (Ինչ վերաբերում է D գրչագրի «լսիւ ստոցն» ձևին, ապա այն՝ նույնի ուշ շրջանի տարրնթերցում է, իմաստավորման երանգով):

Նման վերականգնման փորձն էլ, սակայն, հասկանալի ու վերջնական չէ նախ տվյալ հատվածի իմաստի անհասկանալիության պատճառով և ապա նույնի հունարեն բնագրի հետ ունեցած նկատելի անհարապատկյամբ: Բնագրում «և բարբառօ լորստաց»-ի դիմաց ունենք «αα. ββαααα πρρρρρρ»¹³ արտահայտությունը (և պոռնիկ երգերը):

Դժվար չէ նկատել, որ հայերեն թարգմանությունը (ձեռագիր) պատմողաբար կամ էլ հարեանցի է արտահայտում բնագրի իմաստը, բայց, դրանով հանդերձ, կարելի է ասել, երկու դեպքում էլ միևնույն ժխտողական վերաբերմունքն է. մի դեպքում խիստ (բնագիր), մեկ այլ դեպքում՝ հայերեն թարգմանությունում, համեմատաբար մեղմ, «սուտ» բնորոշմամբ: Բայց դա, ինչպես կոտեսենը

¹² «Վեցօրեայ», Լջ 66: «Լորստացն» բառի մասին Հ. Աճառյանը գրել է. «Լորտաց, ի—ա իլ. անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է սեռ. լորտաց ձևով...: Այս բառը շունի նշք. իսկ ՋԲ (Իբր անստոյգ բառ) և ԱԲ մեկնում են «անհամեստ երգ, անամոթ՝ բաց երգ»: Սեռ. լորտաց ձևից կարելի է ենթադրել ուղ. թե՛ լորտատ և թե՛ լորխառ. բուն ձևը անյայտ է: Նշանակութիւնն էլ ըստ իս «երգիչ» է և ո՛չ թէ «երգ», որով համազօր ձևեր են դառնում «ձայնք երգչադն և բարբառք լորտացն» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, Լջ 298):

¹³ „Hexaéméron“, էջ 244, հմմտ. PG, էջ 80. սուսերենում՝ «шестолетние песни». («Шестолетие», Լջ 53):

այլ առիթով, պայմանավորված է ոչ միայն նշված արտահայտու-
թյան, այլ այն պարունակող և բաղմամբիվ այլ հատվածների բնա-
գրից հեռացող և որոշ իմաստով վերջինիս լրացնող ազատ թարգ-
մանությունամբ: Նույնը չի կարելի ասել նշված արտահայտություն
վրացերեն երկու անկախ թարգմանություն-խմբագրությունների
մասին. ա) «განცხრომაჲ მრუშეობისაჲ», բ) «ბილწი მრუშეობისაჲ»¹⁴,
սրոնցում, ինչպես տեսնում ենք, հունարեն բնագրի բառացի թարգ-
մանությունն է անկա:

Այդուհանդերձ, իրականում հայերենի ո՛չ «լորստացը» և ո՛չ
էլ «լուր ստացը» շունեն բնագրի և հարակից թարգմանությունների
միանգամայն հասկանալի իմաստը: Ենթադրելի է, որ հայերեն ձե-
ռագրերը «լորստաց»-ի դիմաց նախապես ունեցել են բնագրային
պոռնկաց ընթերցումը և հետագայում, ընդօրինակման ճանա-
պարհով, այն ազդավազվել է: Նման ենթադրությունը ճշմարտամոտ
է թվում հետևյալ պատճառով. «Վեցօրեան» հին թարգմանություն
է և, բնականաբար, պետք է ընդօրինակվեր երկաթազիր գրու-
թյամբ՝ «ՊՈՒՆԿԱՅ», որի «Պ-ն» թանաքի թափվելու հետևանքով
կարող էր ընթերցվել «Լ», «Ռ-ն»՝ «Ր», «Ն-ն»՝ «Ս», «Կ-ն»՝ «Տ» և
ստացվեր «ԼՐՐՍՍԱՅ», որը և իր հերթին հետագայում կարող էր
դուռ բացել նոր ընթերցումների համար (լուր ստաց, լսիւ ստոցն):
Ասվածը իրականությանը մոտ ու հավանական ընդունելու դեպքում
հրատարակության լուրստացն անհասկանալի ընթերցումը պետք է
փոխարինել պոռնկաց բնագրային բառով և հատվածը վերընթեր-
ցել. «և բարբառք պոռնկացն տեղի ապականութեան և աղտեղու-
թեան յիշատակեն ի միտս նոցա»:

«Վեցօրեայում» նկարագրված տոնախմբություններին հարա-
կից ձիավարությունները պատկերող հատվածում կա այսպիսի
միտք. «և հասպտեպ փոփոխեն զերիվարսն և զկառս»¹⁵: Հատվածը
երբ քննում ենք ամբողջության մեջ, բնավ չի պատճառաբանվում
ընդգծված բառի կիրառումը ներկա դեպքում, Այնտեղ խոսքն ի տես
ամենքի կատարվող հնարամիտ ու կատարյալ ձիավարություն-
մրցույթի մասին է, ուր պետք է նկատվեն ոչ թե երիվարների տո:

¹⁴ «ՉՉՉՍՏԱ ԸԼԼՏՈՒՅԱՆ». էջ 53, ԾՆՏԻԼԻ ԸԴԸԴ, էջ 41: Տակալին միջնագա-
րում «լուր ստաց», «կորստաց» այլընթերցումները ընկալվել են բնագրի պա-
հանջվող իմաստով՝ «զվկտի Երզն ասլ, որ աղտեղի յիշատակս ածնն ի միտս լը-
սողացն» (Ձեռ. N° 621, էջ 57ր, հմ նտ. ձեռ. N° 5032, էջ 151ր):

¹⁵ «Վեցօրեայ», էջ 67:

կունութիւնը և կառքերի ամբուստիւնը, այլ, առաջին հերթին, կառքը վարողների հնարամտութիւնը և ճարպկութիւնը, ուստի և տրամաբանական կլինէր կարծել, որ փոփոխվում են ոչ թե երկվարները և կառքերը, այլ կառքերը և կառավարները (կառք վարողները): Ձեռագրերի համեմատութիւնից պարզվում է հետևյալը. ABCHIJ-LM խումբը հայերեն թարգմանութեան բերված հատվածի զկառք բառի փոխարեն պահպանել է զկառավարսն ընթերցումը, G և K գրչագրերում նշված հատվածը բացակայում է ամբողջութեամբ, D-ում չկա միայն զկառք բառը, իսկ EFN ձեռագրերը տպագրի նրամանութեամբ պահպանել են զերիվարսն և զկառք ընթերցումը: Արդ, ինչպես տեսնում ենք, ձեռագրերի մի խմբում «զկառք» բառը փոխարինվել է «զկառավարսն» ընթերցմամբ, մեկ այլ դեպքում այն օտարվել է առանց բառային հավելման, իսկ երրորդ պարագայում շունենք «զկառավարսն» ընթերցումը: Այսօրինակ տարբերությունների առկայությունն ինքնին ենթադրել է տալիս, որ հատվածիս ոչ միօրինակութիւնը, թերևս, առաջացել է ընդօրինակման ճանապարհով. հնարավոր է, որ «զկառք» և «զկառավարս» բառերը հայաված գրութեամբ ընկալվեին միևնույն իմաստի անհարկի կրկնութիւն և, բնականաբար, դրանցից մեկը գրիչների միջամտութեամբ մի դեպքում կարող էր օտարվել, մեկ այլ դեպքում՝ փոխարինվել նոր բառով:

Վերոբերյալ հատվածի դիմաց հունարեն բնագրում կարգում ենք. ἀναγὰτα μεταξυσυώνωνος καὶ ἡρώτωνος μεταξὺν ἑνῆδεκά¹⁶ (կառքերն են փոխվում (=վերալծում) և կառավարները փոփոխում): Հունարենի նմանութեամբ խոսքը կառքերի և կառավարների փոփոխման մասին է նաև վրացերեն խմբագրութիւններից մեկում՝ «და ეტლთა შუაჟულგებნ, და მწაფელთა განაწესებებნ»¹⁷: Հետևաբար, «Վեցօրեայի» հունարեն բնագրի, վրացերեն թարգմանութեան նմանութեամբ ու հայերեն ձեռագրերի ընթերցման հնարավորութեամբ վերոբերյալ հատվածը պետք է կարդալ. «և հաստտէպ փոփոխեն զկառք[ն] և զկառավարսն»¹⁸:

¹⁶ «Hexaéméron», էջ 246, հմտա. P.G., էջ 80, ուստերնում՝ «перепреляют колесницы, переменяют возничих» («Шестоднев», էջ 53):

¹⁷ ձեռքի Ժողով, էջ 41: «Վեցօրեայի» վրացերեն հնագույն խմբագրութիւնում մեկ հետաքրքրող հատվածն օտարված է. «ეჭუსთა დღეთაჲსა», էջ 53:

¹⁸ «Զկառքի» թարգմանական հիմք շունենալը երևում է նաև նախորդ բառի հոդային անհամաձայնութիւնից: «Վեցօրեայից» բաղամասիկ օրինակներ կարելի է

«Վեցօրեայ» Դ ճառում կարդում ենք. «Եւ ի բանիցն՝ որ ընթացան առաջի մեր, տեսանեմք այժմ՝ զերագընթաց զնացս նոցա»¹⁹: Հնգհծված բառը այստեղ կասկածելի է այն իմաստով, որ իր նշանակութեամբ չի համապատասխանում տվյալ նախադասության մեջ պահանջվող բովանդակությանը. այսինքն՝ բան, խոսք հասկացությանը տրամաբանական չի լինի ուղղակի իմաստով ընթանալու հատեանիչ վերագրել: ABC դրչագրերը ընթանան բառի փոխարեն տալիս են ընթերցան տարբերակը, E ձևագրում ունենք նույնի ընթացան ձևը, իսկ մնացած դրչագրերը նույնանում են տպագրի հետ:

Վկայակոչված հատվածի ընդգծված բառի դիմաց հունարենում ունենք «ἕξ ἡμέρας ἑβδομάτης»²⁰ (= մեկ [համար] ընթերցված) դերբալական ձևը, այսինքն՝ ինչպես նշված դրչագրերում, բնագրում՝ նույնպես խոսքը ընթերցելու մասին է և ոչ թե ընթանալու: Նույն իրողությունն է սուկա նաև վրացերենում. «წარვკვიტებთ»²¹ (= կարդացինք) և «ჩვენ მიერ წარკვიტულთა»²² (= մեր կողմից կարդացված):

Վրացերեն խմբագրություններում, ի տարբերություն հունարենի, երկու դեպքում էլ կարդացողը իրենք են և ոչ թե իրենց համար ուրիշներն են ընթերցել: Դա կարող էր առաջանալ մեք և մեզ դերանվանական ձևերի շփոթի հետևանքով:

Այսպիսով, անհիմն չի լինի վերը նշված նախադասության ընթանան բառը հայերեն նշված դրչագրերի և մանավանդ հունարեն բնագրի թելադրանքով ու քննվող նախադասության իմաստի պահանջով փոխարինել ընթերցան տարբերակով և հատվածը կարդալ. «Եւ ի բանիցն՝ որ ընթերցան առաջի մեր, տեսանեմք այժմ՝ զերագընթաց զնացս նոցա»²³:

Նմանօրինակ դրչական շփոթ կա տպագրի «Վեցօրեայի» նաև հետևյալ հատվածում. «Արդ որչափ պատճառս կպերանաց պանես-

վկայել, որոնցում նույնական միևնույն կիրառությամբ շաղկապված բառերը նույն հոդառություն ունեն անխտիր, ներկա դեպքում ձևական առումով գոնե պետք է ունենալինք «զերիվարսն և գկտոսն». այդ է հուշում նաև «զկատավարսն» վերականգնվող բառը:

¹⁹ «Վեցօրեայ», էջ 68:

²⁰ „Hexaéméron“, էջ 246, հմմտ. PG, էջ 80, սուսերենում՝ «πρωτηνου του παμου» («Προτομικου», էջ 54):

²¹ «ქვეტთა ღვეტთახსა», էջ 54:

²² ձևերը ԾԾԾ, էջ 41:

²³ նման վերականգնման անհրաժեշտությունը այնքան ակնհայտ է, որ բանասեր Ռորոսյանը իր ձեռքի տակ եղած մեկ դրչագրի և հունարենի հիմքի վրա ընթանան բառն ուղղում է ընթերցան (2. Ռորոսյան, նշվ. աշխ., էջ 415):

ջիր յինէն, վասն որոյ արկեալ էր զճառս»²⁴: Ինչպես նախորդ գեղարքում, այս անգամ էլ ABC ձեռագրերը տալիս են ընդհանուր տարրնթերցում՝ պահանջելիւր²⁵, որին նման են D ձեռագրի պահանջեցես և E-ի պահանջեսցես ընթերցվածները, GK գրչագրերում նըշված հատվածը բացակայում է, իսկ մնացած ձեռագրերը նույնանում են ապագրի հետ:

Բերված հատվածում և շարունակության մեջ Կեսարացու խոսքը աշխարհատեղծման, նրանում առկա բաղում երևույթների ճըշմարիտ պատասխան-բացատրությունը գտնելու և ունկնդրին հասցրնելու խնդրում իր կրած ստղտանքների, եպերանաց մասին է, որոնց պատճառը պահանջում են իրենից և ոչ թե պահում: Նույն պահանջելու մասին է խոսքը նաև հունարենում՝ ἡπαίρειον²⁶ (ἡ παίρειον — ետ պահանջել) և վրացերեն խմբագրություններում²⁷, ուստի և ճիշտ կլինի նշված հատվածը կարգալ. «Արդ որչափ պատճառս եպերանաց պահանջելիւր յինէն, վասն որոյ արկեալ էր զճառս»:

Ինչպես պարզվում է տպագիր «Վեցօրեայի», գրչագրերի և հունարեն բնագրի համեմատությունից, հրատարակության հիմք ձեռագիրը առավել անկատար ու խաթարված է եղել տեղանուններ, ծովերի անվանումներ և առհասարակ հատուկ անուններ պարունակող հատվածներում: Այսպես, օրինակ, Կեսարացին մի խումբ ծովանունների թվարկումն ավարտում է հետևյալով. «և մեւսն Սիկիլիա աշխարհին. զարձ բազում ևս այլ անուամբք...»²⁸: Մեր ձեռքի տակ եղած բոլոր գրչագրերը, ի տարբերություն տպագրի, վկայում են, որ առկա հատվածից երբևէ ինչ-ինչ ճանապարհով դուրս է թողնրվել «Տիր[են]ոս» (DKN — «Տիր[են]ոս») տեղանունը, որը պահպանվել է նաև հունարենում՝ «αἱ Τηρρεῖον»²⁹ և վրացերեն խմբագրություններում՝ «და ტჳրონიკიდაჰსა»³⁰ և «და ტჳრონიսა»³¹:

²⁴ «Վեցօրեայ», էջ 68: Այս և նման որոշ հատվածների սրբագրման ելքը շրջտնելով, բայց անհրաժեշտությունն անվերապահ զղացած Ս. Նազարեթյանը գրել է. «Անիմանալի բռներ, անհասկընալի կմպիր, առանց իմաստի իմաստ մը» («Պատիկեր», 1893, № 1, էջ 15):

²⁵ Ա-ն պահպանել է «պահանջելիւր» գրությունը, որը, հարկավ. հին է:

²⁶ «Hexaëteron», էջ 248, հմտա. PG, էջ 80, ուսուերենում՝ «ребуя причины» («Шестоднев», էջ 54):

²⁷ «გეგესთა დღეთაჰსა», էջ 54, հմտა. ბასილი დიდი, էջ 41:

²⁸ «Վեցօրեայ», էջ 75:

²⁹ «Hexaëteron», էջ 262, հմտա. PG, էջ 80, ուսուերենում՝ «Тирренское» («Шестоднев», էջ 52):

³⁰ «გეგესთა დღეთაჰსა», էջ 56:

³¹ ბასილი დიდი, էջ 45:

Բերված հատվածում նկատելի է մեկ այլ իրողություն ևս, որը, սակայն, հոնարեն բնագրով չի պատճառաբանվում: Խոսքը դա՛նք բազում արտահայտությանն է վերաբերում, ուր ոչ մի կերպ հասկանալի չէ «գարձ» բառի կիրառությունն իր հիմնական նշանակու՞թյամբ: Գրչագրերը, բացառությամբ տուպգրի հետ նույնացող Ե ձեռագրի, նշված արտահայտության փոխարեն պահպանել են հանդերձ բազում այլընթերցումը, որով և հասկանալի է դառնում հատվածի իմաստը: Ուստի ճիշտ կլիներ այս և նախորդ գիտողություններն ի նկատի ունենալուց հետո հատվածը կարդալ. «և մեան Սիկիլիա աշխարհին, և մեան Տիւր[են]ոսի՝ հանդերձ բազում ևս այլ անուամբը»³²:

Արարչագործության պատմությունն անելիս Կեսարացին, վերապատմելով երկրի ջրով ծածկված լինելու աստվածաշնչյան հաղորդումը, ունկնդրին պոլուշացնում է ջրերի վերացման, երկրի երկվալու պատճառ շնանաչել արևին, քանզի «յառաջագոյն քան զարեղակն սարսատէր ցամաքէր հրամանաւ ամենայարդար իմաստութեան»³³: Գրչագրերի գերակշռող մասում բերված հատվածը կա նույնությամբ: Սակայն երեք ձեռագիր (ABC) ընդգծված բառի փոխարեն պահպանել են առաջին ընթերցվածքը: Խոսքը արարչի մասին է նաև բնագրում՝ «շոն ճղատարչոն»³⁴ և վրացերեն իմբագրություններում՝ „ճամծաճցծցլճմճ“³⁵:

³² «Հանդերձ» ընթերցումն է առաջագրվել նաև Գ. Նահապետյանի, Զ. Ռոբոտյանի և Ս. Նազարբեկյանի կողմից (տե՛ս Գ. Նահապետյան, *նշվ. աշխ.*, էջ 204, 3. Ռոբոտյան, *Անանիա Շիրակացին և Արարատ թերթին մէկ յաւելուածը*, «Բաղմավէպ», 1896, էջ 217, «Պատկեր», 1893, № 1, էջ 20): Ինչպես կտեսնենք, նման վերականգնումը պատճառաբանվում է նաև Շիրակացու մի վկայությամբ: Բացի այդ, «Հանդերձ-ի» բաղմաթիվ նմանօրինակ կիրառություններ կան «Վեցօրեայում»: Դյուպիս, *օրինակ*, «հանդերձ այլ ևս խոսնաճաղանճ բաղմութեամբ ձկանցի» (էջ 139), «զեռան մանուկն հանդերձ մեծամեծովք» (էջ 139), «հանդերձ այլ ևս բաղմովք՝ որ սոցին նման են» (էջ 140), «հանդերձ այլովք՝ որ կուլին կէտը (էջ 141), «հանդերձ մանրերամ ձկամբք» (էջ 141), «հանդերձ մանուկը և մեծամեծովք» (էջ 142), «հանդերձ այլ ևս բազում ձկամբք» (էջ 142) և այլն:

³³ «Վեցօրեայ», էջ 76:

³⁴ «Hexaëmeter», էջ 264, *հմտ.* PC, էջ 88, *ուսուերենում*՝ „Создатель“ („Шестоднев“, էջ 59):

³⁵ «յճճեստա ճլճցտալճ», էջ 59, *հմտ.* ծանոթ ճոճո, էջ 46: „Древнереческо-русский словарь“, составил И. Х. Дворецкий, т. I, 1958, էջ 359 (այսուհետև՝ ДРС), *նճԲ*, և, 339, «Յանկ նմանաձայն բառից Նորոյ կտակարանի», *Զմիւռնիա*, 1848, էջ 74:

Հայերեն տպագիր «Վեցօրեայի» ընդգծված բառը աղավաղում չլինելով հանդերձ՝ համարժեք չէ բնագրին և շունի վերջինիս Իմաստային լիարժեքությունը, ուստի և տրամաբանական կլինեն Խոնսուրենի և հայերեն հին գրչագրերի հետևություններ այն փոխադրվել արարչին բառով և հատվածը կարդալ. «յառաջագոյն քան զարեգակն սարսառէր ցամաքէր հրամանաւ ամենայարդար արարչին»:

Առաջին հայացքից թվում է, թե Բարսեղ Կեսարացու ստորև բերվող միտքը ո՛չ թարգմանական և ո՛չ էլ, մանավանդ, ընտրի-նակման ճանապարհով որևէ փոփոխություն, իմաստային անհասկանալիություն ձևեր չի բերել: Նա գրում է. «է երկիր ցամաք և ցուրտ, և միաբանի ընդ ջրոյ յատկութեամբ ցրտութեան»³⁶: Սակայն երբ այն համեմատում ենք պաշտօնական ձևագրերի ու ֆարգամանությունների հետ, պարզվում է, որ երկու ձևագիր (AB) նույնանում են տպագրի հետ, երկուսում հատվածը բացակայում է (GK), երկուսում (DE) ընդգծված բառի փոխարեն ունենք միարանութեան ընթերցվածը, իսկ մնացյալ գրչագրերում վերևում նշված բառի փոխարեն պաշտօնական են յանգութեամբ (C) և յանկութեամբ (LJHFMN) կարելի է ասել միանման այլընթերցումները, որոնք, ըստ նոր հայկազյան բառարանագիրների, նույն բառն են և հավասարապես կիրառելի «յարակցութին», «ազգակցութին», «յաբաբութին» և նման նշանակություններ: Հիրավի, վիպակոչված նախադասությունում, ուր խոսքը երկրի ցամաք ու ցուրտ բնության և ջրերի հետ ունեցած կապի մասին է, դժվար է հավաստել, թե երկիրը ջրի հետ միաբան է ցրտության իր հատկությամբ: Մինչդեռ, թե ձևագրերը և թե՛, մանավանդ, «Վեցօրեայի» բնագիրը հուշում են, որ նշված հատվածի յատկութեամբ բառը պետք է փոխարինել յանգութեամբ այլընթերցմամբ, սրով և կվերականգնվի նախադասության հասկանալիությունը:

Հայերեն տպագիր «Վեցօրեայի» «յատկութեամբ ցրտութեան» արտահայտության դիմաց հունարենում ունենք „ἄλλο παύσιμον ἢ ζεῦσιμον“³⁷, վրացերեն խորագրություններում՝ ա) „შეგრვის წყალსა მახლობლობითა სიცვიისაჲთა“³⁸, բ) „და ცომებდითა მით სიცვიისაჲთა შეგრთვის წყალსა“³⁹, որոնցում խոսքը բառադիտերեն

³⁶ «Վեցօրեայ», էջ 77:

³⁷ „Hexaëteron“. էջ 268, հմտ. PG, էջ 89, սուսերենում „по сродству холодности“ („Шестоднев“, էջ 61):

³⁸ „ეჭესთა დღეთაჲსა“, էջ 60:

³⁹ ბასილი დიდი, էջ 47: Առաջարկվող սրբագրության ստուգությունը

հարակցություն, ազգակցություն (յանգուրիւն) մասին է և բնավ չի պատճառաբանվում յատկութեամբ բառի կիրառումը, ուստի և այն պետք է փոխարինել յանգուրեամբ ընթերցումով և հիշյալ հատվածը վերընթերցել. «է երկիր ցամաք և ցուրտ, և միաբանիք ընդ ջրոյ յանգուրեամբ ցրտովեան»:

Բացառապես ընդօրինակման ճանապարհով առաջացած և բառերի որոշ ձևական-արտասանական նմանություններ պայմանավորված բառային շփոթ կա նաև սույազիր «Վեցօրեայի» այն հատվածում, որտեղ հեղինակը բացատրում է «հուր» հասկացության և առարկայի բնույթը, օդի, երկրի հետ ունեցած առնչությունը և այլն: Այնտեղ կարդում ենք. «Հուր ջերմ և ցամաք բնովինն ունի, կապեալ է ընդ օդոյ վասն ջերմութեան և հաղորդին ընդ երկրի վասն ցամաքութեան, և միջնորդին՝ որ յարին ընդ միմեանս՝ հաստատեալ կա մի բնութիւն նոցա»⁴⁰: Հատվածի համեմատումը հայերեն գրչադրերի, հունարեն բնագրի և «Վեցօրեայի» այլ թարգմանությունների հետ ցույց է տալիս, որ ընդգծված մի բնութիւն բնութեցումը պետք է փոխարինել միաբանութիւն տարբերակով, ինչպես այն կա հունարենում՝ «ἑνότητος ὁμοιοῦ»⁴¹, վրացերեն խմբագրություններում. ա) «Յե՛նաջե՛ծօտ»⁴², բ) «Ե՛րտօց՛տօտ»⁴³ և այլուր⁴⁴:

Ասվածը հաստատվում է նաև հայերեն գրչադրերի մեծ մասի ընձեռած տվյալներով, որոնցից մեկում (G) բննարկվող հատվածը բացակայում է, չորսը (BCHK) նույնանում են սույազրի հետ, իսկ մնացյալ ձևագրերը բնագրի նմանությամբ պահպանել են վերականգնվող միաբանութիւն բառը, որը և պահանջվում է ներկա հատվածում:

Արևի ջերմությամբ պայմանավորված ջրագուրչիացման երկվույթը հասկանալի դարձնելու նպատակով, Բարսեղ Կեսարացին կախաչեով ջուրը կրակի վրա գոլորչիացնելու օրինակն է վկայակո-

հատվում է նաև հետևյալ հատվածով. «Արդ ցամաքն ինչ մի է յերկրի, որ ունի յանկութիւն ընդ բնութեան նորա» («Վեցօրեայ», էջ 76):

⁴⁰ «Վեցօրեայ», էջ 77:

⁴¹ «Hexaëteron», էջ 268, հմմտ. P.G. էջ 92:

⁴² «ეჭესთა დღეთა:სა», էջ 60:

⁴³ «Յեսո՛ղո Ըճճօ», էջ 47:

⁴⁴ «Взаимного согласия» («Шестоднев», էջ 61): «նույնարեւոյթ սրբաբանութիւն կարելի է առաջարկել նաև այլուր. այսպես, օրինակ, «մին է մի բնութեամբն» արտահայտության («Վեցօրեայ», էջ 46) ընդգծված մասը վերընթերցելի է «միաբանութեամբ»:

չում և վերջինիս առիթով բացատրում . «Զի թէ յերկարեսցեն թողցեն ի բորբոքեալ հրատին, բնաւ ամենեկին իսկ ունայն գտանին ամանք ի ջրոյ անտի, և զջուրն գոր ուտէ հուրն՝ ի խոնարհ առաքլ գոլովն ի վեր»⁴⁵: Արդ, ինչպե՞ս հասկանալ հատվածի ընդգծված միտքը, որին նախորդող մասում խոսքը ջուրը երկար եռացնելու և զուրջիացնելու մասին է կամ արդյոք «գոլովն» բառը շփոթված չէ՞՞ գրչական-արտասանական նմանություն ունեցող ինչ-որ բառի հետ: Նման կասկածը հիմնավորվում է «Վեցօրեայ» գրչագրերով, որոնցից մեկը (G) նշված կետում նույնանում է տպագրին, մյուսում (K) հատվածը բացակայում է, իսկ մնացած ձեռագրերում տպագրի գոլովն բառի դիմաց ունենք գոլորշովն (AD), գոլորշովն (BCFH JLM), գոլորշօփն (E), գոլորշովն (N) տարրնթերցումները:

Վերոբերյալ հատվածի ընդգծված մասի դիմաց հունարենում կարդում ենք՝ «εἰς τὴν πύρρον τῶν ἐπιπέτρων διαχωριστῶς»⁴⁶, որ խոսքը ջրի գոլորշի դառնալու և վեր բարձրանալու մասին է և ոչ թե «գոլովն ի վեր առաքելու»: Հունարենի, հայերեն գրչագրերի նմանությամբ գոլորշիացման մասին է խոսքը նաև վրացերեն խմբագրություններում. ա) «აღვიდის... ორთქლსა მას თანა»⁴⁷, բ) «ორთქლად ვაბილით»⁴⁸:

Այսպիսով, թվում է, անհիմն չէր լինի տպագիր «Վեցօրեայի» հիշյալ գոլովն բառը փոխարինել գոլորշովն ընթերցվածով և բերված հատվածի ընդգծված մասը կարդալ. «ի խոնարհ առաքէ գոլորշովն ի վեր»⁴⁹:

Այրարչի, նրա արարած հրաշք բնության մասին խոսելիս Կեսարացին գրում է. «Մի՞ թէ, ըստ մերո՞ւմ նմանութեան խօսեսցի աստուած, որպէս մեք յիրացն՝ որ անկանին ի սիրտս մեր, առնումք անդատին նոցին կերպարանս, թէ զիա՛րդ պատուառ իցէ առնել զնոսս»⁵⁰:

Սույն համեմատություն-բացատրության բովանդակությունից դատելով՝ երկու ընդգծված բառերն էլ առանձին վերցրած թեև աղա-

⁴⁵ «Վեցօրեայ», էջ 79—80:

⁴⁶ «Hexameron». էջ 274, հմտ. Ρ(1. էջ 93, սուսերենում՝ «разрешити. в пары» («Шестоднев», էջ 63):

⁴⁷ «ქქუსთა დღევადისა», էջ 62:

⁴⁸ «ბასილი დიდი», էջ 18:

⁴⁹ Հմտ. «յորժամ ընդունիցի Երկիր զխոնավութիւն և զերմութիւն արեգական, փոզէ յերկր, օպ՝ վերանայ Էրանել ի նմանութիւն գոլորշայ» («Վեցօրեայ», էջ 14):

⁵⁰ «Վեցօրեայ», էջ 44:

վաղում չեն, սակայն հավասարապես անհարիր են տեքստին և չունեն պահանջվող նշանակությունը: Դրանցից երկրորդի սրբագրման անհրաժեշտությունը արձանագրել է Գ. Նահապետյանը, իսկ առաջինինը՝ ոչ ոք⁵¹: «Վեցօրեայի» բնագրից, ձեռագրերի իրողություններից բոլորովին անկախ, այլ վկայակոչված նախադասության բովանդակության թելադրանքով Գ. Նահապետյանը առաջարկում է «պատճառ» բառը փոխարինել «պատշաճ» այլիմաստ ընթերցումով: Համապատասխան քննությունը ցույց է տալիս, որ առ այդ կան համաստի կովաններ:

Նախ առաջին սրբագրելիքի մասին. քննվող հատվածի առաջին կեսում խոսքը առարկայական պատկերի հենքի վրա առաջացող մտածույթյան, մտապատկերի մասին է, ուր սիրտս բառի փոխարեն հարկավոր է միտս: Հօգուտ առաջարկվող ընթերցման է փաստարկում ձեռագրերի զգալի մասը. զրանց մի խմբում (ABCDE) «սիրտս» բառի զիմաց պահպանվել է «միտս», մեկում (O) սրբագրելիքը բացակայում է, իսկ մյուս ձեռագրերը նույնանում են տպագիր «Վեցօրեային»: Քննվող հատվածի և բնագրի համադրությունը ցույց է տալիս, որ «միտս» վերականգնումը պատճառաբանվում է նաև հունարենով, ուր հայերեն թարգմանության սիրտս բառի զիմաց ունենք «*τῆς ψυχῆς*» (ψυχή)՝⁵²—մաաժուրյուն, միտ⁵³: Նույն իրողությունն է առկա նաև վրացերեն թարգմանություններում, որոնցից մեկում ունենք «*გონებათა ჩუგნთა*»⁵⁴ (ի միտս մեր), մյուսում՝ պարզապես «*გონებობა*»⁵⁵ (ի միտս):

Վկայակոչված փաստերից բացի առաջարկվող սրբագրությունը հավաստվում է նաև նույն «Վեցօրեայի» քննվող նախադասությամբ, որտեղ, ի լրումն նախորդ անավարտ մտքի, շարունակության մեջ ունենք քննվող կապակցության անաղարտ կիրառություն՝ «ի միտս մեր»: Իկյս ամենը հնարավորություն է տալիս պնդելու, որ վերհում վկայված նախադասության «ի սիրտս մեր» արտահայտությունը գրչական վրիպման արդյունք է և պետք է վերընթերցել այն «ի միտս մեր»:

51 Գ. Նահապետյան, նշվ. աշխ., էջ 195—196:

52 «Hexaéméron», էջ 192, հմտա. PC, էջ 56, առ սերեհում «в мысли» («Шестоднев», էջ 37):

53 ДРС II, 1136:

54 «ეჭუსთა დღეთაჲსა», էջ 40:

55 ბასილი დიდი, էջ 28:

Հատվածի մյուս՝ պատճառ > պատշան, սրբագրության համար ևս կան որոշակի կովաններ: Ի տարբերություն տպագրի հետ նույնացույց ձևագրերի, Երեք գրչագիր (BCE) հայերեն թարգմանության «պատճառ» ընթերցման դիմաց պահպանել են «պատշան»: Սակայն ձևագրական իրողություններից անկախ՝ «պատճառ» կիրառությունը տվյալ պարագայում բոլորովին անիմաստ է և, կարելի է ասել, այլուր պահպանված «պատշան» նախնական ու ճիշտ ընթերցման ազավազում: Մինչդեռ քննվող հատվածում, ասվեց, խոսքը մտածությունք, մտապատկերի օգնությամբ ըստ պատշանի, ըստ հարկի՝ առարկայի պատկերացման մասին է: Ասվածը հավաստում է նաև «Վեցօրեայի» բնագրով և վրացերեն թարգմանություններով: Վերականգնելի պատշան բառի դիմաց հունարենում տեսնք „=αζ ὄχρεῖαζ“ (ὄχρεῖαζ)⁵⁶— ըստ հարկի, պատշանի⁵⁷, վրացերեն թարգմանություններում՝ „მოვინებინა აღვირჩიოთ“ (ըստ պատկերացման, ըստ հարկի) և „შემსგავსებულსა“⁵⁸ (պատշան): Ինչպես տեսնում ենք, այլադրուր թարգմանությունները ևս հավաստում են առաջարկվող սրբագրությունը:

Ասվածից հետևում է թե «պատճառ» գրչական թյուր ընթերցման փոխարեն «պատշան» բառի վերականգնումը իրականում պատճառաբանվում է ոչ միայն հատվածի բովանդակությամբ, որ նկատելի է Գ. Նահապետյանը, այլև «Վեցօրեայի» հայերեն ձևագրերով (ոչ բոլոր), հունարենով ու վրացերեն թարգմանություններով: Այսպիսով՝ այս և նախորդ վերականգնում-սրբագրումներից հետո «Վեցօրեայի» հայերեն թարգմանության «ի սիրտս մեր» և «պատճառ իցէ» արտահայտությունները համապատասխանաբար պետք է կարդալ «ի միտս մեր», «պատշան իցէ»⁵⁹:

Այլոց «երկու երկինք իցեն» հարցադրումին պատասխանելիս Կեսարացին նկատում է. «Այլ լաւ համաբին՝ որ յաճախեցին ի մատնանալ առ ի ձառսն երկնից, թէ լեզուր իրեանց ստեսցին, և ոչ մի ճշմարիտ բանքն հաւատարիմ լինիցի նոցա»⁶⁰:

⁵⁶ „Hexaéméron“, էջ 192, հմտ. P.G. էջ 56, սուսերենում՝ „соответственно“ („Шестодне“, էջ 37):

⁵⁷ ДРС. II. 1243:

⁵⁸ „გქუსთა დღეთაჲსა“, էջ 40, հմտ. ბასილი დიდი, էջ 28:

⁵⁹ Մեկ այլ հատվածում երկիդս օգտագործված «ի պատճառս պիտոյից» արտահայտությունը վերընթերցելի է «ի պատշանս պիտոյից» («Վեցօրեայ», էջ 53, հմտ. էջ 57):

⁶⁰ «Վեցօրեայ», էջ 46:

Այս նախադասության անհարթության վրա ուշադրություն է դարձրել Գ. Նահապետյանը և առաջարկել կարգալ «Տամարիմ... ստիցեն»⁶¹: Նման միջամտության նպատակը, կարծում ենք, առկա անհամաձայնության հարթումն է, բայց, ինչպես կտեսնենք, անընդունելի եղանակով: Նախադասությունն իր քերականական կառուցվածքով ու բովանդակությամբ դիմավոր բաշերի հոգնակի կիրառություն է պահանջում անխտիր (համարին, յաճախեցին և այլն): Ուստի և ճիշտ է «համարին» ձևը, մանավանդ որ համաձայնության հարակից կովան է «խրեանց» կիրառությունը: Նախադասության համեմատությունը ձեռագրերի հետ ցույց է տալիս, որ մեկ ձեռագիր (B) ընդգծված «որ»-ի փոխարեն պահպանել է նույնի հոգնակի ուղղական հոլովաձևը (որհ), մյուս գրչագրերը նույնանում են տպագրին: Սակայն այդ եզակի ընթերցումն էլ բավական է պնդելու, որ այլուր միջամտությունն անհարկի է, բանդի համարողները նրանք են՝ «որհ յաճախեցին»:

Նույն նախադասության համեմատությունը համապատասխան աղբյուրների հետ ցույց է տալիս, որ Գ. Նահապետյանի երկրորդ միջամտությունը (ստեցին > ստիցեն) նույնպես անընդունելի է: Ավելին, պարզվում է, որ ստեցին-ը երբեմնի կտրիցին բառի այլափոխված բառ-տաբերակն է՝ ստեղծված հավանաբար ընդօրինակման ճանապարհով: Ձեռագրերի մի խմբում (A B C D E) ունենց «կտրիցին», մյուսները պահպանել են հրատարակության հիմք ձեռագրերի «ստեցին» ընթերցվածը (տպագրի «ստեցին»-ը հրատարակչի միջամտության արդյունք է): «Վեցօրեայի» բնագրում խնդիրը շատ ավելի սրուշակի է. «լեզուք իրեանց ստեցին» կապակցության փոխարեն հունարենում ունենք « $\tau\acute{\alpha}\varsigma \gamma\lambda\omega\sigma\sigma\tau\acute{\alpha}\varsigma \pi\epsilon\sigma\sigma\tau\acute{\alpha}\varsigma$ »⁶² (գրկվել լեզվից), վրացերեն թարգմանություններից մեկում՝ « მთოვეთხვეს ეხადი »⁶³ (գրկվել լեզվից, մյուսում) « $\text{ეხადთა მათთა აღმთვეთხას}$ »⁶⁴ (գրկվեն [նրանք] լեզվից):

Ասվածից հետևում է, որ հօգուտ առաջարկվող սրբագրության են փաստարկում «Վեցօրեայի» հայերեն ընդօրինակությունների մի մասը, հունարենը, վրացերեն թարգմանությունները, ինչպես նաև խնդրո առարկա նախադասությունն ինքնին վերցրած: Այս

61 Գ. Նահապետյան, նշվ. աշխ., էջ 196.

62 «Hexaëmeter», էջ 196, հմտ. P.G., էջ 56, ստեղծվում « Линиется языкъ » (« Шестоднев », էջ 38):

63 « ვექსთა აღთხასა », էջ 41:

64 « ხასთა აღთ », էջ 39.

պարագայում «ստեսցին»-ը ցանկացած եղանակալին կիրառու-
թյամբ էլ մնում է անհասկանալի, նույնիսկ անիմաստ, որովհետև
առկա մտքի թելադրանքով՝ «առ ի ճառսն երկնից» իմաստնացող-
ները լավ է լեզվից զրկվեն՝ կտրիցիև և ոչ թե ստեսցին: Այս-
պիսով՝ այս և նախորդ սրբագրությունները մոռելով Տրատարա-
կություն՝ «որ... ստեսցին» արաահայտության դիմաց կունենանք
«որ...կտրիցիև» անխաթար ու հասկանալի ընթերցումը:

Մնտի, անհամ պատմությունը տարածողներին քննադատելիս
Կեսարացին գրում է. «Բայց մեք զայս ասացուք իմաստնոցն Յու-
նաց, թե մի՛ արասցեն զմեզ ծաղր, մինչ նախ ինքեանք հաւա-
նեսցին միմեանց՝ լուել և դադարել լինելոյ հակառակ միմեանց»⁶⁵:

Դատելով սույն նախադասության բովանդակությունից՝ պիտի
ընդունել, որ ընդգծված բառը առանձին վերցրած, աղավաղում չը-
լինելով հանդերձ՝ իր նշանակությամբ (հավատ ընծայել, համոզել,
ամոքել, հաճել, հանձն առնել⁶⁶ և այլն) շուրի պահանջվող իմաստը,
որովհետև իրականում միմյանց համոզելու կամ ամոքելու մասին
չէ խոսքը: Ձեռագրական իրողությունները հետևյալն են. նրկու
պրշագիր (DE) հաւանեսցին բառի փոխառենն պահանջել են հա-
ւարեսցին, մյուսները նույնանում են տղազրին: Սակայն վերջին
բառն իր վարկանել, դատել, առդնել⁶⁷ և նման նշանակությամբ
միանգամայն պատշաճում է Կեսարացու դիտողությանը թե այլոց
ծաղրելուց առաջ հույն իմաստունները նախ միմյանց (իրենք ի-
րենց) դատաստան անեն, դատապարտեն սեփական արատները:

Հունարենում ևս բացակայում է հայերեն թարգմանության
«հաւանեսցին» բառը, մինչդեռ ընդհանուր կապակցության դիմաց
ունենք «αἰνεῖσθε θεῶν ἡμεῶν»⁶⁸, որը միանգամայն նույնական
է հայերենի սրբագրված տարբերակի հետ՝ «ինքեանք հաւարեսցին
միմեանց», քանզի հունարենի «θεῶν ἡμεῶν» (θεῶν ἡμεῶν) բայն ունի
նույն բննել, առդնել, բացողընել, զնահատել⁶⁹ նշանակությունները:

⁶⁵ «Վեցօրեակ», էջ 47:

⁶⁶ ՆԶԲ, Բ, 73:

⁶⁷ ՆԶԲ, Բ, 23:

⁶⁸ «Hexaéméron», էջ 198, հմտ. PG, էջ 57: Ռուսերեն թարգմանությունում
քննվող նախադասությունն այնպիսին է, որ օտարվող և վերականգնվող բառերից
ոչ մեկը չի արտացոլված, սակայն հատվածի ընդհանուր բովանդակությունը վը-
կայում է հօդուտ առաջարկվող սրբագրության. «Но мы преем Элтинских
мудрецов не смеяться над нами, пока они не кончат между собою своих
споров» («Шестоднев», էջ 39):

⁶⁹ ДРС I, 391:

որից և սերում է հայերեն գրչադիր օրինակը: Նույն իրողությունն է առկա նաև վրացերեն թարգմանություններում, որոնցից մեկում *ունենք՝ „განგებონა“*⁷⁰ (հարմարեցնել, կարգավորել), մյուսում՝ *„უბოთივრთარს დაგებონა“*⁷¹ (միմյանց համաձայնեցնել, հարմարեցնել, կարգավորել):

Ասվածից հետևում է թե հաւանեցին բառը իրոք ընդմիջարկություն-վրիպում է, համարժեք չէ վերականգնվող բնագրային բառին և հասկանալի է, շուտի վերջինիս նշանակություններից ոչ մեկը, ուստի այն պետք է փոխարինել համարեցին բառով:

* * *

Մինչև այժմ քննվածներն այնպիսի աղավաղումներ էին, որոնց համար առաջադրվող վերականգնումները հաստատվում էին «Վեցօրեայի» բնագրով, հայերեն ձեռագրերով և վրացերեն երկու թարգմանությունների տվյալներով: Արդ, «Վեցօրեայի» հրատարակությունում կառարելի է բառային վերականգնումների մեկ այլ խումբ ևս, որոնց համարժեքները, սակայն, չկան բնագրում և, բնականաբար, հարակից թարգմանություններում, այլ վերականգնման հիմք ենք ընդունում գրչագրերի ընձեռած հնարավորությունները⁷²:

⁷⁰ „გეგნთა ვლეგთონა“, էջ 41:

⁷¹ „უბოთი ვრთი“, էջ 29:

⁷² Արդ, այսպես կոչված, հունարենով (և հարակից թարգմանություններով) շղատեւոաբանվող սրբագրությունների մասին խոսելիս կարող է հարց առաջանալ, թե այս պարագայում (և առհասարակ) զուցե հունարեն բնագիրն է փոփոխված, ինչ-որ տեղ նաև աղավաղված: Սակայն նման կասկածը չի հիմնավորվում հետևյալ պատճառով. «երեք մեծ կապաղովկացիների» գրական ժառանգության բնագրերի (շատիներեն թարգմանությամբ) առաջին հրատարակությունը կատարվել է 1630 թվականին, Փարիզում: Հրատարակիչները սասնամյակներ շարունակ աշխատելով այդ ուղղությամբ՝ հաշվառել էին նշված մասնագիրների գործերի՝ գիտությանը հայտնի բոլոր ձևերը: Նշված հրատարակության պարունակությունն այնուհետև վերատպվեց 1778 և 1842 թվականներին (դարձյալ Փարիզում), իսկ հետո՝ Միննի հրատարակությամբ: «Վեցօրեայի» բնագրի վերջին հրատարակությունը իրացվեց Փարիզում, 1968 թ., որը և սննդել ենք ձեռքի տակ: Սրբագրությունների ընկալում, ինչպես նկատել ենք, բնագրի իրողությունները ստուգել ենք «Վեցօրեայի» միջնագրային այլալեզու թարգմանություններով: Ասվածք, իմում է, հիմք է ապրիս պնդելու, որ «Վեցօրեայի»՝ գիտությունը հայտնի բնագիրը իր հավաստիությամբ բյուզանդագիտ մասնագիտների շրջանում առայժմը որևէ կասկած չի հարուցում:

Ստորև վկայակոչվող բառերը և հատվածները շարժունակ հունարենում, անշուշտ, առաջին հերթին պարժանավորված է «Վեցօրեայի» հայերեն թարգմանության բնութագրով (ոչ բառացիությամբ): Հայերեն թարգմանության առկա բնագրային հեռացումները, այսպես ասած, կրկնակի անհասկանալիություն են ձեռք բերել այն իմաստով, որ նախ՝ չեն բացատրվում բնագրով և ապա՝ երբեմն անհասկանալիության աստիճան խաթարվել են ընթացիկ նակաման ճանապարհով:

Խոսելով ջրերի, մասնավորապես ստորերկրյա ջրբյուրները շարժունակության մասին, Կեսարացին հարցնում է. «և ո՞վ իցէ յուրում եղեալ մղիցէ վարդելեալ բնութիւն նոցա»⁷³: Արդարև, միջին ընդգծված բառը չի դժվարացնում նախադասության իմաստը՝ ընկալումը: Հարցադրումը արդարանում է «Վեցօրեայ» ձեռագրերի մի մասի վկայությամբ: Միայն մեկ գրչագիր (N) ունի տպագրի յուրում ձևը, որից, կարելի է ասել, իմաստային առումով բնավ չի զանազանվում մյուս յոթ գրչագրերի ուրում ընթերցումը (ABFHJLM), վկայակոչված հատվածը բացակայում է G և K գրչագրերում, ի վերջո, երեք ձեռագիր (CDE) քննվող հատվածի յուրում-ի գլխապես պահպանել են որ ուս տարրնթերցումը: Այսպիսով, դժվար չէ նկատել, որ «Վեցօրեայում» հեղինակի խոսքը, տվյալ պարագայում հարցումը՝ անհայտ մեկի մասին է, որը ուժ գործադրելով շարժում ընթացք է տալիս ստորերկրյա ջրերին, բայց ինչպե՞ս, ի՞նչ կերպ ուս եղեալ, թե՞ յուրում եղեալ: Հասկանալի է՝ ուս եղեալ⁷⁴:

Գրչագրերի մեծ մասի, ինչպես նաև տպագրի յուրում ձևը նույն «յուր ուս»-ի «Ս» տառի անհամապատասխանության հետևանքով քաջացած սխալ ընթերցման (Մ) արդյունք է և ընդամենը էրեք գրչագրի հիմքի վրա պետք է վերականգնել յուր ուս⁷⁵:

⁷³ «Վեցօրեայ», էջ 70: Հր. Աճառյանը սույն հատվածում որևէ խախտում-անճշտություն չի արձանագրել: Մինչդեռ նույնի շարժունակության «ի սինգես արկեալ» արտահայտությունը բացատրել է «ստիպել, դուռ» (Հր. Աճառյան, Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ, Վենետիկ, 1913, էջ 162):

⁷⁴ Աղաթանգիրոսի մոտ կարդում ենք. «Ուս եղեալ համբաւնայր հարկանի ընդ վիմին հաստնոյ» («Աղաթանգիրոսի Պատմութիւն հայոց», Տիգրան, 1909, էջ 80): «Նա բոս որում որինակի ընդ աւշապի ամենայն իրս մարմնաւորս անցանիցէ» կապակցության «ուրումը» նույն ձեռագրական իրողությունների հենքի վրա պետք է ուղղել «մեռում» («Վեցօրեայ», էջ 45):

⁷⁵ Մ > Ս հաճախակի աղավաղումների մասին հանգամանորեն խոսում է Ն. Բյուզանդացին (նշվ. աշխ., էջ 11—13):

Ներկա հրատարակության մեջ այլ առիթով կարդում ենք. «Արդ եկն Եհաս աստուածաբար հրամանն ի վերայ ջուրցն բազմութեան»⁷⁶: Երեք գրչագիր (BDE) ունեն սույազրի ընդգծված բառը, մնացած ձեռագրերում վերջինիս փոխարեն ընդօրինակված է աստուածաբարս, որը և ճիշտ է, քանի որ հատվածում բնորոշումը վերաբերում է աստծո հրամանի ինչպիսին լինելուն և ոչ թե վերջինիս ինչպես գալուն, ուստի «աստուածաբարս հրամանն» և ոչ թե՝ «աստուածաբար հրամանն»⁷⁷:

Նմանօրինակ ճշտում-վերականգնում պետք է կատարել ջրերի անընդհատ հոսքը բնութագրող Կեսարացու հետևյալ պատկերման մեջ. «Առաջինքն ձևպեսլ ընթանան, և վերջինքն բուռն հարեալ վակժոյժ լեալ շհաւանիւն զառաջինսն թողուլ»⁷⁸: Արդ, մի՞թէ տեղին է օգտագործված հատվածի ընդգծված միտքը, այլ կերպ՝ որքանո՞վ է տրամաբանական ջրերին, տվյալ պարագայում արագընթաց գետերին վերագրել միմյանց չհավանելու հասկացություն:

Սակայն գրչագրերի համեմատությամբ նույնպես սկզբում այն տպավորությունն է ստացվում, որ առկա խնդրում միջամտությունը հիմնավոր չի լինի, քանի որ ձեռագրերի մեծ մասը տվյալ հատվածով նույնանում է սույազրի: «Վեցօրեայի» հետ, երկուսում (GK) այն բացակայում է և առանձնանում է ընդամենը մեկ գրչագիր (D), որը վերևում ընդգծված շհաւանիւն բառի դիմաց պահպանել է շհասանիւն: Նշված ընթերցումների արտասանական-գրչական ընդհանրությունը նկատելի է, ուստի և գրչի աննկատ վրիպումն իսկ ($ս > ւ$) կարող էր հանգեցնել ներկա շփոթին: Բայց նախնականք ե ճիշտը միայն մեկ գրչագրում պահպանված շհասանիւն տարընթերցումն է, որովհետև Կեսարացու խոսքը արագընթաց ջրերի միմյանց ետեից հոսելու, հասնելու ձգտմանն է վերաբերում, որ ի-

⁷⁶ «Վեցօրեայ», էջ 71:

⁷⁷ «Աստուածաբարս» վերականգնումն է առաջադրվել նաև Գ. Նահապետյանի կողմից (նշվ. աշխ., էջ 203): Հօգուտ նման սրբագրման են փաստարկում «Վեցօրեայի» հետևյալ վկայությունները. «Եւ ամենայն որ միանգամ հայեցեալ սույառէին աստուածաբարսու հրամանի» (էջ 24), «Եւ այսու աստուածաբարս սույառամաս» (էջ 138), «Օրպէս Պաղոս Առաքելն էբարող աստուածաբարսու աւետեօքն» (էջ 177): Բառիս նմանօրինակ կիրառություններ կան նաև Կորյունի և Ագաթանգեղոսի մոտ. «միով աստուածաբարսու սույառամօրն մի ազգ կապեալ» (Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 64): «Միով աստուածաբարսու սույառամօր՝ մի ազգ կատարեալ փատարիչ միոյ Աստուծոյ լինել» («Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», էջ 456):

⁷⁸ «Վեցօրեայ», էջ 69:

րականում շեն հասնում, այլ ոչ թե միմյանց հավանելուն կամ չհավանելուն, ուստի տպագրի շհաւանիւն բառը պետք է դիտել գրչի վրիպում և այն վերականգնել շհասանիւն ձեռագրական եղակի բնթերցմամբ:

Բարսեղ Կեսարացին բազմաթիվ բացատրություններ ունի, որոնցում նա առանձնահատուկ հիացմունքով է խոսում բնության գեղեցիկության՝ արարչի հրաշագործության մասին: Նրա իսկ համոզմամբ՝ աստծո արարչագործության արդյունք բնությունը ամենակատարյալն է, ուստի և ցանկացած շտկելիք-միջամտությունն այդ առումով, մանավանդ «հասարակ մահկանացուի» մտահոյացմամբ ինքնին մերժելի է, նման մի առիթով նա գրում է. «ղի ցուցից՝ թէ չիք ինչ զոր ամենատեսոն ամենագործ արարչին սահման ելից, թէ կարիցեն մարդիկ իրեանց տկարն զօրութեամբ դամագիտ լինել նմա հնարիւր»⁷⁹:

Դատելով վիպակոչված նախադասության ընդհանուր բովանդակությունից, կարելի է պնդել, որ ընդգծված կապակցությունը խաթարված է, անիմաստ և, բնականաբար, համապատասխան հատվածի համար վերանայելի: Ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ սրբագրելիքը հավասարապես վերաբերում է երեք բաղադրիչներին էլ. «արարչին» ընթերցման փոխարեն ունենք «արարիչն», «սահման» անվանման դիմաց՝ «սահմանեալ», իսկ «ելից» անցյալ կատարյալ ձևի փոխարեն, որ տվյալ պարագայում պարզապես անիմաստ է, առկա է «իցէ»: Փաստորեն ընդգծված կապակցության ձեռագիր տարբերակն է՝ «արարիչն սահմանեալ իցէ» (ACE): Մնացած գրչագրերը նույնանում են տպագրի «Վեցօրեայի» հետ: Այժմ արդեն համեմատությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ նշված գրչական ընթերցման խաթարված օրինակն է տպագրի տարբերակը: Աղավաղման հնարավոր ուղին, կարծում ենք, հետևյալն է. սահմանեալ > սահմանե վրիպյալ բառանշատում-փոխանցումից հետո մնում էր «ել» բայական վերջույթը կարգալ վերջնիթեր «իցէ»-ի հետ (ելից), օտարելով է-ն:

Եթե նմանօրինակ բացատրությունը հասկանալի պատճառով մնում է ենթադրություն, ապա, այդուհանդերձ՝ անվերապահ է ձեռագրական բերված ընթերցման հավաստիությունը, քանզի հեղինակային բացատրությունն ինքնին արարչի սահմանածի, կարգա-

⁷⁹ Նույն տեղում, էջ 72:

վորածի բնույթին, իսկույթյանն է վերաբերում և ոչ թե ինչ-որ սահման լցնելուն կամ այլ բանի: Ուստի և հրատարակության «աբաբ-չին սահման ելից» կապակցությունը հասկանալի է «աբաբիչն սահմանեալ իցէ» անաղարտ ընթերցմամբ:

Զրագլորշիացման երևույթը բացատրելիս, արևի ջերմությամբ գլորշիացող ծովերի ջրերի մասին «Վեցօրեայում» ասված է. «Եւ անունն ջերմութիւն ի տապոյն արեղականն, և ապա դառնան հովանան հովանեօք ամպոց՝ որ զնոսա ընդունին, ի շնչել հողմոց ամպավարաց»⁸⁰. Սույն հատվածի և գրչագրերի համեմատությունից պարզվում է հետևյալը. տասներկու գրչագիր ընթերցում ընդգծված կետում նույնանում են տպագրի հետ, իսկ երկու ձևագիր (ԳԿ) համապատասխանաբար պահպանել են «ամբալ վարաց», «ամբալ վայրաց» միահիմք տարընթերցումները, որոնք և նախընտրելի են հետևյալ պատճառով: Կեսարացին վերևում ասված իր բացատրության մեջ գտնում է, որ արևի ջերմությամբ տաքացած, վերև բարձրացող ծովային ջրերը հանդիպելով օդի համեմատաբար սառը շերտերին «հովանան հովանեօք ամպոց» և վերածվում են անձրևների ամպերի: Իսկ ամպագոյացությունների նկատված պրոցեսը հարատև է և ոչ տեղափոխված, այլ կատարվում է ամենուրեք «ի շնչել հողմոց ամբալ վայրաց» և ոչ թե ամպավարաց, ինչպես կա տպագրի «Վեցօրեայում»⁸¹:

Աշխարհատեղծման աստվածաշնչյան ըմբռնումը մեկնելիս, բնության միաստեղծ առարկաների հարատև փոփոխությունը ժամանակի և տարածության փոփոխության հասկացությամբ բացատրելիս Բարսեղ Կեսարացին դրում է. «և ի սկզբանէ կարգին զան առ միմեանս զյուեւելումն և զհասարակելն, և զերբայլն, և կացուցա-

80 Նույն տեղում, էջ 79:

81 Ի դեպ, ինչպես կարելի է դատել նոր հայկազյան բառարանի վկայակոչությունից (Ա, 74), գրչական աղավաղման հետևանքով առաջացած այս բառը («ամպավար») հայ մատենագրության մեջ մեկ անգամ է գործածված, այն էլ այս հատվածում: Բառարանի հեղինակները ձևերի տակ ուրիշ գործածություն չունենալով, այն բացատրել են իբրև «ամպերը բշտը», իսկ հետագա բառարանագիրները նույնությամբ վերցրել են Հայկազյանից (Հր. Անատյան, Հայերեն արժատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 162, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1944, էջ 70): Իրականում հայերենում «ամպավար» բառ չունենք: Իսկ ինչ վերաբերում է վերականգնվող «ամբալ վայրաց» կապակցության ամբալ դրույթյանը, ապա այն, հարկավ, անբառ հիմքն ունի: Բայց անմեանում լեզվական երևույթի հետևանքով կիրառելի է «ամբալ» ձևով սլենգես, ինչպես «անբաբիշտ» հիմք ձևը հասկանալի է «ամբարիշտ» դրույթյամբ:

նել զկարգ ժամանակացն բաժանմամբ անվրէպ և անդադար դնացիւք»⁸²։ Վկայակոչվածը գրչագրերի հետ համեմատելուց հետո պարզվում է, որ երկուսում (GK) այն բացակայում է, վեցում (CFJLMN) տպագրի և գրչագրերի միջև էական տարբերություն նկատելի չէ, իսկ մնացած ձեռագրերը զերթալն բառի դիմաց պահպանել են զթերանալին։ Արդ, իրենց հիմնական նշանակությամբ միմյանցից տարբերվող այս երկու բառերից ներկա դեպքում ո՞րն է նախընտրելին։ Նման հարցադրումը կարելի է բացատրել միայն քննվող հատվածի իմաստի հասկանալիությամբ՝ պայմանավորված բառերից մեկով։ Այդ դեպքում չի պատճառաբանվում հատվածի ընդգծված բառի տվյալ կիրառությունը։ Կեսարացիին բացատրում է, որ աշխարհատեղծման առաջին օրից ի վեր ծովերի ու բազմազան երևույթների համար միմյանց առնթներ հավասարապես գոյություն են ունեցել աճումը, ավելացումը, զարգացումը (զյաւելումն) և դրանով պայմանավորված՝ լցվելը, լիանալը, անթերի ավելանալը (զհասարակելն) և այդ երկուսին զուգահեռ՝ նյութի փոփոխությամբ առաջացող պակասումը, նվազումը, ինչ-որ տեղ դատարկվելը, այսինքն՝ զթերանալն և ոչ թե զերթալն։

Բառերի ձևական (արտաքին) նմանությունը պայմանավորված բացառապես գրչական շփոթ կա նաև «Վեցօրեայի» հետևյալ հատվածում. «և միով մեծասաստ հրամանան աստուծոյ, որ անկաւ զամենեքումբք, առ հասարակ ամենեքին ի մի տեղի ժողովին»⁸³։ Գրչագրերից երկուսում (G K) այս միտքը բացակայում է, տասնմեկում տպագրի համեմատությամբ որևէ շեղում նկատելի չէ և ընդամենը մեկ գրչագիր (E) անկաւ-ի դիմաց պահպանել է արկաւ։

Բերված հատվածում պետք է նկատել, որ ընդգծված բառի կիրառությունն իր բազմաթիվ իմաստներից և ոչ մեկով (հիւանել, հոսիլ, կործանիլ, ձգիլ, մեռանիլ, դեզերիլ, գրել, դնիլ և այլն) չի պատճառաբանվում։ Մինչդեռ դրա դիմաց մեկ գրչագիրը բնորոշակությամբ ավանդված արկաւ բառը իր հիմնական իմաստով (առաջի դնել) համապատասխանում է վերը նշված հատվածի բովանդակությանը և միանգամայն նախընտրելի է։ Չէ՞ որ Կեսարացու խոսքը աստուծո մեծասաստ հրամանին է վերաբերում, որը առաջադրվեց ամենքին, երկիրը ծածկող բոլոր ջրերին, ուստի «արկաւ զամենեքումբք» և ոչ թե «անկաւ զամենեքումբք»։

⁸² «Վեցօրեայ», էջ 70։

⁸³ Նույն տեղում, էջ 72—73։

Այսպիսով, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ» ճառերի տպագրի, բնագրի, հայերեն զրչագրերի, ինչպես նաև վրացերեն երկու թարգմանությունների համեմատությամբ կատարված և կատարելի բառային ճշտում-վերականգնումները հիմք են տալիս պրնցելու, որ հրատարակության հիմքում ընկած է հիրավի «չանհամաթեկնէ աղաաղեալ» զրչագիր: Նույն համեմատությամբ սլարավում է նաև այն, որ նկատված աղավաղումները զերազանցապես զրչական վրիպումներ են և ոչ թե թարգմանչի թերացումներ⁸⁴:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր հայկազյան բառարանի հեղինակները Կեսարացու ինչ-ինչ զործերի հայերեն թարգմանության առիթով նկատում են. «Այս ամենայն ընդհանրապէս են թարգմանութիւնք նախնեաց ի Ե դարու. բայց կան և ի նոսա ինչ ինչ թարգմանեալ ի Զ և ի է դարս տարապայման հելլենաբանութեամբ»⁸⁵, նույն կարծիքն է պաշտպանում նաև բանասեր Ա. Սուբրյանը՝ թարգմանությունը հատկացնելով այն ժամանակներին, «Երբ իմաստնացեալ և իմաստացւոյիչ մեր թարգմանչիք ալ ժիրաժիր մեղուաց պէս յԱթէնս, ի Բիզանդիոն, յԱղեքսանդրիա, ի Կեսարիա կը թեաժէին, մատենագրութեանց ծաղկունքը ժողովելու»⁸⁶: Բանասերի «իմաստնացեալ և իմաստացուցիչ մեր թարգմանչիք» բնորոշումը Մաշտոցի առաջին աշակերտ-թարգմանիչներին է վերաբերում անխտիր, որոնք, հիրավի, րազաբից-րազաբ էին անցնում թարգմանական զործը հոգալու նպատակով:

Հայ թարգմանական գրականության հմուտ հետազոտող Գ. Զարբհանալյանը գտնում է, որ Բարսեղ Կեսարացու «Ճարտարախօս և իմաստուն երկասիրութեանց ոչ միայն մեծագոյն մասն մը

⁸⁴ Քննվածով չի ավարտվում վրիպում-անճշտությունների ցանկը: Մոտավոր նմանությամբ նույնատիպ և նույնքան (երբեմն նույնիսկ ավելի) աղավաղումներ կան նաև մնացած ճառերում, որոնց սույն ուսումնասիրությունում շահգրագրածանք հետևյալ երկու պատճառով. ա) դրանք առանձին ուսումնասիրություն կազմող Տոտավոր բառական սրբագրություններ են, մինչդեռ սույն գործի ծավալը միանգամայն սահմանափակ է, ը) հրատարակության ևնր պատրաստում «Վեցօրեայ» հայերեն թարգմանության ընթացիկ-համեմատական ընթացիքը, որտեղ ձեռագրերի, բնագրի և հարակից թարգմանությունների հիմքի վրա կատարած մեր բոլոր սրբագրությունները կարտացոլվեն բուն սեքստում:

⁸⁵ ՆՀԲ, Առաջարան, էջ 10:

⁸⁶ Ա. Սուբրյան, Ա. Բարսեղ և իր երկասիրութիւնքն, «Բազմավկոյ», 1873, էջ 123:

Թարգմանուած են ի մեր լեզու, անդատին ի հինդերորդ դարէ... այլ չենք հռոմանդն և սրտագրաւ աղօթից շատք՝ անցած են ի կարգս եկեղեցական հասարակաց պաշտամանց»⁸⁷: Ինչպես նկատել ենք այլ առիթով, Զարբհանալյանը ներկայացնում է Կեսարացու հայերեն թարգմանված աշխատութիւններէ մատենագիտական ցանկը՝ «Թարգմանութեամբ նախնեաց ըստ մեծի մասին յոսկեղէն դարու մեր մատենագրութեան, և այլք կրտսերագոյնք ժամանակաւ»⁸⁸:

Անդրադառնալով Կեսարացու «Պատարագամատուցից» հայերեն թարգմանութեան ժամանակին, Գաթրճյանը գտնում է, որ Վերջինս «այնպիսի թարգմանութեամբ է մեր ունեցած օրինակներուն մէջ, որ մեր 5-րդ դարուն առաջին կէսին աննման լեզուն է»⁸⁹: Այլ առիթով նա ավելի որոշակի է դարձնում նշված գործի թարգմանութեան ժամանակը՝ գլխելով. «հարկ է նոյն իսկ հայկական դպրութեան անմիջապէս առաջին տարիներուն հանել աս պատարագին հայերէն թարգմանութիւնը»⁹⁰:

Արդ, ո՞րն է հայագետների նմանօրինակ դիտողութիւններէ հիմքը, այլ կերպ՝ կա՞ն, արդյոք, սկզբնաղբյուր, մասնավորապէս

87 Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց. Վենետիկ, 1889, էջ 259:

88 Նույն տեղում, էջ 325—326:

89 Յ. Գաթրճեան, Սրբազան պատարագամատուցք հայոց, Վիեննա, 1897, էջ 89: Բարսեղ Կեսարացու Պատարագամատուցից հայերեն թարգմանութեան ղեկավարման առումով ուշագրավ է այն իրողութիւնը, որ առանձին ձեռագրեր որպէս հեղինակ հիշատակում են Գրիգոր Լուսավորչին, մինչդեռ, Գաթրճյանի հավաստմամբ, նույն հատվածի հունարեն բնագրում առկա է Բարսեղ Կեսարացու անունը: Ն. Ակիբյանը նկատում է, որ հայ-հոտոմները (ծախ հայերը) ի թիւս եկեղեցական անհրաժեշտութեան այլ գրքերի, ժԳ—ԺԹ դարերում հունարենից հայերենի են թարգմանել Բարսեղ Կեսարացու Բյուզանդական Պատարագամատուցքը, որի բնագիրը իր իսկ հավաստմամբ, V դարում հայերենի թարգմանվածի համեմատութեամբ նոր խմբագրութիւնը էր ներկայացնում: Հայտնի է, որ Տաշչանը Կեսարացու նույն գործի հայերեն կերպորդ թարգմանութիւնը կատարված է համարում Թ—Ժ դարերից ոչ ուշ, ձեռնագրիցով, որ այս թարգմանութիւնը կակնարկեն Գրիգոր Մագիստրոս և ներքէն կամբրոնացի: Այսուհանդերձ՝ Ակիբյանը գտնում է, որ հունարենի առկա իրողութիւնները վկայում են հօգուտ հուշարձանիս հայ-հոտոմ թարգմանութեան իր նշած ժամանակի (Ն. Ակիբեան, Հայ-հոտոմ գրականութեան մատուցողներ. ԺԳ—ԺԹ դար, «Հանդէս ամսօրեայ», 1950, էջ 188—189):

90 Նույն տեղում, էջ 109: Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգութեան զգալի մասի ոսկեգարջան թարգմանութեան լինելու փաստը զանազան առիթներով նկատել են հայագետներ Կ. Տեր-Մկրտչյանը, Մ. Արեղյանը, Թ. Ավդալբեկյանը և ուրիշներ:

ձեռագրական տեղեկություններ Կեսարացու զործերի հայերեն թարգմանությունների մասին:

Ինչպես նկատել ենք մատենագրական ժառանգության քննության առիթով, «Վեցօրեայից» հետո, Կեսարացու «Գիրք հարցողացը» իր ընդգրկած խնդիրների բազմազանությամբ ու խորությամբ առանձնահատուկ տեղ է բռնում նրա գրական վաստակի մեջ: Նրա թարգմանության ժամանակի ու հեղինակի մասին պահպանվել է հետևյալ համառոտ վկայությունը. «Թարգմանեալ ի լուսականէն ի հայս՝ ի ձեռն ճշմարտաբանից թարգմանչաց մերոց»⁹¹: Հատվածիս «ճշմարտաբանից թարգմանչաց» բնորոշումը, ինչպես կատաններ այլ առիթով, վերաբերում է V դարի մեր այն թարգմանիչ հեղինակներին, որոնք իրենց ուսուցիչների ընկերակցությամբ ու խորհրդով թարգմանվող մատենագրությունն ու թարգմանության արվեստն էին ուսումնասիրում:

Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության հին թարգմանության մասին է վկայում նաև հետևյալ հաղորդումը. «Իսկ զկանոն Ջրարհնէիցն ի Կեսարիա քաղաքէ, զոր արարեալ է սրբոյն Բարսղի յևթն ամի հայրապետութեան իւրոյ և զշարարհնէան, յերուսաղեմէ հոսրով եբեր ի Հայս՝ հրամանաւ սրբոյն Սահակայ»⁹²: Հատվածում, նկատելի է, խոսքը Կեսարացու նշված կանոնները թարգմանության նպատակով Հայաստան բերելու մասին է: Նույնի մեկ այլ տարբերակում կարդում ենք. «Իսկ զԿանոն Ջուր Օրհնելոյն. զոր ասացեալ էր Տեառն Բարսղի, հինգերորդ ամի հայրապետութեան իւրոյ, ի Կեսարիայ Կապադովկացոց քաղաքի, ի յերուսաղեմ հանդիպեցաւ հոսորով Թարգմանիչ, հրամանաւ Արբոյն Սահակայ, և անտի գրեաց և եբեր ի Հայս»⁹³: Բովանդակության մանրամաս-

91 Գ. Զարեհանյան, *Մատենագրան...*, էջ 337: Կա Բարսեղ Կեսարացու նշված գործի հին հայերեն թարգմանությունը հավաստող այլ կովան ևս խոսքը Ն:Ն: 1853, 1658, 229 և 146 զրչագրերի մագաղաթյա պահպանակների մասին է, որոնք առանձին թերթեր են «Գիրք հարցողացի» երեւնի ամբողջական զրչագրերից՝ ընդօրինակված ուղղագրի և բուրդի և երկաթագիր զրչությամբ:

92 Զեռ. N 3260, էջ 179աւ Այլ խմբագրությամբ. «Իսկ զկանոն Ջորհնէիցն սուրբ Բարսեղ արարեալ է յևթն ամի հայրապետութեան իւրոյ, գնացեալ էր յերուսաղեմ քաղաք, և զի նմա հանդիպեցաւ հոսորով թարգմանիչն եբեր ի Հայս, որ երթեալ էր յերուսաղեմ հրամանաւ սրբոյն Իսահակայ» («Յույցակ հայերեն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սերաստիա», կազմեց Թորգոմ Գուշակեան, Վիեննա, 1961, էջ 69, հմմտ. «Յույցակ ձեռագրաց Արմաշի վանքի», կազմեց Յ. Ռօփենեան, Վենետիկ, 1962, էջ 340):

93 Ն. Պողաբյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 77:

ներով, ինչպես տեսնում ենք, բերված վկայությունը նախորդների հետ նույնական է: Արձանագրելի տարբերությունը հետևյալն է. նախ՝ նախորդ բերված և հղված թարգմանական տեղեկություններում Կեսարացու նշված կանոնի գրությունն ժամանակ է հիշվում ճեղինակի հայրապետության յոթերորդ տարին, իսկ այստեղ՝ հինգերորդ: Դա, թերևս, արդյունք է հիմք գրչագրի «է» և «Ն» նմանաձևուն: տառերի հետագա շփոթի, ավելի ճիշտ՝ նույնացման: Ուշագրություն է արժանի նույն հատվածի մեկ այլ իրողություն ևս. անհիմն չի լինի մտածել, որ նախորդ հաղորդումներում օտարված և ներկա հատվածի վերջնամասում առկա գրեաց բառը այս դեպքում ընդօրինակել նշանակությունամբ է կիրառված: Այս հաղորդումը Կեսարացու կանոններն ընդօրինակելու և հայերենի թարգմանելու նպատակով Հայաստան բերելու մասին է. դա երևում է նաև նրանից, որ գործին հետամուտ անձը Սահակն է, այսինքն նույն ինքը՝ Մաշտոցի օգնականը, թարգմանությունամբ պարապող Սահակ Պարթևը, որի ձեռքով կամ խորհրդով հայերենի են թարգմանվել Բարսեղ Կեսարացու շատ գործեր:

Ո՞վ է հիշյալ խոտրով Թարգմանիչը, Սահակի և Մաշտոցի աշակերտների թվում կա՞ աղպլիսի անձնավորություն: Սահակ Պարթևի պատվերով նշված կանոնախմբերը ընդօրինակելու և թարգմանելու նպատակով Հայաստան բերելու միտքն ինքնին ենթադրել է տալիս, որ վերջինս Մաշտոցի աշակերտներից է: Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի թարգմանական գործունեությունը բացահայտող առկա քննությունների մեծ մասում խոտրով անվամբ թարգմանիչ չի արձանագրված⁹⁴: Այդուամենայնիվ, նույն № 3260 գրչագրում, Կեսարացու կանոնների հայերեն թարգմանության մասին գրված տեղեկությունն անմիջապես սկզբնամասում ասված է, ու Մաշտոցը նաղիանդ է գնում, որովհետև այնտեղից բերի «ղՍերմաւրհնէսն, ղԿալ և ղՀնծան, զոր արարեալ է Աստուածաբանին»⁹⁵,

94 Ն. Ակիմեան, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 175—193, Գ. Չարրեանլեան, Պատմություն հայերէն գրությունեաց. Վենետիկ, 1865, էջ 179—193:

95 Ձեռ. № 3260, էջ 178բ—179ա: Ի դեպ, Կեսարացու «Աւրհնեալ է» աղթքի հայերեն թարգմանության մասին ասված է. «Աղթքս որովհետեւ կը պակսի Ա. Մաշտոցին մէջ, եւ Ճաշոցին մէջ Բարսղի խորագրուած է, կարծել կու տայ, որ ի հնումն թարգմանուած չէր, եւ հետեւաբար սա իսկ Գրիգոր Վկայասէր թարգմանած եւ ներմուծած ըլլալ Մաշտոցին մէջ» («Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մասնադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», 5. Գ, յօրինեցին Բ. Սարգիսեան եւ Գ. Սարգսեան, Վենետիկ, 1966, էջ 85):

իսկ այնուհետև վկայվում է խոսարովի գնալու և Բարսեղի կանոնա-
խմբերը բերելու փաստը: Գրչագրում Մաշտոց, Սահակ, Մովսես
հայտնի անունների կողքին թարգմանական միևնույն հարցի առն-
չաթիվամբ խոսարով թարգմանչի անվան հիշատակումն ու գործունեու-
թյան նույնությունը բավարար հիմք չե՞ն ենթադրելու, որ նշված
խոսարվը Մաշտոցի և Սահակի աշակերտներից է: Գանձակեցու
Պատմության մեջ Մաշտոցի գրաստեղծման ու ուսուցչական գոր-
ծունեության հատվածում նույնպես կա խնդրիս առնչվող մի կետ.
«Որոց վարդապետք և ուսուցիչք՝ սուրբն Սահակ և Մեսրոպ, և գրչ-
խառքը յաշակերտացն... Մուշէ, Արձան, խոսարով, Ղազար, և յետոյ
Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս...»⁹⁶: Արդ՝ Սահակի և Մաշտոցի
բազմաթիվ աշակերտների թվում հիշվում է նաև խոսարով, որը, հա-
վանաբար, նույն թարգմանիչ անվանված անձն է: Այլ տեղեկու-
թյունների համաձայն՝ Մաշտոցի և Սահակի աշակերտների՝ Հով-
սեփ, Ղևոնդ, Եղիշե, Մովսես, Մամբրե, Եղնակ և այլոց հետ, «որ
թարգմանեցին զամենայն զգիրս Յունաց եւ յԱսորոց»⁹⁷, հիշվում
է նաև խոսարով:

Ուսումնասիրողներից Գ. Զարբհանալյանը, մեր մատենագրու-
թյան սկզբնավորման շրջանի թարգմանություններն ու թարգմա-
նիչներին գնահատելիս, Մաշտոցի և Սահակի երկրորդ աշակերտնե-
րի շարքն է դասում հիշյալ խոսարովին, որին «կընծայուի դարձեալ
Ջրօրհնեաց կանոնին թարգմանութիւնն ի յունէ»⁹⁸:

Նշված տեղեկությունների թերին կարելի է լրացնել այլուր
պահպանված նորորակ հաղորդումներով, բայց բերվածներն էլ բա-
վական են ասելու, որ Մ. Մաշտոցի և Ս. Պարթևի աշակերտների
թվում Մ դարում հիշվում է մի խոսարով, որն իր ուսուցիչների ու ա-
շակերտ-ընկերների հետ զբաղվել է թարգմանությամբ և, համա-
ձայն № 3260 զրչագրի վերոբերյալ տեղեկության, ընդօրինակել ու,
թերևս, թարգմանել է Բարսեղ Կեսարացու նշված երկու կանոնա-
խմբերը⁹⁹:

⁹⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մեյլիֆ-Սիսեռեանյանի, Երևան, 1961, էջ 28, հմմտ. էջ 7:

⁹⁷ Է. Տաշյան, նշվ. աշխ., էջ 60, հմմտ. էջ 76:

⁹⁸ Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութիւն, Վննետիկ, 1897, էջ 295, հմմտ. Գ. Յովսէփեան, խոսարովի թարգմանիչ (Ը դար), Վաղարշապատ, 1899, էջ 28:

⁹⁹ Է. Աճառյանը խոսարով թարգմանչի մասին գրում է. «Խոսարով, աշակերտ Ս. Սահակի, որի հրամանով դնաց Երուսաղէմ և բերավ Ս. Բարսղի ջրօրհնեաց կա-
նոնը» (Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 533): Այլ հարց

Հաջորդ վկայությունը Կեսարացու «ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմանությունն է վերաբերում: Կեսարացու մատենագրական ժառանգությունն ամփոփող № 5595 զրչազրում (ընդօրինակված՝ 1279 թվականին) ասված է. «Դաւիթ թարգման Տարանացի զճառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ. ի Դամասկացւոց քաղաքին, հրամանաւ Համաղասայ կուրապաղատի Մամիկոնենից տեառն: Եւ եղիցի արհնութիւն տեառն ի վերայ նոցին»¹⁰⁰: Այս բավական հին, տարահիմք զրչազրերում հաճախազեւ հաղորդման մեջ, ինչպես տեսնում ենք, անվանապես հիշված են քրեմլով գործի թարգմանիչը, թարգմանության վայրն ու մեկեկնաւը:

Ստեփանոս Ասողիկը, հարգանքով ու զովեստով խոսելով թե՛ Դավիթ Թարգմանչի և թե՛ Համաղասայ Մամիկոնյանի մասին, նրկատում է, որ «ի խնդրոյ Ներսիսի լինի Համաղասայ հրամանատար Հայոց ի ՃԴ թուականին»¹⁰¹: Այս խնդրում հետագա հայագիտական գրականության մեջ եղած տեղեկությունների հիմնական աղբյուրն Ասողիկն է¹⁰²:

Լ. Թե Խարով Թարգմանչին ինչ առնչություն ունի Սահակի «Վարբի» համանուն հեղինակի հետ: Այդ մասին տե՛ս Փ. Փ. Անրաբյան, Սահակ Պարթևի «Վարբի» և նրա հեղինակի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 129—146), Գ. Աբղարյան, Գարձայ Սերեոսի մասին («Բանբեր Մատենադարանի» № 10, 1971, էջ 452—453, 457—459):

¹⁰⁰ Ձեռ. № 5595, էջ 327ա, հմմտ. ձեռ. № 2549, էջ 177բ, Գ. Չարբանալյան, Մատենադարան..., էջ 329, Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 550, Գ. Չարբանալյան, Հայկական հին զոյրություն, էջ 455, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարահնց», յօրինեաց Ռ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 1262, Հ. Քոռոսեան, Համեմատութիւն մը Յովհ. Մանդակունոյ «Վասն փոկոց եւ վաշխից» իւ Ս. Բարսեղի «Ընդդէմ վաշխողաց» ճառերուն («Բաղամակեայ», 1927, էջ 73), Հ. Անադյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 17, Գ. Յովսէփեան, Դաւիթ փրկիստփայ (Հարբացի), «Արարատ», 1907, էջ 91, նույնի՝ «Շիրաշտակարանը ձեռագրաց», հ. Ա, Անթիքիս, 1951, էջ 47, Ի. Տրիսեսեան, նշվ. աշխ., էջ 69, Պ. Տեր-Պողոսեան, Ս. Բարսեղ Կեսարացի և իր գրությունները հայերէն թարգմանութեամբ, «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 412, «Յուցակ հայերէն ձեռագրաց նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հ. Ա, կազմեց Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 592:

¹⁰¹ «Ստեփանոսի Տարօնցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 99, հմմտ. էջ 91:

¹⁰² Ասողիկի հետևյալ հաղորդումն է այլոց աղբյուրը. «Եւ էր անդ այր մի ի Բագրեանց գաւառէ ի Բագան գեղջէ, որ էր ոսեալ զարուեստ փրկիստփայութեան, է էր անուն նորա Դաւիթ. դնա հրամայեաց արձակիլ ի Հայս, զի Լրթեալ ի բաց հատցէ զհակառակութիւն և արասցէ միաբանութիւն» (Ասողիկ, էջ 91), Մ. Չամչյանը օգտվելով Ասողիկից՝ Դավթի մասին գրում է. «Եր ի Բագրեանց գաւառէ ի Բագուան գեղջէ՝ հայ ազգաւ՝ այր երեւիլ լիմաստս փրկիստփայական գիտութեան»

Քարսեղ Սարգսյանը Կեսարացու նշված ճառի հայերեն թարգմանությունն ժամանակ է ընդունում Ասողիկի վկայած նույն 655 թվականը, բերելով միաժամանակ լրացուցիչ պատճառաբանություններ։ Նրա իսկ նկարագրած № 314 գրչագիրը («Հաւաքումն ճառից Ե. Բարսղի, ԻԱ») իր պարունակովյաժմբ, գրչովյաժմբ և մանավանդ Կեսարացու թարգմանչի մասին ունեցած վկայությաժմբ շատ է նման ու մոտ մեր Մատենադարանի №№ 5595, 2549 ձևագրերին և մաչր օրինակի տապալորություն է ստեղծում՝ ընդօրինակված ժԱ—ժԲ դարերում։ Արդ՝ Սարգսյանը ենթադրում է, որ վերոբերյալ հիշատակարանը «շատ աւելի հին ըլլալու է քան Ձեռագրիս գրիչն, վասն զի սա ժԲ դարում ապրելով՝ պատեհ չունէր ոչ ճանչնալու զԴաւիթ Տարօնացին և Համաղասայ Մամիկոնեանը, և ոչ ալ իր կողմէն լերիւրելով զայն հոս զետեղել, հետեաբար՝ ինչպէս գտեր է զայն գրիչն իր նախագաղափարին մէջ, — որ ըլլալու է Ա կամ Բ օրինակ Բարսղի ճառերու թարգմանութեան սկզբնագրին, — այնպէս ալ արտագրեր է»¹⁰³։

Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրողի լրացուցիչ պատճառաբանությունը հիմնավոր է և փաստարկում է հօգուտ Բարսեղի հին թարգմանության, մանավանդ երբ, իր իսկ վկայությաժմբ, «Թարգմանութեանս լեզուն իսկ ասոր առհաւատչեայ է»¹⁰⁴։

Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» ճառի թարգմանության ժամանակի հարցում մի փոքր աչլ է Ա. Կիւնյանի կարծիքը։ Վկայակոչելով

(«Պատմութիւն Կալոց», հ. Բ, Վենետիկ, 1784, էջ 349)։ Գ. Զարրանալյանի հավաստեամբ՝ «Ներսիսի Շինող հայրապետին կաթողիկոսութեան օրովը ծաղկած է նաև Գաւիթ անունով մէկը՝ Բագրեւանդ զաւտին Բագրեւան գեւջէն. զոր մեծապէս կը դրուատէ Ասողիկ՝ իմաստասէր և մեծ փիլիսոփայ կոչելով (Գ. Զարրանալյան. Հայկական հին դարություն, էջ 454, հմտ. Ղ. Սլիշաւն, Այսրաստ, Վենետիկ, 1890, էջ 539. 2. Անալյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 27—28)։ Այստեղ, սակայն (բացառությաժմբ 2. Աճառյանի տեղեկության) իր թարգմանական գործունեությաժմբ հայտնի Գավիթը (Տարօնացի) նույնացված է Գաւիթ անվամբ մշակութային երեք գործիչներին (Գավիթ փիլիսոփա Բագրեւանդացի, Գավիթ Թարգմանիչ Տարօնացի և Գավիթ Հռոմայեցի) հետ։ Հայագետ Հովսեփյանը առաջին երկու Գավիթների նույնացման հնարավորությունը բացառելու նպատակով զգուշացնում է. «Գաւիթ թարգմանիչ Տարօնացի Գաւիթ Բագրեւանդացու հետ նոյն լինել չէ կարող, որովհետև երկուսի բնագաւառները միանգամայն տարբեր էին միմեանցից և երկրորդի բնակավայրին, ինչպես երևում է, Կ. Պոլիսն կը, զոնն այնտեղից կը ուղարկել նորան կայսրը Հայաստան» (Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 93)։ Խնդրիս վերջնական հստակման համար նոր ու հիմնավոր կովաններ են պահանջւում։

¹⁰³ Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 1262։

¹⁰⁴ Անույն տեղում։

վերոբերյալ հիշատակագրությունը, նա ենթադրում է, որ Դավիթ Թարգմանիչը Կեսարացու նշված ճառը թարգմանելու միտքը ինքը հուշած լինի Համազասպ Մամիկոնյանին: Ակինյանը գրում է. «Կր հետեւի ասկէ, թէ Համազասպ եւ Դաւիթ, երկու ուսումնասէրներ. նստած մէկ սեղանի առաջ խօսակցած են դրական հարցերու շուրջ. իսկ այս տեղի ունեցած է Դամասկոս, ուր եւ թարգմանած է Ճառս Դաւիթ իբր 661/2-ին»¹⁰⁵: Ներկա ղեկըրում առանձին կարևորություն չունի այն հարցը, թե առաջինը ով է հղացել Կեսարացու հիշյալ ճառը թարգմանելու միտքը: Էական են թարգմանության փաստի արձանագրումն ու ժամանակի մոտավոր ճշտումը: Այդ իմաստով, ինչպես տեսնում ենք, «Ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմանությունը պետք է կատարված լինի 655—661 թվականների ընթացքում՝ Դավիթ Տարոնացու ձեռքով:

Հավանաբար վերոհիշյալ հիշատակարանի հիմքի վրա Դավիթ Տարոնացուն է վերագրվել Կեսարացու այլ ճառերի հայերեն թարգմանություն ևս: Բայց № 5595 գրչագրի հիշատակարանի «լետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ» թարգմանչին վերաբերող միտքը Գ. Զարբհանալյանին հիմք է հանդիսացել գրելու. «ըսել կուզէ թե մէկալներն կամ շատերն առաջուց թարգմանուած էին»¹⁰⁶: Ուսումնասիրողի բերված պատճառաբանության համաձայն՝ պետք է ընդունել, որ նախ՝ Դավիթ Տարոնացու թարգմանությունն է միայն նշված ճառը և ապա այն, թե Բարսեղի ճառերը էական մասով կամ ամբողջությամբ «առաջուց», այսինքն՝ V դարում էին թարգմանվել հայերենի: Զարբհանալյանի այդ նույն բացատրության շուրջ ժամանակին հայագիտության մեջ հարցվել է. «Բայց այդ խօսքերով կարելի չէ՞ նաև հասկնալ, թէ յիշեալ Դաւիթը նախապէս թարգմանած ըլլալով Ս. Բարսղին ճառերը Բիւզանդիոնի կամ Հայաստանի մէջ, «լետոյ» Դամասկոսի մէջ թարգմանած ըլլալ «Ի ծնունդ Փրկչին» ճառը»¹⁰⁷: Կեսարացու գործերի, այդ թվում նաև ճառերի մեծ մասի հին հայերեն թարգմանությունը բանասիրությանը հայտնի իրողություն է: Բայց, դրանով հանդերձ, մատենագրական վկայություններ կան այն մասին, որ Դավիթ Տարոնացին Կեսարացու նշված ճառից բացի թարգմանել է նաև այլ գործեր¹⁰⁸:

¹⁰⁵ Ն. Ակինեան, Դաւիթ Հարբացի Անյաղթ փիլիսոփայ, Վիեննա, 1959, էջ 78:

¹⁰⁶ Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրություն, էջ 455:

¹⁰⁷ Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 73:

¹⁰⁸ Ձեռ. № 1879, էջ 241ր—243ր, 248ա: Կեսարացու վերոնշյալ գործի հայերեն թարգմանության հիշատակարանն ընթերցելիս աղբյուրագետ-բանասեր Տրիեսսե-

№ 4150 զըշազիրը Նազիանդացու, Կեսարացու, Նյուսացու և ալլոց զործերի մեկնութիւն-ժողովածու է, որտեղ Բարսեղ Կեսարացու մեղ արդէն ծանոթ «Ան Ապողինար» աշխատութեան հայերէն թարգմանութեան մասին ասված է. «Թարգմանեցաւ ճառս ի Դաւիթէ թարգմանչէ և եղաւ յայսր մատենի»¹⁰⁹; Երբ համեմատում ենք այս և նախորդ հաղորդումները, որոշակի է դառնում, որ խոսքը միևնույն թարգմանչի մասին է՝ «Դաւիթ թարգման», «Դաւիթէ թարգմանչէ» միանման բնորոշումներով: Նշանակում է հիմք կա ենթադրելու, որ զործ ունենք Դավիթ Տարոնացու մեկ ալ թարգմանութեան հետ՝ կատարված հավանաբար հիշյալ 655 թվականին¹¹⁰:

Ավելին, № 437 զըշազրում պահպանվել է մի հիշատակութիւն, որը հնարավորութիւն է տալիս մտածելու, թէ նույն Դավիթ Տարոնացին զբաղվել է Բարսեղ Կեսարացու ճառերի ոչ միայն թարգ-

նի մտ արդարացիորեն հարց է առաջացել. ան միայն նշված ճառի՞ն է վերադահելի, թէ՞ «Գիրք պատճոցի» հայերէն թարգմանութիւն-խմբագրութեան անհասարակ, մանավանդ որ «Գիրք պատճոցի» վերջնական խմբագրումը նույն ճառի թվադիր թարգմանութեանն է զուգահիշում: (Վ. Տրիստեն, նշվ. աշխ., էջ 69):

109 Ձև. № 4150, էջ 76ա: Զարհանալանն այս հարցումի հայերենը համարում է «հին թարգմանութիւն» (Մատենագրան..., էջ 330):

110 Մատենագրանի № 1879 զըշազիրը, ինչպէս հայտնի է, Գրիգոր Աբաղանի կազմած «Գիրք պատճոցի» նագույն օրինակն է (ԺԳ դ.), որ Բարսեղի «Թ ծնունդ Փրկչին» ճառի պատճառին հաջորդում է նույնի «Ան Ապողինար» հարցման նորագիրը՝ հետեւել բացատրութեամբ. «Եւ ի վերնագրին ուսանիս. զի յետոյ թարգմանեցաւ ճառս ի Դաւիթ թարգմանչէ, և եղաւ յայսր մատենի (ձև. № 1879, էջ 256ա): Տեղեկութեան ստիժով Գ. Հովսեփյանը նկատել է. «Մանսօրութիւն դնող սխալուել է, կարծելով, թէ Դաւիթ թարգմանիչը Բարսղի առ Ապողինար հարցմունքն է թարգմանել: Դորա պատճառն այն է, որ յիշատակարանը և հարցման վերնագիրը կցուած էին միմեան» (Գ. Հովսեփյան, Դաւիթ փրկիստիայ (Հարբացի), էջ 92): Սակայն պարզվում է, որ տեղեկութիւնն միակը չէ, այլ կրկնվում է տարահամբ զըշազիրում, և դա հնարավորութիւն է տալիս պնդելու, որ ծանոթութեան հեղինակը, թերևս, չի սխալվել: Գ. Հովսեփյանին հայտնի էր, որ Դավիթը հիշվում է «Թ ծնունդ Փրկչին» ճառի թարգմանիչ և ոչ թէ նշված հարցումի Այծմ ձևագիր կովաններ կան այն մասին, որ նույն Դավիթը զբաղվել է Կեսարացու (նաև Նազիանդացու ու Նյուսացու) ճառերի, մեկնութիւնների, հարցմանց թարգմանութեամբ ու անտեղեկտական բնութեամբ: Իրականում խոսքը միևնույն թարգմանչի երկու անկախական թարգմանութիւնների մասին է՝ մեկը ծանոթ Գ. Հովսեփյանին, մյուսն անծանոթ հայագիտութեանը (ձև. № 1879, էջ 229բ, 230բ, 235բ, 241բ, 248ա, ձև. № 5595, էջ 327ա, ձև. № 4150, էջ 76ա, ձև. № 437, էջ 295ա, ձև. № 2549, էջ 177բ, Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 229, 3. Շահաբունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառացի Աբարատայ, Տ. Բ, էջմիածին, 1842, էջ 217—218:

մանուկամբ, այլ և վերջինիս մատենագրական ժառանգութեան ըզգալի մասի մեկնութեամբ: Նշված գրչագրում ասված է. «Տեանն Յակոբա հայոց կաթողիկոսի՝ Լուծմունք գրենացն Բարսղի, զոր տեղեկացեալ է ի Դաւիթ վարդապետէ»¹¹¹: Նկատել ենք, որ հայոց Հակոբ կաթողիկոսը (1268—1286) զբաղվել է Բարսեղ Կեսարացու գործերի մեկնութեամբ: Բերված հաղորդումը, հավաստելով ասվածը, միաժամանակ հուշում է այն միտքը, որ վերջինս կարգացնլծանթացել է այն Դավիթ վարդապետի գործերը, որը, ասվեց, հայտնի է որպես Կեսարացու ճառերի թարգմանիչ: Ահա Կեսարացուն բնորոշող նրա բնութագրումներից մեկը. «Երանելի վարդապետս զանազան վարդապետութեամբ խրատէր զիր հօտացեալ հօտն ի Հնոց և ի Նորոց կտակարանաց և կազմէր նոցա դեղ հոգևորական առ ի բուժել զախ[տ]ս բաղմատեսակս ունակացեալս ի նոսա»¹¹²:

Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգութեան հայերեն թարգմանությունների հետ կապված տեղեկությունները չեն ավարտվում նշվածով: Վկայված է, որ նրա «Վասն պահոց» գործը թարգմանվել է «ի յունականէն ի հայ՝ ի Ստեփանոսէ քահանայէ և յետին կրօնատրէ»¹¹³: Հավանաբար նույն Ստեփանոսին է վերապահվում նաև Կեսարացու «Յաղագս ձայնից» երկասիրության հայերեն թարգմանության մասին պահպանված հետևյալ տեղեկությունը. «Բարսղի Կեսարացոյն Յաղագս ձայնից թէ ուստի գտան կամ յումէ, զոր թարգմանեաց Ստեփանոս փիլիսոփայ, զի նայ եղև երաժիշտ և և հմուտ ամենայն ձայնից»¹¹⁴: Այս տեղեկության

111 Ձեռ. № 437, էջ 295ա, հմմտ. «Տն. Յակոբա հայոց կաթողիկոսի լուծմունք գործոյն Բարսղի, զոր տեղեկացեալ է ի Դաւիթ վարդապետէ մակահուն իմշած իոչեցեալ» (Գ. Հովսեփյան, Խաղբակյանը կամ Պոռշյանը..., էջ 376):

112 Ձեռ. № 437, էջ 320ա:

113 Գ. Զարբխանլյան, Մատենադարան..., էջ 335, հմմտ. «Հանդէս ամսօրնայ», 1968, էջ 409: Ի դեպ, բերված արտահայտության հետ ունեցած նույնութիւնը և մանավանդ բուն գործում հիշատակված լինելու իրողությունը հիմք են տալիս մտածելու, որ ստորև բերվող վկայության Ստեփանոսը Բարսեղ Կեսարացու «Յաղագս ոչորմածութեան...» թարգմանիչն է և ոչ թե զիրը: Ահա այն. «Կատարեցաւ պայման զրոցս աչսոցիկ՝ Ասացուածք Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի կալողկացոց, ի ձեռն Ստեփանոս քահանայի և յետին կրանատրի» (Ս. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 592):

114 Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 1068, Ս. Ս. Սողոմոնեան, Հայոց եկեղեցական եղանակները («Արարատ», 1994, № 8, էջ 256), «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Բ, կազմեց Ն. Պողաբեան, Երուսաղէմ, 1967, էջ 620, հմմտ. հ. Գ, էջ 487, Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 580, Հ. Անաղյան, նշվ. աշխ., էջ 611, Ն. Թամիսիզյան, Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության

վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել և բուն գործը դիտական շրջանառություն մեջ դրել Ս. Սողոմոնյանը՝ տալով նյութի հայտնության սույն բացատրությունը. «Պատահաբար մեր ձեռքն անցաւ մի ձեռագիր, որի մէջ ապրել էր մի անյայտ դրշի գործից մի գլուխ բան «Յաղագս ձայնից թէ ուստի գտաւ» վերտառութեամբ, բոլորովին անկայս գրքի բուն նիւթից: Այս կտորը բաւական շահաւէտ տեղեկութիւններ է հաղորդում, որոնցից մէկն է և ոմն Ստեփաննոս Փիլիսոփայ երաժշտի մասին: Մեր կարծիքով, Հ. Ղ. Ալիշանի յիշած Ստեփաննոս երաժիշտը նոյն ինքն այս անձն է, բայց ոչ թէ յօրինել է յիշեալ քսան և վեց եղանակը, այլ թարգմանել է երանկի Բարսղի գրութիւնից»¹¹⁵:

Հետագա ուսումնասիրությունները այս խնդրում հաշտ են մեծ երգահանի գրաւման հետ. «Այս երկասիրութիւնը (իմա՝ «Յաղագս ձայնից»—Կ. Մ.) յիբաւի կը պատկանի «տեառն Բարսեղի», որ կըրնայ Բարսեղ Կեսարացի հայրապետը (Գ դար) ըլլալ: Ստեփանոս Փիլիսոփոս միայն թարգմանած է զայն»¹¹⁶:

Առկա տարակարծությունը Ստեփանոս թարգմանչի ով լինելուն է վերաբերվում: Կարծիք կա, որ դա նույն VIII դարի մատենագիր Ստեփանոս Այտնեցին է¹¹⁷, «սակայն գրութեանս լեզուն աչնքան հնութեան գրած շունի, և առտել հաւանօրէն միջնադարեան յետին շրջանի թարգմանութիւն մըն է»¹¹⁸:

Հայ մատենագրությունը Ստեփանոս անվամբ հայտնի են տարբեր դարերում գործած բազմաթիվ մատենագիրներ, որոնցից շատերը միաժամանակ զբաղվել են թարգմանություններով¹¹⁹: Արդ, ո՞ր դարի մատենագիր է Բարսեղ Կեսարացու թարգմանիչ Ստեփանոսը: Նման հարցադրման պարզաբանումը միաժամանակ կնպաստի վերոհիշյալ երկու Ստեփանոսների նույնությունը կամ տարբեր անձնավորություններ լինելու խնդրի հստակմանը:

պատմության (ՀՍՍՀ ԳԱ «Լրագիր», 1971, № 1, էջ 54, հմմտ. «Բաների Մատենագրարանի», № 6, 1962, էջ 140):

115 Ս. Սողոմոնյան, նշվ. աշխ., էջ 227:

116 Մ. Գրիգորեան, Ճշգրտման և յաւելումներ Ստեփանոս Իմաստասէր Սիւնեցոյ կենսագրութեան և գրութեանց մասին, «Հանգէս ամսօրեայ», 1966, էջ 448, հմմտ. Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 1068:

117 Ռ. Աբալյան, Հայկական խաղային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 74, ծան. 2: Այստեղ այդ կարծիքի հեղինակ է հիշվում Գոմիտասը, որը, հարկավ, ձիշտ չէ:

118 Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 448—449:

119 Հ. Անառյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 600—679:

Հիմքեր կան ենթադրելու, որ Բարսեղ Կեսարացու «Վասն պահոց», «Յաղագս ձայնից» և այլ գործերի վերևում հիշված թարգմանիչը VIII դ. նշանավոր մատենագիր Ստեփանոս Սյունեցին է, որի պատրաստվածություն, հոգևոր գործունեություն, մատենագրական վաստակի ու թարգմանական հմտություն մասին արտակարգ հիացմունքով է խոսում Ստեփանոս Օրբելյանը¹²⁰: Որո՞նք են այդ հիմքերը:

ա) Հայտնի է, որ Ստեփանոս Սյունեցին, Սյունիքի զարոցիչ հետո, ուսումնառություն նպատակով եղել է Դվինում, Կ. Պոլսում, Հոռոմում, Աթենքում և այլուր, շփվել նշանավոր գիտնականների հետ, օգտվել համբավավոր գրադարաններից ու եկեղեցու նշանավոր վարդապետների գործերից: Նա տիրապետել է հունարենին ու լատիներենին և Աթենքում եղած ժամանակ պարապել թարգմանությունների¹²¹:

բ) Սյունեցին գիտեր հունական դասական մատենագրությունը և հայերենի է թարգմանել մի շարք գործեր, որոնց թվում նաև «զգիրսն քաղցրաբան Գրիգորի նիւսացոյ զբնութեան և զկազմութեան»¹²²:

գ) Օրբելյանի վկայություն համաձայն՝ Սյունեցին արքեպիսկոպոսություն տարիներին, ի թիվս այլ բարեփոխումների, վերանայել է նաև հայոց եկեղեցական երգասացության ընդունված կարգը¹²³:

Այսպիսով, բերված տեղեկությունները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Կեսարացու «Վասն պահոց» և «Յաղագս ձայնից» գործերի թարգմանիչ հիշված Ստեփանոսը միևնույն անձն է՝ Ստ. Օրբելյանի վկայած Ստեփանոս Սյունեցի մատենագիրը, որը բաղմակողմանի պատրաստվածություն ուներ (այդ թվում նաև

¹²⁰ «Պատմություն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 134—139, 144, 332, Կիրակոս Գանձակեցի, էջ 28—29, հմտ. 3. Տաշեան, Մատենագրական մասերը ստումնասիրությունը, հ. Ա., Վիեննա, 1895, էջ 8—12:

¹²¹ Գ. Զարբանալյան, Հայկական հին դպրություն, էջ 489—496, Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 13—21, Ա. Նրեմյան. Միջնադարյան հայ կոմպոզիտորներ, «Էջմիածին», 1946, № 1, էջ 47:

¹²² «Պատմություն նահանգին Սիսական», էջ 135, հմտ. Գ. Զարբանալյան, Մատենագրան..., էջ 371, Մ. Գրիգորեան, Ստեփանոս Սիսեցի, Պիլոս—Լիբանան, 1958, էջ 32: Ի դեպ, 2. Տաշյանը գտնում է, որ այս դեպքում խոսքը նմանատի «Յաղագս բնութեան» գործի հայերեն թարգմանության մասին է և ոչ թե նյութացու նմանանուն աշխատության (նշվ. աշխ., էջ 7):

¹²³ «Պատմություն նահանգին Սիսական», էջ 138—139:

հրաժշտական), անպայման ծանոթ էր Կեսարացու մատենագրությանը, պարապել է թարգմանութեամբ և, ասվեց, թարգմանել է: Բարսեղի մեկ այլ ժամանակակիցի՝ Գրիգոր Նյուսացու զխավոր պորճը:

Թվարկված անուններով, հարկավ, շի սահմանափակվում Կեսարացու գործերի թարգմանիչների ցանկը: Այլուր եղած ձեռագրական հավաքածոների ռուսումնասիրութեան կամ նկարագրութեան ժամանակ, անշուշտ, երևան կզան նոր անուններ ու նոր թարգմանութիւններ:

Այժմ անդրադառնանք «Վեցօրեայի» հայերէն թարգմանութեան հետ կապված հարցերին:

Նախ՝ ե՞րբ է թարգմանվել այն:

Ռուսումնասիրողների կարծիքը այս խնդրում միասնական է. առանց երկբայելու, թարգմանութեան ժամանակ է ընդունվում V դարը: Վենետիկյան հրատարակութեան Առաջաբանում ասված է. «Թարգմանեալը են աներկբայ յերանաշնորհ նախնեացն մերոց հինգերորդի դարուն»: Ի հաստատումն ասվածի՝ հրատարակիչը բերում է հետևյալ երկու պատճառաբանումը. ա) «զի զժամանակին ունին զոճ», բ) Շիրակունին և այլք ի հնոցն բազում ինչ ի ճառից աստի գրեթէ նովին իսկ բառիսն օրինակեն»:

Նոր հայկապշան բառարանում «Վեցօրեան» բնութագրվում է «հին թարգմանութիւն քաջ հայկաբանութեամբ»¹²⁴ արտահայտութեամբ, ուր, անտարակույս, «հին» որակումը ևս V դար է հուշում:

Կեսարացու մատենագրական ժառանգութեանը գիտակ Ա. Սուքրլւանը «Վեցօրեան» դասում է մեր մատենագրութեան սկզբնավորման շրջանի առաջին թարգմանութիւնների թվին¹²⁵, իսկ Ն. Բյուզանդացին՝ «Եզնրկեան հայկաբանութեամբ գրեալ մատենագրութեանց» շարքը¹²⁶: Գ. Զարբհանալյանի բնութագրամբ՝ Կեսարացու գործերը «հասած են առ մեզ թարգմանութեամբ նախնեաց ըստ մեծի մասին յսակեղէն դարու մեր մատենագրութեան, և այլք կրտսերագոյնք ժամանակաւ»¹²⁷: «Վեցօրեան» Ոսկեդարի թարգմանութիւն է համարում նաև բանասեր Հ. Թորոսյանը, որ ի մասնավորի զբաղվել է հարցիս բնութեամբ: Նա գրում է. «Անտարակույս է, թէ «Վեցօրեայ» ճառերուն թարգմանութիւնը մեր Ոսկեդարու ա-

124 ՆՁԲ, Առաջաբան, էջ 19:

125 Ա. Սուքրլւան, նշվ. աշխ., էջ 123:

126 Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 62:

127 Գ. Զարբհանալյան, Մատենագրան..., էջ 325—326:

մէնէն փայլուն շրջանին կը պատկանի, և անոր հրաշակերտներէն մին է»¹²⁸:

Հին թարգմանությունների ժամանակի, թարգմանիչների և առհասարակ թարգմանության պարագաների քննութեան առումով հատկանշական է Մ. Աբեղյանի մի դիտողութիւնը. «Այժմ զըժվար է ճիշտ որոշել, թե ե՛րբ և ո՛րքան թարգմանություններ են արել մեր գրականութեան առաջին դարերում: Դրանց մեծ մասի ժամանակն ու թարգմանիչներն անհայտ են: Շատ բան կորած է, կլինեն երկեր էլ, որ դեռ երևան չեն եկել: Բայց ինչ որ մինչև այժմ մնում է և հայտնի է, դա էլ ցույց է տալիս, որ հին թարգմանական գրականութիւնը շատ հարուստ և բազմակողմանի է եղել»¹²⁹:

Բանասիրական-աղբյուրագիտական հանգամանալից քննութիւնը, սակայն, նշանակալի ճշգրտումներ է մտցնում թվարկած խնդրական հարցերի մեջ: Մասնավորեցնելով խոսքը, նկատելու է, որ Կեսարացու «Վեցօրեան» Ոսկեդարի թարգմանութիւնն են համարել և մեր միջնադարյան գրիչներն ու խմբագիրները: Ձեռագրի բնօրինակողներից մեկը անհրաժեշտ է համարել տեղեկացնել. թե «թարգմանեցեալ ի յունականէն ի հայկական բարբառ՝ ի ձեռն նըշմարտաբանից քարգմաւէշաց մևրոց»¹³⁰: Այս հաղորդումը բավական վաղ շրջանից է, քանի որ կրկնվում է իրարից շրնօրինակված ձեռագրերում և բխում հնագույն գաղափար օրինակից: Նրանում երկու ուշագրավ տեղեկութիւն կա. ա) «Վեցօրեան» թարգմանվել է հունարեն բնագրից, բ) թարգմանութիւնը կատարվել է «ճշմարտաբանից թարգմանչաց» ձեռքով: Վերջին արտահայտութիւնը, անտարակույս, վերաբերում է Մաշտոցի և Սահակի այն առաջին թարգմանիչ-աշակերտներին, որոնք ս. Գրքից հետո ձեռնամուխ եղան եկեղեցական արարողութեան ու սևտումնառութեան համար կարևոր նշանակութիւն ունեցող գործերի թարգմանութեանը: Ընդ որում, առաջին «ճշմարտաբան թարգմանիչների» գործունեութիւնը (իմա՝ Եղնիկյան դաս) V դարի առաջին կեսից այս կողմ չի անցնում, իսկ դա նշանակում է, թե «Վեցօրեան», ըստ հիշյալ վկայութեան, թարգմանված պետք է լիներ մոտավորապես 420—450 թվա-

128 Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 331: Այլադան առիթներով «Վեցօրեային» անդրադարձած մյուս հայագետները ևս այդ շնդհանրացած կարծիքն են հայտնել (Մ. Աբեղյան, Ավ. Տեր-Պողոսյան, Հ. Աճառյան, Բ. Վարժապետյան և այլք):

129 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 109:

130 Ձեռ. № 10258, էջ 2ա, հմմտ. ձեռ. № 5686, էջ 2ա, Հ. Տուշյան. նշվ. աշխ., էջ 638, Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 82:

կաննների ընթացքում: Բնագրագիտական քննությունից պարզվում է, որ այս եզրակացությունը սոսկ վարկած չէ: Հայերեն թարգմանության մեջ կան տեղիներ, որոնց ուսումնասիրությունը ուշադրավ կովաններ է ընձեռում: Այսպես, օրինակ, «Վեցօրեայի» բնագրում և հայերեն թարգմանությունում կարդում ենք.

«Վեցօրեայ»
(բնագիր)

«Οὐ μὲν γὰρ ἐὺ ρι π ο ι μεταρρῆσ-
σιν ἐφ' ἑκάτερα κατὰ τὰ ἰσοπλά σγῆματα
τῆς οὐλήτης: ἐν δὲ τῷ κείρῳ τῆς γε-
νέσεως οὐδὲ τὸ βραχύτατον ἀτραμῶσιν,
ἀλλ' ἐν σάλῳ καὶ ταλαντώσει διεγνεῖ
καθ' ἑστέραςιν, εἰς ἂν ἐκφανεῖται πάλιν,
ἀπολομένην τινὰ τῆ παλιόρουζ παρῶ-
χρηται». («Hexaéméron», էջ 382, հմմտ.
PG, էջ 144)

«Վեցօրեայ»
(հայերեն թարգմանություն)

«Եւ զնացր իմն են, ասեն, յաշխարհին
Եւրիպեցոց յովկիանոս, որ Երբեմն ցու-
ցանեն զյանելուածս լիութեան իւրեանց,
և Երբեմն զիջանէ ի լիութենէ անտի. և
այն, ասեն, ըստ զնացից լուսինի փոփո-
խի: Եւ որ զայնս պատմեն՝ մեծաւորք և
սահմանակից են Եւրիպեցոց: Ի սկիզբն
ծննդեան լուսինի անշարժ կան, ասեն,
զնացր խաղացիցն, և ըստ յանելուն և
ըստ ասելն լուսնի՝ սկսանի զեռալ և
շարժի...»: (էջ 133)

Բերված համեմատությունը ցույց է տալիս, որ բնագրի «οὐ ἐὺ-
ρῖοι» — նեղուց տերմինը հայերեն թարգմանության մեջ զարձակ է «յաշխարհին Եւրիպեցոց», այսինքն՝ հունարեն նեղուց բառը զըր-
չական նմանության հիմքի վրա թարգմանիչն ընկալել է իբրև «աշ-
խարհ Եւրիպեցոց» (իմա՝ Եւրոպացոց): Որ հայերեն թարգմանու-
թյան «յաշխարհին Եւրիպեցոց»-ը արդյունք է բնագրի ոչ ճիշտ ըն-
կալման՝ Երևում է նաև «Վեցօրեայի» այլ թարգմանությունների
օրինակից, Ռուսերենում կարդում ենք. «Ибо еврпыи при прочих
видах луны текут в ту и другую сторону; а во время рожде-
ния ни на минуту не остаются в покое, но находятся в волне-
нии и непрестанном колебании, пока луна, сделавшись опять
видимую, не введет некоторой последовательности в обрат-
ных течениях»¹³¹.

Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, խոսքը ջրերի շարժման մեջ
գտնվելու, մակրոնթացության և տեղատվության մասին է, այսինքն՝
բնագրի «ὁ εὐρῖος»-ը ամենևին կապ չունի «Եւրոպոս» աշխարհա-
մասի հետ¹³²: Վրացերեն միջնադարյան թարգմանություններում ևս
բառս իբրև հատուկ անուն չի ընկալված¹³³:

¹³¹ «Шестоднев», էջ 99:

¹³² ДРС I, 705:

¹³³ «Գլխոստ Գրքոսեա», էջ 93, ծանոթ Գրքոս, էջ 78: Մ. Կարսանի հարկ

Հայերեն թարգմանութեան նշված վրիպումը նույնութեամբ կաթն՝ Կողբացու և թե՛ Շիրակացու տեքստերում.

Եգնիկ Կողբացի

«Եւ յերուպն տեղիք ինչ են ծովուց, որոց ջուրն ըստ աճել լուսնին՝ աճէ, և ըստ լնույն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ»¹³⁴:

Անանիա Շիրակացի

«Եւ գնացք իմն են ասեն յաշխարհիկե Եւրոպացոց յովկիանոս, որ երբեմն ցուցանեն յաելուած լիութեան, և երբեմն դիշանին ի լիութենէ անտի. և այս ասեն ըստ գնացից լուսնի փոփոխին: Ի սկզբան ծննդեան լուսնի անշարժական ասեն գնացք խաղացիցն և ըստ աճելն լուսնի՝ սկսանին շարժել և զնուալ»¹³⁵:

Շիրակացու սույն հատվածի իմաստը որոշակի է՝ խոսքը վերաբերում է «յաշխարհին Եւրոպացոց», մինչդեռ Եգնիկի մոտ կարող է կասկած առաջանալ. արդյո՞ք նախապես «εὐρώπῃ»-ը նույնութեամբ տառադարձված չի՞ չեղել հայերենի, իսկ հետագայում վերաիմաստավորվել և ընկալվել իբրև «Եւրոպա»: Սակայն ներդոյական/հոլովացուցչի անկայությունը վկայում է, որ ի սկզբանե բառս իբրև «Եվրոպա» հատուկ անուն է ընկալվել: Այս դրույթը ստուգելու նպատակով անհրաժեշտ համարեցինք դիմել Կողբացու անկա թարգմանութեաններին՝ ճշտելու համար մեզ հետաքրքրող բառի ընկալումը թարգմանիչ-ուսումնասիրողների կողմից: Պարզվում է, որ այն իբրև «Եվրոպա» են ընկալել և՛ Լ. Մարիեսը՝ «Il y a même en Europe certains endroits»¹³⁶, և՛ Լ. Չալոյանը՝ «В Европе есть такие моря, воды которых...»¹³⁷, և՛ Ա. Արբանյանը՝ «Եվ Եվրոպայում ծովերի ինչ-որ տեղեր կան»¹³⁸:

է համարել բացատրել. «εὐρώπῃ» նշանակողը, չգրծող ցեղերն Նեղոս, Կոմեղոս քաղաքն Եգնիկից (Եվրոպ-ի-ծովի նեղուց, մասնավորապես՝ Եվրոպի ծովի, որը բաժանում է Հունաստանը (անհ'ս ծննդու լողոց, էջ 134):

¹³⁴ «Եգնիկայ վարդապետի Կողբացոյ Նոյն աղանդոց», Թիֆլիզ, 1914, էջ 150:

¹³⁵ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, աշխատութեամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 43:

¹³⁶ Eznik de Kolb, De Deo. traduction française, notes et tables par Louis Mariès et Ch. Mercier, Paris, 1959, p. 648, § 312: Մատթապարտութեան մեջ (էջ 750—752) նշվում է անկոչված պարբերութեան իմաստի ոչ հասակ լինելը:

¹³⁷ Езник Кохбаци, Книга опровержений, перевод, предисловие и примечания В. К. Чалояна, Ереван, 1968, էջ 131:

¹³⁸ Եգնիկ Կողբացի, Նոյն աղանդոց, Երևան, 1970, էջ 137:

Արդ՝ «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանության նմանություններ Կողբացու և Շիրակացու հատվածներում հունարեն «նեղուց» հասկացություն վերածվելը «Եվրոպա» աշխարհագրական տեղանվան հիմք է առել: սյնդելու, որ թե՛ Կողբացին և թե՛ Շիրակացին օգտվել են Կեսարացու «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունից, այլապես ոչ մի կովան չունենք կարծելու, թե «Վեցօրեայի» թարգմանի նշված վրիպումը, բնագրի ոչ ճիշտ ընկալումը, հայերեն թարգմանությունից ամենևին անկախ, նույնություններ կրկնվել է Կողբացու, իսկ այնուհետև նաև Շիրակացու մոտ¹³⁹: Ուստի, եթե իրական է Կողբացու «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունից օգտվելու փաստը (կան բազմաթիվ ընդհանրական այլ տեղիներ), ապա անկասկած է, որ «Վեցօրեայ» հայերենի թարգմանված սկսք է լիներ V դարի առաջին կեսին, մինչև 449 թվականը, որից հետո Կողբացին մահացած է ենթադրվում¹⁴⁰:

139 Բանասեր Թորոսյանը Եղնիկի և Կեսարացու աննշությունը քննելիս նշված օրինակի հիման վրա եզրակացնում է, որ Եղնիկ Կողբացին օգտվել է «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությունից (Չ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 421, հմմտ. «Բազմավեպ», 1889, էջ 317, ծան. 1, «Բազմավեպ», 1926, էջ 70—71): Թորոսյանը Կեսարացու վերոբերյալ հատվածի բնագրի հետ ունեցած մյուս ստորև նշված այն է, որ հունարենում և այլուր բացակայում է հայերեն թարգմանության ընդգծված («Են որ զայնս...») միտքը, որը չկա նաև Շիրակացու համապատասխան հատվածում:

Ի՞նչ է կատարվել: Նշված նախադասությունը, ասվեց, բնագրում չկա, չունենք նաև Շիրակացու հատվածում, որը մյուս կետերով նույնանում է «Վեցօրեայի» հետ: Նշանակում է՝ այն պետք է դիտել VII դարից հետո կատարված զբաղիւր ընդմիջարկություն՝ կապված «ՆՆ ՅՅՅՅՅՅ»-ի սխալ թարգմանության հետ: Նման ենթադրության հիմք է ապիս նախ այն փաստը, որ քննվող նախադասությունը գրեթե կապ չունի հատվածի նախորդ և հաջորդ մտքերի հետ և ապա, որ ավելի վարեալ է, VII դարից հետո «Վեցօրեայի» մի ընթերցող կամ գրիչ շքեղալեզուվ հայերեն թարգմանության «յաշխարհին Լերիպեցոց»-ի իմաստը, փորձում է հրատակություն մտցնել և հիմնավորում է. «Են որ զայնս պատմեն՝ մեծատուր և սանմանակից են Երիպեցոց»:

140 Կեսարացու «Վեցօրեայ» ճառերի Ոսկեդարի թարգմանություն լինելու օգտին կա նաև այլ կովան: Զեոսգրերում պահպանվել է այն միտքը, որ «Վեցօրեայ» ուսումնական ձեռնարկ է եղել: Վե հոգիապատում աստուածաբանությանը թարգմանական բացայայտությանը ի մտատվինն գիրուսման ուսումնասիրող եկեղեցուց մանկանց» (ձեռ. № 6731, էջ 67ր—68ա, հմմտ. ձեռ. № 4001, էջ 118ա): Հիբալի, Կեսարացու գործը բովանդակությամբ շատ էր պատշաճում նոր հիմնադրվող դպրոցների պահանջներին: Մաշտոցը և նրա աշակերտները առաջինը ձեռնարկեցին Սողոմոնի՝ իմաստություն և խրատ ուսուցանող ստակների թարգմանությունը, որովհետև գրանք բովանդակալից էին, հասկանալի և, սուսցողա-

«Վեցօրեան» V դարի թարգմանությունն պետք է համարել միաժամանակ նրանում քննված հոգևոր խնդիրների առումով: Ահա թե ասվածը ինչպես է պատճառաբանված գրչագրերից մեկում. «բայց այս իսկ ճշմարտիւ ստուգի, զի ընդդէմ ասաց բազմադանդ հերձուածոց՝ պիթագորեանցն, որ յաւելտակից ասացին զտարերս աստուծոյ և Լպիկուրեա, որ ինքնեղ ասաց զաշխարհս, և մանիքեցոց և մարկիոնացոց, որք ասէին շար և բարի աստուած և ոմն արարող լուսոյ և ոմն՝ խաւարի և Ապողինար, որ ասէր յանդընդոց արարեալ ոմն ի ջրոյ, ոմն՝ յաւոյ, ոմն՝ ի հրոյ և այլ բազումս, զորս ոչ կարենք թուել: Ընդդէմ սոցա ամենքին և յաւոյ լսողացն և զհաստատութիւն բանիցս ի ճառելոցդ առցես»¹⁴¹: Իսկ թվարկված աղանդների դեմ մեղանում պայքար էր մղվում տակավին V դարում: Բնական է հնթագրել, որ հայ քարոզիչները ձեռքի տակ կունենային սույն երկր:

Ժամանակին հայագիտության մեջ կարծիք է հայտնվել, թե «Վեցօրեան» հայերենի է թարգմանվել ասորերենից: Նման պարագայում հարց է առաջանում՝ «Վեցօրեայի» քանի՞ թարգմանություն կա: Տաշյանը Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 249 ձեռագիրը նկարագրելիս, վկայակոչելով Կեսարացու «Վեցօրեայի» «Մի որ ի քննողաց զրպարտեսցէ զաստուծոյ գստուգութիւնն» սկզբվածքով և «քաղցրութեամբն իւրով ընդ կարճ ժամանեցոյց լսութեանս կենաց և խաղաղութեան» վերջավորությամբ «Յառաջբանութիւնը», գրում է. «Ասորական գոյն ունին այս տողերն ալ: Բարսրդի բուն գործքն ասորի բնագրի մը հետքերը շատ յաճախ կը ցուցնէ. արդէն՝ ըստ աւանդելոյն՝ երկու թարգմանութիւնք նշած են»¹⁴²: Նա այնուհետև, հավանաբար հայերեն թարգմանությունը հունարեն բնագրի հետ համեմատելուց հետո, բնագրի և թարգմանության անհամապատասխանությունն առիթով նկատում է. «Ասոր

կան՝ միանգամայն հարիր առաջադրված նպատակին (մանրամասն տե՛ս Ա. Ղա-նալանյան, Թե ինչո՞ւ Մաշտոցը թարգմանեց Սողոմոնի առակները (Երևանը: Մատենադարանի», № 7, 1964, էջ 113—123): Ճիշտ նույն նպատակով կարևոր դեր կարող էր խաղալ նաև «Վեցօրեան»:

Ի վերջո, «Վեցօրեայի» V դարում թարգմանված լինելը համընդհանուր հանրում ստացած իրողություն է լեզվի առումով. անվերապահ ընդունված է ոսկեդարյան ոճի-ինչվի ակադեմիայինն այստեղ:

¹⁴¹ Ձեռ. № 55, էջ 4բ:

¹⁴² Զ. Տաշյան, Յուրակ..., էջ 639:

պատճառն ասորի բնադիրն ըլլալու է, որմէ հատուած մը տես Բրիտանական թանգարանի Cod. add. 17143 ձեռագրին մէջ»¹⁴³:

Ն. Բյուզանդացին «Վեցօրեայի» առկա թարգմանությունը կատարված է համարում ասորերենից. «Զգօն, Եփրեմ, Եւսեբիոս, յասորոյն թարգմանեալ են, ամէն երկբայովնէն դուրս է այս. արդ իմ քննութեանցս համեմատ՝ Մակարայեցոց զիրք ևս յասորոյն են, Հարանց վարք՝ (մասսա՛մբ) նոյնպէս, Բարսղի Վեցօրեայն՝ նոյնպէս, Ագաթանգեղոս՝ հաւանօրէն նոյնպէս»¹⁴⁴:

Բանասեր Թ. Թոռնյանի բնութագրմամբ՝ «Վեցօրեայի» հայերէն թարգմանութիւնն ունի բնդհանուր նոյնութիւն հունարէնի հետ, բայց լի է տարբերութիւններով, որոնք ասորերէն բնագիր մը ենթադրել կու տան»¹⁴⁵:

Տաշյանի, Բյուզանդացու և Թոռնյանի բերված զիտողությունների համար եղե՞լ է, արդյոք, սկզբնաղբյուր վկայություն, մեղ հայտնի չէ: Այդ իմաստով ծանոթ միակ տեղեկությունը հետևյալն է: Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 217 ձեռագրում (Ճառընտիր) «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մասին ասված է. «Զ օրեայ զիրքս երկու թարգմանչաց է յարինած. վասն որոյ ուրոյն ուրոյն են»¹⁴⁶: Բերված միտքը կարող է երկակի մեկնաբանվել՝ «Վեցօրեան» երկու անկախական թարգմանություն է ունեցել կամ միակ թարգմանությունը երկու թարգմանիչներ են իրացրել:

Ի. Տրիեստենն իր ձեռքի տակ եղած ձեռագրերի նկարագրության առիթով նկատել է, որ Վեսարացու «Վեցօրեայի» ասորերենից թարգմանված լինելու պարագան «բնագիրներու ամբողջական համեմատական ուսումնասիրութիւն մը կը պահանջէ»¹⁴⁷: Գործիս սկզբնավորության և ավարտի համեմատությունից հետո ուսումնասիրողը արձանագրում է հունարեն բնագրի և հայերեն թարգմանու-

143 Նույն տեղում, էջ 640:

144 Ն. Քիւզանդացի, Առ պատէր Ատոմ («Մասիս», 1884, 14 մարտի), հմմտ. նույնի՝ Կորին վարքսպետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, էջ ԻԿ, 30:

145 Թ. Թոռնեան, Հատընտիր բնիցըսածք ի մատենագրութեանց նախնեաց, Գ. Բ, Վիեննա, 1910, էջ 9:

146 Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 555, հմմտ. Գ. Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պոռնեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս—Լիբանան, 1969, էջ 210. 396:

147 Ի. Տրիեստեն, նշվ. աշխ., էջ 285: «Վեցօրեայքը բանասերներու միտքերը աւելի հակամէտ են ասորերէնէ թարգմանուած կողմէնու Այս տարակոյրը շատ քանաւոր է» (Ն. Անդրիկեան, Գեղեցիկը լեզուին մէջ, «Բաղամովկայ», 1907, էջ 516):

թյան ոչ համընթացությունը, որը և նրան մղել է հայերեն թարգմանության համար ասորերեն բնագիր որոնելուն: Այդուհանդերձ, ի՞նչ հիմք ունեն «Վեցօրեան» ասորական թարգմանություն դիտող բանասերները: Ն. Բյուզանդացին «Վեցօրեայի» հայերեն թարգմանության խնդրին առանձին չի անդրադառնում և իր վերը նշված դիտողության շուրջը որևէ կովան չի բերում: Իսկ որքանով են համոզել Տաշյանի փաստարկները. ա) ասորական երանգ ունեցող «Յառաջաբանութիւն», բ) ավանդություն երկու թարգմանության երբեմնի գոյություն մասին, գ) հայերեն թարգմանության և հունարեն բնագրի անհամապատասխանություն:

2. Տաշյանի վկայած «Յառաջաբանութիւնը» կապ չունի բնագրի հետ և, հարկավ, գրչի հավելում է: Այդ է հուշում ամենից առաջ վերջինիս բովանդակությունը: Ավելին, Տաշյանի ձեռքի տակ եղած՝ ասորական երանգ ունեցող «Յառաջաբանութեամբ» ձեռագիրը, իր իսկ վկայությամբ՝ «կը նոյնանա տպագրին», թեև կան շատ այլընթերցումներ, «բազմաթիւ անմտադրութիւնք եւ սխալումք»¹⁴⁸: Միաժամանակ հայտնի է, որ տպագիրը Առաջաբան չունեցող ձեռագրախմբին է պատկանում և թարգմանված է համարվում հունարենից: Արդ, եթե երկու տարբեր լեզուներից թարգմանված գիտվող միևնույն գործի տարբերությունը լուրջ գրչական է և իմաստային որևէ նշանակություն չունի, հետևաբար երկու թարգմանության մասին խոսք լինել չի կարող: Մեր ձեռքի տակ եղած «Վեցօրեայ» տասնչորս գրչագրերից չորսում (№№ 620, 3457, 10258, 5686) ընդօրինակված է նշված «Յառաջաբանութիւնը» և համեմատությունը մնացած գրչագրերի հետ պարզում է, որ ձեռագրերից որևէ մեկում այլ թարգմանություն հուշող բնագրային հեռացում նկատելի չէ: Եվ, բացի այդ, ասորական թարգմանություն համարվող Առաջաբան ունեցող ձեռագրերից երկուսում «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մասին ասված է. «քարգմանեցեալ ի յունականէն ի հայկական բարբառ» (ձեռ. №№ 10258, էջ 2ա, 5686, էջ 2ա): Ինչ վերաբերում է «Վեցօրեայի» երկու թարգմանության շուրջ եղած ավանդությանը, որ, հավանաբար, վերևում բերված ձեռագիր հիշատակարանն է, ապա պետք է ձշտել. խոսքը երկու թարգմանչի՞ մասին է, թե՞ թարգմանության:

Բացառված չէ, որ «Վեցօրեան» իրեք երկու թարգմանություն ունենա՝ մեկը կատարված ասորերենից, մյուսը՝ հունարենից: Բայց

148 Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 640:

ներկա դեպքում մեր ձեռքի տակ եղած և բանասիրությունը հայտնի ձեռագրերը, տպագիրը, ինչպես նաև բնագրագիտական առկա հետազոտությունները խոսում են մեկ թարգմանության օգտին՝ կատարված հունարեն բնագրից: Հ. Տաշյանի ենթադրության հիմնական պատճառը, կարծում ենք, հայերեն թարգմանության ոչ լիակատար համապատասխանությունն է հունարենին, որ միանգամայն այլ պատճառաբանություն ունի¹⁴⁹:

«Վեցօրեայի» հունարենից թարգմանված լինելու լավագույն կովանը հայերենում պահպանված հունաբանություններն են և հունարենի հիմքի վրա առաջացած թյուրբնկալումները: Ա. Սուբբյանը գրում է. «Խիստ բուսաբանութեան և կենդանաբանութեան բառեր շինելու շատ չաշխատիր թարգմանն, այլ շատ տեղ ինչպէս ի յոյնն կը գտնէ՝ տառադարձութեամբ ի հայ կը փոխէ, Կոնիովն, Եղբրոբոս, Անկոնիտովն, Մեկոնիոն, Պելիես, Մփիևոս, Կարկիևոս, Պողիպոլէս»¹⁵⁰: Նա աշխարհագրական հասկացությունների կրած փոփոխությունների առիթով նկատում է, որ դրանք ընդօրինակող զրիչների վրիպումներ չեն, այլ թարգմանչի անհմտության արդյունք, որ «շատ տեղ յունական յօդն ալ անուանց ՚հետ կը միացնէ և կըսէ ՈՒՐ-սասպէս, փոխանակ ըսելու Քասսպէս. Ուլփուսիս (Փասիս). և կըսէ դարձեալ Բարսախէս»¹⁵¹:

Բանասեր Ս. Նազարեթյանը «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը բննելիս, ի թիվս այլ զրչական վրիպումների, նկատում

149 Ասորական դրականության պատմարանների հավաստմամբ՝ Կեսարացու մասնագրական ժառանգության ասորերեն թարգմանություններից պահպանվել են ձառեր, առանձին նամակներ, մեկնություններ, «Գիրք հարցողացը», «Պատարագամատուցը», «Վեցօրեայ» ձտերից հատվածներ (ձեռագիր), որոնք պահվում են Սինայի վանքում՝ ձեռ. № 9 (IX դ.), վերջից թերի (am Ende unvollst) Բրիտանական թանգարանում՝ ձեռ. № 546 (Add. 17143): Այս լավահամարի տակ են և ձառն ամբողջությամբ և հատվածներ է և Թ ձառերից: Թարգմանության ժամանակը (V դ.) թևական է: (Anton Baumstark, Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922 (արտապատճենված 1968 թվականին, Քեդլինում), էջ 78-79, B. Baumstark Краткий очерк истории сиринской литературы, СПб., 1902, էջ 45, 226: Այսպիսով, «Վեցօրեայի» ամբողջական թարգմանության շրջությունը և եղած հատվածների արտասահմանյան թանգարանային հավաքածո լինելի ինքնին առույծ բացառում են հայերեն թարգմանության և ասորերեն հատվածների համադրության որևէ փորձ: Մեր օրերի ասորագետները բերված թարգմանական տեղեկություններին նոր բան չեն ավելացնում:

150 Ա. Սուբբյան, նշվ. աշխ., էջ 124:

151 Նույն տեղում, հմմտ. «Պատկեր», 1893, № 23, էջ 542:

է նաև բառային այնպիսի աղավաղումներ, որոնք արդյունք են թարգմանչի անհմտությունից՝ բնագրի որոշ քերականական ձևերի շքնկալման: Այսպես, օրինակ, հունարենի արական սեռի «6» հոգը բառամաս ընթերցելով՝ թարգմանիչը Քասապէս գետանունը տառադարձել է ՈՒՆԱՍԱՊԷՍ, Փասիսը՝ ՈՎՓԱՍԻՍ, Նիսէսը՝ ՀՈՆԻՍԷՍ¹⁵²:

«Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությունում եղած վրիպում-անճշտությունները շորս խմբի է բաժանում հայագետ Հ. Թորոսյանը:

Ա. Սխալ ընթերցման հետևանքով առաջացած վրիպումներ, որոնցում բնագրի այս կամ այն բառը շփոթվել է նմանահունչ կամ, թերևս, սոսկ արտաքին նմանություն ունեցող այլ բառի հետ և առաջացել է իմաստի խաթարում.

1) ὄλιγοις — «լատուկ. սլատշաճ, յարմար». թարգմանիչը շփոթելով ὄλιγοις (տուն) բառին հետ, կը դնէ «բնակություն»:

2) τῶνος — «ուժ, կորով, զօրություն». թարգմանիչը կը դնէ «համբերություն», շփոթելով հաւանօրէն τῶνος բառին հետ, որ կը նշանակէ «ցաւ, նեղություն, համբերություն»:

3) ἡσυχως — «ցօղտն, բուն, կոթուն». հայ թարգմանիչը կը դնէ «կոշիւն», շփոթելով ἡσυχως բառին հետ, որ իրօք կը նշանակէ «ուլիկ, ձաղ, կորիւն»:

4) ἀπὸ τῶν ἀσπερῶν — «հաստատուն աստեղք». թարգմանիչը բոլորովին հակառակ կը դնէ «մոլորեցուցիչ աստեղք», ուշ շփոթելով անշուշտ ἂ ժխտական տառին»¹⁵³:

Բ. Թարգմանիչը շփոթելով բազմաթիւ բուսատեսակների և ձկների անվանումների հայերեն ղուգահեռները, բնագրի համապատասխան հասկացությունները հաճախ նույնությունամբ փոխանցում է հայերենի և երբեմն էլ թարգմանում այլ նշանակությամբ.

1) ἡσυχως — որ է «խեցի». թարգմանիչը կը դնէ «կոնք»:

2) ἔργον — որ է «օձաձուկն». թարգմանիչը կը սլահէ «ենթեղէս»:

3) ἡσυχως — որ է «խեցգետին, խեչափառ». թարգմանիչը կը դնէ «կարկիրոս»:

¹⁵² «Պատկեր», 1893, № 23, էջ 542—543:

¹⁵³ Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 334:

4) *ἐχεν η̄ς* — որ է «նաւակալ» ձուկը՝ թարգմանութեամբ բառին. թարգմանիչը կը դնէ «եքենէխ»:

5) *ἰαχαιῶν* — որ է «վալլի սամիթ». հոս թարգմանիչը կը դնէ «շումբայ»:

6) *ὄρεπαις* — որ է «արտհունձ». թարգմանիչը կը դնէ «մաքալուկ»:

7) *ἰαχαια* — որ է «խարխախ». թարգմանիչը... կը դնէ «սնկիրոս»:

8) *καρπῶν* — որ է «աղանի». ինքը կը թարգմանէ «ծիծառ»:

9) *καρπῶν* — որ է «արագիլ». թարգմանիչը կը դնէ «ճայ»:

Գ. Թարգմանիչը երբեմն շնորհալիցով բնագրի հոգերը (*6, 7, 8*), չափազանց (առի, ճէ) և ալլեայ մասնիկների իմաստը, զրանք դիտում է իբրև բառամաս և տառադարձում է հայերենի.

1) *αἰ* *αἰ* — որ է «և կէտք». թարգմանիչը կը դնէ «կեփաղք»:

2) *αἰ* *αἰ* — որ է «խեցեմորթք, խեցիք գաղտակրի». թարգմանիչը... կը դնէ «եպիէնէս գաղան»:

3) *αἰ* *αἰ* — որ է «խսկ արիսք». թարգմանիչը կը դնէ «ղեփաղք»:

4) *αἰ* *αἰ* — որ է «ղետարծուի». թարգմանիչը կը դնէ «եփենէ»¹⁵⁴:

Դ. Թորոսյանը շարորդ խմբի տակ բերում է այն բառերը, որոնց՝ ս. Գրքում առկա հայերեն կիրառությունն անտեսելով, թարգմանիչը «անոնց յունարէնը կը պահէ և կը դնէ տառադարձելով».

1) *αἰ* *αἰ* — որ է «հերձի», գործածուած ս. Գրքին մէջ (Դան. ԺԳ. 54), ինքը կը դնէ «սքինոս»:

2) *αἰ* *αἰ* — որ է «կարապ». (Ղեւտ. ԺԱ. 17), ինքը կը դնէ «կիկինոս»:

3) *αἰ* *αἰ* — որ է «աքիսք». (Ղեւտ. ԺԱ. 29), ինքը կը դնէ (նախորդ ճէ մասնիկը միացուցած) «ղեփաղք»:

4) *αἰ* *αἰ* — «ղետարծուի». (Ղեւտ. ԺԱ. 13), ինքը կը դնէ (նախորդն ալ միացուցած) «եփենէ»¹⁵⁵:

¹⁵⁴ նույն տեղում, էջ 335:

¹⁵⁵ նույն տեղում:

«Վեցօրեայի» հայերեն թարգմանության հետազոտությունը, մասնավորապես համեմատությունը բնագրի հետ, ցույց է տալիս, որ բերված օրինակներով չի ավարտվում նրանում եղած հունաբանությունների ու հունարենի սխալ ընկալման իրողությունների ցանկը, այլ կան բնագրից փոխանցված բազմաթիվ բառեր և արտահայտություններ, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի:

1) Հունարեն բառեր, որոնց հայերեն համարժեքները չգտնելու, գուցե և չնախընտրելու պատճառով թարգմանիչը դրանք նույնությամբ փոխանցում է հայերենի.

«Վեցօրեայ»

(Բնագիր)

«Վեցօրեայ»

(Թարգմանություն)

- κωνσιν (էջ 292, հմմտ. PG, էջ 101) — կոնիսին (էջ 88)
 ἔλληθερος (էջ 292, հմմտ. PG, էջ 101) — էղիերորոս (էջ 88, հմմտ. էջ 89)
 ἀκουστον (էջ 292, հմմտ. PG, էջ 101) — անկոնիտոսին (էջ 88)
 μὴ γινώσκω (էջ 292, հմմտ. PG, էջ 101) — մեկոնիոսն (էջ 88)
 κωνσιν (էջ 294, հմմտ. PG, էջ 101) — մեկոնիոսն (էջ 89)
 γανθηραγορα (էջ 294, հմմտ. PG, էջ 101) — մանրագորա (էջ 89, հմմտ. էջ 88՝ մանրագոր)
 σιρην (էջ 314, հմմտ. PG, էջ 113) — սրինոս (էջ 101)
 γαβηραές (էջ 314, հմմտ. PG, էջ 113) — ցարդէս (էջ 101)
 τερραβου (էջ 322, հմմտ. PG, էջ 116) — ստրովբիդը (էջ 104)
 φωναι (էջ 394, հմմտ. PG, էջ 149) — փոկը (էջ 138)
 ὀδηφίνες (էջ 394, հմմտ. PG, էջ 149) — օլիփինը (էջ 138)
 γάρχαι (էջ 394, հմմտ. PG, էջ 149) — ներկէսը (էջ 138)
 πειραγή (էջ 394, հմմտ. PG, էջ 149) — սեղակը (էջ 138)
 σαρραον (էջ 398, հմմտ. PG, էջ 149) — սարիք (էջ 140)
 κωνες (էջ 398, հմմտ. PG, էջ 149) — կոնի. քն (էջ 140)
 κωνηαι (էջ 398, հմմտ. PG, էջ 149) — կորդիր (էջ 140)
 σαρραβου (էջ 398, հմմտ. PG, էջ 149) — սարոմք (էջ 140)
 πωλοποδες (էջ 398, հմմտ. PG, էջ 149) — պոլիպոտք (էջ 140)
 σαρρα (էջ 398, հմմտ. PG, էջ 149) — սոլինը (էջ 140)
 κωνον (էջ 402, հմմտ. PG, էջ 152) — սկարոս (էջ 142)
 τρουγινος (էջ 424, հմմտ. PG, էջ 161) — տրիգոնին (էջ 153)
 βουβουλιος (էջ 472, հմմտ. PG, էջ 184) — բոմբուոս (էջ 176):

Պարզորոշ երևում է, որ թարգմանիչը հետամուտ է վկայակոչված բառերի իմաստի, քերականական ձևի առանձնահատկություններին, ուստի և «սև», «չև», «չզ» հոգնակիական բառերը կրող բառերը անխտիր տառադարձվել են հոգնակի նշանակությամբ, իսկ մյուս հորվական կիրառությունները՝ հայերենի օրինաչափությամբ:

2) Կան նաև դեպքեր, երբ քերականական այս կամ այն ձևը, մասնավորապես՝ հոգնակի նշանակությունը չի ընկալվել թարգմանչի կողմից և որոշ բառերի հոգնակի իմաստը հայերենի է փոխանցվել եզակիի նշանակությամբ.

Բնագիր

Թարգմանություն

ὁράωντες (էջ 398, հմմտ. PG, էջ 149) դրականէս (էջ 141)

μύραιναί (էջ 398, հմմտ. PG, էջ 149) միտենէս (էջ 141)

ἐγγέλους (էջ 398, հմմտ. PG, էջ 149) ենքեղէս (էջ 141)

ἔσφαι (էջ 424, հմմտ. PG, էջ 161) քսիփիէ (էջ 153)

πίστεες (էջ 424, հմմտ. PG, էջ 161) պրիոնէ (էջ 153)

Առաջին երեք բառերը հունարեն բնագրում ունեն հետևյալ կիրառությունը. «Καὶ ἐν τούτοις πάλιν διαφώραί μύραινα. Ὁράωντες γὰρ καὶ μύραιναί καὶ ἐγγέλους...»¹⁶⁰:

Ընդգծված անվանումները հոգնակի կիրառություն ունեն անխորհր. «ὁράωντες»-ի եզ. ուղղականն է՝ «ὁ ὁράων», սեռ.-ը՝ «ὁράωντος», «μύραιναί»-ի եզ. ուղղականը՝ «μύραινας», սեռ.-ը՝ «μύραινας», «ἐγγέλους»-ը եզակի ուղղականում՝ «ἐγγέλου» և «ἐγγέλου» (համապատասխան սեռական հոլովածները՝ «ἐγγέλου» և «ἐγγέλου»): Մրգ, այս նախադասության դիմաց հայերեն թարգմանությունում կարդում ենք. «Եւ դարձեալ այլակերպք այլանշանք, որ անուանեալ կոշին դրակոնտէս և միտենէս և եմբեղէս»¹⁶¹: Հայերենը իմաստային առումով հիմնականում համապատասխանում է բնագրին, թեև վերջինիս «τῶντοις πάλιν»-ը (շատերից ոմանք) անտեսված է: Բայց ներկա դեպքում խոսքը այն մասին է, որ թարգմանիչը բնագրի ընդգծված բառերի «է», «աի» հոգնակիակերտ ցուցիչները բառամաս ընթերցելով նույնությամբ տառադարձել է հայերենի¹⁶² և, փաստորեն, բնագրի առանձին ձևատեսակներ ներկայացնող հասկացություններից յուրաքանչյուրը հայերենում դարձել է եզակի անվանում: Մինչդեռ, նախորդ օրինակների նմանությամբ, հայերենում սպասելի էր՝ դրակոնք, միտենք, եմբեղէք:

Նույն հոգնակիակերտ մասնիկի շտաբորոշմամբ պայմանավորված վրիպում կա նաև վերոբերյալ բառերից վերջին երկուսում,

¹⁶⁰ «Hexaéméron», էջ 398, հմմտ. PG, էջ 149:

¹⁶¹ «Վեցօրեայ», էջ 141:

¹⁶² Նախորդ և հաջորդ բառերի նմանությամբ բնագրի «μύραινας»-ն տառադարձվել է միտենէս:

որոնք բնագրում ունեն հետևյալ կիրառությունը. «(Ὁ) γὰρ πνευ-
 ζουφια, καὶ πρῶτος»¹⁶³ (ոչ միայն քսիփիէք և պրիոնէք): Թարգմանի-
 չը բերված միտքը ընթերցել է. «Քանզի ոչ եթէ միայն, որ անուա-
 նեակ կոչի քսիփիէ, պրիոնէ»¹⁶⁴: Վերջինիս անհամապատասխանու-
 թյունը բնագրի հետ, ինչպես տեսնում ենք, երկու բնույթի է. ա)
 հայերենում կա, այսպես կոչված, հարակից բացատրություն, բ)
 հոգնակի անվանումների եզակիացում: Բնագրում խոսքը քսի-
 փիէք և պրիոնէք այն ձևատեսակների մասին է, որոնք միմյան-
 ցից տարբերվում են ապրելակերպի, սնման, աճման և այլնի հետ
 կապված բաղմամբիվ հատկանիշներով, ուստի և բնագրի հմանու-
 թյամբ հայերեն թարգմանությունում պիտի ունենայինք անվանում-
 ներիս հոգնակի կիրառություն:

3) Հայերեն թարգմանությունում նկատելի է մեկ այլ իրողու-
 թյուն ևս. թարգմանիչը բնագրի այս կամ այն բառ-տերմինը հայե-
 րենի փոխանցելիս, երբեմն միաժամանակ տալիս է նաև հայերեն
 թարգմանությունը.

Բնագիր	Թարգմանություն
ϕῆγας (էջ 310, հմմտ. PG, էջ 112)	փսեհա, որ է ի նմանութիւն սեր- ման (էջ 98)
ῥηλατρουα (էջ 316, հմմտ. PG, էջ 113)	ղելեկտրիոնէ դարձեալ ասեմ, թէ և նա հոյզ է ձառոյ (էջ 101)
բարւալ (էջ 320, հմմտ. PG, էջ 116)	միւրիկէ, որ ջրաբիւն և ոստիւն է (էջ 104)
աշխուս (էջ 404, հմմտ. PG, էջ 153)	կարկինոս, որ թարմանի խեցգետին (էջ 143)
եղշուր (էջ 422, հմմտ. PG, էջ 161)	եֆինէլիս ¹⁶⁵ , որոյ այսպէս թարմանի անուն իւր՝ հառակալ (էջ 153)
անուս (էջ 470, հմմտ. PG, էջ 184)	կիկնոս, այս ինքն փոք կամ ձկնաբաղ (էջ 175)
Σῆρας (էջ 472, հմմտ. PG, էջ 185)	շերաս, այս ինքն կերպասաբեր (էջ 177)
աշխալ (էջ 398, հմմտ. PG, էջ 149)	այս ինքն կրար ¹⁶⁶ և խեցգետին (էջ 140)

¹⁶³ «Hexaéméron», էջ 424, հմմտ. PG, էջ 161:

¹⁶⁴ «Վեցօրեայ», էջ 153:

¹⁶⁵ Կարկինոս և եֆինէլիս բառերը վկայակոչված են նաև Հ. Թորոսյանի հոդ-
վածում (էջ 335):

¹⁶⁶ Թառս ձեռագրերում (բացառությամբ № 10258 գրչագրի) ունի կարբ և
կարպ ընթերցումները, հրատարակությունում՝ կապլ, ուղղում ենք կարբ:

Ուսումնասիրողներից Հ. Թորոսյանը «Կարկինոս», «Եքինէիս» և նման անվանումների առիթով նկատում է, որ թարգմանիչը դրանց հայերեն զուգահեռները չգտնելու պատճառով հունարենն է փոխանցում հայերենի: Նա գրում է. «*καρκίνος* — որ է «խեցգետին, խեչափառ», թարգմանիչը կը դնէ կարկինոս»... «*ἐξέσχη*» — որ է «նաւակալ ձուկը՝ թարգմանութեամբ բառին. թարգմանիչը նախ կը դնէ *եքենէիս*»¹⁶⁷: Բայց դժվար չէ նկատել, որ նշված բառերի Թորոսյանի կողմից առաջադրվող «խեցգետին, նաւակալ» հայերեն անվանումները կան «Վեցօրեայ»-ում: Ավելին, ինչպես տեսնում ենք, բնագրի «միրիկէն» թարգմանիչը բացատրում է (թարգմանում է) «չրարբին», «կիկնոսը»՝ «վոր կամ ձկնաքաղ», «շերասը»՝ «կերպասաբեր» և այլն: Նշված օրինակները միաժամանակ հիմք են տալիս պնդելու, որ բազմաթիվ հունարեն անվանում-արտահայտութիւններ հայերենի են փոխանցվել ոչ թե դրանց հայերեն համարժեքների չգոյության կամ չիմացության պատճառով, այլ «Վեցօրեայի» թարգմանության բնույթով թելադրված: Իսկ ինչ վերաբերում է հունարեն և հայերեն անվանումների համատեղ կիրառությանը. այսպէս, թերեւս, արվում է «Վեցօրեայ» ձառերի ընկալումը դյուրեացնելու, շնարավորության սահմանում հասկանալի դարձնելու նպատակով:

4) «Վեցօրեայի» հայերեն թարգմանութիւնը ղնահատելու, նրանում առկա ոչ միօրինակութիւնը ընդգծելու իմաստով կարևոր է նաև հետևյալ փաստը. թարգմանիչը երբեմն այս կամ այն ծառատեսակի հունարեն անվան թարգմանութիւնը զուգահեռ տալիս է լրացուցիչ մեկնութիւն: Այսպես, օրինակ, «Վեցօրեայի» բնագրում կարդում ենք. «*Ὁ μὲν οὖν μεν τὰς ἀγῶνας πῶς πᾶσα πῶς πᾶσα τὰς ἡμέρας*»¹⁶⁸ (ուստի վայրի թղենիները աճեցնում են ընտանիների հետ): Բնագրի այս նախադասութիւնն ղնաց հայերեն թարգմանութիւնում կարդում ենք. «Քանզի զոյ ի թղենիս, որ անտաննալ կոչի կատաղենիս, այսինքն վայրի մոլաթուղ. և բերեն տրնկեն զնա առ ընտանի թղենուջ»¹⁶⁹: Ինչպես շատ այլ դեպքերում, հայերենը շունի բնագրի սեղմութիւնը՝ և ուղեկցվում է առանձին բառային հավելում-բացատրութիւնամբ: Բնագրի «*πῶς πᾶσα*»-ը (հոգնակի հայցական, և զակի՝ «*πῶς πᾶσα*» — թղենի) թարգմանված է

167 Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 335:

168 «Hexaéméron», էջ 312, հմտ. PG, էջ 112բ

169 «Վեցօրեայ», էջ 98:

կատաղենիս: Բայց, շքավարարվելով դրանով, թարգմանիչը վրկայակոչում է բառիս բոլոր հոմանիշ կիրառությունները և, փաստորեն, հունարենի նշված բառը ստանում է եռակի բացատրություն՝ «թղենի-կատաղենիս-վայրի մուլարուզ»:

5) «Վեցօրեայի» հայերեն թարգմանության ինքնատիպությունը հստակելու, ում կողմից թարգմանված լինելու հարցադրմանը մոտավոր պարզաբանում տալու իմաստով կարևոր է նկատել, որ նրանում միենույն երևույթի նկատմամբ երբեմն երկու տարբեր մոտեցում կա: Այսպես, օրինակ, նախորդ քննության մեջ նկատեցինք, որ բնագրի «ἑγχεῖσες»-ը (էջ 398) յոթերորդ ճառում նույնությամբ փոխանցվել է հայերենի՝ «ենքեղեկէս» (էջ 141): Թարգմանության և բնագրի համադրումից պարզվում է, որ նշված անվանումը իններորդ ճառում թարգմանվել է «մծեխ և մծղուկ»: Հունարենում կարդում ենք. «Πᾶς δὲ ἑγχεῖσες οὐδὲ θύλας ὀρώμεν ἢ ἐκ τῆς ἰθύος συνιστάμενας»¹⁷⁰: Նույնի հայերեն թարգմանությունում ասված է. «Եւ մծեխ և մծղուկ ոչ այլ ուստեք լինի, այլ ի սկոյ և յաղտոյ ջուրց»¹⁷¹: Ինչպես տեսնում ենք, թարգմանությունը համընթաց է բնագրին¹⁷²:

Միևնույն երևույթի նկատմամբ եղած տվյալ տարբեր մոտեցումը և առհասարակ հիշյալ բաղմամբիվ ոչ միօրինակությունները արդյոք հիմք չեն տալիս ենթադրելու, որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը մեկ մարդու գործ չէ¹⁷³, մասնավորապես որ վկայություն ունենք, թե այն թարգմանվել է «ձեռամբ ճշմարտաբանից քարգմանչաց», «Երկու քարգմանչաց», թերևս որի պատճառով էլ «ուրոյն ուրոյն են»:

Հայագիտության մեջ հաստատագրված է, որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը ազատ է և բիշ համադրելի հունարեն բնագրին: «Վասն զի այնպիսի աղատօրէն համարձակութեամբ ճարտար

170 «Hexameron», էջ 486, հմմտ. PG, էջ 189—192:

171 «Վեցօրեայի», էջ 183:

172 Բնագրի հիշյալ բառը վերևում նշված երկու դեպքերում էլ առարկան է թարգմանվել մծեխ և մծղուկ («Шестоднев», էջ 104, հմմտ. էջ 133):

173 Անկյուրիայի ս. Աստվածածին վանքում 1703 թվականին ընդօրինակված մի գրչագիր ժողովածուում պահպանվել է հետևյալ հիշատակությունը. «Եւ արար մեկնիշ մի ա՛յլ ի Զ օրեայ գրոյն Բարսեղի Կեսարացոյն: Եւ զայն Գ գիրքն քարգմանեաց նոյն վարդապետն ի մեր լեզուս» (Բարգեն կարդիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիրիոյ Կարմիր վանոց և շրջակայից, Անթիլիա-Արբանան, 1957, էջ 520, հմմտ. էջ 699): Ասվածը «Վեցօրեայի» մասնակի թարգմանության մասին մեզ ծանոթ միակ տեղեկությունն է:

առեալ սլանայ հայ թարգմանիչս, — ասված է հրատարակութեան Առաջաբանում, — մինչ զի յուով ուրեք անմարթ էր նշմարել զնա ընդ հետս շաւղաց բնագրին, և բանիցն թեւ ոչ ինչ լուծումն շնորհէր»: Իսկ նոր հայկաղցյան բառարանագիրները «Վեցօրեան» օրակում են «հին թարգմանութիւն քաջ հայկաբանութեամբ, այլ կարի ընդարձակեալ ոճով՝ ըստ իմաստից և եթ յարմարեալ յոջն բնագրին»¹⁷⁴:

Սուբրյանը ևս գտնում է, որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանութիւնը ազատ է, քիչ համադրելի բնագրին: Նա գրում է. «Վեցօրեայն Բարսղի բնաիր և ողորկ հայկալեղու փափկավանկ զրչի մը հանգիպած կերևի. թարգմանն բանաստեղծ է քան զհեղինակն, աւելի յարդարուն և դարգարուն պարբերութեամբք»¹⁷⁵: Հայերեն թարգմանութեանն «ազատ» բնորոշումն են տվել բանասերներ Ս. Նազարեթյանը, Գ. Նահապետյանը, Հ. Թորոսյանը¹⁷⁶:

«Վեցօրեայի» հայերեն թարգմանութիւնը, հիրավի, միատարր չէ: Թարգմանութեան և բնագրի համադրումը ցույց է տալիս, որ հայերեն թարգմանութեան բնույթը սլայմանավորող առանձնահատկութիւնները խմբավորելի են հիմնականում երկու կետերում՝ թարգմանութեան ու բնագրի համընթացութիւն և թարգմանութեան ընդարձակում: «Վեցօրեայի» հայերեն թարգմանութեանն անդրադարձած բանասերների հիմնական հոգածութիւնը, ինչպես և պետք էր սպասել, բնագրի և թարգմանութեան անհամապատասխանութեան վերհանումն է եղել, քանի որ համապատասխանութիւնները բնականոն են: Կան բազմաթիվ էջեր, որոնցում հայերեն թարգմանութիւնը զերծ է թարգմանչի միջամտութիւն-ընդմըջարկութիւններից, և բնագրային բազմաթիվ բացատրութիւններ նույնութեամբ են թարգմանվել հայերենի: Այսպես, օրինակ՝

Բնագիր

«Մի շնն անարչա փռտնչու, անթրստե, տա օրաբառա, յղծե, եթեւի շառլոսե քերտրցի: Են կա՛ սօրանօն շնօրաբառա, զի ճե տն շառլոս արչի զի քորչէրօն ասօրիցա: Զանօն սօն սնկրտոս, անարչոն անալ յօրտոս տօն շառլօփրտոն սօրչտօն տչոն օճոն»։ («Hexaéméron», էջ 96, հմմտ. PG, էջ 9)

Թարգմանություն

«Արդ մի՛ վրիպիցիս, ո՛վ մարդ, երթալ զկնի երևելի արարածոցս, և զնիցես անսկիզբն զսկզբնատրս. և մի՛, վասն զի զթե ի վերայ քո անցանն ի շրջելն իսրեանց յորժամ շարժին զնալ յերկիսս, և մի՛ դարձեալ՝ վասն զի չէ զիրին մտաց մերոց կալ ի վերայ ի սկզբան աշխարհիս»: (էջ 6)

174 ՆՁԲ, Առաջաբան, էջ 19:

175 Ս. Սախբյան, նշվ. աշխ., էջ 123:

176 Ս. Նազարեթյան, նշվ. աշխ., էջ 484. Գ. Նահապետյան, նշվ. աշխ., էջ 181, Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 332:

Վկայակոչված հատվածները հիմնականում նույնական են, այսինքն՝ հայերեն թարգմանությունը համընթաց է բնագրին, մասնակի տարբերություն կա հատվածների վերջնամասում, ուր բնագրի «φύσιον»-ը՝ (գրաբար՝ բնութիւն) թարգմանված է աշխարհի բառով: Կեսարացու զորաշացումը հատվածի վերջնամասում այն է, որ «մեզ շրջապատող բնությունը անսկիզբ չէ»: Հայերեն թարգմանությունում նշված միտքը մատուցվում է մի փոքր նկարագրական եղանակով. «վասն զի չէ դիրին մտաց մերոց կալի վերայ ի սկզբբան աշխարհիս», որը, թերևս, կարելի է բացատրել թարգմանչի ուճավորմամբ, այսինքն՝ սկիզբ ունի աշխարհը, բայց այն դյուրբմբունելի չէ մեզ համար, քանզի արարչի գործն է:

Այնտեղ, ուր սեփական խորհրդածությունների, քննվող խնդրի շուրջ միջամտություն առիթը բացառվում է, «Վեցօրեայի» թարգմանիչը ամենայն հարազատությամբ հետևում է բնագրին:

Օրինակ՝

Բնագիր

«Τὰ τῆς πρώτης ἡμέρας ἔργα, μὴ-
λον θεῶ τῆς μακροῦ χρόνου ἕνε-
κα αὐτῆς τῆς ἡξιοῦται, ὅ ἐν τῇ φύ-
σει ἔχει, παρὰ τοῦ κτισθέντος καὶ ἔπι-
τήν ἐκθροῦται, οὐκ ἐν τῇ πρώτῃ τῆς ἡ-
λάς συντάξει ἡξιόμαθαι» („Hexaemé-
ron“, էջ 188, հմմտ. PG, էջ 52)

Կամ՝

Բնագիր

«Ἦδὲ θεῶ τῶν αὐτῶν κτισθέντων
τῶν αὐτῶν ἕνεκα αὐτῆς τῆς ἡξιοῦται
καὶ τῆς ἡξιοῦται πρὸς τῶν χρο-
νίων παθῶν ἕνεκα ἡξιοῦται» („Hexaéméron“,
էջ 294, հմմտ. PG, էջ 101)

Թարգմանություն

«Գործք ատրն առաջնոյ, որ և կոչե-
ցա՝ որպէս էն ճմարտիւ՝ մի, քանզի չէ
օրէն անուղ ի նմանէ ի բաց զանունն՝
որ տուա յարարչէն ի պատիւ միոյ
միայն բնութեան նորա, կատարեցան ի
նմին ատր: Քանզի ոչ կի՛նք ընդ կարգ
ալոց ատրցն համարի»: (էջ 43)

Թարգմանություն

«և կոնիովն արմատովն զշրջեալ ու-
ղիղ և զխելս ուղղն, և եղբորոս ար-
մատովն զհինօրեայ պատան ցածուցա-
նեն»: (էջ 89)

Բերված հատվածների համեմատությունը պարզում է դրանց նույնությունը: Մասնակի տարբերություն կա դրանցից երկրորդում. անտեսվել է բնագրի ընդգծված „πολλὰ“ (=շատ) բառը և „τινες“-ը (=արմատ) բնագրի մեկ կիրառության դիմաց օգտագործվել է երկու անգամ՝ հավանաբար «կոնիով» և «եղբորոս» բուսատեսականների արմատների բուժիչ հատկությունն ընդգծելու նըպատակով:

«Վեցօրեայ» ճառերի բնագրի և հայերեն թարգմանության նույնության բազմաթիվ օրինակներ կարելի է վկայակոչել: Համընթաց են բնագրին առանձին բուսատեսակների առանձնահատկությունների, աստղային համակարգությունների, կենդանիների, այսպես կոչված, «սովորությունների», աճման-բազմացման առանձնահատկությունների և այլ նկարագրություններ, «որք աւելի ճշդագոյն կընթանան բնագրին հետ»¹⁷⁷:

Ինչպես նկատված է և հաստատվում է նոր համեմատությամբ, «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը առավել քննելի է բնագրային հեռացումների առումով, երբ «հայերէն թարգմանութիւնը ազատ և ըստ հաճոյս ընդլայնած է բնագրի խօսքերը և երբեմն նաև իմաստները»¹⁷⁸ կամ, նաղարեթյանի բնորոշմամբ՝ հայ թարգմանիչը «ազատ թարգմանութեան՝ վսեմ հայախօսութեան եւ նիւթոյ ընդլայնմանց հետ կը կցէ զողտրիկ եւ իմաստուն համառօտ լուսաբանութիւններ»¹⁷⁹:

Թարգմանիչը Կեսարացու այս կամ այն բացատրությունը թարգմանելիս հաճախ միջամտում է բնագրին, ավելացնում իր դատողությունները և, դրանով իսկ, թարգմանությանը տալիս մասամբ նկարագրական բնույթ: Օրինակ՝ բնագրում կարդում ենք. «Διὸ μὲν γὰρ τὸν μαθῶρα γόρου ἕπνον ἰατροὶ κατεπαύσαν»¹⁸⁰: «Վկայակոչված միտքը բնագրային ընթերցմամբ կլինե՞ր՝ «գի մանրագորա բժիշկք քուն ածեն քնահատաց»: Մինչդեռ հայերենում ասված է. «գի մանրագորա բազում անգամ բժիշկք քուն ածեն այնոցիկ՝ որոց բուն հատեալ իցէ յաչաց»¹⁸¹, ինչպես տեսնում ենք, թարգմանչի ազատությունը բացահայտ է. հավելում են «բազում անգամ» բառերը և բնագրի «քնահատաց»-ը թարգմանություն-բացատրությամբ դարձել է «այնոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յաչաց»:

Հայերեն թարգմանության ընդարձակումները առավելապես նկատելի են այն նկարագրություններում, որտեղ քննվող խնդրի շուրջ Կեսարացու բացատրությունը վերապատմվում է թարգմանչի

177 Ա. Սուբրյան, նշվ. աշխ., էջ 124:

178 Գ. Նահապետյան, նշվ. աշխ., էջ 181:

179 «Պատկեր», 1893, № 22, էջ 522:

180 «Hexaëméron», էջ 294, հմտ. PG, էջ 101:

181 «Վեցօրեայ», էջ 89:

հավելում-տեղեկությունք: Այս առումով ուշագրավ են «Վեցօրեայ» ճառերում տրված կենդանական նկարագրությունները, որոնց մի մասում, երբ, հավանաբար, ավելացնելու բան չունի, թարգմանիչը համընթաց նկարագրությունք հետևում է բնագրին, մյուսում, սև-փական տեղեկություններն ի մի խառնելով հեղինակային նկարագրությունք, ստեղծում է, կարելի է ասել, ինչ-որ չափով նոր որակ:

Բնագիր

«Ὁ καρῖνος τῆς σαρκὸς ἐπιθυμεῖ τὸ ὄσπερον· ἀλλὰ ὄυσάλωτος ἢ ἄγρα αὐτῷ διὰ τῆν περιβολῆν τὸ ὄσπερον γίνεται. Ἀρραγεῖ γὰρ ἐρωτῶ τὸ ἀπαλόν τῆς σαρκὸς ἢ φῶτις κατῆσφαλίσατο». (Hexaëmeter, էջ 104, հմտ. PG, էջ 153)

Թարգմանություն

«Կարկինոս, որ թարմանի խեցղետին, ցանկայ ոտել զմիս զհոնոյ միոջ, որ անուանեալ կոչի սասրէսս. և քանզի դժուարսս է սստրէսս, զի իբրև խեցղեղևն սլտանեսս ունի շուրջ զիրևա, և իբրև ընդ ամրածածուկ պարսպով զգուշացեալ պահի փափուկ մարմին իւրոյ կակուղ բնութեան, և մորթն ի վերայ սեպ և ոզորի խեցանման է, և այսպէս իմն կոչեն զեսուն գայն խեցէմորթ»: (էջ 143)

Բնագրում չեն բացատրված «կարկինոս» և «սստրէսս» անվանումները, բայց թարգմանիչը, հեռանալով բնագրից, հայ ընթերցողի համար անհրաժեշտ է համարել առաջինը բացատրել, «որ թարմանի խեցղետին», իսկ մյուսի համար ավելացնել «զհոնոյ միոջ, որ անուանեալ կոչի» լրացումը, այդքանը բնագրի միայն մեկ նախադասության դիմաց, Հաջորդ նախադասության սկզբնամասը, կարելի է ասել, մոտավոր նմանությունք է կապվում բնագրի հետ. նախ բնագրի «αἰλιξ»-ն (= բայց) դարձել է «և քանզի», «αἰτῶ»-ն (= ինքը)՝ «սստրէսսն» և հավելում է «շուրջ զիրևա» արտահայտությունը: Հայերեն թարգմանություն վերջնամասը զրեթև համադրելի չէ բնագրի հետ, ուր ասված է. «քանզի բնությունը անխոցելի պատյանով անվտանգել է սստրէսսին»: Այս նախադասության զիմաց հայերեն թարգմանությունում առկա է «և իբրև» սկզբածրով, «զայն խեցէմորթ» վերջով վերոբերյալ հատվածը, որտեղ, ընդարձակմանը զուգահեռ, կան թարգմանչի հավելած բացատրություններ:

Բնագրի այս կամ այն բացատրության ընդլայնման, թարգմանության ընդարձակման ու թարգմանչի ընդմիջարկման բազմաթիվ օրինակներ կարելի է վկայակոչել «Վեցօրեայ» ճառերից: Ստորև

բերված հատվածում բնագրի իմաստը փոխանցվել է ընդմիջարկու-
թյուններով, սեփական իմացության զուգորդմամբ:

Բնագիր

Γεωμετρία: γάρ καὶ ἀριθμητικαὶ
μέθοδοι, καὶ αἱ περὶ τῶν στερεῶν πρᾶξι-
μαίαι, καὶ ἡ πολυθρύλλητος ἀστρονο-
μία, ἡ πολυσχόλος ματαίωσις, πρὸς ποῖον
καταστρέφουσι τέλος: Ἐἴπερ οἱ περὶ
ταῦτα ἐσπουδαχότες ἀνααἰθίον εἶναι τῶ
ἰκρίστη τῶν ὄλων Θεῶ... („Hexaémé-
rion“, էջ 100, հմտ. PG, էջ 9)

Թարգմանություն

«Բայց երկրաչափութիւն և համարողու-
թեան ճշմարտութիւն, դժուարին շրջանա-
կօրն և աշխատեցուցիչ նուրբ բնու-
թեամբն, հանդերձ մեւս ևս անուանի
ճարտարութեամբն՝ որ զսահմանս կա-
տարէ և զկայանս աստեղացն նշմարէ, և
նորա՝ որ զհետ այսպիսի սնտոի աշխա-
տութեան ի կիրթ անկեալ ընթանային
մեծաւ փութով և բազում հոգաբարձու-
թեամբ, որ և այլք ևս բազումք հանա-
պազորդէին ընդունան այսու աշխատու-
թեամբ, այսպէս ասացին, թէ ընդ ինք-
նութեան իսկութեան աստուծոյ էր աշ-
խարհս երևելի»: (էջ 7)

Համեմատությունից պարզորոշ նկատելի է, որ բնագրի սկզբնա-
մասի „ἀριθμητικαὶ μέθοδοι“-ն թարգմանվել է «համարողու-
թեան ճշմարտութիւն», այսինքն հունարենի „μεθόδοι“-ն (= մի-
ջոցներ, հնարավորություններ) հայերենի է թարգմանվել ոչ իր
հիմնական նշանակությամբ, այնուհետև բնագրի „ἡ κατασκευὴ“-ի
դիմաց թարգմանիչը բացատրում է «հանդերձ մեւս ևս անուանի
ճարտարութեամբն՝ որ զսահմանս կատարէ և զկայանս աստե-
ղացն նշմարէ», որին հաջորդող հատվածը գրեթե համադրելի չէ
«Վեցօրեայի» բնագրին, որտեղ ասված է. «Եթե հիշյալ դիտություն-
ները ուսումնասիրողները եկան այն հետևություն, որ տեսանելի այս
աշխարհը լուսավորված է ամենայնի արարող աստծո կողմից»: Այս
հատվածը հայերենի է թարգմանվել մի փոքր բանավիճաբար, որո-
շակի է թարգմանչի նախասիրությունը տվյալ հարցի շուրջ, ուստի
և առաջացել են մի շարք արտահայտություններ, որոնք բնագրում
չկան. «սնտոի աշխատութեան», «կիրթ անկեալ», «մեծաւ փութով»,
«բազում հոգաբարձութեամբ», «ընդունայն աշխատութեամբ» և
բազմաթիվ բառեր ու ոճավորումներ:

Որոշ իմաստով իրավացի է Սուքրյանը, գրելով՝ «Մինչ Բարսեղ
լակոնական և իմաստասիրական զուսպ ոճը կը նախադասէ քան
զընդարձակութիւն ոճոյ, ընդհակառակն հայ թարգմանն կախարժի
բանաստեղծական թոհիչը. շատ անգամ իր արևելեան սերժ հա-

գուտար, մարդարտազարդ բեհեզները կը սիրէ յունական սարդութեան վրա, շրտեմ թէ կը քողարկէ զայն և կընկըղմէ»¹⁸²;

Յարդ վկայակոչեցիք «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությունն ոչ միօրինակությունը հավաստող բազմաթիվ օրինակներ, որոնք ինչ կետերի տակ էլ խմբավորվեն (սխալ ընթերցում, հոգերի և զանազան այլ մասնիկների շրնկալում, բնագրի այս կամ այն անվանման սխալներում, հայերեն զուգահեռի անտեսում և այլն), ալդուամենայնիվ, մի բան որոշակի է, որ այն բառական թարգմանությունն չէ, այլ՝ ստեղծագործական:

Բացահայտ է թարգմանչի միջամտությունը «Վեցօրեայ» ճառերին: Եվ դա, թերևս, պետք է բացատրել դործի տեղայնացման միտումով: Այդ իմաստով «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը պետք է նայել որպես ինչ-որ շարժում նոր որակի, ուր, թարգմանության ընթացքում, ընդմիջարկվել են թարգմանչի բազում բացատրություններ և երբեմն էլ տեղայնացման երանդ ստացել Կեսարացու հարցադրում-լուծումներից շատերը: Համեմատությունից այն տպավորությունն է ստացվում, որ թարգմանչը, շտաբ, մտահոգված է ոչ այնքան բնագրի այս կամ այն միտքը նույնությունը փոխանցելու խնդրով, որքան ամբողջ «Վեցօրեան» բանաստեղծական հայերենով թարգմանելու նպատակադրմամբ: Թերևս դա է պատճառը, որ նա առանձնակի մտահոգություն չունի թարգմանվող անվանումների հայերեն զուգահեռները գտնելու, բնագրային հարադատությունը անխաթար պահելու խնդրում:

«Վեցօրեայի» թարգմանության ժամանակ՝ V դարում, թարգմանիչների առաջ ծառայած էր շատ ավելի գործնական, քան դիտական խնդիր: Ժամանակի ըմբռնմամբ՝ կարևորը «Վեցօրեայ» ճառերում արտացոլված գաղափարները ունկնդրին հասցնելն էր, նրանցում արտացոլված վարդապետության հայացի վերարտադրումը:

Այսպիսով, անվերապահ է այն իրողությունը, որ Կեսարացու «Վեցօրեայ» ճառերը հայերենի են թարգմանվել V դարի առաջին կեսում: Թարգմանությունը կատարված է բնագրային ոչ միանման հարադատությամբ ու, կարելի է ասել, հաջողվածությամբ և քննված ու քննելի բազում վրիպում-անճշտությունները հուշում են նույնիսկ թարգմանչի «հիմնապէս հմուտ շրջալը յոյն լեզուին»¹⁸³:

182 Ա. Սուրբյան, նշվ. աշխ., էջ 123, հմմտ. Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 332:

183 Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 334:

Ներկա քննութեամբ, հարկավ, չեն սպառնում «Վեցօրեայի» թարգմանութեան հետ կապված հարցերը, Ասլազայում, երբ ի մի կհաւաքվեն Կեսարացու այդ երկասիրութեան այլևայլ հավաքածոներում պահվող բոլոր գրչագիր ընդօրինակութիւնները, կկազմվի ու կհրատարակվի քննական-համեմատական բնագիրը, այն ժամանակ, թերևս, հնարավորութիւն կընձեռվի վերջնական խոսք առեալու «Վեցօրեայի» հայերեն թարգմանութեան մասին:

«ՎԵՑՕՐԵԱՅԻ» ՀԵՏՔԵՐԸ ՀԱՅ ՄԱՏՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նշանավոր աղբյուրագետ-հայագետներ Թորոսյանը, Տաշյանը և Գալեմբյարյանը բանասիրական շատ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել V դարի փիլիսոփա-մատենագիր Եղնիկ Կողբացու սկզբնաղբյուր գրականության ցանկը ճշտելու, նախորդ մատենագիրների հետ ունեցած աղբյուրագիտական առնչակցությունը վեր հանելու գործում¹: Ուսումնասիրողները, բացառությամբ առաջինի, հիմնականում անդրադարձել են Մեթոդիոսի, Արիստիդես Աթենացու, Եպիփան Կիպրացու և այլոց գործերի ու «Եղծ աղանդոցի» ընդհանրությանը, հատվածական առնչություններին, թողած աղղեցություններին, բնավ չափնարկելով վերջինիս և «Վեցօրեայի» աղբյուրագիտական կապի մասին: Մինչդեռ, Թորոսյանը մասամբ այս և հետագայում այլ քննությամբ, ի թիվս մի շարք հարցերի, անդրադարձել է նաև «Վեցօրեայի» և «Եղծ աղանդոցի» աղբյուրագիտական-տեքստաբանական ընդհանրությանը և ըստ ամենայնի քննել այն²: Նա ցույց է տալիս, որ Եղնիկի շատ բընափիլիսոփայական իմացությունների հիմնական աղբյուրը «Վեցօրեան» է: Այսպես, օրինակ, ընդհանուր շատ տեղեր ունեն և հաճախ էլ նույնական են «Վեցօրեայի» հետ հյուլեի առաջնային լինելու մասին Եղնիկի փիլիսոփայական նկարագրությունները, առանձին բուսատեսակների բուժիչ հատկության, աստղադուշակության էություն ու տարածվածության և այլնի մասին բացատրությունները³: Ավե-

1 Յ. Թորոսեան, Եղնիկ և իր երկասիրությունն («Բաղմավէպ», 1889, էջ 14—20, 108—110, 199—202, 313—318, 385—389), Յ. Տաշեան, Խոսրովիկ և գիրք հերձածոց («Հանդէս ամսօրեայ», 1892, էջ 257—263, 289—295, 321—326), Նույնի՝ Եղնիկայ մէկ նոր ագրիւրը ըստ Ա. Կարիէրի («Հանդէս ամսօրեայ», 1900, էջ 183—186), Գ. Դալմեֆեաբեան, Նորագոյն ագրիւրը Եղնիկայ Կողբացոյ ընդդէմ աղանդոց մատենին, Վիեննա, 1919, էջ 15:

2 Յ. Թորոսեան, Ա. Բարսեղ Կեսարացի իր «Վեցօրեայ» ճառերը և հայ թարգմանութիւնը («Բաղմավէպ», 1934, էջ 412—422):

3 Նույն տեղում, էջ 419—421:

լին, Թորոսյանը իրավացիորեն նկատում է, որ «նմանութեան և հետևողութեան կետեր և հետքեր կերելին» Եզնիկի նաև այն հաղորդումներում, որոնցում խոսվում է երկնային բազմաթիվ մարմինների փոխադարձ կապվածություն, դրանց փոփոխությունների (արև, լուսին, աստղեր և այլն), անձրևի նախանշանների, պատճառների, առանձին թռչնատեսուկների և առհասարակ կենդանիներին լուրահատուկ մի շարք հատկանիշների մասին:

Հայագիտության մեջ միաժամանակ փորձ է արվել ժխտելու նշված երկու մատենագիրների ընդհանրությունն պարագան՝ ընդհանուր տեղիներին հակադրելով բազում ոչ նույնական հատվածների միանգամայն հասկանալի իրողությունը: Այս առումով մեղ ծանոթ միակ տեղեկությունը հետևյալն է: Բանասեր Վ. Սոմունճյանը 1893 թվականին հրատարակած մի հոդվածով «Վեցօրեայի» սկզբնաղբյուր նշանակությունը «Եղծ աղանդոցի» համար փորձում է ժխտել սոսկ այն պատճառով, որ շատ հարցերում Բարսեղ Կեսարացիին և Եզնիկ Կողբացիին միմյանց նման չեն, ուստի և նա եղրակացնում է. «Եզնիկ բնաւ չէ կարգացեր Վեցօրէքը, զըչադրութեան պատճառաւ իւր դարուն գրոց սակաւութիւն լինելով»⁴: Այսօրինակ պատճառաբանում-բացատրությունը համոզիչ ու հիմնավոր չի կարող դիտվել միանգամայն պարզ պատճառով. V դարում թարգմանված հուշարձանները կազմավորվող եկեղեցու և մատենագրության համար ունեին գործնական նշանակություն ու կիրառություն: Առկա սակավաթիվ զրչագրերը, ինքնին հասկանալի է, կենտրոնացված պիտի լինեին կաթողիկոսարանում կամ եպիսկոպոսանիստ մայրավանքերում, ուստի սկզբնավորվող մատենագրության ակունքներում գտնվող մատենագրի համար զրչագիր հայթայթելը մեծ խնդիր չպիտի լիներ: Եվ այսպէ՛ հայագիտության մեջ ապացուցված է, որ մեր Ոսկեդարի դասգաստված մատենագիրները, (չորս դաս), մանավանդ առաջին դասի ներկայացուցիչները, այդ թվում և Եզնիկ Կողբացին, հունարենից հայերենի վերածվող առաջին անհրաժեշտություն զրքերի թարգմանիչներն էին (ու առաջին ընթերցողները) և, բնականաբար, զրչագիր փնտրելու անհրաժեշտություն չունեին:

Ինչ վերաբերում է Կողբացուն, այսպէ՛ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը քննելիս նկատեցինք, որ նա, անտարակույս, ծանոթ է եղել Կեսարացու նշված գործի բնագրին և հայերեն թարգմանությանն ու օգտվել է դրանից:

⁴ Վ. Սոմունճեան, Կենսագիր և նկարագիր Եզնկայ վարդապետի Կողբացուց, «Բարդավէպ», 1893, էջ 333:

Բանասիրությունը, որքան մեզ հայտնի է, հետադաշում ալլևս չի անդրադարձել Բարսեղի և Եղնիկի առնչության հարցին:

Ուսումնասիրողների հավաստմամբ՝ «Եղծ աղանդոցը» մեր դասական մատենագրության մեջ իր նախորդը չունեցող ինքնատիպ փիլիսոփայական գործ է: Եղնիկ Կողբացին, անտարակույս, հրաշալի գիտեր եկեղեցական-փիլիսոփայական մատենագրությունը, այդ թվում և Կեսարացու «Վեցօրեան», որը ձեռքի տակ է ունեցել իր «Եղծը» շարադրելիս: Դա պարզորոշ երևում է «Վեցօրեայի» թե՛ բազմաթիվ հարցերի վերաշտրտագրումից և թե՛ առանձին հատվածների բառացի վկայակոչումից: Այսպես, օրինակ՝ հյուլեի մասին եղած նախորդ և իրեն ժամանակակից փիլիսոփաների հետևությունների շուրջ Կողբացու դիտողություն-մեկնությունների և առհասարակ նյութին (մատերիա) տված նրա փիլիսոփայական բացատրությունների աղբյուրը «Վեցօրեան» է:

Բարսեղ Կեսարացի

«Ղհիւղէ յայտ առնեն, որ էր աներեւոյթ և անպատրաստ, զի առանց գոնոյ էր և առանց կերպարանաց և նմանութեանց: Աստուած... ամ զնա ի զոյնս և ի կերպարանս և ի կարգս»:

Եղնիկ Կողբացի

«Իսկ եթէ էր երբէք հիւզն անզարդ և անարդ և անկերպարան, և զարդարեաց զնա Աստուած... յորժամ զնա ի զարդ և ի յարդ և ի կերպարանս ամէր»:

Բարսեղ Կեսարացու նմանությունամբ՝ Եղնիկ Կողբացին էլ է քրննադատաբար վկայակոչում նյութը արարչին զուգակից համարողներին և մերժում նրանց թեզը:

Ինչպես նկատել ենք, Կեսարացին հստակ պատկերացում ունի շրջապատող բնության բուսա-կենդանական աշխարհի ամենաբարդ կազմության ու հասարակական կյանքի համար ունեցած օգտակարություն մասին: Իրականում Կեսարացու նույն վկայությունների հիմքի վրա է, որ Եղնիկ Կողբացին տարրորոշում է վնասակար կարծված խոտաբույսերի բուժիչ հատկությունները անքնության վերացման կամ հոգեկան խանդարումների բուժման գործում:

Բարսեղ Կեսարացի

«Եւ Նոյնք, որք վնասակարք կարծին, երբէք երբէք և մեղ ի պլտտ գտանին.

Եղնիկ Կողբացի

«Նոյնպէս և ի բանչարս է ինչ՝ որ առանձին սատակիչ է, և խառնելու

5 Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկացոյ ճառք վասն Վեցօրեայ արարչութեան», Վենետիկ, 1830, էջ 25:

6 «Եղնիկայ վարդապետի Կողբացոյ եղծ աղանդոց», Թիֆլիզ, 1914, էջ 18:

զի մանրագորաւ իրպում անգամ բժիշկը քուն ածնն աշնոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յաշաց»։ (էջ 89)

ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի։ Զմանրագորն եթէ որ լոկ ուտիցէ՝ սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց»։ (էջ 47)

Եզնիկ Կողբացին ծանոթ է երկնային զանազան լուսատուների ջերմապարունակութեանն ու վերջինով պայմանավորված ջրագոյացման, գոլորշիացման բնական երևութիւններին Կեսարացու տված բացատրութեաններին և օգտվում է «Վեցօրեայից»։ Նա գրեթէ բառացի ընդօրինակում է երկնային մարմինների միջոցով եղանակի սպասվող փոփոխութեանը գուշակելու Բարսեղ Կեսարացու բացատրութեանները։ Օրինակ՝

Բարսեղ Կեսարացի

«...և տէր մեր յայտնեաց մեզ յասիւն, թէ յորժամ տեսանիցէք զի դաչ ամպ յարևմտից, և ասէք՝ թէ անձրև լինի, և կարմրացեալ, ասէք՝ թէ անձրև լինէլինի. և յորժամ հարաւ շնչիցէ, ասէք՝ լոց է, և լինի. և յորժամ հարաւ շրնեթէ խորշակ ընթանայ, և լինի այնպէս»։ (էջ 114—115)

Եզնիկ Կողբացի

«Որպէս և Տէր մեր ասէ. յորժամ տեսանիցէք ընդ առաւօտս զերկինս կարմրացեալ, ասէք՝ թէ անձրև լինէլինի. և յորժամ հարաւ շրնեթէ խորշակ մեծ լինելոց է, և լինի»։ (էջ 129)

Չարի և բարու փոխադասական խնդիրը զբաղեցրել է նաև Եզնիկ Կողբացուն։ Վերջինիս մոտ նույնպէս մերժվում է շարիքի աստվածատուր լինելու հնարավորութեանը և զրա հիմնական պատճառը փնտրվում է մարդկային փոխհարաբերութեանների ուղորտում, որը, ըստ էութեան, Բարսեղ Կեսարացու ելակետն է։

Բարսեղ Կեսարացի

«...և ոչ որպէս նորայն ասեն՝ թե կենդանի է շարն ընութեամբ։ Եւ մեր մի՛ կարծեսցուք՝ եթէ արտարոյ կամաց մեղոց իցեն շարիքն, և մի՛ վրիպեսցուք՝ եթէ յառաջագոյն լեալ իցէ։ Քանզի իւրաքանչիւր ոք ի մէնջ զիտէ, թէ շարութիւն իւրոց կամացն է»։ (էջ 32)

Եզնիկ Կողբացի

«Եւ յայսմ ամենայնէ յայտ է՝ եթէ ոչ է ընութեամբ շար, այլ կամօր. և ոչ շար և շարշարիչ արարեալ է զնա Աստուծոյ»։ (էջ 128)

Պժվար չէ նկատել, որ բերված հատվածներում հիմնականում նույն միտքն է արտահայտված. մասնակի տարբերութեանը սուսն արտահայտման եղանակի, շարագրման բնութիւթի, շարահյուսական

նախընտրած միջոցի մեջ է: Ինչպես միշտ, ավելի սեղմ ու կուռ է Եզնիկի ասելիքը, զերծ՝ այսպես կոչված, անհարկի նկարագրությունններից, բացատրականությունից: Նույն բանը հավասարապես նկատելի է նաև «Եղծ աղանդոցի» բոլոր այն հատվածներում, որոնք ինչ-որ շարիով հիշեցնում են «Վեցօրեան»: Կեսարացուց վկայակոչված՝ «և մեք մի՛ կարծեսցուք՝ եթէ արտաքոյ կամաց մերոց իցեն շարիքն» միտքը Եզնիկի մոտ արտահայտվել է պարզապես՝ «այլ կամօք» բառերով՝ ի լրացումն նախորդ մտքի:

Այսպիսով, «Վեցօրեայի» և «Եղծ աղանդոցի» համեմատությունամբ բացահայտվում են բազմաթիվ նոր ընդհանուր հատվածներ (վկայակոչեցինք ընդամենը մի քանի օրինակ), որոնք տեքստաբանական-աղբյուրագիտական առումով հատուկ քննության նյութ կարող են դառնալ առհասարակ: Համեմատությունից միաժամանակ պարզվում է նշված գրական հուշարձանների ընդհանրության բնույթը. մի դեպքում, ինչպես ցույց է տալիս առանձին հատվածների համադրումը, խոսքը բացահայտ ընդհանրության կամ, ավելի ճիշտ, գրեթե բառական նույնության մասին է, իսկ երկրորդ (ավելի հաճախադեպ) պարագայում արդեն գործ ունենք «Վեցօրեայում» սպառիչ քննության ենթարկված առանձին խնդիրների վերահարցադրման ու կեսարացու որոշ հետևությունների Կողբացու շարագրման հետ: Նման դեպքերում, անշուշտ, գրականն այն է, որ Կողբացին սոսկ ընդօրինակող չէ: Այսպես, օրինակ, եթե Բարսեղ Կեսարացու մոտ խոսքը առանձին բուսատեսականների բուժիչ հատկությունների կամ վնասի մասին է, նա դրանց դուրահետ թվարկում է նորերը, որոնք առանձին դեպքերում նույնիսկ «Վեցօրեայում» չկան⁸:

Երկու դեպքում էլ անհերքելի է «Վեցօրեայի» թողած ազդեցությունը մեր մատենագրության ամենաարժեքավոր գործերից մեկի՝ «Եղծ աղանդոցի» վրա⁹:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Վեցօրեայ» երկատիություն հետքերը հայ մատենագրության մեջ միայն V դարով չեն սահմանափակվում, այլ դրանք այս կամ այն շարիով առկա են նաև հետագա դարերի մեր առանձին մատենագիրների տիեզերագիտա-

⁸ «Վեցօրեայ», էջ 39—90, հմմտ. «Եղծ աղանդոց», էջ 66—69:

⁹ «Վեցօրեայից» բաղված առավել ուշագրավ մի հատված վկայակոչել ենք նախորդ դիտում՝ թարգմանության ժամանակի ճշտման առիթով, նմանօրինակ մեկ այլ հատված՝ «Վեցօրեայի» և Շիրակացու որոշ գործերի ընդհանրության բնույթը քննելիս:

կան-բնախոսական աշխատությունների վրա: Այս իմաստով առան-
ձին քննությունն նյութ կարող է դառնալ «Վեցօրեայի» հայերեն
թարգմանության և VII դարի նշանավոր տիեզերագետ-մատենագիր
Անանիա Շիրակացու որոշ գործերի ընդհանրությունը:

Շիրակացին, ինչպես հայտնի է, հունական միջավայրում է
ստացել իր հիմնական ուսումնառությունը և հետագայում էլ չի
թաքցրել հիացմունքը իր ուսուցչի բանիմացության և առհասարակ
հունաց մատենագրության մասին խոսելիս: Նա տարբեր առիթնե-
րով անվանապես հիշատակում է բյուզանդական նշանավոր մատե-
նագիրներ Բարսեղ Կեսարացուն և Գրիգոր Նազիանզացուն: Միան-
գամայն որոշակի է ու պատճառաբանված նրա համոզմունքը. «Ես
հաւանիմ որով յոյնք պարծին. երանելեացն ասեմ Բարսղի, Գրիգո-
րի Անձիանձու, դիտեմ նոսա սուրբս, ճշմարիտս, հոգևտորս եւ հե-
տևողս առաքելոցն»¹⁰: Գրիգոր Նազիանզացու մատենագրական
ժառանգությունից Շիրակացուն աղբյուր են հանդիսացել հիմնա-
կանում նրա ճառերը, որոնցից հատվածաբար օգտվելիս հեղինակը
հիշվում է «երանելի Աստուածաբանն Գրիգոր յիշէ» ընդհանուր ար-
տահայտությամբ¹¹: Իսկ Բարսեղ Կեսարացու գրական վաստակից
առավելապես «Վեցօրեայ» երկասիրության հայերեն թարգմանու-
թյունն է աղբյուր եղել Շիրակացու տիեզերագիտական աշխատու-
թյուններից մեծ մասի համար, որոնցում Բարսեղը վկայակոչվում է
ընդհանուր տեղիների ծավալով, բնույթով ու անհրաժեշտությամբ
պայմանավորված տարբեր եղանակներով:

Շիրակացին միայն մեկ անգամ է հայտնում սկզբնաղբյուրի
խորագիրը, մնացած դեպքերում համապատասխան ձևակերպմամբ
հիշվում է հեղինակի անունը: Միակերպ չեն Բարսեղ Կեսարացուն
իբրև աղբյուր հիշատակելու Շիրակացու նախընտրած եղանակները:
Այսպես, օրինակ, մի դեպքում նա պարզապես հայտնում է՝ «երա-
նելին Բասիլիոս ի Վեցօրեայ դրին իւրում ասէ», «գարձեալ ասէ
նոյն ինքն Բասիլիոս»¹²: Այլ դեպքերում, բնության այս կամ այն
երևույթի բացատրության ընդօրինակումից հետո միայն Շիրակա-
ցին հայտնում է, որ ասվածը իր խոսքը չէ, այլ Բարսեղինը. «կըշ-

10 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու ֆատենագրությունը, Երևան, 1944, էջ 286—287.

11 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 2, 8 և այլն: (Այսուհետև սույն հրատարակությունից հատված համագրելիս նշվելու է միայն էջը, տողատակ հղելիս՝ Շիրակացի):

12 Շիրակացի, էջ 8:

տամբեցից ո՛չ իմ բանիւ՝ այլ սրբոյն Բարսեղի», «շատ բաւական լիցին մինչև ցայս վայր: Զայս՝ Բասիլիոս»¹³: Համեմատությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ «Վեցօրեայից» քաղված հատվածների առիթով Շիրակացին հարկ չի համարում նշել ո՛չ հեղինակ, ո՛չ էլ խորագիր: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ Կեսարացու բաղմաթիվ բացատրություններ վերապատմվում են Շիրակացու տիեզերագիտական հետազոտություններում՝ դարձյալ առանց աղբյուրի հիշատակման:

Կեսարացու և Շիրակացու ընդհանրության խնդիրը, բնականաբար, արձանագրել են նաև հետագա ուսումնասիրողները: «Վեցօրեայի» Առաջաբանում հրատարակիչը հարկ է համարել նկատել «Շիրակունին և այլք ի հնոցն բազում ինչ ի ճառից աստի գրեթէ նովին իսկ բառիւքն օրինակեն»:

Նոր հայկազգյան բառարանագիրները այս կամ այն բառաբացատրության առիթով «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությունից օրինակներ վկայակոչելիս, մասնավորապես նշված մատենագիրների ընդհանուր հատվածների դեպքում, բառարանի ընձեռած հնարավորության սահմաններում, երբեմն համեմատման և դանակով հղում են Շիրակացուն: Հասկանալի է, բառարանագիրների նպատակից դուրս է եղել բնագրերի համեմատումը, ուստի և շատ ընդհանուր բառական կիրառություններ վկայում են առանց Շիրակացու գործերի հիշատակման:

Հայագիտության մեջ առաջին անգամ Հ. Թորոսյանն է փորձել տեքստաբանական համադրմամբ բացահայտել նշված երկու մատենագիրների աղբյուրագիտական կապը: Նա «մեկ երկու օրինակով» ցույց է տվել, որ Շիրակացու տիեզերագիտական սրոշ գործերի շմիջնորդավորված աղբյուրը «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունն է և, որ կարևորն է, նույն քննությամբ Թորոսյանը բացահայտել է Կեսարացու և Շիրակացու ընդհանուր հատվածների երկուստեք սրբագրման խիստ անհրաժեշտությունը¹⁴: Հետագայում Թորոսյանն այլևս չի անդրադարձել սույն խնդրին, բայց տարիներ

¹³ Նույն տեղում, էջ 24, 29:

¹⁴ Տե՛ս Յ. Թորոսյան, Անանիա Շիրակացին և Արարատ թերթին մէկ շաբաթը («Բաղմավէտ», 1896, էջ 214—221): Ի դեպ, Հ. Թորոսյանը Բարսեղի, Շիրակացու և Եղիշիկի ընդհանրությունը առաջին անգամ նկատել է 1889 թվականին, տողատակի ծանոթագրությամբ («Բաղմավէտ», 1889, էջ 202, ծան. 1, էջ 317, ծան. 2):

անց, «Վեցօրեայի» հայերեն թարգմանութեան առիթով, հետևյալ կերպ է ավարտի բերել իր նախորդ միտքը. «Արդեն յայտնի է, թէ Անանիա Շիրակացի իր «Յաղագս երկնից» գրքին մէջ ամբողջ էջերով բառ առ բառ օրինակներ է Վեցօրեայ ճառերուն հայ թարգմանութենէն (Գ, Դ և բոլոր Զ ճառը),—ինչպես նաև մեր բոլոր այն մատենագիրները՝ որոնք «Ծննդոց» գրքին մեկնութիւնը գրած են, իրենց միակ և գլխաւոր աղբիւր ունեցեր են Ս. Բարսղի Վեցօրէից հայ թարգմանութիւնը»¹⁵:

Բանասիրութեանը հայտնի այս ընդհանուր տեղեկութուններից ելնելով՝ Կեսարացու «Վեցօրեայի» և Շիրակացու որոշ գործերի աղբյուրագիտական կապը այնուհետև ակնարկել են հայագետներ Գ. Տեր-Մկրտչյանը, Մ. Աբեղյանը, Ա. Աբրահամյանը¹⁶ և այլք:

Ուսումնասիրութեանը ցույց է տալիս, որ նշված մատենագիրների ընդհանրութեան ուղղութեամբ կատարվածը փաստորեն սահմանափակվել է հայագետ թորոսյանի երկու-երեք հատված-համադրութեամբ: Խնդրիս կարևորութեանը ընդունվել է տոհմագրական, բայց մասնավոր քննութեամբ, որքան մեղ հայտնի է, առ այսօր ոչ ոք չի զբաղվել: Դա թերևս արդյունք է այն բանի, որ նման պարագայում անհրաժեշտաբար պետք էր զբաղվել թե՛ Կեսարացու և թե՛ Շիրակացու մատենագրական վաստակի բազմաթիւ ձեռագրական ընդօրինակութեանների համադիր քննութեամբ, որը, ինչ խոսք, համատեղ ու տեղական աշխատանք կպահանջեր: Այժմ սակայն, երբ ձեռագրերի համեմատութեամբ հրատարակվել են Շիրակացու տիեզերագիտական աշխատութեանները և Մաշտոցի անվան Մատենադարանում կան «Վեցօրեայի» ավելի քան տասնչորս հին ու նոր ընդօրինակութեաններ, ապա, թվում է, կարելի է անդրադառնալ այդ հարցին, որը հայագիտութեան համար էական նշանակութեան ունի: Նախ՝ նշված մատենագիրների տիեզերագիտական-բնապատմական բաղադրութեաններում կան երկուստեք անհասկանալի, սրբագրութեան կարոտ բառ-արտահայտութեաններ, որոնք առաջացել են հիմնականում ընդօրինակման ճանապարհով և վերընթացում են աղբյուրագիտական-բնագրագիտական համապատասխան միջոցներով:

15 Չ. Թորոսյան, Մ. Բարսեղ Կեսարացի..., էջ 422:

16 Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, էջ 34, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 423—425, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 169, Շիրակացի, էջ XXIII:

«Վեցօրեան», ինչպես ընդունված է հայագիտության մեջ և հաստատված նոր կովաններով, հայերենի է թարգմանվել V դարի առաջին կեսին, արարողական առաջին անհրաժեշտության գրքերից անմիջապես հետո: Արդ՝ հայ թարգմանական մատենագրության հնագույն ու տարածված այդ հուշարձանի հայերեն խմբագրությունը երբեմն սրբագրելի է ոչ միայն հայերեն ձեռագրերի, հունարեն բնագրի ու թարգմանությունների իրողություններով, այլ նաև նույնի՝ հայ մատենագիրների որոշ գործերի վրա թողած հետքերով: Այդ իմաստով, անշուշտ, քննելի են Շիրակացու տիեզերագիտական հետազոտությունները, որոնց ամենահիմնական սկզբնաղբյուրներից մեկը «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունն է: Բանասիրական հետազոտությունն այս ուղղությամբ կարևոր է այն առումով, որ Շիրակացու մեկ աղբյուրի համադրական քննությունից բացի, նույն սկզբնաղբյուրով այլևս հնարավոր է դառնում միաժամանակ սրբագրել Շիրակացու բազմաթիվ հատվածներ, որոնք հաճախ թյուր հետևությունների հնարավորություններ են ընձեռել ուսումնասիրողներին և նույնիսկ թարգմանվել այլ լեզուների: Ի վերջո, երկու մատենագիրների աղբյուրագիտական առնչակցության հիմնավոր բացահայտմամբ դուրս եկավ այլևս վերտնայվի «Վեցօրեայ» հատվածներով Շիրակացու աշխարհայացքը որոշելու ավանդական դարձած սովորույթը:

Այս ուղղությամբ մեր ունեցած բազմաթիվ օրինակներից վկայակոչենք միայն մեկը: Շիրակացու կյանքն ու գիտական վաստակը լուսաբանող ուսումնասիրությունում իբրև նրա բացատրություն է ներկայացված հետևյալը. «Երբ նավարկության ժամանակ խմելու ջուրը պակասում է նավավարները վերցնում են ծովի աղի և դառը ջուրը, լցնում են կաթնաչի մեջ և հուցնում՝ կաթնաչի կալիարիչի վրա դնելով սպունդ. սպունդն ընդունում է գոլորշին և ջուրը թորում ամեն տեսակ աղտեղությունից»¹⁷: Համեմատությունը ցույց է տալիս, որ վկայակոչվածը ասում է ոչ թե Շիրակացին, այլ Բարսեղ Կեսարացին. «Եւ ունիմ օրինակ ի նաւավարաց, որ թէ պակասից ջուր ի ծովու, ատնուն զջուրս ծովուն զաղին և զդանն, արկանեն ի

17 Ռ. Աբրահամյան, Բ. Ռումանյան, Ռ. Հակոբյան, Ս. Մեկիֆ-Քալաշյան, Անանիա Շիրակացի, Երևան, 1958, էջ 65, հմմտ. նաև էջ 63 (արեղակի խավարման մասին), էջ 68 (եղանակների առաջացման մասին), էջ 70 (լուսնի մասին). էջ 71 (եղանակի փոխվելը՝ պայմանավորված լուսնի փոփոխությամբ): Նույն իրողությունն է առկա նաև այլուր. տես Շիրակացի, էջ XXI, XXII և այլն, 2. Մանանդյան, Խորհրդացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 56—57:

սանս կամ ի կատսայս, եռացուցանեն: Եւ դնեն սպունկս մեծամեծս խուփն կատսայիցն, և ի խոնաութենէ՝ զոր առնուն սպունկքն ի գոլոշոյն, ջուրս քաղցունս ժողովեն»¹⁸:

Արդ, առանձին ուսումնասիրութեան թողնելով Կեսարացու և Շիրակացու առնչակցութունն ընդհանրապէս, ստորև անդրադառնանք սոսկ այն հատվածների համադրմանը, որոնք ինչ-որ շարքով սրբագրելի են: Ընդ որում՝ այդօրինակ վկայակոչումներն էլ իրենց հերթին կարելի է խմբավորել առանձին կետերում՝ սրբամանավորված առաջարկվող սրբագրութեան բնույթով:

Շիրակացու տիեզերագիտական հետազոտութուններում կան «Վեցօրեայ» ճառերից քաղված բազմաթիվ բացատրութուններ, որոնք գրիչների ձեռքով աղավաղվել են համախառն հասկանալիութեան աստիճանի և, բնականաբար, ամենից առաջ սրբագրելի են «Վեցօրեայ» ճառերով: Առաջարկվող սրբագրութունների այս խումբում վերականգնվող բառաձևի ստուգութունը հնարավորութեան սահմաններում աշխատել ենք հավաստել նախ հունարեն բնագրով, ապա նաև եղած հին թարգմանութուններով: Բայց որքանով «Վեցօրեայի» հայերեն թարգմանութունը ոչ միայն բառական չէ, այլև երբեմն անհամադրելի բնագրին, ուստի և նման դեպքերում հայերեն թարգմանութեան համար որոշողը ձեռագրական նյութն է՝ սրբամանավորված քննվող հատվածի բացահայտ հասկանալիութեամբ: Արդ, վկայակոչենք մի քանի հատվածներ, ուր «Վեցօրեայով» պետք է սրբագրել Շիրակացուն: Այսպես, օրինակ՝

Բարսեղ Կեսարացի

«Թէպէտ և ասն ոմանք զծովէն՝ որ անուանեալ կոչի Հիրկանիայ, և զնորուն ընկերէն՝ որ անուանեալ կոչի Կասպիտ, թէ զառեալք և մեկնեալք են սահմանեք. ալ որք փոյթ յանձին կալան ի գրի առնել զերկիր ամենայն...»: (էջ 74—75)

Անանիա Շիրակացի

«Թէպէտ և ասն ոմանք զծովէն, որ անուանեալ կոչի Հիրկանիա, և զնորուն ընկերն. որ անուանեալ կոչի Կասպիտ, թէ զառեալ մեկնեալ են սահմանօք ի բուն ծովէն: Ալլ որ փոյթ անձին կալան ի գիր առնուլ զաշխարհ ամենայն...»: (էջ 17)

Շիրակացու բերված բառացի ընդօրինակումը երբ համեմատում ենք «Վեցօրեայի» հունարեն բնագրի, հայերեն տպագրի, ինչպես նաև գրչագրերի հետ, պարզվում է, որ նրանում անճշտութուններ կան: Գրչագրի սխալ ընթերցման հետևանք է Շիրակացու վկայած զնորուն ընկերն արտահայտութունը, որը սրբագրելի է զնորուն ընկերէն ձևով: Նման միջամտութունը թելադրվում է ոչ միայն

¹⁸ «Վեցօրեայ», էջ 80:

«Վեցօրեայով», այլ նաև այն պատճառով, որ քերականորեն էլ այդպես է պահանջվում: Հատվածի սկզբնամասի «զծովէն» կիրառության հետ բացառական հոլովածն է պահանջում նաև ընկերն բառը (զընկերէն), որովհետև ներկա դեպքում ոմանց խոսքը Հյուրկանիա ծովի և նրա ընկերոջ մասին է՝ «Թէպէտ և ասեն ոմանք զծովէն... Հիւրկանիայ և զնորուն ընկերէն», այն տարբերությամբ միայն, որ «զ»-ն դրվել է նախորդ բառի վրա¹⁹: «Վեցօրեայի» տասնչորս զբրչագրերից միայն № 8352-ում է պահպանվել «զնորուն ընկերն» ընթերցվածք, որը և հուշում է զբրչագրիս ընդհանրությունը Շիրակացու հրատարակության հիմք ձեռագրի հետ:

Շիրակացու քննվող հատվածում սխալ ընթերցման հետևանք է նաև ընդգծված «Ասպիայ» բառը: «Վեցօրեայի» զբրչագիր ընդօրինակություններում ունենք բառիս «Կաղբիայ», «Կասպիս», «Կասպիայ», «Կաղբիս» և նմանօրինակ տարընթերցումներ, բայց ոչ «Ասպիայ»: Վերջին բառածնն ունեն Շիրակացու հրատարակության բոլոր զբրչագրերը: Հենց այդ պարագան էլ, հավանաբար, հրատարակչին հնարավորություն չի տվել կասկածել անվանումիս վրա և այլ ընթերցում փնտրել: Մինչդեռ «Վեցօրեայի» ձեռագրերի նմանությամբ «Ասպիայ» ընթերցումը բացակայում է հունարենում և թարգմանություններում: Բնագրում կարգում ենք. „*αὐτὸ τὸν Κασπίαν*“²⁰, հին վրացերեն թարգմանություններում համապատասխանաբար ունենք՝ ա) „*და კასპიანსა:ა*“, բ) „*და კასპიისა:ა*“²¹ և, բնականաբար, Շիրակացուն սրբագրելով Բարսեղով՝ նշված ծովանունը պետք է կարդալ Կասպից²²: Համադրվող հատվածների

¹⁹ Նշված հոլովածը, ինչպես հայտնի է, գրաբարում պատմական բացառական անվանումն ունի և թարգմանվում է «մասին» կապի հավելմամբ (զծովէն = ծովի մասին, զընկերէն = ընկերոջ մասին), որը և պահանջվում է ներկա դեպքում:

²⁰ Basile de Césarée, Homélie sur l'Hexaéméron (*Սյուսհեակ՝* „Hexaéméron“), Paris, 1968, էջ 260, հմտ. Migne, Patrologia Graeca, t. 29 (*սյուսհեակ՝* PG), Paris, 1857, էջ 88:

²¹ „*უძველესი რედაქციები ბასილი კესარიელის „ეჭუსთა დღეთაჲსა“ (სյუს-სეակ) „ეჭუსთა დღეთაჲსა“), გამოსცა ილია აბულაძემ, თბ., 1964, էջ 58, ბასილი დიდო, ეჭუსთა დღეთა: (სյუსհეակ՝ ბასილი დიდო), გამოსცა მ. კახაძემ, თბ., 1947, էջ 45:*

²² Քորոսյանը գտնում է, որ Կասպիա ձեր «բարտ յունին պէտք է լինի Կասպիա. հաւանական է թէ ձեռագրին ա զիրը կարգացուեր է ա»: Մինչդեռ նույն անվան իրեն հայտնի Սասիա ձեր ուղղում է «Կասպիա կամ Կասպիա» (Հ. Քորոսյան, Անանիա Շիրակացին..., էջ 218, տողատակ 1, 3): «Վեցօրեայի» ուսերհն

շարունակության մեջ նկատելի է հետևյալը. Կեսարացու նմանությամբ Շիրակացու հատվածի ընդգծված որ...կալան արտահայտությունը պետք է վերընթերցել որք...կալան, որը իմաստով թելադրվելուց բացի լրացուցիչ ստուգման կարող է ենթարկվել «Վեցօրեայի» բնագրով, հայերեն ձեռագրերի մեծ մասով ու մեզ ծանոթ թարգմանություններով: Միայն չորս գրչագիր (ՁՁ 559Ծ, 5353, 1657, 1243) պահպանել են Շիրակացու հրատարակության ընթերցումը, մնացած ձեռագրերը համընթաց են հայերեն թարգմանության հետ: Բնագրում «որք»-ի փոխարեն ունենք «շօն Ետօրդշաշօն»²³ (պատմողք), ի հավաստումն այն մտքի, որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանության «որք» դերանվանական հոգնակի կիրառությունը միանգամայն բնագրային է, իսկ Շիրակացու մոտ նույնի վերջընթերք «ք»-ի անկմամբ այն վերածվել է շաղկապի՝ դրանով իսկ իմաստափոխել միտքը և նույնությամբ թարգմանվել ուսուներենի²⁴:

Ինչ վերաբերում է «գերկիր» և «զաշխարհ» նույնիմաստ կիրառություններին, ապա նկատելու է, որ ձեռագրերում կան երկու ընթերցումներն էլ, իսկ բնագրում առկա է «շօնդաշօն»²⁵, որը համարժեք է նշված ձևերին և հավասարապես կիրառելի:

Թարգմանությունում ունենք «Каспийское», „Беседы на Шестоднев“, М., 1891, էջ 59 (այսուհետև՝ „Шестоднев“), իսկ Շիրակացու «Տիեզերագիտությունում» նույնը թարգմանված է „называемом Каспием“, А. Ширакаци, Космография, перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна, Ереван, 1962, էջ 48 (այսուհետև՝ „Космография“):

Բնագրից անկախ և առհասարակ առանց ձեռագրական որևէ կովանի Հ. Մանանդանն այն ընթերցում է „Каспий“ (նշվ. աշխ., էջ 57): Աղբյուրագետ Գ. Նահապետյանը նույնը ուղղում է Կասպից (Գ. Նահապետյան, Ուղղագրութիւնք աղբյուրի մատենադրաց, Վենետիկ, 1907, էջ 204): Նա միաժամանակ առաջադրում է (հարցականով) Հիւրկանիայ ժողովուրդը Վրկանայ կարգալ: Այս կետում մեր ձեռքին նույնպես հայերեն կովան չկա, բայց նույնի հունարենը՝ Ἑξάημερον („Hexaëmeron“, էջ 260, հմմտ. PG, էջ 88) մտածել է տալիս. արդյո՞ր հունարենի հոգ-հագաղը հայերենում բառամաս չի դարձել սխիտ այնպես, ինչպես, ասենք, „ὁ Ἑξάημερον“-ը („Hexaëmeron“, էջ 218, հմմտ. PG, էջ 65) այլ առիթով դարձել է հատուկ («Վեցօրեայ», էջ 55), մանաւանդ երբ Հիւրկանիայ անվան սկզբնամասի հի-ն օտարում ենք, մնում է պահանջվող Վրկանիայ բնագրային անվանումը: Վրացերեն թարգմանություններից մեկում ունենք „იბრჯინისა“ („Եթիլետա ճըլցոսալես“, էջ 58), մյուսում՝ „იბრჯინისა“ (ձեռագր. ճըլցո, էջ 45):

²³ „Hexaëmeron“, էջ 260, հմմտ. PG, էջ 88:

²⁴ «Те, кто взялись описывать...» («Космография», էջ 49):

²⁵ „Hexaëmeron“, էջ 260, հմմտ. PG, էջ 88:

Բարեղ Կեսարացի

Անանիա Շիրակացի

«...և այսու անձառ ժամով, անհամար և յանկարծածին ըսպէիւր սահմանեցին զծնունդս այնոցիկ՝ որ ծնեալն լինին:

Արդ տեղեկացում՝ եթէ կարիցե՞ն կալ ի վերայ արագախաղաց վայրկեանաց ժամուց իւրեանց: Մնանի մանուկ գժուարին երկամբբ մօրն՝ ու ծնանին, և կայ մանկաբարձն զեզերեալ, տեսանել՝ թէ արու իցէ մանուկն, եթէ էգ. կատարեալ կայ լսել զաղապակ լալոյ մանկանն, զի այն է նշանակ կենաց նորա»: (Էջ 118)

Համադրվող սույն հատվածները, ինչպես տեսնում ենք, բառ առ բառ նույնանում են: Ընդգծված տարբերություններն առանց երկբայելու կարելի է ասել, որ առաջացել են հետագայում՝ ձեռագրերի բազմացման ճանապարհով, որովհետև, ինչպես ցույց է տալիս «Վեցօրեայի» հունարեն բնագիրը, նշված բառ-արտահայտությունները Կեսարացու թարգմանչինն են՝ հետագայում անցած Շիրակացուն:

«Վեցօրեայի» մեզ ծանոթ բոլոր գրչագրերը, բացառությամբ № 5819 անավարտ ձեռագրի, անխտիր ունեն «անձառ ժամուր», և դա միանգամայն հասկանալի է. արտահայտությունս դիմաց Շիրակացու հատվածի «անձամուրս»-ը իմաստագուրի հնչյունախումբ է՝ ստաջացած երբեմնի «անձառ ժամուր» հասկանալի արտահայտության հենքի վրա: Եթե անգամ բացակայեին ձեռագրերի ավայրները, ապա, դատելով բովանդակությունից, կարելի էր պնդել, որ Կեսարացու «անձառ ժամուր» արտահայտությունը հասկանալի է ու պատճառաբանված նույն իր հատվածով: Ավելին՝ «Վեցօրեային» հատուկ հոմանիչ բառ-արտահայտությունների համատեղ կիրառման իրողությունը առկա է նաև այստեղ: Նույն նախադասությամբ «անձառ ժամուրը» բացատրված է «անհամար... ըսպէիւր», մի բան, որ բազմիցս ավանդված է հայ մատենագրությամբ և ընդունված նոր հայկադյան բառարանագիրների կողմից²⁶: Շիրակացու «Յաղագս երկնային զարդուց» աշխատասիրությունյան ընդօրինակությունները «անձամուրս» ընթերցման որևէ տարբերակ չեն պահպանել, ուստի և նշված անխմաստ հնչյունախումբը առանց միջամտու-

թյան ու անհրաժեշտ բացատրության փոխանցվել է հրատարակության: Շիրակացու քննվող հատվածի ուսանելն թարգմանությունում կարողում ենք. „И по этим бесчисленным и мгновенным отрезкам времени они определяют судьбы тех, кто рождается“²⁷: Ինչպես տեսնում ենք, թարգմանությունը հիմնականում նույնանում է բնագրին, բացառությամբ մեղ հետաքրքրող հրաշյունախմբի, որը, ասվեց, անիմաստ է, բնականաբար՝ անթարգմանելի, ուստի և առանց համապատասխան բացատրության օտարվել է: Մինչդեռ պարզվում է, որ Շիրակացու աղբյուր «Վեցօրեայի» հայերեն թարգմանության տպագրում և ձեռագրերում պահպանվել է նույնի ճիշտ ձևը: Բնականաբար՝ Շիրակացուն սրբագրելով «Վեցօրեայով», նշված անճանաչումը պետք է փոխարինել անճառ ժամով արտահայտությամբ ու Շիրակացու բնագրում (ինչպես նաև ուսանելն թարգմանությունում) կարդալ. «Եւ այսու անճառ ժամով, անհամար և յանկարծածին յոպէիւր...»:

Մոտավոր նմանությամբ նույնն է կատարվել նաև երկրորդ ընդգծված բառական տարբերության հետ. գրչական-արտասանական ինչ-ինչ դործոնների պայմանավորումով «Վեցօրեայի» թարգմանչի «տեղեկացուք»-ը Շիրակացու ձեռագրերում դարձել է «աղէ տեսցուք» և փոխանցվել հրատարակություն, այն տարբերությամբ, որ այս դեպքում գործ ունենք ոչ թե աղավաղման, այլ մի փոքր այլիմաստ կիրառության հետ: Համադրությունից պարզվում է, որ «Վեցօրեայ» յոթ գրչագիր ունեն Շիրակացուն հիշեցնող տարբերությունը²⁸, մնացածները, բացառությամբ № 5819 ձեռագրի, նույնանում են տպագրի հետ: Սակայն Կեսարացու բացատրությունը միանգամայն որոշակի է՝ խոսքը տեղյակ լինելու (տեղեկանալու), իմանալու, հասկանալու, ստուգելու մասին է և ոչ թե Շիրակացու հատվածի՝ ապա տեսնելու²⁹, որը նույնությամբ թարգմանվել է նաև ուսանելն թարգմանությունում՝ „давайте посмотрим“³⁰: Սակայն «Վեցօրեայի» ձեռագրերի մի մասը, տպագրի և, որ կարևորն է, հատվածի համար անհրաժեշտ բառական ընտրությունը հիմք են տալիս պնդելու, որ «Վեցօրեայով» սրբագրելով Շիրակացու քննվող հատվածը՝ վերջի-

²⁷ „Космография“, էջ 57.

²⁸ Ձև. №: 8352, էջ 164բ, 5353, էջ 200ա, 5595 (աղե տեսցուք), 3457, էջ 108ա (աղե տեսցուք), 1243, էջ 411ա, 1939, էջ 57բ, 7028, էջ 116բ:

²⁹ ՆՃԲ, Ա, 38, հմմտ. ՆՃԲ, Բ, 864.

³⁰ „Космография“, էջ 57.

նիս աղէ տեսցուի արտահայտութիւնը պետք է փոխարինել տելեկասցուի նախնական ընթերցմամբ³¹:

Ինքնատիպ և ոչ հաճախագեպ իրողութիւն է համագրվող հատվածների նախավերջին՝ կատարեալ—կտրել տարբերութիւնը, «Վեցօրեայի» յոթ ձեռագիր պահպանել են տպագրից տարբերվող բուրոսովին անկախական տարբերութեցումներ, որոնցից մեկը՝ կտրեալ³², դերբայական կիրառութեամբ հիշեցնում է Շիրակացու կտրել ընթերցումը, իսկ մյուսը՝ կտրելեալ³³, բնավ չի անշլում և ոչ մեկին, Մյուս գրչագրերը նույնանում են տպագրին: Կեսարացու խոսքըն այն մասին է, որ նորածնի լացի, աղմուկի կատարեալ, անթերի լինելը կենաց նշան է: Մինչդեռ Շիրակացու հատվածում նշված բառի իմաստավորված խաթարման պատճառով նախադասութիւնը մնում է անհասկանալի: Հավանաբար այդ իսկ պատճառով բառիս իսկութեանը հրատարակիչը նայել է երկբայանքով, բայց այլ ընթերցում չունենալով՝ այն մուծել է բնագիր: Շիրակացու այդ հատվածը ունեւրենի է թարգմանվել առանց նշված բառի. «бабка начинает рассматривать—мужского или женского пола родившийся, а потом дожидается крика младенца, ибо он является признаком жизни...»³⁴:

Արդ՝ ի՞նչ է կատարվել Շիրակացու բնագրի հետ. հայտնի է, որ միջնադարյան գրիչները հիմնականում աշխատանքի, տեղի, ժամանակի խնայման նպատակով, որոշակի սկզբունքով ու հատուկ նշանով հաճախ բառերը համառոտագրում էին: Ներկա դեպքում Շիրակացու կտրել ընթերցումը կատարեալ բառի պարզապես չբացված ձևն է: Այսպիսով, ասվածը հնարավորութիւն է տալիս «Վեցօրեայի» հիմքի վրա Շիրակացու հատվածի կտրել բառը վերընթերցել կատարեալ, որով և վերջին բնագիրը դառնում է լիարժէք. իսկ նույնի վրա կատարված թարգմանութիւնը՝ ամբողջական³⁵:

31 Մոտավորապես նույն բացատրութիւնը շերտնելու նպատակով նկատենք, որ Շիրակացու մօր նորա կապակցութիւնը ըստ Կեսարացու պետք է վերընթերցել՝ մօրն՝ որ:

32 Ձեռ. № 5353, էջ 200ա, հմմտ. ձեռ. № 3457, էջ 108ա:

33 Ձեռ. № 620, էջ 261բ:

34 «Космография», էջ 57:

35 Ինչ վերաբերում է վերջին՝ զաղաղակ լալոյ կապակցութեան գիմաց զբարբառ ընթերցմանը, այս գրանք ներկա դեպքում նույնիմաստ են և հավասարապես կիրառելի: Ձեռագրերից երեքում (№№ 5595, 5353, էջ 200ա, 8352, էջ 164բ) ունենք զբարբառ, մնացածները նույնանում են տպագրին: Շիրակացու գրչագրերում ընթերցումս միակն է:

Բարսեղ Կեսարացի

«...և կամ յո՞րչափ սակաւօրին տեսանիցես զմեծութիւն նաւու, որ բարձեալ բերիցէ աղյսաղխեալ օղբեճեալ դբազմաշահ վաճառսն, հանդերձ սպիտակ առազաստին» որոյ խորշ առեալ՝ զոգ զորձեալ տանի զնա յարշաւանի...» (էջ 129)

Անանիա Շիրակացի

«և կամ ո՞րչափ սակաւիկ տեսանիցես զմեծութիւն նաւու, որ բարձրաբերձ իցէ աղյսաղխեալ ուղեճեալ դբազմաշահն վաճառս՝ հանդերձ սպիտակ առազաստան, որոյ խորշ առեալ զոգեալ տանիցի զնան յարշաւանի»։ (էջ 56)

Սույն հատվածների տարբերությունները մի դեպքում մասնակի են՝ միևնույն բառի այս կամ այն նրբերանգին, քերականական այլաձևությունն են վերաբերում, առանց իմաստային այլ նշանակություն (սակաւօրին—սակաւիկ, տանի—տանիցի), մյուս դեպքում գործ ունենք երկու տարբերիմաստ բառերի հետ՝ կիրառված նույն տեղում, միևնույն նշանակությամբ։

Կեսարացու նկարագրությունից պարզորոշ հասկացվում է, որ խոսքը բարձրված, բեռնավորված հեղինակաց նավի մասին է, որը, ինչպես հուշում է հատվածի շվկայված ավարտը, հեղինակաց անձամեծ մաստ փոքր է երևում (աղալնու շափ)։ «Վեցօրեայի» ձեռագրերը, բացառությամբ № 5819 անավարտ գրչագրի, նույնպես համընթաց են տպագրի հետ։ Քննվող հատվածը, ճիշտ է, բառական թարգմանությունն է, բայց, այդուհանդերձ, անհրաժեշտ մասով համադրելի է բնագրին։ Ահա այն. «πρωτη δε του κατεφθου του του μαριστου ουρανου δεσποτου δεσποτου οπου καυτης καυτουσε η αληθεια»³⁶; Այստեղ, ինչպես տեսնում ենք, բառացի հարցվում է. ինչպիսի՞ն կթվար քեզ բեռնատար նավերից մեկը՝ սպիտակ առազաստով. կապուտակ ծովում լողալիս։ Մենցած նկարագրական մասերը թարգմանչի մտածողության արդյունք են, «Վեցօրեայի» վրացերեն խմբագրություններից մեկում կարդում ենք՝ «დიდ — დიდები და ნავები მავალეები», մյուսում՝ «ბევრეულთა სიმძიმეთა მტვრთველი ნავი»³⁷։ Այս թարգմանություններից առաջինում թարգմանչի խոսքը ընթացող. մեծամեծ նավերի մասին է, որը խնդրո առարկա կետում նույնական չէ բնագրի հետ, մինչդեռ երկրորդում՝ հունարենի նմանությամբ, բաղում բեռներով բեռնավորված նավի օրինակն է վկայված³⁸, որը և ճիշտ է, բնագրային ու հասկանալի։

³⁶ „Hexaëmeron“, էջ 374, հմտ. PG, էջ 140.

³⁷ „ვეჭესთა დღეთაჲსა“, էջ 91, ბიბლი დიდი, էջ 76.

³⁸ Ռուսերեն թարգմանությունում ունենք՝ „один из грузных кораблей...“ („Шестоднев“, էջ 97)։

Շիրակացու ձևագրերի եզակի ընթերցումը հրատարակություն է մտել առանց միջամտության: Սակայն, եթե անգամ շունենայինք հատվածս ստուգման ենթարկելու թվարկված աղբյուրները, այդուհանդերձ, քննվող նախադասության վրա պետք էր կասկածել թեկուզ այն պատճառով, որ այն ստորոգված չէ, և միտքը թերավարտ է մնում: Կեսարացու խոսքը, ասվեց, բարձված, բեռնավորված նավի բերելիքի մասին է, որը Շիրակացու մասում վերածվել է նավի արտաքին նկարագրի (բարձրաբերձ իցէ): Ավելին, ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ վերջինս ներկա ձևով էլ հիշեցնում է «Վեցօրեայի» նշված անխաթար ընթերցումը. բարձեալ բառի հետ համապատասխան սղմամբ ընթերցվել է հաջորդ բառի «բեր»-ը՝ «ձ»-ի հավելումով և երկրորդ բառի երկրորդ կեսը դարձել է իմաստակիր անկախ միավոր՝ «իցէ»: Քննվող արտահայտությանը հաջորդող «աղխաղխեալ օղերձեալ» հոմանիշ կիրառությունները ևս փաստարկում են հօգուտ առաջարկվող սրբագրման: Աղխաղխեալ (աղխաղխեալ) բառիմաստը՝ կուտել, բեռնավորել, լնուլ³⁹ և այլն, միանգամայն տեղին է օգտագործված: Կապակցության մյուս բառը՝ օղերձեալ (ուղերձեալ) ևս ընծա, նվեր նշանակությամբ, կարելի է ասել, թարգմանչի կողմից հարմար է րնտրված և ծանոջում է նպատակին: Բարբախտաբար, այս վերջին դերբայական հարադրությունը պահպանվել է նաև Շիրակացու հատվածում և անխաթիր վերաբերում է բեռնատար նավին, որը բարձեալ բերիցէ և ոչ թե բարձրաբերձ իցէ:

Վերջին դիտողությունը վերաբերում է նաև զոգ գործեալ արտահայտության փոխարեն գոգեալ կիրառությանը: Առաջինը «Վեցօրեայի» թարգմանչի ստեղծածն է, երկրորդը՝ նույն հիմքի վրա կատարված ընդօրինակման արդյունք: Որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությանը զոգ (ծոց ծովու, երկրի, առագաստի) բառիմաստի հետ անցյալ դերբայի կիրառությունը հատուկ է, երևում է նաև հետևյալից. «զոգ գործեալ», «զոգս առեալ» և նման արտահայտություններ կան «Վեցօրեայ» 2 և է: Ճատերում, մինչդեռ նույն նշանակությամբ Շիրակացու «զոգեալը» ձևագրերում և այլուր ելուսի է:

39 ՆՃԲ, Ա, 41: Օղերձել բառը ընծա, նվեր նշանակություններից բացի ունի աղերսել, ողոհել, համոզել, հանել, ձգել, բերել իմաստները (ՆՃԲ, Բ, 544, հմմտ. ՀԲ. Աճառեան, Հալեբէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, Վենետիկ, 1915, էջ 163):

Բարոնդ Կեսարացի

«Եւ յայնմ ծովու՝ որ անուանեալն կոչի Երեկորեանց. նմանութիւն սրուակաց է՝ ասեն՝ ի միջի, իբրև եթէ ձկնն և ծծնն, կալ մնալ ի պակասութեան՝ ընդ պակասելն լուսնի, և իբրև եթէ բլիսկելով բղիսն վերանալ ելանել փորելով զշուրսն՝ զի ընդ ընու լուսնին յորդեացին»։ (էջ 133)

Անանիա Շիրակացի

«Եւ դարձեալ՝ յայնմ ծովու, որ անուանեալ կոչի Երեկորեայ, նմանութեան որակաց է ասեն ի միջին, իբր եթէ ձկնն և ծծնն, խոնարհին և պակասին ընդ պակասելն լուսնի. և յորդաբուխ վերանան ընդ ընուսն լուսնին»։ (էջ 43—44)

Մեզ ծանոթ սրբագրութիւններում Գ. Նահապետյանը անգրագարձել է Կեսարացու սույն հատվածին և առաջադրել է երկու ուղղում՝ երեկորեանաց և փորելով-ի փոխարեն փողելով։ Երկրորդ սրբագրման առիթով ուսումնասիրողը հարկ է համարել բացատրել. «բղխողն և վերացողն ոչ թէ կփորէ, այլ վեր կցաթքէ»⁴⁰։ «Վեցօրեայ» բնագիրը և այլ աղբյուրները այս առումով լրացնելիք չունեն այնքանով, որքանով առաջադրվող ուղղումը թարգմանական (ոչ բնագրային) բառի է վերաբերում։ Իսկ ինչ վերաբերում է ձեռագրերին, ապա դրանք նույնանում են տպագրին։ Այս ամենով հանդերձ՝ փողելով սրբագրումը ընդունելի է և սլատճառաբանված բառիս վեր ցատկելի նշանակությամբ (ունի նաև փողահարել, քարոզել իմաստները)։

Ինչ վերաբերում է երեկորեանաց ուղղումին, ապա այն բնագրային հիմք ունի, ուստի ստուգելի է նաև հունարենից կատարված այլ թարգմանություններով, այդ թվում նաև հայերեն ձեռագրերով։ Գրչագրերում սլահայանված ձևերը էսպես չեն տարբերվում ունեցածից. միայն մեկ ձեռագիր՝ № 620 (էջ 267ա) ունի երեկորեանց ընթերցումը, մյուսները, բացառությամբ № 5819 ձեռագրի, սլահայանել են՝ երեկորեայց, երեկորեայ։ Այս, ինչպես նաև տպագիր անվանաձևերը նույնիմաստ են երեկո, երեկոյան ժամանակ նշանակությամբ։ Որոշակի է քննվող բառի սլաշտոնը նույն նախադասության մեջ. այն մի ծովանուն է նշանակում, որի կառուցվածքին, ֆիզիկական հատկություններին, ինչպես կտեսնենք, ծանոթ է նաև «Վեցօրեայի» թարգմանիչը։ Արդ՝ նշված ծովանունը ինչպե՞ս է կապվում բնագրին և ո՞րն է թարգմանչի միջամտությունը։ Կեսարացու վերոբերյալ հատվածը չի նույնանում բնագրի հետ, բայց թարգմանչի հնարածը չէ, այլ՝ հունարենի հայերեն վերապատմու-

⁴⁰ Գ. Նահապետյան. նշվ. աշխ., էջ 224, հմտ. «Պատկեր», 1893, № 1, էջ 19՝ երեկորեայց ծով։

մը նկատելի հեռացումներով: Սկզբնամասի մեկ հետաքրքրող երկու բառական տարբերություններից առաջինը ստուգվում է բնագրով, երկրորդը, ասվեց, ոչ: Ահա ամբողջի բնագիրը. «Π ἄε ἐσπερία ἠάλασσα τὰς ἀμπεῖσιν ἠφίσταται, ἦν μὲν ἠπονοστήσει, πάλιν δὲ ἐπιχθίζουσα, ὡσπερ ἀναπνοαὶς τῆς σεληνῆς ἠφελχομένη πρὸς τὸ ὀπίσω, καὶ πάλιν τὰς ἀπ' αὐτῆς ἐμπενοαίς, εἰς τὸ οὐρανὸν μετρου προσωπομένη»⁴¹:

Ինչպես տեսնում ենք, հայերեն թարգմանության երեկուրեանց ծովի դիմաց հունարենում ունենք արևմտյան ծով (= ἐσπερία ἠάλασσα): Վրացերեն երկու թարգմանություններն էլ այս հարցում նույնանում են բնագրին՝ «ხოლო ზღუთა იგი დასავდლო-სდა»⁴² — արևմտյան ծով նշանակությամբ: Ինչ է կատարվել. «Վեցօրեան» հայերենի թարգմանողը (գուցե նաև ձևագրի ընդօրինակողը) բնագրի արևմտյան ծովանուն հասկացությունը ընկալել է արևմուտ, արևի մայրամուտ նշանակությամբ, որը օրվա ժամանակահատվածների իմաստով երեկույի (իրականաժամ) սկիզբն է: Եթե ընդունելի է սույն բացատրությունը, ապա վերջին (երեկո) բառի անվան փոխարինված ձևեր են՝ երեկուրեանց, երեկուրեայց և նման կիրառությունները, որոնք բնագրի արևմտյան (ἐσπερία) բառի հայացի վերարտադրությունն են:

Այլ առիթով նկատել ենք, որ Շիրակացու տղբյուրը «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունն է: Սույն փաստը այդ իմաստով եզակի կարևորություն ունի: Շիրակացու հատվածում, փաստորեն, պահպանվել է «Վեցօրեայի» թարգմանչի մտածողության անփոփոխ պատճենումը: Իսկ դա միաժամանակ նշանակում է, որ «Վեցօրեայի» հայերեն բնագրի քննվող մասը արդի վիճակն ուներ տակավին VII դարում: Ընդ որում՝ Շիրակացու ձևադրերից մեկում, դատելով զրբությունից՝ նշված բառը հատուկ անուն է ընկալվել, մյուսներում՝ ոչ:

⁴¹ „Hexaëmeter“, էջ 382, հմտ. ՔԳ, էջ 144:

⁴² „გზუბთა დდგთაჲსა“, էջ 93, հմտ. ձանցլո լոլո, էջ 78, աստիճանում՝ „Α αναδομου πορε...“ („Πεστοδνεσ“, էջ 99): «Վեցօրեայի» հայերեն թարգմանության բնույթի, ոչ միօրինակության, միևնույն իրողությունները թարգմանչի կողմից տարբեր կերպ ընկալելու տուժումով ուշադրով է հետևյալը. բնագրի համարնութ մեկ այլ աշխարհագրական հասկացության (արևմտյան երկրներ) արևմուտը (ἐσπερία) բառը հայերենի է փոխանցվել նույնությամբ. «...զետր խտոնին ընդ միմեանս և լնագեիխոս»: Հիմք զբշգրում հղել է յիստորիստ («Վեցօրեայ», էջ 56, հմտ. Հ. Թորոսյան, Ս. Բարսեղ Կեսարացի..., էջ 413):

Համազրվող հատվածների երկրորդ ընդգծված բառը առաջին դեպքում հասկանալի է, Շիրակացու մասում՝ աղավաղված և պետք է ուղղել ըստ աղբյուրի: Վերևում նշված ծովը «Վեցօրեայի» թարգմանության մեջ նմանեցվում է սրվակի («նմանութիւն սրուակաց է...»), իսկ Շիրակացու հատվածում՝ որակաց («նմանութեան որակաց է...»): Ասվեց, հունարենը և վերջինից կատարված թարգմանությունները չեն օգնում սույն բառատարբերություններից մեկի ընտրմանը: Սակայն «Վեցօրեայի» հայերեն ձեռագրերում, բացառությամբ երկու գրչազրի, խնդիրը միանգամայն որոշակի է հօգուտ սրուակաց ընթերցման: № 5819 ձեռագրում հատվածս բացակայում է, իսկ № 1939-ում ունենք որուակաց: Շիրակացու հրատարակիչը այլ ընթերցում չունենալով՝ բռն մուծել է բնագիր, Բառական այս տարբերությունը հավանաբար առաջացել է ս > ո շփոթի և «ու»-ի սղման հետևանքով:

Տեքստի հասկանալիությամբ և ձեռագրական տվյալներով պայմանավորված որակացի- ի փոխարեն սրուակաց ուղղումը միաժամանակ կարևոր է հատվածի շարունակությունը ճիշտ հասկանալու համար: Նույնի ուսերեն թարգմանությունում կարգում ենք. «А еще в том море, которое зовется Вечерним (Западным) и которое соответственно своим особенностям называется Средним, говорят, будто бы воды поднимаются и испаряются, спускаясь и убывая, по мере убывания Луны...»⁴³. Նախ նկատենք, որ թարգմանիչները «Վեցօրեայի» բնագրից ամենեկին անկախ Շիրակացու նեկլոգեայ ծովանունը հասկանում են Արևմտյան. դա նախադասության իմաստը ճիշտ փոխանցելուց բացի ինչ-որ տեղ կարելի է ուղղում դիտել բնագրին: Սակայն նույնը չի կարելի ասել շարունակության մասին, որտեղ որակաց-ը հավանաբար անհասկանալիության պատճառով անտեսվել է, իսկ առընթեր «ասեն ի միջին» արտահայտությունը, որ վերաբերում է նշված ծովի միջնամասի սրվակի նմանվելուն, դարձել է նույնի երկրորդ անվանում («называется Средним»):

Շիրակացու աղբյուրը, ինչպես տեսնում ենք, «Վեցօրեան» է, որը, ասվեց, բնագրի անհարազատ վերաշարադրանքն է: Սակայն ոչ բնագրում և ո՛չ էլ այլուր որևէ ակնարկ անգամ չկա հարակից անվանման մասին և չէր էլ կարող լինել: Համազրվող հատվածներում առկա «նմանութիւն» բառը նույնպես հուշում է, որ նշված ծո-

⁴³ «Космография», էջ 74:

վը միջնամասում սրվակի է նման: Այսպիսով, թվում է, բավարար հիմքեր կան պնդելու, որ որակաց խաթարված ընթերցումը պետք է ուղղել սրուակաց, դրանով իսկ առընթեր համեմատությունը հասկանալ իր ուղղակի նշանակությամբ և նոր միայն թարգմանել այլ լեզվի:

Բարսեղ Կեսարացի

«որ ընդ լուսով լուսինն ննջիցեն, առաւել խոնաւութիւն լիցի ի գլուխս նոցա. և զմիս դալար չորժամ ի լոյս լուսնի որ կախիցէ, վաղվաղակի հոտի և ապականի. և որոց ի ջուրս իցէ բնակորին. պակասութիւն և լիութիւն գրտանի ի նոսա. և ի սիրտս ծովուց...»: (Լջ 133)

Անանիա Շիրակացի

«գի որբ լուսնակի ննջեն, խոնաւութիւն լինի ի գլուխս նոցա, և զմիս դալար եթէ ի լուսնակի կախեսցես, վաղվաղակի հոտի և ապականի եւ ի ջրալինս պակասութիւն և լիութիւն գտանի. սապէս և ի սիրտս ծառոց»: (Լջ 43)

Ընդհանուր բովանդակությամբ նույնական այս հատվածներում նկատելի են երկու բնույթի տարբերություններ. առաջին պայքում խոսքը այն ոչ միօրինակություններին է վերաբերում, որոնք հիմնականում նույն բառ-արտահայտություններն են՝ քերականական մասնակի տարբերություններով և ավելի շուտ խոսքի երանդ են պայմանավորում, քան, ասենք, բովանդակում այլ իմաստ: (Այսպես, օրինակ՝ որ (ճիշտը՝ որբ) ընդ փխ. գի որբ, լուսնին փխ. լուսնակի, ննջիցեն փխ. ննջեն, լիցի փխ. լինի, չորժամ փխ. եթէ, կախիցէ փխ. կախեսցես և այլն):

Երկրորդ պարագայում գործ ունենք ընդմիջարկության, բառային աղավաղման և նման իրողության հետ: Մեր դիտողությունն այս մասին է և ներկա դեպքում համադրվող նյութի ավարտին է վերաբերում: Կեսարացու «և որոց ի ջուրս իցէ բնակութիւն» միտքը, որ, ինչպես կտեսնենք, բնագրային է և վերաբերում է մերձծովափնյա բնակիչներին, Շիրակացու հատվածում փոխարինվել է «ի ջրալինս» երկիմաստ արտահայտությամբ և միացվել ավարտվող մտքին: Ավելին, Կեսարացու բացատրությամբ պարզորոշ հասկացվում է, որ լուսնի փոփոխությունը պայմանավորված տեղատվություն-մակրն-թացությունը ջրի «պակասութիւն և լիութիւն գտանի» մերթ ծովափնյա բնակիչների մոտ, մերթ էլ «ի սիրտս ծովուց»: Վերջին արտահայտության զուգահեռ Շիրակացու տեքստում «ի սիրտս ծառոց» է: Դատելով նյութի բովանդակությունից՝ վերջին բնագրված «ծառոց» բառը պետք է փոխարինել Կեսարացու հատվածի «ծովուց» ընթերցմամբ:

րից բացի հավաստվում է նաև նույնի ուսերենն թարգմանությամբ. «(От нее) исходит недостаток и обилие воды (в вещах водянистых), а также в сердцеvine деревьях»⁴⁸: Սույնի «от нее»-ն ավելացվել է ասվածք նախորդ մտքի շարունակություն դիտելու համար. իսկ «ի ջրայինս»-ը, որ, ասվեց, մերձծովափնյա բնակիչներին ի նկատի ունի, թարգմանվել պարզապես ջուր և որպեսզի վերջինս պարունակություն հասկացվի, ավելացվել է՝ ջրալի առարկաներում: Վերջնամասի «ի սիրտ ծառոց»-ն էլ թարգմանվել է «сердцевине деревьях»⁴⁹:

Կեսարացին, Շիրավի, ունի մեկ այլ բացատրություն, որ խոսվում է բուսական և կենդանական աշխարհի այլևայլ փոփոխությունների մասին՝ կապված դարձյալ լուսնի հետ: «Վեցօրեայի» ազդեցությամբ նույնը ունի նաև Շիրակացին: Բայց քննվող հասվածներում համաբնույթի երևույթի բացատրությունն ունենք ծովերի (օվկիանոսների) համար: Լուսնի փոփոխությունը պայմանավորված եղանակի փոխվելը ծովերի ջրերի խորքից («ի սիրտս ծովուց») մակընթացություն-տեղատվություն է առաջացնում. այդ ամենի ականատեսները մերձակա բնակիչներն են: Այս է «Վեցօրեայի» հասկերեն թարգմանության քննվող մասի իմաստը, որը պետք է լինի նույնի հետքերում ու թարգմանություններում:

Բարսեղ Կեսարացի

«Եւ թէ՛ դարձեալ, որպէս և ասենն, շարեա՛ք և բարեաց ոչ ի մէնջ է յօժարովի՞նս և ոչ առ ի մէնջ լինի սկիզբն նոցա, ալ ծննդարաշխ ծննդոցացն, ահամա՛ջ կամովք մերովք. թէ՛ այդպէս իցէ, ապա աւելորդ են և օրէնքն, որ դնեն սահման և պատուիրան զոր ինչ արժան է գործել և զոր ինչ ոչ: Աւելորդ են դարձեալ և դատաւորք, որ պատուեն զբարեգործան և առնեն պատիժ շարադրութաց արդար դատաստանովք. քանզի ըստ բաշխիչն ծննդոցացն՝ ժպրհովիին և շարովիին գողոցն ոչ յիւրեանց կամաց է»: (էջ 123)

Անանիա Շիրակացի

«Եւ թէ՛ դարձեալ ասն և թէ՛ բարեաց և շարեաց ո՛չ ի մէնջ իցէ յօժարովին, և ո՛չ առ ի մէնջ լինիցի սկիզբն նոցա. ալլ ի ծննդարաշխն ծննդոցացն ահամայ և ո՛չ կամօք մերովք. թէ՛ այդպէս իցէ, ապա աւելորդ են օրէնքն, որ դնեն սահման և պատուիրան, զոր ինչ արժան է գործել և զոր ինչ ո՛չ: Աւելորդ են դարձեալ և դատաւորք, որ պատուեն զբարեգործրն, և առնեն զպատիժս շարադրութացն արդար դատաստանօք, քանզի ըստ բաշխից ծննդոցն ժպրհովին և շարովին գողոցն իւրեանց կամացն...»: (էջ 28)

⁴⁸ «Космография», էջ 74:

⁴⁹ Թարգմանիչ-հետազոտողներն այս ասֆիվ նկատել են, որ Շիրակացին բուսական աշխարհի վրա լուսնափոփոխության ազդեցությունն է բացատրում («Космография», էջ 124—125, ծան. 39):

Համեմատության նստատեղով վկայված այս հատվածներում երկու անկախ ուղղում կարելի է առաջադրել, ընդ որում՝ առաջինը վերաբերում է սույն տպագիր տեքստերին հավասարապես, բայց պատճառաբանվում է «Վեցօրեայ» աղբյուրներով, երկրորդը՝ Շիրակացուց բերված հատվածի ավարտին, որը պահանջվող ստորագմամբ պետք է վերընթերցել ըստ «Վեցօրեայի»:

Առաջին դիտողությունը վերաբերում է «օրէնքն» բառին, որը երկու դեպքում էլ միևնույն նշանակությունն ունի: Թվում է, թե այս դեպքում սկզբնաղբյուրների միջամտությունն անհարկի կլինի, մանավանդ որ քննվող բառը աղավաղված չէ, և ոչ էլ միտքը՝ խաթարված: Ավելին, «Վեցօրեայի» հայերեն ընդօրինակությունները նույնպես փաստարկում են հօդուտ տպագրի. միայն №№ 8352, 5819 ձևագրերում խնդրո առարկա բառը բացակայում է, մնացածներում պահպանվել է այն զրշագրերին հատուկ զանազան ուղղագրական ձևերով: Սակայն, ինչպես այլ դեպքերում, այս անգամ էլ «Վեցօրեայ» այս կամ այն հատվածի հայերեն թարգմանություն հավաստիությունը (եթե թարգմանություն է և ոչ թե ընդմիջարկություն) փաստվում է հունարենով, վերջինս էլ լրացուցիչ ստուգման ենթարկվում վրացերեն թարգմանություններով: Ահա ամբողջի բնագիրը, բացառությամբ վերջընթեր նախադասության, որը, ինչպես կտեսնենք, թարգմանչի վերապատմածն է բնագրի մոտավոր հիմքի վրա. «Ἐπειτα εἶ καὶ τῶν κατὰ καίαν καὶ ἀρετῆν ἐνεργημάτων οὗκ ἐκ τοῦ εὖ ἤμιν εἰσὶν αἱ ἀγαθὰ, ἀλλ' ἐκ τῆς γένεσθεως αἱ ἀνάγκαι, περιττοὶ μὲν οἱ νόμοι εἶναι, τὰ πρᾶκτα ἡμῶν καὶ τὰ πονηρὰ ἡγορησόντες, περιττοὶ δὲ καὶ οἱ δικασταὶ, ἀρετῆν τιμῶντες, καὶ πονηρίαν κοινῶντες»⁵⁰:

Վերոբերյալ հայերենը, կարելի է ասել, բավական հարադատ է սույն բնագրին, թեև կան հավելված բառարտահայտություններ (որպէս և ասենն, ալիամայ կամոպը), որոնք պայմանավորված են թարգմանության ընդհանուր բնույթով: Հայերեն թարգմանության (և Շիրակացու) մեզ հետարբերող օրէնքն բառի դիմաց բնագրում ունենք օրենսդիրը — «οἱ νομοθέται — законодатели»⁵¹ անձ նշանակությամբ հողնակի ձևը: Նույն իրողությունը, ընդ որում՝ հունարենի բաստակաղմական միևնույն սկզբունքով (ὁ νόμος — սովորույթ, օրենք, ὁ νομοθέτης — օրենսդիր) առկա է նաև վրացերենում՝

⁵⁰ «Hexaëmeron», էջ 362, հմմտ. P.G. էջ 133:

⁵¹ «Илестоднев», էջ 92:

„Մջլուման“ (Մջլուլի — օրենք)⁵², „Մջլուլի - մըծեղևնի“⁵³: «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը, թվում է, այլևս հնարավորություն է տալիս կասկածել քննվող բառի նախնական (թարգմանական) լինելու հարցում, մասնավանդ որ Կեսարացու ընդհանուր բացատրությունից էլ տրամաբանորեն հետևում է, թե օրենքը ինքնատեղծ չէ, այլ մարդու հնարածը, սահմանածը և որ այս կամ այն օրենքը բացասելով նույն օրենսդիրը կամա իր մյուս սահմանածով: Նշանակում է՝ Կեսարացու բացատրության մեջ ժրիտումը, «աւելորդ են» բնորոշումը օրենսդիրնեխի պետք է վերաբերի, քանզի տրամաբանորեն (և առարկայորեն) պատճառը օրենսդիրն է, օրենքը՝ հետևանքը: Հետևանքը մխտելու համար պատճառը պետք է բացասվի:

Նշված օրենքն բառը օրենսդիրն վերինթերցելու օգտին կարող է փաստարկել նաև հետևյալը. «Վեցօրեայի» հատվածաբար օգտված Նզնիկ Կողբացին որոշ վերապահություն-միջամտությամբ օգտագործել է նաև քննվող միտքը: «Շղծ աղանդոցի» վրա «Վեցօրեայի» հետքերը քննելիս նկատեցինք, որ չարիքի ոչ բնատուր լինելու Կողբացու բացատրության հիմքը (գրեթե բառացի) Կեսարացին է: Այլ առիթով նույն հարցին անդրադառնալիս Կողբացին, համոզված ենք, օգտվում է «Վեցօրեայի» վերոբերյալ հատվածից: Նա գրում է. «Ասեմք. եթէ բնութեամբ իցեն, ընդէ՞ր օրէնք ի թագաւորաց ղնիցին, և սաստք ի իշխանաց, և պատիժք ի դատատուրաց. ո՞չ ապաքէն վասն կարճելոյ շարեացն: Եւս, թէ բնութեամբ իցեն չարիքն՝ ոչ պարտի օրենսդիրն օրէնս ղնել, և ոչ իշխանն պատիժս ի վերայ շարագործին ածել»⁵⁴: Եթե սույնը Կեսարացու ազդեցություն չի կարող դիտվել, ապա դո՞նե ընդգծված արտահայտությունը վերևում առաջադրվող վերինթերցումը հաստատող այլադբյուր օրինակ է: Այսպիսով, ասվածը հնարավորություն է տալիս պնդելու, որ «Վեցօրեայի» բնագրի, վրացերեն թարգմանությունների, ինչպես նաև Կողբացու փաստի հիմքի վրա նշված օրենքն բառը պետք է փոխարինել օրենսդիրն ընթերցումով և համապատասխանաբար մուծել Շիրակացու հայերեն հրատարակություն և ուսուցանել թարգմանություն⁵⁵:

52 „ეჭუსთა დღეთაჲსა“. էջ 87:

53 Զսևողո ճոճո, էջ 72:

54 «Շղծ աղանդոց», էջ 42:

55 «Космография», էջ 61: (Այստեղ արտահայտությունն թարգմանված է

Այժմ անդրադառնանք նույն հատվածում առաջարկվող մյուս սրբագրության քննությանը, որտեղ Շիրակացու «ըստ բախտից ծննդոցն» արտահայտությունը ըստ Կեսարացու պետք է կարգալ «ըստ բաշխիչն ծննդոցացն»: Ակնհայտ է քննվող բառերի իմաստային տարբերությունը, որոնք, սակայն կիրառված են միևնույն նշանակությամբ: Համադրվող հատվածների վերջին միտքը, ասվեց հայ թարգմանչի բացատրությունն է՝ ի լրումն նախորդի: Բնականաբար, հունարենն ու վրացերենն թարգմանությունները նշված բառերից և ոչ մեկը չէին կարող ունենալ: Շիրակացու ձեռագրերը, դատելով հրատարակությունից, բառական ուրիշ տարբերակ չունեն: «Վեցօրեայի» գրչագրերն էլ իրենց հերթին պահպանել են միևնույն «բաշխիչն» բառը պարզապես հոգավոր, անհոգ և բայական ձևերով: Իսկ ի՞նչ է պահանջվում ըստ նյութի, բառական ընտրության ո՞ր դեպքն է գերադասելի: Նոր հայկազյան բառարանագիրները վկայում են նույն բառերի բոլորովին անկախ կիրառության այլ օրինակներ: Կեսարացու առարկությունը հետևյալն է՝ ըստ ծնունդների բաշխման՝ գողերի ժպրհությունը (հանդգնությունը) և շարությունը բնատուր չեն: Սակայն Շիրակացու մասում նույնը պետք է հասկանալ՝ ըստ ծնունդների բախտի, որը, կարելի է ասել, նույնիմաստ չէ և ընդհանուր բովանդակությանն անհարիր⁵⁵: Ուստի և Շիրակացուն Երբագրելով իր իսկ սկզբնաղբյուրով՝ նշված «ըստ բախտից ծննդոցն» արտահայտությունը ճիշտ կլինի կարդալ «ըստ բաշխիչն ծննդոցացն»:

Բարսեղ Կեսարացի

Ձիցէ՞ արդեւ տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ, յորում վարիցին

Անանիա Շիրակացի

«Կամ չիցէ՞ տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրաւանդակաց զդաշտ ընդարձակ և զմեծանիստ, յորում

што излншши были бы законы»): Առաջարկվող սրբագրությունը կարող է համոզիչ շեղվալ այն պատճառարանությամբ, թե «Վեցօրեայի» թարգմանիչը կարող էր օրենք բառը հասկանալ ու կիրառել օրենսդիր նշանակությամբ, այսինքն՝ անձնավորման եղանակով ասել թե օրենքներն ավելորդ են: Սակայն նման ենթադրությունն ընդունելի չէ, որովհետև բնագրում և այլուր, ասվեց, խնդիրը միանգամայն որոշակի է և նման հետևության հիմք չկա: Բացի այդ՝ անձնավորման միջոցը հատուկ չէ «Վեցօրեայի» հայերեն թարգմանությանն առաստարակ:

⁵⁶ Շիրակացու ուսերենն թարգմանությունում նույն միտքը ավելի թեական է. «ибо дерзость и порочность вора якобы (определяется) волею рока рожденья, а не преступной волей самого убийцы» („Космография“, էջ 61):

հարկիք եղանց ի բացալայրի ուրեմ. վարիցին հարկիք եղանց. զի՞արդ զի՞տո՞ղ արդեմ թուեսցին քեզ հանդերձ թուիցի քեզ հանդերձ զովողան իւրեզնող ողանան, որ վարիցեն զնոսա...»: Եսվ, որ վարէ զնոսա...»: (էջ 57)
(էջ 129)

Համեմատությունը ցույց է տալիս, որ այստեղ նույնպես Շիրակացու աղբյուրը նույն «Վեցօրեան» է: Ընդամենը երկու-երեք բառ-արտահայտություն կամ քերականական ձևի տարբերությունը (Շիրակացու մոտ բառ է օտարված) նյութի բովանդակությունը փաստորեն չի փոխում: Ավելին, ձևազրկի ընդօրինակման սխալով անգամ գրեթե նույնանում են սույն հատվածները: Երկու դեպքում էլ հարցադրումը հստակ է, բացատրությունը՝ հասկանալի. բացառությամբ Կեսարացու «հանդերձ եզնող ողանան» արտահայտության, որի առավել խաթարված տարբերակն է Շիրակացու «հանդերձ զովողան» կապակցությունը:

Գ. Նահապետյանը սույն հատվածի խաթարված մասը որոշ երկբայանքով (հավանաբար ձեռքի տակ այլ աղբյուր շունենալու պատճառով) վերընթերցում է. «վարիցեն... եզնող արօրան կամ հօտալան?»⁵⁷, Ուսումնասիրողը միաժամանակ բացատրում է. «աղառաղ բառը կարելի է երկու կերպ հասկնալ. 1. զի՞արդ թուեսցին քեզ (հարկիք եղանց) հանդերձ եզնող հոտալան. 2. զի՞արդ թուեսցին քեզ (հարկիք եղանց) հանդերձ եզնող արօրան?»⁵⁸: Հայագետն, անշուշտ, իրավացի է, երբ արձանագրում է ներկա հատվածի համար սրբագրական միջամտության անհրաժեշտությունը: Սակայն, ինչպես կտեսնենք, բառական առաջարկվող վերականգնումներինց և ոչ մեկի անհրաժեշտությունը շունենք այս պարագայում:

«Վեցօրեայի» քննվող արտահայտության «եզնող» բառը հասկանալի է և մատենագրությամբ սովանդված է «վարող գլուծս եզանց, հօտալ, Բշող»⁵⁹ նշանակությամբ: Սակայն անհասկանալի է ու չբացատրված հաջորդ ողանան հնչյունախումբը: Ի՞նչ է կատարվել: «Վեցօրեայի» ձևազրկի, բացառությամբ № 5819-ի, եզնող ողանան ընթերցման փոխարեն պահպանել են բառական միևնույն միավորի զրչական երեք տարբերակ՝ եզողան (ձև. № 5595, 1657, 5353), եզուլան (ձև. № 8352, 620) և ողողանան (ձև. №

57 Գ. Նահապետյան, նշվ. աշխ., էջ 222:

58 նույն տեղում, էջ 222—223:

59 նշբ, Ա, 647: Բառարանագիրները էզող ձևն են բացատրում, սերտառե՞ եզնող է: Հասկանալի է, որ հիմքը նույնն է՝ եզն կամ եզ:

1243, 3457, 1939, 7028): Մնացածները նույնանում են տպագրին: Ձեռագրերի առաջին խմբի ընթերցումը պարզորոշ ցույց է տալիս. որ նախապես ունեցել ենք եզողան, որը հետագայում նշված մատենագիրների ընդօրինակություններում դարձել է եզողան, ողողանան, եզնող ողանան, զովողան, զովաղան (վերջին երկուսը Շիրակացունն են): Նման ենթադրության համար հիմնավոր կովան կարող է դիտվել Մաշտոցի անվան Մատենադարանի № 1138 զրուչագրում՝ բնօրինակված (1347 թվական) «Վեցօրեայ» բառարանմեկնությունը, ուր, ի թիվս այլ բառ-հասկացությունների, ունենք նաև եզալոն անխաթար ձևը, որը բացատրված է եզնավարուն (էջ 376բ): Եզնող բառի մատնացուցված նշանակությունից դատելով՝ ձեռագրերի պահպանած եզողան (եզնողան) վերականգնումը խնդրո առարկա հատվածի համար (և քերականորեն) միանգամայն պատճառաբանված է մանավանդ հանդիսանալիս հարադրությունը:

Կա բառիս թարգմանական (նախնական) լինելու իրողությունը հավաստող նաև այլ կովան՝ վերոբերյալ հատվածի բնագրում առկա է. «Ἐπι ποταμοῦ ἀπο ἀρωρεῖα: μεγαλὴς πεδίον εἶδες ποτὸν τε καὶ ὄπισον, ἡλιχα μὲν αὖτὸν ὄψον κατεφάνη τῶν ἑσπέρη: παρῆλθο: ὁ δὲ οἱ ἀρε-τῆρες αὐτοί:»⁶⁰, Հարկրենը, ի տարբերություն այլ օրինակների, այս անգամ անհամեմատ հարադատ է բնագրին: Միակ նկատելի տարբերությունը «ի բացավայրի ուրեք» հավելումն է՝ այն էլ ոչ բոլոր ձեռագրերով ավանդված (չունի նաև Շիրակացին): Միևնույն հատվածում քանի որ շարունակաբար ունենք «հարկիք եզանց», «հանդերձ եզնող ողանան», և, բնականաբար բնագրային կապ պետք է լինի այս արտահայտությունների միջև: Առաջինը թարգմանությունն է հունարեն «ὄψον ὄψον κατεφάνη τῶν ἑσπέρη» հարցումի, ուստիքնում՝ «пары запряженных волов»⁶¹, վրացերենում՝ «უღლეული კარბთაჲ» (հարկիք կզանց), երկրորդը՝ «οἱ ἀρε-τῆρες αὐτοί:» (վարդիներն իրենք), ուստիքնում՝ «самы земледельцы», վրացերենում՝ «საკნველები და მკნველნი»⁶² և «მკნველნი იგი მათნი და მწათველნი»⁶³:

Մեզ հետաքրքրող «հանդերձ եզնող ողանան»-ի դիմաց բնագրում ունենք վարդիներ (οἱ ἀρε-τῆρες), որը փաստորեն նույնանում է եզնող բառի նոր հայկազյան բառարանագիրների բացատ-

⁶⁰ «Hexáméron», էջ 374, հմմտ. PG. էջ 140:

⁶¹ «Шестоднев», էջ 96:

⁶² «ეჭუსთა დღეთაჲსა», էջ 91:

⁶³ «ბასილი დიდი», էջ 76:

րության հետ: Ասվածից հետևում է, թե Կեսարացու և Շիրակացու վերոբերյալ զրվագներից ճիշտ կլինի համապատասխանաբար օտարել ողանան և զովողան աղավաղումները՝ զրանք փոխարինելով «Վեցօրեայ» բնագրով, հայերեն ձևադրերով (մասամբ նաև տպագրով), ինչպես նաև վրացերեն թարգմանություններով հավաստված չին հայերեն եզրնողան ընթերցմամբ, որը, ասվեց, նշանակում է եզրնեւ բշող, հոտաղ, եզնավար⁶⁴:

Բարսեղ Կեսարացի

«Ձի մեծամեծ իբք՝ որ ի բացուտերկն-
նատեսակ երեկն, մեծայաղթ տարերքն
նոցա իբրու սակաւիկ ինչ երեկն տես-
լեան ական. բանդի բայբայի սակա
տեսիլ ական ի տկար զօրութենէ լու-
տոյն՝ զոր ունի, և շտնի բաւական ձը-
քել հասուցանել զհայեցուածս...»
(Լջ 129)

Անանիա Շիրակացի

«Քանզի մեծամեծ ինչ իբք, որ ի
բացեայ ի հեռուտ տեսանէր, իբք
փորտնք երեկն. վասն զի բայբայի
սակաւ տեսիլն ականն ի տկար զօ-
րութենէ լուտոյն զոր ունի. բանդի
չիինի բաւական ի հեռածիզ վայրս
հասուցանել զհայեցուածս...» (Լջ 56)

Նույնական սույն հատվածների հիմնական տարբերությունը սկզբնամասում է: Նախ տառչինի մասին. «Վեցօրեայի» հրատարակությունը հիմք ձևադրի «ի բացուտ ականատեսակ» արտահայտությունը հրատարակչի մասնակի միջամտությամբ դարձել է «ի բացուտ նկնատեսակ»: Ինչպես կարողվի հետագա քննությամբ, հրատարակչի վերականգնումը ճիշտ է և ձևադրերով ավստիզված: Պարզապես միացյալ գրությունը առաջացած բառաբարդումը (Եթե վրիպակ չէ) անհարկի է և պետք է ներկայացվի անշատ գրությամբ: Ձևադրական ընթերցումները հետևյալն են. երեք զրչադեր⁶⁵ պահպանել են հրատարակչի վերականգնած ընթերցումը, մյուսներում ունենք ականատեսակ⁶⁶, ակն տեսի⁶⁷ և ականատեսակ⁶⁸: Նոր հայ-

64 Շիրակացու ոտներեն թարգմանությունում նշված հնչյունախումբը օտարված է «Не приходилось ли тебе обозреть с высоких гор обширную и пространную равнину? Какими (малыми) тебе представлялись пары запряженных волов? А какими казались сами зем.испашцы?» «(Космография», Լջ 85): Ընդգծվածը բնադրի վերջնիկ վաբե բառի թարգմանությունն է հոգնակի նշանակությամբ:

65 Ձև. № 5353, Լջ 204ր, № 8352, Լջ 180ր, № 1657, Լջ 80ր:

66 Ձև. № 5595, Լջ 179ր:

67 Ձև. № 3457, Լջ 117ր, № 7028, Լջ 128ա, № 1243, Լջ 418ա, № 1939, Լջ

62 ր: № 5819 զրչադրում հատվածս բացակայում է:

68 Ձև. № 620, Լջ 265ա, № 10258, Լջ 56ր, № 5686, Լջ 54ր:

կազման բառարանագիրններն իբրև ականատեսակ բառի բացատրության օրինակ վկայակոչել են Կեսարացու քննվող հատվածի առաջին մասը և այն ընկալել ականատես, ականակերպ նշանակությունամբ: Թերևս այլ օրինակ շունենալու պատճառով, բառարանագիրները նշվածը միաթամանակ դիտել են «բառ անստոյգ»⁶⁹: Սակայն իրենց իսկ վկայակոչած նախադասության նկնատեսակ բառը հրատարակության տողատակի և ձեռագրերի մի մասի ականատեսակ բառով փոխարինելը մտածել է տալիս, որ բառարանագիրները այն ամբարել են խաթարված կամ գոնե անհասկանալի և նշված օրինակին ընթերցել սրբագրված տեսքով, մանավանդ որ, նրանք այդ կերպ վարվում են նաև այլ առիթով:

Իրականում «Վեցօրեայի» հրատարակության նկնատեսակը ամենևին էլ աղավաղված չէ, այլ հայ դասական մատենագրության մբ բազմիցս ավանդված նկուն բառն է, տեսակ բառով բարդված: Իր հայտնի նշանակությունամբ այն համապատասխանում է քննվող նյութի բովանդակությանը⁷⁰: Բերված հատվածից պարզորոշ նկատվում է, որ խոսքը հետու տարածությունից առարկաների փոքր երևալու մասին է, քանզի, ինչպես բացատրում է Կեսարացին, անդեն աչքն ի վիճակի չէ ավելին տեսնելու: Այդ դեպքում հարց է առաջանում՝ ի՞նչ է կատարվել Շիրակացու հատվածի հետ: Համեմատությունը ցույց է տալիս, որ «ի բացուստ նկնատեսակ» կապակցությունից զի մաց Շիրակացու մասում ունենք «ի բացեայ ի հեռուստ տեսանէր»: Հասկանալի է, որ վերջինս, առսնց տեսանէր զիմավոր բայաձևի, համապատասխանում է սկզբնաղբյուրի ի բացուստ նշանակությանը (ի հեռաստանէ), այն տարբերությամբ, որ «ի բացեայ» և «ի հեռուստ» հոմանիշ կիրառությունամբ ավելի ընդգծվել, խտացվել է հեռավորության իմաստը: Այդ պարագայում ո՞րն է տեսանէր բայական ընթերցման աղբյուրը:

Կեսարացու և Շիրակացու մատենագրական առնչակցության բնույթից ելնելով՝ հակված ենք ընդունելու, որ նշված նկնատեսակ բառը առկալին միջնադարում չի ընկալվել իր նշանակությամբ, այլ

69 ՆՃԲ, Ա, 22:

70 Ունի կորացեայ, նուանեայ, նուաստ, ցած, շնչին նշանակությունները (ՆՃԲ, Բ, 430): Հր. Աճառյանը ձեռագրական իրողություններից ամենևին անկախ նկատել է, որ «Վեցօրեայի» հրատարակչը հիշատակարվելով՝ ականատեսակ բառը սրբագրելով նկնատեսակ: Ըստ նրա, «նկնատեսակ կնշանակէ «փոքր կրկցող» (հմմտ. նկնածև, նկնահասակ) և այս իմաստով ալ պէտք է անցունել բառարաններու մէջ՝ սր. մուտցուած է» (Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 161):

դիտվել է անհասկանալի, թերևս խաթարված բնթերցում և սրբագրվել է տեսանէջ: Եթե բնդունելի է ասվածը, ապա՝ ե՞րբ և ո՞ւմ ձեռքով է կատարվել այս միջամտությունը: Շիրակացու ձեռագրերը, դատելով հրատարակություններից, քննվող բառի այլ բնթերցում չեն պահպանել, իսկ դա հնարավորություն է տալիս մտածելու, որ նշված փոփոխությունը կարող էր առաջանալ Շիրակացու ժամանակաշրջանում, գրիչների, հնարավոր է նաև իր ձեռքով, որովհետև հատվածի այդ մասում հեղինակային միջամտությամբ սկզբնադրյուրից հեռանալու հետք է նկատվում, թեև դա, համոզված ենք, արդյունք է նկնատեսակ բառը իր նշանակությամբ շրմբոնելու:

«Վեցօրեայի» հայերեն թարգմանության բերված հատվածը հիմնականում ճիշտ է արտացոլում բնագիրը: Ահա այն. «Συναφείσθαι γὰρ πειθουχεν ἐν τοῖς μετέστοις διαστύμασι τὰ μετέλλη τῶν ὄρωμένων, τῆς ὄρωατιχῆς ὄρωαμεως ὡς ἐξικουμένων τῶν μετᾶς τῶν διαπερῶν»⁷¹: Հայերենում ևս տարածքով հեռու (ճաշտից) գտնվող տարկաները սովորական օւշքով տեսնելու (փձուշու), բնկալելու մասին է խոսքը:

Սակայն Շիրակացու հատվածի սկզբնամասի քննված միտքը մի փոքր այլ կերպ է բնկալվում: Գրա պատճառը, լվում է, բնգամիջարկված տեսանէջ-ն է, որը «Վեցօրեայի» նմանությամբ պետք է փոխարինել նկնատեսակ բառով և նշված կապակցությունը վերբնթերցել «ի բացեայ ի հետուտ նկնատեսակ էր»:

Համեմատությունը ցույց է տալիս, որ Շիրակացու աինգերագիտական հետազոտություններում կան բազմաթիվ այլ գրվածներ, որոնք պարունակում են անհասկանալիության աստիճանի խաթարված, երբեմն նաև ալիմաստ ոչ քիչ թվով աղավաղումներ: Իհարկե, այժմ դժվար է ստույգ սրոշել դրանց խմբերն ուս խաթարվածություն բնույթի: Սակայն միաժամանակ ճիշտ չի լինի պնդել, թե Շիրակացու զործերում նախապես ունեցել ենք միայն չմիջամտված, շղաղաղված բնագիր և առկա բոլոր աղավաղումները հետագա բնգործիանակությունների արդյունք են: Հայտնի է, որ Շիրակացին VI դարում օգտվել է V դարի թարգմանության մի ձեռագրից, որը կարող էր աղավաղումներ պարունակել և այդպես փոխանցվել Շիրակացուն: Միաժամանակ որոշակի է, որ այդ խաթարումներն ամենահավաստի ու վերջնական սրբագրման կարող են ենթարկվել հիմնականում «Վեցօրեայի» հայերեն թարգմանությամբ և հաճախ ստուգվել նույնի բնագրով ու այլ թարգմանություններով: Այդ ուղ-

⁷¹ „Hexaéméron“, էջ 372, հմտ. ՍԸ, էջ 140:

ղուիցամբ կատարված մեր աշխատանքից վկայեցինք ընդամենը մի քանի օրինակ:

Կեսարացու և Շիրակացու որոշ գործերի անշակցութեան համակողմանի քննութեամբ բացահայտվում է նաև մեկ այլ իրողութիւն. պարզվում է, որ «Վեցօրեայում» կան դրվագներ (ավելի թարգմանական), որոնց սրբագրմանը էպպես նպաստում են Շիրակացու տիեզերագիտական աշխատութիւններում պահպանված իր հետքերը: Հասկանալի պատճառով սրբագրվող նյութի հավաստիութիւնը որոշողը դարձյալ «Վեցօրեայի» հունարեն բնագիրն է, երբ հատվածը համընթաց է վերջինիս, իսկ եթե դիտողութիւնը թարգմանչի ստեղծած տեղիներին է վերաբերում, ապա, անշուշտ, Շիրակացու ընթերցումը ավելի կարևոր է և «Վեցօրեայի» ձեռագրի արժեք է ստանում:

Բարսեղ Կեսարացի

Անահիա Շիրակացի

«և առանկ սքանչանաք ընդ այնս՝ որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբաղտի կեանս նոցա. զի ցոփաբերանք և թանձրամիտք են»: (էջ 119)

«և առանկ սքանչանամ ընդ այնս, որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբարեաց զէմանոցա: Յոփաբանք և թանձրասիրտք են...»: (էջ 26)

Կեսարացու սույն դիտողութիւնը իր ամբողջութեան մեջ քննադատութիւն է ժամանակի սնոտի զբաղմունքի տեր այն անձանց դեմ, որոնք ընդհանուր անվամբ բախտագուշակ էին կոչվում: Համադրվող մասում Բարսեղի զարմանքն է արտահայտված հմայական նախասիրութեամբ տառապողների նկատմամբ: Նույնական այս հատվածներում կա երկու բնույթի անհարադատութիւն. մեկ այն է, որ Կեսարացու «ցոփաբերանք և թանձրամիտք» կիրառութեան դիմաց նույն նպատակով ու նշանակութեամբ ունենք «ցոփաբանք և թանձրասիրտք»: Ձեռագրական առկա իրողութիւնները որեէ այլիմաստ տարբերակ չունեն, և դա հասկանալի է. բեռան և բան բառերով բարդվածները երկու դեպքում էլ խոսելու, բան ասելու իմաստով են ընկալվում: Ինչ վերաբերում է միտք և սիրտք բառաբարդումներին, ապա, անշուշտ, այս դեպքում էլ մտածելու դադափարն է իմաստավորված: Համեմատութիւնը ցույց է տալիս, որ «Վեցօրեայի» հայերեն թարգմանութեան այս միտքը բնագրից հեռանալու արդյունք է, ուստի և չի կարող վերահսկվել հունարենի իրողութիւններով:

Երկրորդ տարբերության դեպքում գործ ունենք աղավաղման հետ: Կեսարացու հատվածի «զբարի կամ զբաղախ կեանս» բառակապակցության իմաստը անհասկանալի է առանց Շիրակացու «զբարի կամ զբաբեաց դէմս» արտահայտության: Հր. Աճառյանը սույն զբաղա ընթերցման մասին գրել է. «պետք է հասկնալ դէշ, շարաբախտ, շար, եթէ սակայն խանդարուած գրչութեան մը հետ չէ գործերնիս»⁷²: Դժվար չէ նկատել, որ հայագետի բացատրությունը պայմանավորված է հատվածի ընդհանուր իմաստով և ոչ, ասեմք, խնդրո առարկա բառի ավանդված բովանդակությամբ: Ընդունելին, անշուշտ, զիտողության ավարտն է, ուր բառս խանգարված գրչություն է ենթադրվում:

Հրատարակության «զբաղաի կեանս» ընթերցումը նույնությամբ ունենք ՄՄ 7028, 10258 և 5686 ձեռագրերում (նաև՝ զբախտի ղկեանս)⁷³: Սրանց մասամբ մոտենում է մեկ այլ ընթերցում՝ «ըզբաղաի դէպս»⁷⁴: Ունենք նաև «զբարեացն զդէպս», «զբարեացն դէմս»⁷⁵ տարբերթերցումները:

«Վեցօրեայի» զբաղաի կեանս կապակցության առաջին մասը աղավաղում է, այդ իսկ պատճառով երկրորդ հասկանալի բաղադրիչն էլ իր նշանակությամբ չի ընկալվում: Իրականում բաղաբառի որևէ կիրառություն արձանագրված չէ հայերենում: Նույնի փոխարեն, ինչպես տեսանք, նմանահունչ բախտ կիրառությունն ունենք ձեռագրերից մեկում, որն իր հիմնական իմաստով թեև քննվող հատվածի բովանդակությանը հարիւր է, բայց կոնկրետ արտահայտությունն՝ անհամապատասխան: Մյուս (և զերակշռող) ձեռագրական տարբերթերցումները փաստորեն հիշեցնում են Շիրակացու «զբարեաց դէմս» տարբերակը, որը ներկա դեպքում ճիշտ է, հասկանալի և բավարար հիմք է Կեսարացու նշված աղավաղման սրբագրման համար: Այժմ դժվար է որոշակի տեսել, թե ինչ ճանապարհով «զբարեաց դէմս» ընթերցումը կարող էր զանալ «զբաղաի կեանս»: Բայց «զբարեաց դէմս» կիրառությունից պարզորոշ երևվում է, որ հին հայերենի բաբի կամ բաբիբ (նույնն են) հոգնակի հայցակերպը կապակցված է դեմբ բառի նույն թվի ու հարվի հետ:

72 Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 157:

73 Ձև. Մ 620, էջ 261ա:

74 Ձև. Մ 5353, էջ 200բ:

75 Ձև. Մ 3457, էջ 109ա, հմմտ. ձև. Մ 5595, Մ 1939, էջ 58ա, Մ 8352, էջ 166բ, Մ 1243, էջ 411բ, Մ 1657, էջ 84ա: Մ 5819 գրչագրում հատվածս բազակայում է:

նշանակուիթյունն էլ ինքնին հասկանալի է. խոսքը դեմքի (անձնավորութեան) բարի կամ շար բնորոշումին է վերաբերում: Այս է «Վեցօրեայ» հատվածի բուն իմաստը, որը ավելի անխաթար է մնացել Շիրակացու բերված գրվագում: Այսպիսով՝ վերևում ասվածը հիմք է տալիս Կեսարացու հայերեն թարգմանութեան զբաղալի կեանս տարբերակը ըստ Շիրակացու վերընթերցել զբարեաց դէմս:

Բարսեղ Կեսարացի

«Եւ յորժամ զգննու արեգակն զկերպարանս բոցոյ հրոյ տարերց տասուվք, սկսանին փոքրկանալ ստուերք տարերց երկրի և կարճել շուքն հասարակաց ի միջօրեայ ժամանակի...»: (էջ 125)

Անանիա Շիրակացի

«Եւ յորժամ ի վերին բարձանց ծաղկացէ արեգակն, փոքրկանան ստուերք տարերց երկրի, և կարճին շուքն հասակաց ի մէջօրեայ ժամանակի...»: (էջ 52)

Բարսեղ Կեսարացու սույն միտքը երբ համեմատում ենք իր իսկ հետքերի հետ, պարզվում է, որ այն ներկա վիճակով կարոտ է սրբագրման: Սկզբնամասի որոշ ոճական տարբերութեան մասին էլ խոսքը, որը, ինչպես հուշում են «Վեցօրեայի» բնագիրն ու հայերեն թարգմանութեան ձեռագրերը, բառակուտակման օրինակ է: Այն ձեռագրերի որոշ մասում հիշեցնում է Շիրակացու (Կեսարացու) այս տարբերակը, Սակայն երկու դեպքում էլ խնդիրը սոսկ ոճական է՝ պայմանավորված «Վեցօրեայի» թարգմանութեան բնույթով:

Ինչ վերաբերում է հատվածների ընդգծված տարբերություններին, ապա, ինչպես կտեսնենք, Շիրակացու «շուքք հասակաց» արտահայտությունը հնարավորություն է տալիս վերընթերցելու Կեսարացու «շուքն հասարակաց» ոչ ճիշտ արտահայտությունը: Ի՞նչ են տալիս «Վեցօրեայ» ձեռագրերը. դրանցից մեկում (№ 5819) հատվածս օտարված է, հինգը (ձեռ. № 5595, 1243, 620, 10258, 5686) նույնանուն են տպագրին, մյուսները պահպանել են առաջարկվող «շուքք հասակաց» վերականգնումը, որը միանգամայն ճիշտ է ու հասկանալի քննվող հատվածի համար: Բացի այդ՝ եթե անգամ չունենայինք Շիրակացու հատվածով և «Վեցօրեայ» ձեռագրերով հաստատվող հասակաց վերականգնումը, այդուամենայնիվ, հասարակ բառի ներկա կիրառությունն անհասկանալի կմնար այն պարզ պատճառով, որ այն իր մի քանի նշանակություններից և ոչ մեկով (կես եղած, մասնակից, միաբան, հավասար, պարզ, սովորական, միակերպ, հավասարապես)⁷⁶ չի համապատասխանում նյութի բովանդակությանը:

Առաջարկվող վեցօրեայինումը հաստատվում է (ոչ բառացի) նաև հունարենով: Ահա այն. «ὅτε καὶ φλογωδῆστατός ἐστιν ἔαυτοῦ ὁ ἥλιος, βραχέιας πτωχῶν τὰς σκιάς ἐπὶ τῆς μεσημβρίας...»⁷⁷: *Ինչպես տեսնում ենք, հայերեն թարգմանության սկզբնամասի ղիմաց, որը, սովեց, տարբեր ոճավորում ունի երկու մատենագիրների բնագրերում, հունարենում տեսնք «ὅτε καὶ φλογωδῆστατός ἐστιν ἔαυτοῦ ὁ ἥλιος» (այնժամ ինքը՝ արևը, առավել կիզկիչ է): Փաստորեն վերոբերյալ երկու դեպքերում էլ (մանավանդ Բարսեղի մասում) բնագրի իմաստը հայերենի է փոխանցվել մի փոքր ընդգծված նկարագրությամբ:*

Քննվող հատվածի երկրորդ կեսը ավելի հարազատ է բնագրին, ուր խոսքը միջօրյա (չի մեջղմբրւ) ստվերի (չի սալ) կարճանալա (βραχυς, εἶα) մասին է և հասկանալի պատճառով շունենք հայերեն թարգմանությունյան հասարակաց կիրառությունը հաստատող որևէ կովմա: Կեսարացու «շուրն հասարակաց» արտահայտությունը բոս Շիրակացու (և այլ աղբյուրների) «շուրք հասակաց» վերընթերցելու միտքը թվարկված զործոններից բացի հաստատվում է նշված մատենագիրների նաև մեկ այլ աննշակցությունը, որտեղ շատ ավելի որոշակի ասված է, որ խոսքը մարդու հասակի (և ոչ հասարակի) ստվերի մասին է⁷⁸: Այսպիսով, շարագրվածը հիմք է տալիս պնդելու, որ «Վեցօրեայի» հետքերի (Շիրակացի), ձեռագրերի, բնագրի ու հատվածի իմաստի ինչպեղրանքով Կեսարացու հայերեն թարգմանության «շուրն հասարակաց» արտահայտությունը պետք է կարգալ «շուրք հասակաց»:

Ման վկայակոչելի բազմաթիվ նմանօրինակ այլ հատվածներ, որոնցում Շիրակացու բնագրի բազմաթիվ բառարտահայտություններով կարելի է սրբագրել «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը: Բայց քննված օրինակներն էլ բավարար հիմք են առելու, որ նման սրբագրությունները երկու մատենագիրների աննշակցությունն ընդգծող, նրանց բնագրերի հետագա ձեռագրական խաթարումները բացահայտող յուրահատուկ կովմաներ են:

Համեմատությունը ցույց է տալիս, որ Կեսարացու և Շիրակացու տեքստարանական մի շարք ընդհանրություններ, ի տարբերություն նախորդների, առանձնանում են միմյանց ճշտող-սրբապրող, ինչպես նաև երբեմնի օտարումները լրացնող տեղիներով: Այս դեպ-

77 «Hexaëteron», էջ 360, հմմտ. PG, էջ 136,

78 «Վեցօրեայ», էջ 126, հմմտ. Շիրակացի, էջ 53:

քում էլ, հարկավ, վերականգնման հավաստիութեան շափանիշը «Վեցօրեայի» հունարեն բնագիրն է՝ նշված թարգմանութուններով հանդերձ: Զուտ թարգմանական իրողութիւններ քննելիս, ինչպես միշտ, վճռողը զրշագրերն են՝ սլավանավորված դրաբարի նորմերով ու հայերեն թարգմանութեան ամբողջականութեամբ:

Բարսեղ Կեսարացի

Անանիա Շիրակացի

«Թէպէտ և աղի և դառն ճաշակս ուսիցին, և աւագով սանմաննաւք դտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծին ծովու, սակայն չէ հնար՝ թէ ի կերպարանս մեծի ծովուն կայցեն, ո՛չ Ասփաղտիտէս ծովակ՝ որ մօտ է յաշխարհն Հրէաստանի, և ո՛չ Աբերունիտէս ծովակ՝ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհի միջի, և գայ հասանէ մինչև ի կողմանս արարացաց»: (էջ 74)

«Թէպէտ և զաղի և զդառն ճաշակս ունիցին, և աւագօք սանմանեալ գտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծի ծովուն, սակայն ոչ է մարթ զծովական ծովս կոչել: Ո՛չ զԱսփաղտիտէս ծովակ, որ մօտ յաշխարհն Հրէաստանի է. և ո՛չ զԱբերունիտէս ծովակ, որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհի միջի. և գայ հասանէ ի կողմանս արարացաց»: (էջ 16)

Բերված հատվածների նույնությունն ինքնին ակնհայտ է: «Վեցօրեայի» մեր ձեռքի տակ եղած զրշագրերը, ինչպես նաև Շիրակացու հրատարակության հիմք ձեռագրերի տարրնթերցումները ցույց են տալիս, որ ընդգծված բառերի գրութեան տարբերությունները գրչական են և որ դրանք մեծ մասամբ պետք է ուղղել մերթ ըստ մեկի, մերթ ըստ մյուսի: Ընդգծված առաջին երկու բառերը, մեկական ձիշտ ձև ընտրելով նույն երկու բնագրերից, պետք է կարդալ «աւագօք սահմանեալք»: Շարունակութեան մեջ Շիրակացու նմանութեամբ պետք է կարդալ «մեծի ծովուն», ինչպես հուշում են նաև «Վեցօրեայի» նույն հատվածի շարունակությունն ու բնագիրը՝ «բշնդ մայձաճայ»⁷⁹: Երբ համեմատում ենք Կեսարացու հատվածի հաջորդ՝ «սակայն չէ հնար՝ թէ ի կերպարանս մեծի ծովուն կայցեն» միտքը, սլարոգորոշ երևում է, որ այն հստակ չէ, համարժեք չէ բնագրին, Շիրակացու նույն մտքին, ուստի ձիշտ կլինի վերընթերցել ըստ հունարենի. «Λίμνη γὰρ εἶναι πηγά, μὲν ἀσασ ὅτι λίμνη»⁸⁰ – «սակայն ոչ է մարթ գծովակսն ծովս կոչել»:

⁷⁹ „Hexaëméron“, էջ 260, հմտ. ԲԳ. էջ 88: «Վրացերենում՝ „დოდისა ზღვისა“ (-გეგსთა დღეთასასა:“, էջ 58):

⁸⁰ Նույն տեղում: «Վրացերենում՝ „და მსგავს წყალთა დიდისა მის ზღვისათა, არა არიან იგინი ზღუა“ (ბასილი დიდი, էջ 45):

Ասփաղտիտէն ծովանունը կրկու բնագրերում էլ միօրինակ չէ, ամենատարբեր ընթերցումներ են տալիս ձեռագրերի մեծ մասը: «Վեցօրեայի» հրատարակության հիմք ձեռագրում կղել է Ասփաղտիտէն: 2. Թորոսյանն այն ընթերցում է «Ասփաղտեան ծովակ» և բացատրում՝ «նոյն է Աղտից կամ Մեռեալ ծովուն հետ»⁸¹: Ծովանունն ըստ բնագրի, հայերեն թարգմանության և ՌՌՖ 5595, 5819 գրչագրերի Շիրակացու հատվածում պետք է ուղղել «Λοφαίτις λίμνη»⁸², իսկ արաբացոց բառը՝ արաբացոց: Գրչագրերի մի մասի միջամտությամբ (ՌՌՖ 5595, 5353, 1657, 1243, 5819, 10258, 5686) և Շիրակացու նմանությամբ տպագիր «Վեցօրեայի» Սերբուհիուկ անվանումը պետք է վերընթերցել Սերբուհիուկ (Σερβουίτις), «աշխարհի միջի» արտահայտությունը, ինչպես նկատել է Գ. Նախապետյանը⁸³, «աշխարհամիջի»:

Ջրագոյացությունների բնույթի, ծովերի, ծովախորշերի անուշացման, աշխարհագրական հակադիր լայնություններում գտնվող ծովերի ընդհանրության և այլնի մասին Շիրակացու տեղեկությունները քաղված են «Վեցօրեայից»: Այսպես, օրինակ՝

Բարսեղ Անսարացի

«Ձի մին անուանեալ կոչի Պոնդոս եփսինոս և մեւսն Պրովպոնտինոս, և Հելլեսպոնտիոս, և մեւսն էգեոս, և Ուննինոս, և մեւս ծովն Սարդոնիկէ աշխարհի. և մեւսն Սիկիլիա աշխարհին. դարձ բազում ևս այլ անուամբբ»: (էջ 75)

Անանիա Շիրակացի

«Ձի մինն անուանեալ կոչի Պոնտոս և եփսինոս, և միւսն Պրոպոնտիս և Հելլեսպոնտոս. և միւսն Եգէոս և Յոնէոս և միւս ծովն Սարդոնիկէ աշխարհին. և միւս ծովն Սիկիլիայ աշխարհին. և միւսն Տիւրոսի, ճանպեղե՞րձ ևս բազում անուամբբ...»: (էջ 16)

Համեմատությունը ցույց է տալիս, որ Կեսարացու վկայած «Պոնդոս եփսինոս» ծովանունը Շիրակացու մոտ դարձել է «Պոնտոս և եփսինոս»: «Վեցօրեայ» գրչագրերից տասը նշված անվան գրությամբ նույնանուն են տպագրի հետ, իսկ մնացած չորսը (ՌՌՖ 5353, 1657, 8352, 620) տալիս են «Պոնտոս և եփսինոս» տարբերությունը: Ներկա դեպքում «և» շաղկապը անտեղի է ու գրչագրի սխալ ընդօրինակման արդյունք: Հունարենում կարգում ենք. «πόντος»

81 2. Թորոսյան, Անանիա Շիրակացին..., էջ 217, ծան. 5:

82 «Hexaëmeron», էջ 260, հմմտ. PG, էջ 88:

83 Գ. Նախապետյան, նշվ. աշխ., էջ 203:

τος Εὐξείνου», վրացերևնում՝ «εὐξείνου—ἰουδαίου»⁸⁴, որոնցում, ինչպես տեսնում ենք, խոսքը նույն Հյուսիսային ծովի մասին է, որ հույները կոչում էին Սև ծովին: Մինչդեռ նշված անվանումը Շիրակացու մասում վերածվել է Պոնտոս (Սև) ու Եփսոս (Հյուսիսային) երկու տարբեր ծովանունների, որը ճիշտ չէ և պետք է ուղղել ըստ «Վեցօրեայի»⁸⁵:

Բայց Շիրակացու քննվող հատվածն էլ իր հերթին էական ճշտում-սրբագրում կարող է մտցնել Կեսարացու «Վեցօրեայում»: Եթե՝ համեմատաբար ճիշտ են տառադարձված Հելեսպոնտոս, Եգէոս (Եգեյան), Յոնէոս (Հոնիական) հատուկ անունները և սպա, որ ամենակարևորն է, Շիրակացու «և միսն Տիրոսի, հանդերձ» բնթերցումը ոչ միայն լրացնում, այլև վերականգնում է «Վեցօրեայ» զրբվագի վերջնամասի աղավաղումը (դարձ բազում...):

Մեր ձեռքի տակ եղած բոլոր զրբագրերը, վրացերեն խմբագրություններն (ըստ ԵՎԿՆՆԵՍԻՆՈՒՆՈՒՄՆԱՅ, ԸՍՏՅՐՈՒՆՈՍԵՍԱՅ)⁸⁶ ու մանավանդ հունարեն բնագիրը, ինչպես նկատել ենք առկա ձեռագրերը քննելիս, նույնությամբ պահպանել են Շիրակացու սույն լրացումը: Ահա վերևում համադրաբար վկայակոչված հատվածների հունարենը. «Καὶ ὄνοματὰ τῶν πελαγῶν ἰδιαιτέοντα πέντε· Εὐξείνου, καὶ Ἡσπιοῦ, Ἐλλησποντοῦ, Αἰγαίου, καὶ Ἰονίου, Σαρδονίου πελαγοῦ καὶ Σικελικόν, καὶ Τυρρηνικόν ἕτερον. Καὶ ἄλλα γὰρ ὄνοματὰ πελαγῶν...»⁸⁷:

«Վեցօրեայի» բնագիրը, ճիշտ է, հաստատում է Շիրակացու տեքստով առաջարկվող ընդհանուր ուղղումը, բայց միաժամանակ

⁸⁴ Յանտոլո ճոճո, էջ 45, սուսերենում՝ „Евксинский Порт“ („Шесто-днев“, էջ 59):

⁸⁵ Վրացի թարգմանիչը իմանալով, որ բնագրի «Պոնտոս Եգսիսոսը» նույն Պոնտոսն է կամ Եփսոսնար, դուրս է բողել Պոնտոսը և թարգմանել պարզապես «εὐξείνου»: Եւս. — ծով (εὐξείνου—ἰουδαίου, էջ 58): Ի դեպ, «Պոնտոս Եգսիսոսը» Կեսարացու նմանությամբ եզակի անուն է դիտված նաև «Աշխարհացոյցի» բնագրածի խմբագրությունում՝ «Եգսիսոս Պոնտոս ծով» («Աշխարհացոյց Մովսեսի խորենացոյց», Վենետիկ, 1881, էջ 25):

⁸⁶ «εὐξείνου—ἰουδαίου», էջ 58, Յանտոլո ճոճո, էջ 45:

⁸⁷ „Hexaemeron“, էջ 262, հմտ. PG, էջ 88: 2. Թորոսյանը իբրև ընդհանուր տեղիներ վկայակոչելով վերոբերյալ հատվածները, նկատել է. Կեսարացու Սարդոնիէ անվանումը նույն «Սարդոն կամ Սարդենիա» կղզին է: Դարձ-ը նա ուղղում է հանդերձ, իսկ Շիրակացու Տիրոսի մասին գրում է. «Բարսեղի հայ թարգմանության մէջ ի սպաս զեղչած է այդ անունն. հասանական է թէ Շիրակացոյն ունեցած օրինակին մէջ կայր. այլ վրիպակաւ Տիրոսն եղած Տիրոս» (2. Թորոսյան, Անանիա Շիրակացիի ... էջ 217, ծան. 4, 7):

վերականգնվող ծովանվան գրությունը շտկվում է ըստ հունարենի. Իրականում «Վեցօրեակ» ձևազրկումը և Շիրակացու սույն գրվագում պահպանված ՏԽԵՐՈՒ և նման գրության ձևերը ձևազրկական փոփոխություններ են պարունակում և ըստ բնագրի այն պետք է լինի «Τεσσαράκοντα» (Տիւր[ւն]իկոս)⁸⁸:

Բարսեղ Կեսարացի

«Եւ յորժամ շուրջ բազ ունիցի լուսինն ամսոց, և ունիցի մտալլ զարեգակըն ամսոց, ջորբ բազումբ յօղոց չերկիր առաքին, կամ զարամոր փբոց և զղառնաշունչ բ'նոց ամբոխիլոց յայտ առնեն»: (էջ 115)

Անանիա Շիրակացի

«Եւ յորժամ շուրջ բազ ունիցի լուսինն յամսոց, և ի նմին աուտ ունի մտալլ զարեգակն յամսոց, շուրբ բազում յօղոց չերկիր առաքին, կամ զարամոր փբոց և զղառնացուցիչ հողմոց ամբոխիլոց յայտ սանէ»: (էջ 42)

Բերված հատվածներում Կեսարացու հատվածով երկու ուղղում կարելի է առաջարկել Շիրակացու տեքստին⁸⁹, Ինչպես տևանում ենք, Կեսարացու «և ունիցի» կապակցությունը դիմաց Շիրակացու բնագրում առկա է «և ի նմին աուտ ունի»: Ունիցի—ունի զուգահեռ

88 Քննվող հատվածի դարձ ընթերցման մասին Հր. Աճառյանը գրել է. «Հոս դարձ կնշանակէ թո՛ղ, չհաշուած. բացի, որով դարձ այլ անուամբ կնշանակէ բացի միս անուններէն: Անշուշտ կծագի զառեալ բայէն և բուն իմաստն է գործիր, ետ գործիր, մեկդի ձգէ՛, թո՛ղ: Այս ձևը՝ որուն Ոսկեդարեան գործածութիւնը այլոստ անծանոթ է, շատ կարեւոր է, որովհետեւ կրացատրել յետնագրեան ըստ «բացի» բառին ծագումը: Վերջինս դարձ նեպոյն ձևին տարբեր գրչութիւնն է. ճիշտ այնպէս՝ ինչպէս ունիքը ապարտց փխ. ապադարձ...» (նշվ. աշխ., էջ 157—158): Այնուհետև նա նույն օրինակի հիմքի վրա գտնում է, որ միջնադարյան Հայաստանի որոշ գավառներում «դասական հայերենի թրթուսն ձայները վերածուած էին շնչող խուլի» (նույն տեղում, էջ 158):

Սակայն, ինչպես տեսանք, դարձ ընթերցման միակ սկզբնաղբյուրը՝ ապոլիբ «Վեցօրեան», այդ մասում աղավաղված է և վերականգնվող ձևը, սկզբնաղբյուրների միաբերան վկայությամբ, հանդերձ բառն է: Նշանակում է՝ դասական հայերենում շունքը դարձ, ուստի և ընդունելի չեն դրան վերադրվող բոլոր նշանակություններն ու առասկան մտահանգումները:

89 Գ. Նահպետյանը սույն հատվածում առաջարկում է երեք ուղղում. ա) գաւրեգակն բառը ընթերցում է առանց «գ»-ի՝ պատճառարանելով, որ «գ» առկուած է «մտալլ»-ի «լ»-էն, բ) անհարկի կրկնություն է գիտում հաջորդ ամսոց բառը և գ) զարամոր փբոց կապակցության վիճց բազայրիչը օտարում է՝ մասնացուցիչով վերջններ բբոց բառը (նշվ. աշխ., էջ 218): Սակայն համապատասխան աղբյուրների համեմատությունը ցույց է տալիս, որ նման միջամտության համար շունքը ոչ մի կովան: Թերևս ավելի ճիշտ կլինի փբոց ընթերցումը, որ բացահայտ վրեպում է, ոչ վե օտարել, այլ վերննթերցել բբոց:

ձևերից ներկա դեպքում քերականորեն պահանջվողը (յուժամ-ի հետ) առաջինն է. դա երևում է նաև Շիրակացու նույն դրվագի նախորդ կիրառությունից (ունիցի լուսինն), ուստի նշված ունի դիմավոր բայածևը վերընթերցելի է ունիցի:

Շիրակացու «և ի նմին ատուր» բնորոշումը բացակայում է ըսկըզբնաղբյուր «Վեցօրեայում»: Կեսարացու քննվող միտքը հայերենի է թարգմանվել ոչ բառացի, այլ ընդհանուր նմանությամբ, ուստի Շիրակացու նշված սահմանումը շունենք նաև հունարենում: Այդուհանդերձ՝ բնագրից նկատվում է, որ լուսնի բակ (փոքրիկ ծիրանի գոտի) ունենալու ժամանակահատվածում է արևի, այսպես կոչված՝ մոալլվելու, եղանակի փոփոխություն ենթադրվում: Ճիշտ այս կերպ է ընկալվում Շիրակացու բնագիրը, մինչդեռ Կեսարացու հատվածում, առանց նշված հավելման, արևի փոփոխությունը ենթադրվում է ոչ թե նույն օրը, այլ առհասարակ: Պիտի ենթադրել, որ «ի նմին ատուր» սահմանադատումը երբեք եղել է նաև «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունում և հետագայում օտարվել: Առ այդ, ինչպես, չկան ուղղակի վկայություններ, բայց Շիրակացու հատվածից էլնելով «ի նմին ատուրը» հավանաբար պետք է մոծել «Վեցօրեայ»: Շիրակացու հետևություններ և «Վեցօրեայ» ձևագրերի հիմքի վրա ամպոց բառը երկու դեպքում էլ պետք է կարդալ յամպոց:

Մյուս դիտողությունը Շիրակացու «զդառնացուցիչ հողմոց» արտահայտությունն է վերաբերում, ուր, թվում է, առաջինը զդառնաշունչ բառի ոչ ճիշտ ընթերցման հետևանք է: Շիրակացու հրատարակության ձևագրերը էական տարբերությամբ այլ ընթերցում չեն պահպանել: «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունը քննվող մասում համընթաց է բնագրին. «... ἡμεῖς δὲ καὶ ἐπειδὴν ἡ σεληνὴ περιεμνήσθηται· καὶ τὸ ἥμισυ δὲ ὄταν αἱ ἀστέρωνται ἄλλως περιεμνήσθησαν, ἢ ὕδατος ἀερίου πλῆθους, ἢ πνευματῶν βλαίων χινοῦσιν ἡποσταίνουσιν»⁹⁰: Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, խոսքը բազում ջրերի գոլորշիացման, կրկիւր տաքելու (ἢ ὕδατος ἀερίου πλῆθους) և օդի սաստիկ շարժման (ἢ πνευματῶν βλαίων) մասին է, որոնք պարմանավորված են լուսնի և արևի համաժամանակյա փոփոխությամբ: Հիրավի, որքանով է տրամաբանական հողմ, բուր հասկացություններին դառնացնող, դառնացուցիչ որակումներ տալ: Մինչդեռ դառնաշունչը բռնումը ավելի հարիւր է, և դրանց համատեղ կիրառության բազմաթիւ օրինակներ են հայտնի մատենագրություններ: Ասվածը հիմք է

⁹⁰ «Hexaëméron». էջ 344, հմմտ. ՔԳ, էջ 125:

տալիս պնդելու, որ Շիրակացու հատվածի զդառնացուցիչ բառը պետք է փոխարինել «Վեցօրեայի» զդառնաշունչ ընթերցմամբ:

Բարսեղ Կեսարացի

«Նա և մեծ վաստակն արուեստագիտաց ընդ ուշայնս ցելւր և վարն, և աշխատութիւն մշակացն անօգուտ էր. զի իբրև ոչ կարկառնացեն զձեռս ի գործ, գայցէ դարման կենաց իւրեանց անանց մուրակ շրջելոյ»: (էջ 123)

Անանիա Շիրակացի

«Նաև մեծավաստակն արուեստագիտաց ընդունայնատըր է և վայր՝ և աշխատութիւն մշակացն անօգուտ էր, զի իբրու ոչ կարկառուցուն զձեռս իւրեանց ի գործ գայցէ դարման կենաց իւրեանց անանց մուրկան շրջելոյ...»: (էջ 28—29)

Սույն հատվածներում նկատելի է երկու բնույթի տարբերություն: Մի դեպքում խոսքը միևնույն բառերի ոչ նույնական դրության մասին է. այսպես՝ նա և—նաև, մեծ վաստակն—մեծավաստակն, արուեստագիտաց—արուեստագիտաց, իբրև—իբրու և կարկառնացեն—կարկառուցուն, որոնք, անանց միմյանց հետ համագրվելու, գրչագրերից նույնությունը բնորոշինակվել են Կեսարացու և Շիրակացու հրատարակություններում: Երկրորդ դեպքում խոսքը խաթարված բառերի մասին է: Ինչպես սարգվում է բերված հատվածների համեմատությունից, Շիրակացու վկայությունն ընդգծված մասը աղավաղված է: Ա. Աբրահամյանը նկատել է. «Քնդունայնատըր է և վայր տեղին հարմար չի: Յենթադրում ենք թե պետք է ուղղել. ընդունայն, իզուր և ընդ վայր»⁹¹: Որ «ընդունայնատըր»-ը գրչական աղավաղում է և ոչ բացատրելի, դա կասկածից վեր է: Միաժամանակ, հասկանալի չէ վայր բառի ներկա կիրառությունը: Բայց, այդուհանդերձ, անաշարկիվող վերականգնումը ընդունելի չէ հետևյալ պատճառով. Բարսեղ Կեսարացու խոսքը, որից օգտվել է Շիրակացին, ներկա դեպքում հողի աշխատավորի անօգուտ դատումի վարելու, ցանելու մասին է, որը «արուեստագիտաց» կողմից «ընդունայնս ցրէր»: Ասվածը հաստատվում է «Վեցօրեայի» բնագրով. «Ματαιότατοι ὄν πάντων καὶ οἱ παρὰ τὰς τῆς γαζ. ποιοῦμενοι»⁹²: Ինչպես և սպասելի էր, բնագրում էլ աշխատավորության, աշխատողի

91 Ա. Շիրակացի, էջ 28—29, առդասակ՝ 31—1: «Վեցօրեայ» գրչագրերը ավելի նման են Շիրակացու հրատարակությանը. ընդունայնատըր (ձեռ. № 5595, 5353, 1657, 3457), ընդունայն ատը (ձեռ. № 8352), ընդունայն ատը (ձեռ. № 7028), ընդունայն գոյր (ձեռ. № 1939, 1243): № 5819 գրչագրում նախադասության հետևում է, մյուսները նույնանում են սպագրին:

92 „Hexaëmeron“. էջ 362, հմտ. PG, էջ 133:

ստեղծածի, աշխատանքի արդյունքների (οὐ πονοῦμενοι) վատնումի, «ընդ ունայնս ցրելու» (ματαότατοι) մասին է խոսքը, որ կատարվում է «արուեստագիտաց» (τέχνη, τέχνη — արուեստագիտք, τὰς τέχνας — արուեստագիտաց) միջամտությամբ: Այսպիսով, համապատասխան սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս Շիրակացու «ընդունայնասոյր է և վայր»-ը վերընթերցել «ընդ ունայնս ցրէր և վարն»:

Շիրակացու ձեռքի տակ եղած գրչագրի վիճակի առումով ուշագրավ է այն իրողությունը, որ «Վեցօրեայի» հնագույն ձեռագիրը նույնությամբ պահպանել է սրբագրվող աղավաղումը: Նշանակում է տակավին VII դարում Կեսարացու որոշ գրչագրերում արդեն աղավաղումներ են եղել, որտեղից և անցել են Շիրակացուն: Ինչ վերաբերում է վայր ընթերցմանը, ապա, թվում է, այլևս հիմք ունենք այն վերընթերցելու վարն:

Շիրակացու սրբագրվող նախադասության ուսերեն թարգմանությունում կարդում ենք. „Точно также суетны и тщетны усилня ремесленников и бесполезен труд земледельцев...“⁹³: Շիրակացու թարգմանիչ-հետադոտողները փաստորեն նյութի ընդհանուր բովանդակությունից ելնելով, ձիշտ են կոռահել «ընդունայնասոյր է և վայր» աղավաղված մասի միտքը և փոխանցել ուսերենի («бесполезен труд земледельцев»...): Սակայն նույն նախադասության անխաթար մնացած (բոլոր աղբյուրներում) մեկ այլ բառ՝ արուեստագիլյոաց, ինչպես հուշում է նույն թարգմանությունը, ուսերենի է թարգմանվել ոչ պահանջվող նշանակությամբ: Գրաբարում, մասամբ նաև արդի հայերենում, ուրուեստագէտ (արվեստագետ) վարպետ, հարտարգվեստ հիմնական նշանակություններին բացի ունեք նաև հմայել, շաբիֆ գործել ոչ հաճախակի: Իմաստները, «Վեցօրեայի» հայերեն թարգմանությունում (նաև Շիրակացու մոտ) ունենք բառիս այդ նշանակությունը՝ հավաստված նույն հատվածի իմաստով (հմայողների ջանադրությամբ առ ոչինչ էր դառնում մշակների աշխատանքը...): Հունարենի վերոբերյալ միտքը ցույց է տալիս, որ հայերեն թարգմանություն «արուեստագիտաց» կիրառության նշված նշանակությունը ևս փոխանցվել է բնագրից: Հունարենում τέχνη (τέχνη) բառը արվեստ, արհեստ, վարպետություն, մասնագիտություն նշանակություններից բացի

⁹³ „Космография“, էջ 61:

ուների խորամանկություն, նարպարություն, բանաստեղծություն իմաստները⁹⁴: Ահա և Շիրակացու ուսերեն թարգմանությունում նշված բառք այս վերջին իմաստի փոխարեն թարգմանվել է իր առաջին՝ *речесленник* նշանակությամբ, որը հետո է բնագրի իրողությունն արտացոլելուց⁹⁵:

Քարսեղ Կեսարացու «Վեցօրեայ» ճառերի և Անանիա Շիրակացու «Յաղագս ծովու», «Յաղագս երկնային զարդուց», «Յաղագս արեգական», «Յաղագս լուսնի» տիեզերագիտական հետազոտությունների մեր իսկ համեմատության արդյունք ընդհանուր տեղիները աասնյակ էջեր են կազմում, սրբագրության կարոտ բառարտահայտություններն էլ բազմաթիվ են ու բազմազան: Սույն քննությանմբ վկայակոչեցինք մի քանի հատվածներ՝ ընդհանուր իրողության մասին պատկերացում տալու նպատակով միայն: Խնդիրն ընդհանրապես կարոտ է հատուկ քննության: Մեր համոզմամբ՝ այս բնույթի աշխատանքը պետք է նախորդի Շիրակացու բնագրերի գիտական հրատարակությանն ու թարգմանությանը: Առանց Շիրակացու աղբյուրների բացահայտման դժվար է ճիշտ գնահատել գիտականի տեղն ու դերը միջնադարում:

Քարսեղ Կեսարացին իր հարուստ ու բազմաբնույթ մատենագրական ժառանգությամբ և հատկապես հայոց շրջաններին աւրնշվող աեական գործունեությամբ ընդհանուր ճանաչում է սենեցել հայ մատենագիրների շրջանում: Ուստի և ամենևին էլ պատահական: չէ, որ նրա աշխատությունները ոչ միայն թարգմանվել են ու բազմացվել, այլև դրանց մասին միաժամանակ գրվել են տասնյակ մեկնություններ: Ահա և դրանցից է XIII դարում ընդօրինակված N 4150 գրչագիր ժողովածուն, որ «Սկիզբն և պատճառ» խորագրի տակ մեկնված են Կեսարացու շուրջ երեսուն անուն աշխատություններ: Մեկնությունների հեղինակը ծանոթ է եղել Գրիգոր Նազիանզացու և Քարսեղ Կեսարացու մտերիմ փոխհարաբերությանը, նույնպես զացու «Դամբանականին», Կեսարացու կյանքի ու գործունեու-

⁹⁴ «Древнегреческо-русский словарь», составил Н. X. Дворецкий, т. I, М., 1958, էջ 1622:

⁹⁵ Բննվող բառի իմաստային նրբերանգի հաշվառումն այս դեպքում կական նշանակություն ունի: «Վեցօրեայի» ուսերեն թարգմանությունում նշված նախադասության համապատասխան բառնորությունը ճիշտ է կատարված. «А всец более обманываются трудящиеся над искусствами» («Шестоднев», էջ 92):

թյան մանրամասներին, Վաղես կայսեր և Բարսեղի փոխհարաբերութեան հայտնի դրվագներին⁹⁶:

Կեսարացու առանձին աշխատութիւնների հայերէն թարգմանութիւնների, ընդօրինակման անհրաժեշտութեան, վայրի ու ժամանակի հետ կապված զանազան տեղեկութիւնների առկայութիւնը մեր ձեռագրերում խոսում է հայկական միջավայրում նրա գործերի վայելած հեղինակութեան մասին: Բերենք մի քանի այդպիսի տեղեկութիւններ: Այսպես, օրինակ՝ մեզ արդեն ծանոթ «գերբեցողաց» ճառի մասին տեղեկացվում է, որ Կեսարացին այն ասել է «ի մեծի զատկի՝ յարութեանն տեանն»⁹⁷: Սաղմոսի մեկնութեան հետ կապված խնդիրների քննութեան առումով կարևոր է հետևյալ դիտողութիւնը. «Այսպէս կարծի յոմանց, թէ ամենայն սաղմոսացե Դաւթի արարեալ է սորա մեկնութիւն և այս երեք այլ սաղմոսաւք ի մերս է թարգմանած լեզու, այլ մեզ այսպէս ասացաւ յուսուցաց և հաճելի է»⁹⁸:

1347 թվականին, Ստում ընդօրինակված մի ժողովածուում «Բ՛ Վեցաւրեա Բարսղէն» խորագրի տակ բացատրված են հազվագեղ կիրառվող մոտ երկու և կես տասնյակ բառ-արտահայտութիւններ⁹⁹, Զի պահպանվել ո՛չ բառարանի հեղինակի և ո՛չ էլ գործի դրդապատճառների մասին տրե՛է վկայութիւն: Այդուամենայնիվ, հայտնի է, որ միջնադարում ամենուր ընթերցվող յուրահատուկ ձեռնարկ էր «Վեցօրեան», ուր, հարկավ, կան բացատրութեան կարոտ բաղմամբիվ բառեր, արտահայտութիւններ, վկայակոչումներ, տեղանուններ, բուսանվանումներ և այլն: Եվ ահա, նշված ճանապարհին անհրաժեշտութիւնն է զգացվել մեկնելու, բացատրելու դո՛ւնև որոշ բառ-հասկացութիւնների նշանակութիւնը: Հավանաբար, այս նպատակով է ստեղծվել մեզ անհայտ հեղինակի հիշյալ համառոտ բառացանկը, ուր բացատրված են երկնապող, վակժոյժ, ցրնցողան, քայրաթոտ, ղնդէին, խիզը, կրուիթ, նշանակեւտ, եղողօն, վտառ, գայլագեղ, աղամողեալ և այլ բառեր:

Ոչ սուօրյա գործածութեան նմանօրինակ բառերի բացատրութեամբ դուրացվում էր «Վեցօրեայ» առանձին դրվագների հասկանալիութիւնը մասնավանդ ոչ մասնագիտական շրջանների համար:

96 Ձեռ. № 4150, էջ 20ա—22ա, 77ա—բ:

97 Նույն տեղում, էջ 64բ:

98 Նույն տեղում, էջ 69բ:

99 Ձեռ. № 1138, էջ 376բ—377ա:

Բայց, այդուամենայնիվ, «Վեցօրեան» իր արծարծած հարցերի բազմազանությունով, խտրությունով ու ինչ-որ շարիտով նաև բարդությունով կարող էր մեկնման, պարզեցման: Պահպանված ձեռագրական համապատասխան նյութերը ցույց են տալիս, որ հայազգի մեկնիչները այս ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել: Մատենադարանի № 621 ձեռագրում Արիստոտելի, Նագիանդացու, Նյուսացու և այլոց գործերի մեկնությունների շարքում քննված է նաև Բարսեղ Կեսարացու «Վեցօրեան»¹⁰⁰: Մեկնության հեղինակը ծանոթ է Կեսարացու «Վարքի» մանրամասներին և մատենագրական ժառանգությանը: «Վեցօրեան» մեկնելիս նա առաջնորդվել է ոչ այնքան նրանում քննված հարցերի բարդությամբ, որքան սեփական նախընտրությամբ: Մեկնվող հարցադրումները բառացի վերցված են «Վեցօրեայից» և յուրաքանչյուր հարցին հետևում է մեկնությունը՝ ըստ ճառերի հերթականության: Առաջին ճառում արծարծված հարցերը ամփոփված են մեկնության ութ կետերում: Ահա հարցադրումներից մեկը և դրա լուծմունքը: «Քանզի վայելուչ է և զեղեցիկ սկիզբն այս»¹⁰¹, — սսված է «Վեցօրեայում» և նույնությամբ վկայակոչում է մեկնության հեղինակը: Մեկնությունը հետևյալն է. «Քան զայս սկիզբն շկայ վայելուչ և զեղեցիկ, ուր երկինի և երկրի է սկիզբն և հիմն»¹⁰²:

Մեկնությամբ, կարելի է ասել, հնարավորություն էր ընձեռվում լիարժեք բացահայտելու Կեսարացու միտքը, երբեմն էլ ենթյամաստն էր վեր հանվում: Այսպես, օրինակ, Կեսարացու հետևյալ միտքը՝ «Զի ճարտարութիւնքս՝ որ առ մեզ գտանին, զի թերի էին նոցա իրքն ի նիւթ գործոյն»¹⁰³ ըստ էության ընկալվում է մեկնությամբ, ուր բացատրված է. «Մեր արուեստագետքս թերի են. վասն այսորիկ նիւթոյ կարօտանան, որ յառաջ զնիւթն պատրաստեմք և առայ զգործն ի վերայ դնեմք, որպէս բուրդն քան զոստայնանկութիւն յառաջ է և փայտն՝ հիւսանն և այլ արուեստից՝ նիւթն»¹⁰⁴:

Քննվող մեկնության հեղինակը զրեթե հավասար կարողությունով ու հմտությամբ է մեկնում միմյանց բիշ առնչվող, երբեմն էլ

100 Ձեռ. № 621, էջ 56ա-59բ: Մեկնությունը, հավանաբար, բնօրինակված է № 3275 ձեռագրի համանուն գործից կամ երկուսը միասին՝ կրթող չիմ օրինակից: Ավելի անխախտ է ու ամբողջական № 621 ձեռագիրը, որից և օգտվում ենք:

101 «Վեցօրեայ», էջ 1:

102 Ձեռ. № 621, էջ 56ա:

103 «Վեցօրեայ», էջ 27, հմմտ. ձեռ. № 621, էջ 56բ:

104 Ձեռ. № 621, էջ 56բ:

բոլորովին այլաբնույթ ամենաբաղձազարն հարցադրումներ: Աշխարհագրական տեղանուններին ու հասկացություններին անդրադառնալիս նա հաճախ Կեսարացու վկայություններն է յուրովի վերապատմում՝ երբեմն առանձին հավելում-տեղեկությունամբ, հաճախ էլ առանց որևէ միջամտության: Այսպես, օրինակ. «բան. Հինդոս գետն: Լուծմունք, դոր այլևայլ անուամբ կոչեն և ի Դ. գետոյն մին զսայ ասեն, և այլ գետք ելանեն ի սմանէ»¹⁰⁵:

Բարսեղ Կեսարացու տեղեկությունները Հինդոս գետի մասին գրեթե նույնանում են վկայակոչված մեկնության հետ, միայն այն տարբերությամբ, որ «Վեցօրեայի» «յարևելից, ասեն, ելանէ» միտքը մեկնության հեղինակը փոխարինել է «Դ. գետոյն մին զսայ ասեն» արտահայտությամբ:

Չորրորդ ճառում, քննադատելով զուսանական արվեստն ու վերջինիս երկրպագուներին, Կեսարացին կատարում է հետևյալ լրացումը. «և իրք առականաց քն անդ, որոց առաջին ամենայն մարդկան ղնէին ծանակութիւնքն»¹⁰⁶: Այստեղ, ինչպես տեսնում ենք, հեղինակը կին գուսանների գոյության մասին ոչինչ չի ասում: Բայց հատվածի շարունակության մեջ սյարի նկարագրի տակ ենթադրելի են կանայք, այսինքն՝ զուսանական երգարվեստի կին կատարողներ: Նման ենթադրությունը հաստատվում է վերոբերյալ տողերի հետևյալ մեկնությամբ. «և թէ կանայք լինին զուսանքն, որ առաջին մարդկան ղնեն զառականս իրեանց, որ է ծանակութիւն»¹⁰⁷: Մեկնիչը այս և առհասարակ նմանօրինակ սլորաբանումները կատարում է բացառապես զատափետանքի նպատակով, այսին վկայում նրա օգտագործած «զառականս», «ծանակութիւն» որակումները, որոնք առաջին հերթին երևույթի դատապարտելի կողմերն են մատնացուցում: Երբեմն շատ ավելի որոշակի են մեկնության հեղինակի զայրույթի, վրդովմունքի բուն պատճառները: Այսպես, օրինակ՝ «բան. բարբառք լուր ստացն կամ կորստացն ասա: Լուծմունք. զլկտի երգն ասէ, որ ազտեղի յիշատակս ածեն ի միտս լսողացն և փոյթ նոցա այն է, որ շթողուն տեղի ի յինքեանս, որ չլխայտառակեն»¹⁰⁸: Համեմատությունից պարզվում է, որ մեկնիչը առավել ևս հակված է քննադատել աշխարհիկ հրդր, քան կամեցել

105 նույն տեղում, էջ 57ա, հմմտ. «Վեցօրեայ», էջ 55, հմմտ. նաև Գաղիոն ծովն մեկնությունը (ձեռ. № 621, էջ 57բ, հմմտ. «Վեցօրեայ», էջ 73):

106 «Վեցօրեայ», էջ 66, հմմտ. ձեռ. № 621, էջ 57ա:

107 Ձեռ. № 621, էջ 57ա:

108 նույն տեղում, էջ 57ա-բ, հմմտ. «Վեցօրեայ», էջ 66:

է Բարսեղ Կեսարացին: Ն՝ 1138 զրչազրի բառարանի նմանությունը, այստեղ էլ երբեմն բացատրվում են ոչ թե առանձին հատվածներ կամ արտահայտություններ, այլ պարզապես դժվարամբունելի բառեր: Ն՝ 1138 և 621 զրչազրի համադրությունը ցույց է տալիս, որ երկրորդ ձևագրի բառերի բացատրությունները (բացատրությամբ՝ «յալիխոս», «յակիճիլոս», «յանկուլթեամբ» բառերի և «առավտոյան աստղի» մեկնության) վերցված են կամ Ն՝ 1138 զրչազրից, կամ էլ երկուսը միասին երրորդ մայր օրինակից: Այնհայտ տարբերությունները ավելի շուտ գրիչների հավելում-միջամտություն են, քան իմաստային տարբերակ ներկայացնող հեղինակային մտահղացում: Ահա գրությունը, մասամբ նաև իմաստով տարբերվող բառերն ու արտահայտությունները:

Ձև. Ն՝ 1138 (էջ 376բ)

Առաւատին աստղն այն է, որ .2.
ամիս առաւօտին ելանէ և .2. ամիս՝
չերեկորեալ
րայրարոտֆ—փաղարուշ
խիղբս արկեալ—ի չերկուս բաժանի և
ծիլ արձակէ
վտառ—ջող
լիցս—խաղոյ անուն է
աւաղեբն, է, որ ոսկր և է, որ՝ վալտ
աղամողեալ—խտանափնդորեալ
գայտաշեղ—երկաթի արկնոց:

Ձև. Ն՝ 621 (էջ 56բ—59բ)

Առաւատին աստղն այն է, որ .2.
ամիս առաւօտուն ելանէ և .2. ամիս
չերեկորեալ
րարարոտֆ—փաղարուշ
խիղբս արկանելի—ի չերկուս բաժանի
և ծիլ արձակէ
վտառ երամ—ջող երամ: զնան
լիցս—խաղոյ անուն է
ժաղեբն, է, որ ոսկր է և է որ՝ վալտ
աղամողեալ—խտանափնդորեալ լինի
գայտաշեղ—երկաթի արկնոց, ուր
զգագանսն արղևուն:

Բերև տարբերություն վկայակուշվածներն էլ, հարկավ, արդյունք են եթե ոչ միմյանցից, ապա դո՛ւն են նույն հիմք ձևագրից բաղված լինելու: Ն՝ 1138 զրչազրում պահպանված բառարանը դնահատէրիս նկատեցինք, որ ինչ-ինչ պատճառներով չի պահպանվել բառարանի հեղինակի անունը: Եվ ահա Ն՝ 621 ձևագրում բնորոշ նակված «Վեցօրեայ» ձևերի մեկնության հեղինակը, բնավ չհիշելով իր անունն ու մեկնության հետ կապված մանրամասները, հինգերորդ ձևով մեկնության սկզբնամասում «Նղիշէ ասէ» խորագրի տակ բացատրում է «թարաթոտք», «խիղբս արկանել», «զնղչէին» «ուշիկուրծս» և նման բառեր¹⁰⁹, որոնք նույնանում են Ն՝ 1138 զրչազրի համապատասխան բառերի ու բացատրությունների հետ:

Մատենագրական այս ուշագրավ վկայությունը արդյոք հիմք տալի՞ս է ասելու, որ № 1138 գրչագրի բառարան-բացատրությունն հեղինակը V դարի նշանավոր մատենագիր Եղիշենն է, Այս հարցումին դրական պատասխանելուն ինչ-որ չափով նպաստում է այն փաստը, որ Եղիշենն ծանոթ է եղել Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգությանը և օգտվել է նրանից¹¹⁰:

Ուշագրավ է քննվող մեկնության հեղինակի մոտեցումը: Կեսարացու մի քանի բնութագրումներից նա ընտրում է ամենից պատկերավորը, առավել մեծ հետաքրքրություն ներկայացնողը: «Վեցօրեայում», օրինակ, կան ծովի «բարությունը» և գեղեցկությունը ներկայացնող մի քանի բնորոշումներ, որոնցից մեկնիչը ընտրում է հետևյալը. «Բարի և գեղեցիկ է դարձնալ ծով, ղի նայ է ակն զըլխատր ջուրց օդոց»¹¹¹:

Ինչպես «Վեցօրեայ» ճառերում, այնպես էլ նրա մեկնություններում համեմատաբար ընդարձակ տեղ են զբաղեցնում զուտ աստվածաբանական խնդիրները: Հասկանալի է, որ հաճախ թե՛ Կեսարացին և թե՛ նրա մեկնիչները հարկադրված էին բանավիճել աստվածաբանական այս կամ այն հարցադրումն ալլափոխող անձանց դեմ և լրացուցիչ կովաններ վկայակոչել խնդրի հստակման համար: Եզակի չեն այն դեպքերը, երբ ունկնդրին ասակողմնորոշելու նպատակով փորձել են խեղաթյուրել, այլ կերպ ընկալել Կեսարացու «Վեցօրեայի» և նույնիսկ ս. Գրոց առանձին հարցադրումները:

* * *

Առաջարկված քննությունը, այլևս կոռահելի է, ճշգրտումն է այն աղբյուրների ու սկզբունքների, որոնք նշանակալիորեն նպաստելու են «Վեցօրեայի» հայերեն թարգմանության զիտական բնագրի հրատարակությանը: Տողերիս հեղինակն այժմ ձեռնամուխ է եղել հիշյալ գործի իրականացմանը:

110 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վենետիկ», հ. 9, յօրինեցին Բարսեղ Սարգիսեան, Գրիգոր Սարգսեան, Վենետիկ, 1966, էջ 54:

111 Ձեռ. № 621, էջ 57բ, հմմտ. «Վեցօրեայ», էջ 79: Մեր նպատակն էր հիմնականում բնեկ այն հեղինակների գործերը, որոնցով կարելի է «Վեցօրեայի» թարգմանության ժամանակի, ինքնատիպությունների, բնագրադիտական վերահանգումների հարց լուծել: Այդ առումով հատկապես ուշադրավ են կողացու և Շիրակացու գործերը: Բառարան-մեկնություններին անդրադարձել ենք իբրև «Վեցօրեայ» բառարանի վրահատման յուրօրինակ փորձի: Մատենագիտական լիակատար ընդգրկումը մեր նպատակից դուրս է եղել:

ВАСИЛИЙ КЕСАРИЙСКИЙ И ЕГО «ШЕСТОДНЕВ» В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Резюме

Литературное наследие одного из «трех великих каппадокийцев»—Василия Кесарийского (329—379) пользовалось широкой известностью в странах христианского Востока. Будучи крупным мыслителем и деятелем с большой эрудицией, он в своих трудах, независимо от их жанра, затрагивал настоящие вопросы христианской церкви периода ее становления, проблемы вероисповедания, а также вопросы общественной жизни, морали, естествознания, обрядовые и другого характера, интересовавшие не только византийский мир. Это обстоятельство и обусловило перевод его сочинений еще в раннем средневековье на многие языки стран с христианским вероисповеданием—на сирийский, армянский, грузинский, латинский и др. Но эти переводы зачастую выходили за рамки чисто литературного интереса, вследствие чего они иногда сокращались или же обогащались реалиями, взятыми из местной действительности, сообразно литературным вкусам и практической необходимости. Все это постепенно привело к образованию новых редакций того или иного сочинения Василия Кесарийского, не говоря уже об изменениях оригинала, возникших на протяжении многих столетий по ряду обстоятельств (последующие обработки, интерполяции, приписки, опуски и т. д.).

Одним из достоверных способов восстановления изначального оригинала средневекового памятника является изучение древних переводов, сопоставление которых может подготовить реальную почву для критического текста. Изучение армянских переводов сочинений Василия Кесарийского, выполненных в V—VIII веках, может оказать значительную услугу в этом аспекте. К тому же сочинения византийского автора ока-

зали определенное влияние на труды исконно армянских деятелей, являясь литературным первоисточником для многих из них, не говоря уже о роли этих произведений в новообразованных армянских школах того периода. Рассмотрев степень и характер этого влияния, можно дать всестороннюю оценку указанным оригинальным трудам, ибо текстологическое изучение данного соотношения, как выясняется, дает возможность контролировать изначальность многих памятников древнеармянской литературы, выяснить характер последующих изменений и искажений. Орывки же из его произведений, экцерптно приводимые армянскими авторами, в свою очередь являются древними фрагментами, способствующими изучению истории перевода.

Василий Кесарийский так часто упоминается в древнеармянской литературе еще и потому, что в период как учебы, так и папства в Кесарии он общался с армянами, учился с ними, писал послания к армянским епископам, занимался организацией армянской церкви и ее иерархией и т. д.

Литературное наследие византийского ученого на армянском языке сохранилось в свыше чем 200 рукописях, значительная часть которых хранится в собрании Матенадарана им. М. Маштоца. Изучение большого количества рукописных кодексов дало нам возможность выявить новые материалы, проливающие свет на многие вопросы как наследия Василия Кесарийского, так и древнеармянской литературы. Впервые в арменистике эти вопросы исследуются монографически. Но поскольку совокупность существующих проблем выходит за рамки одной монографии, мы ограничились определенным кругом вопросов, намереваясь к проблемам источниковедческого порядка возвратиться отдельно.

Изучение наследия Василия Кесарийского в арменистике начинается с 30-х годов прошлого столетия, когда мхитаристом А. Багратуни было осуществлено издание армянского перевода «Шестоднева».

В 1852—1853 гг. арменист С. Айватяц проделал серьезную филологическую работу, сопоставив разночтения одной более древней рукописи с имеющимся изданием, доказав необходимость текстологических разысканий с учетом данных ру-

кописных материалов. А. Сукрян, помимо вопросов филологического порядка, коснулся и деятельности Василия Кесарийского и высказал ряд интересных соображений относительно школ и церковно-литературной среды IV века. Н. Бюзандаци, как и следовало ожидать, в своих коррективах по древнеармянским текстам специально коснулся и «Шестоднева», указав на ряд важных искажений и ошибок, возникших в результате неправильного понимания греческого оригинала, а также ошибок, объясняемых графическим смещением букв.

Из работ о Василии Кесарийском глубиной анализа и широтой охвата вопросов выделяется труд С. Назаретяна «Очерк о «Шестоднев» св. Василия», опубликованный в нескольких номерах «Паткера» (1892—1894).

Однако многие вопросы, связанные с литературным наследием Василия, особенно с армянским переводом его «Шестоднева», по сей день остаются нерешенными, что объясняется отсутствием или малым количеством рукописных материалов, которыми располагали вышеуказанные авторы. В Матенадаране армянский перевод «Шестоднева» сохранился в 14 списках, данные которых, по понятным причинам, не учтены предыдущими исследователями.

Не все сочинения Василия Кесарийского дошли до нас. По существующим сведениям, совместно с Гр. Назианзином им был составлен сборник «Св. Писание и его толкователь» (имеется в виду Ориген). Одновременно сомнительна принадлежность сочинения «Толкование Пророчества Исаии» перу нашего автора. Имело место и другое: некоторые его труды в последующие века были приписаны другим авторам; одна из гомилий Василия в Армении была приписана историку Егише. Наконец, в филологии апокрифическим считается текст беседы Василия с Аполинарием.

Разнородны рассматриваемые Василием Кесарийским вопросы. В ряде гомилий его занимают вопросы человеческих отношений, он осуждает пороки, не являющиеся, по его мнению, изначальными; именно трудолюбие и предельная честность характерны для человеческой природы, а все порочное возникло в процессе взаимоотношений людей. Он, конечно, далек от социальных обобщений, но приводимые им примеры

во многом способствуют изучению социальной и экономической истории IV века, поскольку они взяты из реальной действительности. Он гневно осуждает корыстолюбие, которое, по его мнению, является первопричиной раздоров, войны, ненависти, вражды и т. д.

Значительная часть слов—гомиллий Василия посвящена духовным темам. Он решительно осуждает пороки священнослужителей. В этом отношении особенно примечательно его сочинение, известное в армянской действительности под названием «Книга вопрошающих» (Գրք հարցողաց), в котором обсуждается около 360 вопросов, имеющих важное богословское и практическое значение. Армянская редакция этой книги, наряду с грузинской, является достоверным источником при изучении первоначальной редакции оригинала.

Иной круг вопросов затрагивается в книге Василия Кесарийского «Беседы на Шестоднев», которая по праву считается основным трудом нашего автора, известным в науке под названием «Шестоднев». По сохранившимся в самом тексте отдельным сообщениям, имеющимся припискам и иным источникам устанавливаются литературные источники этого сочинения. Имми являются: а) соответствующие отрывки из книги Бытия по двум редакциям (на древнееврейском и греческом языках), б) Физиолог, который греко-грузинской литературной традицией приписывался Василию, в) ряд художественно-философских сочинений (от «Илиады» Гомера до «Категорий» Аристотеля и др.), г) жития святых и изречения (в том числе и на сирийском языке), д) устные предания и легенды.

В «Шестодневе» фактически представлено все то, что было известно о природе в IV веке, но с новым, согласованным со св. Писанием толкованием. В силу указанного обстоятельства «Шестоднев» был превращен в учебное пособие, которое давало ответ на самые разнородные вопросы—от определения философских категорий до изучения природы животного мира, от анализа взаимоотношений людей до соотношения человека с природой. Примечателен тот факт, что в «Шестодневе» содержится много сведений о музыке и других областях искусств, не говоря уже об отрывках, имеющих этнографическое значение. «Шестоднев» не лишен и художественно-

го интереса, особенно своей манерой изложения и занимательностью повествования.

Из экзегетических его сочинений наиболее интересным представляется «Толкование Псалмов», которые, очевидно, не всегда воспринимались как духовные. Именно это обстоятельство и побудило нашего автора обратиться к их толкованию с целью раскрыть и показать их духовную суть. Но и здесь он выходит за рамки текста псалмов, обращаясь к фактам из окружающей среды, и создает вполне самостоятельное произведение, имевшее влияние на творчество последующих авторов, в том числе и армянских. Догматические вопросы, затронутые в указанном толковании, особо рассматриваются в другом сочинении автора—в споре с Аполинарием.

Определенное количество слов-назиданий Василия Кесарийского посвящено восхвалению и объяснению жизни христианских мучеников. В составленных Василием церковных канонах определяются обязанности священнослужителя, характеризуются отступления и пороки, несовместимые с церковной жизнью. Эти каноны имели большое значение и в организационном отношении, в силу чего были приняты и считались каноническими во всех церквях христианского Востока.

В главе «Василий Кесарийский и армяне» нами рассматриваются два вопроса: отношение Кесарийского к армянам и древнеармянские писатели о нем. Известно, что с древнейших времен церковно-культурная жизнь Кесарии Каппадокийской играла важную роль в возникновении и учреждении армянской церкви и монашества. Сам Григор Партев (Григорий Парфянин) учился в школах Кесарии и там впервые познакомился с устройством церковной жизни, введенным им впоследствии в Великой и Малой Армении. Нерсес Великий также в начальный период своей деятельности выступает как бы учеником Василия, создавая по его примеру богадельни, гостиницы, больницы, приюты для вдов и т. д. Помимо канонов, всецело проникших в армянскую жизнь, а затем ставших составной частью «Книги канонов», в Армении была принята и Литургия Василия, по которой долгое время совершалось богослужение.

Особый интерес представляет изучение отношений Василия с Малой Арменией, ибо армянские административно-этни-

ческие единицы—Сатал, Севастия и Колония—входили в сферу его пастырства. Как свидетельствует его письмо от 372 г., Василий проявлял постоянную заботу о том, чтобы епископами армянских областей назначались лица, владеющие языком местного населения. Это способствовало культурному общению населения названных областей с жизнью и культурой исконной Армении. Озабоченность Василия хорошо видна из его писем—посланий, направленных против приверженцев арианской ереси в Малой Армении во главе с Евстафием. Он неоднократно бывал в этих краях, на месте решая злободневные вопросы. Определенная часть его писем относится к армянам и Армении и написана в период его кесарийской деятельности. В них содержатся важные сведения о социально-экономическом, политическом и особенно церковно-культурном положении Малой Армении.

Не лишены интереса и сведения древнеармянских источников о нашем авторе. Так, например, Павстос Бузанд (Фавст Визант) знает об участии Василия Кесарийского в решении церковных вопросов Армении, а также в посвящении армянских епископов. Им пересказаны многие отрывки из жизни Василия, а в повествовании о Нерсесе Великом Павстос явно прибегает к его образу. На посвященных Василию страницах имеется ряд оценок, говорящих о широкой популярности византийского ученого среди армян.

В работе рассматриваются также сведения других армянских авторов, в частности Мовсеса Хоренаци (Моисея Хоренского), Лазаря Парпеци (Лазаря Фарпского), Анания Мокаци (Анания Мокского). Все это позволяет заключить, что в древнеармянской литературе⁸ были популярны не только сочинения Василия Кесарийского (разумеется, в армянском переводе), но и их автор, часто вступавший в своей деятельности в тесный контакт с армянами.

В собрании Матенадарана, помимо рукописей «Шестоднева», имеются также толкования-комментарии к «Шестодневу» (в четырех рукописях). В результате сличения текстов выяснилось, что рукописи «Шестоднева» делятся на четыре группы:

а) № 620, 3457, 10258 и 5686.

б) № 6731 и 4001. Текст «Шестоднева» этой группы можно назвать сокращенным.

в) № 5353, 1657, 8352, 5819.

г) № 5595, 1243, 1939, 7028.

Прежде чем приступить к обсуждению вопросов, связанных с армянским переводом, мы проделали надлежащую текстологическую работу, сличив все доступные нам рукописи с печатным текстом, а для контроля при работе с греческим подлинником пользовались двумя древнегрузинскими переводами, один из коих восходит к греческому оригиналу (перевод Георгия Святогорца), другой—к арабскому (перевод VIII—IX вв.). Таким образом, у нас была возможность проследить за изменениями как в армянском, так и греческом текстах.

В первую очередь нами рассматриваются те отрывки из армянского текста, которые со временем претерпели изменения.

В армянском переводе имеется ряд текстовых искажений (речь идет об искажениях, возникших в процессе копирования манускриптов), исправление которых нельзя ставить в зависимость от греческого оригинала, ибо содержащие их отрывки являются не дословными переводами, а скорее переложениями. В таких случаях мы руководствовались исключительно данными рукописей и самим контекстом.

В предлагаемой работе определенное место отведено установлению времени перевода «Шестоднева» и изучению его характера. В памятных записях рукописей, принисках и т. д. оказалось множество интересных сообщений, относящихся к обстоятельствам армянского перевода того или иного сочинения Василия. Значительная часть его наследия (Книга вопрошающих, Каноны, Литургия, гомилии и проповеди) переведена в V веке. Переводчиками некоторых его сочинений выступают ученик Саака Партева (Саака Парфянина) и Маштоца—Хосров (V в.), именуемый «Переводчиком-толкователем» (^Թարգմանիչ), и Давид, величаемый тем же эпитетом (VII в.). В переводе сочинений Василия Кесарийского значительны также заслуги Стефана Сюнеци (Стефана Сюнийского—VIII в.). На основании литературных первоисточников мы постарались внести возможную ясность в периодизацию этих переводов.

Изучение лексики и стиля «Шестоднева» подтверждает, что труд Василия относится к переводам первой половины V столетия, говоря словами Н. Бюзандаци, к школе *езниковских* переводов. Помимо других аргументов, примечателен следующий факт: в греческом оригинале «Шестоднева» говорится об «узких проливах», «водных рукавах», что выражается термином „εὐρίπτος“ («Ибо *еврипы* при прочих видах луны текут в ту и другую сторону»). Армянский переводчик указанный нами термин (еврип) воспринял как название края—*յաշխարհիկ Էւրիպցնց* (в крае еврипейцев...). Этот отрывок из «Шестоднева» мы находим и в «Книге опровержений» Езника Кохбаци (Езника Колбского), а затем у Анания Ширакаци (Анания Ширакского). Но у названных армянских авторов повторяется отклонение от греческого оригинала, допущенное переводчиком «Шестоднева». Следовательно, правомерно заключить, что Езник Кохбаци пользовался не греческим оригиналом, а его армянским переводом.

Я. Дашян и Н. Бюзандаци в свое время высказали предположение, что «Шестоднев» переведен с сирийского и, быть может, частично с греческого. Исследование показало, что армянский перевод бесспорно восходит к греческому оригиналу. Такое заключение, сделанное с учетом имеющихся разночтений, подтверждается не только прямым указанием пометок двух рукописей (№ 10258, 5686), но и многочисленными лексическими и грамматическими фактами.

Мы не ограничились лишь установлением оригинала и приступили к изучению текстологических особенностей армянского перевода. Он в основном совпадает с греческим текстом, сохраняя и последовательность изложения и характеристику описываемых явлений. В работе приводится определенное количество примеров, свидетельствующих об искусности переводчика и адекватности переводного текста. Одновременно мы столкнулись с любопытным явлением: в некоторых случаях переводчик считает нужным дать дополнительное толкование, чего, разумеется, нет в оригинале, а для этого прибегает к синонимам. Поэтому против греческого „εὐρίπτος“ в армянском имеем *բզնիկ, Կառապետներ, Կարի միջուրից*: Довольно часто в армянском тексте сохранены и греческие названия и их ар-

мянские переводы— շերտս, ալմիհրն՝ կերպասարէր, կարկիճոս, որ թարգմանի ինքզնութիւն: Наблюдается и другое: одно и то же слово в одной из глав (бесед) сохранено в транскрипции, а в другой—переведено. Так, например, в седьмой главе имеем կերպիկս—ἐγγύς, а в девятой—ճծիս և ճժղուկ. Быть может, «Шестоднев» переведен не одним, а двумя переводчиками, тем более, что мы располагаем рукописным сведением об этом, если, конечно, исключить возможность поздних редакций и поправок. Местами содержание подлинника в армянском передается более пространно, с дополнениями. Это объясняется не только манерой переводчика, но и его заинтересованностью. Ведь перевод был предпринят с надеждой получить ответ не только на вопросы, волнующие общую церковь, но и конкретно местную. Следовательно, перевод «Шестоднева» в какой-то мере выходит за рамки обыкновенного средневекового перевода, приобретая для армянской литературы значение оригинального памятника.

Широкая известность сочинения Василия в древнеармянской литературе отразилась двояко: либо «Шестоднев» стал литературным первоисточником для армянских авторов, либо составлялись комментарии-толкования к этому памятнику. Поэтому изучение данного вопроса представляется весьма актуальным с точки зрения выявления истоков и определения самостоятельности немалочисленных оригинальных произведений.

Так, в числе источников «Книги опровержений» Езника Кохбацци «Шестоднев» занимает особое место, наряду с сочинениями Мефодия, Аристиды Афинского, Епифания Кипрского и других. Нам отмечен ряд примеров, когда Езник дословно цитирует «Шестоднев», а чаще пересказывает содержание, сохраняя суть первоисточника. Армянский автор обращается к Василию Кесарийскому именно в тех случаях, когда необходимо дать определение дискутируемым понятиям и явлениям (сущность материи, соотношение добра и зла, природа и характер отдельных растений, бог и явления природы и т. д.).

В работе значительное место отводится сопоставлению «Шестоднева» с некоторыми сочинениями Анания Ширакаци. Последний часто обращается к византийскому автору, заим-

ствуя у него не только отдельные определения, но и целые отрывки. Изучение показало, что эти отрывки заслуживают внимания и с филологическо-текстологической точки зрения.

В списках «Шестоднева» VII века, когда ими пользовался Анания Ширакаци, не было многих из тех искажений, которые ныне фигурируют в кодексах этого памятника. Поэтому сохранившиеся в сочинениях Анания Ширакаци извлечения из армянского перевода «Шестоднева» ныне оказываются весьма полезными при критике текста. Так, в имеющемся армянском издании «Шестоднева» (стр. 75) нет речи о «Тирренском море», а в цитате у Анания оно фигурирует (*Եւրէնի Տիր[են] Սուր, հինդերձ...*), находя подтверждение как в армянских рукописях, так и в греческом оригинале и грузинских переводах «Шестоднева».

Сочинения Василия Кесарийского, в первую очередь «Шестоднев», в Армении использовали в качестве учебного пособия. Именно этим обстоятельством вызвано наличие объяснений около трех десятков сложных слов из «Шестоднева» (рук. № 1138), а в других кодексах можно найти словарно-толкования на «Шестоднев» (рук. № 621). Сопоставление этих двух словарей-толкований выявило много общего, в силу чего можно заключить, что они, быть может, первоначально представляли собой одно толкование. По другим источникам удалось установить, что их автором считается некий Егишэ. Не об историке ли V века Егишэ идет речь? Этот вопрос, как и ряд других вопросов, выдвинутых в нашей работе, требует специального изучения.

Исследованием переводов Василия мы попытались пролить свет на некоторые вопросы древнеармянской литературы, исходя из современных задач арменистики.

Յ Ա Ն Կ Մ Ր

Ա Ն Ձ Ն Ա Ն ՈՒ Ն Ն Ե Ր*

- Աբգարյան Գ. 174
 Արեղյան Մ. 101, 103, 131, 170, 182, 212
 Աբրահամյան Ա. Ա. 184
 Աբրահամյան Ա. Գ. 210, 212, 213, 245
 Ազարանգեղոս 56, 106, 164, 187
 Աղոնց Ն. 15, 27, 31, 37
 Արայան Բ. 179
 Արանաս Ալեքանդրացի 57, 133
 Ալիշան Գ. 6, 125, 175
 Ալպոյանյան Ա. 17, 18, 33, 35, 38, 43, 101, 104, 105, 113, 186
 Ալիևյան Ն. 70, 72, 119, 131, 134, 139, 170, 172, 175, 176
 Անասյան Հ. 58, 102, 150, 164, 167, 175, 178, 179, 182, 221, 234, 237, 243
 Այվառյանց Մ. 6
 Անանիա Մոկացի 132
 Անանիա Շիրակացի 11, 155, 181, 184, 185, 209—215, 217—247
 Անասյան Հ. 134, 136
 Անդրիկյան Ն. 187
 Անրաբյան Փ. 174
 Անթիմոս 51—53, 120, 122
 Ապողինար Լավողիկեցի 56, 57, 89, 131—134, 177
 Առաքել Սյունեցի 119
 Առողիկ 119, 121, 174, 175
 Ավգերյան Մ. 27
 Ավդալբեգյան Բ. 170
 Արամ 103
 Արխոս 47, 48, 111, 113, 132
 Արխատկես Լաստիվերացի 131
 Արխատիկես Արենացի 205
 Արխատտեղ 10, 20, 59, 74, 75, 249
 Արձան 173
 Արշակ 106
 Արշակ Բ 121
 Արսեն Բագրատունի 25
 Բարգեև կարողիկոս 138, 140, 197
 Բարրիկյան Հ. 110
 Բարսեղ (Կեսարացու հայր) 29
 Բարսումա 109
 Բյուզանդացի Ն. 8, 9, 25, 26, 56, 148, 149, 181, 187, 188
 Բրյուսով Վ. 101
 Գարեհյան Հ. 12, 13, 58, 108, 170
 Գալսեմֆյարյան Գ. 205
 Գեղեթ Հ. 108
 Գեղափոս Կեսարու նույնն է՝ Բարսեղ Կեսարացի
 Գյուտերբոգ Կ. 109
 Գոգալիշվիլի Գ. 27
 Գորգիոս 92
 Գրիգոր Աբասյան 135, 177
 Գրիգոր Անավարզեցի 135
 Գրիգոր Աճձիանձի տե՛ս Գրիգոր Նազի-
 անգացի
 Գրիգոր Լուսավորիչ (նաև Գրիգորիոս ՄԵՃ) 30, 56, 58, 101, 106, 124, 170
 Գրիգոր Մագիստրոս 12, 131, 170

* Ցանկում չեն արտացոլված՝ յուրաքանչյուր էջում հանդիպող Բարսեղ Կեսարացի, ինչպես նաև աստվածաշնչական անձնանունները:

- Գրիգոր Մեղապարտ (գրիչ) 140, 141
 Գրիգորյան Մ. 179, 180
 Գրիգոր Նազիանզացի (ճակ Աստվածաբան) 13, 18, 23, 26—32, 35—48, 50—55, 57, 73, 102, 105, 113, 125, 129, 130, 132, 133, 172, 177, 210, 249
 Գրիգոր Նյուսացի 26, 27, 29, 34, 49, 50, 54, 73, 125, 129, 130, 133, 143, 177, 180, 181, 249
 Գրիգոր պատրիարհ 139
 Գրիգոր Մանչեղագործ 48
 Գրիգոր վարդապետ 139
 Գրիգոր Վկայասեր 172
 Դոշակյան Թ. 171
 Դևորգ 147
- Դամասիոս 129
 Դավիթ Բագրևանդացի 175
 Դավիթ Հոռմայեցի 175
 Դավիթ Տարոնացի (ճակ Թարգմանիչ-Խլմշամ) 174—178, 248
 Դավիթ Քոբայրեցի 136
 Դեմոսթենես 10
 Դիոգոր 21
 Դիոկղետիանոս 109
 Դիոնիսիոս 32
 Դիոնիսիոս Թրակացի 105
 Դուրյան Ե. 113
- Եզեկիել 145
 Եզնակ 173
 Եզնիկ Կողբացի 10, 11, 15, 17, 56, 108, 145, 173, 180, 182, 184, 185, 187, 205—209, 211, 229, 251, 252
 Եսայի (գրիչ) 139
 Եվսեբիոս Կեսարացի (ճակ՝ Եվսեբիոս) 7, 10, 42, 43, 45—48, 55, 106, 107, 109, 112, 117, 123, 126—129, 133, 187
 Եվստաթիոս Մերաստացի 23, 44, 55, 111—117
 Եվուդղոս 36, 38
 Զարբանալյան Գ. 6, 8, 9, 29, 33, 40, 57, 58, 113, 133, 169—178, 180, 181
- Էփրեմկյան Ս. 101, 104
 Բամբիզյան Ն. 178
 Թեմուրեյան Վ. 110
 Թեոդոսոս 113—115, 117, 120, 129
 Թեոֆրաստ 20
 Թումա 145
 Թոռնյան Թ. 187
 Թորոսյան Հ. 11, 15—17, 110, 121, 149, 153, 155, 174, 176, 181, 182, 185, 190—192, 195, 196, 198, 203, 205, 206, 211, 212, 215, 241, 242
 Թոփեյան Հ. 106, 108, 124, 134, 171, 243
- Իօրայել Արևելցի (գրիչ) 138
 Լիբանիոս (ճակ Ղևոնիոս) 33, 34, 59
 Խաչատուր (ոմե) 134
 Խաչատուր Կեչառեցի 134
 Խաչիկ 131
 Խաչիկյան Լ. 110, 113, 114, 117, 143
 Խարանիս Պ. 101
 Խինթիփեճե Է. 27, 70
 Խոսրով 109, 171—173
 Խոսրով Թարգմանիչ 171—174
- Կախանե Մ. 183
 Կառտիղիանոս 48
 Կարապետ Էպիսկոպոս տե՛ս Տեր-Մկրտչյան Կ.
 Կիրակոս Գանձակեցի 131, 173, 180
 Կյուրեղ Աղեմսաղբրացի 129, 132
 Կյուրեղ Երուսաղեմացի 132
 Կոմիտաս կարողիկոս 131
 Կորյուն 165
- Հակոբ (գրիչ) 145—147
 Հակոբ կարողիկոս 45, 72, 176
 Հակոբյան Թ. 213
 Հակոբյան Վ. 20—22, 56, 94, 107, 144
 Համազասպ Մամիկոնեյան (ճակ՝ Համազասպ) 174—176

- Հացունի վ. 10, 11, 109
 Հեքում աբա 135
 Հիմերիոս 38
 Հովմերոս 10, 33, 59, 75
 Հովան 109, 131
 Հովասափ 141
 Հովնանենս (ոմն) 16, 138
 Հովնանենս Երզնկացի (գրիչ) 57
 Հովնանենս Օձնեցի 21
 Հովնանեխյան Ա. 144
 Հովհան Մանդակունի 15, 16, 174
 Հովսեփ 108
 Հովսեփյան Գ. (Գարեգին Ա կաթողիկոս)
 6, 54, 73, 138, 140, 173—175, 177,
 178, 187
 Հովիանոս 35, 36, 38, 134
 Հուսիկ Ելիսկոպոս 13, 28, 41, 52, 109

 Ղազար Փարպեցի 131, 132, 173
 Ղազիկյան Ա. 186
 Ղանալանյան Ա. 186
 Ղևոնդ 173

 Մարուսաղա (սյունյաց Ելիսկոպոս) 133
 Մարտոսյան Ա. 60
 Մալխասյան Ստ. 131, 167
 Մակեդոն 130
 Մաղափա Բաբերդացի 142, 143
 Մամբրե 173
 Մանանդյան Հ. 131, 213, 216
 Մառ Ն. 74, 105
 Մարթյան Հ. 6
 Մարիես Լ. 15, 184
 Մարկվարտ Հ. 104
 Մահրինա 29, 30, 32
 Մեթոդիոս 205
 Մելիտոս 41, 120, 122, 129
 Մելիֆ-Բախչյան Ս. 213
 Մելիֆ-Օհանջանյան Կ. 173
 Մեսրոպ Մաշտոց (ճան Մեսրոպ) 17, 24,
 27, 55, 60, 108, 125, 136, 138,
 169, 172, 173, 182, 185, 212, 232
 Մինասյան Լ. 125
 Մխիթար Այրիվանեցի 73
 Մխիթար Գոշ 136
 Մխիթարյաններ 5

 Մկրտիչ Ակնեցի (Պետրոսյան) 147
 Մշակ 103
 Մոդեստոս 22, 50
 Մովսես Խորենացի (ճան՝ Մովսես Քեր-
 րողահայր) 101, 103, 107, 112, 122,
 129—131, 141, 173, 242
 Մովսես Կաղանկատվացի 131
 Մուրատյանց Մ. 125

 Յուդիտա 93

 Նազարեթյան Ս. 9, 10, 34, 56, 75, 149,
 154, 155, 189, 198, 200
 Նազիանզացի Գրիգոր տե՛ս Գրիգոր Նա-
 զիանզացի
 Նահապետյան Գ. 14, 149, 155, 159—
 161, 165, 198, 216, 222, 231, 241,
 243
 Նավկրատիոս 29
 Նեմեսոս [Նեմեսացի] 180
 Ներսես Լամբրոնացի 12, 170
 Ներսես Մեծ 106, 108—110, 122, 126,
 129, 130
 Ներսես Շինող 175
 Ներսես Շնորհալի 57, 119, 133, 174
 Նեֆտալիոս 129
 Նյուսացի Գրիգոր տե՛ս Գրիգոր Նյուսացի

 Շահակ 121
 Շահխարունյան Հ. 119, 177
 Շարափսանյան Պ. 58
 Շիրակացի Անանիա տե՛ս Անանիա Շի-
 րակացի

 Ոսկերբերան 108
 Ոսկյան Հ. 30, 72, 119, 134, 139, 147,
 182

 Չալոյան վ. 184
 Չամչյան Մ. 174
 Չրաֆյան Բ. 18

 Պալապիս Քաղեա 103
 Պապ 103, 120—123, 130
 Պետրոս Սեբաստացի 29, 30, 73
 Պիմեն 114

- Պլատոն 10, 59
 Պլուտարխոս 10
 Պողարյան Ն. 31, 35, 44, 137—139, 171, 178
 Պողոս (գրիչ) 139
 Պողոս Յղենցի 145
 Պոռփլյուրոս 41
 Պրոկոպիոս Կեսարացի 110
 Պրոլեբեսիոս 38, 105
- Չալալյան Ս. 94
- Ռազցիգ Ս. 34
 Ռոբերդսոն Ջ. 39, 40
- Սանակ 17, 108, 109, 119, 124, 130, 131, 171—173, 182
 Սարգիս (գրիչ) 60
 Սարգիս Ղրիմեցի (գրիչ) 138
 Սարգիսյան Բ. 18, 56, 57, 140, 172, 174, 175
 Սարգիս սարկավագ (գրիչ) 70
 Սարգսյան Գ. 56, 172, 252
 Սեբեռիանոս իմեսացի 56
 Սերովրե Ակենցի 139, 147
 Սիմեոն վարդապետ 145
 Սոկրատ Սֆոլաստիկոս 113
 Սողոմոնյան Ս. 178, 179
 Սոմունեյան Վ. 206
 Սոֆրոնիոս 115
 Ստեփանոս (գրիչ) 139, 145
 Ստեփանոս կարողիկոս 131
 Ստեփանոս Սյունեցի 178, 179, 180
 Ստեփանոս (վարդապետ) 72
 Ստեփանոս Օրբելյան 133, 180
 Ստրաբոն 102
 Սուրյան Ա. 7, 9, 28, 47, 108, 110, 121, 124, 169, 181, 189, 198, 200, 202, 203
- Վազևս 44, 47, 50, 51, 69, 128, 129, 134, 248
 Վասիլ Նույնն է՝ Բ. Կեսարացի
 Վարդան Այգեկցի 134
 Վարդանյան Ս. 56
- Վարժապետյան Բ. 22, 182
 Տաշյան Շ. 6, 12, 13, 28, 31, 54, 58, 59, 73, 111, 113, 134, 137, 143 170, 173, 177—180, 182, 186—189, 205
 Տեր-Ավետիսյան Ս. 174, 178
 Տերենտիոս 112, 121
 Տեր-Մինասյան Ե. 27, 28
 Տեր-Մկրտչյան Գ. 131, 212
 Տեր-Մկրտչյան Կ. 131, 170
 Տեր-Պողոսյան Ա. 19, 23, 182
 Տեր-Պողոսյան Պ. 6, 174
 Տիգրան 102, 103
 Տիմոթեոս 129
 Տիրայր վարդապետ 13, 30, 35, 40, 43, 45, 47, 127
 Տիրան 105
 Տրիստան Ի. 18, 19, 139, 140, 174, 176, 177, 187
 Փալստոս Բուզանդ 23, 45—47, 56, 101, 103, 104, 106, 112, 120—123, 126—129
 Քրիստափոր (գրիչ) 144
 Օրիգենես 9, 44, 55
 Օրմանյան Մ. 107, 131
 Յուրուբ Յ. 33, 102
- Адопц Н. 106, 121
 Айватыяц С. 254
 Аняня Мокацц (Аняняй Мокскяй) 258
 Аняня Ширакацц (Аняняй Ширакскяй) 216, 260—262
 Аполляаряй 255, 257
 Аревшатыя С. 216
 Арястяид Афяяскяй 261
 Арястотель 256
 Аряхажельскяй А. 44
- Багратуя А. 254
 Бюзядацц Н. 255, 260
- Георгяй Святогорец 259
 Гозалышывля Г. 27
 Гомер 256

- Григорий Богослов (Наззианзин) 28, 52, 255
 Григор Партев (Григорий Парфянин) 257
 Давид 259
 Дашян Я. 260
 Дворецкий И. 153, 247
 Евстафий 258
 Егншэ 262
 Езник Кохбаци (Езник Колбский) 184, 260, 261
 Епифан Кипрский 261
 Коменский Н. 28, 35
 Кудрявцев О. 102
 Лазарь Парпеци (Лазарь Париский) 258
 Лебедева Е. 29, 35, 36, 38, 40, 44, 56
 Любкер Фр. 38
 Манандян Я. 101
 Марр Н. 74, 105
 Мартынов А. 34
 Месроп Маштоц 254, 259
 Мовсес Хоренаци (Моисей Хоренский) 258
 Назаретян С. 255
 Нерсэс Великий 257, 258
 Ориген 255
 Павстос Бузаид (Фавст Визант) 258
 Протопопова Д. 28
 Радциг С. 28, 34
 Райт В. 189
 Ранович А. 101
 Робертсон Дж. 35, 39, 40, 43
 Саак Партев (Саак Парфянин) 259
 Стефан Сюнеци (Стефан Сюнийский) 259
 Страбон 102
 Сукрян А. 255
 Тер-Давтян К. 216
 Фаррар Ф. 28, 29, 33, 39, 41, 49, 102
 Хосров 259
 აბულაძე ი. 149, 215
 გრიგოლ ნოსელი 149
 გობალიშვილი გ. 27
 კახაძე მ. 149, 215
 ხონ თბილძე ე. 27, 70
 Amord D. 70
 Bardenhewer O. 44, 55
 Baumstark A. 189
 Gregor von Nazianz 44
 Gribomont I. 70
 Driessen I. 70
 Eznik de Kolb 184
 Mariès L. 184
 Mercier Ch. 184
 Peeters P. 126
 Rudberg V. 70
 Treucker B. 29

Տ Ե Վ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

- Արեւնք 7, 13, 23, 34—40, 74, 104, 128, 129, 169, 180
 Աղեբսանդրիա 40, 41, 111, 113, 139, 169
 Ամենափրկիչ վանք (Ն. Զուղա) 125
 Ամիր 139
 Անէկուրա 112, 197
 Անտիոք 41, 120, 122, 129.
 Անտոնյան միաբանություն 8
 Ապահունիք 121
 Ասիա 104
 Ասորեստան 103
 Ասորիք 40
 Աստվածածին վանք (Անէկուրո) 197
 Ասփաղտիտես 240, 241
 Արեւմտյան ծով 224
- Բագվան 174, 175
 Բագրևանդ 174, 175
 Բալկաններ 101
 Բյուզանդիա 13, 17, 107, 129, 169, 176
 Բրիտանիա 14
- Գաղթականություն հայոց (ճակ Գաղութ հայոց) 110, 123
 Գամիրք 106
 Դալի վանք 70
 Գանգրա 113
 Գլածոր 141
 Գլխիբցու արոտ (Սիս) 138
- Դամասկոս 174, 176
- Եգեյան [ծով] (ճակ՝ Եգիոս) 241, 242
 Եգիպտոս 22, 40, 41, 74, 241
 Եղիազարու վանք 139
 Եվրոպա 183, 184, 185
 Երեկորես (ծովանուն) 224
- Երզնկա 142
 Երկրորդ Հայք 103
 Երրորդ Հայք 103
 Երուսաղեմ 19, 38, 41, 70, 129, 138, 139, 171, 173
 Եփրատ 104
 Եվֆառ (գյուղ) 147
- Զմամո 139
 Զմյուտնիա 145
- Էջմիածին 56
 Էվբեի ծով 184
- Քեոդոպոլիս (ճակ Քեոդոպոլիս) 145, 146
- Լազարյան ճեմարան 147
 Լիմ 147
 Լվով 144
- Կապադովկիա 7, 28—32, 34, 46, 48, 51, 52, 94, 101—106, 113, 116, 124, 127, 133, 171, 215
 Կեսարիա 13, 17, 18, 31, 32, 34—37, 40—42, 44—46, 48, 50—53, 101—110, 123, 124, 128, 130, 138, 146, 169, 171
 Կովկաս 101
- Կ. Պոլիս 13, 32—34, 74, 112, 116, 129, 130, 133, 139, 145, 147, 175, 180
- Հաղբատ 60, 140
 Հայաստան 13, 102, 103, 106, 109, 110, 113, 120—122, 125, 133, 171, 172, 176, 243

- Հայք 94, 107, 108, 120—122, 124, 171, 174
 Հելլեսպոնտու 241, 242
 Հինդոս 250
 Հյուսիսահայկա 14, 215, 216
 Հնդկի ծով 74
 Հոնիական 242
 Հոռոմոսի վանք 138
 Հոռոմոս 192
 Հոռոմ 105, 129, 180
 Հրեաստան 240
 Հունաստան 11, 124, 184
 Հունաց արխարն 107

 Ղալարիա 138
 Ղուլե վանք 140

 Մագակա տե՛ս Կեսարիա
 Մաժաֆ 103
 Մանչեստր 137
 Մելիտենեն 109
 Մեծ Հայք 48, 110, 120, 124, 127
 Մեդլալ (կամ Աղտից) ծով 241
 Միջագետք 22, 40, 44, 102
 Միջագետք (Կ. Պոլիս) 139, 147
 Մյսիքարյան միաբանություն (Վենետիկ և Վիեննա) 18, 139, 140, 186, 187
 Մոսկվա 147

 Նագիանգ 48, 51, 52, 172
 Նեոկեսարիա 40, 53, 104
 Նիկիոս 108
 Նիկոպոլիս 110, 113, 115, 120
 Նիսես 190
 Նոր գյուղ (Կ. Պոլիս) 70
 Նոր Զուղա 125
 Նոր ֆաղաֆ տե՛ս Նեոկեսարիա

 Չորեքֆաղաֆյան Հայք 110
 Չորրորդ Հայք 103

 Պաղեստին 22, 31, 40, 101, 240
 Պարս 35

 Պոնտոս 28—30, 42, 43, 47, 48, 94, 103—105
 Պոնտոս եվֆուինոս (ճակ Հյուսիսային ծով, Սև ծով) 241, 242
 Պրոպոնտոս 241

 Ռիպելայք 192

 Սամոսատ 117, 123
 Սասիմա 52
 Սատաղ 110
 Սարդոնիկ (ճակ Սարդոն, Սարդենիա) 241, 242
 Սեբաստիա 53, 110, 111, 113, 117, 123
 Սելևկիա 112
 Սերբոնիտես 240, 241
 Սիկիլիա (Սիցիլիա) 154, 241
 Սինա 189
 Սիս 248
 Սիրիա 22
 Ս. Ղազար 19
 Ս. Հակոբյանց վանք 19
 Ս. Սարգիս Էկեղեցի (Կեսարիա) 138
 Սևան 119

 Վաղարշապատ 13
 Վենետիկ 5, 6, 7, 18, 19, 139, 140, 186, 187
 Վրաստան 19
 Վրկանա ծով 216

 Տանայիս 192
 Տարսոն 21
 Տիան 51, 52
 Տիր[են]ոս (ճակ Տիրոս, Տիր[են]ոս) 154, 155, 241—243, 262
 Տուն Թորգոմա տե՛ս Հայաստան

 Ուոնա 104

 Փասիս 189, 190
 Փարիզ 163
 Փոքր Ասիա 101, 104, 113
 Փոքր Հայք 48, 101, 102, 104, 105,

109—116, 119, 120, 123, 124, 133	Каппадокия 105, 257
Քաղկեդոն 124	Кесария 257
Քաշապ 189, 190, 192	Колония 258
Армения 105, 257, 258	Сатап 258
Великая Армения 257	Севастия 258
Малая Армения 257	Тирренское море 262
	Еуропа 184

ԲՈՎԱՆՒԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն ե Ր ա ծ ու թ յ ու ն 5

Գ լ ու լ ա Ա

Բարսեղ Կեսարացու կյանքը 27

Գ լ ու լ ա Բ

Մատենագրական ժառանգությունը 55

Գ լ ու լ ա Գ

Կեսարացիներ և հայերը

Կեսարացու անընդհատությունը հայերին 101

Հայ մատենագիրները Կեսարացու մասին 126

Գ լ ու լ ա Դ

«Վեցօրեայի» հայերեն քարգմանությունը

Առկա ձևագրերը 138

Թարգմանության ժամանակն ու առանձնահատկությունները 169

Գ լ ու լ ա Ե

«Վեցօրեայի» հետևերը հայ մատենագրության մեջ 205

Резюме 253

Ցանկեր (անձնանուններ, տեղանուններ) 263



ԿԻՄ ՄԱՄՐԵՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ
КИМ МАМБРЕЕВИЧ МУРАДЯН

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՏԻՆ ԵՎ ՆՐԱ «ՎԵՏՕՐԵԱՆ»
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
Կ. Ն. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ

Հրատարակչական խմբագիր
Տ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կազմը
Լ. Ա. ՍԱԳՈՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր
Ի. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ
Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

վճ 05463 Պատվեր 674 Հրատ. 4306 Տպաքանակ 2000

Հանձնված է շարվածքի 29. V. 1975 թ.: Ստորագրված է տպագրու-
թյան 19. III. 1976 թ.: Տպագրական 17,0 մամուլ, հրատ. 15,25 մամուլ:
Թուղթ 1, 60×90¹/₁₆: Գինը՝ 1 ո. 46 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24 գ
Издательство АН Арм. ССР, Ереван-19, Барекамутян 24г
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան

A ⁷⁷ / 56319

ԳԱՍ Հիմնադրար Գիտ. Գրադ.



220056319